

ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌՈՅՑՆԵՐԸ
Ե ԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

ՀԱՄԱԴՐԵՑ՝
ՏՈՔԹ.ՍՈՒՐԷՆ Ն. ՊԱՅՐԱՄԵԱՆ

ԳԱՀԻՐԷ - 2017

ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌՈՅՑՆԵՐԸ
Ե ԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

ՀԱՄԱԴՐԵՑ՝
ՏՈՔԹ.ՍՈՒՐԷՆ Ն. ՊԱՅՐԱՄԵԱՆ

ԳԱՀԻՐԷ - 2017

Սոյն հատորը հրատարակուած է
Գահիրէի Ազգային Առաջնորդարանի
Միջոցներով

Նուպար Տպագրատուն – Գահիրէ

Ձ Օ Ն

ՍՕՍԷ և ՍԻԼՎԱ
Հայադրոշմ Դուստրերուս

Ե Ի

ԿԱՐԻՆ , ՍԱՍՈՒՆ , ԱՐԵԳ և ՏԵՍԻԼ
Հայազարմ Թոռներուս

Ներկայ աշխատանքը

Նուիրուած է

Հաւատաւոր սերունդներու

Իրականացած երազանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ

25-ամեակին

(1991 - 2016)

ԵՐԱԽՏԱԳԻՏԱԿԱՆ ԽՕՍՔ

Եզիպտահայ ազգային եւ համայնքային կեանքին իրենց ներդրումը կատարած կառոյցներու նուիրական գործունէութեան ամփոփ տեղեկութիւններուն համադրումի ներկայ աշխատանքը կատարուած է առաջնորդուելով հասարակական կեանքի հանդէպ մեր ունեցած սիրողական տրամադրուածութենէն:

Նախաձեռնուած գործին սկզբունքային ուղեցոյց ունենալով եզիպտահայ «Իմացարան» տարեգիրքերու մեզի առնչուող յօդուածները, յաւելեալ պրպտումի եւ որոնումի ծրագրին առաջնահերթ աղբիւրները հանդիսացած են եզիպտահայ երէց սերունդի գրականագէտ մտաւորականներու երկասիրած պատկառելի հատորները, ինչպէս նաեւ՝ սփիւռքահայ գաղթօճախներու մասնագէտ բանահաւաք հայորդիներու անփոխարինելի հրատարակութիւնները:

Եզիպտահայ մամուլի տարեցոյցներու եւ պարբերականներու մեր անձնական հաւաքածոյի համարները իրենց վաւերական սիւնակներով՝ օգտակար հանդիսացած են ընդհանուր գործին:

Օժանդակութեան անժխտելի ներդրում ունեցած են նաեւ համացանցի մէջ տեղադրուած Հայաստանի Ազգային Գրադարանի Հայ Մամուլի հարուստ բաժինէն թուայնացած միւտորները:

Ներկայիւս, երախտագէտ զգացումներով կու գանք յիշատակը ոգեկոչել եւ վաստակը փառաւորել այն բազմերախտ բանասէրներուն, որոնց լոյս ընծայած հրատարակութիւնները ու նկարները՝ օգտաշատ նիւթ հայթայթած են հատորիս եւ զարդարած անոր պարբերութիւնները:



Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Եզիպտահայ Մամուլի եւ Գրատպութեան մասին պատրաստուած մատենագիտական գոյգ հատորներու հանդէպ հայրենիքի եւ սփիւռքի ակադեմական հաստատութիւններուն եւ գրադարաններուն ցուցաբերած ուշադրութեան եւ գնահատանքին ընդառաջ, ինչպէս նաեւ համայնքային մակարդակով գիտակից եւ երիտասարդ կարգ մը տարրերու հետաքրքիր տրամադրութիւնները նկատի ունենալով՝ գաղութահայ հայապահապանումին իրենց նուիրական գործունէութիւնը կատարած կառոյց-միութիւն-ընկերութիւններու աշխատանքը՝ հատորի մը մէջ ամփոփուած տեսնելու առաջադրանքի արդիւնքն է ներկայ նախաձեռնութիւնը:

Աշխատասիրութիւնը նախաձեռնելու ուղեցոյց հանդիսացած են եզիպտահայ տարեցոյցներու շարքին՝ Մխիթարեան Միաբանութեան Գահիրէի վարժարանին հրատարակած եւ շահեկան բովանդակութեամբ լոյս տեսած «Ուսումնարան» տարեգիրքերու 1959-1960 եւ 1962-ի երկու յաջորդական հատորներուն “Եզիպտահայ Մշակութային Ընկերութիւնները” վերնագրով յօդուածները:

Հայր Եփրեմ Պօղոսեանի կողմէ Մխիթարեան գոյգ Մատենադարաններու հայ մամուլի հաւաքածոներուն էջերով կատարուած պրպտումները՝ եզիպտահայ Մշակութային Ընկերութիւններու կարգին ներկայացուած են իրենց հաստատուած եւ գործունէութիւն ծաւալած բազմաբնոյթ կազմակերպութիւնները:

Եզիպտահայ գաղութի վերջին շուրջ երկհարիւրամեայ տարեգրութեան մէջ, արձանագրուած կը գտնենք հայ ժողովուրդի իւրայատուկ բնագոյին ոգիով եւ առաջնահերթութեան նախապատուութեամբ հիմնուած հոգեւոր, կրթական եւ մշակութային ոլորտներուն ծառայելու կոչուած կառոյցներ, որոնք ժամանակի ընթացքին եւ անոր պահանջքին ընդառաջ՝ իրենց բարերար եւ ազգօգուտ դրոշմով առաջնորդած են յարատեւ յաջողութեան ձգտող բոլոր կռուանները:

Այս ուղղութեամբ, գոհունակութեամբ յիշատակելի են գաղութահայ պատմութեան յաջորդական շրջաններուն ներդրում կատարած միութիւններու եւ անոնց գործունէութեան մասին՝ բազմերախտ մտաւորականներու եւ բանասէր հասարակական գործիչներու մատենագիտական ջանքերով պատրաստուած եւ վաւերական արձանագրութիւններով համալրուած հրատարակութիւնները:

Տասնեակ մը նմանօրինակ արժեքաւոր հատորներու եւ մամուլի էջերով ձեռքբերուած գրառումներու համադրումին արգասիքը կը հանդիսանայ ներկայ սիրողական աշխատանքը:

Եզիպտահայ հոգեւոր կառոյցներու, եկեղեցիներու եւ գերեզմանատուներու մասին լոյս տեսած են մանրամասն տուեալներ բովանդակող հատորներ: Իսկ, գաղափարական-կուսակցական միաւորներուն կատարած նախաքայլերը բացայայտող, ինչպէս նաեւ հայ ազատագրական պայքարի հանգրուանային իրադարձութիւններուն եւ միջազգային քաղաքական վերիվայրումներուն ընդառաջ անոնց ծաւալած գործունէութիւնը վերլուծող անյիշաչար պատմութիւնը, յուսալի է, որ յառաջիկային կատարուի անաչառ մասնագէտներու միջոցով:

Ներկայ աշխատանքին մէջ, համայնքային կառոյց-միութիւն-ընկերակցութիւններու եւ արուեստի խումբերու մասին նիւթերու համադրումը կատարուած է արխիւային եւ մամուլի հաւաքածոներէն, նաեւ բանասիրական գրական հատոր-

ներու արձանագրութիւններէն, որոնք անդրադարձած են տուեալ միաւորին հիմնադրութեան թուականին, կազմակերպիչ-հիմնադիրներուն, անոնց առաջադրած նպատակներուն գործունէութեան բնոյթին առնչուող կարելի եղած եւ տեղին կատարուած մանրամասնութիւններուն, եւ վերջապէս՝ ժամանակի պայմաններուն ընձեռած միաւորի գոյատեւումին, ուրիշ միաւորի հետ միացուումին, կազմալուծում-դադրումին՝ եւ կամ... անորոշ ճակատագրով յանգումին:

Ականաւոր բանասէր հոգեւորականին զոյգ յաջորդական յօդուածներուն մէջ, «Մշակութային Միութիւններ»ու պիտակով ներկայացուած բարեսիրական, մարզական, հայրենակցական եւ այլ բնոյթով միատեղուած կառոյցները ներկայ աշխատանքին մէջ զատորոշուած եւ անդրադարձի արժանացած են իրենց գործունէութեան ծիրին պատկանող ստորաբաժանումներով:

Այստեղ, նպատակային բաժանումներով՝ նախնական, մասնակի եւ ամփոփ անդրադարձի արժանացած են եգիպտահայ ազգային եւ անհատական կրթական յարկերը, մշակութային եւ զանազան նպատակներով հաստատուած միութիւն-ընկերակցութիւնները, մարզական-սկստութեան ակումբները, գրատպութեան հաստատութիւնները, միութենական գրադարանները, նուագախումբերը, երգչախումբերը եւ թատերախումբերը: Ներկայացուած է նաեւ աւելի քան 150-ամեայ եգիպտահայ մամուլի (1865-2015) ցանկը եւ մերօրեայ հրատարակութիւններու ամփոփումը: Նկատառելի կրնան ըլլալ ժամանակակից կառոյցներու գործունէութեան եւ կատարած աշխատանքին մանրամասն բայց ոչ-ամբողջական տեղեկատուութիւններուն գրառումը, անոնց մասին քաղուած աղբիւրներու առկայութեան պատճառով:

1940-ականներու աւարտին, ապա 1963-ին դէպի հայրենիք կայացած ներգաղթները եւ հետագային տեղական ու այլ պայմաններու բերումով դէպի հեռակայ հորիզոններ ծայր առած արտագաղթը, իրենց հետ տարած են 20-րդ դարասկիզբի առաջին կիսուն բոլոր մարզերու մէջ աշխոյժ զարթօնքով կազմակերպուած եգիպտահայ համայնքային կեանքի մտաւորական եւ գործօն տարրերը, որոնց աշխատանքին վաւերագրումը կոչուած էր ատաղձ դառնալ ժամանակի եգիպտահայ պատմագրութեան: Գաղութային կեանքի մասին բազմերախտ գրիչներու գործեր թէեւ լոյս տեսած են, սակայն վերջին յիսնամեակի տարեգրական պատմութիւնը կը մնայ թերի եւ ոչ ամբողջական:

Առ այդ, ներկայ համեստ աշխատանքին մէջ ոչ մէկ կողմնակալ կամ դիտումնաւոր զեղչում կամ անտեսում կատարուած է անմնացորդ կերպով գործած ռելե անհատի կամ որեւէ կազմակերպութեան գործունէութեան, այլեւ, կարելիութեան սահմաններով, բանիմաց անհատներու յիշողութիւններուն՝ մեր կողմէ կատարուած արձանագրութիւնները մէկտեղուած են առանց խտրականութեան:

Յաւակնութիւնը չունինք եգիպտահայ համայնքային կեանքին առնչուող ներկայ աշխատանքը ամբողջական կերպով ներկայացուցած ըլլալու:

Բարի երթ անոր ուղին շարունակելու կոչուած հաւատաւորներուն:

Ս.Ն.Պ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՆՕԹԱՑՈՒՄ

Եգիպտահայ համայնքային կառույցներու զանազան բնոյթի գործունէութիւններուն մասին բանասերներու կողմէ պատրաստուած մատենագիտական հատորներու տուեալները կարելիութեան սահմաններու մէջ համադրուած կերպով ընթերցողին ներկայացնելու համար, յարմար նկատուեցաւ աշխատելաձեւի մը որդեգրումը՝ նախասիրուած նիւթին որոնումը դիւրացնելու համար:

ԿԱՌՈՅՑՆԵՐ, ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ, ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՅԼՔ

Կրթական յարկեր (ազգային , անհատական , կաթողիկէ , աւետարանական)

Իւրաքանչիւր վարժարանի մասին տեղեկատուական պարբերութիւններու միջեւ տեղադրուած են անոնց նկարները եւ վկայականներուն տիտղոսագիրները:

Մշակութային , Բարեսիրական-Խնամատարական , Հայրենակցական , Սանուց-Ուսանողական , Կանացի , Պատանեկան-Երիտասարդական և այլ Միութիւններ:

Գրական եւ մատենագիտական հրատարակութիւններու էջերէն քաղուած նիւթերը՝ յատկապէս քսաներորդ դարու առաջին կիսուն գործած միաւորներուն մասին, եղած են շատ քիչ եւ անվաւերական: Ոչ ամբողջական տեղեկութիւններ համադրուած կերպով յիշուած են ժամանակակից աղբիւրներու եւ վարչական աշխատանք ծաւալած անձերու ապաւինելով: Յատուկ բաժինով եւ էջադրութեամբ ներկայացուած են զանազան միաւորներու ծրագիր-կանոնագիրներու եւ տեղեկագիրներու տիտղոսաթերթերուն նմոշները:

Մարզական - Սկաուտական Միաւորներ

Մարզական ակումբներու եւ իրենց սկաուտական միաւորներուն մասին արձանագրուած տեղեկատուութիւններուն կողքին, զատ էջադրումով նմոշներ ներկայացուած են անոնց զատորոշիչ նշանակներուն (ԼՕԿՕ) եւ պատկերներ՝ մերօրեայ գործունէայ միաւորներուն:

Նուագախումբ - Երգչախումբ – Թատերախումբեր

Կարելիութեան սահմաններու մէջ եւ ձեռքբերուած խիստ սակաւ տուեալներով տեղեկութիւններ ներկայացուած են արուեստի երախտաշատ խումբերու մասին: Նկատառելի են ժամանակակից աղբիւրներէ քաղուած՝ կազմերու մասին մէջընդմէջ տրուած յաւելեալ նիւթերը, եւ մատչելի կարգ մը խմբանկարներ: Խումբերու ցանկերուն մէջ, Աղեքսանդրիան նշուած է *շեղագիր* տառերով:

Տպագրական հաստատութիւններ

Եգիպտահայ գրատպութեան մշակոյթը հարուստ է իր 185-ամեայ պատմութեամբ (1832-2017):

Հայ պարբերական մամուլի բազմերախտ նուիրեալներ, երբեմն իրենց իսկ շինած տառերով հիմնուած համեստ տպարանի մէջ լոյս ընծայած են մամուլի հրատարակութիւններ եւ տպագրած՝ փոքրածաւալ պրակ-գրքոյկներ:

Ներկայ աշխատանքով, ամփոփ տողերու մէջ ներկայացումը կատարուած է հայանուն տպագրական հաստատութիւններու հիմնադրութեան տուեալներուն եւ հայատառ հրատարակութիւններուն, որոնց կողքին յիշուած են հայերէն մամուլ եւ

գիրք տպած օտարազգի տպարանները, իսկ պարբերություններու միջեւ՝ տիտղոսագիրքը տեղադրուած է մամուլի հրատարակութիւններու եւ անոնց տպարաններուն անուանագիրքին եւ հասցէին:

Գրադարաններ

Եգիպտահայ համայնքային կառոյցներու մասին նշուած տեղեկութիւններուն մէջ, միութենական այլազան նպատակներու իրագործումին եւ դաստիարակչական ծրագիրներով ընթերցասիրութիւնը քաջալերելու աշխատանքի կողքին՝ նկատառելի են ինքնուրոյն գրադարանի մը կազմութեան համար կատարուած միութենական վարչութիւններու նախաձեռնութիւնները:

20-րդ դարու առաջին յիսնամեակին հիմնուած տպարանները եւ գրատպութեան մշակոյթի զարգացումը նպաստած են անձնական եւ միութենական գրադարաններու ընդհանրացումին:

Կատարուած պրպտումներու արդիւնքով, եգիպտահայ աւելի քան երեսուն հանրային գրադարաններու մասին մեր կողմէ համադրուած տուեալները, առաջին առթիւ յօդուածով մը լոյս տեսած են հայրենի «Բանբեր Հայաստանի Գրադարանների» կիսամեայ հրատարակութեան Յունիս 2016-ի թիւ 2-ի էջերով:

Եգիպտահայ մամուլի ցանկ եւ ժամանակակից պարբերականներ

Ներկայ աշխատասիրութեան մէջ, յարմար նկատուած է ժամանակագրական կարգով եւ հրատարակութեան վայրով ցանկը ներկայացնել եգիպտահայ մամուլի 1865-էն 2017 շուրջ 160 միաւորներուն, անոնց կողքին՝ ամփոփ տողերու մէջ նշելով մերօրեայ մամուլի հրատարակութիւնները:

ԵՂԵՌՆԻ ՅՈՒՇԱԿՈԹՈՂՆԵՐ Ե ՓՈՐ ՍԱՅԻՏԻ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԴԱՍԲԱՐԱՆ

Համայնքային կառոյցներու շարքին, նկարներու տեղադրումը կատարուած է եգիպտահայ «Մեծ Եղեռնի Յուշակոթողներ»ուն եւ Փոր Սայիտի մէջ 2015-ին բարձրացուած դամբարան-կոթողին, անոնց մասին ամփոփ տեղեկութիւններով:

ՏՈՒԵԱԼՆԵՐՈՒ ԵՒ ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

- Միաւորի մը անունը արձանագրուած է ժամանակագրական յաջորդականութեամբ, գլխագիր սեւ տառերով եւ հիմնադրութեան թուականի նշումով, կցուած գծիկին յաջորդող դադրումի թուականով՝ (օրինակ՝ **1920-1922**), եւ կամ գծիկէն ետք առանց թուականի՝ իբրեւ ցարդ յարատեւող (օրինակ՝ **1920 -...**): Մինակը նշուած թուականը կը բնորոշէ ճակատագրի անորոշութիւնը (օրինակ՝ **միայն 1920**):

- Միաւորի մը վերանուանումը յիշուած է սեւ տառերով, նոր թուականով եւ «*շեղագիր*» կամ չակերտներով:

- Նիւթերու պարբերութիւններուն աւարտին նշուած տառերը եւ թիւերը օգտագործուած աղբիւրին նշանագիրերն են, անոնց ստուգումը՝ հատորի վերջաւորութեան բաժնի ցանկերով կատարելու համար :

Օգտագործուած աղբիւրները ներկայացուած են երեք ցանկերով.

- Մամուլ-պարբերականներ՝ Ա , Բ , Գ , ... այբենական տառերով
- Ծրագիր-Կանոնագիրներ՝ 1 , 2 , 3 , ... թուանշաններով
- Զանազան հրատարակութիւններ՝ I , II , III , ... հռոմէական թուանշաններով

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹՅՆՆԵՐ

Ազգ.	: Ազգային
Ամսագր.	: Ամսագիր
Արժ.	: Արժանապատիւ
Գերշ. – Գերպ.	: Գերաշնորհ , Գերապայծառ
Դեկտ.	: Դեկտեմբեր
Եգ., եգիպտ.	: Եգիպտական
Ե.Դ. , Ե.Ո. , Դրշ.	: Եգիպտական Դահեկան , Եգիպտական Ոսկի , Դրուշ
Եպս. – Արք.	: Եպիսկոպոս , Արքեպիսկոպոս
Երիտ.	: Երիտասարդաց , Երիտասարդական
Ընկ.	: Ընկերություն
Կիր.	: Կիրակի
Հ.Ա.Հ.	: Հայ Ազգային Հիմնադրամ
Հ.Բ.Ը.Մ.	: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
Հ.Գ.Մ.	: Հայ Գեղարուեստասիրաց Միություն
Հ.Ե.Ը.	: Հայ Երիտասարդաց Ընկերություն
Հ.Կ.Խաչ , Հ.Կ.Խ.	: Հայ Կարմիր Խաչ , Հայ Կարիքի Խաչ
Հ.Մ.Ը.Մ.	: Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միություն
Հ.Յ.Դ.	: Հայ Յեղափոխական Դաշնակցություն
Հոկտ.	: Հոկտեմբեր
հտր.	: հատոր
ՀՕԿ	: Հայաստանի Օգնութեան Կոմիտե
Մասն.	: Մասնաճիւղ
Մ.Բ.Մարմին	: Մշակույթի Բարեկամներու Մարմին
Մօ.	: Մատուցող
Յ.Ե.Միություն	: Յուսաբեր Երիտասարդաց Միություն
Նոյ.	: Նոյեմբեր
Շբ.	: Շաբաթ
Պատ., Պատկանելի	: Պատուարժան , Պատկանելի
Ռ.Ա.Կ.	: Ռամկավար Ազատական Կուսակցություն
Ս.Դ.Հ.Կ.	: Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցություն
Սեպտ.	: Սեպտեմբեր
Ս.Ռ. Կուսակց.	: Սահմանադիր Ռամկավար Կուսակցություն
Վեր. , Վերպ.	: Վերապատուելի
Վրդ. , Ծ.Վրդ.	: Վարդապետ , Ծայրագոյն Վարդապետ
Տոքթ., Տքթ., Դոկտ.	: Տոքթոր , Դոկտոր
Տպ.	: Տպարան
Փրոֆ. Բրոֆ.	: Փրոֆեսէոր
քառ., քռ.	: քառակուսի
Քինյ.	: Քահանայ
Օգ.	: Օգոստոս
Օր.	: Օրիորդ
Ֆր.	: ֆրանք

ԵԳԻՊՏԱՀԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ

ԿԱԹՈՂԻԿԷ ԵՒ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ

ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

Գ ա հ ի ր է

Հ ե լ ի ն պ ն լ ի ս

Ա ղ ե ք ս ա ն դ ի ր ա

Փ ն ր Ս ա յ ի տ

Զ ա կ ա գ ի կ

Ա ս ի ն լ թ

ԱԶԳԱՅԻՆ ԷՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

Գ Ա Հ Ի Ր Է

1. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ ԴՊՐԱՏՈՒՆ - ՀԻՒՐԱՆՈՑ , 1828-1854
2. ԽՈՐԷՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ , 1854-1907
3. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ - Պոլսք , 1907-2012
4. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ -
Պէյն Էլ Սուրէյն 1897-1911 -Շուպրա 1935-1965 - Պոլսք 1965-2012
5. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ , 1897-1901
6. «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ» ՆԱԽՆԱԿԱՆ - ԵՐԿՐՈՐԴ. ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ , 1904-1905
7. ՄԱՆԻՍԱԼԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ , 1905-1947
8. ԳԱԲԱՄԱՃԵԱՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ - ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ , 1910-1915
9. ԹԱՇՃԵԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ , 1901-1903 , 1917-1937
10. ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ Հայ Փոքրիկներու համար-Մաթարիա , 1912-1914
11. ՏԻԿԻՆ ԳՈՀԱՐԻՆ ԴՊՐՈՑԸ , 1913-1915
12. ՄԱՂԱԶԱՃԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ – Մաթարիա , 1920-1936
13. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ - Շուպրա, 1921-1926
14. ՏԻՊԱՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ - Աղէքսանդրիա , 1923-1924
Գահիրէ ապա Հելիոպոլիս 1933-1944
15. ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - Շուպրա , 1924-1934
16. ՆՈՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ – Կիզէ , ապա Շուպրա , 1927-1929-1935
17. ՀԱՅԿԱԶԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - Կիզէ , 1930-1955
18. ԱՐԱՐԱՏԵԱՆ ԳՕԼԷՃ - Շուպրա , 1932-1936 ապա քաղաքակէդրոն 1936-1952
19. ՇԻՇՄԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - Մաթարիա , 1935-1945

Հ Ե Լ Ի Ո Պ Ո Լ Ի Ս

20. ՇԱԽԱՐՇԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ , 1916-1924
21. ՄԱՍԻՍ ՎԱՐԺԱՐԱՆ (ԶԷԶԷԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ) , 1921-1926
22. ՆՈՒՊԱՐԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ , 1924 , 1959-2012
ԳԱԼՈՒՍՏԵԱՆ - ՆՈՒՊԱՐԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ , 2012-
23. ՄԵՐՃԱՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ ,
Մէնուֆ փողոց 1924-1944 - Քլէօփաթրա փողոց 1944-1959
Մէնուֆ փողոցի Նուպարեանի շէնք 1959-
24. ՍԵԹԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ , 1927-1935
25. ՆՈՐ ՃԵՄԱՐԱՆ - New High School , 1933-1935
26. ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ - 1945 , 1985 -
Շուպրա 1954 – Կիզէ 1956 - «ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԸՆՏԱՆԻՔ» 1999-

ԱԶԳԱՅԻՆ ԷՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ի Ա

1. ԱՐԱՄԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐԱՏՈՒՆ , 1845-1862
2. ՊՕՂՈՍ-ՊԷՅԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐԱՏՈՒՆ , 1862-1895
3. ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ , 1895 - Սիմֆ, 1938-1948
4. ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ , 1896 –
ՄԵԼԳՈՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ , 1929 -
5. ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԿՐԹԱՐԱՆ , 1924-1952
6. ՊԱԼԱՅԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ , 1927-1938
7. ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑ.ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ , 1933
8. ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ , 1936-1939
9. ԹԱԳՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ , 1937-1943

Փ Ո Ր Ս Ա Յ Ի Տ

1. «ՄԻՍՈՒԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ , 1915 - 1919
2. ՓՈՐ ՍԱՅԻՏԻ ՈՐԲԱՆՈՅ - ՎԱՐԺԱՐԱՆ , 1918 -1919

Զ Ա Կ Ա Զ Ի Կ

- «ՄԷՄԷՐՃԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ , 1905-1907
«ԶԱԿԱԶԻԿԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ» , 1907-1922
«ՕՇԱԿԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ , 1922-1938

Ա Ս Ի Ո Ւ Թ

- «ԸՆԿԵՐԱԿԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ ԷՒ ՏԱՐՐԱԿԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ -
«ԱՍԻՈՒԹԻ ՀԱՅՈՒՀԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ» , 1902

Գ Ա Հ Ի Ր Է

1.ԵՂԻԱԶԱՐԵԱՆ ԴՊՐԱՏՈՒՆ - ՀԻԻՐԱՆՈՑ ,

Գահիրե ,1828 -1854

19րդ դարու առաջին երկու տասնամեակներուն, Եգիպտոս եկած սակաւաթիւ եգիպտահայեր իրենց բնակութիւնը հաստատած են Գահիրեի Պէյն-Էլ-Սուրէյն թաղին մէջ գտնուող Ս.Սարգիս մատուռին շրջակայքը, որուն կարիքները հոգացուած են Երուսաղէմի Ս.Յակոբեանց վանքին անունով տեղւոյն կալուածներուն հասոյթներով:

Եգիպտոսի իշխանաւոր Մոհամետ Ալի Փաշային հաւատաւոր եւ վստահելի մերձաւորներէն եղած է բարեգործութիւններով ծանօթ դարձած և սեղանաւորութեամբ զբաղող Ակնցի Եղիազար Ամիրայ Պետրոսեանը:

Եղիազար Ամիրայի ծախսով եւ իր ծնողքին յիշատակին կառուցուած է երկյարկանի հոգետուն-հիւանդանոց մը, այցելու հիւր հոգեւորականներու ծառայելու եւ օգտակար հանդիսանալու համար հիւանդ ու կարիքաւոր ազգակիցներու: Բարեգործ Ամիրան մահացած է 9 Դեկտեմբեր 1827-ին, եւ իր քրոջ երկու որդիները Ալեքսան եւ Յակոբ Միսաքեան, գործադրելու համար մօրեղբայր Եղիազար Ամիրայի կտակը, իրենց ստացած ժառանգի գումարին մէկ մասով Գահիրեի Պէյն-Էլ-Սուրէյն թաղին Հարեթ-Էլ-Զուէյլա արահետին մէջ գնած են տարածք մը, անոր եկամուտը ի նպաստ կարօտեալներու խնամքի ծախսերուն ապահովելով:

Ազգապատկան այս հողակտորին յանձանձումը վստահուած է եգիպտահայոց Առաջնորդ Կիրակոս Եպս. Մնացականեան Երուսաղէմացիին (1825-1835):



«ԵՂԻԱԶԱՐԵԱՆ ԴՊՐԱՏՈՒՆ - ՀԻԻՐԱՆՈՑ»ի Յիշատակարանը

1828-ին, Ալեքսան եւ Յակոբ Ամիրաները, շարունակելով իրենց կտակուած յանձնառութիւնը, անոր մնացեալ գումարով կառուցած են **դպրատուն** մը իր յարակից **հիւրանոցով**՝ եւ եգիպտահայոց ազգային վարժարանին կորիզը հանդիսանալու կոչուած կրթարանը իրենց Ակնցի մօրեղբօր յիշատակին՝ անուանած են «ԵՂԻԱԶԱՐԵԱՆ ԴՊՐԱՏՈՒՆ»:

Հաստատուած դպրոցին դասատուները եղած են Տիարալէքիցի Կարապետ, Միքայէլ Մանուկեան եւ Գանձակեցի վարժապետները, նաեւ՝ Պետրոս, Աւետ Յովակիմեան, Պոլսեցի Ստեփան եւ Ակնցի Յովհաննէս Տիրացուները:

Դպրատան մուտքին ամրացուած յիշատակարանին վրայ արձանագրուած է. *«Ի վայելումն Ազգիս Հայոց շինեցաւ դպրատունս եւ հիւրանոցս ի յիշատակ հոգւոյ Ակնցի Սարրաֆ Մ. Եղիազար քարեհամբաւ ամիրային եւ ծնողացն եւ համայն կենդանեացն իւրոյ»:*

«Յամի Տեառն 1828 եւ հայոց ՌՄՀէին»: ([24]. ք.հտր. էջ 317-321)

1854-ին, Եղիազարեան Դպրատունը, իր շուրջ 50 երկսեռ աշակերտներով, փոխադրուած է Կարապետ Աղա Գալուստի նորակառոյց վարժարանին մէջ թիւ 18, Տարալ-Էլ-Կինենա փողոց, եւ վերանուանուած՝ «ԽՈՐԷՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ»:

2. ԽՈՐԷՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ - Գահիրէ , 1854-1907

Գահիրէի Տարալ-Էլ-Կինենա փողոց թիւ 18, Երուսաղէմի Ս.Յակոբեանց վանքին պատկանող կալուածը 20 Յունիս 1838-ին չորս օր տեւած հրդեհէ մը աւերակ դարձած ըլլալով, Գահիրէի հայոց Առաջնորդարանի կարգադրութեամբ գնուած է 30 Ապրիլ 1851-ին: Սոյն տարածքը, Ազգային պատասխանատուներու տնօրինումով, 1853-ին Կարապետ Աղա Գալուստին տրամադրուած է վարժարան մը կառուցանելու համար:

Կարապետ Աղա Գալուստեան, դպրոցի երկյարկանի շինութեան ծախսած է մօտ 20.000 ֆրանք ոսկեդրամ, եւ իր փափաքին ընդառաջ՝ վարժարանը պատմահայր Մովսէս Խորենացիի անունով «Խորենեան» կոչուած է:



«ԽՈՐԷՆԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ - Մուտք եւ Յիշատակարան

Նորաբաց կրթարանին դրան վրայ ամրացուած է հետեւեալ «Յիշատակարան»ը

«Շնորհիւն Աստուծոյ ի հիմանս կառուցաւ վարժարանս յանուն քերթոյաւոր մերոյ Մովսիսի Խորենացւոյ՝ արդեամբք եւ ծախիւք Վանեցի Ազգասէր Կարապետ աղայի Տէր Գալուստեան ի յաւերժական յիշատակ լուսահոգի հօրն Տէր Գալուստին եւ մօրն Մարիամայ եւ եղբօրն Խաչատրոյ եւ համօրէն ննջեցելոց իւրոց եւ կենդանեաց ի վայելումն եւ քարեկրթութիւն մանկանց Արամեան տոհմիս»

որ յԵգիպտոս բարոյական եւ ուսումնական վարժարան գիտութեան յամի Տեառն 1854 Սեպտ.15»:

Երկսեռ վարժարանին բացումը կատարուած է 15 Սեպտեմբեր 1854-ին, օրհնութեամբը թեմակալ Առաջնորդ Գաբրիէլ Եպս.Մարաշցիի եւ ներկայութեամբ բարերար Կարապետ Աղա Գալուստի:

Վարժարանին նիւթական մատակարարութիւնը ապահովելու մտածումով, Կարապետ Աղա Գալուստ 5/17 Մարտ 1858 թուակիր կտակագրով Շէյխ Էթմանի եւ Տէլկայի կարեւոր եւ հասութաբեր ազարակները նուիրած է Ազգային Առաջնորդարանին, իր մահէն ետք այդ հողերու վարձքերուն հասոյթները յատկացուելու համար կառուցած վարժարանին ծախսերուն:

1878 տարեշրջանին, նիւթական դժուարութիւններու պատճառով, վարժարանը վեց ամիսով փակուած մնացած է եւ վերաբացուած՝ Նուպար, Տիգրան եւ Եագուպ փաշաներու, Պօղոս Կարապետեանի, Արթին Փաշայի ջանքերուն շնորհիւ եւ կառավարութեան եւ «Ուսումնասիրաց Ընկերութեան» նպաստներով, մինչեւ անձուկ վիճակի բարելաւումը 1883-ին: ([XXIV] – [12]. թիւ.131)

Գահիրէի Պատ. Քաղաքական Ժողովի Մայիս 1897-ի նիստին որոշումով վարժարանը կոչուած է «Գալուստեան», ի յարգանս հիմնադիր-բարերար Կարապետ Գալուստեանի: ([24]. բ.հտր. էջ 411)

Վարժարանը ունեցած է «Կանոնագիր Խորէնեան Երկսեռ Վարժարանի Հայոց ի Գահիրէ» 41 էջնոց գրքոյկը (Տպ.Ս.Դարբինեան, Գահիրէ,1895), վաւերացուած՝ Ազգային Գաւառական Վարչութեան Պատ. Քաղաքական Ժողովին 16/28 Սեպտեմբեր 1895-ի նիստին: ([XIII] - [12]. թիւ 2)

Կանոնագիր-գրքոյկը ներառած է նաեւ Վարժարանին Ուսման Ընդհանուր Ծրագիրը (էջ 28-36), վեց տարիներու բաժնուած «Ուսմանց Յայտագիր»ով: ([XIII])

Խորէնեան Ազգային Վարժարանի տնօրէնները եղած են.

Աբրահամ Մուրատեան (1863-1868), Յովհաննէս Պաղտասարեան (1868), Զաքարիա Տ.Ս.Փափագեան (1885-1890), Նազարէթ Աղազարմ (1890-1892), Կարապետ Նաւասարդեան (1892-1896), Յովհաննէս Սեթեան (1896-1900/1904-1905), Սրապիոն Քինյ. Սամուէլեան (1900-1901) և Վահան Մ. Քիւրքճեան (1905-1907):

([6]. էջ 42-45)

3.ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՇԱՐԱՆ -

Պուլաթ , Գահիրէ , 1907-2012

1896-ին, Պուլտոյ եւ հայաբնակ գաւառներու մէջ տեղի ունեցած ջարդերուն հետեւանքով, բազմաթիւ հայ ընտանիքներու Եգիպտոս ապաստանումով՝ Խորէնեան վարժարանին աշակերտութեան թիւը մեծ աճ արձանագրած է:

Ժամանակի պատասխանատու մարմինները վարժարանի նոր շէնք մը կառուցելու անհրաժեշտութեան առջեւ գտնուելով, ժողովրդային հանգանակութիւն մը նախաձեռնած են, որմէ հաւաքուած գումարը անբաւարար եղած է նախատեսուած ծրագրին:

Տիրող պայմաններուն տակ, Առաջնորդ Տ.Մկրտիչ Ծ.Վրդ. Աղանունիի նախագահութեամբ Գահիրէի երեսփոխանական ժողովին կողմէ կատարուած

դիմումին ընդառաջ՝ կառուցելի դպրոցին շինութեան բարերարութիւնը ստանձնած է Պօղոս Փաշա Նուպարը, 19 Նոյեմբեր 1905 թուակիր իր նամակով:

Այսպէսով, Պօղոս Փաշա Նուպարի անունով գնումը նախաձեռնուած է Գահիրէի Մաարուֆ թաղին, Թերաա-Պուլաքիյէ փողոցին վրայ, 3062 քառ.մէթր հողատարածքին, անոր սեփականատէր Հապիպ Սակագինի Փաշայէն, քռ.մէթրը երկու Եգ.Ոսկիէն, 26 Մայիս 1905 թուակիր պայմանագրութեամբ եւ 5.971.870 միլիէմ գումարով: ([24]. բ.հտր. էջ 428)

Վաճառքը տեղական դատարանէն վաւերացուած է 12 Յունիս 1905ին, թիւ 6438 հրամանագրով, իսկ յատակագիծը՝ 19 Դեկտեմբեր 1905 թուականով:

Հիմնարկէքի արարողութիւնը կատարուած է Կիր. 4 Մարտ 1906-ին: Վարժարանին շինութիւնը ստանձնած է «Ֆրանչէսքօ Բանսերա» հաստատութիւնը 1.665.524 եգիպտ.դրուշ ընդհանուր ծախսով:

Նորակերտ վարժարանին (մանչերու եւ աղջիկներու շէնքերու բաժիններով) պաշտօնական բացման հանդիսութիւնը կատարուած է 11 Յունիս 1907-ին, ներկայութեամբ Տէր եւ Տիկին Պօղոս եւ Մարի Նուպարեանի:



«ԳԱԼՈՒՍՏԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ ՀԱՅՈՑ - Յիշատակարան - արտաքին տեսք - 1907

Տեղադրուած է հետեւեալ Յիշատակարանը

*«Գալուստեան Վարժարան Հայոց, հաստատեալ արդեամբ յաւերժա-
յիշատակ Կարապետ Աղա Գալուստեանի 1854, փոխադրեալ եւ վերաշինեալ
ծախոյք վսեմափայլ Պօղոս Փաշա Նուպարի 1907»:*

Ազգային Գաւառական Վարչութեան Պատուարժան Քաղաքական Ժողովը իր 6/19 Հոկտեմբեր 1906-ի 3-րդ նիստին մէջ հաստատած է «Կանոնագիր եւ Ուսմանց Յայտագիր Գալուստեան Ազգ. Երկսէն Վարժարանին ի Գահիրէ»ն, իր բովանդակած «Ներքին Կանոնագիր»ով եւ «Օրագիր Ուսմանց»ով (Տպ. Հայկական Օննիկ Հալէպլեան, 37 էջ, Գահիրէ, 1907): ([XII]. - [12]. թիւ 76)

Հրատարակուած է 1911-1912 տարեշրջանի «Յայտագիր Գալուստեան Ազգ. Վարժարանի» 51 էջոց գրքոյկը, մանրամասն տուեալներու բովանդակութեամբ, ուրտեղ նշուած է վարժարանին նպատակը *«տալ երկսէն ուսանողութեան հաստատուն կրթութիւն մը, հիմնուած առողջ սկզբունքներու վրայ, զարգացնելով*

զայն իբրեւ մարդ, եգիպտահայ, օժտուած ազնիւ նկարագրով»:

([XXIV] – [12]. թիւ 131)

Գալուստեան Վարժարանի շրջանաւարտներու առաջին հունձքը եղած է 1902-ին, եւ մինչեւ 1912 ունեցած է 50 երկսեռ շրջանաւարտներ: (Թ.1913, էջ 10)

Դեկտեմբեր 1929-ին բացումը կատարուած է վարժարանին «Աղմամեան» գրադարանին, հետագային հարստացած՝ իր գրապահեստով: Իսկ, 1945-ին հաստատուած է տեղւոյն «Գիտաշխատանոց»ը իր պատշաճ եւ կարիքի կազմաճներով:



«ԳԱԼՈՒՍՏԵԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՇԱՐԱՆ - Մանչերու բաժին



«ԳԱԼՈՒՍՏԵԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՇԱՐԱՆ - Աղջկանց բաժին

1912 Յունուարին հիմնուած «Գալուստեան Ընթացաւարտից Միութիւն»ը 1913-ին հրատարակած է «Գալուստեան Միութիւն» կիսամեային միակ թիւը եւ հետագային՝ «Շրջանաւարտից Միութիւն»ը հրատարակած է «Տեղեկատու Պրակ» ամսական պարբերականին 8 պրակները 1945-1946-ին: ([14]. էջ 86,248)

Վարժարանին զանազան կարգերու ուսանողութեան նախաձեռնութեամբ հրատարակուած են «Լուսին» գրական շաբաթաթերթին 40 թիւերը (1908-1910-1914), «Արարատ» կիսամեային՝ 4 թիւերը 1923-1924-ին, «Վերածնունդ» երկշաբաթաթերթը՝ 4 թիւ 1930-ին, «Հունձք» պարբերականը (14 պրակ) 1954-էն 1960, «Ուղի» աշակերտական կիսամեայ հանդէսը 4 թիւ 1971-1973-ին եւ «Մաշտոց» մեքենագիր պարբերաթերթը 3 թիւ 1985-1986: ([14]. էջ 66,146,184,284,306,330)

Մինչև 1934-1935 տարեշրջանի աւարտը, Գալուստեան Ազգային Վարժարանը ունենացած է մանկապարտեզի եւ նախակրթարանի իր բաժինները:

1935-էն սկսեալ եւ մինչև 1975, յաջորդաբար հաստատուած են պետական ուսումնական համակարգի ծրագրերուն համապատասխան՝ նախակրթարանի եւ բարձրագոյն նախակրթարանի դասարանները:



«ԳԱԼՈՒՍՏԵԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ - Տեսչարան և գրասովայր

1942-էն 1961 քսանամեայ տարեշրջաններու ընթացքին, վարժարանին աշակերտութեան թիւը աճած է հասնելով մինչև 800 աշակերտի, տեղաւորուած՝ 29 դասարաններու մէջ, 53 դաստիարակ ուսուցչական անձնակազմով:

Իսկ, 1947-1948-ի եւ հետագային՝ 1963-ի դէպի հայրենիք ներգաղթի կարաւանները իրենց հետ տարած են աւելի քան 300 աշակերտ նորսերնդականներ:


1975-1977 տարեշրջաններուն, վարժարանին մէջ հաստատուած են երկրորդականի կարգերը:

Եզիպտական կառավարութեան եւ մայրաքաղաք Գահիրէի շինարարական ծրագիրներուն ընդառաջ՝ եւ 6 Հոկտեմբեր Կամուրջի շինութեան պատճառով, Ապրիլ 1978-ին փլցուած են Գալուստեան վարժարանի Պուլաքի 1907-ին կառուցուած մանչերու եւ աղջիկներու բաժիններուն շէնքերը: ([24]. բ.հտր. էջ 677)

1978-1979 տարեշրջանէն սկսեալ, վարժարանին 15 դասարաններու աշակերտութիւնը ամփոփուած է 1908-ին կառուցուած երկյարկանի մանկապարտեզի շէնքին մէջ, այնտեղ կատարուած յարմար կարգադրութիւններէ ետք: Այսպէս, տեղւոյն «Գառգու» ցուցասրահը, գրադարանը եւ այլ դասարաններ երկուքի կամ երեքի բաժնելով վերածուած են 15 դասարաններու, տեսչարանի եւ ուսուցչարանի, հսկողութեամբ՝ ճարատարապետներ Հրազդան Կ.Պալեանի եւ Մկրտիչ Ճանիկեանի:

1954-ին եւ 2004-ին, Գահիրէի մէջ արժանավայել շուքով եւ ձեռնարկներու շարքով ոգեկոչուած են վարժարանին հիմնադրութեան 100-ամեակը (1854-1954) եւ 150-ամեակը (1854-2004), կազմակերպութեամբ՝ Գահիրէի Ազգային Իշխանութեան եւ մասնակցութեամբ աշխարհասփիւռ բազմահազար շրջանաւարտներու:

Կիր.9 Մայիս 1954-ին, 100-ամեակի Յոբելէական դաշտահանդէսը կազմակերպուած է վարժարանին բակին մէջ, մասնակցութեամբ 2000 հանդիսականներու, իսկ եզրափակիչ ձեռնարկը՝ Գահիրէի Ամերիկեան Համալսարանի սրահին մէջ կայացած է Կիր.19 Փետրուար 1955-ին:



Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ո Ւ Տ ի տղոսագիրներ - 1908 - 1955

Գալուստեան Ազգային Վարժարանի տնօրէնները եղած են.

Գեորգ Ծ.Վրդ.Թուրեան (1907-1908), Անդրանիկ Կարապետեան (1908-1909), Գրիգոր Պէօճիւքեան (1909-1910), Տիգրան Մէքզէնեան (1910-1911), Մինաս Ծալեան (1911-1913), Ասատուր Նաւարեան (1913-1914), Յովհաննէս Գայաեան (1914-1918), Գրիգոր Մխալեան (1919-1922), Գրիգոր Կիրակոսեան (1922-1927), Լեւոն Թաշճեան (1927-1934)(1941-1942), Յակոբ Նալպանտեան (1935-1939), Տիգրան Պապիկեան (1943-1961), Իսկուհի Տատրեան (1962-1966), Արշամ Քինյ.Պոգոյեան (1966-1967), Նշան-Արշալիր Վարդեան (1969-1995), Սիմոն Զամբերթէնեան (1995-2012) :

([6]. էջ 46-56)

Վերջին տասնամեակներու ընթացքին եւ զանազան պայմաններու բերումով՝ Գահիրէի հայ համայնքին նօսրացումին եւ աշակերտութեան թիւին նուազումին պատճառով, Գահիրէի Ազգային Իշխանութեան որոշումով և դիմումին ընդառաջ՝ Պետական Կրթական նախարարութիւնը 29 Օգոստոս 2011 թուակիր թիւ 18 նամակով, իր համատնութիւնը յայտնած է Գալուստեան եւ Նուպարեան Ազգային Վարժարաններու Հելիոպոլսոյ Նուպարեան վարժարանի շէնքին մէջ միատեղումին՝ «Գալուստեան-Նուպարեան» անունով:

105 վաստակաշատ եւ երկար տարիներ ետք, Գալուստեան Ազգային Վարժարանի աշակերտութիւնը, Պուլաքի թաղաշրջանի իր կեդրոնական կայքէն՝ 2012-2013 տարեշրջանին փոխադրուած է Հելիոպոլիս, տեղւոյն վերանուանուած՝ Գալուստեան-Նուպարեան վարժարանին մէջ:

4.ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ -

Պէյն Էլ Սուրէյն, Գահիրէ, 1897-1911

Շուպրայի մասնաճիւղ, 1935-1965

Պուլաք 1965-2012

Գահիրէի առաջին մանկապարտէզը հաստատուած է 1897-ին, Տարա-էլ-կինենայի Խորէնեան Վարժարանի շէնքին մէջ, Պէյն Էլ Սուրէյն, բարեյիշատակ

Եռուսուֆ Ազիզ Պեյի հոգաբարձության օրով: Վարչուհիները եղած են Օրք. Փայլուն, Գեորգեան, Վարդուհի Չաղլասեան եւ Արաքսի Գեորգեան, իսկ տնօրէնուհին՝ մանկավարժուհի Օր.Արշալոյս Մաղազաճեան:

1898-ին, մանկապարտէզին վայրը եղած է Ս.Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին մէջ 1828-ին կառուցուած նախկին դպրատան շէնքը, տեղւոյն Թագւոր Փաշա Յակոբեանի ծախքով 1888-ին բարենորոգութիւններով կատարուած բաժնին մէջ:

([24]. բ.հտր. էջ 602-603)



«Գալուստեան» Մանկապարտէզ . 1911-2012 - «Գալուստեան» Վարժարան .1978-2012



«Գալուստեան» Ազգային Մանկապարտէզ - Շուպրայի մասնաճիւղ - 1935-1965

Պուլաքի Գալուստեան Ազգ.Վարժարանի շրջափակին մէջ 1908-ին շինուած է Գալուստեան Մանկապարտէզը, ուր 1909-ին փոխադրուած են Մանկապարտէզի փոքրիկներուն մէկ մասը, իսկ ամենքը՝ 1911-ին:

(Թ.1913, էջ 3 - [XXIV] - [12]. թիւ 131)

1935-ին, բացուած է Գալուստեան Մանկապարտէզի *Շուպրայի Մասնաճիւղը*, Թերա Պուլաքիայի թաղաշրջանին Էլ-Աթթար փողոցին վրայ գտնուող առժամաբար վարձուած շէնքին մէջ:

1936-ին, Շուպրա թաղին մէջ 4000 Ե.Ո.ով գնուած է երկյարկանի շէնք մը, որուն մէջ բարեգարդումներ կատարուելէ ետք, մանկապարտէզը հոն փոխադրուած է իր եւ նախակրթարանի երկու դասարաններով:

Կիր.13 Յունիս 1959-ին, բացումը կատարուած է Շուպրայի Մանկապարտէզի շէնքին կից շինուած «Արմենակ Մեօթէմէտեան ճաշարան»ին եւ Ազգային Իշխանութեան կողմէ կառուցուած երեք դասարաններուն:

Սեպտեմբեր 1935-էն Օգոստոս 1947 շրջանին, մանկապարտիզականուհին եղած է Տիկին Եսթեր Նուրիկեան: Վաստակաւոր տեսչուհիներ եղած են Տիկնայք Զապէլ Զաքարեան, Ե.Նուրիկեան, Հռիփսիմէ Պալեան եւ Վիքթորիա Յովսէփեան: ([24]. գ.հտր. էջ 461)

Շուպրայի Գալուստեան մանկապարտէզի աշակերտութիւնը 1964-1965 տարեշրջանէն փոխադրուած է Պուլաք, տեղւոյն ազգային վարժարանի մայր կառոյցի շրջափակի 1908-ին կառուցուած՝ մանկապարտէզի շէնքին մէջ:

Իսկ, 2012-2013 տարեշրջանէն սկսեալ, Գալուստեան մանկապարտէզի աշակերտութիւնը միատեղուած է Հելիոպոլսոյ «Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարան»ի կից՝ «Մերճանեան Մանկապարտէզ»ին մէջ:

5.ԿԵՂՈՆԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ - Գահիրէ , 1897-1901

Եգիպտահայ առաջին մասնաւոր դպրոցին հիմնադիրը եղած է ուսուցիչ եւ հրապարակագիր Սմբատ Բիւրատ, բարոյանիթական օժանդակութիւնը ունենալով Գահիրէի կրթասէր կարգ մը ազգայիններուն:

Կրթարանին բացումը կատարուած է 1 Յունուար 1897-ին, իր երեք բաժիններով (մանկապարտէզ, նախակրթարան եւ կրթարան) Գահիրէի Մինշիյէ թաղին մօտ, Մոհամետ Ալի Փողոցին (Հապպանիյէ) Ազիզ Պէյ Ակէմիի ապարանքին մէջ: ([24]. գ.հտր. էջ 404)

Դասաւանդութիւնը կատարուած է հայերէն, արաբերէն, անգլերէն, ֆրանսերէն եւ ի հարկին՝ այլ լեզուներով, խնամեալ ազգային դաստիարակութեամբ:

Մասնաւոր հանրակառք տրամադրուած է հեռաւոր թաղերու աշակերտութեան համար: (ԽԲ.1899, թիւ 1 - [24].գ.հտր. էջ 404)

1900 Յուլիսին վարժարանը փոխադրուած է Ապտին թաղը, միայն գիշերօթիկ աշակերտներու համար:

Նոյն թուականին, ընտրուած է քննիչ մարմին մը, որուն անդամակցած են Կարապետ Նաւասարդեան, Համբարձում Կ. Պէրպէրեան, Բժ.Ա.Ա.Յակոբեան, Յարութիւն Շամլեան, Յակոբ Օհանեան եւ Արտաշէս Ճիգմէճեան:

Գոյատեւելու դժուարութիւններ ունենալով, կրթարանը փակուած է չորս տարեշրջան բոլորելէ ետք Յունիս 1901-ին:

([24]. գ.հտր, էջ 403-405 - [9]. էջ 188-189)

6.«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ» ՆԱԽՆԱԿԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ

ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ - Գահիրէ , 1904-1905

Երկսեռ վարժարանը հաստատուած է 15 Սեպտեմբեր 1904-ին, Աղեքսանդրիոյ Պօղոսեան Ազգային Վարժարանի նախկին տնօրէն Յակոբ Աստուրեանի նախաձեռնութեամբ, Գահիրէի Շուպրա թաղաշրջանի Կեզիրէթ Էլ Պատրան փողոցին վրայ վարձու շէնքի մը մէջ, նախակրթարանի բաժինով:

Ունեցած է Յայտագիր-կանոնագիր մը 1904-1905 տարեշրջանի համար (Տպ.Ժողովրդական-Ե.Թորոսեան, 6 էջ, Գահիրէ):

([XXV] - [12]. թիւ 50 – ՃԶ. 1904, թիւ 15/16)

Կրթարանին յայտագրին վերջին պարբերութեան մէջ արձանագրուած է վարժարանին նպատակը եւ գործելակերպը *«մեր ուղղութիւնը լինելու է գիտական-մանկավարժական, ոչինչ պիտի խնայենք առողջ մարմնով անհատներ, ճշմարիտ հայեր, կատարեալ քաղաքացիներ, կեանքի ասպարէզի համար հիմնապէս մարզուած անհատներ պատրաստելու համար»:*

Վարժարանը բոլորած է հազիւ մէկ տարի եւ փակուած:

([24]. գ.հտր. էջ 53,409)

7.ՄԱՆԻՍԱԼԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՇԱՐԱՆ -

Գահիրէ, 1905-1947

(ՄԱՆԻՍԱԼԵԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՇԱՐԱՆ ԱՂԶԱՆՑ)

Մանիսալեան վարժարանը հիմնուած է նախաձեռնութեամբ Սօֆի եւ Զարուհի Մանիսալեան քոյրերուն 1905 Օգոստոս 2-ին, Գահիրէ, թիւ 104, Շարա Ապպաս (ներկայիս՝ Ռամսէս պողոտայ), Ղուրի Հատտատի շէնքին մէջ:

Բարձրագոյն Նախակրթարանի իրավիճակով հաստատուած վարժարանը ունեցած է իր յարակից Մանկապարտէզը, եւ իգական սեռի արդիական դաստիարակութեան պահանջներու ծրագիրը:



«ՄԱՆԻՍԱԼԵԱՆ» ՎԱՐՇԱՐԱՆ - Տաւեր , Գահիրէ , 1920

Վարժարանին նպատակը եղած է *«պատրաստել ազգին համար առողջ, բարեկիրթ, ուսեալ, ուղիղ, հաստատուն եւ ազնուացեալ նկարագրով հայ օրիորդներ, որոնք գիտակից կնոջ մեծ կոչման եւ անժխտելի դերին Ազգիս վերածնութեան նուիրական գործին մէջ՝ կարենան միշտ բարձր բռնել իրենց*

հաւատքին, ընտանեաց, Հայրենիքին եւ Ազգին պատուոյ դրօշը թէ յաջողութեանց եւ թէ մանաւանդ ձախողութեանց պարագային»: ([XXVI])

Վարժարանին հիմնադիր Օր.Սօֆի Մանիսալեան 1897-էն 1905 եղած է Գահիրէի Խորէնեան Վարժարանի աղջկանց բաժնի ուսուցչուհի եւ ապա տնօրէնուհին: Նորահաստատ վարժարանին հիմնադրութեան համակիր եղած և բարոյական օժանդակութիւն ցուցաբերած են Սեդրակ Դաւիթեան, Ազիզ Պէյ Եուսուֆ, Նշան Մալումեան, Պետրոս Կարապետեան եւ ծնողքներ:

Վարժարանին բացումը 1905-ին, կատարուած է 12 աշակերտով, տարե-
շրջանի աւարտին հասնելով 106-ի: Ունեցած է մինչեւ 160 աշակերտ, իսկ օտա-
րազգի աշակերտներու թիւը եղած է տասը առ հարիւրի սահմանին մէջ:

(Զ.1 Հոկտ.1930)



«ՄԱՆԻՍԱԼԵԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ - Վկայագիրի տիտղոսագիր

1907-ին, Վարժարանը փոխադրուած է Ֆակկալա թաղին Հապիպ Շալապի փողոցի Սավրիս Պէյի տունը, ապա՝ նոյն շրջանի Նակիպ Պէյ Ռահիւպի շէնքին մէջ (պարտէզով և օդաւէտ դիրքով), ուր հետըզհետէ Ուսմանց Ծրագիրը ընդլայնելով՝ բարձրացած է Երկրորդական Վարժարանի աստիճանին:

Հետագային, վարժարանը հաստատուած է Տահէր թաղաշրջանի Զաքի Պէյի երկյարկանի ապարանքը, թիւ 4, Զաքի Պէյ Փողոց: (Ա.1907, թիւ 47)

Ուսումնառութիւնները տեղի ունեցած են Մանկապարտէզի, Նախապատ-
րաստականի, Տարրական, Միջին եւ Բարձրագոյն դասընթացքի բաժիններու
դասարաններով, ունենալով 150-էն 170 աշակերտուհիներ:

Բարձրագոյն կարգերու հայերէն նիւթերուն եւ տոհմային ուսումնառութեան
ընկերացած է Ֆրանսերէն լեզուին որակաւոր մակարդակը, համարժէք ըլլալով
ֆրանսական վարժարաններու վկայականին:

Հայերէն աշխարհաբար, գրաբար, մատենագրութեան հետ՝ արաբերէն,
անգլերէն եւ գեղագրութեան կողքին՝ ուսանողներէն փափաքողներու համար
հաստատուած են նկարչութեան, դաշնակի եւ կարուձեւի դասընթացքներ:

Վարժարանէն շրջանաւարտուիչները 1913-էն 1947 տարիներուն կազմած
են «Նախկին Սանուց Յառաջդիմասէր Միութիւն»ը եւ 1930ին նախաձեռնած՝
վարժարանին հիմնադրութեան 25-ամեակի հանդիսութիւնը, այս առթիւ
հրատարակելով «Յոբէլէնական Յուշարձան» գրքոյկը Խաչիկ Գուրեան պատրաս-
տութեամբ: ([XXVI]. էջ 51 – [21]. էջ 32 – [8]. էջ 162)

Վարժարանը փակուած է հիմնադիր Օր.Սօֆի Մանիսալեանի մահէն մէկ
տարի ետք, 1947-ին: Հիմնադրուի Զարուհի Մանիսալեան մահացած է ծանր
հիւանդութենէ ետք 1948-ին: ([24]. գ.հտր, էջ 427)

8.ԳԱԲԱՄԱՃԵԱՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ -ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ Գահիրե , 1910-1915

Արթաքի եւ Աղանի Գաբամաճեան ամուլը, գործակցութեամբ Տիկին Աղանիի քրոջ Օր.Աժտերեանի, 25 Հոկտեմբեր 1910-ին, Գահիրեի Տահեր թաղաշրջանին, Սապրի փողոց թիւ 16-ի մէջ հիմնած են երկսեռ վարժարանը իր մանկապարտեզի բաժինով: (ԻԵ.1912, թիւ 30)

Կրթարանին նպատակը եղած է « *Ամերիկեան ուղղութեամբ լուրջ դաստիարակութիւն մը տալ հայ երկսեռ ուսանողութեան, միանգամայն անոր մէջ տոհմային ազնիւ նկարագիրով* »:

Վարժարանին մէջ, ուսուցումը կատարուած է հայերէն, ֆրանսերէն և անգլերէն լեզուներով, մասնաւոր ոյժ տալով անգլերէնին: Ծրագիրը ընդգրկած է նաեւ ձեռարուեստի եւ երգի դասեր: (ԻԵ. թիւ 30)

14 Օգոստոս 1911-ի երկրորդ տարեշրջանէն սկսեալ ընդունուած են գիշերօթիկ ուսանողներ, ընտանեկան հոգաձութեան յատուկ ծրագրով:

1912-ին, կրթարանը փոխադրուած է նոյն թաղին Համտի փողոց թիւ 42(44), պարտէզով շէնքը:

Վարժարանը բոլորած է հինգ տարեշրջան 1910-էն 1915, ունենալով 40 աշակերտներ: ([24]. գ.հտր. էջ 428)

9.ԹԱՇՃԵԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՐԺԱՐԱՆ -

Գահիրե , 1901-1903 , 1917-1937

Օրք. Մաքրուիի և Վարդուիի Թաշճեան քոյրեր, Գահիրեի Միջնաբերդի Հապպանէյա թաղին Մոհամէտ Ալի փողոցին թիւ 17 հասցեով հաստատած են անհատական իրենց դպրոցը 5 Օգոստոս 1901-ին:

Պիւտճէի դժուարութեան պատճառով կրթարանը փակուած է երկրորդ տարեշրջանի աւարտին, 1903-ին: ([24]. գ.հտր. էջ 431)



«ԹԱՇՃԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ - 1928 - Վկայականի տիտղոսագիր

Նոր Շրջան 1917 - 1937

Հիմնադիր-տնօրէնուիի Թաշճեան քոյրերը կը վերաբանան վարժարանը 1 Սեպտեմբեր 1917-ին, թիւ 217, Ապպաս Փողոց (Մէլիքա Նազլի Պողոտայ, ներկայիս՝ Ռամսէս) պարտէզով շրջապատուած կառոյցի մը մէջ, հետագային փոխադրուելով նոյն փողոցին թիւ 247 շէնքը:

Եռամեայ Մանկապարտեզի, վեցամեայ Նախակրթարանի եւ վերին երկու դասարանները ունեցած են ցերեկեայ 160 երկսեռ աշակերտներ, որոնցմէ 20-ը գիշերօթիկ իրավիճակով: ([9]. էջ 189)

Հրատարակուած է «Թաշճեան երկսեռ կրթարանի Ծրագիր-Յայտագիր» պրակը, Տպարան Ոսկետառ, Գահիրէ, 1917: ([12]. թիւ 231)

Ուսումնարանը ունեցած է 1928-ին կազմուած «Թաշճեան Սանուց Միութիւն» մը, իր մշակուած Ծրագիր-Կանոնագրով:

Աշակերտութեան նուագումին պատճառով, եւ հակառակ խնամատար անձերու նաեւ Ազգային Իշխանութեան կատարած օժանդակութեան, կարելի չէ եղած պիտճեական դժուարութիւնները դիմակալել՝ եւ կրթարանը փակուած է 1 Դեկտեմբեր 1937-ին: ([24]. գ.հտր. էջ 448)

10.ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ Հայ Փոքրիկներու համար -

Մաթարիա , Գահիրէ , 1912-1914

Եգիպտահայ բազմերախտ բանասէր Արտաշէս Հ. Գարտաշեան, իր Եգիպտոսի հայութեան պատմութեան նիւթերու գ.հատորին մէջ արձանագրած է. «Մաթարիա բնակող ազգային մը ժամանակին մեզի յայտնած էր, թէ տիկին Իսկուհի Դէմիրեան 1912-1914 տարիներուն բացած էր մանկապարտէզ մը հայ փոքրիկներուն համար, որուն աշակերտութեան թիւն էր 10-15»: ([24]. գ.հտր. էջ 457)

11.ՏԻԿԻՆ ԳՈՀԱՐԻՆ ԴՊՐՈՅԸ - Գահիրէ , 1913-1915

Կրթարանին հիմնադիր Տիկին Գոհար Ունճեան (ծնեալ՝ Պերպէրեան), իր սեփական մանկապարտէզը եւ տարրական նախակրթարանի դպրոցը հաստատած է Սեպտեմբեր 1913-ին, Գահիրէի Միջնաբերդի շրջանին Մէնշիյէ Կիտիտէ թաղին մէջ:

Դպրոցը ունեցած է մանկապարտէզի եւ նախակրթարանի երկու կարգեր 15-20 երկսեռ աշակերտներով:

Կրթարանը փակուած է երկրորդ տարեշրջանի աւարտին, 1915 Յունիսին:

([24]. գ.հտր. էջ 455)

12.ՄԱՂԱԶԱՃԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ -

Մաթարիա , Գահիրէ , 1920-1936

Կրթական մշակ Արշալոյս Մաղազաճեան (Տիկին Յովհաննէս Կտոյեան) Սեպտեմբեր 1920-ին, Մաթարիայի Էլ-Էմիր Էուսուֆ փողոցին վրայ հաստատած է «Kindergarten» անունով Մաղազաճեան մանկապարտէզ-տարրական նախակրթարանը, հայ եւ օտար աշակերտներու համար:

Կրթարանը որդեգրած է ուսուցումի գերմանական ուղղութիւնը, դասաւանդութիւնը կատարելով հայերէն, գերմաներէն, արաբերէն եւ անգլերէն լեզուներով:


Պարտէզը փակուած է 1935-1936 տարեշրջանի աւարտին: ([24].գ.հտր.էջ 457)

13.ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ

Շուպրա , Գահիրէ , 1921-1926

Հիմնադիր-տնօրէնուհի Տիկին Ալիս Վարժապետեան (Ծնեալ՝ Մարլեան), ցերեկեայ եւ գիշերօթիկ մանկապարտէզի եւ նախակրթարանի երկսեռ բաժիններով վարժարանը հաստատած է 1 Սեպտեմբեր 1921-ին, Գահիրէի Շուպրա թաղաշրջանի Շօթօլանի փողոցի վրայ, թիւ 14 Մետրեսէթ Էլ Թէվֆիքիէ շէնքին մէջ:

Վարժարանին ուսումնական ծրագիրը գործադրուած է հայերէն, արաբերէն, անգլերէն և ֆրանսերէն լեզուներով:



«ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ» ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ – Գաղիքի - 1921

Տիկին Վարժապետեան անմիջական գործակից ունեցած է իր ամուսինը ուսուցիչ Բիւրատ Վարժապետեանը եւ քոյրը՝ Օր.Մարի Մարլեան: Տնօրէնուհիին օգնական եղած է Օր.Հեղինէ Գալաճեան:

Վարժարանը ունեցած է արեւի քան 75 աշակերտ: ([24]. գ.հտր. էջ 471,473)

Կրթարանը փակուած է հինգերորդ տարեշրջանի աւարտին, Յունիս 1926-ին:

14. ՏԻՊԱՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ - Աղեքսանդրիա , 1923-1924

Գահիրե ապա Հեյնոպոլիս 1933-1944

Օր.Զապել Զաքարեան, 1923-ին հիմնած է իր «Տիպար Մանկապարտեզ»ը **Աղեքսանդրիոյ** Իպրահիմիէ թաղին Քօթասիրիս փողոցի պարտեզով շէնքի մը մէջ:

Վաստակաւոր մանկապարտեզականուհիին նպատակը եղած է «ամէն կերպով յարմարիլ մանուկին հոգերնախօսական պայմաններուն եւ ոչ թէ մանուկը յարմարցնել դպրոցական անբնական օրէնքներուն»:

Մանկապարտեզը պահուած է միայն մէկ տարեշրջան, որմէ ետք Գահիրէի Գալուստեան Ազգային Մանկապարտեզի մէջ, Օր.Զաքարեան տեսչուհիի պաշտօն ստանձնած է մինչեւ Յունիս 1933:

Գահիրեի մեջ, 11 Սեպտեմբեր 1933-էն մինչեւ Յունիս 1936, Օր. Զաքարեան իր «Տիպար Մանկապարտեզ»ը վերահաստատած է Ղամբայի շրջանին Սակագինի Փաշային պալատին մօտերը գտնուող Իպն-Խալտուն փողոցի թիւ 13 շէնքին մէջ: Այստեղ, Օր.Զաքարեանի անմիջական գործակիցը եղած է Տիկին Ռօզա Պարոնեան:

Հետագային, Մանկապարտեզը 1936-1937 տարեշրջանը բոլորած է **Հելիոպոլսոյ** Ռամսէս փողոցի թիւ 27 շէնքին մէջ:

11 Մեպտեմբեր 1937-էն եւ մինչեւ վերջնական փակումը Յունիս 1944, «Տիպար Մանկապարտեզ»ը փոխադրուած է **Հէլիոպոլսոյ** Սապպաղ փողոց թիւ 4, նախկին Շաւարշան Ազգային Վարժարանի շէնքին մէջ:

Օր. Զ.Զաքարեան իր սեփական տիպար մանկապարտեզը փակած է 1944-ի վերամուտին, տնօրէնուհիի պաշտօնին կոչուելով Գահիրէի Գալուստեան Մանկապարտեզին: ([24]. գ.հոր. էջ 463,464)

15. ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - Շուպրա , Գահիրե , 1924-1934

Մեծանուն ուսուցչապետ Ռեթեոս Յ.Պերպերեանի որդիները Օննիկ եւ Շահան Պերպերեան եղբայրներ, Գահիրեի Շուպրա թաղաշրջանի նոյնանուն պողոտային թիւ 113, պարտեզով երկյարկանի շէնքին մէջ, 8 Սեպտեմբեր 1924-ին

հիմնած են Պերպերեան երկրորդական վարժարանը իր ցերեկեայ եւ գիշերօթիկ բաժիններով:

Գահիրէի մէջ, նոր Պերպերեան վարժարանի հաստատումը կատարուած է քաջալերութեամբ եգիպտահայոց Առաջնորդ Թորգոմ Արքեպս. Գուշակեանի եւ կրթասէր ազգայիններու օժանդակութեամբ:



«ՊԵՐՊԵՐԵԱՆ» ՎԱՐՇԱՐԱՆ - Շուպրա , Գահիրէ , 1924

Նորահաստատ կրթարանին բացման հանդիսութիւնը տեղի ունեցած է 26 Հոկտեմբեր 1924-ին, նախագահութեամբ Գուշակեան Սրբազանի:

([24]. գ.հտր. էջ 515,544,552 - [XXVII] - [12]. թիւ 351)

Վարժարանը ունեցած է 9 դասարան, չորսը՝ նախակրթութեան եւ վերջին հինգը՝ երկրորդական կրթութեան:

Աշակերտութեան առաւելագոյն թիւը եղած է 120: ([24]. գ.հտր. էջ 544)

Կրթարանին տասնամեայ տեւողութեան, տնօրէնութիւնը ստանձնած են Օննիկ եւ Շահան Պերպերեան եղբայրները:

Հրատարակուած է «Յայտագիր-Ծրագիր Պերպերեան Վարժարան» 66 էջերով գրքոյկը, Տպ.Զ. Պերպերեան, 1924: ([XXVII]. - (12). թիւ 351)

Վարժարանը ունեցած է իր մարզական խումբերը, որոնք մասնակցած են միջվարժարանային եւ ակումբային մրցաշարքերուն: Կազմուած են կրթարանին երգչախումբը, պարախումբը, թատերախումբը եւ երաժշտական նուագախումբը, որոնք կազմակերպած եւ մասնակցած են մշակութային ձեռնարկներու:



«ՊԵՐՊԵՐԵԱՆ» ՎԱՐՇԱՐԱՆ - 1924 - Վկայականի տիտղոսագիր

1934-ին, վարժարանին մեջ կազմուած է 45 հոգինոց սկաւտական խումբը:

Վարժարանի աշակերտութիւնը հրատարակած է ուսանողական ձեռագիր-խմորատիպ պարբերականներ, «Վահագն» 2 թիւ, 1928-ին, «Միտք Ու Մկան» 6 թիւ 1928-1929-ին, «Նոր Սերունդ» մի քանի թիւ 1932-ին, եւ «Խարոյկ» 23 թիւ, 1932-էն 1934 երկամեակին: ([14]. էջ 176, 178, 188 եւ 190)

Վարժարանին մեջ 5 Հոկտեմբեր 1933-ին կազմուած է «Պերպերեան Նախկին Սանուց Միութիւն»ը, որուն գործունէութիւնը վերակազմուած է 1944-ին՝ մշակելով եւ վաւերացնելով նոր ծրագիր-կանոնագիր մը: ([24]. գ.հտր. էջ 520)

Գահիրէի Ազգային Իշխանութեան, խնամակալ մարմիններու եւ ուսումնասէր անձերու անվերապահ օժանդակութիւնները չեն կարողացած կրթարանին պիտճեական տագնապին առաջքը առնել, որոնց կողքին՝ աշակերտութեան թիւին պակասին եւ ժամանակի դժուարութիւններու պատճառով, վարժարանը փակուած է Յունիս 1934-ին:

16.ՆՈՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ - Կիզէ , ապա Շուպրա , Գահիրէ - 1927-1929-1935

Օր.Յուստիանէ Տէտէեան (Գարագաշեան) եւ Տիկին Եսթեր Նուրիկեան, 5 Սեպտեմբեր 1927-ին, Կիզէի մեջ հիմնած են Նոր Մանկապարտէզ Ծաղկոցը իր երեք բաժիններով: Մանկապարտէզը նիւթական օժանդակութիւնը ունեցած է ծխախոտի գործարանատէր Ժագ Մաթոսեանի:

Մանկապարտէզը, երկսեռ 26 աշակերտներով բոլորած է երկու տարեշրջան մինչեւ 1929, եւ փոխադրուած՝ Շուպրայի իր նոր վայրը, Եալպուղա փողոց թիւ 5, պարտէզով շրջապատուած շէնքին մեջ:

Երկսեռ «Նոր Մանկապարտէզ»ը ունեցած է 40-50 աշակերտ, եւ թաղաշրջանի բնակչութեան կողմէ «Տունի Դպրոց» անուանուած:

Շուպրայի հայ բնակչութեան բազմանալուն պատճառով, հոն հաստատուած Մանկապարտէզի պատասխանատու Ազգային Իշխանութեան հետ կատարուած բանակցութիւններուն ընդառաջ, «Նոր Մանկապարտէզ»ի աշակերտութիւնը և ուսուցչական կազմը 1935-1936 տարեշրջանին փոխադրուած են Շուպրայի նորահաստատ Գալուստեան Մանկապարտէզ եւ «Նոր Մանկապարտէզ»ը փակուած է : ([24].գ.հտր. էջ 460)

17.ՀԱՅԿԱԶԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - Կիզէ , Գահիրէ , 1930-1955

Կիզէի “Հայ Կրթասիրաց Միութիւն”ի հիմնադիրներուն նախաձեռնութեամբ՝ շրջանին Էլ-Նուր փողոցին շրջափակով տան մը մեջ, 13 Սեպտեմբեր 1930-ին բացուիմը կատարուած է Հայկազեան Վարժարանին, իր մանկապարտէզի բաժինով:

Հիմնադիր Կրթասիրաց Միութեան նպատակը եղած է « *Կիզէի հայոց համար բանալ դպրոց մը, հայ մանուկներուն տոհմային կրթութիւն տալու համար* »:

Վարժարանին բացուիմը կատարուած է 5 Հոկտեմբեր 1930-ին, Գահիրէի Ազգային Առաջնորդարանին նպաստով եւ Ծխախոտի գործարանատէր Յովհաննէս Մաթոսեանի նիւթական նեցուկի խոստումով: ([24]. գ.հտր. էջ 557,558)

Կրթարանը օժտուած է Կանոնագրութիւնով մը եւ ուսումնառութիւնը առաջնորդուած՝ Գալուստեան Ազգային Մանկապարտէզի ծրագրով:

1933-1934 տարեշրջանին, աւելցում է նախապատրաստական դասարաններու բաժինը, օտարազգի աշակերտներու ընդունումով:

Գահիրէի Ազգային Իշխանութիւնը, 1945-1946 տարեշրջանին սկսեալ ստանձնած է վարժարանին լրիւ մատակարարութիւնը եւ վերին հսկողութիւնը:

Հայկազեան Կրթարանի վաստակաւոր տեսչուհիները եղած են Մաքրուիի Եսայեան(Կերկերեան), Արաքսի Պետրոսեան(Գըլըճեան) Զարուիի Գանթարճեան (Ծաղկունի-Չիչեքճեան) եւ Մարի Ստեփանեան(Կերիկեան):

Վարժարանը ունեցած է առաւելագոյնը 40 երկսեռ աշակերտներ:

Կրթարանը փակուած է 1955 Օգոստոսին: ([24]. գ.հտր. էջ 560,564)

18.ԱՐԱՐԱՏԵԱՆ ԳՕԼԷՃ - Շուպրա , Գահիրէ , 1932-1936

ապա Գահիրէի քաղաքակերտն 1936-1952

Բիւզանդ Կէօզիւպէօյիքեան 11 Սեպտեմբեր 1932-ին, Գահիրէի Շուպրա քաղաշրջանին թիւ 31, Էլ Թակ փողոցի պարտեզով շէնքին մէջ, բացումը կատարած է իր հաստատած «Արարատեան Գօլէճ» անունով մանկապարտեզի,նախակրթարանի եւ գօլէճի բաժիններով վարժարանին, միայն մանչերու յատուկ գիշերօթիկով:



«ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԳՕԼԷՃ - Գահիրէ , 1936

Կրթարանին նպատակը եղած է *« հայ պատանին հայ պահելով եւ առաքինի նկարագրով օժտելով հանդերձ, զայն ընել քաջ լեզուագէտ եւ գործնական գիտութեանց տէր եւ պատրաստ համալսարանական ընթացքի »:* ([24]. գ.հտր. էջ 496)

Վարժարանը 1934-1935 տարեշրջանին փոխադրուած է Շուպրայի թիւ 22, Աթթար փողոցի շէնքը, իսկ 1935-1936-ին՝ Գահիրէի կեդրոնը թիւ 77, Նուպար Փաշա փողոցի (ապագային՝ Իպրահիմ Փաշա, ներկայիս՝ Էլ-Կումհուրէյա) «Արարատ» Մարզական Միութեան կեդրոնատեղի շէնքին 2-րդ յարկը:

Գօլէճը սկսած է 116 աշակերտներով եւ ունեցած՝ մինչեւ 160 երկսեռ աշակերտ իր 3 Մանկապարտեզի, 5 Նախակրթարանի եւ 3 Գօլէճական մակարդակի դասարաններով: Հայերէն, արաբերէն, ֆրանսերէն եւ անգլերէն լեզուներու կողքին, բարձրագոյն կարգերուն դասաւանդուած է նաեւ գերմաներէն լեզուն:

Նոյեմբեր 1938-ին, Շուպրայի «Նուպար» ակումբին մարզադաշտին վրայ տեղի ունեցած է Գօլէճին աշակերտութեան մարզական ողիմպիականը:



«ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԳՕԼԷՃ - 1936 , Վկայականի տիտղոսագիր

1939-ին հրատարակուած է «Մեծ Մասիս» անունով տեղեկատուական տարեգիրքը, ա.տարի, մէկ թիւ միայն: ([14]. էջ 228)

Գոլէճը փակուած է 1952 Յունիսին, աշակերտներու թիւին նուազումին եւ պիտոճեական անձուկ պայմաններու պատճառով: ([24]. գ.հտր. էջ 504)

19.ՇԻՇՄԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ-Մաթարիա,Գահիրէ,1935-1945

Վարժարանին հիմնադիր-տնօրէնուի Տիկին Վերժին Շիշմանեան Մաթարիայի Պիր Մարիամ Փողոցին վրայ գտնուող իր տան մէջ, 15 Հոկտեմբեր 1935-ին հիմնած է Շիշմանեան Վարժարանը (Ecole Sainte Marie), հայ եւ օտար աշակերտներու համար, մանկապարտեզի եւ նախակրթարանի դասարաններով:

Վարժարանը յաճախած են 25-35 երկսեռ աշակերտներ, հետեւելով հայերէն, արաբերէն, ֆրանսերէն եւ անգլերէն լեզուներով դասաւանդութեան:

Տնօրէնուի Տիկին Շիշմանեանի հայագիտական նիւթերու եւ ֆրանսերէնի դասաւանդութեան կողքին, Արաբերէնի ուսուցչուհին եղած է Տիկին Հանըմ Սողոմոնեան, իսկ երգի եւ երաժշտութեանը՝ Տիկին Տիրուհի Փէշտիմալճեան:

Տասնամեայ վաստակէ ետք, փակուած է 1945-ին: ([24].գ.հտր.էջ 456)

Հ Ե Լ Ի Ո Պ Ո Լ Ի Ս

20.ՇԱԻԱՐՇԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ -

Հելիոպոլիս, 1916-1924

Հելիոպոլսոյ Հայոց Վարժարանին բացումը կատարուած է 10 Սեպտեմբեր 1916-ին, Հելիոպոլսոյ Սապպաղ փողոց, թիւ 4 շէնքին առաջին յարկին մէջ:

Վարժարանը հաստատուած է Հելիոպոլիս բնակող 80 հայ ընտանիքներու կողմէ կազմուած Յանձնախումբին Գահիրէի Ազգային Իշխանութեան ներկայացուցած խնդրագրին ընդառաջ՝ եւ Գահիրէի Քաղաքական Ժողովին որոշումով յառաջացած հանգանակիչ Յանձնախումբին ջանքերով:



«ՇԱԻԱՐՇԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ - Վկայականի տիտղոսագիր

Բացման հանդիսության հովանաւոր Եգիպտահայոց Առաջնորդ Գերշ. Թորգոմ Եպս. Գուշակեան նոր վարժարանը կոչած է «Շաւարշան» անունով:

Հետագային, Գահիրէի Թեմական Ժողովի 22 Մարտ 1919-ի նիստին որոշումով կրթարանը Գահիրէի Ազգային Առաջնորդարանի հսկողութեան ենթարկուելով՝ կոչուած է «Շաւարշան Ազգային Վարժարան»:

Կրթարանին ութամեայ տեւողութեան, խնամատարական աշխատանքը սիրայօժար տարած են հոգաբարձութեան նշանակուած կազմերը:

Շաւարշան Վարժարանը ունեցած է մանկապարտէզի եւ նախակրթարանի բաժիններ: Տեսչութեան եւ ուսուցչուհիի պաշտօն վարած են Սաթենիկ Բիւզանդեան, Յուստիանէ Տէտէեան(Գարագաշեան) և վերջին շրջանին՝ Լեւոն Քիրազեան:

Աշակերտութեան առաւելագոյն թիւը 95 եղած է 1919-1920 տարեշրջանին:

Սեպտեմբեր 1924-ին, «Շաւարշան»ի վերամուտը կատարուած է Նուպարեան Վարժարանի նորակառոյց առաջին յարկին մէջ:

([24].գ.հտր.էջ 169,170 -Լ.1916, թիւ 70)

21.ՄԱՍԻՍ ՎԱՐժԱՐԱՆ (ՉԷՉԷԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆ) -

Հելիոպոլիս , Գահիրէ , 1921-1926

Օր.Նուարդ Թորիկեան (յետոյ, ամուսնացեալ Արմենակ Չէչէեանի հետ եւ ապագայ երիցուհի Գրիգոր Քինյ. Չէչէեան) 1 Սեպտեմբեր 1921-ին, Հելիոպոլսոյ Մէքս փողոց թիւ 4 շէնքին մէջ հաստատած է իր անձնական դպրոցը մանկապարտէզի եւ տարրական նախակրթարանի բաժիններով:

Առաջին տարեշրջանի կիսուն, «Մասիս Վարժարան»ը վերանուանուած է «Չէչէեան Վարժարան»:

Աշակերտութեան թիւը 1924-1925 տարեշրջանին եղած է 70, իսկ 1925-1926-ին՝ 30 աշակերտ:

Աշակերտութեան նուազումին հետեւանքով, վարժարանը փակուած է 1926-ին, եւ տնօրէնուհի Տիկին Չէչէեան Զակազիկի Օշական վարժարանի տեսչութեան կոչուած 1926-էն 1929 եռամեակին:

([24]. գ.հտր. էջ 511,512)

22.ՆՈՒՊԱՐԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐժԱՐԱՆ -

Հելիոպոլիս , 1924 , 1959-2012

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ - ՆՈՒՊԱՐԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐժԱՐԱՆ -

Հելիոպոլիս , 2012 -

Գահիրէի մերձակայ Հելիոպոլիս արուարձանին 1906-ի հիմնադրութեան եւ յաջորդող կազմութեան շրջանի 1911-ին, հայ համայնքին նուիրուած է հողամաս մը իբրեւ ազգային սեփականութիւն, այն պայմանաւ որ անոր վրայ վարժարան կամ եկեղեցի շինուի մինչեւ 1923-ի Օգոստոսի վերջը:

([24]. գ.հտր. էջ 187)

Ընդառաջելով Եգիպտահայոց Առաջնորդ Գերշ.Տ.Թորգոմ Ս.Եպս. Գուշակեանի առաջարկին, Պօղոս Նուպար Փաշա Փարիզէն յղած 19 Յուլիս 1923 թուակիր պատասխան-նամակով, իր համամտութիւնը յայտնած է Հելիոպոլսոյ մէջ Ազգային Վարժարան մը հիմնելու, որուն նպատակին համար նուիրատուութիւն կատարած է եւ դպրոցի կառուցումին իր փոխանորդը նշանակած՝ Միհրան Ղազարոսեանը:



«ՆՈՒՊԱՐԵԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ - Հելիոպոլիս - 1924

Կառուցելի վարժարանին յատակագիծը պատրաստած է ճարտարապետ Հրանդ Գալճեան, իսկ շինութեան կապալառուն եղած է Տօմինիք Լիմօնճէլլի հաստատութիւնը: ([24]. գ.հտր. էջ 187)

Գահիրէի Պատկ. Թեմական Ժողովը, իր 17 Ապրիլ 1924-ի նիստին, որոշած է վարժարանը բարերարին անունով կոչել «Նուպարեան Ազգային Վարժարան»:

Վարժարանին հիմնարկէքը կատարուած է 22 Ապրիլ 1924-ին, եւ առաջին յարկի շինութիւններու աւարտին՝ 15 Սեպտեմբեր 1924-ին դասաւանդութիւնը սկսած՝ մանկապարտեզի եւ նախակրթարանի բաժիններով, ներառնելով այդ շրջանին Հելիոպոլսոյ մէջ գործող «Շաւարշան» վարժարանի աշակերտութիւնը:

Նորակառոյց կրթարանին երկրորդ յարկը շինելու ծախսին իր մասնակցութեան համամտութիւնը յայտնած է բարերար Նուպար Փաշան, իր 12 Նոյեմբեր 1924 թուակիր հաստատագրով: ([24]. գ.հտր. էջ 189)



«ՆՈՒՊԱՐԵԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ - 1958, Արտաքին ճակատ

Յառաջիկայ տարիներուն, Հելիոպոլսոյ շրջանին մէջ հայ աշակերտութեան աճին ընդառաջ՝ Նուպարեան վարժարանի երկյարկանի շէնքը անբաւարար դառնալով, Գահիրէի Պատկ.Թեմական Ժողովը իր 29 Նոյեմբեր 1957-ի նիստին

որոշած է վարժարանին համար նոր շէնք մը կառուցել: Նպատակը քաջալերող նուիրատուութիւն կատարած են Տէր եւ Տիկին Օննիկ եւ Էլիզ Պըլըքտանեանները, որոնց ի պատիւ վարժարանին հանդիսասրահին եւ ճաշարանին մասնաբաժինը «Պըլըքտանեան» կոչուած է:

Վարժարանին նոր շէնքին յատակագիծին պատրաստութիւնը ստանձնած է ճարտարապետ Հրազդան Պալեան: ([24]. գ.հտր. էջ 200)

Հիմնարկէքը կատարուած է Կիր.16 Մարտ 1958-ին եւ նորակառոյց շէնքին բացման պաշտօնական հանդիսութիւնը տեղի ունեցած է Կիր.15 Մարտ 1959-ին:

Վարժարանին աշակերտութեան նախաձեռնութեամբ եւ ուսուցիչներու հսկողութեամբ հրատարակուած են «Օշական» ուսանողական պարբերականը 1961-էն 1972 տարիներուն, «Արեգ» տարեկան տեղեկատուն 2 թիւ (1978 եւ 1979) եւ «Մենք եւ Մեր» պարբերականը 1999-էն 2002, չորս թիւ: Հրատարակուած են նաեւ Վա(Գ)րի երկու գրքոյկներ: ([14]. էջ 302,322,338 - [12]. թիւ 1770,1775)



«ՆՈՒՊԱՐԵԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՇԱՐԱՆ - 1958 , Ներքին ճակատ

Նուպարեան Ազգային Վարժարանի տեսչական մարմնի անդամ եղած են.

Լեւոն Քիրազեան (1923-1924) , Գրիգոր Կիրակոսեան (1925-1926) , Լեւոն Աճէմեան (1925-1926), Հմայեակ Ամիրեան եւ Յովհան Յովհաննէսեան (1932-1932) եւ Պետրոս Քինյ.Ֆերէճեան (1957-1958): ([24]. գ.հտր. էջ 234)

Տնօրէնութեան պաշտօնը ստանձնած են.

Գարեգին Տիրկերեան (1927-1932 եւ 1934-1948) , Յովսէփ Գույումճեան(1933-1934) , Բիւրատ Վարժապետեան (1948-1957) , Յովսէփ Երեցեան (1959-1961) , Տիգրան Պապիկեան(1961-1973) , Արամ Մովսէսեան (1973-1983), Նշան Վարդեան (1983-1987), Մարտիրոս Պալեան (1987-1992), Ալիս Ճիզմէճեան (1992-1997 եւ 2002-2005), Վարուժան Յ.Գազանճեան (1997-1998) Հերմինէ Վարժապետեան (1998-2002), Անի Կապեան (2005-2010) եւ Սիմոն Զամբերթէնեան (2010 - :

Եգիպտահայ գաղութի նօսրացումին պատճառաւ եւ յիսնամեակ մը ետք, Գահիրէի Գալուստեան եւ Հելիոպոլսոյ Նուպարեան վարժարաններու միատեղումի ծրագրին նախապատրաստական նորոգութիւններն ու փոփոխութիւնները Նուպարեան վարժարանէն ներս կատարուած են 2009 եւ 2010 տարիներուն:

Այս կապակցությամբ, Կրթական Նախարարության պատկան յանձնախումբին կատարած վաերացումէն ետք, զոյգ վարժարաններուն միատեղումին



«ՆՈՒԱՐԻԱՆ» ՎԱՐՇԱՐԱՆ - Հելիոպոլիս , Վկայականի տիտղոսագիր

համամտութիւնը եւս ստացուած է Նախարարութեան 29 Օգոստոս 2011, թիւ 18 թուակիր նամակով, եւ վարժարանը վերանուանուած՝ «Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարան»:

Միատեղուած Գալուստեան-Նուպարեան վարժարանը Հելիոպոլսոյ մէջ իր առաքելութիւնը շարունակելու կոչուած է 2012-2013 տարեշրջանէն սկսեալ:

23.ՄԵՐՃԱՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐԹԵԱՆ - Հելիոպոլիս , Մէնուֆ փողոց 1924-1944 - Քլեօփաթրա փողոց 1944-1959 Մէնուֆ փողոցի Նուպարեանի շէնք 1959 -

Գահիրէի Ազգային Իշխանութեան որոշումով, Հելիոպոլսոյ Նուպարեան Ազգային Մանկապարտէզը 1944-ին վերանուանուած է «Մերճանեան Ազգային Մանկապարտէզ», ի յարգանս եւ երախտագիտութիւն բարերար Տիգրան եւ Սաթենիկ Մերճանեան ամուլին, անոնց կողմէ 1942-ին Ազգային Իշխանութեան նուիրուած եւ Մանկապարտէզ ծառայելու յարմարութիւններով օժտուած միայարկ կառոյցին համար:



«ՄԵՐՃԱՆԵԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐԹԵԱՆ - Մէնուֆ Փողոց , 1924-1944 , 1959-

Բարերար Տիգրան Մերձանեան Հելիոպոլսոյ Քլեօփաթրա փողոցին վրայ 1942-ին գնած է միայարկ մենատուն մը 4000 եգ.ոսկիի, որուն մէջ նորոգութիւններ կատարելէ ետք զայն Գահիրէի Ազգային Առաջնորդարանին նուիրած, այնտեղ փոխադրելու համար Նուպարեան Ազգային Մանկապարտէզը: ([24]. գ.հտր. էջ 258)



«ՄԵՐՃԱՆԵԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ - 1944-1959

Նուպարեան Ազգային Վարժարանին աշակերտութիւնը 1959-1960 տարեշրջանէն հաստատուած է նորաշէն կառոյցին մէջ, իսկ Մերձանեան Մանկապարտէզը փոխադրուած է 1924-ին շինուած Նուպարեանի շէնքին մէջ:

24.ՄԵԹԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ - Հելիոպոլիս, 1927-1935

Տիկին Սօֆի Մեթեան (ծնեալ Թօշիկեան), Հելիոպոլսոյ (Գահիրէ) Կապարէս փողոցի թիւ 2 շէնքին մէջ, 1 Օգոստոս 1927-ին հաստատուած է իր անհատական Մեթեան մանկապարտէզը: ([24]. գ.հտր. էջ 458)

Հիմնադիրին սեփական միջոցներով, վարժարանը տեւած է մինչեւ 1935, ունենալով 18-30 աշակերտ:

25.ՆՈՐ ՃԵՄԱՐԱՆ - New High School (Heliopolis) -

Հելիոպոլիս, 1933-1935

Երկարամեայ եւ վաստակաւոր ուսուցիչ Կարապետ Պիոնեանի նախաձեռնութեամբ, ուսուցիչներ Նորայր Խաչիկ Գուրեանի, Ժիրայր Փիլիպպոս Պալունիի գործակցութեամբ եւ ուսումնասէր կարգ մը ծնողներու օժանդակութեամբ, Օգոստոս 1933-ին, Հելիոպոլսոյ Քառնաք փողոցի թիւ 3 շէնքին մէջ հաստատուած է «Նոր Ճեմարան» (New High School) անունով երկրորդական կրթութեան բարձրագոյն երկսեռ վարժարանը:

Ճեմարանին նպատակը եղած է « *Անկախօրէն ու հաստատուն հիմքերու վրայ աստիճանաբար զարգանալով՝ ապահովել մանկավարժական լաւագոյն ուղղութեամբ եւ մեթոտներով հայ երկսեռ ուսանողութեան համար ուսում-կրթութիւն* »:

Ուսումնառութիւնը կրթարանին մէջ եղած է երկրորդական վարժարաններու ծրագրով եւ “Ամերիկեան Համալսարան”ի պայմաններուն յարմարուելով:

Երկսեռ «Նոր Ճեմարան» ընդունուած են միայն Գալուստեան եւ Նուպարեան Ազգային Վարժարաններու շրջանաւարտները, եւ նոյն ուսումնական մակարդակով այլ կրթարաններու աշակերտներ:

Ուսումնական երկու տարեշրջան բոլորելէ ետք, կրթարանը փակուած է 1935-ին, աշակերտութեան անբաւարար թիւին եւ պիտոճեական պատճառներով:
([24]. գ.հտր. էջ 509)

26. ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐՇԱՐԱՆ -

Հելիոպոլիս, 1945 , 1985 Շուպրա - 1954 Կիզէ - 1956

«ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԸՆՏԱՆԻՔ» - Հելիոպոլիս, 1999-

Կրօնական եւ դաստիարակչական բնոյթի կիրակնօրեայ Հելիոպոլսոյ վարժարանը հաստատուած է 1945-ին, հովանաւորութեամբ՝ Առաջնորդ Մամբրէ Արք. Սիրունեանի եւ արտօնութեամբ՝ Գահիրէի Պատուարժան Քաղաքական Ժողովին:

Կիրակնօրեայ Վարժարանին հիմնադրութիւնը կատարուած է Գահիրէի Եկեղեցեաց Տիկնանց Խնամակալութեան աստենապետուհի Տիկին Աննա Պուրթոս Ղալիի նախաձեռնութեամբ, անմիջական գործակցութեամբ Տիկին Լիւսի Քէստէքեանի եւ օժանդակութեամբ Նուպարեան Ազգային Վարժարանի տնօրէն Գարեգին Տիրկէրեանի:

Պատրաստուած, վաւերացուած եւ 1945-1946 տարեշրջանէն գործադրութեան դրուած է Ծրագիր-Կանոնագիր մը, նպատակ ունենալով *«Հայ եւ օտար վարժարան յաճախող մանուկներուն քրիստոնէական դաստիարակութիւն տալ Հայաստանեայց Եկեղեցւոյ հաւատքի հիման վրայ, սիրցնելով ազգային հաստատութիւնները, տուն, դպրոց եւ եկեղեցի»:*

Կանոնագրին վերամշակումը կատարուած է 1953-ին եւ 1956-ին, պատշաճեցման կարելիութիւնը կատարելով Եգիպտոսի Թեմին բոլոր հայաշատ կեդրոններուն համար:
([24]. գ.հտր. էջ 392-393)

Առաջին վարչական խորհուրդին անդամակցած են Տիկնք. Աննա Պուրթոս Ղալի եւ Լիւսի Քէստէքեան, Ազգային Վարժարաններու տնօրէններ Գարեգին Տիրկէրեան, Տիգրան Պապիկեան եւ Բիւրատ Վարժապետեան:

Կիրակնօրեայ դասախօսութիւնները տեղի ունեցած են Նուպարեան Ազգային Վարժարանին մէջ, ամէն Կիրակի օրերը մէկ ժամ տեւողութեամբ, երգեցողութեան եւ դասախօսութեան ծրագիրով:

1954-ին հաստատուած է Կիրակնօրեայ Վարժարանի **«Շուպրայի մասնաճիւղ»**ը, թաղաշրջանին Թերաա-Էլ-Պուլաքէյա փողոցի Գալուստեան Ազգ. Մանկապարտէզին մէջ, ջանքերովը վարիչ-տնօրէն Պետրոս Քինյ. Ֆերէճեանի եւ աջակցութեամբ Գալուստեան Ազգային Վարժարանի հոգաբարձութեան:

Փետրուար 1956-ին բացուած է նաեւ Կիրակնօրեայ Վարժարանի **«Կիզէի մասնաճիւղ»**ը, որուն երկամեայ դասաւանդութեան հետեւած են 16 երկսեռ աշակերտներ:

1950-ականներու վերջաւորութեան, Հելիոպոլսոյ եւ Շուպրայի Կիրակնօրեաներու աշակերտութեան թիւը եղած է շուրջ 400 հոգի, որմէ ետք այս թիւը սուր անկումի ենթարկուած է, դէպի հայրենիք եւ արտասահման գաղթի պատճառով:

1966 Յունուարին, Նուպարեան Ազգ.Վարժարանի հանդիսասարահին մեջ կազմակերպուած է Կիրակնօրեայ Վարժարաններու հիմնադրութեան 20-ամեակը: ([24]. գ.հտր. էջ 397-398)

Կիրակնօրայ Վարժարաններու տնօրէն եղած են Արժ.Տ.Պետրոս Քինյ. Ֆերէճեան (1954-1962) եւ Արժ. Տ.Արշամ Քինյ. Պօզոյեան (1962-1968):

Արտագաղթի եւ աշակերտութեան նուազումին պատճառով Կիրակնօրեայ Վարժարաններու գործունէութիւնը եւ անոնց օգտաշատ առաքելութիւնը դադրած է 1970-ականներու կէսերուն:

Գահիրէի Պատ. Քաղաքական Ժողովին որոշումով՝ 1985-1986 կրթական տարեշրջանի սկիզբէն վերսկսած են Կիրակնօրեայ Վարժարանի դասընթացքները, երկու Կիրակի անգամ մը հերթականութեամբ, Գահիրէի Ազգային Առաջնորդարանի շէնքին յատկապէս պատրաստուած սենեակներուն մէջ, մասնագէտ ուսուցիչներու ղեկավարութեամբ:

(Շրջաբերական, 4 Յունիս 1985 թուակիր, 195 թուահամար)

Կիրակնօրեայ Վարժարաններուն կանոնաւոր ընթացքը արտագաղթի եւ ուսուցչական անձնակազմի պակասի դժուարութիւններուն դիմակալումով՝ յարատեւած է մինչեւ 1980-ականներու վերջը:

Եգիպտահայոց բարեջան Առաջնորդ Զաւէն Արքեպս. Չինչինեանի ջանքերով, Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ հաւաքները «**Հայ Քրիստոնէայ Ընտանիք**» անուանումով եւ «Հաւատք եւ Խօսք» բնաբանով վերսկսած են Ապրիլ 1999-ին:

Երէցներու եւ երիտասարդ սերունդի մասնակցութիւնը քաջալերանքի արժանանալով՝ 2003-էն սկսած են նաեւ փոքրերու կանոնաւոր Կիրակնօրեայ հանդիպումները, ղեկավարութեամբ երիտասարդ տարրերու եւ հսկողութեամբ հոգեւոր դասին:



ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

1.ԱՐԱՄԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐԱՏՈՒՆ -

Աղեքսանդրիա, 1845-1862

Արամեան Դպրատունը հաստատուած է 1845-ին, Պօղոս Պէյ Եռսուֆեանի կողմէ 1838-ին ազգին նուիրուած երկյարկանի շէնքի մը մէջ, Աղեքսանդրիոյ Միտան Մաթրագ (Միտան Սուք-Գանթօ, Սուք-Կազգարին) կոչուած թաղին պարսկական մզկիթին մօտերը: ([24]. գ.հտր. էջ 6)

1850-ական թուականներու սկիզբէն, դպրատան վիճակը կանոնաւորուած է հոգաբարձու Ղազարոս Տէր Գասպարեանի ջանքերով եւ Իզմիրէն եկած Ղուկաս Մամուրեան վարժապետին նշանակումով: Այդուհանդերձ, դպրատան գոյատեւումը դժուարացած է աշակերտութեան եւ դաստիարակ ուսուցիչներու պակասին պատճառով:

1862-ին, «Արամեան Դպրատուն»ը վերանուանուած է «Պօղոս-Պէյեան Վարժարան», ի յիշատակ տեղւոյն կալուածը նուիրող ազգային բարերար Պօղոս Պէյ Եռսուֆեանի:

2.ՊՕՂՈՍ-ՊԷՅԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐԱՏՈՒՆ -

Աղեքսանդրիա, 1862-1895


Պօղոս-Պէյեան դպրատունը հաստատուած է Աղեքսանդրիոյ Ս.Պօղոս-Պետրոս ներկայի Եկեղեցիին հանդիպակաց տարածքին վրայ գտնուող նախկին եկեղեցիին վերնատան մէջ, իբրեւ շարունակութիւնը Արամեան Դպրատան, իր երկսեռ բաժիններով եւ սակաւաթիւ աշակերտութեամբ:



«ՊՕՂՈՍ-ՊԷՅԵԱՆ» ԴՊՐԱՏՈՒՆ - 1865

1880-ականի սկիզբներուն, կառոյցին նորոգութիւնը կատարուած է հին եկեղեցիին միացուած է, մինչեւ Ս.Պօղոս-Պետրոս նոր եկեղեցիին շինութեան աւարտը Դեկտեմբեր 1884-ին:

1888-ին, դպրատուն յաճախող աշակերտության թիւը յաւելում կրելով, օրուան իշխանութիւնը մտածած է մասնաբաժնի մը շինութեան նախաձեռնել, սակայն յարմար նկատուած է խարխուլ կառոյցը փլցնել եւ հին եկեղեցիին վայրը շինել նոր առաջնորդարանը իր յարակից վարժարանով:



«ՊՕՂՈՍ-ՊԷՅԵԱՆ» ՎԱՐժԱՐԱՆ - Վկայական - Մրցանակ - 1887

Նոր Ազգային Առաջնորդարանին, ներառեալ Պօղոսեան Ազգային Վարժարանի շինութիւնը աւարտած է 1892-ին, նոր Ս.Պօղոս-Պետրոս եկեղեցիին հանդիպակաց հին եկեղեցիին վայրին մէջ: ([24]. գ.հտր. էջ 15-18)

3.ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐժԱՐԱՆ -

Աղեքսանդրիա, 1895 -

Պօղոսեան Ազգային Վարժարանը նորակառոյց Ազգային Առաջնորդարանին մէջ հաստատուած է 1895-ին:

1896-ին, նախաձեռնութեամբ ուսուցչուհի Օր.Աղանի Կոկանեանի և հաւանութեամբ Աղեքսանդրիոյ Ազգային Իշխանութեան, հաստատուած է նաեւ Պօղոսեան Ազգային Մանկապարտէզը:

Վարժարանը ունեցած է «Ներքին Կանոնագիր Պօղոսեան Ազգային Երկսեռ Վարժարանաց Աղեքսանդրիոյ» 14 էջոց պրակը (Տպ.Ս.-Դարբինեան, Գահիրէ, 1898), վաւերացուած՝ Աղեքսանդրիոյ Թաղական Խորհուրդին կողմէ 15/27 Նոյեմբեր 1897ին: ([XXIX] - [12]. թիւ 8)




«ՊՕՂՈՍԵԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐժԱՐԱՆ - 1895

Յաջորդական տասնամեակներուն, Աղեքսանդրիա հաստատուած գաղթականներու գալուստով, երկսեռ աշակերտութեան թիւը յաւելում կրած է եւ վարժարանին ուսումնական մակարդակը բարձրացած, ի պատիւ հոն դասաւանդելու կոչուած բազմաթիւ վաստակաւոր դաստիարակ-ուսուցիչներու:

Ուսանողութեան թիւը 1924-1925 տարեշրջանին հասած է 768 աշակերտի:

1946-ին, դէպի հայրենիք ներգաղթին եւ 1960-ականներու արտագաղթին պատճառով աշակերտութեան թիւը դժբախտաբար շարունակ նուազում կրած է:

1968-1969 տարեշրջանին, Ազգային Իշխանութիւնը յարմար նկատած է Պօղոսեան Վարժարանի աշակերտութիւնը միատեղել Մելգոնեան Մանկապարտեզի շէնքին մէջ, որուն հիմնովին նորոգութիւնը կատարուած է 1985-ին:



«ՊՕՂՈՍԵԱՆ» ՎԱՐՇԱՐԱՆ ԵՎ «ՄԵԼԳՈՆԵԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ - 1969

Աղեքսանդրիոյ Ազգային Իշխանութեան որոշումով, Վարժարանին երկրորդական կարգերը հաստատուած են 1974-1975 տարեշրջանին, վարժարան յաճախելով՝ համալսարան ընդունուելու առիթը տալով անոր շրջանաւարտներուն:

Պօղոսեան Ազգ. Վարժարանին տնօրէնները եղած են.

Քրիստափոր Գալփաքճեան (1865-1870), Տիգրան Սաւալանեան (1872-1877), Վահան Մամասեան (1887), Մկրտիչ Առնաւուտեան (1894-1897), Միհրան Ասքանազեան (1897-1898), Յակոբ Պէքարեան (1898-1900), Համբարձում Պէրպէրեան (1901-1902), Յակոբ Աստուրեան (1902-1903), Սմբատ Բիւրատ Տէր Ղազարենց (1905-1906), Յակոբ Աղասէր (1906-1909), Յովհաննէս Գայաեան (1910-1913), Փրոֆ.Մ.Ժամկոչեան (1914-1916), Համբարձում Երամեան (1916-1917), Յովսէփ Գոյումճեան (1917-1919), Սերովբէ Պետրոսեան (1920-1922), Նիկոլ Աղբալեան (1923-1928), Կարապետ Պիոնեան (1930-1933)(1935-1942), Վահրամ Արծրունի (1933-1935), Յակոբ Նալպանտեան (1942-1947), Միհրան Հերարտեան (1949-1952), Բիւզանդ Կոստեան(Չէքիճեան) (1952-1955), Լեւոն Գալէմբէարեան (1957-1963), Սրբուհի Սարգիսեան (1963-1969), Յարութիւն Մարգարեան (1969-1971), Օննիկ Գալուստեան (1971-1976), Մանուկ Գալփաքճեան (1976-1990), Զուարդ Գալայճեան (1990-1991), Շուշան Կանիմեան (1991- :

([34])



«ՊՕՂՈՍԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ - Վկայականի տիտղոսագիր - 1958

Աղեքսանդրիոյ Ազգային Վարժարաններու Հոգաբարձութիւնը Մարտ 1939-ին հրատարակած է «Դալարիք» պատկերազարդ տեղեկատուական պարբերականին միակ թիւը: 1924, 1925 եւ 1926 տարիներուն, Նիկոլ Աղբալեանի խմբագրութեամբ լոյս տեսած են Պողոսեան Ազգ.Երկսեռ Վարժարանի տարեկան գործունէութիւններու “Ձեկուցում”ները, իսկ 1953-էն 1955 տարեշրջաններուն «Ջարթօնք», «Զուարթնոց» եւ «Զանք» աշակերտական պարբերականները:

([12]. թիւ 346, 371, 400 - [14]. էջ 224, 280, 282)

Աղեքսանդրահայ գաղութին տարապայման նօսրացումին պատճառով, վարժարանին գոյատեւումը դժուարութիւններու առջեւ դրած է մեր օրերու ազգային պատասխանատու մարմինները:

ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ - Սիւնֆ, 1938-1948

Աղեքսանդրիոյ Ազգային Իշխանութեան նախաձեռնութեամբ Պողոսեան Վարժարանի Սիւնֆի մասնաճիւղը հաստատուած է քացումը կատարուած է 1 Հոկտեմբեր 1938-ին:



«ՊՕՂՈՍԵԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ - Սիւնֆ, Աղեքսանդրիա – 1938

Մանկապարտիզպանուհի եղած են Տիկին Մարիձա Պալայեան եւ Օր.Գայիանէ Սպարթալեան, իրենց կողքին զօրավիգ ունենալով վարժարանին Հոգաբարձութեան անդամներ Տիար Վ.Յարութիւնեան, Օրիորդներ Ա.Մարգարեան եւ Ա.Պասմաճեան:

Նախակրթարանի փոխ-տնօրէնի պաշտօնը ստանձնած է Գաբրիէլ Թազուրեան, իսկ հետագային տնօրէն նշանակուած է Գաբեգին Պոյաճեան:


Առաջին տարեշրջանի աշակերտութեան թիւը եղած է 39 երկսեռ աշակերտներ (Մանկապարտէզ և Ա, Բ, Գ, Դ դասարաններով): (ԺԱ.1939- [12].թիւ 876)

4.ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ -

Աղեքսանդրիա, 1896 -

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ – 1929 -

Պօղոսեան Մանկապարտէզը հաստատուած է 1896-ին, Աղեքսանդրիոյ Ազգային Իշխանութեան հաւանութեամբ, ընդառաջելով Կ.Պոլսէն եկած մանկավարժ ուսուցչուհի Օր.Աղաւնի Կոկանեանի նախաձեռնութեան:



«ՊՕՂՈՍԵԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ - 1896

Քսաներորդ դարու առաջին տասնամեակներուն տեղի ունեցած դէպի Եգիպտոս գաղթականական հոսքին եւ աշակերտներու թուաճին ընդառաջ, Աղեքսանդրիոյ Ազգային Իշխանութեան որոշումով՝ Առաջնորդ Թորգոմ Եպս. Գուշակեան 1923-ին դիմած է ծխախոտի գործարար Կարապետ Մելգոնեանին, անոր բարերարութեամբ մանկապարտէզի նոր շէնք մը կառուցելու առաջարկով՝ տեղւոյն Պօղոսեան Ազգային Վարժարանի կից հողատարածքին վրայ:

Մանկապարտէզի շինութեան յանձնախումբին անդամակցած են Տիարք Կարապետ Մուղալեան, Ներսէս Կեսարեան, Օննիկ Իշլէմէճեան, Տիրան Պզտիկեան եւ Մանուկ Մանուկեան:



«ՄԵԼԳՈՆԵԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ – 1929

Ճարտարապետ Պողոս Խըտըրեանի նախագիծով, նոր մանկապարտեզին հիմնարկէքը կատարուած է 9 Մեպտեմբեր 1928-ին, հին դպրատան քանդուած շէնքին հողատարածքին վրայ:

Նորակառոյց կրթական յարկին բացումը կատարուած է Կիրակի, 25 Մայիս 1929-ին, եւ Առաջնորդ Թորգոմ Սրբազանի յայտարարութեամբ կոչուած է «Մելգոնեան Մանկապարտեզ», առ ի երախտագիտութիւն բարերար Կարապետ Մելգոնեանի:

Մանկապարտեզին շինութեան ծախսը եղած է 6500 Եգ.Ոսկի:

Հայ մատղաշ սերունդին դաստիարակութեան նուիրական աշխատանքը 1918-էն 1957, շուրջ քառասնամեայ շրջանին յանձն առած է վաստակաւոր մանկապարտիգպանուհի Տիկին Ռեբեկա Զէյթունցեանը:

Մանկապարտեզին վարչուհիներ եղած են նաեւ Էլիզ Նշիկեան, Գայեանէ Սպարթալեան, Մարօ Սահակեան եւ ուրիշներ:



«ՄԵԼԳՈՆԵԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ - Վկայականի տիտղոսագիր - 1920

Ազգային Իշխանութիւնը կարգադրութեամբ, 1968-1969 տարեշրջանին, Պողոսեան Վարժարանի աշակերտութիւնը միատեղուած է Մելգոնեան Մանկապարտեզի շէնքին մէջ, որուն կառոյցին նորոգութիւնը եւ հանդիսասրահին բարեգարդումը կատարուած է 1985-ին:

Մելգոնեան Մանկապարտեզը 1995էն 2003 տարիներուն, պարբերաբար արժանացած է կրթական նախարարութեան «Օրինակելի Մանկապարտեզ» վկայականին:

5.ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԿՐԹԱՐԱՆ - Աղեքսանդրիա , 1924-1952

Կրթարանին հիմնադիր Հայկազուն Ա.Քինյ. Ոսկերիչեան Աղեքսանդրիոյ Քան-Տը-Սէզար թաղաշրջանի Բրէնս Բպրահիմ թիւ 33 շէնքին մէջ, 24 Մայիս 1924-ին հիմնած է «Հայկազնեան Կրթարան»ը մանկապարտեզի, նախակրթարանի եւ բարձրագոյն նախակրթարանի երկսեռ բաժիններով:

Վարժարանին հիմնադրութեան օժանդակած են բարեսէր կանայք Կալենիկ Կամսարական, Ա.Մէրէմէթեան եւ Լ.Սրէնճեան:

Կրթարանին նպատակը եղած է *« տոհմային եւ արդիական լուրջ եւ խնամեալ ուսում եւ դաստիարակութեան մե ջամբումով, թումբ կանգնիլ դէպի օտար վարժարաններ մղուող մատաղատի մանուկներու եւ պատանիներու յարաճուն հոսանքին եւ այդպէսով փրկել զանոնք օտարացումէ եւ այլասիրումէ »:*



«ՀԱՅԿԱԶՆԵԱՆ» ԿՐԹԱՐԱՆ - Աղեքսանդրիա - 1924

Վարժարանին առաջին տարեշրջանը սկսած է 1 Սեպտեմբեր 1924-ին:

Կրթարանը ունեցած է Մանկապարտեզի 3, Նախակրթարանի 7, եւ աղջիկներու համար յաւելեալ Բարձրագոյն Նախակրթարանի 2 տարիներու ուսումնականը: Ընդունուած են կարգ մը աշակերտներու անվճար ուսումնառութիւնը, նիւթական զօրավիգովը՝ բարերար ազգայիններու:

1927-ին, կրթասէր ազգայիններ Արամ Կամսարականի, Կարապետ Մելքոնեանի եւ Ակնցի Գեորգ Սարգիսեան ընտանիքի օժանդակութեամբ գնուած է Քան-Տը-Սեզարի Մէմֆիս փողոցին թիւ 35 շէնքը (նախապէս ֆրանսացի ֆրէրներու «Սէն Կապրիէլ» գոլէճ) եւ տրամադրուած է կրթարանին՝ իբրեւ նոր կայք:

1928-ին, աշակերտութեան միջին թիւը 220 երկսեռ աշակերտի բարձրանալով, վարժարանը վերածուած է եօթնամեայ կրթարանի եւ յաջորդաբար ունեցած՝ հայկական պարախումբ, երկսեռ երգչախումբ եւ սկաուտական միաւորներ:



«ՀԱՅԿԱԶՆԵԱՆ» ԿՐԹԱՐԱՆ - Վկայագրի տիտղոսագիր - 1949

1930-ականներու կէսերուն, պիտճեական անձուկ պայմանները սպառնացած են կրթարանին գոյատեւումին, սակայն կրթասէր անձինք, գլխաւորութեամբ Արամ Ա. Կամսարականի, կրթարանը «ազատած են տոկոսաւոր պարտքի մաշող հոգերէն»:

([24]. գ.հոր. էջ 480-484)

Վարժարանին հիմնադիր Հայկազուն Ա.Քինյ. Ոսկերիչեան, իր հիւանդութեան պատճառով և բժիշկներու հանգիստի պարտադրութեամբ, որոշած է կրթարանը փակել 1952-1953 ուսումնական տարեշրջանին: ([24]. գ.հտր.էջ 492)

6.ՊԱԼԱՅԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - Աղեքսանդրիա , 1927-1938

1 Սեպտեմբեր 1927-ին, Տիկին Մարիցա Պալայեանի նախաձեռնութեամբ «Պալայեան Մանկապարտէզ եւ Երկսեռ Վարժարան Աղեքսանդրիոյ» անունով կրթարանը հիմնուած է Իպրահիմիէ թաղաշրջանին մէջ:

Վարժարանին նպատակը եղած է *«կրթել նոր սերունդը ազգային ոգիով եւ ուսուցանել անհրաժեշտ գիտելիքներն եւ օտար լեզուները լաւագոյն մեթոտով»:*

Կրթարանին բարոյական հոգատարութիւնը ստանձնած է խնամակալ մարմին մը, որ հսկած է մանուկներու ֆիզիքական կրթութեան եւ երկսեռ սկսնակական խումբերու կազմութեան:

1929-ին եւ յաջորդ տարեշրջանին, վարժարանին նախակրթարանի երեք կարգերը համալրուած են երեք դասարաններով:



«ՊԱԼԱՅԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ - 1927 - Վկայականի տիտղոսագիր

Աշակերտութեան թիւը 1931-1938 տարիներուն եղած 60-էն 80-ի միջեւ:

15 Օգոստոս 1931-ին, վարժարանը փոխադրուած է Աղեքսանդրիոյ Սիուֆի շրջանի սեփական շէնքին մէջ եւ տեւած է մինչեւ 1938 Յունիս: ([24]. գ.հտր. էջ 476)

7. ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ -Աղեքսանդրիա, 1933

Հայաստանեայց Եկեղեցւոյ Աղեքսանդրիոյ Կիրակնօրեայ Վարժարանին հիմնադիրը եղած է Տ.Մեսրոպ Քինյ. Քեօշկերեանը 1933-ին:

Վարժարանը հաստատուած է Աղեքսանդրիոյ Պատ.Քաղաքական Ժողովի հաճութեամբ, իսկ գոյատեւութեան օժանդակած է տեղւոյն Պօղոսեան Ազգային Վարժարանի հոգաբարձութիւնը:

Կիրակնօրեայի դասաւանդութիւնները սկիզբը տեղի ունեցած են Քան տը Սեզարի Հ.Բ.Ը.Միութեան շէնքին սրահին մէջ, եւ հետագային՝ Մելքոնեան Մանկապարտէզի սրահին մէջ Ուրբաթ օրերը կ'էսօրէ ետք, իսկ Կիրակի կ'էսօրէ առաջ, մէկական ժամ տեւողութեամբ:

1960-ականներու սկիզբէն, դասախօսութիւնները կատարուած են եգիպտահայոց Առաջնորդական Փոխանորդ Զաւէն Վրդ. Չինչինեանի կազմակերպութեամբ եւ անոր վերամշակած ծրագրին գործադրութեամբ:

Կիրակնօրեան գործած է վեց ուսուցիչ-ուսուցչուհիներու հսկողութեամբ եւ 80 աշակերտներու մասնակցութեամբ: ([24. գ. հտր. էջ 399])

8.ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ - Աղեքսանդրիա , 1936-1939

Հիմնուած է 5 Օգոստոս 1936-ին դաստիարակ-ուսուցիչ Վահրամ Արծրունի կողմէ, գործակցութեամբ իր դստեր Օր.Ալիսի եւ բարոյական օժանդակութեամբը կրթասէր ազգայիններու:

Վարժարանին հասցէն եղած է Աղեքսանդրիոյ Սալահ-էլ-տին թաղաշրջանի թիւ 16, Ֆաքիի փողոց, «Վերածնունդ» Հայ Երիտասարդաց Ակումբի շէնքին մէջ, որուն վայրը ցերեկը տրամադրուած էր վարժարանին, իսկ երեկոները հաւաքավայրն էր յիշեալ ակումբի անդամներուն:

Աշակերտութեան մուտքի արձանագրութիւնները սկսած են 2 Սեպտեմբեր 1936-ին, տարեշրջանը սկսած՝ 14 Սեպտեմբեր 1936-ին, իսկ պաշտօնական բացումը կատարուած է 2 Հոկտեմբեր 1936-ին:



«ԹԱՐԳՄԱՆՉԱՅ» ՎԱՐԺԱՐԱՆ - Վկայագրի Տիտղոսագիր - 1938

Վարժարանին նպատակը եղած է « *մանկավարժական նոր եւ գործնական ուղղութեամբ բարեկիրթ եւ զարգացած հայ երկսեռ պատանիներ պատրաստել* »:

Թարգմանչաց վարժարանին Մանկապարտէզի 3 եւ Նախակրթարանի 6 դասարանները յաճախած են շուրջ 80 աշակերտներ:

Վարժարանը ունեցած է խնամակալ մարմին մը երիցուհի Մ.Քեօշկերեանի ատենապետութեամբ եւ գործած է երեք տարի:

Տնտեսական դժուար պատճառներու բերումով՝ կրթարանը փակուած է Յունիս 1939-ին: Հետագային, անոր հիմնադիր Վահրամ Արծրունի 1947-ին ներգաղթած է Հայաստան: ([24]. գ.հտր. էջ 466)

9.ԹԱԳՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ -

Աղեքսանդրիա , 1937-1943

Թղթակցութեամբ կատարուող ուսումնական «Թագնագիտական Հայ Վարժարան»ը հաստատուած է Աղեքսանդրիոյ մէջ 1937-ին, Հայկազուն Ս. Տէտէեանի նախաձեռնութեամբ եւ տնօրէնութեամբ:

Դասագիրքերը թարգմանուած եւ վարժարանի ուսանողներուն դրկուած են Ամերիկայի, Եւրոպայի, Յորդանանի եւ այլ երկիրներու մէջ հետեւողներուն:

Իր հիմնադրին ղեկավարութեամբ, վարժարանը գործած է մինչեւ 1943:

([24]. գ.հտր. էջ 400)

Փ Ո Ր Ս Ա Յ Ի Տ

1.«ՄԻՍՈՒԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ - Փոր Սայիտ , 1915 - 1919

Վարժարանը հիմնուած է 1915-ին, կազմակերպութեամբ Հ.Բ.Ը.Միութեան, Փոր-Սայիտի վրանաքաղաքին մէջ պատասպարուած գաղթականներու 1253 երկսեռ մանուկներուն եւ պատանիներուն համար:

Սուէզի ջրանցքի արեւելեան եզերքին վրայ, վարժարանին աշակերտութիւնը սկիզբը տեղաւորուած է Անգլիական կառավարութեան կողմէ տրամադրուած 36 վրաններու տակ, որոնք հետագային փոխարինուած են վեց եղեգնապատ շէնքերով եւ վեց խոշոր վրաններու ներքին 36 բաժանումներով: Այս խոշոր վրան-դասարաններուն մէջ հաստատուած են մանկապարտէզի, նախապատրաստականի եւ նախակրթարանի մանչերու եւ աղջիկներու բաժինները:



ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ
ՓՈՐ ՍԱՅԻՏԻ
ՄԻՍՈՒԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
(Գծագր. Մ.Պալայեան)

Բացման հանդէսը կատարուած է 14 Հոկտեմբեր 1915-ին, նախագահութեամբ Եգիպտոսի Հայոց Առաջնորդ Տ.Թորգոմ Ս.Եպս. Գուշակեանի որ իր խօսքին մէջ զայն մկրտած է «Կիլիկեան-Միսուան» Վարժարան: ([24]. գ.հտր. էջ 276)

Վարժարանին տնօրէն նշանակուած է Թովմաս Գարագաշեան(Սեյօնքեան), որուն կարճ պաշտօնավարութենէն ետք, Յունուար 1916-ին անոր յաջորդած են Համբարձում Երամեան իբրեւ վերատեսուչ եւ Հմայեակ Գրանեան իբրեւ տեսուչ:

1917 Մայիսին, տնօրէն նշանակուած է Մեսրոպ Ժամկոչեան, օգնական փոխ տնօրէն ունենալով Հմայեակ Գրանեան: Մանկապարտէզի տեսչուհին եղած է Տիկ. Բերուզ Մասիկեան, իսկ նախակրթարանի տեսուչը եղած է Զաքար Մասիկեան:

Վարժարանին մարմնամարզի ուսուցիչը եղած է Գ.Զօպանեան:

(ԺԲ.1916, էջ181)

1918-ին կազմուած եւ գործած են Տիկնանց, Կրթական եւ Որբախնամ Յանձնախումբերը: ([24]. գ.հտր. էջ 276,278)

Հետագային, վարժարանին պատսպարեալ-ուսանողներուն թիւը հասած է շուրջ 2250 երկսեռ աշակերտի:


Վարժարանին մէջ պաշտօնավարած են 17 երկսեռ ուսուցիչներ եւ 44 օգնականներ, որոնց հետագային միացած են զանազան շրջաններէ ժամանած վաստակաւոր կրթական մշակներ և օգնականներ, անոնց թիւը 64-ի հասցնելով:([17].էջ 53)

1919-ի սկիզբէն, յաջորդաբար հայրենիք մեկնող գաղթականներու կարաւանները իրենց հետ տարած են «Սիսուան»ի 2000 աշակերտութեան մեծամասնութիւնը, որուն հետեւանքով վարժարանը փակուած է 16 Հոկտ.1919-ին:

(Գ.էջ 181-189 - [24]. գ.հտր. էջ 280)

2.ՓՈՐ ՍԱՅԻՏԻ ՈՐԲԱՆՈՑ - ՎԱՐՇԱՐԱՆ , 1918 -1919

Որբանոց-Վարժարանը կազմուած է 1918 Սեպտեմբեր 10-ին, Փոր Սայիտի վրանաքաղաքը փոխադրուած Երուսաղէմի որբանոցէն 195 եւ Պաղտատի այրիանոցէն 300 երկսեռ որբերէ եւ այրիներէ:



ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ
ՓՈՐ ՍԱՅԻՏԻ
ՈՐԲԱՆՈՑ - ՎԱՐՇԱՐԱՆ
1918 - 1919
(Գծագր. Մ.Պալայեան)

Հ.Բ.Ը.Միութեան հովանաւորութեամբ եւ ծախքերու հոգածութեամբ, 400-600 պատսպարեալներ որբանոց-վարժարան ընդունուելով ուսումնառութեան հետեւած են 3 տղոց եւ 4 աղջկանց դասարաններու մէջ, հոգատարութեան արժանաւորվ՝ 11 երկսեռ ուսուցիչներու, տեսչութեամբ՝ Մամբրէ Ծ.Վրդ. Սիրունեանի, գործակցութեամբ՝ Տիկ. Մաքրուիի Նետութեանի եւ աւագ ուսուցիչ Վահան Եէնիգօմշեանի:

Որբանոց-Վարժարանը փակուած է 1919 Նոյեմբերին, երբ գաղթականները վրանաքաղաքէն մեկնիլ սկսած են իրենց ծննդավայրերը:

([24]. գ.հտր. էջ 263 - [17]. էջ 53)

Զ Ա Կ Ա Զ Ի Կ

*** «... Զակագիկի մեջ գտնուած են 20 տուն արաբախօս հայեր , ունի փոքր վարժարան մը որ աւելի կանոնաւոր է չնայելով որ երկու ընտանիք կը կրէ ատոր ծախքը:»
(«Արմենիա» լրագիր, Մարսէլ, 5 Դեկտ.1894, թիւ 37)

*** «Տիպար գաղութ մը Զակագիկ»

«... եօթը-ութը տարիէ ի վեր այս տեղի դպրոցը յարատեւ ընթացք մը ունեցած է եւ պիտի ունենայ որչափ ատեն որ անոր պէտքն զգալի ըլլայ, ...»
(«Փարոս» լրագիր, Գահիրէ, 31 Յուլիս 1897, թիւ 21)

*** Կովկասահայ Մելիք Օհանջանեան, 1901-էն մինչեւ 1904 հիմնած է միջազգային ցերեկեայ եւ գիշերօթիկ վարժարան մը, որուն մանուկներուն կրթութեամբ շրջան մը զբաղած է Աւետիս (Աւօ) Նազգաշճեան:
([24]. գ.հտր. էջ 135)

*** 1902-էն 1905, Ադեքսանդրիայէն հրաւիրուած Օր.Մարի Սէմերճեան, Իպրահիմիէ գիւղաքաղաքին (ԶԱԿԱԶԻԿ) մեջ կազմուած «Հայկական Վարժարան»ին աշակերտներուն ուսումնառութիւնը ստանձնած է:

Հայկական Վարժարանին բ.տարեշրջանը աւարտած է 31 Յուլիս 1904-ին:

(Ա.1904, թիւ 16)

«ՄԷՄԵՐՃԵԱՆ» ՎԱՐՇԱՐԱՆ - Զակագիկ, 1905-1907

«ԶԱԿԱԶԻԿԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ» -

Զակագիկ, 1907-1922

«ՕՇԱԿԱՆ» ՎԱՐՇԱՐԱՆ - Զակագիկ, 1922-1938

Զակագիկի ազգայիններէն Իսկէնկեր Մեօթէմէտեանի քաջալերութեամբ եւ օգնութեամբ, Ադեքսանդրիոյ Պօղոսեան Ազգային Վարժարանի աւագ ուսուցչուհի Օր.Մարի Սէմերճեան 1905-ին Զակագիկ երթալով իր անունով հիմնած է «Սէմերճեան Վարժարան»ը:



«ՕՇԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՇԱՐԱՆ»ի
շէնքը - Զակագիկ , 1922

Վարժարանին ձեռքբերած յաջողության եւ տեղւոյն ազգայիններուն մղումին ընդառաջ՝ 1907-ին վարժարանը կոչուած է **«Զակազիկի Հայոց Ազգային Դպրոց»**, անոր մատակարարութիւնը յանձնելով տեղւոյն աշակերտներու ծնողներէն կազմուած հոգաբարձական մարմնին: ([24]. գ.հտր. էջ135-136)

Կրթարանին Վարիչը եղած է Տիկ.Մելքոնեան, գործակից հոգաբարձու անդամներ ունենալով Յարութիւն Տէյիրմէնճեան եւ Գրիգոր Համբիկեան: ([8]. էջ 153,182)

Վարժարանը ունեցած է մանկապարտէզի երեք եւ նախակրթարանի հինգ կարգեր, առաւելագոյնը 30 երկսեռ աշակերտներով:

1911-ին, ընդառաջելով տեղւոյն Հոգաբարձութեան խնդրագրին՝ Գահիրէի Ազգային Իշխանութիւնը 50 եւ ապա 80 ոսկիի տարեկան յատկացում մը կատարած է վարժարանին, որուն վերահսկողութիւնը ստանձնած էր *«Կամսարական տան հայ պաշտօնէից միութիւն»*ը: Սոյն միութեան ջանքերով, դպրոցը տեղափոխուած է Զակազիկի «լաւագոյն շէնքերէն մէկը», օժտուելով արդիական կահոյքով:

([9]. էջ 288 - Զ. 8 Մեպտ.1931)



«ՕՇԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՇԱՐԱՆ» - Վկայականի Տիտղոսագիր , 1921

Վարժարանին կարիքներուն ամսական գումարներով օժանդակած են կարգ մը բարեսէր ազգայիններ, ինչպէս նաեւ Արմենակ Կամսարականը, տրամադրելով տարեկան 500 Եգ.Ոսկի: ([24]. ա.հտր. էջ 249 – [13]. էջ 23)

1922-ի ամավերջի հանդէսին, Եգիպտահայոց Առաջնորդ Թորգոմ Եպս. Գուշակեան կրթարանը մկրտած է **«Օշական Վարժարան»** անունով:

Աշակերտութեան թիւին նուազումին եւ պիւտճեական դժուարութիւններու պատճառով Զակազիկի Թաղական Խորհուրդը, Գահիրէի Ազգային Իշխանութեան տեղեկացուցած է վարժարանին փակումը Յունիս 1938-ին: ([24]. գ.հտր. էջ 147)

(Տուեալները քաղուած են Եգիպտահայ «Ազատ Քեմ», «Փիւնիկ», «Յուսաբեր», «Արեւ» եւ «Զերլին» լրագիրներէն, նաեւ «Եռամեայ Տեղեկագիր Զակազիկի Ազգային Վարժարանի 1910-1913» պրակէն, Տպ. Զ.Ն. Պերպերեան, 1913, Գահիրէ):

(12).թիւ136)

ԱՍԻՈՒԹ

«ԸՆԿԵՐԱԿԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ

ԷՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ -

«ԱՍԻՈՒԹԻ ՀԱՅՈՒՀԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ» - Ասիութ , 1902

«Ընկերական» կրթարանը հիմնուած է 2 Յուլիս 1902-ին, հովանաւորութեամբ Ակնցի ծխախոտի գործարանատէր Սիմոն Սարգիսեանի եւ գործակցութեամբ Ասիութի խումբ մը կրթասէր ազգայիններու:

Նախակրթարանը հաստատուած է քաղաքին նեղ փողոցի մը շէնքին երկու սենեակներով յարկաբաժնի մը մէջ, որոնցմէ մէկը օգտագործուած է իբրեւ զբօսարան:

Ուսումնարանին մէջ դաստիարակուած են Ասիութի Սարգիսեան և Մաթուեան ծխախոտի գործարաններուն մէջ աշխատող շուրջ 20 հայ ընտանիքներու զաւակները:

Տեղւոյն կանայք խնամատարութիւնը ստանձնած են աշակերտութեան, իսկ դաստիարակ ուսուցչուհին եղած է Օր.Վիքթորիա Զօհրապեան:

(Ը.1902, թիւ 284,296 - [24]. գ.հտր. էջ 409)

Վարժարանը յիշուած է նաեւ «Ասիութի Հայուհեաց Վարժարան» անունով:

(ԺԶ1, 1903, թիւ 5)



ԿԱԹՈՂԻԿԷ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ ԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

1. Ս.ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ ՆԱԽԱԿՐԹ. - Գահիրե , 1849-1855
2. ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԻՒՆ ՄԱՅՐԱՊԵՏՆԵՐՈՒ
ՕՐԻՈՐԴԱՅ ՅԱՏՈՒԿ ՎԱՐԺԱՐԱՆ-ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-1914
Հայ Կաթողիկէ «Քերց Անարատ Յղութեան» Վարժարան - 1914 - 1922 - 1962
3. Ս.ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ՎԱՐԺԱՐԱՆ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ -
Գահիրե , 1919 -1920 , 1922-1925
4. ՄԱԹՈՍԵԱՆ ԱՂԶԿԱՆՑ ՈՐԲԱՆՈՅ - ԿՐԹԱՐԱՆ - Աղեքսանդրիա , 1924-1934
5. ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ «ՍԷՆԹ ԱՆԹՈՒԱՆ» ԴՊՐՈՅ - Աղեքսանդրիա , 1933
6. «ՀԱՅՐ ԱԼԻՇԱՆ» ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ ՎԱՐԺԱՐԱՆ», 1934-1936
Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան
«ՀԱՅՐ ՂԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆ» Վարժարան , 1936-1937
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ -Աղեքսանդրիա , 1937-1946 - Շուլց ,1946-1964
7. ՎԻԵՆՆԱՅԻ Մխիթարեան Միաբանութեան
Ս.ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ -
Գահիրե , Հելիոպոլիս , 1935-1955, 1955-1964
8. ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԿԱԹՈՂ. ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ
Գահիրե, Ֆակկալա, 1937-1952 , Հելիոպոլիս , 1953 –

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ ԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

1. ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՅ - Գահիրե , 1899-1903
2. ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ - Գահիրե , 1914-1916
3. «ՄԱՆԿԱՆՑ ԲԵԹԵԼ» ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ - Գահիրե , 1926-1929
4. ԳԻՇԵՐԱՅԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ - Գահիրե , 1927-1928
5. ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅ - Գահիրե , 1933-1947
6. «ԷՄՄԱՆՈՒԷԼ» ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ - Աղեքսանդրիա , 1947-1953

ԵԳԻՊՏԱՀԱՅ
ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ
էւ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ
ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ
ՍԱՆՈՒՑ - ՇՐՋԱՆԱԻԱՐՏԻՑ
ԿԱՆԱՅԻ
ՊԱՏԱՆԵԿԱՆ - ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՄԱՍՈՒԼԻ - ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ԽՆԱՅՈՂԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

Գահիրէ , Ադեքսանդրիա

Փոք Սայիտ , Զակազիկ

Թանթա էւ Ասիութ

ԿԱԹՈՂԻԿԷ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

1.Ս.ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ - Գահիրե , 1849 -1855

Եղբայրության Կաթողիկե Նախակրթարանը հիմնուած է Արհի. Տ. Պօղոս Եպս.Աքթարեանի նախաձեռնութեամբ 1849-1855 տարիներուն, նպատակ ունենալով *«հայ մանուկներուն մայրենի լեզու եւ հայոց պատմութիւն ուսուցանել»*:

1904-1907 տարիներուն, հայ կաթողիկե պատրիարքական փոխանորդ Արհի. Տ.Սերովբէ Եպս. Դաւթեան հայերէն լեզու դասաւանդած է համայնքի զաւակներուն:
([10]. էջ 35 - [24]. գ.հտր. էջ 303)

2.ՀԱՅ ԿԱԹՈՂ.ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԻՒՆ ՄԱՅՐԱՊԵՏՆԵՐՈՒ

ՕՐԻՈՐԴԱՅ ՅԱՏՈՒԿ ՎԱՐԺԱՐԱՆ - ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-1914

Հայ Կաթողիկե «Քերց Անարատ Յղութեան» Վարժարան

Աղեքսանդրիա , 1914 - 1922 - 1962

Աղեքսանդրիոյ «Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Վարժարան»ը հաստատուած է 5 Օգոստոս 1914-ին, հովանաւորութեամբ Աղեքսանդրիոյ Հայ Կաթողիկե Վիճակաւոր Առաջնորդ Յովհաննէս Արքեպս. Գուգեանի:

Հայ Քոյրերու Աղջկանց յատուկ վարժարանին բացումը տեղի ունեցած է 21 Սեպտեմբեր 1914-ին, թիւ 38, Նէպի Տանիէլ փողոց, Աղեքսանդրիա հասցէին:

(Լ.1914, թիւ 269 - [24]. գ.հտր. էջ 320)



«ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ» - Շուլց , 1922-1962

Վարժարանը ունեցած է Մանկապարտէզի 3 , Նախապատրաստականի 2 , Նախակրթարանի 3 եւ Բարձրագոյն կարգերու 3 դասարաններ:

1915-1916 տարեշրջանին, Յովսէփ Վրդ. Քաջունիի ջանքերով, վարժարանը վարձակալական պայմաններով փոխադրուած է Աղեքսանդրիոյ գերմանական Սէն-Շարլ Պորթոմէ քոյրերու դպրոցի շէնքը:

1920-1921 տարեշրջանին, կրթարանը հաստատուած է Փոքր-Իսթ թաղին Ազիլ-Ռուտօլֆ ապաստանարանին շէնքին մէջ:

Իսկ, 1922-ի Սեպտեմբեր 2-ի վերամուտին, Հայ Կաթողիկէ Քոյրերու վարժարանը հաստատուած է Աղեքսանդրիոյ Շուլց արուարձանին մէջ գտնուող պարտէզով շրջապատուած միայարկ վարձու առանձնատունը:

Վարժարանին շէնքը յարկով մը բարձրացուած եւ գիշերօթիկ բաժինը հաստատուած է 1931-ին: Այս շրջանին, աշակերտութեան թիւը հասած է 130-ի:

1938-ին, Անարատ Յղութեան Քոյրերու Շուլցի վարժարանին մէկ մասնաճիւղը բացուած է Քան-Տը-Սէզար թաղաշրջանին թիւ 12, Էլիսիս Փողոցի հասցէին, եւ ապա փոխադրուած՝ թիւ 32, Մէմֆիս փողոցին վրայի բարերարներ Օհանիկ Գրուպալեանի եւ Վէնսան Մաթոսեանի կողմէ գնուած եւ Քոյրերու Միաբանութեան նուիրուած շէնքին մէջ, ուրտեղ հաստատուած են մանկապարտէզի եւ նախակրթարանի աղջկանց բաժինները:

1922-ին հիմնուած Կաթողիկէ Հայ Քոյրերու Շուլցի վարժարանը փակուած է 1962-ին: ([24]. գ.հտր. էջ 327)

3.Ս.ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ ՎԱՐԺ. ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ - Գահիրէ , 1919 -1920 , 1922 -1925

Հայ Կաթողիկէ պատրիարքարանի մանչերու յատուկ վարժարանը հաստատուած է 5 Սեպտեմբեր 1922-ին, նախաձեռնութեամբ Հայ Կաթողիկէ համայնքի Վիճակաւոր Արհի. Տ.Յովհաննէս Եպս. Գուգեանի, Գահիրէի Ֆակկալա թաղաշրջանի թիւ 35 շէնքին մէջ: (Լ.1922, թիւ 53)

Վարժարանին 1919-1920 պատրաստական շրջանի տեսուչը եղած է Ալեքսիս Վրդ. Պաթանեան, հետագային դասաւանդող օգնականներ ունենալով Հոգեւոր Հայրեր Վարդան Խաչերեան, Արսէն Խորասանճեան եւ Միքայէլ Մերգիպեան Վարդապետները:

Նիւթական դժուարութեան պատճառով վարժարանը փակուած է 1925-ին:

4.ՄԱԹՈՍԵԱՆ ԱՂԶԿԱՆՑ ՈՐԲԱՆՈՑ - ԿՐԹԱՐԱՆ - Աղեքսանդրիա , 1924-1934

Աղեքսանդրիոյ Իպրահիմէյա թաղին վարձու շէնքի մը մէջ, բարերարութեամբ Յովհաննէս Պէյ Մաթոսեանի, 24 Յունիս 1924-ին հաստատուած է «Մաթոսեան Աղջկանց Որբանոց-դպրոց»ը, Լիբանանէն բերուած 62 հայ որբուհիներու համար:

Դպրոցին ծրագրին ներառնուած եւ հաստատուած է աշակերտուհիներուն համար արհեստանոց մը, զանազան ձեռարուեստներու վարժութեան նպատակով:

Որբանոցին մինչեւ փակումը 1934-ին, բոլոր ծախքերը տարեկան շուրջ 2000 Եգ. Ոսկիով՝ հոգացուած են Յովհաննէս Մաթոսեանի(մինչեւ իր մահը 1927) եւ ապա, ընտանիքի անդամներուն կողմէ: ([24]. գ.հտր. էջ 327)

5.ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ «ՄԷՆԹ ԱՆԹՈՒԱՆ» ԴՊՐՈՑ –

Աղեքսանդրիա , 1933

Ինքնատիպ այս ուսումնական յարկը բացուած է 2 Սեպտեմբեր 1933-ին, Պօղոս Վրդ.Շիրիկճեանի նախաձեռնութեամբ, հայ կաթողիկէ երիտասարդներու

հայերեն սորվելու տրամադրութեանը ընդառաջելու ծրագրով:

Դպրոցին դասապահերը կայացած են կէսօրէ ետք ժամը 4-էն 5-ի ընթացքին, դասախօս ունենալով՝ Շիրիկճեան Վարդապետը եւ Շաւարշ Փափագեանը (ապա Ղեւոնդ քահանայ): ([24]. գ.հտր. էջ 329)

6.«ՀԱՅՐ ԱԼԻՇԱՆ» ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

ՎԱՐԺԱՐԱՆ», 1934-1936

Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան

«ՀԱՅՐ ՂԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆ» Վարժարան , 1936-1937

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - Աղեքսանդրիա , 1937-1946

Աղեքսանդրիա - Շուլց , 1946-1964

Աղեքսանդրիոյ «Հայր Ալիշան» հայ կաթողիկէ երիտասարդաց միութեան նախաձեռնութեամբ 1 Սեպտեմբեր 1934-ին հաստատուած հայերէն, արաբերէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներու դասընթացքը, հիմքը հանդիսացած է «Հայր Ալիշան» անունով կաթողիկէ հայոց վարժարանի մը հաստատումին:

Այսպէս, Աղեքսանդրիոյ Սալահ-էլ-Տին թաղին մէջ, 2 Հոկտեմբեր 1935-ին հաստատուած է վարժարանը, իր մանկապարտէզի եւ նախակրթարանի չորս դասարաններու 65 աշակերտներով, *«հայ երկսեռ մանուկներու տոհմային դաստիարակութիւն տալու»* նպատակով: ([24]. գ.հտր. էջ 329)



«ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» - Շուլց , Աղեքսանդրիա , 1936-1946

Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան լիազօր-ներկայացուցիչ Քերովբէ Վրդ.Զրաքեանի ջանքերով եւ Աղեքսանդրիոյ կաթողիկէ համայնքի վիճակաւոր Յակոբ Արք. Նեսիմեանի բարոյական աջակցութեամբ՝ վարժարանը փոխանցուած է Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան եւ կոչուած՝ «Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան Հայր Ղեւոնդ Ալիշան Վարժարան»:

Նորահաստատ վարժարանին բացումը կատարուած է 1 Հոկտեմբեր 1936-ին, բարերար Մաթոսեան Եղբայրներու նիւթական օժանդակութեամբ վարձուած Աղեքսանդրիոյ Քան-Տը-Սէզար թաղի Բրէնս Իպրահիմ փողոց թիւ 36 շէնքին մէջ: Վարժարանը ունեցած է Մանկապարտէզի 3 , Նախակրթարանի 6 եւ Բարձրագոյնի 3 դասարաններ:

Աշակերտութեան յաւելումին ընդառաջ, վարժարանը փոխադրուած է Աղեքսանդրիոյ Շուլց արուարձանին, նոյն բարերարներուն եւ համայնքի կրթասէր

անդամներուն մօտ կատարուած հանգանակութեան օժանդակութեամբ գնուած պարտէզով շէնքի մը մէջ, որուն բացումը կատարուած է 29 Յունիս 1946-ին:



«ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ» - Շուլց, Աղեքսանդրիա, 1960-1964

Այստեղ, 27 Նոյեմբեր 1960-ին բացումը կատարուած է մանկապարտէզի յատուկ կառոյցի մը, իր բոլոր յարմարութիւններով: ([24]. գ.հտր. էջ 352)

Արտագաղթի եւ աշակերտութեան նուազումին պատճառով, Աղեքսանդրիոյ Մխիթարեան վարժարանը իր դռները փակած է 1964 Յունիսին:

([10]. էջ 36 - [24]. գ.հտր. էջ 358)

7.Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան

Ս.ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ -
Գահիրէ , Հելիոպոլիս , 1935-1955, 1955-1965



«ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ»-Տարպ-էլ-կինէս,Գահիրէ

Վիեննական Ս.Գրիգոր Լուսավորիչ Միխիթարեան վարժարանին շինութեան աշխատանքները սկսած են 1934-ին եւ բացումը կատարուած է 9 Սեպտեմբեր 1935-ին, Գահիրէի քաղաքակեդրոն Աթապա հրապարակին մօտակայ՝ Տարպ-Էլ-Կինէնա թաղամասին Քինիսէթ-Էլ-Արման (Հայոց Եկեղեցի) փողոցի հասցէին:

Սկզբնական շրջանին, վարժարանը ունեցած է 26 աշակերտ, որոնց թիւը 1940-ականներուն բարձրացած է 140-ի:

Եռայարկ վարժարանին նախագիծը պատրաստած է ճարտարապետ Կարօ Պալեան: ([24]. գ.հտր. էջ 360)

Նորակառոյց կրթարանը օժտուած է նախապատրաստականի, նախակրթարանի եւ բարձրագոյն նախակրթարանի մանչերու համար գիշերօթիկ եւ ցերեկօթիկ բաժիններով:

Վարժարանին տեսչութիւնը ստանձնած է Հայր Վարդան Վրդ. Մելքիսեթեան:



«ՄԻԽԹԱՐԵԱՆ ՎԱՐՇԱՐԱՆ» - Քլէոփաթրա փողոց , Հել., 1955-1960

Վիեննական Միխիթարեան Վարժարանը 15 Օգոստոս 1955-ին փոխադրուած է Հելիոպոլսոյ թիւ 5, Քլէոփաթրա փողոց 18 սենեակներով առանձնատան մէջ, որուն վարձակալական պայմանագրութիւնը կատարուած էր նոյն 9 Յունիս 1955-ին:

Հետագային, 21 Նոյեմբեր 1956-ին Հելիոպոլսոյ Ապտ-Էլ-Համիտ Ապուհէֆ փողոցին վրայ, Հելիոպոլսոյ Ընկերութենէն գնուած է 3158 քռ.մէթր տարածքով թիւ 715 հողակտորը:

Կիր. 19 Ապրիլ 1959-ին, հիմնարկէքը կատարուած է վարժարանին նոր շէնքին, բարերարութեամբ՝ Տիկին Արաքսի Ամպարեանի:

Նոր վարժարանին ճարտարապետը եղած է Հրազդան Պալեան, յանձնակատար ձեռնարկուն՝ Արտաշէս Օրագեան, իսկ Գործադիր Յանձնախումբին անդամակցած են Տիարք Պերճ Դանիէլեան, Պարոյր Արմէնեան, Պետրոս Պետիկեան, Ժորժ Միքայէլեան, Եդուարդ Մեսրոպեան եւ Անդրանիկ Արթինեան:

Վարժարանին նորակառոյց շէնքին բացումը կատարուած է 28 Մայիս 1960-ին: (ԼԶ.1957, էջ 136 – ԼԶ.1959-60, էջ 153,223 – ԼԶ.1962, էջ 98,104)



«ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» - Հելիոպոլիս , 1960

Վիեննական Մխիթարեան Հելիոպոլսոյ Վարժարանը, Հայր Բարսեղ Ֆերիատեանի խմբագրութեամբ հրատարակած է «Ուսումնարան» գրական եւ մշակութային պատկերազարդ տարեգիրքը չորս տարի (1957, 1958, 1959/1960 եւ 1962, Տպ.Յուսաբեր, Գահիրէ): ([12]. թիւ 1430,1450,1497,1535)

Ներգաղթ-Արտագաղթի եւ աշակերտութեան նուագումին պատճառով, վարժարանը 1965-ին վարձուած է իրլանտացի վարդապետներու Մէն Ճորճ վարժարանին, եւ հնգամեակ մը ետք *մասնաճիւղը դառնալով դպտի կաթողիկէ համայնքի վարժարանին:* ([24]. գ.հտր. էջ 368 – [10]. էջ 37)

8.ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ

ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ -

Գահիրէ , Ֆակկալա , 1937-1952 , Հելիոպոլիս , 1953 -

Յակոբ Արք. Նեսիմեանի քաջալերութեամբ և հովանաւորութեամբ, աղջկանց յատուկ Անարատ Յղութեան Հայ Կաթողիկէ Քոյրերու վարժարանը հաստատուած է 1 Սեպտեմբեր 1937-ին, Հայ Կաթողիկէ պատրիարքարանին պատկանող Ֆակկալա Փողոց, թիւ 35 շէնքին մէջ, մանկապարտէզի եւ նախակրթարանի երկու դասարաններու բաժինով եւ Մեծաւորուհի Մայր Գարմէլ Ղուկասեանի տեսչութեամբ:

1 Յունիս 1952-ին, Հելիոպոլիս, Ամփէնի պալատին մօտ, թիւ 15, Պատիա փողոցին վրայ, հիմնարկէքը կատարուած է հայ կաթողիկէ քոյրերու արդիական երկյարկանի վարժարանին, Մայր Մարգրիտ Գազանճեանի Մեծաւորութեան շրջանին: 1953-1954 դպրոցական տարեշրջանը սկսած է գիշերօթիկ եւ ցերեկօթիկ աղջկանց մանկապարտէզի, նախակրթարանի եւ բարձրագոյն նախակրթարանի բաժիններով, *միջազգային հայ եւ օտար աշակերտութեան համար*, շուրջ 300 աշակերտներով: ([24]. գ.հտր. էջ 305)



«ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ» - Հելիոպոլիս

Ներկայիս, Անարատ Յղութեան Քոյրերու միջազգային թեքումով Վարժարանը, շուրջ 3000 աշակերտուհիներով՝ կը յարատեւէ Հայ Կաթողիկէ առաքինազարդ քոյրերու ղեկավարութեամբ, իր օրինակելի ուսումնական եւ դաստիարակութեան ծրագիրներով:

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

1. ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ - Գահիրէ , 1899 -1903

Աւետարանական դպրոցը հիմնուած է 3 Սեպտեմբեր 1899-ին Վերապատուելի Մկրտիչ Յ.Գնաճեանի նախաձեռնութեամբ, մանչերու, աղջկանց եւ մանկապարտեզի բաժիններով, Պապ-Էլ-Խալքի հրապարակին արեւելակողմը (Մոհամետ Ալի փողոցին մօտ), Ազլիացիներու վարժարանին շէնքին մէջ (մանչերու համար) եւ Գահիրէի Միջնաբերդի Հօշ Էլ Շարքաուի, Տավուտեյա շրջանին մէջ (աղջկանց համար):

Կրթարանին տնօրէնը եղած է Վեր.Գնաճեան, գործակից ունենալով իր անգլիացի կինը հայ եւ օտար ուսուցչական կազմով, իսկ հաստատումին օժանդակած են Եագուպեան Եդր.ները եւ Գրիգոր Գըմգըմեան:

Սկզբնական շրջանին դպրոցը ունեցած է 80 երկսեռ աշակերտներ:

Նիւթական դժուարութիւններու պատճառով կրթարանը փակուած է 1903-ին:

([24]. ա.հտր. էջ 285 – [9]. էջ 190)

Վեր. Գնաճեան, 1899-ին Գահիրէի Միջնաբերդի թաղաշրջանին մէջ կազմակերպած է նաեւ «երեկոյեան մասնաւոր դասեր չափահասներու համար» դասընթացքները:

(Ը.1899, թիւ 7)

2. ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ - Գահիրէ , 1914-1916

Կիրակնօրեայ Աւետարանական վարժարանը Գահիրէի մէջ հիմնուած է եւ թուրքա՝ 1914-1916 երկամեայ շրջան մը, հովանաւորութեամբը Համայնքին Վարչութեան եւ ղեկավարութեամբ՝ իր անդամներէն կազմուած նուիրեալ երկսեռ ուսուցչական կազմին: ([24]. գ.հտր. էջ 384)

3. «ՄԱՆԿԱՆՑ ԲԵԹԵԼ» ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ -

Գահիրէ , 1926-1929

Հայ Աւետարանական համայնքին գործունէայ վարչութեան նախաձեռնութեամբ 1926-ին հաստատուած է մանուկներու հոգեւոր դաստիարակութեան կոչուած Կիրակնօրեայ վարժարանը տեւած է մինչեւ 1929:

Վարժարանին նպատակը եղած է « *հասկնալ իսկական կարեւորութիւնը եւ զայն նկատել եկեղեցիին ամենակենսական ազդակը* »: ([24]. գ.հտր. էջ 384)

4. ԳԻՇԵՐԱՅԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ -

Գահիրէ , 1927-1928

Գիշերային այս վարժարանը հաստատուած է 20 Սեպտեմբեր 1927-ին, նախաձեռնութեամբ 1925-ին վերակազմուած Հայ Աւետարանական Համայնքի «Հայ Քրիստոնէական Երիտասարդաց Միութիւն» միաւորին:

Կրթարանին դասաւանդութիւնները կատարուած են շաբաթը չորս օր, երեկոյեան ժամը 8-էն 10, Գահիրէի Ֆակկալա Թաղին Պուսթան Էլ-Քաֆուրի փողոցի անգլիական միսիոնարական վարժարանին մէջ:

Այստեղ, երկամեայ շրջանի մը համար հայերէն եւ ֆրանսերէն դասաւանդած է ուսուցչապետ Վահրամ Արծրունին: ([24]. գ.հտր. էջ 385,469)

5. ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅ (Պատանիներու եւ մանուկներու) -

Գահիրէ , 1933-1947

Հայ Աւետարանական Կիրակնօրեայ դպրոցը հիմնուած է 1933-ին, եւ հովանաւորութիւնը վայելած՝ Ժողովական Եկեղեցիին Տիկնանց Միութեան:

Ժողովական Եկեղեցիին «Կիրակնօրեայ Դպրոց»ի ղեկավար-ուսուցչութիւնը կատարած են Տիկին Հռիփսիմէ Կիւզելիմեան, Օր.Յովինէ Սարգիսեան եւ Պր.Լուիֆիկ Մընըշեան: (ԻԲ. էջ 43)

6. «ԷՄՄԱՆՈՒԷԼ» ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ -

Աղեքսանդրիա , 1947-1953

Կիրակնօրեայ վարժարանը հաստատուած է 1947-1948 տարեշրջանին, Աղեքսանդրիոյ Աւետարանական եկեղեցիին շէնքին մէջ:

«Էմմանուէլ» աւետարանական կիրակնօրեայ վարժարանին նպատակը եղած է «*հոգեւոր ուսուցումի ծրագրով կարելիութեան սահմանին մէջ, Աստուծոյ շնորհքով աշխատիլ աւանդել Ս.Գրային ճշմարտութիւններ եւ քրիստոնէական հաւատքին մաս կազմող էական ուղղափառ վարդապետութիւններ* »:

1950-1953 եռամեակին, Կիրակնօրեայ վարժարանին տնօրէնը եղած է Վեհագուն Շաքարեան: ([24]. գ.հտր. էջ 390)

ԵԳԻՊՏԱՀԱՅ
ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ
էւ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ
ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ
ՍԱՆՈՒՑ - ՇՐՋԱՆԱԻԱՐՏԻՑ
ԿԱՆԱՑԻ
ՊԱՏԱՆԵԿԱՆ - ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՄԱՍՈՒԼԻ - ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ԽՆԱՅՈՂԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

Գահիրէ , Ադեքսանդրիա

Փոք Սայիտ , Զակազիկ

Թանթա եւ Ասիութ

Գ Ա Հ Ի Ր Է

1. Եղբայրություն Ս.Գրիգոր Լուսավորչի - Գահիրե , 1849-1859
2. Արշակունեանց Ընկերություն - Գահիրե , 1861
3. Հայոց Բարեգործական Ընկերություն - Գահիրե , 1870 , 1882-1906
«Սրճարան Բարեգործական Ընկերություն Հայոց» «Սրճարան Հայաստանի»
«Ազգային Բարեգործական Ընկերություն»
4. Ուսումնասիրաց Ընկերություն - Գահիրե , 1877-1883 , 1893
«Հայոց Քլիպ» , Գահիրե , 1893
5. Հայ Յառաջդիմասեր Ընկերություն - Գահիրե , 1885-1889 , 1910
6. Ս.Գրիգոր Լուսավորչի Կաթողիկե Բարեգործական Ընկերություն -
«Հայ Կաթողիկե Աղքատախնամ» Գահիրե , 1890 , 1906
7. Ընթերցասիրաց Ընկերություն - Գահիրե , 1891-1899
8. Տիկնանց Ընկերություն - Գահիրե , 1893-1894
9. Երկսեռ Աղքատախնամ Ընկերություն - Գահիրե , 1898
«Աղքատաց Հոգաբարձություն» , 1933 - «Հայ Բարեսիրաց Միություն» , 1990-
10. Սեբաստացի Հայոց Շահասիրական Ընկերություն - Գահիրե , 1899-1912
11. Արաբկիրցիներու Որբասիրաց Ընկերություն - Գահիրե , 1899-1905
Արաբկիրի եւ Շրջակայից Հայրենակցական Միություն - Գահիրե , 1935
12. Վասպուրականի (Վանայ) Որբախնամ Ընկերություն - Գահիրե , 1899-1905
13. Լսարան - Ընթերցատուն Ընկերություն - Գահիրե , 1899-1912
14. Ակնցի Ազգայնոց Որբախնամ Ընկերություն - Գահիրե , 1900-1905
15. Հայ Աւետարանական Երիտասարդաց Միություն - Գահիրե , 1900
16. Որբասիրաց Ընկերություն Սեբաստիոյ - Գահիրե , 1900
17. Հրատարակչական Ընկերություն - Գահիրե , 1901
18. Հայ Աւետարանական Հիւանդախնամ Ընկերություն - Գահիրե , 1901
19. Հայկական Ընթերցասրահ - Գահիրե , 1902-
20. Միացեալ Որբախնամ Ընկերութիւնք Հայոց - Գահիրե , 1905-1914 , 1916-1927
21. Հայ Պատանեաց Մեսրոպեան Ուսումնասիրաց Ընկ.թին - Գահիրե , 1905-1907
22. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն (Հ.Բ.Ը.Մ.) - Գահիրե , 1906-
23. Հայ Պատանեաց Ընթերցասիրաց «Ռաֆֆի» Ընկերություն - Գահիրե , 1906-1910
24. Վասպուրականի Դպրոցասիրաց Ընկերություն - Գահիրե , 1906
25. Ուսումնասեր Արմենուհեաց «Սանդուխտ» Ընկերություն - Գահիրե , 1906
26. Հայրենասեր Հայուհեաց Ընկերություն - Գահիրե , 1906
27. «Արամազդ» Դպրոցասիրաց Ընկերություն - Գահիրե , 1906
28. Միացեալ Ուսումնասիրաց Ընկերություն - Գահիրե , 1907
29. Հայ Կաթողիկե Երիտասարդաց Միություն - Գահիրե , 1908-1909
30. Հայուհեաց Միություն - Գահիրե , 1908-1912
31. Հայ Արուեստասիրաց «Նեղոս» Միություն - Գահիրե , 1908
32. Գալուստեան Սանուց Ընթերցասիրաց Միություն - Գահիրե , 1909-1911
33. Հայկական Մամլոյ Ընկերություն - Գահիրե , 1911-1912
34. Հայ Երիտասարդաց Քրիստոնէական Ընկերություն (Հ.Ե.Ք.Ը.) -
Գահիրե , 1912-1922 , 1925-1928 , 1934-1940

35. Կեղրոնականցիներու Նախկին Սանուց Գահիրէի Ընկերակց. - Գահիրէ , 1912
36. Գալուստեան Ընթացաւարտից Միութիւն - Գահիրէ , 1912-1913
Գալուստեան Շրջանաւարտից Միութիւն - Գահիրէ , 1916-1919 , 1929-1951
37. Սահմանադիր Ռամկ.Կուսակցութեան Ակումբ - Գահիրէ , 1912
38. «Հայուհեաց» Ընկերակցութիւն - Գահիրէ , 1913
39. «Ազգային Սրահ» («Հայ Ազգային Սրահ») - Գահիրէ , 1913
40. Մանիսալեան Վարժարանի Նախկին Սանուց «Յառաջդիմասէր» Միութիւն –
Գահիրէ , 1913-1947
41. Եգիպտահայ Նպաստամատոյց Մարմին - Գահիրէ , 1913-1920
42. Հայախօս Կաթոլիկ Երիտասարդաց Միութիւն - Գահիրէ , 1914
43. «Արեւ» հրատարակչական Ընկերութիւն - Գահիրէ , 1915-1916
44. «Կովկաս» Գեղարուեստասիրաց Միութիւն - Գահիրէ , 1915
45. Գահիրէի Հայ Կարմիր Խաչ - Գահիրէ , 1915-1916
46. Հայ Պատանեկան Յառաջդիմասէր Միութիւն - Գահիրէ , 1915
47. Եգիպտահայ Գրական Ու Գեղարուեստական Միութիւն - Գահիրէ , 1916
48. Գահիրէի Հայ Երիտասարդաց Միութիւն - Գահիրէ , 1916
49. Հայ Երիտասարդ Տիկնանց Եւ Օրիորդաց Միութիւն - Գահիրէ , 1916
50. Եգիպտահայ Կարմիր Խաչի Կեղրոնական Պիւրօ - Գահիրէ , 1916
51. Հայ Ազգային Միութիւն - Գահիրէ , 1916
52. «Նաւասարդ» Սրահ (Ակումբ) - Գահիրէ , 1918-1952
53. Չմշկաձագի Հայրենակցական Միութիւն - Գահիրէ , 1918
54. Հայկական Ազգային Ապաքինարան - Գահիրէ (Զէյթուն) , 1918
55. Հայ Լեզունական Եւ Նախկին Ռազմիկներու Միութիւն - Գահիրէ , 1919
Գահիրէի Հայ Լեզունական Միութիւն - Գահիրէ , 1925-1933
56. Մարաշի Հայրենակցական Միութիւն - Գահիրէ , 1919
57. Տիգրանակերտցիներու Որբախնամ Միութիւն - Գահիրէ , 1919
58. Գահիրէի Հայուհեաց Միութիւն - Գահիրէ , 1919-1930
59. Հայ Գեղարուեստասիրաց Միութիւն (Հ.Գ.Մ.) - Գահիրէ , 1920-2012
60. Սեբաստահայերու Սենեքերիմեան Միութիւն (Ս.Ս.Միութիւն) – Գահիրէ , 1922
61. Հայ Բժշկական Միութիւն - Գահիրէ , 1923 - 1926
62. Գահիրէի Հայ Տիկնանց Միութիւն - Գահիրէ , 1923
63. Հայ Ուսանողական Միութիւն - Գահիրէ , 1924 , 1935
64. «Ռէթէոս Յ.Պէրպէրեան» Լսարանական և Գր.Միութիւն - Գահիրէ , 1924-1925
65. Հայ Հրատարակչական «Արգոս» Ընկերութիւն - Գահիրէ , 1924-1934
66. Կեսարիոյ Եւ Շրջակայից Հայրենակցական Միութիւն - Գահիրէ , 1925
67. «Այծեմնիկ» Տիկնանց Միութիւն - Գահիրէ , 1925 -
«Կարապետ Աղա Արիկեան» Հանգստեան Տուն - Հելիոպոլիս , 1956 -
68. Դպրոցասէր Հայուհեաց Միութեան Մասնաճիւղ - Գահիրէ , 1925-1926
69. Հայաստանի Օգնութեան Կոմիտէ (Հ.Օ.Կ.) - Գահիրէ , 1926-1937
70. «Եփրատ Գօլէճ» Երաժշտական Հաստատութիւն - Գահիրէ , 1926-1936
71. Հայ Աւետարան. Հոգեւոր Բարեսիրական Տիկնանց Միութիւն - Գահիրէ , 1926
72. «Պարտիզակ» Խնայողական Ընկերութիւն - Գահիրէ , 1927
73. Հայ Ազգային Հոգեւոր Միութիւն - Գահիրէ , 1928
74. Հայ Ժողովրդային Միութիւն - Գահիրէ , 1928-1940

75. Հայ Կրթական Եւ Հրատարակչական «Համագգային» Ընկ. - Գահիրէ, 1928-1967
Հայկական Ռատիոժամի Հաղորդումներ, Գահիրէի Չայնասփիլո, 1950-
76. Թաշճեան Վարժարանի Սանուց Միութիւն - Գահիրէ, 1928
77. Գալուստեան Սանուց «Աշակերտական Միութիւն» - Գահիրէ, 1928
78. Գալուստեան Ազգ. Վարժարանի Տիկնանց Խնամակալութիւն - Գահիրէ, 1929
79. Հայ Կարմիր Խաչ - Հայ Կ(արիքի) Խաչ - Գահիրէ, 1930 -
80. Գրասէր Օրիորդաց Միութիւն (Գ.Օ.Միութիւն) - Գահիրէ, 1930
81. Հայ Ոսկերչաց Կրթասիրական Միութիւն - Գահիրէ, 1932
82. «Հայ Աւետ. Ժողովական Եկեղեցոյ» Տիկնանց Միութիւն - Գահիրէ, 1933-1947
83. «Հայ Գրիչ» Միութիւն - Գահիրէ, 1933
84. Պէրպլեւեան Վարժարանի Նախկին Սանուց Միութիւն - Գահիրէ, 1933, 1944
85. Գահիրէի Հայ Ուսուցչական Միութիւն - Գահիրէ, 1933-1935
Եգիպտահայ Ուսուցչաց Միութիւն - 1935
86. Գահիրէի Հայ Ուսուցչական Խնայողական Ընկերութիւն - Գահիրէ, 1933
87. Հայ Աւետարանական Ժողովական Եկեղեցոյ
Երկսեռ Երիտաս. Քրիստ. Ընկերակցութիւն - Գահիրէ, 1934
88. «Ս.Մեսրոպ» Հայ Կաթողիկէ Երիտ. Մասնաժողով (միութիւն) - Գահիրէ, 1934
89. Մխիթարեան Նախկին Սաներու Միութիւն - Գահիրէ, 1934 - 1937
Մխիթարեան Վարժարանի Նախկին Սանուց Միութիւն - Գահիրէ, 1951-1964
90. Հայ Աւետարանական «Ջանասիրաց» Երիտ. Միութիւն - Գահիրէ, 1935, 1937
91. «Մտաւորական Սպասարկութեան Գրասենեակ» - Գահիրէ, 1935-1956
92. Հրազդան Գործակալութիւն - Գահիրէ, 1936
93. Հայ Էւ Եգիպտացոց Միութիւն - Գահիրէ, 1936
94. Հ.Յ.Դ. Եգիպտոսի Երիտասարդաց Միութիւն - Գահիրէ, 1939
«Յուսաբեր» Երիտասարդաց Միութիւն, Գահիրէ, 1970 -
95. «Լուսաւորչական Եղբայրութիւն» Շարժում - Գահիրէ, 1940
96. «Ազգային Դարմանատուն» Հայոց - Գահիրէ, 1941 -
«Արգարեան Ազգային Դարմանատուն» - Գահիրէ, 1957-1980
97. «Հայ Գիրքի Բարեկամներու Ընկերակցութիւն» - Գահիրէ, 1941
98. Հայ Մշակոյթի Բարեկամներու Մարմին (Հ.Մ.Բ.Մ.) - Գահիրէ, 1941-1998
99. Հայ Ազգային Հիմնադրամ (Հ.Ա.Հ.) - Գահիրէ, 1942 -
100. «Վասպուրական» Միութիւն - Գահիրէ, 1943
101. «Ներսէս Շնորհալի» Եգիպտահայ Կաթողիկէ Երիտ. Միութիւն - Գահիրէ, 1944
102. «Յուսաբեր» Մշակութային Ընկերակցութիւն - Գահիրէ, 1944 -
103. Հայ Ազգային Խորհուրդ - Գահիրէ, 1945
104. Եգիպտահայ Ներգաղթողներու Միութիւն - Գահիրէ, 1946
105. «Յուսաբեր» Ակումբ - Գահիրէ, 1952-1995
106. Գալուստեան Ազգ. Վարժ. Ժ Մողթ-Ուսուցիչ Խորհուրդ - Գահիրէ, 1963-2012

Հ Ե Լ Ի Ո Պ Ո Լ Ի Ս

107. «Մասիս» Սրահ - Հելիոպոլիս, 1925 - 1928
108. «Հելիոպոլսոյ Եկեղեցասիրաց Միութիւն» - Հելիոպոլիս, 1930

109. Եգիպտահայատակ Հայոց Տոհմային Միություն - Հելիոպոլիս , 1934
 110. Հ.Ա.Հ. Կոկանեան Սրահ - Հելիոպոլիս , 1949
 111. Հելիոպոլսոյ Ջետեղման Գրասենեակ - Հելիոպոլիս , 1952-1959
 112. Հելիոպոլսոյ Մխիթարեան Վարժարանի
 Տիկնանց Խնամակալ Մարմին - Հելիոպոլիս , 1955-1964
 113. «Յուսաբեր» Ակումբ - Հելիոպոլիս , 1960 -
 114. Ս.Թերեզա Հայ Կաթողիկէ «Ժողովրդապետական Սրահ» - Հելիոպոլիս , 1965 -

Կ Ի Զ Է

115. «Յարատեւութիւն» Խնայողական Սնտուկ - Կիզէ - Գահիրէ , 1907, 1913
 116. Կիզէի Հայ Կրթասիրաց Միություն - Կիզէ , Գահիրէ , 1930 - 1961
 117. Հայ Համագործակցական Խնայողական «Սֆինքս» Միություն - Կիզէ , 1936
 «Սֆինքս» Եգիպտահայ Խնայողական Միություն - Կիզէ , 1941

Թ Ա Ն Թ Ա

118. Թանթայի Ընթերցասիրական Ընկերություն - Թանթա , 1904
 119. Թանթայի Հայկական Լսարան- Ընթերցատուն - Թանթա , 1914 - 1916
 120. Թանթայի Հայ Կանանց Միություն - Թանթա , 1915-1918
 121. Թանթայի Հայ Երիտասարդաց Միություն - Թանթա , 1917
 122. Թանթայի Հայ Որբախնամ Ընկերություն - Թանթա , 1920

Զ Ա Կ Ա Զ Ի Կ

123. Հ.Բ.Ը.Միութեան Մասնաճիւղ - Զակագիկ , 1907
 124. Շարքիյէի Հայուհեաց Կարմիր Խաչի Միություն - Զակագիկ , 1915
 125. Հայ Երիտասարդաց Միություն - Զակագիկ , 1917-1931
 126. Շարքիյէի Տիկնանց Միություն - Զակագիկ , 1917
 127. Հայ Ռամկավար Ակումբ - Զակագիկ , 1920
 128. Կամսարական Տան Հայ Պաշտօնէից Միություն - Զակագիկ , 1929-1944
 129. Եկեղեցասէր Տիկնանց Միություն - Զակագիկ , 1929 , 1931
 Հայուհեաց Միություն Զակագիկի Հայոց - Զակագիկ , 1931

Փ Ո Ր Ս Ա Յ Ի Տ

130. «Ազգային Լսարան» Փոր Սայիտի Քէմփին - Փոր Սայիտ , 1915-1919
 131. «Եփրատ» Վիճաբանական Ակումբ - Փոր Սայիտ , 1916-1919
 132. «Հայկական Լէգէոն» - Փոր Սայիտ , 1916-1919

Ա Ս Ի Ո Ի Թ

133. Հայուհեաց Բարեսիրաց Միություն -Ասիութ , 1913
 134. Հայ Երիտասարդաց Միություն - Ասիութ , 1916

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

1. Փրկատենջ Ընկերություն Հայոց - Աղեքսանդրիա , 1885 - 1887
2. «Արմենիա» Ընկերություն - Աղեքսանդրիա , 1887
3. Հայոց Բարեսիրական Ընկերություն - Աղեքսանդրիա , 1888
4. Հայ Կարօտելոց Նպաստամատոյց Ընկերություն - Աղեքսանդրիա , 1897-1899
5. Աղքատախնամ Բարեգործական Ընկերություն - Աղեքսանդրիոյ Հայոց , 1899
Աղքատախնամ Ընկերություն Աղեքսանդրիոյ , 1930
Աղեքսանդրիոյ Բարեսիրաց Միություն , 1990
6. Հայկական Մատենադարանի Ընկերություն - Աղեքսանդրիա , 1899 - 1908
Ժողովրդական Գրադարան-Ընթերցարան Ընկերություն
7. Արուեստասիրաց Ընկերություն - Աղեքսանդրիա , 1901
8. «Տիգրան Երկաթ» Հայ Մշակութային Միություն - Աղեքսանդրիա , 1902 -
9. Զեյթունի Բարեսիրաց Ընկերություն - Աղեքսանդրիա , 1903
10. Գրասիրաց Ընկերություն - Աղեքսանդրիա , 1903-1905
11. Կարմիր Խաչի Տիկնանց Միություն - Աղեքսանդրիա , 1904 , 1915
12. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն - Աղեքսանդրիոյ , 1907 -
13. Հրատարակչական Ընկերություն Եգիպտոսի Հայոց -Աղեքսանդրիա ,1907-1908
14. Հայ Կաթողիկէ Աղքատախնամ Ընկերություն - Աղեքսանդրիա , 1908
15. Սահմանադիր Ռամկավար Կուսակցութեան Ակումբ - Աղեքսանդրիա , 1912
16. Հայուհեաց Ընկերություն - Աղեքսանդրիա , 1908-1910
«Աղեքսանդրիոյ Հայուհիներու Ընկերակցություն» , 1913
17. Հայ Երիտասարդաց Միություն - Աղեքսանդրիա , 1910 - 1914 , 1916 – 1918
18. Հայկական Համայնագիտարան Ընկերություն - Աղեքսանդրիա , 1913
19. Արուեստասէր Օրիորդաց Միություն - Աղեքսանդրիա , 1914
«Արիւեստասիրաց Միություն Աղեքսանդրիոյ»
20. Հայուհեաց Գրասէր ու Գեղարուեստասէր Միություն-Աղեքսանդրիա,1915-1945
21. Հայ Ուսանողական Միություն - Աղեքսանդրիա , 1915 , 1923
22. Աղեքսանդրիոյ Նորակազմ Հայ Երիտասարդաց Միություն-Աղեքսանդրիա,1916
23. Հայ Յառաջդիմասէր Երիտասարդներու Ընկերակցություն- Աղեքսանդրիա,1916
«Յառաջդիմասէր» Մշակութային Ընկերակցություն , 1942 -
24. Հայուհեաց Յառաջդիմասէր Ընկերակցություն - Աղեքսանդրիա , 1916
25. «Հայ Ակումբ» - Աղեքսանդրիա , 1916
26. Հայ Որբախնամ Ընկերություն - Աղեքսանդրիա , 1916
Հայ Որբապաշտպան Մարմին - Աղեքսանդրիա
27. Վասպուրականի Արծրունեաց Միություն - Աղեքսանդրիա , 1921
28. Աղեքսանդրիոյ Շրջանաւարտուիներու Միություն - 1923
«Պօղոսեան Ազգ. Երկսեռ Վարժարանաց
Շրջանաւարտից Միություն - Աղեքսանդրիա , 1930
29. Ակնայ եւ Շրջակայից Հայրենակցական Միություն -Աղեքսանդրիա , 1924
30. «Զարթօնք» Միություն - Աղեքսանդրիա , 1924
31. Հայաստանի Օգնութեան Կոմիտէ - Աղեքսանդրիա , 1926 , 1934-1938
32. Հայ Գիւղատնտեսական Միություն - Աղեքսանդրիա - 1927

33. Հայ Ժողովրդային Պլօք - Աղեքսանդրիա , 1928
34. Հայ Կարմիր Խաչ - Աղեքսանդրիա , 1931 , 1946-1985
35. «Փարամագ» Հնչակեան Ուսանողական Միութիւն - Աղեքսանդրիա , 1931
36. «Հայր Ալիշան» Հայ Կաթողիկէ Երիտասարդաց Միութիւն-Աղեքսանդրիա, 1931
37. Եկեղեցասէր Հայ Տիկնանց Միութիւն- Աղեքսանդրիա , 1932-1936
38. «Ապրիլեան Սերունդ» Երկսեռ Միութիւն - Աղեքսանդրիա , 1932-1939
39. «Վերածնունդ» Հայ Երիտասարդաց Միութիւն - Աղեքսանդրիա, 1934-1939
40. Հայկազեան Կրթարանի Կրթասիրաց Միութիւն - Աղեքսանդրիա , 1934-1952
41. Մխիթարեան Վարժարանի Սանուց Միութիւն - Աղեքսանդրիա , 1937 , 1954
42. Հայ Աւետարանական Երիտասարդաց Միութիւն - Աղեքսանդրիա , 1937
43. «Երեւան» Ընթերցասրահ - Աղեքսանդրիա , 1937-1948
44. Եկեղեցասիրաց Միութիւն Հայոց Աղեքսանդրիոյ - Աղեքսանդրիա , 1938
45. «Շաւարշան» Միութիւն - Աղեքսանդրիա , 1939
46. «Սեւան» Մշակութային Միութիւն - Աղեքսանդրիա , 1943-1947
«Սեւան Ընթերցասրահ» - Աղեքսանդրիա
47. Հայ Ազգային Խորհուրդ - Աղեքսանդրիա , 1945
48. «Զահ» Մտաւորական Շարժում - Աղեքսանդրիա , 1946-1948
49. «Դանիէլ Վարուժան» Հայ Կաթողիկէ
Երկսեռ Երիտասարդաց Միութիւն - Աղեքսանդրիա , 1949-1951 , 1955
Մխիթարեան Հայ Գեղարուեստական Սանուց Միութիւն Աղեքսանդրիոյ -
Մխիթարեան Ակումբ – Աղեքսանդրիա , 1955

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ Ա Հ Ի Ր Է

13. Լսարան - Ընթերցատուն Ընկերություն - Գահիրե , 1899-1912
19. Հայկական Ընթերցասրահ - Գահիրե , 1902 -
30. Հայուհեաց Միություն - Գահիրե , 1908 -1912
31. Հայ Արուեստասիրաց «Նեղոս» Միություն - Գահիրե , 1908
34. Հայ Երիտասարդաց Քրիստոնեական Ընկերություն (Հ.Ե.Ք.Ը.) -
Գահիրե , 1912-1922 , 1925-1928 , 1934-1940
37. Սահմանադիր Ռամկ.Կուսակցութեան Ակումբ - Գահիրե , 1912
38. «Հայուհեաց» Ընկերակցություն - Գահիրե , 1913
39. «Ազգային Սրահ» («Հայ Ազգային Սրահ») - Գահիրե , 1913
42. Հայախօս Կաթոլիկ Երիտասարդաց Միություն - Գահիրե , 1914
44. «Կովկաս» Գեղարուեստասիրաց Միություն - Գահիրե , 1915
46. Հայ Պատանեկան Յառաջդիմասէր Միություն - Գահիրե , 1915
47. Եգիպտահայ Գրական Ու Գեղարուեստական Միություն - Գահիրե , 1916
48. Գահիրեի Հայ Երիտասարդաց Միություն - Գահիրե , 1916
49. Հայ Երիտասարդ Տիկնանց Եւ Օրիորդաց Միություն - Գահիրե , 1916
51. Հայ Ազգային Միություն - Գահիրե , 1916
52. «Նաւասարդ» Սրահ (Ակումբ) - Գահիրե , 1918-1952
58. Գահիրեի Հայուհեաց Միություն - Գահիրե , 1919-1930
59. Հայ Գեղարուեստասիրաց Միություն (Հ.Գ.Մ.) - Գահիրե , 1920-2012
64. «Ռեթեոս Յ.Պերպերեան» Լսարանական եւ Գրական Միություն -
Գահիրե , 1924-1925
70. «Եփրատ Գօլէճ» Երաժշտական Հաստատություն - Գահիրե , 1926-1936
74. Հայ Ժողովրդային Միություն - Գահիրե , 1928-1940
75. Հայ Կրթական Եւ Հրատարակչական «Համազգային» Ընկերություն -
Գահիրե , 1928-1967
80. Գրասէր Օրիորդաց Միություն (Գ.Օ.Միություն) - Գահիրե , 1930
83. «Հայ Գրիչ» Միություն - Գահիրե , 1933
90. Հայ Աւետարանական «Ջանասիրաց» Երիտասարդական Միություն -
Գահիրե , 1935 , 1937
91. «Մտաւորական Սպասարկութեան Գրասենեակ» - Գահիրե , 1935-1956
92. Հրագդան Գործակալություն - Գահիրե , 1936
93. Հայ եւ Եգիպտացոց Միություն - Գահիրե , 1936
94. Հ.Յ.Դ. Եգիպտոսի Երիտասարդաց Միություն - Գահիրե , 1939
«Յուսաբեր» Երիտասարդաց Միություն , 1970 -
97. «Հայ Գիրքի Բարեկամներու Ընկերակցություն» - Գահիրե , 1941
98. Հայ Մշակոյթի Բարեկամներու Մարմին (Հ.Մ.Բ.Մ.) - Գահիրե , 1941-1998
99. Հայ Ազգային Հիմնադրամ (Հ.Ա.Հ.) - Գահիրե , 1942-
101. «Ներսէս Շնորհալի» Եգիպտահայ Կաթողիկէ Երիտ.Միություն- Գահիրե , 1944
102. «Յուսաբեր» Մշակութային Ընկերակցություն - Գահիրե , 1944-
105. «Յուսաբեր» Ակումբ - Գահիրե , 1952-1995

ՀԵԼԻՈՊՈԼԻՍ

- 107. «Մասիս» Սրահ - Հելիոպոլիս , 1925-1928
- 109. Եգիպտահպատակ Հայոց Տոհմային Միություն - Հելիոպոլիս , 1934
- 110. Հ.Ա.Հ. Կոկանեան Սրահ - Հելիոպոլիս , 1949
- 113. «Յուսաբեր» Ակումբ - Հելիոպոլիս , 1960 -
- 114. Ս.Թերեզա Հայ Կաթողիկե «Ժողովրդապետական Սրահ» - Հելիոպոլիս , 1965-

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

- 6. Հայկական Մատենադարանի Ընկերություն - Աղեքսանդրիա , 1899-1908
(Ժողովրդական Գրադարան-Ընթերցարան Ընկերություն)
- 7. Արուեստասիրաց Ընկերություն - Աղեքսանդրիա , 1901
- 8. «Տիգրան Երկաթ» Հայ Մշակութային Միություն - Աղեքսանդրիա , 1902 -
- 10. Գրասիրաց Ընկերություն - Աղեքսանդրիա , 1903-1905
- 13. Հրատարակչական Ընկերություն Եգիպտոսի Հայոց -Աղեքսանդրիա, 1907-1908
- 15. Սահմանադիր Ռամկավար Կուսակցության Ակումբ - Աղեքսանդրիա ,1912
- 16. Հայուհեաց Ընկերություն - Աղեքսանդրիա , 1908-1910
«Աղեքսանդրիոյ Հայուհիներու Ընկերակցություն» , 1913
- 17. Հայ Երիտասարդաց Միություն - Աղեքսանդրիա , 1910 -1914 , 1916-1918
- 18. Հայկական Համայնագիտարան Ընկերություն - Աղեքսանդրիա , 1913
- 19. Արուեստասեր Օրիորդաց Միություն - Աղեքսանդրիա , 1914
«Արհեստասիրաց Միություն Աղեքսանդրիոյ»
- 20. Հայուհեաց Գրասեր ու Գեղարուեստասեր Միություն-Աղեքսանդրիա,1915-1945
- 21. Հայ Ուսանողական Միություն - Աղեքսանդրիա , 1915 , 1923
- 22. Աղեքսանդրիոյ Նորակազմ Հայ Երիտ. Միություն - Աղեքսանդրիա,1916
- 23. Հայ Յառաջդիմասեր Երիտասարդներու Ընկերակցություն-Աղեքսանդրիա, 1916
«Յառաջդիմասեր» Մշակութային Ընկերակցություն , Աղեքսանդրիա ,1942 -
- 24. Հայուհեաց Յառաջդիմասեր Ընկերակցություն - Աղեքսանդրիա , 1916
- 25. «Հայ Ակումբ» - Աղեքսանդրիա , 1916
- 30. «Զարթոնք» Միություն - Աղեքսանդրիա , 1924
- 32. Հայ Գիտատնտեսական Միություն - Աղեքսանդրիա , 1927
- 35. «Փարամազ» Հնչակեան Ուսանողական Միություն - Աղեքսանդրիա , 1931
- 36. «Հայր Ալիշան» Հայ Կաթողիկե Երիտ. Միություն - Աղեքսանդրիա , 1931
- 38. «Ապրիլեան Սերունդ» Երկսեռ Միություն - Աղեքսանդրիա , 1932-1939
- 39. «Վերածնունդ» Հայ Երիտասարդաց Միություն- Աղեքսանդրիա , 1934-1939
- 42. Հայ Աւետարանական Երիտասարդաց Միություն - Աղեքսանդրիա , 1937
- 43. «Երեւան» Ընթերցասրահ - Աղեքսանդրիա , 1937-1948
- 45. «Շաւարշան» Միություն - Աղեքսանդրիա , 1939
- 46. «Սեւան» Մշակութային Միություն - Աղեքսանդրիա , 1943-1947
«Սեւան Ընթերցասրահ» - Աղեքսանդրիա
- 48. «Զահ» Մտաւորական Շարժում - Աղեքսանդրիա , 1946-1948
- 49. «Դանիէլ Վարուժան» Հայ Կաթողիկե Երկսեռ Երիտ.Միություն -1949-1951 , 1955
Մխիթարեան Ակումբ - Աղեքսանդրիա , 1955

Թ Ա Ն Թ Ա

119. Թանթայի Հայկական Լսարան- Ընթերցատուն - Թանթա , 1914-1916

121. Թանթայի Հայ Երիտասարդաց Միություն - Թանթա , 1917

Զ Ա ԿԱԶԻԿ

125. Հայ Երիտասարդաց Միություն - Զակագիկ , 1917-1931

127. Հայ Ռամկավար Ակումբ - Զակագիկ , 1920

128. Կամսարական Տան Հայ Պաշտօնէից Միություն - Զակագիկ , 1929-1944

129. Եկեղեցասեր Տիկնանց Միություն - Զակագիկ , 1929 , 1931

Հայուհեաց Միություն Զակագիկի Հայոց - Զակագիկ , 1931

Փ Ո Ր - Ս Ա Յ Ի Տ

130. «Ազգային Լսարան» Փոքր Սայիտի Քէմփին - Փոքր-Սայիտ , 1915-1919

131. «Եփրատ» Վիճաբանական Ակումբ - Փոքր Սայիտ , 1916-1919

ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ Ա Հ Ի Ր Է

3. Հայոց Բարեգործական Ընկերություն - Գահիրե , 1870 , 1882-1906

6. Ս.Գրիգոր Լուսավորիչ Կաթողիկէ Բարեգործ. Ընկերություն- Գահիրե, 1890, 1906

8. Տիկնանց Ընկերություն - Գահիրե , 1893-1894

9. Երկսեռ Աղքատախնամ Ընկերություն - Գահիրե , 1898

«Գահիրեի Աղքատաց Հոգաբարձություն» , 1933 -

«Գահիրեի Հայ Բարեսիրաց Միություն» , 1990-

11. Արաբկիրցիներու Որբասիրաց Ընկերություն - Գահիրե , 1899-1905

12. Վասպուրականի Որբախնամ Ընկերություն - Գահիրե , 1899-1905

14. Ակնցի Ազգայնոց Որբախնամ Ընկերություն - Գահիրե, 1900-1905

16. Որբասիրաց Ընկերություն Սեբաստիոյ - Գահիրե , 1900

18. Հայ Աւետարանական Հիւանդախնամ Ընկերություն - Գահիրե , 1901

20. Միացեալ Որբախնամ Ընկերությունը Հայոց - Գահիրե , 1905-1914 , 1916-1927

22. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն (Հ.Բ.Ը.Մ.) - Գահիրե , 1906-

26. Հայրենասեր Հայուհեաց Ընկերություն - Գահիրե , 1906

41. Եգիպտահայ Նպաստամատոյց Մարմին - Գահիրե , 1913-1920

45. Գահիրեի Հայ Կարմիր Խաչ - Գահիրե , 1915-1916

50. Եգիպտահայ Կարմիր Խաչի Կեդրոնական Պիւրօ - Գահիրե , 1916

55. Հայ Լեզեոնական եւ Նախկին Ռազմիկներու Միություն - Գահիրե , 1919

Գահիրեի Հայ Լեզեոնական Միություն - Գահիրե , 1925-1933

57. Տիգրանակերտցիներու Որբախնամ Միություն - Գահիրե , 1919

58. Գահիրեի Հայուհեաց Միություն - Գահիրե , 1919-1930

60. Սեբաստահայերու Սենեքերիմեան Միություն (Ս.Ս.Միություն) - Գահիրե , 1922

62. Գահիրեի Հայ Տիկնանց Միություն - Գահիրե , 1923

67. «Այծեմնիկ» Տիկնանց Միություն - Գահիրե , 1925 -

«Կարապետ Աղա Արիկեան» Հանգստեան Տուն - Հելիոպոլիս , 1956 -

69. Հայաստանի Օգնության Կոմիտե (Հ.Օ.Կ.) - Գահիրե , 1926-1937
 71. Հայ Աւետարանական Հոգեւոր Բարեսիրական Տիկն.Միութիւն - Գահիրե , 1926
 78. Գալուստեան Ազգային Վարժարանի Տիկնանց Խնամակալութիւն-Գահիրե,1929
 79. Հայ Կարմիր Խաչ - Հայ Կ(արիքի) Խաչ - Գահիրե , 1930 -
 88. «Ս.Մեսրոպ» Հայ Կաթողիկէ Երիտասարդաց Միութիւն) - Գահիրե , 1934
 96. «Ազգային Դարմանատուն» Հայոց - Գահիրե , 1941 -
 «Արգարեան Ազգային Դարմանատուն» - Գահիրե , 1957-1980
 104. Եգիպտահայ Ներգաղթողներու Միութիւն - Գահիրե , 1946

Հ Ե Լ Ի Ո Պ Ո Լ Ի Ս

111. Հելիոպոլսոյ Զետեղման Գրասենեակ - Հելիոպոլիս , 1952-1959
 112. Հելիոպոլսոյ Միսիթարեան Վարժարանի
 Տիկնանց Խնամակալ Մարմին - Հելիոպոլիս , 1955-1964

Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ի Ա

1. Փրկատենչ Ընկերութիւն Հայոց - Աղեքսանդրիա , 1885-1887
 2. «Արմենիա» Ընկերութիւն - Աղեքսանդրիա , 1887
 3. Հայոց Բարեսիրական Ընկերութիւն - Աղեքսանդրիա , 1888
 4. Հայ Կարօտելոց Նպաստամատոյց Ընկերութիւն - Աղեքսանդրիա , 1897-1899
 5. Աղքատախնամ Բարեգործական Ընկերութիւն
 Աղեքսանդրիոյ Բարեսիրաց Միութիւն , 1990 -
 9. Զէյթունի Բարեսիրաց Ընկերութիւն - Աղեքսանդրիա , 1903
 11. Կարմիր Խաչի Տիկնանց Միութիւն - Աղեքսանդրիա , 1904 , 1915
 12. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն -Աղեքսանդրիոյ , 1907-
 14. Հայ Կաթողիկէ Աղքատախնամ Ընկերութիւն - Աղեքսանդրիա , 1908
 26. Հայ Որբախնամ Ընկերութիւն - Աղեքսանդրիա , 1916
 Հայ Որբապաշտպան Մարմին - Աղեքսանդրիա
 31. Հայաստանի Օգնության Կոմիտե - Աղեքսանդրիա , 1926 , 1934-1938
 34. Հայ Կարմիր Խաչ - Աղեքսանդրիա , 1931 , 1946-1985

Թ Ա Ն Թ Ա

120. Թանթայի Հայ Կանանց Միութիւն - Թանթա , 1915-1918
 122. Թանթայի Հայ Որբախնամ Ընկերութիւն - Թանթա , 1920

Զ Ա Կ Ա Զ Ի Կ

123. Հ.Բ.Ը.Միութեան Մասնաճիւղ - Զակազիկ , 1907
 124. Շարքիյէի Հայուհեաց Կարմիր Խաչի Միութիւն - Զակազիկ , 1915

Ա Ս Ի Ո Ի Թ

133. Հայուհեաց Բարեսիրաց Միութիւն - Ասիութ , 1913

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ Ա Հ Ի Ր Է

11. Արաբկիրցիներու Որբասիրաց Ընկերութիւն - Գահիրէ , 1899-1905
Արաբկիրի եւ Շրջակայից Հայրենակցական Միութիւն - Գահիրէ , 1935 -
53. Չմշկածագի Հայրենակցական Միութիւն - Գահիրէ , 1918
56. Մարաշի Հայրենակցական Միութիւն - Գահիրէ , 1919
60. Սեփաստահայերու Սենեքերիմեան Միութիւն (Ս.Ս.Միութիւն) - Գահիրէ , 1922
66. Կեսարիոյ Եւ Շրջակայից Հայրենակցական Միութիւն - Գահիրէ , 1925

ՍԱՆՈՒՑ - ՇՐՋԱՆԱԻԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ Ա Հ Ի Ր Է

32. Գալուստեան Սանուց Ընթերցասիրաց Միութիւն - Գահիրէ , 1909-1911
35. Կեդրոնականցիներու Նախկին Սանուց Գահիրէի Ընկերակց. - Գահիրէ , 1912
36. Գալուստեան Ընթացաւարտից Միութիւն - Գահիրէ , 1912-1913
Գալուստեան Շրջանաւարտից Միութիւն - Գահիրէ , 1916-1919 , 1929-1951
40. Մանիսալեան Վարժարանի Նախկին Սանուց
«Յառաջդիմասէր» Միութիւն - Գահիրէ , 1913-1947
76. Թաշճեան Վարժարանի Սանուց Միութիւն - Գահիրէ , 1928
77. Գալուստեան Սանուց «Աշակերտական Միութիւն» - Գահիրէ , 1928
84. Պէրպէրեան Վարժարանի Նախկին Սանուց Միութիւն - Գահիրէ , 1933, 1944
89. Մխիթարեան Նախկին Սանուց Միութիւն - Գահիրէ , 1934-1937
Մխիթարեան Վարժարանի Նախկին Սանուց Միութիւն - Գահիրէ , 1951-1964

Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ի Ա

28. Աղեքսանդրիոյ Շրջանաւարտուհիներու Միութիւն - 1923
«Պօղոսեան Ազգ. Երկսէռ Վարժարանաց
Շրջանաւարտից Միութիւն - Աղեքսանդրիա , 1930
41. Մխիթարեան Վարժարանի Սանուց Միութիւն - Աղեքսանդրիա , 1937 , 1954
49. «Դանիէլ Վարուժան» Հայ Կաթողիկէ Երկսէռ Երիտասարդաց Միութիւն -
Աղեքսանդրիա , 1949-1951 , 1955
Մխիթարեան Հայ Գեղարուեստական Սանուց Միութիւն Աղեքսանդրիոյ

ԿԱՆԱՅԻ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՀԻՐԷ

8. Տիկնանց Ընկերութիւն - Գահիրէ , 1893-1894
25. Ուսումնասէր Արմենուհեաց «Սանդուխտ» Ընկերութիւն - Գահիրէ , 1906
26. Հայրենասէր Հայուհեաց Ընկերութիւն - Գահիրէ , 1906
30. Հայուհեաց Միութիւն - Գահիրէ , 1908-1912
38. «Հայուհեաց» Ընկերակցութիւն - Գահիրէ , 1913
45. Գահիրէի Հայ Կարմիր Խաչ - Գահիրէ , 1915-1916

49. Հայ Երիտասարդ Տիկնանց Եւ Օրիորդաց Միութիւն - Գահիրէ , 1916
 50. Եգիպտահայ Կարմիր Խաչի Կեդրոնական Պիւրօ - Գահիրէ , 1916
 58. Գահիրէի Հայուհեաց Միութիւն - Գահիրէ , 1919-1930
 62. Գահիրէի Հայ Տիկնանց Միութիւն - Գահիրէ , 1923
 67. «Այծեմնիկ» Տիկնանց Միութիւն - Գահիրէ , 1925 -
 «Կարապետ Աղա Աբիկեան» Հանգստեան Տուն - Հելիոպոլիս , 1956 -
 68. Դպրոցատէր Հայուհեաց Միութեան Մասնաճիւղ - Գահիրէ , 1925-1926
 71. Հայ Աւետարան. Հոգեւոր Բարեսիրական Տիկնանց Միութիւն - Գահիրէ , 1926
 78. Գալուստեան Ազգ. Վարժարանի Տիկնանց Խնամակալութիւն - Գահիրէ , 1929
 79. Հայ Կարմիր Խաչ - Հայ Կ(արիքի) Խաչ - Գահիրէ , 1930 -
 80. Գրասէր Օրիորդաց Միութիւն (Գ.Օ.Միութիւն) - Գահիրէ , 1930
 82. «Հայ Աւետ. Ժողովական Եկեղեցւոյ» Տիկնանց Միութիւն - Գահիրէ , 1933-1947

ՀԵԼԻՈՊՈԼԻՍ

112. Մխիթարեան Վրժ.ի Տիկնանց Խնամակալ Մարմին - Հելիոպոլիս , 1955-1964

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

11. Կարմիր Խաչի Տիկնանց Միութիւն - Աղեքսանդրիա , 1904 , 1915
 16. Հայուհեաց Ընկերութիւն - Աղեքսանդրիա , 1908-1910
 «Աղեքսանդրիոյ Հայուհիներու Ընկերակցութիւն» , 1913
 19. Արուեստատէր Օրիորդաց Միութիւն - Աղեքսանդրիա , 1914
 «Արհեստասիրաց Միութիւն Աղեքսանդրիոյ»
 20. Հայուհեաց Գրասէր ու Գեղարուեստատէր Միութիւն-Աղեքսանդրիա, 1915-1945
 24. Հայուհեաց Յառաջդիմատէր Ընկերակցութիւն - Աղեքսանդրիա , 1916
 28. Աղեքսանդրիոյ Շրջանաւարտուհիներու Միութիւն - 1923
 «Պօղոսեան Ազգ.Երկ.Վրժ.ց Շրջանաւարտից Միութիւն - Աղեքսանդրիա , 1930
 34. Հայ Կարմիր Խաչ - Աղեքսանդրիա , 1931 , 1946-1985
 37. Եկեղեցատէր Հայ Տիկնանց Միութիւն- Աղեքսանդրիա , 1932-1936

ԹԱՆԹԱ

120. Թանթայի Հայ Կանանց Միութիւն - Թանթա , 1915-1918

ԶԱԿԱԶԻԿ

124. Շարքիյէի Հայուհեաց Կարմիր Խաչի Միութիւն - Զակազիկ , 1915
 126. Շարքիյէի Տիկնանց Միութիւն - Զակազիկ , 1917
 129. Եկեղեցատէր Տիկնանց Միութիւն - Զակազիկ , 1929 , 1931
 Հայուհեաց Միութիւն Զակազիկի Հայոց - Զակազիկ , 1931

ԱՍԻՈՒԹ

133. Հայուհեաց Բարեսիրաց Միութիւն -Ասիութ , 1913

ՊԱՏԱՆԵԿԱՆ - ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՀԻՐԷ

15. Հայ Աւետարանական Երիտասարդաց Միութիւն - Գահիրէ , 1900
21. Հայ Պատանեաց Մերոպեան Ուսումնասիրաց Ընկ.թիւն - Գահիրէ, 1905-1907
23. Հայ Պատանեաց Ընթերցասիրաց «Ռաֆֆի» Ընկերութիւն - Գահիրէ, 1906-1910
29. Հայ Կաթողիկէ Երիտասարդաց Միութիւն - Գահիրէ , 1908-1909
34. Հայ Երիտասարդաց Քրիստոնէական Ընկերութիւն (Հ.Ե.Ք.Ը.) -
Գահիրէ , 1912-1922 , 1925-1928 , 1934-1940
42. Հայախօս Կաթոլիկ Երիտասարդաց Միութիւն - Գահիրէ , 1914
46. Հայ Պատանեկան Յառաջդիմասէր Միութիւն - Գահիրէ , 1915
48. Գահիրէի Հայ Երիտասարդաց Միութիւն - Գահիրէ , 1916
49. Հայ Երիտասարդ Տիկնանց Եւ Օրիորդաց Միութիւն - Գահիրէ , 1916
87. Հայ Աւետարանական Ժողովական Եկեղեցւոյ
Երկսեռ Երիտաս. Քրիստ. Ընկերակցութիւն - Գահիրէ , 1934
88.«Ս.Մերոպ» Հայ Կաթողիկէ Երիտ.Մասնաժողով (միութիւն)- Գահիրէ , 1934
90. Հայ Աւետարանական «Ջանասիրաց» Երիտ.Միութիւն - Գահիրէ , 1935 , 1937
94. Հ.Յ.Դ. Եզիպտոսի Երիտասարդաց Միութիւն - Գահիրէ , 1939
«Յուսաբեր» Երիտասարդաց Միութիւն , Գահիրէ , 1970 -
101. «Ներսէս Շնորհալի» Եզիպտահայ Կաթողիկէ Երիտ.Միութիւն- Գահիրէ , 1944

ԱՂԵՔՍԱՆՈՂԻԱ

17. Հայ Երիտասարդաց Միութիւն - Աղեքսանդրիա , 1910-1914 , 1916-1918
22. Աղեքսանդրիոյ Նորակազմ Հայ Երիտասարդաց Միութիւն-Աղեքսանդրիա,1916
23. Հայ Յառաջդիմասէր Երիտասարդներու Ընկերակցութիւն- Աղեքսանդրիա,1916
«Յառաջդիմասէր» Մշակութային Ընկերակցութիւն , 1942 -
36. «Հայր Ալիշան» Հայ Կաթողիկէ Երիտասարդաց Միութիւն-Աղեքսանդրիա, 1931
39. «Վերածնունդ» Հայ Երիտասարդաց Միութիւն - Աղեքսանդրիա, 1934-1939
42. Հայ Աւետարանական Երիտասարդաց Միութիւն - Աղեքսանդրիա , 1937
49. «Դանիէլ Վարուժան» Հայ Կաթողիկէ
Երկսեռ Երիտասարդաց Միութիւն - Աղեքսանդրիա , 1949-1951 , 1955

ԹԱՆԹԱ

- 121.Թանթայի Հայ Երիտասարդաց Միութիւն - Թանթա , 1917

ԶԱԿԱԶԻԿ

125. Հայ Երիտասարդաց Միութիւն - Զակազիկ , 1917-1931

ԱՍԻՈՒԹ

134. Հայ Երիտասարդաց Միութիւն - Ասիութ , 1916

ՄԱՍՈՒԼԻ և ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՀԻՐԷ

- 17. Հրատարակչական Ընկերություն - Գահիրե , 1901
- 33. Հայկական Մամուլ Ընկերություն - Գահիրե , 1911-1912
- 43. «Արեւ» հրատարակչական Ընկերություն - Գահիրե , 1915-1916
- 65. Հայ Հրատարակչական «Արգոս» Ընկերություն - Գահիրե , 1924-1934
- 75. Հայ Կրթական Եւ Հրատարակչ. «Համազգային» Ընկ. - Գահիրե, 1928-1967
Հայկական Ռատիոժամի Հաղորդումներ , Գահիրեի Ջայնասփիւռ, 1950-
- 91. «Մտաւորական Սպասարկութեան Գրասենեակ» - Գահիրե , 1935-1956
- 97. «Հայ Գիրքի Բարեկամներու Ընկերակցություն» - Գահիրե , 1941

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

- 13. Հրատարակչական Ընկերություն Եգիպտոսի Հայոց -Աղեքսանդրիա , 1907-1908
- 18. Հայկական Համայնագիտարան Ընկերություն - Աղեքսանդրիա , 1913

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՀԻՐԷ

- 10. Սեբաստացի Հայոց Շահասիրական Ընկերություն - Գահիրե , 1899-1912
- 72. «Պարտիզակ» Խնայողական Ընկերություն - Գահիրե , 1927
- 86. Գահիրեի Հայ Ուսուցչական Խնայողական Ընկերություն - Գահիրե , 1933
- 92. Հրագդան Գործակալություն - Գահիրե , 1936
- 111. Հելիոպոլսոյ Ջետեղման Գրասենեակ - Հելիոպոլիս , 1952-1959

Կ Ի Ջ Է

- 115. «Յարատեւություն» Խնայողական Մնտուկ - Կիզե - Գահիրե , 1907, 1913
- 117. Հայ Համագործակցական Խնայողական «Սֆինքս» Միություն - Կիզե , 1936
«Սֆինքս» Եգիպտահայ Խնայողական Միություն – Կիզե , 1941

ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՀԻՐԷ

- 18. Հայ Աւետարանական Հիւանդախնամ Ընկերություն - Գահիրե , 1901
- 54. Հայկական Ազգային Ապաքինարան - Գահիրե (Ջէյթուն) , 1918
- 61. Հայ Բժշկական Միություն - Գահիրե , 1923 - 1926
- 96. «Ազգային Դարմանատուն» Հայոց - Գահիրե , 1941 -
«Աբգարեան Ազգային Դարմանատուն» - Գահիրե , 1957-1980

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԷ

- 70. «Եփրատ Գօլէճ» Երաժշտական Հաստատություն - Գահիրե , 1926-1936

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԻՈՒԹԻՒՆ-ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ Ա Հ Ի Ր Է

1. Եղբայրություն Ս.Գրիգոր Լուսավորչի - Գահիրե , 1849-1859
6. Ս.Գրիգոր Լուսավորչի Կաթողիկե Բարեգործական Ընկերություն -
«Հայ Կաթողիկե Աղքատախնամ» Գահիրե , 1890 , 1906
29. Հայ Կաթողիկե Երիտասարդաց Միություն - Գահիրե , 1908-1909
42. Հայախօս Կաթողիկե Երիտասարդաց Միություն - Գահիրե , 1914-1925
88. «Ս.Մեսրոպ» Հայ Կաթողիկե Երիտ.Մասնաժողով (միություն)- Գահիրե , 1934
89. Մխիթարեան Նախկին Սաներու Միություն - Գահիրե , 1934 - 1937
Գահիրեի Մխիթարեան Վարժարանի Նախկին Սանուց Միություն - 1951-1964
101. «Ներսէս Շնորհալի» Եզիպտահայ Կաթողիկե Երիտ.Միություն- Գահիրե , 1944

Հ Ե Լ Ի Ո Պ Ո Լ Ի Ս

112. Հելիոպոլսոյ Մխիթարեան Վարժարանի
Տիկնանց Խնամակալ Մարմին - Հելիոպոլիս , 1955-1964
114. Ս.Թերեզա Հայ Կաթողիկե «Ժողովրդապետական Սրահ» -Հելիոպոլիս , 1965-

Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ի Ա

14. Հայ Կաթողիկե Աղքատախնամ Ընկերություն - Աղեքսանդրիա , 1908
36. «Հայր Ալիշան» Հայ Կաթողիկե Երիտասարդաց Միություն-Աղեքսանդրիա, 1931
41. Մխիթարեան Վարժարանի Սանուց Միություն - Աղեքսանդրիա , 1937 , 1954
49. «Դանիել Վարուժան» Հայ Կաթողիկե
Երկսեռ Երիտասարդաց Միություն - Աղեքսանդրիա , 1949-1951 , 1955
Մխիթարեան Հայ Գեղարուեստական Սանուց Միություն Աղեքսանդրիոյ -
Մխիթարեան Ակումբ – Աղեքսանդրիա , 1955

ՀԱՅ ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ-ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ Ա Հ Ի Ր Է

15. Հայ Աւետարանական Երիտասարդաց Միություն - Գահիրե , 1900
18. Հայ Աւետարանական Հիւանդախնամ Ընկերություն - Գահիրե , 1901
71. Հայ Աւետարանական Հոգեւոր Բարեսիրական Տիկն. Միություն - Գահիրե , 1926
82. «Հայ Աւետ.Ժողովական Եկեղեցւոյ» Տիկնանց Միություն - Գահիրե,1933-1947
87. Հայ Աւետարանական Ժողովական Եկեղեցւոյ
Երկսեռ Երիտասարդաց Քրիստ. Ընկերակցություն - Գահիրե , 1934
90. Հայ Աւետարանական «Ջանասիրաց» Երիտ.Միություն - Գահիրե , 1935 , 1937

Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ի Ա

42. Հայ Աւետարանական Երիտասարդաց Միություն - Աղեքսանդրիա , 1937

Գ Ա Հ Ի Ր Է

1. Եղբայրություն Ա.Գրիգոր Լուսաուրջի - Գահիրե , 1849-1859

Ընկերությունը հիմնուած է Հայ Կաթողիկէ Առաջնորդ Պօղոս Եպս. Արքարեանի նախաձեռնութեամբ:

Եղբայրություն Ընկերութեան հիմնադրութեան թուականը անորոշ ըլլալով, ժամանակակից բանասերներու ենթադրութեամբ ան գործած է անոր հիմնադիր Արքարեան Եպս.ի հոգեւոր առաջնորդութեան առաջին տասնամեակի շրջանին, 1849-1859 թուականներուն: (ԼԶ.1959-60, էջ 15 – [27]. էջ 29)

2. Արշակունեանց Ընկերություն - Գահիրե , 1861

Խումբ մը հայրենասէր երիտասարդներ, ընթերցասիրությունը քաջալերելու նպատակով հիմնած են այս ընկերությունը 1861-ին, որուն զուգահեռ հաստատուած է նաեւ հայ օրագիրներու եւ հանդէսներու «Վերծանութեան Թանգարան» մը:

Ընկերութեան հաստատած «Ընթերցարան»ին մէջ, հանրութեան ընթերցանութեան համար մատչելի դարձած են սփիւռքի տարբեր երկիրներէ ստացուած պարբերականներ եւ հրատարակչատուներու կողմէ ստացուած բազմաբնոյթ հատորներ: (ԼԶ.1959-60, էջ 15)

3. Հայոց Բարեգործական Ընկերություն - Գահիրե , 1870 , 1882-1906

«Արձարան Բարեգործական Ընկերություն Հայոց» -

«Արձարան Հայաստանի» - «Ազգային Բարեգործական Ընկերություն»

Բարեգործական Ընկերությունը հիմնուած է 1870-ին, իրեն յատուկ շէնքի մը մէջ, որ հետագային փլուզումի ենթարկուելով՝ տեղւոյն վարչությունը շարունակած է գործել պատահական եւ պարբերական ձեռնարկներով:

1881-ին, Ընկերությունը վերակազմակերպուած է եւ Յունուար 1882-ին բացումը կատարուած՝ անոր նորակառոյց հաւաքավայր-գրասարանին:

Հրատարակուած է «Կանոնագիր Բարեգործական Ընկերութեան Հայոց ի Գահիրե» ուղեցոյց-պրակը: (Տպ. Պօղոս-Պետրոս Թադիկեան, 8 էջ, 1881, Իզմիր - Հայ Գիրքը 1851-1900, թիւ 3777, Երեւան):

1880-ական թուականներու սկիզբը Գահիրեի կեդրոնական Էզպէքիէ թաղաշրջանին մէջ հաստատուած են երկու ակումբ-ընթերցարաններ «Արձարան Բարեգործական Ընկերություն Հայոց» եւ «Արձարան Հայաստանի» անուններով:

1 Յուլիս 1884-ին, վերոյիշեալ զոյգ «արձարան»ները միանալով հիմնած են «Գահիրեի Հայոց Բարեգործական Ընկերություն» անունով բաժնետիրական ընկերությունը:

Յառաջիկայ տարիներու պայմաններուն ընդառաջ, Ընկերութեան գործունէությունը դադրած ըլլալով, վերակազմութեան փորձ կատարուած է 1901-ին, եւ «Հայոց Ազգային Բարեգործական Ընկերություն» վերանուանուելով՝ աշխոյժ գործունէություն ծաւալած՝ մինչեւ 1902-ի վերջերը: (Ը.1901, թիւ 191)

Հետագային, «Ազգային Բարեգործական Ընկերություն»ը քայքայուած է եւ բաժնետիրական ընկերությունը իր անդամներուն մեծամասնութեան որոշումով դադրած եւ լուծուած է 30 Սեպտ. 1906-ին: (ԼԶ.1959-60, էջ 16 - Ա.1906, թիւ 68)

4. Ուսումնասիրաց Ընկերություն - Գահիրե , 1877-1883 , 1893

«Հայոց Քիւյա», Գահիրե , 1893

Ընկերությունը իբրեւ բարեգործական միաւոր, հիմնուած է 1877-1878-ին, նպատակ ունենալով *«նիւթապէս օգնել Պոլսոյ “Արարատեան Ընկերութեան”»*:

Հիմնադիրները եղած են Գաբրիէլ Կարապետեան, Կարապետ պէլ Շիրիտճեան, Շաքիպ, Զօհրապ, Պետրոս Թումանօֆ, Մաճառեան եղբարք եւ Թովմաս Բրուտեան:

Բարեգործական իր ծրագրով, «Ընկերություն»ը առաջին առթիւ եւ մինչեւ 1883, օգտակար հանդիսացած է Գահիրեի Խորէնեան Վարժարանին, *«օրհնություն ըլլալով անոր անձուկ վիճակին»*:

Վարժարանը վեց ամիսով փակուած է 1878 տարեշրջանին:

(Լ.Զ.1959-60 - Թ.էջ 3 – [XXIV])

1893-1895 շրջանին, Ընկերությունը «Հայոց Քիւյա» վերանուանուելով՝ հաստատուած է Էգպէթիէի պարտէզին վրայ նայող շէնքի մը մէջ եւ ընկերային ու բարեսիրական ձեռնարկներով իր առաքելությունը շարունակած:

5. Հայ Յառաջդիմասէր Ընկերություն - Գահիրե , 1885-1889 , 1910

Յառաջդիմասէր Ընկերությունը հիմնուած է 4 Ապրիլ 1885-ին, նպատակ ունենալով՝ *«նիւթապէս եւ բարոյապէս ոյժ տալ ազգային յառաջդիմութեան, հոգ տանելով Ազգային “Խորէնեան վարժարան”ի բարեկարգութեան»*:

Ընկերութեան Վարիչ Մամին անդամակցած են Պօղոս Կարապետեան, Ղ.Փափագեան, Պետրոս Թումանօֆ, Կարապետ Խօսեանց, Կ.Պիւլպիւլեան, Կարապետ Միհանօֆ, Եպիփանեան, Կարապետ Շիրիտճեան եւ Թովմաս Բրուտեան:

1885-էն 1887, Վարչութեան դիւանին մաս կազմած են Կարապետ Միհանօֆ (ատենապետ), Կարապետ Խօսեանց (ատենադպիր) եւ Կ.Պիւլպիւլեան (գանձապահ):

Յիշարժան է, թէ 1885-ի վերջերուն, Աղեքսանդրիոյ մէջ կազմակերպուած է «Փրկատենջ Ընկերություն»ը, որ 1887-ին «Արմենիա Ընկերություն» վերանուանուելով, դարձած է Գահիրեի «Հայ Յառաջդիմասէր Ընկերություն»ի Աղեքսանդրիոյ մասնաճիւղը:

Ընկերութեան հովանաւորությունը վայելած է Աղեքսանդրիա հրատարակուող «Նեղոս» Շաբաթաթերթը, որուն հակաիշխանական ուղղությունը, պետութեան կողմէ հալածանքի ենթարկուելով՝ խափանուած եւ պատճառ դարձած է Յառաջդիմասէր Ընկերութեան կազմալուծումին 1889-ին: ([9].էջ 148-49)

Ընկերությունը վերակազմուած է Հոկտ. 1910-ին, նպատակադրելով՝ *«տեղական ազգային խնդիրներով հետաքրքրուիլ, սահմանադրութեան անթերի գործադրութեան հոգ տանիլ, հայ երիտասարդութեանը զարգացմանը սատարելու միջոցներ ստեղծել, ազգային վարժարանի բարեկարգութեան եւ յառաջդիմութեան բարոյապէս նպաստել ջանալ»*:

(Լ.Զ.1960 էջ 16 եւ 25 - ԽԲ.1910 թիւ 146 եւ 1912 թիւ 209)

6. Ս.Գրիգոր Լուսաւորիչ Կաթողիկէ Բարեգործական Ընկերություն -

«Հայ Կաթողիկէ Աղքատախնամ» . Գահիրե , 1890 , 1906

Կաթողիկէ Բարեգործական Ընկերությունը հաստատուած է 1890-ին,

հիմնադիր ունենալով Յակոբ Ֆերահեան, Կուրկի Եղիա, Ամին Հինտիե, Գրիգոր Ֆերահեան, Անտոն Մանուկ, Էմիլ Օդիա, Եղուարդ Թերզի և Տիրան Երնաճ:

Հիմնադիր անդամներու կողքին՝ ընկերութեան իրենց նպաստը բերած են նաեւ «Պատուոյ Անդամներ», շարունակելով անոր հանրօգուտ գործունէութիւնը:

Ընկերութեան նպատակը եղած է *«Կարիքաւորներուն տալ բարոյական եւ նիւթական ամէն օժանդակութիւն, չքաւորներուն բնակարան, քրիստոնէական դաստիարակութիւն՝ մանուկներուն, նիւթական նպաստ կարօտեալներուն, նաեւ բժշկական դարման եւ դեղօրայք»:*

Առաջին առթիւ, գործածուած է արաբերէն լեզուով պատրաստուած 54 յօդուածներէ բաղկացած կանոնագրութիւն մը:

Դարավերջի տեղական պայմաններու պատճառով, Ընկերութիւնը ունեցած է վարչական կազմի դժուարութիւններ 1902-էն 1904, եւ հետագային ճանցուած նաեւ **«Հայ Կաթողիկէ Աղքատախնամ»** անունով:

Ընկերութիւնը վերակազմուած է 1 Յունուար 1906-ին, որդեգրելով «Կանոնագրութիւն Կաթողիկէ Հայոց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Բարեգործական Ընկերութեան» 28 յօդուածներով կանոնագիր(Տպ.Կամպէթա, 1906, Աղեքսանդրիա):

(ԼԶ.1959-60, էջ 17 - Ա.1906, թիւ 82 – [27]. էջ 82-87 – [12]. թիւ 64)

7. Ընթերցասիրաց Ընկերութիւն - Գահիրէ , 1891-1899

Ընթերցասիրութիւնը քաջալերելու կոչուած ընկերութիւնը հիմնուած է 1891-ին, խումբ մը լուսամիտ եւ յառաջդիմասէր «պանդուխտ» երիտասարդներու նախաձեռնութեամբ:

Ընկերութեան գլխաւոր նպատակը եղած է *«Գահիրէի հայութեան շրջանին մէջ սէր ու հետաքրքրութիւն արծարծել դէպի հայոց մշակոյթը»:*

1895-ին, ընկերութիւնը ունեցած է Գահիրէի քաղաքակեդրոն Էգպէթիյէի պարտէզին վրայ նայող իր շէնքը եւ «Հայ ակումբ» անունով ընթերցասրահը իր բազմահազար հատորներով եւ պարբերականներու հաւաքածոյ գրադարանով, որուն պաշտօնական բացումը կատարուած է 19 Յունուար 1896-ին:

Վաւերացուած կանոնագրին համաձայն, Ընկերութեան անդամ ընդունուած են բոլոր իրաւասութիւններով մնայուն նաեւ այցելու պայմաններով անդամներ:

29 Յունիս 1899-ի Ընդհանուր Ժողովը, ատենապետութեամբ Յովհաննէս Եազըճեանի, ընտրած է նոր Գործադիր Վարչութիւն մը, որուն անդամակցած են Յովհաննէս Տէրվիշեան, Երուանդ Աղամեան, Գ.Է.Սէլվաճեան, Գ.Շանթունի և Երուանդ Աւագեան:

Ընթերցարանի շէնքին վարձակալութիւնը բազմաձախս ըլլալով, Ընկերութիւնը լուծարքի ենթարկուած է եւ կը փակուած՝ 1899-ին, միանալով նոյն տարին հիմնուած «Լսարան-Ընթերցատուն Ընկերութեան»:

(ԼԶ.1959-60 էջ18 - Ը.1899, թիւ 23 - ԽԲ.1899, թիւ 9)

8. Տիկնանց Ընկերութիւն - Գահիրէ , 1893-1894

Ընկերութիւնը կազմուած է Գահիրէաբնակ խումբ մը խնամատար կանանց կողմէ 1893-ին, նպատակ ունենալով *«աղքատ սանուհիներ ոգեւորելու աշխատանքին լծուիլ»:*

Գործունէութեան մաս կազմած է *«Գահիրէի Խորէնեան Վարժարան*

այցելելով աղքատ սանուհիներու համար զգեստներ շինել, այդ կարեկից դասակարգին մօտ երախտապարտ տրամադրութիւն յառաջացնելու համար»:

Ընկերութեան երկամեայ վարչական կազմի դիւանին մաս կազմած են Տիկնայք Տ. Մկրտիչեան(ատենապետ), Ս.Կիրճեան(ատենադպիր), Մ.Ադամեան, Մ. Գեորգեան եւ Գ. Պերպերեան: (ԼԶ.1959-60, էջ 18 - ԻԵ.1894, թիւ 777)

9. Երկսեռ Աղքատախնամ Ընկերութիւն - Գահիրէ , 1898

«Նորակազմ Երկսեռ Աղքատախնամ Ընկերութիւն» - 1899

«Հայկական Աղքատախնամ Ընկերութիւն» , 1911

«Աղքատախնամ Ընկերութիւն Հայոց Գահիրէի» , 1917-1933

«Գահիրէի Աղքատաց Հոգաբարձութիւն» , 1933 -

«Գահիրէի Հայ Բարեսիրաց Միութիւն» , 1990 -

Բարեսիրական Ընկերութիւնը հիմնուած է 7 Սեպտեմբեր 1898-ին գումարուած Ընդհանուր Ժողովին կողմէ, արձանագրուած 40 անդամներու մասնակցութեամբ: Ժողովին դիւանին մաս կազմած են Տոքթ.Ճերահեան(ա.ատենապետ), Սիմոն Ֆէլէկեան(բ.ատենապետ) եւ Գրիգոր Սարաֆեան(ատենադպիր):

Առաջին առթիւ, ժողովականներուն բացատրութիւն տրուած է Ընկերութեան նպատակին մասին եւ յայտարարուած անոր անունը իբրեւ «Երկսեռ Աղքատախնամ Ընկերութիւն»: Ապա, Ընկերութեան «Գործադիր Ժողով»ի անդամ նշանակուած են Տ.Բարթողեան(ատենապետ), Նշան Մեքենաճեան, Արմենակ Համամճեան, Խաչիկ Փափազեան եւ Յակոբ Քիրքճեան, իսկ Օժանդակ անդամուհիներ ընտրուած են Սուրբիկ հանրմ Կարապետեան եւ Մաքրուհի տուտու Համամճեան:

Նորակազմ «Ընկերութեան Ծրագիր»ը Ազգային Առաջնորդարանի մօտ վաւերացնելու աշխատանքը յանձն առած է Տ.Բարթողեան, օժանդակութեամբ՝ Յակոբ Քիրքճեանի: Քաղաքական Ժողովը ներայացուած Ծրագիրը վաւերացուցած է Յովսէփ Եպս. Այվազեանի եւ Սեդրակ Դաւիթեանի ջանքերով:

(Զ.1932, թիւ 4205)

Յաջորդ տարի 1899-ին, Ընկերութիւնը կոչուած է «Նորակազմ երկսեռ Աղքատախնամ Ընկերութիւն» անունով:

(ԼԶ.1959-60, էջ 18 - Ը.1899, թիւ 1 եւ 1911 թիւ 198)

Երկամեակ մը ետք, Ընկերութիւնը 1911-ին վերակոչուած է «*Հայկական Աղքատախնամ Ընկերութիւն*», եւ ունեցած՝ «Հիմնական Կանոնագիր Աղքատախնամ Ընկերութիւն» անունով վաւերացուած կանոնագիրը: ([12]. թիւ 6)

Ընկերութիւնը վերակազմուած է 3 Յունիս 1917-ին գումարուած Ընդհանուր Ժողովին կողմէ վաւերացուած Կանոնագրով՝ եւ ինամատարական իր հանգամանքին ընդառաջ՝ վերանուանուած է «Աղքատախնամ Ընկերութիւն Հայոց Գահիրէի» անունով իր 13 էջնոց Կազմական Կանոնագիրով (Տպ.Ոսկեստառ, Գահիրէ, 1917):

(Լ.1917, թիւ 24 - [12]. թիւ 233)

Ընկերութեան նպատակը եղած է «*Խնամել Գահիրէի հայ աղքատները եւ կարիքաւոր ընտանիքները*»:

Աղքատախնամին նախնական հասցէն եղած է Պէյն Էլ Սուրէյնի Ս.Աստուածածին Եկեղեցիին հարեւանութեամբ գործող հոգետունը:

Ընկերությունը կարելուր խնամատարական օժանդակություն ցուցաբերած է Փոր Սայիտի գաղթակայանի կառույցներուն, մինչեւ անոնց կազմալուծումը Նոյեմբեր 1919-ին:

Յառաջիկային, 17 Յուլիս 1933-ին, Գահիրէի Պատուարժան Քաղաքական Ժողովը վաւերացուցած է 29 յօդուածներով նոր Կանոնագիր մը (Տպ.Սահակ-Մեսրոպ, 8 էջ, Գահիրէ): ([X] – [12]. թիւ 611)

1933-էն ի վեր Աղքատախնամի վարչական կազմը գործած է Գահիրէի Պատ. Քաղաքական Ժողովի կողքին՝ իբրեւ «Գահիրէի Աղքատաց Հոգաբարձութիւն», տեղւոյն Ազգային Առաջնորդարանի յարկէն ներս: Հոգաբարձութիւնը կանոնաւոր ամսական գումարներ տրամադրած է նպաստընկալ կարիքաւոր անհատներու եւ ընտանիքներու, օժանդակելով՝ վիրաբուժական եւ դեղորայքի անոնց ծախսերուն:

Գահիրէի Աղքատախնամը 1990-էն ի վեր վերանուանուած է «Հայ Բարեսիրաց Միութիւն» անունով:

10. Մերաստացի Հայոց Շահասիրական Ընկերութիւն - Գահիրէ , 1899-1912

Հայրենակցական Ընկերութիւնը հիմնուած է 1 Յունուար 1899-ին, նախաձեռնութեամբ Սարգիս Երամեանի, Եղիշէ Թորոսեանի, Յարութիւն Նազարեթեանի, Մկրտիչ Պալըզճեանի, Առաքել Պերպերեանի, Պօղոս Մերտինեանի եւ Գրիգոր Պալըզճեանի:

Համաքաղաքացիներու գործադիր տնօրէն ժողովի դիւանին մաս կազմած են Ա.Դարբինեան (ատենապետ) Ա.Նազճեան (ատենադպիր) եւ Մեսիա Մըսրբեան (գանձապետ):

Շահասիրական Ընկերութիւնը, 1500 ոսկիի դրամագլուխ մը ունենալով հանդերձ, ձեռնհաս անձերու պակասին պատճառով կազմալուծուած է 1912-ին: (ԼԶ.1959-60 - Ը.1899, թիւ 11, 1900, թիւ 45 եւ 1912, թիւ 209)

11. Արաբկիրցիներու Որբասիրաց Ընկերութիւն - Գահիրէ , 1899-1905

Կրթասիրաց Միութիւն Արաբկիրի Հայոց - Գահիրէ , 1910

Արաբկիրցիներու Խնայողական Ընկերութիւն - Գահիրէ , 1912

Արաբկիրի եւ Շրջակայից Հայրենակցական Միութիւն - Գահիրէ ,1935 -

Ընկերութիւնը կազմուած է 1 Մայիս 1899-ին, Գահիրէ հաստատուած Արաբկիրցիներու նախաձեռնութեամբ գումարուած Ընդհանուր Ժողովին կողմէ:

Գործադիր մարմնին անդամ եղած են Սեդրակ Օտապաշեան (ատենապետ) եւ Ապահ Պետրոսեան (ատենադպիր):

Որբասիրաց Ընկերութեան հիմնադիրներէն յիշուած է Կարապետ Երզնկացեան: ([8]. էջ 211)

Ընկերութեան «Կանոնագիր Որբասիրաց Ընկերութեան Հայոց ի Գահիրէ» ուղեցոյցը (Տպ.Արշալոյս, Գահիրէ, 1901), վաւերացուած է Պատ. Քաղաքական Ժողովին կողմէ 1 Յունուար 1901-ին: ([XX] – [12]. թիւ 26)

Կանոնագրին «Նպատակ» բաժնին թիւ 1 յօդուածով արձանագրուած է *«ընկերութիւնս հիմնուած է Արաբկիրի քաղաքէն ու շրջակայքէն, առանց դաւանանքի խտրութեան՝ երկսեռ որբեր պաշտպանելու եւ դաստիարակելու համար»*, իսկ յօդուած 2-ով՝ *«հիմնարկութիւնը ծրագրած է «Կեդրոնական Արամեան Որբանոց»ի մը շինութիւնը Գահիրէի մէջ:*

Որբասիրաց Ընկերությունը կոչուած է նաեւ «Արաբկիրցի Ազգայնոց Որբախնամ Ընկերութիւն» եւ հետագային միացած «Գահիրէի Հայոց Որբասիրաց Ընկերութիւն»ին: (ԽԲ.1899, թիւ 9,12 եւ 22)

Արաբկիրցի որբերու ինքնաբաւ դառնալէն ետք, 1 Յունուար 1910-էն սկսեալ ընկերութիւնը կոչուած է «Կրթասիրաց Միութիւն Արաբկիրի Հայոց», իրեն յատուկ Կանոնագիր Կրթասիրաց Միութեան Արաբկիրի Հայոց Ի Գահիրէ հրատարակութեամբ (Տպ.Սֆինքս, Գահիրէ, 18 էջ, 1911): ([12]. թիւ 117)

«Կրթասիրաց»ի առաջին Գործադիր Ժողովին անդամակցած են Ս.Օտապաշեան (ատենապետ), Կ.Վարդանեան (փոխ-ատենապետ), Փ.Պալունի (ատենադպիր), Յ.Ճանիկեան (հաշուակալ), Ս.Երեմեան (գանձապետ) եւ Գ.Դարբինեան: ([35]. էջ 131)

Կրթասիրացի (ճանչցուած նաեւ «Ուսումնասիրաց» անունով) ծրագրերու կողքին, 1912-ին յառաջացած է «Արաբկիրցիներու Խնայողական Սնտուկ» Ընկերակ-ցութիւնը, անդամակցութեամբ համաքաղաքացի ազգայիններու:

Հետագային, հայրենիքի մէջ «Նոր Արաբկիր»ի վերաշինման առթիւ, միութիւն կոչուած է «Արաբկիրի Վերաշինող Միութիւն» եւ ապա վերանուանուած՝ «Արաբկիրի եւ Շրջակայից Հայրենակցական Միութիւն» անունով, կեդրոնատեղի ունենալով Մ.Նահանգները: ([24].բ.հտր. էջ 313)

Հայրենակցական Միութեան 1935-ին Գահիրէի մէջ վերակազմուած մասնա-ճիւղին նախագահը եղած է Գարեգին Ամատեան: ([8].էջ256)

Միութիւնը, Մասիս Պետրոսեանի խմբագրութեամբ 1937-ին հրատարակած է «Նոր Արաբկիր» հատորը (Տպ.Յ.Փափագեան, 48 էջ, 1937): ([12].թիւ799)

12. Վասպուրականի Որբախնամ Ընկերութիւն - Գահիրէ , 1899-1905

«Վանայ Որբախնամ Ընկերութիւն»

Վասպուրականցիներու այս ընկերութիւնը կազմուած է 1 Յունիս 1899-ին, գործադիր ժողովի դիւանին անդամ ունենալով՝ Գ.Բսագուլեան եւ Լ.Ա.Բամպուքճեան:

Որբախնամ նպատակով հաստատուած ընկերութեան ծրագրին մաս կազմած է Վարազայ Վանքի որբանոցին նպաստելու ձեռնարկներու նախաձեռնումը: ([35]. Բ.հտր. էջ 31, թիւ 41)

1905-ին, խնամատարական այս ընկերութիւնը միաձուլուած է Գահիրէի մէջ նոյն նպատակով գործող «Միացեալ Որբախնամ Ընկերութիւն» Հայոց»ին:

(Ը.1899, թիւ 43)

13. Լսարան - Ընթերցատուն Ընկերութիւն - Գահիրէ , 1899-1912

Ընկերութիւնը կազմուած է Յուլիս 1899-ին, իր մէջ լուծարելով «Ընթերցասիրաց Ընկերութիւն»ը եւ ընդունելով անոր գրադարանի 2000 ոսկի արժող գիրքերու հաւաքածոն:

Ընկերութեան հիմնադիրներէն եղած է Գեորգ Ակոբովիչը:([24].բ.հտր.էջ 309)

Ընթերցատան ներքին կանոնագիրին կազմութիւնը յանձն առած են Հ.Ս.Ազատեան, Ե.Գարագաշ, Ռ.Նազար, Կ.Երզնկացեան եւ Ս.Չոլաքեան:

Ընկերութեան պաշտօնական բացումը կատարուած է Կիր. 21 Յունուար 1900-ին Գահիրէի Պազար Մուրուրի իր կեդրոնին մէջ:

Փոխադրուած եւ վերաբացուած է Կիր. 9 Յունիս 1901-ին, Պէյն Էլ Սուրէյնի Գանթարա Կէտիտա, ֆրէրներու վարժարանին կից շէնքին մէջ: (Ը.1901, թիւ 184)

1903-ի Գործադիր Ժողովի դիւանին անդամ եղած են Ա.Հանրմեան (ատենապետ), Տ.Հաճընեան (Փոխ-ատենապետ), Ե.Տէմիրճեան (քարտուղար), Տ.Պէյլէրեան (փոխ-քարտուղար), Ս.Օտապաշեան (գանձապետ), Վ.Ճիզմէճեան (հաշուակալ) եւ Գ.Պահլաւ(խորհրդական):

Նոյն շրջանին, Լսարան-Ընթերցատան տնօրէն եղած է Կիրակոս Չուլաքեան: (ԺԶ1.,ա.տարի, 1903, թիւ 2)

Վարչութիւնը, գործակցութեամբը նորանշանակ «Գրական Մասնախումբ»-ին՝ կազմակերպած է լսարանային հերթական հաւաքոյթներ եւ նախաձեռնած՝ «Նոր Օր» լրագրի հրատարակութեան 1-էն 95 թիւերուն, 1900-1901 թուականին: Մասնախումբը հրատարակած է իր լսարային դասախօսութիւններէն չորսին արձանագրութիւնները: ([12]. թիւ 21,41,83,91)

Ընթերցատունը իր գրադարանին համար, լուծեալ Միացեալ Ուսումնասիրաց Ընկերութենէն ստացած է վիպային հատորներ եւ «Գեղունի»ի հաւաքածոյ մը: (ԻԵ. 1912, թիւ 10)

Ընկերութիւնը 1906-ին փոխադրուած է Գահիրէի Թէվֆիքիյէ թաղի իր սեփական ակումբը, որուն տարեսկիզբին կատարուած է ընթերցատան բացումը, նախագահութեամբ Առաջնորդ Աղաւնունի Վարդապետի, ատենապետութեամբ Մ.Արգարեանի եւ ատենախօսութեամբ Պատուելի Գնաճեանի: (ԼԶ.1960, էջ 19-Ը.1900, թիւ 49 եւ 1909, թիւ 56 - ԽԲ.1901, էջ 290 - Ա.1905, թիւ 40, 1906, թիւ 41)

Նիւթական անձկութեան դիմակալելու համար, Լսարանի Վարչութիւնը ձեռնարկած է վիճակահանութեան տոմսերու հրապարակումին, քաջալերութեան արժանանալու դիմումը կատարելով հասարակութեան: (ԻԵ. 1912, թիւ 6,7)

Անկազմակերպ շրջանի մը աւարտին եւ կարգ մը նախանձախնդիր անդամներու գործակցութեամբ՝ Լսարանին վերաբացման հանդէսը տեղի ունեցած է Շբ. 25 Մայիս 1912-ին, Պէյն Էլ Սուրէյնի հին շէնք-կէդրոնին մէջ, որուն առիթով, խօսք առած են Յ.Սեթեան, Պատուելի Խանդամուր, Ս.Պարթեւեան եւ Վ.Ասլան:

Նորակազմ վարչութեան անդամակցած են Յ.Սեթեան, Հ.Գրանեան, Ե.Քէրէսթէճեան, Վ.Զարդարեան, Գ.Համբիկեան, Ս.Օտապաշեան եւ Ս.Պարթեւեան, իրենց գործունէութեան ծրագրին մէջ ներառնելով՝ ֆրանսերէն՝ դասընթացքներու կազմակերպումը եւ պիւտճեական կարիքները հոգալու համար՝ վիճակահանութիւն մը:

Յունիս 1912-ին, Լսարանի Մայր Դիւանին անդամ ընտրուած են Յովհաննէս Սեթեան, Թիւրապեան Պէյ, Տոքթ.Ա.Տէր Մարգարեան եւ Արտաւազդ Հանրմեան:

(ԻԵ.1912, թիւ 10,18,20 եւ 24 – ԻԳ1.1912, թիւ 23 եւ 25)

14. Ակնցի Ազգայնոց Որբախնամ Ընկերութիւն - Գահիրէ, 1900-1905

Որբախնամ Ընկերութիւնը հիմնուած է 1 Յունուար 1900-ին, նպատակ ունենալով *«Ակն քաղաքի թշուառ որբոց ողորմելի դրութեան սրբազան պարտականութիւն կատարելու միակ սկզբունքը»:*

Գումարուած Ընդհանուր Ժողովը քուէարկութեամբ ընտրած է Գործադիր Խորհուրդի եօթը անդամներ ատենապետութեամբ Ս.Գ.Փափազեանի, ատենադպիր ունենալով՝ Ա.Էսքիճեանը:

3 Փետրուար 1901-ին գումարուած ժողովը ընտրած է նոր Գործադիր Մարմին մը, որուն անդամ ընտրուած են Խաչիկ Պերպերեան (ատենապետ), Օննիկ Նորիկեան (ատենադպիր), Սարգիս Ղազարեան (գանձապահ), Ալեքսան Պոյաճեան (հաշուակալ), Սարգիս Թաթարեան, Մինաս Մարգարեան եւ Կարապետ Խանարեան (խորհրդականներ): (Ը.1900, թիւ 66 եւ 1901, թիւ 161)

Ակնցիներու Որբախնամ Ընկերութիւնը 1905-ին միաձուլուած է Գահիրէի «Միացեալ Որբախնամ Ընկերութիւն Հայոց»ի կազմին մէջ:

15. Հայ Աւետարանական Երիտասարդաց Միութիւն - Գահիրէ , 1900

Աւետարանական Երիտասարդաց Միութիւնը (Հ.Ա.Ե.Մ.) հիմնուած է 1900-ին, քաջալերութեամբ եւ նախաձեռնութեամբ Պատուելի Մկրտիչ Յ. Գնաճեանի: ([24].գ.հտր. էջ 385)

16. Որբասիրաց Ընկերութիւն Սեբաստիոյ - Գահիրէ , 1900

Ընկերութիւնը կազմուած է 1 Դեկտեմբեր 1900-ին:

1906-ին, Գործադիր Վարչական Մարմինն անդամակցած են Յ.Հանէսեան (ատենապետ), Յ.Եփրեմեան(ատենադպիր), Ա.Քեօշէյեան(գանձապահ), Յ.Պօտուրեան(հաշուապահ),Ա.Էվլեան, Վ.Ալթունեան եւ Յ.Բրուտեան(խորհրդական):

([35]. Բ.հտր. 1963, էջ 359 – Ա.1906, թիւ 41)

17. Հրատարակչական Ընկերութիւն - Գահիրէ , 1901

Ընկերութիւնը հիմնուած է 1 Յունուար 1901-ին, նախաձեռնութեամբ եւ ատենապետութեամբ Արմենակ Փափագեանի:

Առաջին հրատարակութիւնը եղած է «Ազգային Սահմանադրութիւն Հայոց», Գահիրէ, Տպարան «Արշալոյս» լրագրի, 1901: (ԼԶ.1959-1960, էջ 19 - Ը.1901, թիւ157)

18. Հայ Աւետարանական Հիւանդախնամ Ընկերութիւն - Գահիրէ , 1901

Հիւանդախնամ միաւորը հիմնուած է 5 Փետրուար 1901-ին, նախաձեռնութեամբ եւ նախագահութեամբ Վերապատուելի Մկրտիչ Յ. Գնաճեանի:

Ընկերութեան նպատակը եղած է *«աղքատ հիւանդներու օգնել իրենց կարօտութեանց մէջ»*: ([24].ա.հտր. էջ 285 եւ գ.հտր. էջ 385)

19. Հայկական Ընթերցասրահ - Գահիրէ , 1902 -

Հայկական Ընթերցասրահը հիմնուած է 28 Մարտ 1902-ին, միաժամանակ կեդրոնատեղին ըլլալով Եգիպտոսի շրջանին Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան:

Կազմակերպութեան նպատակը եղած է *«օտարացումէ պահպանել հայ երիտասարդութիւնը , սատարելով Հայ Մշակոյթի պահպանման, տարածման եւ յառաջդիմութեան»*:

Նորահաստատ Ընթերցասրահին հիմնադիրները եղած են Ատոմ Ասլանեան, Նշան Բրուտեան, Սարգիս Երամեան, Սարգիս Թաթարեան, Երուանդ Մերճանեան, Շաւարշ Շիշմանեան, Սարգիս Պալաեան(Քեռի), Բենիամին Պետեւեան, Ապահ Պետրոսեան, Կարապետ Զրասունեան եւ Կարապետ Սուրիասեան:

Ղեկավար եւ վարչական անդամներէն եղած են նաեւ Մարտիրոս Պալայեան, Վահան Հապէշեան եւ Կարապետ Երզնկացեան: ([8]. էջ 211 եւ 387)

1902-1931, Գահիրեի կեդրոնական շրջաններին Նակիպ Ռիհանի եւ Քասր Էլ Նիլ փողոցներուն եւ ապա Մալիքա Նազլի (ներկայի՝ Ռամսէս) պողոտային վրայ ունեցած է իր հաւաքավայրերը:

1913-ին, Ս.Դ.Հ.Կուսակցութեան Գահիրեի «Փարամագ» մասնաճիւղին Ընթերցասրահը գործած է թիւ 40, Քասր Էլ Նիլ փողոց հասցեին (Ապտին թաղաշրջան, նախ-կին Անգլիական պահականոցին դիմաց, Վօլքըր Մէյմարաքի շէնքին ա.յարկ, թիւ 35): (Լ.1913, Նոյ.25)

1931 Մարտ 28-ին, հաւաքավայրը փոխադրուած է թիւ 21, Շուպրա փողոց, եւ իր բազմաբնոյթ մշակութային գործունէութիւնը հոն ծաւալած մինչեւ 1955:

Այս շրջանին կազմուած եւ գործած են Ս.Դ.Հ. «Երեւան» Երիտասարդաց Միութիւնը(1931), Պատանեկան Միութիւնը, Տիկնանց «Շաքէ» Մասնաճիւղը(1931), «Արծիւ»Թատերախումբը (ղեկավար՝ Վահան Հապէշեան), «Հնչակ» Նուագախումբը 1931-ին (ղեկավար՝ Փրօֆ.Վահան Բարսեղեանի), «Գողթան» Երգչախումբը 1934-ին (ղեկավար՝ Տրդատ Հապէշեանի), «Սպենդիարեան» Երգչախումբ-Նուագախումբը 1946-ին, Հայ Մշակութային Միութիւնը, տեղւոյն «Հայ Ուսանողական Միութիւն»ը, «Հայ Ներգաղթողներու Միութիւն»ը 1946-ին:

Կեդրոնատեղին ունեցած է 700 անդամներ: (ԻԲ., էջ 54,62-64)

Հայկական Ընթերցասրահի ղեկավար անդամներէն ոմանք 1922-ին եղած են «Հ.Օ.Կ.»ի Եգիպտոսի շրջանի հիմնադիրներէն, նաեւ Գահիրեի «Հայ Ազգային Խորհուրդ»ի կազմակերպիչներէն՝ 1945-ին:

Այս շրջանի սկզբնաւորութեան, վարչական մարմինը բաղկացած է 18 անդամներէ, որուն մաս կազմած են Տրք.Արամ Տէմիրճեան(ատենապետ), Մարտիրոս Պալաեան(ատենադպիր), Մանուէլ Պէլլերեան(գանձապահ), Սարգիս Միսայէլեան եւ Խորէն Իսկէնեան(խորհրդական):

1939-ին, վարչական եղած են Տրդատ Հապէշեան(ատենապետ), Սարգիս Պալաեան(ատենադպիր), Հրանդ Ոսկերիչեան(գանձապահ), Յովսէփ Գույումճեան եւ Արշալիր Գույումճեան(խորհրդական): (ԻԲ. էջ 63)

Ընթերցասրահի Երիտ.Շարժումը 1949-էն սկսեալ գործած է Հ.Մ.Մ. (Հայ Մարմնամարզական Միութիւն) անուան տակ:

Մարզական գետնի վրայ, Ընթերցասրահը 1913-էն ունեցած է տողոց եւ աղջիկներու փինկ-փոնկի առաջատար խումբեր եւ հիմնադիր անդամը եղած՝ Եգիպտոսի փինկ-փոնկի ֆետերասիոնին (1935): (ԻԲ. էջ 64)

Վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած են միջակումբային փինկփոնկի մրցաշարքեր: Այս մարզաձեւի «Ընթերցասրահ»էն մարզիկներ մաս կազմած են Հայաստանի մէջ կայացած Համահայկական մարզախաղերուն մասնակից եգիպտահայ պատուիրակութիւններուն 1999-էն սկսեալ:

Շուպրայի թաղաշրջանին պետական բարեգարդումներու ծրագրին ընդառաջ, 1955-ին «Ընթերցասրահ»ը փոխադրուած է Սուր Էլ Թէվֆիքի փողոցին յարկաբաժինը, ուրկէ 1958-ին տեղափոխուած է 26 Յուլիս Պողոտայի հասցեով ընդարձակ հաւաքավայր սրահը:

1997-ին, հաւաքավայրի շէնքին փլուզման պատճառով, կեդրոնը 1999-ի Յունիս 25-ին փոխադրուած է թիւ 66, Ռամսէս Փողոց, Հելիոպոլիս:

Գահիրեի Հնչակեան Մասնաճիւղը 1905-ին հրատարակած է Սեւայրի «Բոնկոդ Կայծեր» 61-էջնոց հատորը: ([12]. թիւ 52)

Ս.Դ.Հ. «Երեւան» Երիտ. Միութեան նախաձեռնութեամբ լոյս տեսած են «Մատենաշար Երեւան»ի երկու հատորները, Ստեփան Զօրեանի «Մեղքը»(թիւ1) եւ Զարուհի Ծաղկունիի «Աւետիք Իսահակեան»ը(թիւ 2):

1946-ին պատրաստուած է սրահին «Պատի թերթ»ը:

1942-էն ի վեր կանոնաւոր կերպով հրատարակուած է «Երեւան» տարեկան պատկերագարդ օրացոյցը:

Ընթերցասրահին մէջ հիմնուած է «Արարատ» գրադարանը իր 1000 հատորներու հաւաքածոյով: (ԺԳ1.1919)

Ս.Դ.Հ.Կուսակցութեան հովանաւորութեամբ «Հայկական Ընթերցասրահ»ը հրատարակած է «Զարթօնք» երկշաբաթաթերթը (1919-1921), «Լուսարձակ» շաբաթաթերթը (1926-1927) , «Զարթօնք» ամսագիրը (1935-1937) եւ «Աշխատանք» ամսագիրը (1944-1947): ([14]. էջ 124,166,198,242)

1963-էն սկսեալ «Հայկական Ընթերցասրահ»ի վարչութեան գործունէութեան եւ գաղափարախօսութեան բանքերը եղած է «Զահակիր» շաբաթաթերթը, իսկ 1989-էն ի վեր՝ վարչութիւնը ստանձնած է թերթին հրատարակութիւնը՝ Մարտիրոս Նուպար Պալաեանի արտօնատիրութեամբ:

20. Միացեալ Որբախնամ Ընկերութիւնք Հայոց - Գահիրէ , 1905 -1914 , 1916-1927

Որբախնամ Ընկերութիւնքը հիմնուած է 1 Յունուար 1905-ին, միաձուլումով Գահիրէի մէջ գործող «Վասպուրականի Որբախնամ Ընկերութիւն», «Ակնայ Որբախնամ Ընկերութիւն» եւ «Արաբկիրցիներու Որբասիրաց Ընկերութիւն» միութիւններուն, եւ գործակցութեամբ բարեսէր ազգայիններու:

Ընկերութիւնը ունեցած է 17 յօդուածներով «Կանոնագիր Միացեալ Որբախնամ Ընկերութեանց Հայոց ի Գահիրէ» (Տպ.Հայկական, Օննիկ Հալէպլեան, Գահիրէ, 6 էջ, 1906), որուն վաւերացումը կատարուած է Ազգային Գաւառական Վարչութեան Պատ. Քաղաք. Ժողովի 5 Յունուար 1906-ի նիստին:

([XIX] - [12]. թիւ 62)

Բարեգործական Ընկերութեան նպատակը եղած է «գործունէութեան հասոյթին կէտով Հայաստանի եւ Կիլիկիոյ անտերունչ եւ չքաւոր որբերը խնամել եւ կիսովն ալ՝ կարօտ գաւառներու մէջ ուսում տարածել»:

Որբախնամին նիւթական անձուկ վիճակին օգտակար հանդիսացած են տեղական միութիւններ եւ բարեսէր ազգայիններ: Յունուար 1912-ին, Հ.Բ.Ը.Միութեան կողմէ Խտիվական Օփերային մէջ տեղի ունեցած է տարեկան ներկայացում մը ի նպաստ Միացեալ Որբախնամին: (ԻԵ. 1912, թիւ 3)

Տիրող աննպաստ պայմաններուն պատճառով, «Հայ Որբախնամ Ընկերութիւնք»ը կազմալուծուած է 1914-ի Ա.Աշխարհամարտի սկզբնաւորութեան:

Միացեալ Ընկերութիւնը, 1916-ին վերակազմակերպուած է Գարեգին Իսակիլեանի ջանքերով, եւ գործել վերսկսած՝ Եգիպտոսի Հայոց Ազգային Իշխանութեան հակակշռին տակ, նախապէս անոնցմէ վաւերացուած կանոնագրով:

Ընկերութիւնը ունեցած է իր մայր դիւանը, անդամակցութեամբ Վեր.Խ.Հ.Խանդամուրի, Օ.Տերվիշեանի, Կ.Պալեանի եւ Ա.Ասլանեանի, իսկ վարչական անդամներ եղած են Յ.Գայաեան, Մ.Սահակեան, Ս.Կօշկակարեան, Մ.Ալթունեան, Յ.Աղազարմ, Յ.Մարգարեան եւ Կ.Մալխասեան:

Հիմնադրուած է Աղեքսանդրիոյ մասնաճիւղը, թիւ 17, Սալահէտտին փողոց հասցէին, ստանձնելով՝ որբերու հազուստներու պատրաստութեան հանդերձարանի հոգը, եւ որուն գործակցութեամբ 1919-ին կատարուած է Ատանայի որբերուն ծախսերուն հովանաւորութիւնը:

Գահիրէի վարչութեան կողքին յառաջացած է Տիկնանց Յանձնախումբը, անդամ ունենալով Տիկնայք՝ Հ.Կ.Պալեան(ատենապետուհի), Տ.Ս.Պալըքճեան, Ատէլ Թերճիման, Ա.Սէլվաճեան, Լ.Կոկանեան, Մ.Բարթողեան, Ս.Չրագեան, Հ. Մարգարեան, Ե.Պարծանքեան, Ա.Շամլեան, Վ.Տ.Կիւմիւշեան, Ղ.Գրիգորեան, Տէօվլէթեան, Պաղտիկեան: Նաեւ, Օրք. Պ.Գասապեան(ատենադպրուհի), Ա.Գարայաման, Ա. Կոկանեան, Ք.Ծաղիկեան, Ա.Խաչատուրեան, Է.Իշխանեան, Ա.Եագուպեան, Հ. Կիւմիւշեան, Թ.Մասրաֆ, Ծ.Նազիկեան եւ Գրիգորեան: Իսկ արանց օժանդակ յանձնախումբին անդամ եղած են Մ.Սողիկեան, Բ.Վարդանեան, Լ.Կիւզէլիմեան, Յ.Գաբլանեան, Մ.Սինասեան, Վ.Պոյաճեան եւ Յ.Շաքարեան:

(ԼԵ.1921, թիւ 11)

Գալով Գահիրէի Տիկնանց Յանձնախումբին, անոր բաժին ինկած է հասոյթները արդիւնաւորելու պարտականութիւնը: Կազմակերպուած են ֆիլմերու ցուցադրութիւն, թատերական եւ օփերայի ներկայացումներ, նուագահանդէսներ, նուիրահաւաք երեկոյթներ, ձեռարուեստի գործերու վաճառքներ եւ Ներքին Գործոց նախարարութեան արտօնութիւնը ձեռքբերած՝ տարին մէկ անգամ միջազգային վիճակահանութիւն սարքելու համար:

Կազմուած է նաեւ Թանթայի վարչութիւնը, որուն անդամակցած են Ա.Բագումեան եւ Հ.Հացունի(ատենապետ), Ս.Անդրէասեան(ատենադպիր), Խ.Ճիպեան եւ Մ.Սէշէճեան(գանձապետ):

Որբախնամը նախաձեռնած է Այնթապի «Ազգային Որբանոց»ին հիմնադրութեան, ապագային զայն փոխադրելով Լիբանանի Ճիւնիէ աւանը:

Եգիպտոսի Հայ Որբախնամ Ընկերութիւնը իր հոգածութեան առարկան դարձուցած է Միջազգէտքի, Սուրիոյ եւ Կիլիկիոյ զանազան շրջաններու բազմահազար որբերը, անոնց կարիքներուն տրամադրելով տասնեակ հազարաւոր ոսկիներ, գործակցութեամբ եւ նուիրաբերումով՝ Եգիպտոսի, Սուտանի, Եթովպիոյ, Յունաստանի, Կիպրոսի, Զուիցերիոյ, Ֆրանսայի եւ այլ երկիրներու հայ գաղութներու մարմիններուն:

(ԼԵ.1921, թիւ 12)

Ընկերութիւնը, իր ուսման ծրագրին զուգահեռ, որբերը զանազան արհեստներ սորվելու մղելով՝ վարպետներու խնամքին յանձնած է անոնց, հետագային անկախ գոյավիճակի տիրանալու համար: Գալով որբուհիներուն, անոնք “Հայկական Ձեռագործի Ճիւղ”ին մէջ վարժանքներու հետեւելով, ապագայի ինքնաբաւութեան առաջնորդուած են:

1927-ին, միջավայրի աննպաստ պայմաններուն բերումով՝ Միացեալ Ընկերութիւնը սկսած է դժուարութիւններ դիմակալել, սակայն յաջողած է իր առաքելութեան գործադրութիւնը շարունակել:

«Հայ (Միացեալ) Որբախնամ Ընկերութիւն»ը իր Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մասնաճիւղերով 1919-1922 կը հրատարակէ «Որբունի» ամսական տեղեկատուն, իսկ 1925-ին՝ «Մեր Որբերուն Պահապան Հրեշտակները» պրակը (Տպ.Փարոս, Գահիրէ, 32 էջ, 1925): (ԼԶ.1959-60 էջ 20 - ԼԵ.1919/1921, պրակներ – [12]. թիւ 379)

21. Հայ Պատանեաց Մերոպեան Ուսումնասիրաց Ընկերություն -

Գահիրե , 1905 -1907

Պատանեաց Ուսումնասիրաց Ընկերությունը հիմնուած է 1 Ապրիլ 1905-ին, որուն դիւանին մաս կազմած են Կարապետ Փափագեան, Մելիքօֆ Մեթիկեան, իսկ Գործադիր Ժողովին՝ Նշան Կարապետեան, Արշակ Եագուպեան, Տիգրան Թովայեան, Թագուր Պասմաճեան եւ Սմբատ Աճէմեան:

Ընկերութեան վաւերացուած Կանոնագիրը 1906-ին լոյս տեսած է Տպարան «Լուսաբեր»էն:

Վարչութեան նախաձեռնութեամբ, հաստատուած է գրադարան մը հայերէն գիրքերու, տեղական եւ արտասահմանեան թերթ-հանդէսներու հաւաքածոյով:

Ընկերութեան հաւաքավայրին մէջ կազմակերպուած են դասախօսական, թատերական, երաժշտական երեկոներ եւ լսարանային հաւաքոյթներ:

Մերոպեան Ուսումնասիրաց Ընկերությունը 1907-ին միացած է նորակազմ «Վասպուրական Ընթերցասիրաց Ընկերություն»ին, միատեղ կոչուելով «Միացեալ Ուսումնասիրաց Ընկերություն»:

(Ա.1906, թիւ 46 եւ 1907, թիւ 28 – [31].էջ 189 – [9].էջ 193)

22. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն (Հ.Բ.Ը.Մ.) - Գահիրե , 1906 -

Միությունը հիմնուած է Կիր. 15 Ապրիլ 1906-ին, Ս.Զատկի առաջին օրը, Ն.Վ. Պօղոս Նուպար Փաշայի ապարանքին մէջ Գահիրե, մասնակցութեամբ հիմնադիր խորհուրդի անդամներ Պօղոս Նուպար Փաշայի, Եագուպ Արթին Փաշայի, Երուանդ Աղաթօնի, Տոքթ.Նշան Տաղաւարեանի, Մկրտիչ Անդրանիկեանի, Կարապետ Պէյ Շէրիտճեանի, Մ.Մարկոսօֆ Պէյի, Գրիգոր Եղիայեանի, Առաքել Պէյ Նուպարի եւ Յովհաննէս Յակոբեանի:

Կեդրոնական Ժողովի դիւանին անդամները եղած են Պօղոս Փաշա Նուպար (ատենապետ), Եագուպ Արթին Փաշա եւ Երուանդ Աղաթօն Պէյ (փոխ-ատենապետներ), Տոքթ. Նշան Տաղաւարեան (ատենադպիր) եւ Առաքել Պէյ Նուպար (գանձապետ):

Պօղոս Նուպար եւ Եագուպ Արթին Փաշաներու կողմէ, Բարեգործական Ընկերութեան Կանոնագրէն օրինակով նախօրօք Եգիպտոսի Ներքին Գործոց Նախարար Մուսթաֆա Ֆէհմիին յղուած 12 Ապրիլ 1906 թուակիր նամակին Միութեան Կանոնագրին վաւերացումը հաստատող պատասխանը ստացուած է 7 Մայիս 1906 թուակիր պաշտօնագրով: ([38]. էջ 21)

Մինչ այդ, 1 Մայիս 1906-ին, հրապարակուած է Հ.Բ.Ը.Միութեան «Հրաւեր առ համօրէն հայս» խորագրով անդրանիկ կոչը, որուն հետեւած է 20 յօդուածներէ բաղկացած «Կանոնագիր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Գահիրե» 25 էջոց գրքոյկին հրատարակութիւնը (Տպ.Կամպէթա, Աղեքսանդրիա):

Կանոնագրին թիւ 1 յօդուածով նշուած է Միութեան նպատակը՝ «Արեւելքի (բնագաւառի) Հայ ժողովրդեան մտաւոր եւ բարոյական զարգացմանը նպաստել, անոնց նիւթական (եւ տնտեսական) կացութիւնը բարւոքելու օժանդակել, եւ այս արդիւնքը յառաջ բերելու ծառայող որեւէ (ձեռնարկ կամ) հրատարակութիւն քաջալերել: Ընկերութիւնը (էապէս մարդասիրական է) բնաւ որեւէ քաղաքական հանգամանք չունի, սա հիմնական պայման է» առաջադրանքով:

([XVII]. – [12].թիւ 61 եւ թիւ 77)

Հ.Բ.Ը.Միութեան, յետ հիմնադրութեան՝ եւ համաշխարհային չափանիշով առաջին մասնաճիւղը հիմնուած է 1907-ին Աղեքսանդրիոյ մէջ, 75 հոգիներու անդամակցութեամբ:

Գահիրէի մասնաճիւղը կազմուած է նախագահ Պօղոս Նուպար փաշայի 2 Մարտ 1910 թուակիր հրաւերով, Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ Երուանդ Աղաթօն պէյի, գանձապահ Մկրտիչ Անդրանիկեանի եւ ատենադպիր Վահան Մալեգեանի նախաձեռնութեամբ: Մայրաքաղաքի այս մասնաճիւղին օժանդակած են շրջանային յանձնախումբեր Թանթայէն, Զակազիկէն, Մանսուրայէն եւ Մելլաուիէն: ([38]. էջ 24)

1922-ին, Միութեան Կեդրոնական Վարչութիւնը Զուիցերիական իրաւավիճակ որդեգրելով հաստատուած է Փարիզ, իսկ 1925-ին, ան իր կեդրոնը ունեցած է Լօզանի մէջ, 28 յօդուածներէ բաղկացած նոր Հիմնական Կանոնագրով: ([38].էջ24-ԼԶ.1959-60,էջ20-23)

1907-էն 1928 տարիներուն, սկիզբը Աղեքսանդրիա եւ ապա Գահիրէի մէջ հրատարակուած են Հ.Բ.Ը.Միութեան «Տարեկան Տեղեկագիր»ները երկամեայ եւ քառամեայ պարբերականութեամբ:

Հ.Բ.Ը.Միութեան գրադարանը հաստատուած է 1910-ին, կազմակերպութեամբ Կարապետ Պէյ Շիրիտճեանի եւ հետագային անուանուած՝ «Եագուպ Արթին» մատենադարան:

1912-ին, Գահիրէի մէջ հաստատուած Հ.Բ.Ը.Միութեան սեփական տպարանէն լոյս սկսած է տեսնել «Միութիւն» պաշտօնաթերթը (ա.տարի, թիւ 1, Յունուար 1912), ամսական եւ երկամսեայ դրութեամբ՝ մինչեւ Յունուար/Փետրուար 1928, որմէ ետք հրատարակուած է Փարիզի մէջ:

Գահիրէի Հ.Բ.Ը.Մ. տպարանին մէջ տպուած են Հ.Բ.Ը.Միութեան «Ոսկեմատեանը» զոյգ պատկերազարդ վեցամեայ յաջորդական հատորները (1906-1913) եւ (1913-1919): ([25] -[12]. թիւ 164)

Յունուար 1956-էն, Հ.Բ.Ը.Մ.ի Գահիրէի մասնաճիւղը հրատարակած է «Տեղեկատու» պարբերականը մինչեւ 1981, որուն վերհրատարակութիւնը սկսած է 1996-ին, եռամսեայ կանոնաւորութեամբ շարունակուելով մինչեւ այսօր: Յունուար 1957-ին, լոյս տեսած է «Մանկական Տեղեկատու»ի միակ պրակը, նաեւ «Մանկական Նոր Տարուայ թիւ»ը (1958, թիւ 5-6): ([14]. էջ 290 եւ 292)

Տասնամեակներէ ի վեր Հ.Բ.Ը.Միութիւնը հրատարակած է օրական թերթիկներով տարեկան պատի եւ գրպանի օրացոյցները:

1919-ին հրատարակուած՝ «Հ.Բ.Ը.Միութեան Գործապատումը» պրակին մէջ, յիշուած է Միութեան նախաձեռնութեամբ գործած «Հիմնադրամներ»ը, որոնք ներկայացած են իբրեւ Աղէտեալներու, Որբանպաստ, Որբապաշտպան, Հանդերձարանի եւ Վերաշինութեան Հիմնադրամներ: ([12]. թիւ 272)

Սոյն հիմնադրամ-յանձնախումբերը, իրենց կենսական ներդրումը կատարած են Փոր Սայիտի մէջ 1915-էն 1919 հաստատուած Մուսա Լերան գաղթականներու վրանաքաղաքի գանազան կառոյցներուն, եւ յատկապէս՝ «Սիսուան» վարժարանին հովանաւորութեան յանձնառութեամբ: ([17]. էջ 59)

1918-ին, Գահիրէի մասնաճիւղը Փոր Սայիտի գաղթակայանի դպրոցին աշակերտութեան համար հրատարակած է Սիսուան Ընթերցարանը: ([12].թիւ 255)

Միութեան Ուսումնական նպատակներուն տրամադրուած են Յովակիմեան եւ Մելքոնեան հիմնադրամները, Սաթենիկ Ճանիկ Չագրը հիմնադրամի կրթական մարզը, ինչպէս նաեւ՝ եգիպտահայերու կողմէ կատարուած մեծագումար նուիրատուութիւններ: ([38]. էջ 26, 27)

1958-ին, Գահիրէի մասնաճիւղին հովանիին տակ, գործակցութեամբ Ովսաննա Գարտաշեանի հիմնուած է Հայ Երիտասարդաց Մշակութային Մարմինը, որուն գործունէութեան նախաքայլը եղած է հայագիտական դասա-
խօսութիւններու շարքին հաստատումը: (Խ.1966, թիւ 1-5)

Եգիպտահայ մեծանուն բարերարուհի Սաթենիկ Ճանիկ Չագրը, Մարտ 1976-ին որոշած է Գահիրէի Զամալէք թաղաշրջանի իր եռայարկ առանձնատունը եւ շրջակայքի 4097 քառ.մէթր հողատարածքը նուիրել Հ.Բ.Ը.Միութեան:

Սոյն նուիրատուութեան նօտարային վաւերացումին երկու լրացուցիչ բարեփոխումներ կատարուած են, յաջորդաբար 1977-ին եւ 1979-ին:

Հ.Բ.Ը.Մ.ի Գահիրէի վարչութիւնը, 1992-ին որոշած է սոյն կալուածը երկու մասի բաժնել, որուն գործընթացին օրինական կարգադրութիւնը եւ ստացուած նուիրատուութեան նպատակներուն գործադրութեան համար Հ.Բ.Ը.Մ.ի Կազմական Կանոնագրին պատշաճեցումը վաւերացուած են 8 Փետրուար 1994-ին:

Նուիրատուութիւն ստացուած տարածքին վրայի Սաթենիկ Չագրը առանձնատան բաժնէն զատ, 1750 քառ.մէթր պարապ հողամասին աճուրդով վաճառքը 16.043.125.00 Ե.Ոսկիով կատարուած է 14 Յունուար 1996-ին:

Իսկ առանձնատան շէնքը խորհրդանշական գումարով վարձուած է Հայաստանի Հանրապետութեան Գահիրէի Դեսպանատան: Վարձու գումարը 1996-2007 թուականներուն վճարած է Հ.Բ.Ը.Մ.ի կեդրոնը, որմէ ետք, դեսպա-
նատունը փակել սկսած է իր վարձը: (Խ. Յուլիս 2013, էջ 4-5)

Յիշեալ աճուրդով վաճառուած հողամասին գումարով հաստատուած է «Սաթենիկ Չագրը» Հիմնադրամը, որուն եկամուտներուն մշակութային եւ բարեսիրական նպատակներու տրամադրելի ծրագրին գործադրութիւնը սկսած է Ապրիլ 1996-ին:

Այսպէս, «Սաթենիկ Ճանիկ Չագրը Հիմնադրամ»ի ծրագիրներու շարքէն իրագործուած են.

Գիրքերու, հեղինակութիւն-ուսումնասիրութիւններու հրատարակութեան քաջակերութիւնը՝ 1995-էն սկսեալ: Յիշարժան է , թէ 1995-էն Ապրիլ 2012 հրատարակուած են 74 գիրքեր եւ պրակներ, 57-ը հայերէն եւ մնացեալը արաբերէն եւ անգլերէն լեզուներով: ([33])

Գահիրէի եւ Այն Շամս համալսարաններու «Կարիքաւոր Ուսանողներու ֆոնտ»ը՝ տարեկան 50.000 Ե.Ո. գումարով , 1997-էն սկսեալ:

Օժանդակութիւնը արաբերէն լեզուով «Արեւ» ամսօրեայ յաւելումի հրատարակութեան՝ Յունուար 1998-էն 2009, իսկ Ապրիլ 2010-էն սկսեալ, հրատարակութեանը նախաձեռնուած՝ արաբերէն լեզուով «Արեգ» ամսօրեային:

Առողջապահական «Բժշկական Խնամք»ի Ծրագիրը , հաստատուած՝ 1999-ին եւ գործադրութեան դրուած է Յունուար 2000-էն Գահիրէի հայ համայնքին համար եւ երկու տարի յետոյ Աղեքսանդրահայութեան համար:

Ուսումնառական զանազան շրջաններու մէջ գտնուող ուսանողներու կրթաթոշակներու յատկացումը, ինչպէս նաեւ եգիպտահայ «Գերազանցիկ

Ուսանողության Պարգևատրումի ծրագիր»ը, որուն գործադրութիւնը սկսած է Նոյեմբեր 2001-էն:

Քաջալերութիւնը, մասնակցութիւնը եւ կազմակերպումը երիտասարդական զբոսապտոյտներու, բանակումներու եւ դասախօսութիւններու ծրագրերուն 2002-էն սկսեալ:

«Հայ Ուսուցիչներու Գնահատանքի Կենսաթոշակ»ը, տրամադրելի՝ Գալուստեան, Նուպարեան եւ Պօղոսեան Ազգային Վարժարաններու մէջ 25 կամ աւելի տարիներ պաշտօնավարած եւ հանգստեան կոչուած հայ ուսուցիչներուն, Սեպտեմբեր 2004-էն սկսեալ:

Գահիրէի համալսարանին «Հայագիտական Կեդրոն»ին օժանդակութիւնը, տարեկան 30.000 Ե.Ո. գումարով:

Յունիս 2001-ին, լրումին հասած են Հ.Բ.Ը.Միութեան Վարչութեան նախաձեռնութեամբ եգիպտահայ ժամանակակից պարբերահայ մամուլի՝ «Յուսաբեր»ի (1913-էն 2000), «Արեւ»ի (1915-էն 2000) եւ «Ջահակիր»ի (1948-էն 2000) ամբողջական հաւաքածոները մանրածապաւէնի վերածելու աշխատանքները եւ անոնց պատճեններուն պատկան վարչութիւններուն յանձնումը կատարուած:

Հ.Բ.Ը.Մ.ի Գահիրէի վարչութեան նախաձեռնութեամբ կազմուած է «Ծիածան» Մանկական Երգչախումբը 2005-ին, խմբավարութեամբ Միհրան Ղազէլեանի:

Հ.Բ.Ը.Միութեան 100-ամեակի տօնակատարութիւններուն առիթով 2006-ին կազմուած է Հ.Բ.Ը.Մ.ի Եգիպտոսի Կայքէջը, որուն ընդարձակումի եւ բարելաւումի աշխատանքի աւարտին՝ անոր ցուցադրութիւնը եւ հեռարձակումը կատարուած է Յունիս 2007-ին:

Գահիրէի Հ.Բ.Ը.Միութիւնը 1999-ին գնած է Հելիոպոլսոյ մէջ, թիւ 26, Մուրատ Պէկ փողոց քառայարկ շէնքը, զայն որպէս վարչական եւ մշակութային կեդրոն գործածելու համար:

Հ.Բ.Ը.Միութեան Գահիրէի Մասնաճիւղը թիւ 15, Էմատ Էլ Տին փողոցի իր գրասենեակէն 1 Դեկտեմբեր 2003-ին փոխադրուած է Հելիոպոլսոյ թիւ 26, Մուրատ Պէկ փողոցի նորահաստատ կեդրոնը, իսկ Միութեան Շրջանակային Յանձնաժողովը Գահիրէի իր գրասենեակը փակած է 2014-ին, տեղոյն փաստաթուղթերը եւ թղթածրարները փոխադրելով Հ.Բ.Ը.Մ.ի Հելիոպոլսոյ կեդրոնատեղին:

Հ.Բ.Ը.Մ.ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովը եւ Գահիրէի մասնաճիւղը կը շարունակեն իրենց բարեսիրական եւ նպաստընկալ ծրագիրներու աշխատանքները գահիրէաբնակ ազգայիններուն, ամէն Ուրբաթ օրերը, Գահիրէի թիւ 179, Ռամսէս Պողոտայի վրայ գտնուող Ազգային Առաջնորդարանին կից իրենց յատկացուած գրասենեակէն ներս:

Հ.Բ.Ը.Մ.ի Հելիոպոլսոյ շէնքին մէջ, յետ բարեգարդումի՝ 2010-ին բացումը կատարուած է Ճանիկ Չազըր Մշակութային Կեդրոնին, ուրտեղ կը կազմակերպուին լսարանային դասախօսութիւններ եւ հաւաքոյթներ:

Կեդրոնին մէջ, 2013-ին հաստատուած են ՀԲԸՄ-ի Հայկական Համացանցային Համալսարանի (ՀՀՀ-ի) Գահիրէի մասնաճիւղին «Ճատրակի Դաստիարակչական Ծրագիր»ին առցանց դասընթացքները, որոնցմէ առաջինը սկիզբ առած է Հոկտեմբեր 2014-ին:

Այս դասընթացքին հետեւող խումբը հիմնադրած է ՀԲԸՄ-ՀՀՀ-ի Եգիպ-

տոսի Ճատրակի Ակումբը, կազմակերպելով կանոնաւոր հանդիպումներ եւ մրցաշարեր, որոնց կողքին կազմուած է Դիմատետրային (Facebook) խումբը:

Եգիպտոսի մէջ, Հ.Բ.Ը.Միութեան գործունէութիւնը դեկավարած են՝ Կեդրոնական Վարչական Ժողովը, Գործադիր Ժողովը՝ 1921-էն սկսեալ եւ Շրջանակային Յանձնաժողովը 1926-էն սկսեալ: ([38]. էջ 24)

Միութիւնը Եգիպտոսի մէջ ներկայիս ունի հինգ կառոյցներ.

- Հ.Բ.Ը.Մ.ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողով:

Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովէն նշանակուած Յանձնաժողովը, յանձնաձողն է Եգիպտոսի մէջ անոր պատկանող ինչքերուն եւ իբրեւ տեղական վերին մարմին, կապի օղակը՝ Կեդրոնին եւ Եգիպտոսի մէջ գործող տեղական մարմիններուն:

- Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ տեղական Մասնաճիւղեր:

Իւրաքանչիւր մասնաճիւղ նախաձեռնողն է իր շրջանի մշակութային եւ բարեսիրական գործունէութեան:

- Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ զոյգ Հ.Մ.Ը.Մ. Նուպար մարզաբաններ:

Իւրաքանչիւր մարզաբան կազմակերպիչն է իր տեղւոյն մարզական եւ երիտասարդական գործունէութեան:

Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մասնաճիւղերը ենթակայ են Եգիպտոսի Ընկերային Գործոց՝ իսկ զոյգ մարզաբանները Երիտասարդական եւ Մարզական նախարարութիւններու հսկողութեան: (Խ.2004, թիւ 33 եւ 2015, թիւ 77)

23. Հայ Պատանեաց Ընթերցասիրաց «Ռաֆֆի» Ընկերութիւն - Գահիրէ, 1906-1910

Ընթերցասիրաց Ընկերութիւնը հիմնուած է 1906-ին, նպատակ ունենալով *«Գահիրէի անուս եւ աղքատ տղոց ուսում տալ»*:

Ընկերութեան նախագահը եղած է Գ.Ք.Երկայնաբազուկեան իսկ ատենապետը՝ Ա.Ատիլեան:

2 Սեպտեմբեր 1906-ին, բացման հանդէսը կատարուած է իր նորահաստատ կեդրոնին, Պապ Էլ Շաարէյա (թրամվէյի կայարանէն քիչ մը վեր դէպի Տահեր):

1907-ի վարչութեան ատենապետը եղած է Յ.Ղ.Ղազարեան իսկ ատենադպիրը՝ Ն.Մելքոնեան:

Ուսումնատենչ նոր սերունդին համար, վարչական մարմինները կազմակերպած են զանազան լեզուներով եւ գիտական նիւթերով դասախօսական գիշերային լսարանային հաւաքներ:

Ընթերցասիրաց «Ռաֆֆի» Ընկերութիւնը կազմալուծուած է 1910-ին:

(Լ.Զ.1959-60, էջ 23-24 - Ը.1910, թիւ130 - Ա.1906, թիւ12,38)

24. Վասպուրականի Դպրոցասիրաց Ընկերութիւն - Գահիրէ, 1906

Դպրոցասիրաց ընկերութիւնը հիմնուած է 1 Յուլիս 1906-ին, նպատակ ունենալով *«Վասպուրականի հայաբնակ գիւղերուն մէջ դպրոցներ հաստատել»*:

Սեպտեմբեր 1906-ին, կապ հաստատուած է Վանի Առաջնորդարանին հետ եւ քննարկումը կատարուած է կարիքաւոր շրջանի մէջ երկու վարժարան կառուցելու ծրագիրը:

Ընկերութեան վարչութեան անդամակցած են Ա.Քինյ.Շաղոյեան(ատենապետ), Յ.Թէհրիզեան(ա.ատենադպիր) եւ Մ.Սոսոյեան(բ.ատենադպիր), իսկ

Գործադիր Ժողովին անդամ ընտրուած են Ս.Խաչատուրեան(ատենապետ), Միք.Նաթանեան (ատենադպիր), Գ.Իսագուլեան(գանձապահ), Ղ.Ճիգմէճեան(հաշուակալ), Ա.Այվազեան(հաւաքիչ), Վ.Մումճեան եւ Ի.Տէր Արթինեան(խորհրդական): ([35]. Բ.հտր. էջ 41,42 - Ա.1906, թիւ 46 - 1907, թիւ 28)

25. Ուսումնասէր Արմէնուհեաց «Մանդուխտ» Ընկերութիւն - Գահիրէ , 1906

Հայուհիներու ուսումնասէր ընկերութիւնը հիմնուած է 9 Սեպտեմբեր 1906-ին եւ հրատարակած կանոնագիր մը, նպատակը ունենալով *«համեստ սահմանի մէջ ծառայել ազգին իգական սեռին զարգացման, Մայր-Երկրի մէջ աղքատ օրիորդաց դաստիարակութեան օգնելով: Իսկ ապագային, Հայաստանի մէկ գիւղին կամ գաւառին մէջ օրիորդաց մասնաւոր վարժարան մը ունենալ»:*

Նորահաստատ Ընկերութեան առաջին Ընդհանուր Ժողովը գումարուած է 23 Սեպտեմբեր 1906-ին, նախագահութեամբ Տիկին Մառի Պէլլերեանի:

Ժողովը քննարկած եւ վաւերացուցած է Կանոնագիրը, ըստ որուն *«Ընկերութեան լուծարման պարագային, բոլոր հարստութիւնը կը յատկացուի որեւէ գաւառի մէջ գտնուող ամենակարօտ աղջկանց վարժարանի մը»:*

Ընկերութեան կանոնագիրը 21 յօդուածներով լոյս տեսած է Տպ.Ս.Դարբինեանէն (Գահիրէ, 1906) ըստ որուն 2-րդ յօդուածին՝ «համակիր կ'ընդունուին Հայ տիկիները՝ վճարելով ամսական երեք դուրուշ» , իսկ, «օտարուհիներ կրնան ընկերութեան աջակցիլ, իբրեւ համակիր նկատի առնուելով»:

(Ա.1906, թիւ 71 – [XXI] – [12]. թիւ 63)

Ընդհ.Ժողովէն ընտրուած վարչութեան անդամակցած են Օր.ներ Փ.Գէորգեան, Ս.Հապէշեան, Հ.Գասպարեան, Բ.Եազըճեան, Ա.Գէորգեան, Վ.Զաղլասեան, ինչպէս նաեւ երկու խորհրդականներ:

Կազմակերպուած հասութեաբեր ձեռնարկներու եկամուտներուն եւ ձեռքբերուած դրամական միջոցներուն կէսը յատկացուած է Եգիպտոս ապրող զէյթունցի եւ սասունցի աղջիկներու կրթութեան:

26. Հայրենասէր Հայուհեաց Ընկերութիւն - Գահիրէ , 1906

Նորակազմ Հայուհեաց Ընկերութիւնը հիմնուած է Կիր.18 Նոյեմբեր 1906-ին գումարուած ընդհանուր ժողովին, նպատակ ունենալով *«նիրթապէս եւ բարոյապէս օգնել Հայ յեղափոխական շարժումին՝ առանց կուսակցական խտրութեան»:*

Հրատարակուած է Ընկերութեան հիմնական Կանոնագիրը 1907-ին (Տպ.Ս.Դարբինեան,Գահիրէ), որուն տրամադրութեան ընդառաջ՝ կանանց ձեռարուեստի ցուցադրութեան եւ վաճառքի ձեռնարկներու եկամուտները տրամադրուած են երկրի ինքնապաշտպանական կարիքներուն:

(ԼԶ.1959-60 էջ 24 – Ա. 1906, թիւ 60 - [12].թիւ 78)

27. «Արամազդ» Դպրոցասիրաց Ընկերութիւն - Գահիրէ , 1906

Ուսումնասէր Ընկերութիւնը հիմնուած է Հոկտեմբեր 1906-ին, նպատակ ունենալով *«նպաստել հայրենիքի ժողովուրդին մտաւոր և բարոյական զարգացումին»:*

Վաւերացուած կանոնագրին ոգիով տրամադրուած վարչական անդամները կազմակերպած են բարոյական եւ դաստիարակչական բնոյթի ընկերային հաւաքոյթներ:

(ԼԶ.1959-60, էջ 24 - Ա.1906, թիւ 60)

28. Միացեալ Ուսումնասիրաց Ընկերութիւն - Գահիրէ , 1907

Միացեալ Ընկերութիւնը կազմուած է 1907-ին, միացումովը նորակազմ «Վասպուրականի Ընթերցասիրաց Ընկերութեան» եւ «Հայ Պատանեաց Մեարդական Ուսումնասիրաց Ընկերութեան»: (Ա.1906, թիւ 46 եւ 1907, թիւ 28 - [31].էջ 189)

29. Հայ Կաթողիկէ Երիտասարդաց Միութիւն - Գահիրէ , 1908-1909

Կաթողիկէ Երիտասարդաց Միութեան (Հ.Կ.Ե.Մ.) հիմնադրութեան թուականը ենթադրուած է ըլլալ 1908-ի վերջերը կամ 1909-ի սկիզբը: (ԼԶ.1959-60, էջ 25)

30. Հայուհեաց Միութիւն - Գահիրէ , 1908-1912

Միութիւնը հիմնուած է 1908-ին, նպատակ ունենալով «Հայաստանի հայ իգական սեռի դաստիարակութեան նուիրական գործին աջակցիլ»:

Հայուհիներու այս միաւորը ճանչցուած է նաեւ «Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւն» անունով եւ հրատարակած 1909-1910 տարեշրջանի իր գործունէութեան «Տեղեկագիր»ը: ([14].էջ 354)

Միութիւնը ունեցած է մշակութային բնոյթի ձեռնարկներով գործունէութիւն մը, որոնց հասոյթը տրամադրած է Պոլսոյ «Ազգային Հայուհեաց» եւ «Ազգային Դպրոցասիրաց» Ընկերութիւններուն:

1911-ին, դիւանին մաս կազմած են Ատել Թերճեման Ա.Ղ.Բոլատ:

Հայուհեաց Միութիւնը կազմալուծուած է 1912-ին:

(ԼԶ.1959-60, էջ 25 - Ը.1911, թիւ 163 եւ 1912, թիւ 219)

31. Հայ Արուեստասիրաց «Նեղոս» Միութիւն - Գահիրէ , 1908

Արուեստասիրաց Միութիւնը յիշուած է Փետրուար 1909-ին իր ունեցած յատուկ սրահով, որ գտնուած է Ապտինի հրապարակին մօտ, թիւ 18, Հասան Էլ Աքպար փողոց, Իրաւաբանական վարժարանին դիմաց:

(ԼԶ.1959-60, էջ 25 - Ը.1909, թիւ 56)

32. Գալուստեան Սանուց Ընթերցասիրաց Միութիւն - Գահիրէ , 1909 - 1911

Սանուց Ընթերցասրահը կազմուած է 1909-ին, նախաձեռնութեամբ վարժարանի տնօրէն Անդրանիկ Կարապետեանի, նպատակ ունենալով «օգտակար գիրքեր տրամադրելով, ընթերցասիրութիւնը տարածել անդամակցող աշակերտութեան մօտ»:

Ընթերցասիրութիւնը քաջալերող Միութիւնը գործած է 18 ամիս եւ լուծուած 1911-ին: ([24].բ.հտք, էջ 564)

33. Հայկական Մամլոյ Ընկերութիւն - Գահիրէ , 1911-1912

Մամուլի դերին եւ առաքելութեան նուիրուած Ընկերութիւնը հիմնուած է 1 Օգոստոս 1911-ին, նպատակ ունենալով «Մամուլի եւ հրատարակութեանց միջոցաւ հայութեան եռանդը վառ պահել դէպի ընթերցասիրութիւնը»:

1911 Հոկտեմբեր 14-էն Ընկերութիւնը իբրեւ հրատարակիչը ներկայացած է «Արշալոյս» եռօրեայ լրագրին:

Ունեցած է վաւերացուած 42 յօդուածներով սկզբունքային ուղեցոյց մը «Կանոնագիր Հայկական Մամլոյ Ընկերութեան» անունով:

Դժուարութիւններու ընդառաջ՝ Ընկերութիւնը կազմալուծուած է 1912-ին:

(ԼԶ.1959-60 էջ 25 - Ը.1911 թիւ 181,186-187 եւ 192-196 – [12].թիւ 118)

34. Հայ Երիտասարդաց Քրիստոնեական Ընկերություն (Հ.Ե.Ք.Ը.) -

Գահիրե , 1912 - 1922 , 1925 - 1928 , 1934-1940

Քրիստոնեական Ընկերությունը հիմնուած է 1912-ին, նախաձեռնութեամբ Պատուելի Հայկազուն Խանդամուրեանի:

Ընկերությունը ունեցած է ընկերամշակութային գործունէութիւն մինչեւ 1922 եւ եռամեայ կազմալոյծ վիճակէ մը ետք, վերակազմուած է 1925-ին, Անգլիական Միսիօնարական Գօլէճին շէնքին մէջ (Սէյֆ-Էլ-Տին Մեհրանի Փողոց, Պուսթան Էլ Քաֆուրի - Ֆակկալա):

Ընկերակցութեան գործունէութիւնը ընդգրկած է Ժողովրդային Բանախօսութիւններ (Դժ. երեկոները), Ընթացիկ Լեզուներու դասընթացքներ(Անգլ., Գաղիերէն, Արաբերէն, Բժ., Գժ., Եժ. եւ Ուրբ. օրերու երեկոները), Ընտանեկան-Ընկերային երեկոյթ-ժամանցներու կազմակերպում (Շբ. երեկոները) եւ Մարմնակրթական ֆութպոլի, պասքէթպոլի եւ ուրիշ խաղերու շաբաթական փորձերու եւ մրցումներու հաւաքներ: (ԼԴ.1927, թիւ 1)

20 Սեպտեմբեր 1927-ին Ընկերությունը հաստատած է գիշերային բարձրագոյն վարժարան մը ղեկավարութեամբ Վահրամ Արծրունիի:

Հետագային, երկրորդ անգամ վերակազմուած է 1934-ին Վերապատուելի Համբարձում Յ.Համբարձումեանի նախաձեռնութեամբ եւ գործած՝ մինչեւ 1940, «Հայ Աւետարանական Երկսեռ Երիտասարդաց Քրիստոնեական Ընկերակցութիւն» անունով:

Վարչութեան ղիւանին ատենապետը եղած է Լեւոն Կիւզելիմեան:

([24].գ.հտր էջ 385/386 - ԺԹ.1927, թիւ 38)

Հ.Ե.Ք.Ը.Ընկերակցութիւնը Ապրիլ 1927-ին սկսած է հրատարակել «Ովասիս» անունով մեքենագիր ամսաթերթ մը (4 թիւ միայն):

Ընկերակցութիւնը լոյս ընծայած է Մատենաշարի մը հինգ գրքոյկները, Տոքթ.Մ.Շամլեանի «Մանուկներու Առողջապահութիւնը» (Տպ.Զ.Պերպերեան, անթուակիր), Վեր.Հ.Խանդամուրի «Աստուած և Մեծ Պատերազմը» (Տպ.Հայկական, 1918), եւ «Հայ Երիտասարդին Համար» պրակը: ([10]. թիւ 258,259 եւ 1897)

35. Կեդրոնականցիներու Նախկին Սանուց Գահիրէի Ընկերակցութիւն -

Գահիրե , 1912

Նախկին Սանուց Ընկերակցութիւնը հիմնուած է 1912-ին, նպատակ ունենալով «*եգիպտահայ զաղութին մէջ ինքնագիտակցութեան զանգը հնչեցնել՝ հայրենիքի հետզհետէ վատթարացող կացութեան հանդէպ եւ հաւաքաբար աշխատիլ, աւելի ներդաշնակութիւն ստեղծելու համար տեղական հանրային կեանքին մէջ*»:

Սանուց Գահիրէի Ընկերակցութիւնը կազմուած է ընդառաջելով Պոլսոյ Ազգային Կեդրոնական Վարժարանի 25-ամեայ Յոբելեանի պատրաստութեան առթիւ կազմուած Յոբելեանական Յանձնախումբի հրաւերին:

Ընկերակցութեան հիմնադիր ժողովին վարչութեան ղիւանին անդամ ընտրուած են Արտաշէս Նետուրեան (ատենապետ), Արտաւազդ Հանրմեան (ատենադպիր) եւ Միհրան Զրաքեան(գանձապետ): Այս առթիւ, կազմուած են չորս յանձնախումբեր, «Կեդրոնական»ի վերաշինութեան հանգանակութիւնը շրջաններու մէջ կազմակերպելու համար: (ԻԵ.թիւ 22,23 և 24 - ԺԲ.1914,էջ 126-127)

Կեդրոնականցիներու Ընկերակցութեան նախաձեռնութեամբ, Կիր. 22 Սեպտեմբեր 1912-ին, Ս.Աստուածածին Եկեղեցոյ բակին մէջ բողոքի հաւաք մը կազմակերպուած է Հայաստանի նորագոյն սարսափներուն եւ հայկական ջարդերու հանդէպ եգիպտահայ համայնքի բողոքի ձայնը բարձրացնելու համար: (ԻԳ1.1912, թիւ 40)

36. Գալուստեան Ընթացաւարտից Միութիւն - Գահիրէ , 1912-1913

Գալուստեան Շրջանաւարտից Միութիւն - Գահիրէ , 1916-1919 , 1929-1951

Ընթացաւարտից Միութիւնը հիմնուած է 15 Յունուար 1912-ին, առաջարկովը վարժարանին տնօրէն Մինաս Ծալեանի, որուն 24 Դեկտեմբեր 1911 թուակիր հրաւերովը կայացած է ընթացաւարտներու առաջին հանդիպումը եւ ընդունուած՝ Միութեան նպատակը՝ *«կապել աշակերտները վարժարանին, անոր նիւթական եւ բարոյական զարգացման օգնել, կազմել եւ ճոխացնել անոր գրադարանը ընտիր գիրքերով եւ մանկավարժական թերթերով»:*

Շրջանաւարտներու կողմէ նշանակուած Յանձնախումբը մշակած է միութեան 14 յօդուածներէ բաղկացած Կանոնագիրը, որ վաւերացուած է տնօրէն Մինաս Ծալեանի նախագահութեամբ 11 Փետրուար եւ 5 Մարտ 1912-ին գումարուած Ընդհանուր ժողովներուն ընթացքին: Գահիրէի Ազգային Իշխանութիւնը սոյն ծրագիրը վաւերացուցած է Հոկտեմբեր 1912-ին: ([6]. էջ 38)

Յիշարժան է, թէ Գալուստեան Վարժարանի շրջանաւարտներու առաջին հունձքը եղած է 1902-ին, եւ մինչեւ 1912 ունեցած է 50 շրջանաւարտներ: (Թ.1913)

Միութեան բացման հանդէսը սարքուած է վարժարանին մանկապարտէզի սրահին մէջ Շր. 23 Մարտ 1912-ին:

Վարժարանին սրահին մէջ կազմակերպուած են դասախօսական եւ վիճաբանական երեկոներու շարքը: Իսկ 12 Դեկտեմբեր 1912-ին, Միութեան թատերասէր անդամները «Բրէնթանիա» թատրոնին մէջ իրենց անդրանիկ ելոյթը ունեցած են Շիրվանզատի «Պատուի համար» ներկայացումով: (Թ.1913, էջ 11 - [XXIV])

Միութեան 1912-1913 տարեշրջանի վարչութեան ատենապետը եղած է Գրիգոր Դարբինեան եւ իր թատերական շնորհքներով գործած է Յանձնախումբին աշխոյժ աշխատանքին կողքին: ([8]. էջ 194)

1913-ին հրատարակուած է «Գալուստեան Միութիւն» կիսամեային առաջին եւ միակ թիւը: Տնօրէն Ծալեանի հրաժարումով ընդհատուած է տարեգիրքը եւ միութեան գործունէութիւնը:

Ա.Աշխարհամարտի եւ Եղեռնի տարիներուն դադրած են Շրջանաւարտիցի միութենական գործունէութիւնը:

«Գալուստեան Շրջանաւարտից Միութիւն» անունով միութիւնը վերակազմուած է 14 Յունիս 1916-ին, վարժարանին տնօրէն Փրոֆ. Յովհաննէս Թ.Գալեանի օրով եւ բեղուն շրջանէ մը ետք սակայն, անդամալուծուած՝ 1919-ի գարնան:

«Շրջանաւարտից Միութիւն»ը *երրորդ անգամ ըլլալով վերակազմուած է 12 Մայիս 1929-ին, Լեւոն Թաշճեանի տնօրէնութեան շրջանին, նախաձեռնութեամբ հարիւր երկսեռ շրջանաւարտներու:*

Նոր շրջանի նախաձեռնողներէն հանդիսացած են Պետրոս Տեփոյեան, Մէրք Շաւարշ Սեւօնքեան եւ Գրիգոր Դարբինեան: Միութեան նախագահի պաշտօնը ստանձնած է օրուան վարժարանի տնօրէնը:

Միութեան Ծրագիր-Կանոնագիրը վերամշակուած է եւ վաւերացուած՝ 5 Յունիս 1929-ի ԼԵ. Նիստին (Տպ.Մասիս, Գահիրէ, 8 էջ, 1930): ([12].թիւ 485)

Վերակազմակերպուած ուժերով գործը ձեռնարկուած է նպատակ ունենալով *«նուիրուիլ վարժարանին բարոյական, կրթական եւ նիւթական յառաջդիմութեան, ինչպէս նաեւ անդամներուն մտաւորական եւ ֆիզիքական զարգացման, մեր ազգային տոհմիկ յատկանիշներուն համապատասխան»* :

1929-էն 1949 տարիներուն, Միութիւնը կազմակերպած է հերթական ամսական բանախօսութիւններ, թատերական ներկայացումներ, վիճաբանական հաւաքոյթներ եւ երաժշտական ձեռնարկներ:

Կազմակերպուած է նաեւ մարզական շարժումը աղջկանց «Գալուստ» եւ տղոց «Կարապետ» պասքէթպոլի, փինկփոնկի եւ աթլէթիզմի խումբերով, որոնք իրենց մասնակցութիւնը բերած են եգիպտահայ մարզական միութիւններու կազմակերպած Ախոյենական 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 6-րդ Աթլէթիք մրցումներուն եւ Տեղական ֆետերասիոններու մրցաշարքերուն:

Աշխոյժ գործունէութեամբ աշխատանք տարուած է 1937-ին ընտրուած վարչութեան կողմէ, որուն դիւանին մաս կազմած են Յովսէփ Յովսէփեան, Տիգրան Պապիկեան, Համբարձում Գարայեան, Հայկ Ժամկոչեան եւ Օննիկ Ալեքսանեան:

Նախաձեռնուած է գրադարանին վերակազմութեան, մամուլի էջերով գրահաւաքի «կոչ»ով մը, պատասխանատուութեամբ՝ Օննիկ Ալեքսանեանի:

1937-1938 տարեշրջանին լոյս տեսած է *«Արմաւենի»* տարեգիրքը:

Նոյեմբեր 1945-էն Օգոստոս 1946, Շրջանաւարտից Միութեան կողմէ հրատարակուած են *«Տեղեկատու Պրակ»*ի 10 թիւերը (8 պրակ), իսկ 1941-1949 տարիներուն՝ լոյս տեսած են անոր վարչութեան «Պատի Օրացոյց»ները:

«Շրջանաւարտից»ի գործունէութիւնը վարժարանէն ներս դադրած է Յունիս 1951-ին, վարժարանին Հոգաբարձութեան որոշումով: ([24].բ.հտր. էջ 609-633)

37. Սահմանադիր Ռամկ.Կուսակցութեան Ակումբ - Գահիրէ , 1912

Ս.Ռ.Կուսակցութեան Ակումբը հիմնուած է 1913-ին, որուն վարչական կազմին անդամակցած են Յ.Հալաճեան (նախագահ) եւ Ա.Գաբամաճեան (քարտուղար): (Լ.1913, Ապրիլ)

Փետրուար 1912-ին գումարուած նիստին մէջ կազմուած է վարչութիւնը հետեւեալներէն, Տիարք՝ Ա.Մավեան, Մ.Աժտէրեան, Մ.Աւագեան, Յ.Հալաճեան, Ա.Գաբամաճեան, Յ.Զաղացպանեան եւ Յ.Պալունի: (ԻԵ. 1912, թիւ 10)

Ակումբին գրասենեակը հաստատուած է թիւ 22, Մանախ փողոց, Թապէթի կալուածին մէջ: (ԻԵ. 1912, թիւ 8, էջ 128)

38. «Հայուհեաց» Ընկերակցութիւն - Գահիրէ , 1913

Հայուհիներու այս ընկերակցութիւնը հիմնուած է Մարտ 1913-ին, Գահիրէ հաստատուած Ատաբազարի «Հայուհեաց Բարձրագոյն Վարժարան»ի նախկին սանուհիներու նախաձեռնութեամբ, իբրեւ *«Հայուհեաց Բարձր. Վարժարան»ի նախկին սանուհեաց Գահիրէի Ընկերակցութիւն»* (Հ.Բ. Վ.Նախ.Սան.Ընկց.), թելադրութեամբ Փրոֆ.Յ.Թ. Գայեաեանի:

Ընկերակցութեան նպատակը եղած է *«Գահիրէի հայ իգական սեռի իմացական եւ բարոյական բարձրացման եւ ընդհանրապէս ազգային կեանքի*

բարգաւաճման օժանդակել, սարքելով հրապարակային դասախօսութիւններ, չափահասներու համար ձրի դասընթացք, կազմակերպել երեկոյթներ, նուագահանդէսներ օրուան պահանջներուն համեմատ»: (Լ.1913, թիւ 56)

39. «Ազգային Սրահ» («Հայ Ազգային Սրահ») - Գահիրէ , 1913

Ազգային Սրահին նախաձեռնող հիմնադիրը եղած է Պետրոս Յովսէփեան:

Նորահաստատ ակումբին հիմնադիր ժողովը գումարուած է Գշ.1 Ապրիլ 1913-ին, մասնակցութեամբ Տիարք Ե.Աղաթօն Պէյի, Մ.Անդրանիկեանի, Կ.Շիրիտճեան Պէյի, Տ.Փիլիպպոսեանի,, Մ.Ղազարոսեանի, Կ.Պալեանի, Տոք.Պ.Սերոբեանի, Ա.Նետուրեանի, Վ.Մալեգեանի, Ա.Մեօթեմէտեանի եւ նախաձեռնող Պ.Յովսէփեանի:

«Ազգային Սրահ»ին պաշտօնական բացումը կատարուած է Շր. 19 Ապրիլ 1913-ին, յարակից ընթերցատունով եւ ժողովասրահով:

Հրատարակուած է «Կանոնագիր Հայ Ազգային Սրահ Հաստատութեան ի Գահիրէ - Ներքին Կանոնագրութիւն Հայ Ազգային Սրահի», (Տպ.Զ.Ն.Պէրպէրեան, Գահիրէ, 22 էջ, 1913): ([12].թիւ 141)

Վարչական կազմին նախագահը եղած է հիմնադիր՝ Պետրոս Յովսէփեան, իսկ անդամները՝ Ս.Տամատեան(ատենապետ), Ե.Բաշալեան (ատենադպիր) Յ.Սեթեան,Ս.Պարթեւեան, Մ.Զրաքեան,Գ.Փափագեան, Ա.Նետուրեան,Պ.Երամեան, Ա.Նուրեան եւ Գ.Ճեզաիրլեան:

Գործող վարչութեան գործակից ընտրուած են Տիկնանց եւ Բանախօսութեանց Յանձնախումբերը, վերջնոյն անդամ ունենալով՝ Տիարք Ս.Պարթեւեան, Յ.Սեթեան, Վեր.Հ.Խանդամուր, Մ.Ծալեան, Ա.Հանըմեան, Ա.Նետուրեան և Պ.Երամեան:

Հաստատուած են դաշնակի եւ ձեւագիտութեան դասընթացքներ:

Կիր. 2 Մարտ 1918-ին գումարուած «**Հայկական Սրահ**»ի ընդհանուր ժողովը ընտրած է նոր վարչութիւն մը, յանձին՝ Միհրան Ղազարոսեանի (ատենապետ), Արշակ Ֆէրմանեանի(փոխ-ատենապետ), Երուանդ Օգոստինոսեան(ատենադպիր), Պետրոս Սէլեանի(գանձապետ), Գեորգ Ակոբովիչի(մատակարար), Գեորգ Նահապետեանի(գրադարանապետ), նաեւ Գրիգոր Միհանօֆի, Զաքի Իփլիքճեանի, Տիրան Հաճընլեանի իբրեւ անդամներ: Պատուոյ անդամ ընտրուած է հիմնադիր Պետրոս Յովսէփեան: (Լ.1913,թիւ 66-70,75- 1914,թիւ 218 և 1918,թիւ 149)

40. Մանիսալեան Վարժարանի Նախկին Սանուց

«Յառաջդիմասէր» Միութիւն - Գահիրէ , 1913-1947

Վարժարանին նախկին Սանուց Միութիւնը հիմնուած է 1913-ին, վարժարանէն շրջանաւարտ օրիորդներու նախաձեռնութեամբ, որդեգրելով Կեօթէի «Լոյս, միշտ դէպ ի լոյս» նշանաբանը: ([XXVI].էջ 51 – [21]. էջ 32)

Սանուհիներու միութիւնը անուանակոչուած է «Յառաջդիմասէր», և նախաձեռնած է վարժարանին գրադարանին կազմութեան, որուն գրական հաւաքածոն ժամանակի ընթացքին ճոխացած է ուսանողուհիներուն եւ ծնողք-ուսուսուցիչ գործակցութեամբ, նաեւ բարեկամ ազգայիններու օժանդակութեամբ:

15 Մարտ 1931-ին, Սանուց «Յառաջդիմասէր» Միութիւնը կազմակերպած է «Մանիսալեան Աղջկանց Վարժարան»ի հիմնադրութեան 25-ամեակի հանդէսը,

Գահիրեի Էգպեթիի շքեղ թատրոնին մեջ: ([21])

Մանիսալեանի նախկին Սանուց Միութիւնը կազմալուծուած է 1947-ին, հիմնադիր՝ Մանիսալեան քոյրերու մահէն եւ կրթարանի փակումէն ետք:

41. Եգիպտահայ Նպաստամատոյց Մարմին - Գահիրէ , 1913-1920

Նպաստամատոյց Մարմինը հիմնուած է 1913-ին, Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ զոյգ մասնաձիւղերով, նպատակ ունենալով *«բարեգործական ձեռնարկներով օգտակար հանդիսանալ գաղթական կարօտեալներուն»:*

Մարմինն վարչութեան գանձապետը 1915-ին եղած է Արմենակ Պէլ Կամսարական: ([13]. էջ 23)

Խնամատարական Մարմինը հրապարակած է 1915-1916 երկամեայ գործունէութեան տեղեկագիրը, հասցէ ունենալով թիւ 3, Մուիյար փողոց, Գահիրէ: (Comite de Secours National des Armeniens d` Egypte – 3, Rue Mouillard, Le Caire)

(Լ.1917, թիւ 43,67 եւ108)

Նպաստամատոյց Մարմինն նախաձեռնութեամբ կազմակերպուած է «Հայրենիքի Տուրք» անունով նուիրահաւաք մը, գործակցութիւն հաստատելով 1916-ի Նոյեմբերին ծնունդ առած «Հայ Ազգային Միութեան» հետ:

Նպաստամատոյց գործունէութիւնը ներառած է եւ կազմակերպած՝ «Ոսկէ Ֆոնտ»ի հանգանակութիւնը մինչեւ 1920, հանգանակելով շուրջ հինգ միլիոն Եգիպտ.Դահեկան, ուղղարկելով Կովկասի, Էջմիածնի, Փոքր Սայիտի գաղթականներուն եւ Ատանայի աղէտեալներուն: ([16].էջ 691)

42. Հայախօս Կաթողիկ Երիտասարդաց Միութիւն - Գահիրէ , 1914

Կաթողիկէ Երիտասարդաց միութեան կազմութեան նախաձեռնողը եղած է Ս.Օտապաշեան, անոր մասին տպագիր *«ազդ»*ով մը 11 Մայիս 1914-ին ծանուցում մը կատարելով:

Միութեան կազմութեան նպատակ ներկայացուած է *«հասարակութեան անհրապոյր ու լճացած կեանքին մէջ, յառաջդիմական շարժում առաջ բերել, հայր հայ պահելու համար»:* (ԼԶ.1959-60, էջ 26)

43. «Արեւ» հրատարակչական Ընկերութիւն - Գահիրէ , 1915-1916

Հրատարակչական Ընկերութեան հիմնադրութիւնը առաջադրուած է 1915-ին, «Լեւոն Մկրտիչեան եւ Ընկ.»ի նախաձեռնութեամբ:

Բաժնետիրական ընկերութեան պատասխանատու-վարիչը եղած է Լեւոն Մկրտիչեան:

8 Յունիս 1916-ին գումարուած է բաժնետէրերու Ընդհանուր Ժողովը, երկամեայ գործունէութեան համարատուութիւնը կատարելու եւ Հսկիչ Յանձնաժողովը ընտրելու համար: (Զ.1916, թիւ 4/160)

Ընկերութիւնը չէ յարատեւած, գոյառած տարակարծութեան պատճառով:

Ունեցած է «Կանոնագիր Արեւ Հրատարակչական Ընկերութիւն» 12 էջերէ կազմուած պրակը, Տպ.Հ.Բ.Ը.Միութիւն, Գահիրէ, 1915: ([12]. թիւ 187)

44. «Կովկաս» Գեղարուեստասիրաց Միութիւն - Գահիրէ , 1915

Գեղարուեստասէր Միութիւնը հիմնուած է Յունիս 1915-ին, նպատակ ունենալով *«օգնել հայ կամաւորական շարքերուն անխտիր՝ ամէն կարելի*

միջոցներով» եւ «կոչ»ով մը հրաւեր կարդացած է եգիպտահայ երիտասարդութեան՝ *«բոլորուելով միութեան շուրջ, բաժնել ահաւոր ցաւը եւ մղձաւանջը՝ որ կը գալարէ մեր սիրական հայրենիքը»*:

Առաջին առթիւ, միութեան շարքերուն արձանագրուած են 40-50 երկսեռ երիտասարդներ: Միութիւնը ունեցած է նաեւ իր քայլերգը:

Միութեան գործունէութեան մաս կազմած է երգչախումբի, թատերախումբի եւ նուագախումբի գեղարուեստական ձեռնարկներու կազմակերպումը:

Թատերական առաջին ձեռնարկը կազմակերպուած է 4 Սեպտ. 1915-ին, Բրէնթանիա թատրոնին մէջ ներակայացնելով Աւ.Ահարոնեանի «Արցունքի հովիտը»:
(Լ.1915, թիւ 41,56 եւ 59)

45. Գահիրէի Հայ Կարմիր Խաչ - Գահիրէ , 1915-1916

Հայ Խաչուհիներու գործակցական այս նախաձեռնութիւնը հիմնուած է 30 Յուլիս 1915-ին, Գահիրէի Հայ «Ազգային Սրահ»ին մէջ, տեղւոյն գաղափարական, բարեսիրական, ուսումնասիրաց միութիւններու ներկայացուցչական Ընդհանուր Ժողովին կողմէ:

Սոյն ժողովին, իրենց լիազօր ներկայացուցիչներով մասնակցած են Աղեքսանդրիոյ Հայուհիներու Կարմիր Խաչի Մարմինը, ինչպէս նաեւ Սուտանի եւ Շարքիյէի (Զակազիկ) Հայուհիներու Կարմիր Խաչերու միաւորները:

Ժողովը վաւերացուցած է միատեղ գործունէութեան Ծրագիր-Կանոնագիրն ու ընտրած Վարիչ Մարմինը, նախագահութեամբ Առաջնորդ Գերշ.Տ.Թորգոմ Ս.Եպս.Գուշակեանի եւ Փոխ-նախագահ Վերապատուելի Հ.Խանդամուրի:

Վարիչ Մարմնին անդամ ընտրուած են Արշակ Ֆերմանեան (ատենապետ), Փրօֆ.Յ.Թ.Գայանեան (ատենադպիր), Թորգոմ Ֆիշէնկճեան (գանձապետ), Տիարք Արտաշէս Նետուրեան, Ղազարոս Բոլատ, Սեդրակ Օտապաշեան, Կարապետ Գանարեան, Երուանդ Բաշալեան, Միհրան Աժտէրեան եւ Գրիգոր Միհանօֆ (խորհրդական անդամներ):

Մարմնին կողքին, ընտրուած են Հայուհեաց Օժանդակ Տիկնանց Յանձնախումբը, նախագահութեամբ Տիկին Նէկիպ փաշա Պուրթոս Ղալիի, նաեւ Բժշկական Յանձնախումբը՝ անդամակցութեամբ Տոքթ.ներ Ա.Տէր Մարգարեանի, Մ.Շամլեանի, Ս.Ժամկոչեանի, Ա.Շիրինեանի եւ Պ.Սերովբեանի, գործակցութիւնը ապահովելով Հանգանակիչ Յանձնախումբի մը:

Հ.Կ.Խաչի Գրասենեակը հաստատուած է թիւ 19, Էլ Մանախ փողոց, առաջին յարկ, Հեռախօսի թիւ ունենալով 38-01 համարը, B.P. No.709:

4 Օգոստոս 1915-ին, Պէյն Էլ Սուրէյնի Ս.Աստուածածին եկեղեցիին մէջ, հանդիսապետութեամբ Առաջնորդ Գուշակեան Ս.Եպս.ին, յատուկ արարողութեամբ օրհնութիւնը կատարուած է Հայ Կարմիր Խաչի դրօշին:

Գահիրէի Հայ Կարմիր Խաչը, Աղեքսանդրիոյ եւ Շարքիյէի Հայուհեաց Կարմիր Խաչերուն միանալով 16 Փետրուար 1916-ին կազմած են Եգիպտահայ Կարմիր Խաչի Կեդրոնական Պիւրօն, նստավայր ունենալով Գահիրէի Էլ Մանախ փողոցի գրասենեակը:
(Լ.1915, թիւ 52 – [18] – [12]. թիւ 224)

Հրատարակուած է վարչութեան «Վեցամսեայ Տեղեկագիր»ը (1915-1916), եւ 1915-1917 շրջանի Կեդրոնական Վարչութեան «Ընդհանուր Տեղեկագիր»ը 1917-ին:
([12]. թիւ 224 եւ 230)

46. Հայ Պատանեկան Յառաջդիմասեր Միութիւն - Գահիրէ , 1915

Հրապարակուած «ԿՈՉ»-ով մը, «Պատանեկան Յառաջդիմասեր Միութիւն»ը կազմուած է Հոկտեմբեր 1915-ին, Գահիրէաբնակ խումբ մը հայ պատանիներու կողմէ, նպատակ ունենալով՝ *«հոգ տանիլ իր անդամներուն մտաւոր ու ֆիզիքական զարգացմանը, բարոյապէս ազնուացմանը, ինչպէս նաեւ արծարծելու հայ պատանիին մէջ ընթերցասիրութեան ոգին ու վառ պահելու ազգասիրական զգացումները»*։

«Կոչ»ը եզրափակուած է *«ի մօտոյ հրատարակութեան պիտի դրուի միութեան կանոնագիրն ու ծրագիրը։ Գրաւոր դիմել Տպարան Զ.Պէրպէրեան, յանձնելի Գ.Ճիզմէճեանի»* գրութեամբ։ (Լ.1915,թիւ 91)

47. Եգիպտահայ Գրական Ու Գեղարուեստական Միութիւն - Գահիրէ , 1916

Մշակութասեր այս միութիւնը կազմուած է Յունիս 1916-ին, որուն վարչութեան դիւանին անդամակցած են Գերշ. Թորգոմ Եպս. Գուշակեան (նախագահ), Տիարք. Յ.Սեթեան (ատենապետ), Փրոֆ.Յ.Գայաեան (Ա.ատենադպիր), Միհրան Յ.Աժտէրեան (Բ.ատենադպիր), Կարօ Պալեան (գանձապետ), Ս.Սապահ-Գիւլեան, Սուրէն Պարթեւեան, Երուանդ Օգոստինոսեան եւ Արտաւազդ Հանրմեան (խորհրդականներ)։

Միութեան նպատակը եղած է *«հայ գրականութեան եւ գեղարուեստներու վերածնունդին սատարել թէ Եգիպտոսի եւ թէ հայրենիքին մէջ»*։ (Լ.1916,թիւ 39)

Նպատակին իրագործումին համար, ծրագրուած է միջոցներ նախաձեռնել. *1. Հայ միտքը ներկայացնելու օտար ազգերուն եւ անոնց գործերը ծանօթացնելու հայ ընթերցողին. 2. Նիւթապէս եւ բարոյապէս քաջալերել գրական ու գեղարուեստական ազգային լաւագոյն արտադրութիւնները*։

Վաւերացուած կանոնագրին համաձայն, միութեան անդամ ընդունուած են գրական եւ գեղարուեստական արժանիք ունեցող երկու սեռէ անդամներ։

48. Գահիրէի Հայ Երիտասարդաց Միութիւն - Գահիրէ , 1916

Երիտասարդաց Միութիւնը հիմնուած է 28 Յունիս 1916-ին, նպատակ ունենալով *«ստեղծել բոլոր այն միջոցները որոնք կը բարձրացնեն Հայ Երիտասարդութեան բարոյական, մտաւորական եւ ֆիզիքական կեանքը»*։

Միութեան վարչական կառոյցը բաղկացած է Դիւան, Գործադիր Վարչութիւն եւ Խումբերու Կազմական Մարմիններէն, դիւանին ատենապետ ունենալով Վ.Գէորգեանը եւ ատենադպիր՝ Յ.Հ.Թըզրբեանը։

Հրատարակուած է Միութեան Կանոնագիրը, Տպ.Սոկրատ Սարրաֆեան եւ Ընկ., Գահիրէ, 8 էջ, 1916 :

Միութեան անդամակցութեան հրաւիրուած են բոլոր 18 տարեկանէն վեր հայ երիտասարդները առանց սեռի խտրութեան։

Կանոնագրին Յօդ.1-ով շեշտուած է *«միութիւնս՝ համակիր կամաւորական շարժումին եւ կարեկիր հայ տառապանքին՝ առանց կուսակցական եւ հոսանքի խտրութեան՝ պիտի ջանայ միջոցներ ստեղծել, սատարելու հայ տառապանքին ու հայ կամաւորական շարժումին»*։ ([XI])

Նպատակի իրագործումին համար, կազմուած են Միութեան Գրական «Զարթօնք» խումբը 1917-ին, Գեղարուեստական «Կովկաս» թատերաերաժշտական

եւ Ֆիզիքական վարժանքներու խումբերը:

Երիտասարդական այս միաւորը գործակցութիւնը ունեցած է նոյն տարին հիմնուած «Հայ Օրիորդաց Միութիւն»ին:

Սկզբնական շրջանին, Միութեան հասցէ նշանակուած է Գալուստեան Վարժարանը: Իսկ 1917-ին, Միութիւնը հաստատուած է իր նոր վարձած ընթերցասրահին մէջ, թիւ 35, Մատապէկ փողոց հասցէին, որուն բացումը կատարուած է Կիր. 4 Մարտ 1917-ին:

Միութեան անդամներուն նախաձեռնութեամբ հրատարակուած է «Նշոյլներ» գրական հաւաքածոյին միակ թիւը, (Հոկտեմբեր 1916, Տպ.-Ոստան):

(Լ.1916, թիւ 45,57,58,90 եւ 1917, թիւ 23)

49. Հայ Երիտասարդ Տիկնանց Եւ Օրիորդաց Միութիւն - Գահիրէ , 1916

Հայ Կանանց Միութիւնը հիմնուած է Հոկտեմբեր 1916-ին, ընդառաջելով «Գահիրէի Հայ Տիկնանց եւ Օրիորդաց» կողմէ հրապարակուած «Կոչ»ին, նախաձեռնութեամբ Տիկին Էօժէնի Եալտրզճեանի:

Յիշեալ «Կոչ»ին մէջ, հիմնադիր տիկնոջ հետ կապի հասցէ նշուած է «թիւ 9, Շոքրլանի փողոց, Շուպրա»:

Միութեան առաջին վարչութեան անդամակցած են Էօժէնի Եալտրզճեան (Ա.ատենապետ), Տիկին Բէշտիմալճեան(Բ.ատենապետ), Օր.Ա.Գէորգեան(ատենադպիր), Օր.Ա.Մըսրըլեան (փոխատենադպիր), Տիկին Ասլանեան (գանձապետ), Տիկին Թ.Պարոնիկ և Օր.Մ.Թաշճեան (անդամներ):

Միութիւնը գործած է «Գահիրէի Հայ Երիտասարդաց Միութիւն»ի կողքին: (Լ.1916, թիւ 86)

50. Եգիպտահայ Կարմիր Խաչի Կեդրոնական Պիւրօ - Գահիրէ , 1916

Գրասենեակը յառաջացած է 30 Յունուար 1916-ին գումարուած «Հայ Կարմիր Խաչ»երու եգիպտահայ միաւորներու «Միութեան Խորհրդաժողով»ին որոշումով: Միաւորման պատգամաւորական ժողովին ներկայ գտնուած են «Աղեքսանդրիոյ Հայուհեաց Կարմիր Խաչ»ի պատուիրակներ Տիարք Հ.Երամեան եւ Հ.Նասիպեան, «Գահիրէի հայ Կարմիր Խաչ»ի պատուիրակներ Տիարք Հ.Ֆերմանեան, Թ.Ֆիշէնկճեան և Տոքթ.Տէր Մարգարեան, «Շարքիյէի Հայուհեաց Կարմիր Խաչ»ի պատուիրակ Տիար Մ.Ճիւրճեան:

Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի 2-րդ նիստը գումարուած է 5 Մարտ 1916-ին եւ մշակուած ծրագիրը վաւերացուցուած է նպատակին անվերապահ ծառայելու առաջադրանքով:

«Կեդրոնական Պիւրօ»ի հանգամանքը ստացած է «Գահիրէի Հայ Կարմիր Խաչ»ը, կեդրոնական գրասենեակ ունենալով թիւ 19, Մանախ փողոց, առաջին յարկի հասցէն: (Լ.1916, թիւ 132)

51. Հայ Ազգային Միութիւն - Գահիրէ , 1916

Ազգային Միասնականութեան առաջադրանքով հաստատուած Միութիւնը հիմնուած է Նոյեմբեր 1916-ին, ընդառաջելով Համաշխարհային Պատերազմի ծանօթ իրադարձութիւններուն:

Միութեան անդամ Եգիպտահայ քաղաքական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ Սապահ-Գիւլեանի, Միհրան Տամատեանի եւ Արտաւազդ

Հանրմեանի անդամակցութեամբ կազմուած պատուիրակութիւնը իր մասնակցութիւնը բերած է իր ժամանակի միջազգային բանակցութիւններուն:

Հայ Որբախնամ Ընկերութեան կողմէ Հայ Ազգային Միութեան անդամ ընտրուած են Գահիրէի վարչութենէն Մարտիկ Տ.Սահակեան եւ Յակոբ Մարգարեան, իսկ Աղեքսանդրիայէն՝ Գրիգոր Մանուկեան: (ԼԵ.1919,պրկ.ա.)

Ազգային Միութիւնը սերտ գործակցութիւն ունեցած է «Եգիպտահայ Նպաստամատոյց մարմին»ի Աղեքսանդրիոյ եւ Գահիրէի մասնաճիւղերուն հետ, կազմակերպելով «Հայրենիքի Տուրք» անունով հանգանակութեան արշաւը:

Կովկասի հայ կարօտեալներու օգտին ձեռնարկներ կազմակերպուած են եւ եկամուտները փոխանցուած՝ հայ կառավարութեան ներկայացուցչութեան:

52. «Նաւասարդ» Սրահ (Ակումբ) - Գահիրէ , 1918-1952

Նաւասարդ Սրահը իր յատուկ Կանոնագիրով հիմնուած է 1918-ին, հաւաքավայրը հանդիսանալով Գահիրէի Հ.Յ.Դ. մարմնին եւ կազմին:

Ակումբին հասցէն եղած է քաղաքակեդրոն Իպրահիմ Փաշա փողոցի թիւ 4, շէնքին 2-րդ յարկը:

Հաւաքավայր-կեդրոնին մէկ մասնաբաժնին մէջ հաստատուած են «Յուսաբեր»ի խմբագրութիւնը եւ վարչական գրասենեակը:

Նոյն միջավայրին մէջ գործած են Գահիրէի Կարմիր Խաչի տիկնանց եւ Հ.Յ.Դ. Երիտասարդաց միաւորները:

1935-ին, ակումբը փոխադրուած է Քանթարաթ Էլ Տէքքայի հրապարակին վրայի հաւաքավայրը եւ ապա հաստատուած՝ Յուսաբերի Տան մէջ 1952-ին:

1947-էն սկսեալ կազմակերպուած են «Գիշերային Լսարանային» հաւաքներ, մասնակցութեամբ մտաւորական եւ հասարակական գործիչներու: (Լ. Նոյ. 1947)

Վարչական անդամներէն եղած են Արշակ Թուրեան(ատենապետ), Բիւզանդ Չէքիճեան(ատենադպիր), Երուանդ Պետրոսեան(գանձապահ), Գրիգոր Պալըզճեան եւ Նշան Նշանեան(խորհրդական): (ԻԲ. էջ 52)

Ակումբին մէջ կազմակերպուած են լսարանային դասախօսական եւ երաժշտական երեկոներ, կայացած՝ երգչախումբերու եւ թատերախումբի փորձերու հաւաքներ:

Կազմուած են տեղւոյն փինկփոնկի եւ ճատրակի խումբերը, յառաջացած նաեւ պասքէթպոլի տղոց «Նաւասարդ Ակումբ»ի խումբը, որուն փորձերը կատարուած են վարձուած դաշտին մը վրայ: Ակումբին մարզական այս միաւորները մասնակցած են եգիպտահայ մարզական ակումբներու կազմակերպած Աթլէթիք մարզախաղերուն:

53. Զմշկածագի Հայրենակցական Միութիւն - Գահիրէ , 1918

Բարեսիրական-հայրենակցական միութիւնը կազմուած է 1918-ին,նպատակ ունենալով «*օգնել կարիքաւոր հայրենակիցներու*»: ([35]. Բ.հտր. էջ 185, թիւ 22ա)

54. Հայկական Ազգային Ապաքինարան - Գահիրէ (Զէյթուն) , 1918

Ապաքինարան-հանգստավայրը հաստատուած է 1918-ին, Գահիրէի մերձակայ Զէյթուն գիւղաքաղաքին մէջ, ուր դարմանուած են առաջին աշխարհամարտին (1916-1918) Պաղեստինի ռազմաճակատին վրայ հայկական

կամաւորական գունդին «Հայկական Լեգէոն»ին՝ մաս կազմած եւ վիրաւորուած հայ զինուորները:

Ապաքինարանին հիմնադիրներէն եւ ղեկավարը եղած է Ռուբէն Հերեան, անմիջական գործակցութիւնը ունենալով տեղւոյն ախտազննական բաժնին պատասխանատու բժիշկ Ա.Ազատեանի եւ անձնուէր հիւանդապահուի Օր.Արաքսի Փափազեանի: ([24].գ.հտր, էջ 429 – [4].էջ 83-91)

55. Հայ Լեգէոնական եւ Նախկին Ռազմիկներու Միութիւն - Գահիրէ , 1919

Գահիրէի Հայ Լեգէոնական Միութիւն - Գահիրէ , 1925-1933

Գահիրէի Հայ Ռազմիկներու Միութիւնը գործած է իբրեւ եգիպտահայ հատուածը Փարիզի մէջ 1919-ին հիմնուած կեդրոնին և ունեցած՝ մինչեւ 120 անդամ:

Տեղական վարչութեան անդամ եղած են Լեւոն Գույումճեան(ատենապետ), Սարգիս Տէր Սարգիսեան(ատենադպիր) եւ Կիրակոս Ուրֆալեան(գանձապահ):

(ԻԲ. էջ 50)

Հայ Ռազմիկներու Միութիւնը վերակազմուած է 1925-ին, «Գահիրէի Հայ Լեգէոնական Միութիւն» անունով:

Այսպէս, Գահիրէի Նաւասարդ Սրահին մէջ, 27 Սեպտեմբեր 1925-ին, 17 լեգէոնականներ ժողով մը գումարած են, նախագահութեամբ Յակոբ Արեւեանի եւ քարտուղարութեամբ Ստեփան Պոյաճեանի, եւ վերակազմած՝ «Հայ Լեգէոնական Միութիւն»ը: Սոյն ժողովին առժամեայ վարչական անդամ ընտրուած են Յակոբ Արեւեան(ատենապետ), Ստեփան Պոյաճեան(ատենադպիր), Գրիգոր Աճէմեան, Գրիգոր Սէճեան եւ Կարապետ Փարլէզէզեան(խորհրդականներ): ([7])

Կիրակի 4 Հոկտեմբեր 1925-ին, Ս.Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Հոգեհանգիստով մը Հայ Լեգէոնականներու յիշատակը ոգեկոչելէ ետք, Առաջնորդարանի Սրահին մէջ գումարուած է Միութեան Առաջին Ընդհանուր Ժողովը եւ ընտրուած մնայուն վարչութիւնը, որուն անդամակցած են Յակոբ Արեւեան (ատենապետ), Ստեփան Պոյաճեան(ատենադպիր), Արշակ Թուրեան(գանձապահ), Գրիգոր Սէճեան, Արտաշէս Փամպուքճեան, Գրիգոր Աճէմեան եւ Յակոբ Գարասէֆէրեան(խորհրդականներ):

Հայ Լեգէոնական Միութեան նպատակը եղած է *«նիւթապէս եւ բարոյապէս օգնել բոլոր հայ հաշմանդամ լեգէոնականներուն եւ ուրիշ ճակատներու վրայ կռուող անդամահատ զինուորներուն եւ անոնց ընտանիքներուն, որոնք իրենց կամքէն անկախ պատճառներով կարօտ վիճակի ենթարկուած են»:*

Պատրաստուած եւ հրատարակուած է Միութեան 50 յօդուածներէ բաղկացած Ծրագիր-Կանոնագիրը, Տպ.Յուսաբեր, Գահիրէ, 1926: ([12].թիւ 403)

3 Յունուար 1926-ին գումարուած Միութեան Ընդհ.Ժողովին արձանագրութեան մէջ յիշուած է, թէ բժ.Համօ Օհանջանեան Հայ Լեգէոնական Միութեան բժիշկ ընդունուած է, իսկ 2 Յուլիս 1926-ին նշանակուած՝ անոր պատուոյ անդամը:

1928-ի ընթացքին, Միութիւնը ունեցած է իր սրահ-ժողովատեղին, Գահիրէի Տահեր թաղամասին մէջ, Իպն Իտրիս փողոց թիւ 3 հասցէին և ամսական 150 Եգ.Դահեկան վարձքով: «Արարա»ի յաղթանակին 10-րդ տարեդարձին առթիւ, Միութիւնը հրատարակած է "Կամաւորը" պատկերազարդ 76 էջոց հատորը, Տպ.Յուսաբեր, Գահիրէ, 1928: ([12]. թիւ 450)

Միութեան անկազմակերպ վիճակը սկիզբ առած է 1929-ին, և տիրող քաղաքական պայմաններուն ընդառաջ՝ կազմալուծման պարտադրուած 1933-ին: ([7])

Հետագային, Գահիրէի Կեդր. Վարչութեան կողմէ կատարուած է «Յայտարարութիւն մը, Աղեքսանդրիոյ մէջ կազմուած Մասնաճիւղի մը մասին, որուն վարչական դիւանին մաս կազմած են Տոքթ.Զ.Պէնկլի(ատենապետ), Հրաչեայ Փէիլիվանեան (ատենադպիր) եւ Տաճատ Թաթարեան(գանձապահ): Խնդրուած է Աղեքսանդրիոյ հայ Լեզեոնականներէն մինչեւ Յունիս 1934, փութալ անդամագրուիլ դիւանին ատենապետին մօտ, թիւ 10, Շարա Զաղլուլ (Աղեքսանդրիա) հասցէին: (Զ.1934, թիւ 4615)

56. Մարաշի Հայրենակցական Միութիւն - Գահիրէ , 1919

Նախկին մարաշցիներէ կազմուած Գահիրէի Հայրենակցական Միութիւնը հաստատուած է 1919-ին, նպատակ ունենալով *«կրթական եւ բարեգործական օժանդակութիւն ցուցաբերել կարօտեալներու»:*

Վարչութեան անդամ եղած են Միհրան Յակոբ Գութաճեան (ատենապետ), Տիգրան Զեյթունցեան(ատենադպիր), Վարդավառ Սէֆերեան (գանձապահ), Ալիքսան Իւվէզեան և Շահան Հելվաճեան(խորհրդականներ): Կազմակերպուած են դաստիարակչական, հայրենասիրական և բարեսիրական ձեռնարկներ:(ԻԲ.Էջ 70)

57. Տիգրանակերտցիներու Որբախնամ Միութիւն - Գահիրէ , 1919

Որբախնամ միութիւնը կազմուած է 1919-ի վերջերուն, Եգիպտոսի մէջ գտնուող Տիգրանակերտցիներու նախաձեռնութեամբ:

Միութեան նպատակը եղած է *« օգնել իրենց հայրենիքի որբերուն »:*

Ծրագրուած է բարենպատակ հասութաբեր ձեռնարկներու կազմակերպութեամբ՝ օժանդակել Ամերիկայի մասնաճիւղերու ջանքերուն, որոնք լծուած են աւելի քան 650 որբեր պատսպարելու աշխատանքին:

([35]. Էջ 454 - «Ժամանակ»,1920, թիւ 3775)

58. Գահիրէի Հայուհեաց Միութիւն - Գահիրէ , 1919-1930

Հայուհեաց Միութիւնը յառաջացած է Եգիպտահայ գործունեայ խումբ մը կանանց ճիգերով եւ հիմնուած՝ 21 Դեկտեմբեր 1919-ին, նախաձեռնութեամբ Տիկնայք Աշխէն Ա.Լալայեանցի, Աննա Ա.Շամլեանի, Սաթենիկ Մ.Զրաքեանի, Արաքսի Ղ.Բոլատի, Օր.ներ Նարեկ Ոստանի եւ Աղանի Ոստանի:

Միութեան առաջին վարչութիւնը կազմած են Աշխէն Ա.Լալայեանց (ատենապետուհի), Տ.Ս.Պալըզճեան (փոխ-ատենապետուհի), Արաքսի Ղ.Բոլատ (ատենադպրուհի), Սաթենիկ Մ.Զրաքեան (գանձապետուհի), Մ.Տ.Բարթողեան, Օր.ներ Նարեկ եւ Աղանի Ոստան (խորհրդականներ):

Միութիւնը իր կանոնագիրը ունեցած է Մայիս 1920-ին, նպատակ ունենալով *«1.Հայ զինուորին նիւթական կարիքները հոգալ ու նպաստել եւ 2.Հայ իգական սեռի ինքնազարգացման ձգտիլ»:*

Հայ բանակին օժանդակելու նպատակով, Գահիրէի Հայուհեաց Միութիւնը գործակցութեամբ տեղւոյն գաղափարական կազմակերպութիւններու միացեալ յանձնախումբին՝ ձեռնարկներ կազմակերպած է եւ հասոյթները փոխանցած՝ Հայաստանի կառավարութեան:

Հայուհեացը գործունէութեան յաջող տասնամեակ մը բոլորած է, իր

նպատակին ծառայելու կոչումը հանգանակություններ եւ ընկերային ձեռնարկներ կազմակերպելով եւ դաշտահանդէս սարքելով: (ԼԶ.1962, էջ 129-130)

1930-ին, Հայոստեանց Միութիւնը իր անդամական կազմին փափաքին ընդառաջելով վերածուած է «Հայ Կարմիր Խաչ»ի եւ անոր Գահիրէի կորիզը հանդիսացած:

59. Հայ Գեղարուեստասիրաց Միութիւն (Հ.Գ.Մ.) - Գահիրէ, 1920 - 2012

Գեղարուեստասիրաց Միութիւնը (Հ.Գ.Մ.) հիմնուած է Կիր. 6 Մայիս 1920-ին, Կայծակ Պօզաճեանի հրաւերով եւ նախաձեռնութեամբ կայացած ժողովին կողմէ, մասնակցութեամբ խումբ մը արուեստասէր երկսեռ երիտասարդներու:

Հիմնադիր ժողովը գումարուած է «Մահմանադիր Ռամկավար Կուսակցութեան» Գահիրէի «Ժողովրդային Սրահ» ակումբին մէջ, թիւ 4, Քամէլ փողոց, եւ միաւորը անուանակոչուած է «Ռամկավար Գեղարուեստ-տասիրաց Միութիւն» որ հետագային ստացած է «Հայ Գեղարուեստասիրաց Միութիւն» անունը:

Հրատարակուած Ծրագիր-Կանոնագրով՝ Միութեան նպատակը եղած է «գաղութին երկսեռ երիտասարդութիւնը համախմբել կազմակերպուած ուժի մը շուրջ, վառ պահել ու բարձրացնել անոր մէջ գեղարուեստի ճաշակը, սատարել անոր բարոյական եւ մտաւոր բարձրացման եւ հայ ոգիի պահպանումին»:

Գեղարուեստասիրաց Միութեան անդրանիկ վարչութեան մաս կազմած եւ գործած են 6 Մայիս 1920-էն 21 Յուլիս 1924. Կայծակ Պօզաճեան (ատենապետ), Արմենակ Գալֆայեան (ատենադպիր), Գրիգոր Քէօլէեան (գանձապահ) եւ խորհրդականներ Թումիկ Սէտէֆճեան, Սիմոն Սէտէֆճեան, Հայկ Սքէնճեան եւ Սահակ Թիրապեան:

Իսկ, Պատուոյ Մարմնի ինը անդամները եղած են. Էօժէն Բաբազեան, Արմենակ Կոկանեան, Ալեքսանտր Սարուխան, Տիգրան Անդրանիկեան, Սահակ Թիրապեան, Օննիկ Ալեքսանեան, Արտաշէս Նիկողոսեան, Երուանդ Սիմոնօֆ եւ Վարդգէս Գարտաշեան:

1923-ին Միութիւնը փոխադրուած է «Ազգային Սրահ» թիւ 32, Քանթարէթ Էլ Տէքքա փողոց, որմէ ետք, 1926ին՝ իր մնայուն հաւաքատեղին թիւ 2, Տուպրէ փողոց:

1955-ին, «Հայ Գեղարուեստասիրաց Միութիւն»ը հաստատուած է «Հայ Ազգային Հիմնադրամ»ի նորակառոյց շէնքին «Հայտուն»ի 7 եւ 8-րդ յարկերուն մէջ, (թիւ 3, Տուպրէ փողոց, ներկայի՝ Սոլիման Էլ Հալապի), իր «Թէքէեան» եւ «Տ. եւ Ս. Մերճանեան» սրահներով, «Տամատեան» Մատենադարանով եւ անոնց կից՝ ընդարձակ «Հայ տանիք»ով:

«Գեղարուեստասիրաց»ի բացման պաշտօնական հանդիսութիւնը կատարուած է 29 Դեկտեմբեր 1955-ին:

Միութեան սրահէն ներս գործած են յանձնախումբեր, որոնք ունեցած են իրենց մշակութային, արտաքին յարաբերութեան, ընկերային, երիտասարդաց, գրական, կերպարուեստի, թատերական, երգչախմբային, պարախմբային եւ երաժշտական բեղուն գործունէութիւն: ([11] – [20] – [12].թիւ 1372 եւ թիւ 1816)

1932-ին կազմուած է «Տիկնանց Յանձնախումբ»ը ատենապետութեամբ Անահիտ Նաւասարդի:

Կազմակերպուած են ճատրակի եւ գնդամուղի մրցաշարքեր: Իսկ փինկ-փոնկի խումբը մասնակցած է եգիպտահայ ակումբներու Աթլէթիք մրցումներուն:

Գեղարուեստասիրաց Միության Երիտասարդաց Յանձնախումբը 1959-ին սկսեալ կազմակերպած է Ս.Ծննդեան Երիտասարդական Փառատօնը մասնակցութեամբ եգիպտահայ մշակութային, երիտասարդական, մարզական միաւորներու անդամներուն եւ կրթական յարկերու աշակերտութեան:

1998-ին, Միության Երիտասարդաց Յանձնախումբը վերանուանուած է «Վահան Թեքէեան Երիտասարդաց Յանձնախումբ», եւ տասնամեակի մը տեւողութեան ունեցած՝ աշխոյժ մշակութային գործունէութիւն:

Միության Ուսանողական Մարմինը 1960-ին հրատարակած է «Շարժում» պարբերագիրքը (2 թիւ), իսկ Պատանեկան միաւորը 1987-ին լոյս ընծայած է «Արեւ Պատանեկան Էջ»ին 5 թիւերը:

Հ.Գ.Միության վարչութիւնը 1965-ին հրատարակած է Վահան Թեքէեանի «Մահերգ Նահատակաց»ը, իսկ 1967-ին՝ Նահապետ Քուչակի «Քուչական Տաղեր»ը, նօթագրութեամբ եւ երաժշտական մշակումով Եղուարդ Յակոբեանի:

([12]. թիւ 1560,1585)

Գահիրէի կեդրոնական թաղաշրջաններուն մէջ հայ բնակչութեան նուազումին պատճառով, 2012-էն «Հայ Ազգային Հիմնադրամ»ի հովանաւորութեամբ գործող «Հայ Գեղարուեստասիրաց Միության» գործունէութիւնը միաւորուած է Հելիոպոլսոյ «Կոկանեան Սրահ» քոյր միութեան գործունէութեան, վերջնոյն կեդրոնին մէջ:

60. Մերաստահայերու Սենեքերիմեան Միութիւն (Ս.Ս.Միութիւն) - Գահիրէ , 1922

Միութիւնը կազմուած է «Վանեցի հայրենակիցներ»ուն ուղղուած «Կոչ»ով, հիմնելու համար Վասպուրականցիներու Հայրենակցական Միութիւն մը, նպատակը ունենալով *«նպաստել հայրենիքի վերաշինութեան բարենպատակ հայրենակցական գործին, երբ փրկութեան ժամը հասնի»:*

Նորակազմ հայրենակցականին առաջին Ընդհանուր Ժողովը գումարուած է 21 Մայիս 1922-ին, Յառաջդիմասերի Սրահին մէջ եւ վարիչ մարմինը ընտրուած է հետեւեալներէ . Մկրտիչ Պուտաքեան, Երուանդ Օտապաշեան, Յ.Տասնապետեան, Նշան Պէքմէզեան եւ Արամ Տաղաւարեան, որոնց կողքին հաշուեքննիչ նշանակուած են Յակոբ Տէր Յակոբեան, Գոչիկեան եւ Յարութիւն Քէօսէեան:

(Լ.1922, թիւ 37)

61. Հայ Բժշկական Միութիւն - Գահիրէ , 1923-1926

Բժշկական Միութեան նախաձեռնող մարմնին անդամները եղած են Տոքթ.Համօ Օհանջանեան, Տոքթ.Պետրոս Միսաքեան և Ատամնաբոյժ Տոքթ.Եղուարդ Ճիզմէճեան:

Միութիւնը ճանչցուած է նաեւ «Գահիրէի Հայ Բժշկական, Ատամնաբուժական եւ Դեղագործական Միացեալ Միութիւն» անունով:

Հիմնադիր ժողովը գումարուած է Գահիրէի «Նաւասարդ» սրահին մէջ (թիւ 4, Կալալ փողոց) 2 Դեկտ. 1923-ին: Արժամեայ դիւանին մաս կազմած են, նախագահ՝ Տոքթ.Հ.Օհանջանեան, ատենապետ՝ Տոքթ. Շամլեան եւ ատենադպիր՝ ատամնաբոյժ Տոքթ.Եդ.Ճիզմէճեան: Ծրագիր-Կանոնագիրի յանձնախումբի անդամ ընտրուած են Տոքթ.ներ Օհանջանեան, Ինկիլիճեան, Պաղտիկեան, Միսաքեան, Վարդերեան եւ Ճիզմէճեան:

Միութեան երկրորդ 7 Ղեկտ.1923-ի նիստին վաւերացուած է ներկայացուած Ծրագիր-կանոնագիրը եւ ընտրուած՝ մնայուն վարչութիւնը, յանձին Տոքթ. Համազասպ (Համօ) Օհանջանեանի ատենապետ, Տոքթ. Եղուարդ Ճիգմէճեանի ատենադպիր եւ Տոքթ.Պետրոս Միսաքեանի գանձապետ:

Անդամական ժողովները գումարուած են ամէն ամսուայ 1-ին եւ 15-ին հանդիպող առաջին Կիրակի օրը:

Գահիրէի Հայ Բժշկական Միութեան բացման հանդէսը տեղի ունեցած է Կիր. 3 Փետրուար 1924-ին, Գահիրէի Հայկական Սրահին մէջ (թիւ 32, Քանթարէթ Էլ Տէքքա փողոց), նախագահութեամբ ազգային յարանուանութեանց երեք հոգեւոր պետերուն:

Միութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած են գիտական և բժշկական այժմեական նիւթերով դասախօսական երեկոյթ-հաւաքներ:

Հայ Բժշկական Միութեան հասցէն եղած է Տոքթ.Օհանջանեան, թիւ 45, Շուպրա փողոց, Գահիրէ:

Միութիւնը լուծարքի ենթարկուած է 1926-ին:

(ԻԳ.1923, պր. դ.և գ. , 1924, պր. ը. - [8].էջ 169)

62. Գահիրէի Հայ Տիկնանց Միութիւն - Գահիրէ , 1923

Եգիպտական բարեխնամ կառավարութեան համամտութեամբ եւ արտօնութեամբ՝ 1923-ին Յունաստանէն եկած եւ Աղեքսանդրիա ու Գահիրէ ապաստան գտած բազմահարիւր հայ որբուհիներու խնամատարութեան նուիրական գործին նուիրուած խումբ մը հայուհիներու «Տիկնանց Միութիւն»ը Գահիրէի մէջ կազմուած է 1923-ի վերջին ամիսներուն:

Միութեան առաջնահերթ նպատակը եղած է *«կարիքաւոր գաղթական հայուհիներու գործ հայթայթել, նպաստելու համար անոնց ինքնաբաւ եւ բարեկեցիկ պայմաններով կեցութեան»:*

Բարեսէր ազգայիններու նիւթաբարոյական աջակցութիւնը ապահովելով, Միութեան կանայք Գահիրէի թիւ 4, Քամէլ փողոցի հասցէին 1924-ին հաստատուած են արհեստանոց-աշխատանոց մը կարի չորս մեքենաներով, ուրտել՝ հոգածութեան կարօտ գաղթական հայուհիներ աշխատանքի լծուելով, կանոնաւորապէս ստանալ սկսած են իրենց շաբաթավարձքը: Աշխատանոցին խղճամիտ հոգատարութիւնը ստանձնած է գործաւոր հայուհիներու դժբախտութիւնը ինքն ալ բաժնած Գոճապաշեան անունով ճարտար ձեւագէտը: Միութիւնը տեղական հայ մամուլին միջոցով գործատերերու կոչ ուղղած է քաջալերել աշխատանոցին արտադրութիւնները: (Զ.1924, թիւ 135/1594/)

63. Հայ Ուսանողական Միութիւն - Գահիրէ , 1924 , 1935

Միութիւնը, «Գահիրէի Հայ Ուսանողական Միութիւն» (ՀՈՄ) անունով հիմնուած է 14 Սեպտեմբեր 1924-ին, Գահիրէի նախկին «Ժողովրդային Սրահ»ին մէջ, եւ իբրեւ հատուածը նկատուած է Աղեքսանդրիոյ Ուսանողականին:

Հիմնադիր 7 երիտասարդները գլխաւորած են Գուրգէն Եկարեան եւ Մասիս Պետրոսեան:

Ուսանողականին անդամակցութեան մասնակցած են Ազգային եւ Օտար վարժարաններ յաճախող երկսեռ աշակերտութիւնը:

Վերակազմուած է 1935-ին նախաձեռնութեամբ Լեւոն Աճէմեանի:

Նոր կազմին հիմնադիրները եղած են Ալիքսանեան Օննիկ, Գալէնտերեան Մարկոս, Թէվէթլեան Անդրանիկ, Թերզիպաշեան Նուպար, Թիւթինճեան Յովսէփ, Թիւրապեան Թորգոմ եւ Քէչէճեան Կիւլպէնկ: (ԼԳ.1947 - [9].էջ 233)

Վարչական անդամներ եղած են Ա.Սանտալեան, Մ.Գալէնտերեան, Ա.Սուլթանեան, Հ.Սարիկեան, Օր.ներ Վ.Պետոեան եւ Վ.Ֆերիատ:

Ուսանողականը, գործակցութեամբ իր յարակից յանձնախումբերուն՝ ունեցած է աշխոյժ եւ բազմարդիւն գործունէութիւն: 1940 եւ 1960-ականներու դէպի հայրենիք ներգաղթը տարած է Ուսանողականի գործունէայ անդամները:

Գահիրէի Հայ Ուսանողական Միութեան նախաձեռնութեամբ, 1943 եւ 1944 տարիներուն, եռանդամ խմբագրական կազմով (Զ.Գարամանեան, Յ.Թիւթինճեան եւ Ե.Չերքէզեան) հրատարակուած է «Շարժում» (Հայ Երիտասարդին Գիրքը) պարբերականին 1-էն 10 պրակները: 1947-ին, լոյս տեսած են նաեւ «Շարժում»-էն երկու թիւեր, մէկը՝ բացառիկ: Ուսանողականը, 1945-ին լոյս ընծայած է «Շարժում» մատենաշարին թիւ 1-էն 4 հատորներուն:

Ուսանողական Մարմնի անդամներ, 1960-ին լոյս ընծայած են «Շարժում» պարբերագիրքին մեքենագիր-խմորատիպ երկու համարներուն: ([12], [14])

64. «Ռէթէու Յ.Պէրպլերեան» Լսարանական եւ Գրական Միութիւն -

Գահիրէ, 1924-1925

Ուսանողական Միութիւնը կազմուած է 1924-ին, նպատակ ունենալով *«աշակերտութիւնը վարժեցնել հանրային եւ հաւաքական կեանքի»:*

Պէրպլերեան Վարժարանի բարձրագոյն կարգերու աշակերտներէն կազմուած վարչական կազմը նախաձեռնած է գրական հերթական երերկոնքերու շարքը, որուն դասախօսելու հրաւիրուած են մտաւորական դէմքեր եւ հասարակական գործիչներ: ([24].գ.հոր էջ 520)

65. Հայ Հրատարակչական «Արգոս» Ընկերութիւն - Գահիրէ, 1924-1934

Հրատարակչական վաստակաւոր ընկերութիւնը հիմնուած է 1924-ին, որուն Հիմնադիր, Տէր եւ Տնօրէն, Հրատարակիչ-Տպագրիչը եղած են Սոկրատ Սարրաֆեան եւ եղբայրը Սարգիս: ([8].էջ 100)

Կեդրոնատեղին եղած է «Ոսկետառ» տպարանը, Էմատ Էլ Տին փողոց, Գահիրէ: Նոյն հասցէին հաստատուած է նաեւ «Արգոս» գրադարանը 1932-ին:

«Արգոս» հրատարակչականին նախաձեռնութեամբ լոյս տեսած են Սոկրատ Սարրաֆեանի թարգմանութեամբ ֆրանսական գրականութենէն շուրջ 30 երկերու հրատարակութիւնները: ([8].էջ 100)

Մինչեւ 1934, հրատարակչականին նախաձեռնութեամբ լոյս ընծայուած են 43 հատորներ:

66. Կեսարիոյ Եւ Շրջակայից Հայրենակցական Միութիւն - Գահիրէ, 1925

Կեսարահայոց Միութիւնը Գահիրէի մէջ հիմնուած է 24 Հոկտեմբեր 1925-ին, ազգային բարերար Կարապետ Մելգոնեանի հովանաւորութեամբ եւ կոչի մը ընդառաջ գումարուած խորհրդակցական ժողովի մը ընթացքին, ատենապետութեամբ Վահան Թէքէեանի եւ ատենադպրութեամբ Մանուէլ Պէյլերեանի:

([35].էջ181-182)

«Կեսարիոյ եւ Շրջակայից Հայրենակցական Միութիւն»-ը վաւերացուած է

1 Մայիս 1926-ի Ընդհանուր Ժողովի նիստին եւ ընդունած 37 յօդուածներէ բաղկացած Ծրագիր-Կանոնագիրը (Տպ.Ոսկետառ, Գահիրէ, 11 էջ, 1926):

Առաջին վարչութեան անդամ ընտրուած են Վարդան Վրդ.Խաչերեան (Ա.ատենապետ), Բարսէղ Պալըզեան(Բ.ատենապետ), Մանուէլ Պէլլերեան (Ա.ատենադպիր), Բարունակ Ճէմալեան (Բ.ատենադպիր), Յակոբ Մարտինեան (գանձապահ), Միսաք Լաչինեան (հաշուակալ) եւ Յարութիւն Գութնուեան (խորհրդական): ([35]. էջ 183)

Միութեան *Բարերար անդամներ* եղած են Կարապետ Մելգոնեան, Կ. եւ Յ. Սարբեան, Պատրիկ Կիւլպենկեան եւ Տիրան Խան Քէլէկեան, իսկ *Պատուոյ անդամներ* Բարսէղ Պալըզեան եւ Յակոբ Մարտինեան: ([IV] - [12] թիւ 402- ԻԲ.էջ 49)

Վարչական տեղական անդամներ եղած են Բ.Թէքեան, Մ.Պէլլերեան, Յ.Մարտինեան, Կ.Սվազլեան եւ Մ.Գալփաքեան:

Միութեան նպատակը եղած է «*Ա. արտասահմանի մէջ գրուած հայրենակիցներուն միջեւ կապ հաստատելով իրարու եւ հայրենաքնակ ժողովուրդին օգտակար հանդիսանալ. Բ. Օգնել Կեսարիոյ եւ Շրջակայից մէջ գտնուող որբանոցներուն, վարժարաններուն եւ ի հարկին կարօտ ազգայիններուն. Գ. Կեսարացիներուն դէպի Հայաստան ներգաղթը դիւրացնել եւ լծուիլ Հայաստանի վերաշինական աշխատանքներուն՝ հիմնելով այնտեղ (Նոր Կեսարիա) մը*»: ([IV])

Գործունէութեան ծիրին մէջ, ծրագրուած է հետեւողական եւ բոլոր միջոցներով կապ պահել սփիւռքի Կեսարացիներու միջեւ:

Միութիւնը վաւերացուած է 1 Մայիս 1926-ի Ընդհանուր Ժողովին՝ եւ ընդունած 37 յօդուածներով Ծրագիր-Կանոնագիրը (Տպ.Ոսկետառ, Գահիրէ, 11 էջ, 1926):

Կեսարիոյ Հայրենակցականը ունեցած է աղքատախնամ-բարեսիրական գործունէութիւն եւ ուսումնատենչ աշակերտներէ սաներ պահած՝ ազգային վարժարաններու մէջ: Անդամակցութիւնը ունեցած է մինչեւ 130 ազգայիններու:

Կեսարիոյ Հայրենակցական Միութիւնը 1937-ին հրատարակած է «Պատմութիւն Հայ Կեսարիոյ» մեծածաւալ երկհատորը, խմբագրութեամբ բանասէր Արշակ Ալպոյաճեանի (Տպ.Յ.Փափագեան, 1937,Գահիրէ):

([IV]. – [12]. թիւ 774,775)

67. «Այծեմնիկ» Տիկնանց Միութիւն - Գահիրէ, 1925 -

«Կարապետ Աղա Աբիկեան» Հանգստեան Տուն - Հելիոպոլիս, 1956 -

«Այծեմնիկ» Տիկնանց Միութիւնը հիմնուած է 1925-ին, խումբ մը բարեսէր հայուհիներու նախաձեռնութեամբ եւ վաւերացուած՝ Ընկերային Գործոց Նախարարութեան կողմէ *«իբրեւ բարենպաստակ հաստատութիւն, օժանդակութիւն յատկացնելու համար կարօտեալ ընտանիքներու»*:

Միութեան սկզբնական շրջանին, կեդրոնատեղի ունեցած է «Հայ Գեղարուեստասիրաց Միութեան» սրահը:

Տիկնանց եւ Օրիորդաց Յանձնախումբերուն օժանդակութեամբ ծաւալած տասնամեակներու գործունէութիւնը գնահատանքին եւ քաջալերութեան արժանացած է գաղութին բարեսէր կազմակերպութիւններուն եւ ազգայիններուն:

Հանգստեան Տուն մը հիմնելու գաղափարը ծնունդ առած է 1952-ին Աղեքսանդրիոյ մէջ, երբ տեղւոյն հայ վաճառականներէն Կարապետ Աղա

Արիկեան, Գահիրէի մէջ հայ տարեցներու համար «Հանգստեան Տուն» մը շինելու համար գումար մը յատկացնելու տրամադրութիւն յայտնած է:

1953-ին, Հելիոպոլսոյ մէջ, թիւ 45 Ապտ-էլ-համիտ Ապու Հէֆ փողոցին վրայ, 5250 Եգ.Ոսկիի գնուած է 1500 քռ. մէթր տարածութեամբ հողատարծք մը:

1954-ի սկիզբը, բարերարութեամբ Կարապետ Աղա Արիկեանի, շինարարական աշխատանքները սկսած են **«Կարապետ Աղա Արիկեան» հանգստեան տան**, որ տեւած է մինչեւ 1955-ի վերջերը:

«Տուն»ին ճարտարապետը եղած է Նուպար Գէորգեան, իսկ կառուցումի աշխատանքը տարած՝ Վարուժան Մեքոն Էքսէրճեան: ([8].էջ 542 – [3]. թիւ 1813)

Բարերարին տրամադրած գումարը շինութեան եւ կահաւորման աշխատանքներուն անբաւարար ըլլալով, վարչութիւնը կոչ ուղղած է համայնքի զաւակներուն, որոնք առատաձեռն նուիրատուութիւններով աջակցած եւ ծրագիրը աւարտին հասցուցած են:

Նորակառոյց Հանգստեան Տան բացումը կատարուած է 1956-ի սկիզբը, ընդունելով երկու սեռի պատասպարեալներ եւ շարունակած է գործել տնօրինութեամբը «Այծեմնիկ Տիկնանց Միութեան» վարչութեան:

Առ ի երախտագիտութիւն բարերարին նուիրաբերումին, Միութեան վարչութեան որոշումով Կարապետ Աղա Արիկեանի կիսանդրին, պատրաստուած՝ արուեստագետ արձանագործ Օննիկ Աւետիսեանի կողմէ, զետեղուած է Հանգստեան Տան ընդունելութեան սրահին մէջ:

Երկար տարիներ Միութեան ատենապետուհին եւ ապա՝ պատուոյ նախագահուհին եղած է Տիկին Սաթենիկ Ճանիկ Զաքրը, նոյն գնահատականին արժանացած եւ ցկեանս նախագահ հրչակուած է Տիար Աւետիս Ն.Զաքրճեան, իսկ պատուակալ նախագահուհի կոչումին արժանացած՝ վաստակաւոր ատենապետուհի Տիկին Գայեանէ Փափագեան(1972): (ԻԲ.էջ22 - Զ.1972, Մարտ)

1952-էն սկսեալ, «Այծեմնիկ» Տիկնանց Միութեան վարչութեան ատենապետուհիները եղած են Տիկնայք Լիւսի Քէստէքեան, Գայեանէ Փափագեան, Սիրանոյշ Սարգիսեան, Մարի Գըզըլեան, Ռեբեկա Գազանճեան եւ Տիանա Սիմոնեան:

Տարիներու ընթացքին, Հանգստեան Տան մէջ վերադասաւորում կատարուած է ապաստանեալներուն անջատ սենեակներ տրամադրելով եւ ժամանակակից կարիքներով կահաւորումը կատարելով: Ծախսերը հոգացուած են միութիւններու, հայ համայնքի զաւակներուն նուիրատուութիւններով եւ Ազգա-յին Առաջնորդարանի օժանդակութեամբ: ([3]. թիւ 1813)

68. Դպրոցաւը Հայուհեաց Միութեան Մասնաճիւղ - Գահիրէ , 1925-1926

Կ.Պոլսոյ «Դպրոցաւը Հայուհեաց Ընկերութիւն»ի մէկ մասնաճիւղը կազմուած է Գահիրէի մէջ 1925-ին, նպատակ ունենալով *«նպաստել եւ օգտակար հանդիսանալ մայր կազնակերպութեան գործունէութեան»*: ([35]. Ա.հտր. էջ 275)

Միաւորը կազմալուծուած է մէկ տարի գործելէ ետք 1926-ին:

*** «Դպրոցաւը Հայուհեաց Ընկերութիւն»ը հիմնուած է Կ.Պոլսոյ մէջ 1879-ին, նախաձեռնութեամբ Տիկ.Սրբուհի Տիւսաբի եւ գործակից հայուհիներու, նպատակ ունենալով *«անօգնական հայուհեաց դաստիարակութեան նպաստել՝ մասնաւոր դպրոցներ բանալով եւ ձրիապէս ուսմունք ու ձեռարուեստ ատենադրու համար»*:

([35]. ա.հտր. էջ 247 – Համբ.Երամեան “Յուշարձան” ք.հտր., 1929, էջ 317)

69. Հայաստանի Օգնութեան Կոմիտէ (Հ.Օ.Կ.) - Գահիրէ , 1926-1937

Հայրենիքի օգնութեան կոչուած Կոմիտէն կազմուած է նախաձեռնութեամբ Լեւոն Սէֆերեանի, Վարդան Կիւրճեանի, Մանուէլ Պէլլերեանի եւ Խորէն Իսկէնեանի:

Համահայկական հիմնարկութիւն մը ըլլալով, Կոմիտէն կապուած է Երեւանի Գլխաւոր Կեդրոնին որ կազմուած էր 1921-ին:

Օգնութեան Կոմիտէի նպատակը եղած է *«ա) օգնել Երկրի տնտեսական եւ մշակութային աշխատանքներուն. բ) աջակցիլ ներգաղթին. եւ գ) բնական աղէտներու ժանանակ Երկրին ազգաբնակչութեան անմիջական օժանդակութիւն հասցնել»:* ([VIII] – [12]. թիւ 405)

ՀՕԿ-ի Գահիրէի մասնաճիւղին վարչական կազմը հաստատուած է Կեդրոնական Վարչութեան 26 Յուլիս 1926 թուակիր թիւ 282 պաշտօնագրով, եւ 14 Սեպտեմբեր թիւ 340 հաղորդագրութեամբ լիազօրուած է ենթակայ մասնաճիւղեր կազմել, միաժամանակ կապ հաստատելով Եթովպիոյ ճիւղին հետ:

Եգիպտոսի մէջ, վարչական կազմերով մասնաճիւղեր եղած են Աղեքսանդրիոյ եւ Տամանհուրի մէջ , նաեւ օժանդակ խմբակներ յառաջացած են Մելլավիի մէջ Օգոստոս 24-ին եւ Մանսուրայի մէջ՝ 1926 Սեպտեմբեր 1-ին:

([9]. էջ 264 - ԻԵԼ.թիւ 3)

Գահիրէի վարչութեան անդամակցած են Դաւիթ Շահլամեան, Լեւոն Զօրայեան, Ասատուր Թորոսեան, Գալուստ Գալուստեան, Ադրանիկ Արեւեան եւ Եղիա Իզմիրլեան, գրասենեակի հասցէ ունենալով թիւ 212, Մոհամետ Ալի փողոց (Աթապայի մօտ, Վագրէի մասնաճիւղ, 2-րդ յարկ):

(Բ.թիւ 30, Մարտ 1937 - ԻԲ.էջ 50)

Աղեքսանդրիոյ կազմին փոխ նախագահը եղած է Գառնիկ Սվազլեան, որուն հեղինակութեամբ լոյս տեսած է «Ներգաղթը» թատերգութիւնը 1936-ին:

([8]. էջ 202)

Հրատարակուած է «Ծրագիր-Կանոնագիր ՀՕԿի Եգիպտոսի Շրջանակին»ը (Տպ.Փարոս, Գահիրէ, 8 էջ, 1926):

Գահիրէի մէջ 1926-ին, լոյս ընծայուած է նաեւ տեղեկատուական “ՀՕԿ” պարբերական պրակին 3 թիւերուն:

([14]. էջ 164 , [12]. թիւ 405)

“ՀՕԿ”ի գործունէութիւնը Եգիպտոսի մէջ դադրած է 3 Դեկտեմբեր 1937-ին, իր կեդրոնին որոշումով:

([16]. էջ 691 , [9]. էջ 267)

70. «Եփրատ Գօլէճ» Երաժշտական Հաստատութիւն - Գահիրէ , 1926-1936

Երաժշտական հաստատութիւնը հիմնադրուած է 1926-ին, նախաձեռնութեամբ «Եփրատ Գօլէճ»ի շրջանաւարտ եւ Գերմանիոյ Պետական Երաժշտանոցէն վկայեալ ուսուցիչ երաժշտագէտ Փրոֆ.Սամուէլ Խաչատուրեանի:

Գահիրէի մէջ, հասցէն եղած է թիւ 44, Քասր-էլ-նիլ փողոց, իսկ Աղեքսանդրիոյ մէջ, թիւ 104, Էսնա փողոց, Իպրահիմէա:

Հաստատութիւնը եղած է ժամանակի միակ հայ երաժշտանոցը, ուր աւանդուած են դաշնակի, ջութակի, ձայնամշակութեան եւ երաժշտական բոլոր գործիքներու դասեր, ինչպէս նաեւ *սօլֆեժ, թէօրի, հարմօնի*, լսելավարժութիւն եւ երաժշտութեան պատմութիւն:

(Բ.Սեպտ.1933)

Բարձրագոյն երաժշտական այս երկրորդական վարժարանը շրջանի մը

համար ճանչուած է իբրեւ «Հայաստան Գոլէճ», որուն վկայականը համագոր եղած և վաւերացուած է եւրոպական երաժշտանոցներէ, մրցանակներով եւ ոսկիէ մետալլներով գնահատանքի արժանացնելով կարողագոյն աշակերտները:

Հաստատութիւնը ունեցած է 5-10 տարեկան սկսնակներու համար կազմուած դաշնակի եւ ջութակի կարգ մը, ամսական 50 դրուշով: Դիւրամատչելի պայմաններով մասնաւոր դասերու համար կարգադրութիւններ եղած են նաեւ արուարձաններու մէջ:

Հաստատութիւնը, տասնամեայ շրջանին ունեցած է աւելի քան 250 աշակերտ:

Աշակերտներու նուագահանդէս կազմակերպուած է Գահիրէի Ամերիկեան Համալսարանին մէջ Կիր. 7 Փետրուար 1936-ին: (Բ.1937, թիւ 21,24,26)

71. Հայ Աւետարանական Հոգեւոր Բարեսիրական

Տիկնանց Միութիւն - Գահիրէ , 1926

Բարեսիրական Տիկնանց Միութիւնը հիմնուած է 1926-ին, նպատակ ունենալով «կրթասիրական, բարեգործական, կրթական, հոգեւոր, մտաւորական եւ մարմնակրթական ծրագիրներու գործունէութիւն մը»:

Աւետարանական միութեան վարչութեան անդամակցած են Նունիա Իշխանեան եւ Կիրէնիա Կիւզելիմեան (յաջորդական ատենապետուհիներ), Մարիա Գաբիկեան (ատենադպրուհի, ապա գանձապահուհի), Կիրէնիա Հասրբճեան եւ Մագթադինէ Հ.Խանդամուր (խորհրդական):

Բարեսիրական Միութիւնը ունեցած է շուրջ 20 անդամներ:

([24]. գ.հտր. էջ 386 - ԻԲ. էջ 41)

72. «Պարտիզակ» Խնայողական Ընկերութիւն - Գահիրէ , 1927

Ընկերութեան հիմնադիրները 1927-ին եղած են Պարտիզակցիներ Յովհաննէս Գուշակեան եւ Համագասպ Յակոբեան, նպատակ ունենալով «խնայողութեան գաղափարը տարածել եւ զայն իրագործել յատուկ ծրագրով»:

Հիմնադիրները, իրենց ծննդավայրին «Համագործակցական Ընկերութեան» նմանութեամբ, նախաձեռնարկ եղած են խնայողական ընկերութեան մը կազմութեան Եգիպտոսի մէջ:

Նախատեսուած է, թէ ամսական 20 դրշ. մասնակցութեամբ եւ համատեղ պարտաթուղթերու գնումով, հինգ տարին բաւական պիտի ըլլար իւրաքանչիւր անդամի մէկ պարտաթուղթ ստանալու:

Հնգամեակի աւարտին, Ընկերութիւնը վերակազմուած է երկրորդ շրջանի մը համար, մասնակից դարձնելով ոչ-Պարտիզակցիներ եւս, անդամակցութեամբը 55 բաժիններով 41 անձերու: Դիպուածով, հաւաքական պարտաթուղթերէն մին, Օգոստոս 1936-ի վիճակահանութեան շահած է 50.000 ֆր.ի պարգեւը, որուն ընդառաջ՝ իւրաքանչիւր բաժնետէր ստացած է բացառիկ 35 ոսկի գումար մը:

(Բ.1936, թիւ 3)

73. Հայ Ազգային Հոգեւոր Միութիւն - Գահիրէ , 1928

Հոգեւոր Միութեան կազմութեան առաջադրանքը 1928-ի սկիզբը կատարած է դաստիարակ-ուսուցչապետ եւ «Արարատեան Գոլէճ»ի հիմնադիր-Տնօրէն Բիւզանդ Կեօզիւպէտիւքեան:

Միութեան Ծրագիր-Կանոնագրին նախագծին մէջ նպատակ ներկայացուած է «*Հայ սերունդը անուանական Քրիստոնէութենէ հանելով, ընել ճշմարիտ Քրիստոնեայ, Աստուծոյ օգնութեամբ, զայն փրկել՝ ժամանակակից անբարոյական հեղեղէն, պայքարելով ամէն տեսակ ապականեալ վարժութեանց դէմ եւ սատարել Հայ Ս. Եկեղեցւոյ նիւթական եւ հոգեկան պայծառութեան*»:

Հայ երիտասարդներու փափաքին ընդառաջ, կազմուած միութեան առաջին Մասնաճիւղ-Կեդրոնը կոչուած է Ս.Գրիգոր Լուսաւորիչ:

(«Հրեղէն Միւն», 1928, թիւ 2, էջ 20, 23, 28)

74. Հայ Ժողովրդային Միութիւն - Գահիրէ, 1928-1940

Union Populaire Armenienne, 9, Rue Maghraby, Le Caire, B.P.456

Ժողովրդային Միութիւնը հիմնուած է 1928-ին, նպատակ ունենալով «*պահպանուիլ Հայ ընտանիքին, զօրավիք կանգնիլ հայ դպրոցին եւ հայ լեզուին, ամուր կառչած մնալ հայ հաւատքին ու եկեղեցիին*»:

Միութեան Առժամեայ Վարչական ժողովը թռուցիկ մը հրապարակելով եւ մամուլին մէջ «Կոչ»ով մը, «Միութեան» կազմութեան անհրաժեշտութիւնը ներկայացուցած է, իր նպատակին կողքին ջատագովելով՝ տեղական ընտրութիւնները համեմատական դրութեամբ կատարելու սկզբունքը: (Զ.1926, թիւ 2221)

Միութեան հիմնադիր խորհուրդին անդամակցած է Փրոֆ. Յովհաննէս Թ.Գայանեան, ոչ-կուսակցական անձերու հետ համախորհուրդ: ([24].գ.հտր.էջ 5)

1939-ին, Միութեան վարչութեան անդամ եղած են Մարգար Չոլաքեան (ատենապետ), Քերովբէ Կոստանդեան(ատենադպիր), Գարեգին Տէմիրճեան (գանձապահ), Խաչեր Կիզիլիմեան եւ Ասատուր Պօղիկեան(խորհրդականներ):

Միութիւնը հրապարակած է «Համեմատական Դրութիւն»(1928), «Մեր խօսքը եւ մեր գործը»(1928) եւ «Աշխատանքի Կոչ»(1932) խորագրերով հրատարակութիւնները: ([12]. թիւ 451, 454, 532)

Կեդրոնին հասցէն եղած է թիւ 9, Մադրասի փողոց (Մազլում փաշա շէնք) եւ գործած է մինչեւ 1940-ական թուականներու սկիզբը: (Լ.Զ.1962, էջ 130 - ԻԲ. էջ 56)

75. Հայ Կրթական Եւ Հրատարակչական «Համագգային» Ընկերութիւն - Գահիրէ, 1928-1967

«Համագգային» Ընկերութիւնը հիմնուած է 28 Մայիս 1928-ին, Գահիրէ:

Հիմնադիրները եղած են, Նիկոլ Աղբալեան, Լեւոն Շանթ, Գասպար Իփեքեան, Բժ.Համօ Օհանջանեան, Ստեփան Եսայեան, Մինաս Խաչատուրեան, Սարգիս Մալխասեան, Յակոբ Պալըզճեան եւ Սեդրակ Պալըզճեան:

«Համագգային»ի նպատակը եղած է «*զարգացնել հայ մշակոյթը եւ լեզուն, ապակուսակցական, ապահատուածական, ապադաւանական եւ ապատեղացիական ոգիով*»: (Ծրագիր Կանոնագիր, էջ 2)

Ընկերութեան ծրագրին պատրաստութեան համար կարելոր դեր կատարած է Նիկոլ Աղբալեան:

1930-ին, Վարչութեան անդամ ընտրուած են Բժ.Պ.Միսաքեան(ատենապետ), Լ.Յովհաննէսեան (ատենադպիր), Յ.Յակոբեան (գանձապահ), Տիկ.Ռ.Օհանջանեան, Հ.Շիրինեան, Յ.Յովսէփեան եւ Ս.Փիլաւեան: ([30])

Գործած է Աղեքսանդրիոյ Մասնաժողովը, գլխաւորութեամբ հիմնադիր

անդամներ Մ.Խաչատուրեանի եւ Ս.Մալխասեանի:

Հիմնուած է նաեւ Զակազիկի Մասնախումբը՝ անդամներ ունենալով Տ. եւ Տ. Հ.Իփեքեան, Շ.Թերզեան, Մ.Դերձակեան, Ա.Բաբլանեան, Օր.Ս.Բէգիրճեան, Տ.Է.Տ. Վ.Զուպուզեան եւ Յ.Ամատունի: ([30])

Կրթական եւ հրատարակչական ընկերութիւնը ունեցած է Տպ.Յուսաբերէն 1936-ին լոյս տեսած 16 էջոց Ծրագիր-Կանոնագիր մը, վաւերացուած Միութեան Ե-րդ Ընդհանուր Ժողովէն, 1936 Ապրիլ 4-5ին: ([12]. թիւ 741)

1936-ին, Ընկերութեան Կեդր. Վարչութեան անդամ ընտրուած են Բժ.Համօ Օհանջանեան (նախագահ), Ռուբէն Տէր-Մինասեան եւ Բժ. Ն. Պաղտիկեան:

«Համազգային»ի նախաձեռնութեամբ Պէյրութի մէջ, 3 Մարտ 1930-ին հիմնուած է «Հայ Ճեմարան»ը, որուն համար Փալանճեան Քոյրերու նուիրատուութեամբ 1948-ին գնուած կալուածին շէնքը անուանուած է «Նշան Փալանճեան Ճեմարան»:

1950-ի վարչական կազմին անդամակցած են Ռ. Օհանջանեան (նախագահ), Ս.Պոյաճեան(ատենապետ), Ա.Թովմասեան(ատենադպրուհի), Գ.Ալթունեան(գանձապահ), Տիկն.ք Հ.Դուրեան, Ա.Խուպէսերեան եւ Ժ.Տըմլաքեան, Տիարք Գ.Գարապաճեան եւ Յ.Սինանեան: Տարիներու տեւողութեան, օժանդակ անվերապահ գործակցութիւն ունեցած են Տիկն.ք Ս.Միւսէլմեան, Բ.Զէքիճեան, Հ.Թուրեան, Ա.Սազայեան, Հ.Ֆրունճեան, Ա.Ճիզմէճեան եւ Օր.Փ.Զաքարեան:

«Համազգային»ի Գահիրէի վարչութիւնը 1952-ին հաստատուած է նորակառոյց «Յուսաբեր»ի տան մէջ, վարչական կազմին անդամ ունենալով Ռուբինա Օհանջանեան (ցկեանս նախագահուհի), Օննիկ Մարաշեան(ատենադպիր), Գրիգոր Ալթունեան(գանձապահ), Գրիգոր Գարապաճեան(գործավար), Աննիկ Խուպէսերեան (գոյքապահ), Արփինէ Շալճեան եւ Օր. Նուարդ Թիրեաքեան (թատերական վարիչներ), Զարուհի Պետրոսեան(երիտասարդացի վարիչ), Հայկ Աւագեան եւ Վրէժ Քէօհնէլեան: (Դ. գ.տարի, էջ 366)

Երկար տարիներ բեղուն գործունէութեամբ հանդէս եկած է 1937-ին հիմնուած «Համազգային»ի թատերախումբը, դերուսոյց ղեկավարութեամբ եւ բեմադրութեամբ Գասպար Իփեքեանի, Նուարդ Թիրեաքեանի, Արփինէ Շալճեանի, Սարգիս Վ. Սարգիսեանի, Հայկազ Գալուստեանի եւ ուրիշներու:

Թատերախումբին վարչական պատասխանատուներ եղած են Բ.Զէքիճեան(Կռանեան), Ս.Շալճեան, Վ. Գալփաքճեան, Օր.ներ. Ա.Պաղտիկեան, Գ.Եսայեան եւ Ա.Մխիթարեան:

«Համազգային»ի երկսեռ երգչախումբը հիմնուած է 1934-ին, ղեկավար ունենալով Լիպարիտ Նազարեանցը իսկ գործակից՝ Սեպուհ Շալճեանը: Հետագային, երգչախումբը ղեկավարած են Կարպիս Ափրիկեան եւ Երուանդ Ալեքսանեան, որոնք Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ, յաջորդական տասնամեակներ հայ երգը պանծացուցած են Նեղոսի հիւրընկալ ափերուն:

Աղեքսանդրիոյ մշակութային յանձնախումբին բեղուն գործունէութեան իր նպաստը բերած եւ ղեկավարած է Հմայեակ Շէմս(Սափրիչեան):

Կրթական եւ Մշակութային Ընկերակցութիւնը իր «Ուսանողաց Ֆոնտ»ին միջոցով, եզիպտահայ բազմատասնեակ երիտասարդներ իրենց երկրորդական եւ համալսարանական ուսման նիւթական օժանդակութեան եւ քաջալերութեան արժանացած են:

Հայ Կրթական Եւ Հրատարակչական «Համագգային» Ընկերութեան հրատարակութիւնը եղած է «Համագգային Տարեգիրք»ը 1936-էն սկսեալ, երեք յաջորդական տարիներով Գահիրէի Սահակ-Մեսրոպ տպարանէն:

Հրատարակուած է նաեւ Համագգային Դրոշմանկարներու Ա.շարքը, Հայ Գրի և Գրականութեան Ռահվիրաներու *“10 դրոշմանկարներ՝ Հայ Մշակոյթի Օգտին”* նպատակ-ենթախորագրով. (Տպ.Զ.Պէրպէրեան, անթուակիր):

([12]. թիւ 1886)

Յուսաբեր-ի տպարանէն, «Մատենաշար Համագգային»ը հրատարակած է Արսէն Երկաթի *Արձակ Էջեր*-ը 1957-ին, իսկ Գահիրէի վարչութիւնը՝ Ռ.Թակորի *Ամալ* թատրերգութիւնը 1961-ին:

Վերավաւերացուած պետական օրէնքներուն ընդառաջ՝ վարչութեան Ծրագիր Կանոնագիրը 1967-ին ներառնուած է «Յուսաբեր» Մշակութային Ընկերակցութեան ծրագիր-գործունէութեան մէջ:

Հայկական Ռատիոժամի Հաղորդումներ Գահիրէի Չայնասփիոնէն

Գահիրէի «Համագգային»ի Վարչութեան նախաձեռնութեամբ, Գահիրէի Պետական Չայնասփիոնի Երոպական Բաժնին մէջ **«Հայերէն հաղորդումներ»**ու ծրագրին մնայուն հաստատումը կատարուած է 1950-ականներու սկիզբը, ղեկավարութեամբ արուեստագէտ-երգչուհի Աստղիկ Բաբլանեանի:

Յիշարժան է, թէ Գահիրէի Չայնասփիոնի երոպական բաժնի պատկան մարմնի բարեհաճ տնօրինութեամբ, 1940-ականներու կէսէն սկսեալ, կայանին օրական ծրագրերու շարքին՝ քառորդական ժամ տեւողութեամբ ներառնուած են հայկական երաժշտութեան եւ երգարուեստի նմոյշներու նուիրուած պարբերական ձայնասփռումներ: Կատարուած են Տիկին Աստղիկ Բաբլանեանի դաշնամուրի նուագածութեան եւ ժողովրդական երգերու մեկնաբանութեան ձայնասփռումը, նաեւ ներկայացուած են խմբավար-երաժշտագէտ Երուանդ Ալեքսանեանի նուագածութեան եւ ղեկավարած՝ «Քնար» երգչախումբի ելոյթներէն դրուաքներ:

Հայկական հաղորդումները սկսած են սկիզբը շաբաթական կէս ժամ, ապա 1977-ին եռօրեայ կէսական՝ եւ հետագային 1982-էն՝ ամէնօրեայ եւ մէկ ժամ տեւողութեամբ, այլազան յայտագրերու պատրաստութեամբ եւ ձայնասփռումով:

Հաղորդումներուն մաս կազմած են Մանուկներու և Կնոջական յայտագիրներ, Հայկական և Եգիպտական մշակոյթներու ծանօթացում, հարցազրոյցներ, գաղութահայ ձեռնարկներու և մարզական լուրերու մասին տեղեկատուութիւն:

Հաղորդավարներ եղած են Աստղիկ Բաբլանեան, Ալիս Ճիզմէճեան, Հայկանուշ Չիթճեան, Վարդուհի Թորիկեան, Արաքսի-Այտա Տէօվլէթեան, 1973-էն՝ Սօնիա Պայրամեան, Լիւսի Երզնկացեան, Յակոբ Փամպուքեան, 1978-ին՝ Վարուժան Յ.Գազանճեան, 1990-ականներու սկիզբէն՝ Հերի Վ.Չէչճէնեան, Գրիգոր Մարգարեան եւ Սօսէ Կրպոյեան, 2005-ին՝ Սիլվա Սիմոնեան, իսկ 2011-էն Շողեր Հեղինեան եւ Արփի Խաչէրեան:

Յիսնամեակէ մը ի վեր, ամէն տարի, Գահիրէի Ս.Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարէն, Ս.Ծննդեան Ս.Պատարագը ուղիղ եթեր կը ձայնասփռուի Գահիրէի Ռատիոկայանի երոպական բաժնին:

Հաղորդումները ամէնօրեայ մէկ ժամ տեւողութեամբ՝ ցարդ կը շարունակուին հինգ հոգինոց անձնակազմով:

76. Թաշճեան Վարժարանի Սանուց Միութիւն - Գահիրէ , 1928

Սանուց Միութիւնը հիմնուած է 17 Մարտ 1928-ին, նպատակ ունենալով *«մտաւորական ինքնագարգացումով եւ տոհմային առաքինութիւններով զինուած սերունդի մը յառաջացումը, բարձր պահելու համար վարժարանին անունը եւ ազգային վարկը»:*

Առաջին առթիւ, մշակուած է Ծրագիր-Կանոնագիրը և ընտրուած՝ վարչութիւն մը, դիւանին անդամ ունենալով Բարսեղ Հաճընլեան (ատենապետ) եւ Հայկ Թորգոմեան (ատենադպիր):

Կազմակերպուած են գեղարուեստական երեկոյթներ թատերական ներկայացումով եւ կազմուած երգչախումբով՝ ղեկավարութեամբ իր սաներէն Հրանդ Կարապետեանի: ([24].գ.հտր. էջ 447)

77. Գալուստեան Սանուց «Աշակերտական Միութիւն» - Գահիրէ , 1928

Ազգային Վարժարանին «Աշակերտական Միութիւն»ը հիմնուած է դպրոցին աշակերտութեան կողմէ 1928-ին, հովանաւորութեամբ վարժարանին տնօրէն Լեւոն Թաշճեանի:

Միութեան նպատակը եղած է *«հաւաքական աշխատասիրութիւնը քաջալերել, ծանօթացնել հայ եւ օտար գրականութիւնը եւ աշակերտական գրադարան հաստատել»:*

Գրադարան հաստատելու իր ծրագրին ընդառաջ՝ Միութիւնը 1929-ին հիմնած է վարժարանին «Աղմամեան Գրադարան»ը: ([6].էջ 38 - [24]. գ.հտր.էջ 564)

78. Գալուստեան Ազգային Վարժարանի Տիկնանց Խնամակալութիւն - Գահիրէ , 1929

Խնամակալ մարմինը հիմնուած է 15 Փետրուար 1929-ին, խումբ մը ազգանուէր հայուհիներու նախաձեռնութեամբ, նպատակ ունենալով *«Գալուստեան Վարժարանի տարեշրջանի ընթացքին, կէսօրուան ձրի ճաշ հայթայթել աղքատ աշակերտներու»:*

Հիմնադիր անդամուհիներ հանդիսացած են, Տիկնայք Արաքսի Ղազար Փոլատեան, Սաթենիկ Պետրոս Տեփոյեան, Արուսեակ Վահան Զարդարեան եւ օր.ներ Նուարդ Անմահունի (էօլմէգեան), Նեկտար Ճանիկեան եւ Աննիկ Ղազիկեան: Խնամակալուհիները գործել սկսած են 21 Յունիս 1931-էն: Հետագային, վարչական անդամներ եղած են Տիկնայք Ա.Քէհեայեան եւ Ա.Պալթայեան:

Վարժարանին հիմնադրութեան օրերէն գործած են Տիկնանց Յանձնախումբեր, ձրի ճաշերու հայթայթում եւ տօնական առիթներով հագուստի բաշխում կատարելով կարիքաւոր աշակերտներուն:

Տիկնանց Խնամակալութեան ճիգերով, 1943-ին հաստատուած է վարժարանին դարմանարանը Կոկանեան եւ Յովակիմեան հաստատութիւններուն կահաւորումով, իսկ Գալուստ Կիւլպէնկեան Հաստատութիւնը 1965-ին վարժարանին ճաշարահը եւ խոհանոցը օժտած է արդիական կահոյքով:

Խնամակալութեան Ծրագիր-Կանոնագիրը առ ի վաւերացում՝ Ազգային Իշխանութեան ներկայացուած է 21 Փետրուար 1932-ին, եւ գործադրութեան համար վաւերացուած՝ Գահիրէի Քաղաքական Ժողովին կողմէ 21 Սեպտեմբեր 1932-ին: ([6]. էջ 40 - [24]. բ.հտր. էջ 569,572,576)

79. Հայ Կարմիր Խաչ - Հայ Կ(արիքի) Խաչ - Գահիրե , 1930 -

Գահիրեի Հայ Կարմիր Խաչը հիմնուած է 1 Մարտ 1930-ին, կորիզ ունենալով աւելի քան տասնամեակ մը գործած «Գահիրեի Հայուհեաց Միութիւն»ին ղեկավար տարրերը եւ անոնց շունչին տակ դաստիարակուած նուիրեալ հայուհիներու խումբը:

Հիմնադիր անդամները եղած են Հերսիլիա Նաւասարդեան, Տիրուհի Պալըզճեան, Մաքրուհի Մինասեան, Գալիբսէ Ճիզմէճեան, Արշակուհի Արթինեան, Ռօզ Մխիթարեան եւ Հրանոյշ Մալխասեան:

Հայ Կարմիր Խաչը իր առաքելութիւնը հիմնած եւ գործունէութիւնը հաստատած է «Ազգէն ծնաւ, Ազգին համար ծնաւ եւ Ազգով մեծցաւ» իր կարգախօսին հաւատքով:

Միութեան գործունէութիւնը գնահատելով, երկամեակի ընթացքին անոր անդամներուն թիւը հասած է 200-ի եւ կազմուած է Հելիոպոլսոյ մասնաճիւղը իր վարչական խորհուրդով եւ յարակից օժանդակ յանձնախումբով:

Կանանց Կարմիր Խաչը ունեցած է 1930-ին հրատարակուած 97 յօդուածներէ բաղկացած Ծրագիր-Կանոնագիր մը: 1943-ին, լոյս տեսած է վարչութեան պատրաստած Առողջապահական Անհրաժեշտ Գիտելիքներու պրակը:

(ԼԶ.1962, էջ 130 – [VII] – ([12]. թիւ 967)

Եգիպտական Ընկերային Գործոց Նախարարութեան մօտ Հայ Կարմիր Խաչը վաւերացուած է իբրեւ օգնութեան եւ բարեգործական կազմակերպութիւն:

1930-1940-ական թուականներուն, Գահիրեի Հայ Կ.Խաչը նիւթական եւ բարոյական իր միջոցներով, օժանդակութիւն ցուցաբերած է միջին արեւելեան երկիրներու գաղթականներուն, որբերու փրկութեան գործին, ներգաղթի աշխատանքներուն, երկրաշարժի աղէտեալներուն եւ հեռակայ գաղութներու ձգնաժամերու կարիքներուն: Բարեսիրական եւ խնամատարական իր առաքելութեան մէջ, Հայ Կարմիր Խաչի գործունէութիւնը ընդգրկած է հայ տկարակազմ մանուկներու «Պուտ մը կաթ»ի ֆոնտը, կարիքաւոր ընտանիքներու նիւթական ամսական օժանդակութիւնը, ուսանողներու կրթաթոշակի յատկացումը՝ ամբողջացնելու համար անոնց երկրորդական եւ համալսարանական ուսումը:

Հոգածութիւն ցուցաբերուած է ազգայիններու հիւանդանոցի, բժշկական խնամքի և դեղօրայքի ծախսերուն, շրջան մը Գահիրեի հիւանդանոցներէն մէկուն մէջ հայազգի հիւանդի մը տրամադրելի անկողինի մը ապահովումը կատարելով:

([39].էջ 192)

Մշակութային եւ դաստիարակչական գետնի վրայ, կազմակերպուած են հրապարակային դասախօսութիւններ եւ հայագիտական նիւթերու դասընթացքներ: 1933-էն, եւ երկու տարիներու տեւողութեամբ, հաստատուած է ձեւագիտութեան դասընթացք մը, և համապատասխան վկայականներու տուչութիւնը կատարուած:

Տարիներու ընթացքին Հ.Կ.Խաչի վարչութիւնը իր բարոյական եւ նիւթական օժանդակութեամբ օգտակար հանդիսացած է նաեւ օտար կազմակերպութիւններու գործունէութեան, սատարելով՝ «Պատերազմի զոհուածներու ընտանիքներու», «Հաշմանդամներու օգնութեան» եւ «Քաղցկեղի հիւանդանոց»ի ծրագիրներուն:

Եգիպտոսէն դէպի Հայաստան ներգաղթին, Հ.Կ.Խաչը իր գործակցութեամբ սատարած է Գահիրէի Առաջնորդարանի նախաձեռնութեամբ հայրենիք մեկնող հայրենակիցներուն կատարուած կահոյքի ծախսերուն և նիւթական օժանդակութեան:

Յիշարժան է, թէ 1946-ին Գահիրէի վարչութեան ճիգերով վերակազմուած է Աղեքսանդրիոյ Հ.Կ.Խաչի մասնաճիւղը, որուն գործակցութեամբ՝ Սիտի Պիշրի ծովափին գնուած է հողատարածք մը անոր վրայ գտնուող փայտաշէն կացարանով, հոն հաստատելով՝ «Հայ Կարմիր Խաչի Կայան»ը: Այստեղ, ամրան եղանակին, կազդուրուելու համար երեքական շաբաթ տեւողութեամբ ընդունուած են Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ Ազգային Վարժարաններու երկսեռ աշակերտներու խումբերը:

Հետագային, արտագաղթի եւ եգիպտահայութեան նօսրացումին, ինչպէս նաեւ Կայանին միջավայրին մէջ յառաջացած տեղական ոչ յարմար պայմաններուն պատճառով՝ Հ.Կ.Խաչի Աղեքսանդրիոյ Կայանը փակուած է 1985-ին:

1980-ին, նախաձեռնուած է «Հ.Կ.Խաչի Բարերարներ»ու ծրագիրը, որուն անդամակցած եւ զօրավիգ եղած են եգիպտահայ բարեսէր շուրջ 100 ազգայիններ:

Անմիջական բարոյական եւ նիւթական օժանդակութիւն ցուցաբերուած է 1988-ի Հայաստանի երկրաշարժի աղէտեալներուն եւ Ղարաբաղեան ազատամարտի նահատակներու ընտանիքներու կարիքներուն:

Այսպէս, 1994-էն սկսեալ եգիպտահայ Կ.Խաչը իր «Որբախնամ Բարերար»ներու ծրագրին օժանդակութեամբ, 70 ծնողագուրկ երեխաներու տարեկան ծախսերուն հոգատարութիւնը ստանձնած է մինչեւ 18 տարեկան անոնց հասակը:

2000 թուականէն, Հ.Կ.Խաչը անմիջական օգնութիւն ցուցաբերած է հայրենի մանուկներու դպրոցական վերամուտի «Երբ գալիս է Սեպտեմբերը» եւ ուսումնատենչ աշակերտներու «Բարձրագոյն ուսում»ի նպաստի ծրագիրներուն:

80. Գրասէր Օրիորդաց Միութիւն (Գ.Օ.Միութիւն) - Գահիրէ , 1930

Գրասիրաց Միութիւնը հիմնուած է 1930-ի Ապրիլ ամսուան ընթացքին:

Կազմակերպուած են դաստիարակչական նիւթերով դասախօսութիւններու շարք մը, մասնակցութեամբ Եգիպտոս այցելած մտաւորականներու, հասարակական գործիչներու եւ դաստիարակ ուսուցիչներու: (Բ. ա.տարի, թիւ 6)

81. Հայ Ոսկերչաց Կրթասիրական Միութիւն - Գահիրէ , 1932

Հիմնուած է 10 Սեպտեմբեր 1932-ին, նախաձեռնութեամբ Լեւոն Խնտամեանի եւ Գահիրէի Խան Խալիլ թաղին խումբ մը արհեստավորներու եւ առեւտրական ոսկերիչներու: Գահիրէի Պատ.Քաղաքական Ժողովը Միութեան վաւերացումը կատարած է 29 Մայիս 1933-ի իր նիստին: (ԻԲ. էջ 24)

Կրթասիրական միութեան նպատակը եղած է *«ստանձնել հոգատարութիւնը չքաւոր հայազգի երկսեռ մանուկներու եւ անոնց տալ ազգային լուրջ դաստիարակչութիւն»:*

Ոսկերչաց Միութիւնը ունեցած է 18 յօդուածներէ բաղկացած Կազմական Կանոնագիր մը (Տպ. Յակոբ Փափագեան, Գահիրէ, 1934) ([12]. թիւ 662)

Վարչութեան անդամները 1939-ին եղած են Լեւոն Խնտամեան (ատենա-

պետ), Յակոբ Մայիսեան (փոխ-ատենապետ), Խօսնակ Շամլեան (ատենադպիր),
Ղուկաս Յովակիմեան եւ Վարդան Գազանճեան (խորհրդական):

Ոսկերչաց Կրթասիրաց Միութիւնը ունեցած է անձեռնմխելի գումարով
Խնայողական Սնտուկ մը: (ԻԲ. էջ 24)

Կրթասիրացը 1939-ին ունեցած է 170 անդամ եւ 40 սաներու հոգատարու-
թիւնը ստանձնած՝ Գահիրէի Գալուստեան, Նուպարեան եւ Կիզի Հայկազեան
վարժարաններուն մէջ: (ԼԶ.1962, էջ 31)

82. «Հայ Աւետարանական Ժողովական Եկեղեցւոյ»

Տիկնանց Միութիւն - Գահիրէ, 1933-1947

Աւետարանական հոգեւոր հովիւ Վերապատուելի Հ.Յ.Համբարձումեանի
նախաձեռնութեամբ, Տիկնանց Միութիւնը հիմնուած է 1933-ին:

Ժողովական Միութեան նպատակը եղած է *«եղբայրական ձեռք երկարել
արտասահմանի քոյր եկեղեցիներուն»:*

Միութիւնը հովանաւորած է Գահիրէի Աւետարանական Ժողովական
համայնքի «Կիրակնօրեայ Դպրոց»ը պատանիներու եւ մանուկներու համար:

Վարչութեան ատենապետուի եղած է Օր.Ն.Գիպուրեան, գործակից
ունենալով՝ Տիկնայք Ն.Համբարձումեան, Մ.Սիւլահեան եւ Վ.Չազրճեան: (ԻԲ.էջ 44)

Միութիւնը վարչութիւն ունեցած է մինչեւ 1947, որմէ ետք կազմալուծուած է:
([24]. գ.հտր. էջ 387)

83. «Հայ Գրիչ» Միութիւն - Գահիրէ, 1933

Ժամանակի մտաւորական սերունդի այս Միութիւնը հիմնուած է 1933-ին:
Միութեան հինգ հիմնադիրներէն եղած է Մկրտիչ Անդրանիկ(Բէմպէճեան):
([8]. էջ 40)

84. Պերպլերեան Վարժարանի Նախկին Սանուց Միութիւն - Գահիրէ, 1933, 1944

Միութիւնը հիմնուած է Պերպլերեան Վարժարանէն շրջանաւարտ Սաներուն
նախաձեռնութեամբ, 5 Հոկտեմբեր 1933-ին, նպատակ ունենալով *«վառ պահել
նախկին եւ նոր սաներու միջեւ համերաշխութեան ոգին»:*

Վարչական կազմին անդամ եղած են Քերովբէ Կոստանդեան, Վահրամ
Թէմպէքճեան, Գառնիկ Աքիաչերեան, Նուպար Աբրահամեան, Սերովբէ
Գոյումճեան եւ Բարսէղ Հաճընլեան:

Միութիւնը վերակազմուած է 1944-ին եւ վաւերացուցած իր գործունէութեան
նոր ծրագիր-կանոնագիրը, վարչութեան անդամ եղած են Բարսէղ Հաճընլեան,
Յակոբ Աւագեան,Ալպէո Գարաճեան,Վահրամ Թէմպէքճեան եւ Մկրտիչ Արեւեան:

Սանուց Միութիւնը 1945-ին հրատարակած է Մաննիկ Պերպլերեանի «Երեք
Վիպակներ» եւ «Հեթանոս Տղայ» հատորները:

([24]. գ.հտր էջ 520 -[12]. թիւ 1040,1041)

85. Գահիրէի Հայ Ուսուցչական Միութիւն - Գահիրէ, 1933-1935

Եգիպտահայ Ուսուցչաց Միութիւն - 1935

Ուսուցչական Միութիւնը հիմնուած է 1933-ին, նպատակ ունենալով
*«սատարել իր անդամներուն մտաւոր, բարոյական եւ ֆիզիքական զարգացման,
ձգտելով՝ եգիպտահայ գաղութի կրթական գործի բարձրացման»:*

([II] – [12]. թիւ 610)

Միութեան Ծրագիր-Կանոնագիրը (Տպ.Սահակ-Մեսրոպ, Գահիրե, 48 յօդուած, 19 էջ, 1933) վաւերացուած է Գահիրեի Պատ. Քաղաքական Ժողովի 13 Փետրուար 1933-ի նիստին: Կանոնագրի վերջաւորութեան յիշուած է, թէ «միութիւնը լուծուած կը համարուի երբ իր անդամներուն թիւը *ուրէն* պակաս է»: ([II] - [12]. թիւ 610)

Ուսուցչաց Միութեան վարչութեան հիմնադիր անդամ եղած են Բենիամին Թաշեան, Քերովբէ Կոստանդեան եւ Գրիգոր Դարբինեան: ([8]. էջ 168,194)

Գահիրեի եւ Աղեքսանդրիոյ Ուսուցչական Միութիւնները միաձուլուած են 1935-ին, վերակոչուելով «**Եգիպտահայ Ուսուցչաց Միութիւն**»:

«Հայ Ուսուցչական Միութիւն»ը հրատարակած է «Հայ Դպրոց» մանկավարժական ամսագիր ապա կիսամեան, 1933ին՝ 10 պրակ, 1935-ին՝ եւ 1938-ին՝ մէկական պրակ, Գահիրեի եւ Աղեքսանդրիոյ մէջ: ([14]. էջ 196)

Ուսուցչաց Միութեան Գահիրեի հատուածը 1933-ին լոյս ընծայած է Ս.Պետրոսեանի «Ընկերական Կեանք Եւ Իր Քաղաքակրթական Դերը» գրքոյկին, իսկ Միացեալ Միութիւնը 1939-ին հրատարակած է Յ.Թումանեանի «Մասունցի Դաւիթ» նկարագարողուած գրքոյկը: ([12]. թիւ 635, 882)

86. Գահիրեի Հայ Ուսուցչական Խնայողական Ընկերութիւն - Գահիրե , 1933

Հայ ուսուցիչներու ի նպաստ ծրագրով կազմուած այս Խնայողական Ընկերութիւնը հիմնուած է 1933-ին:

Ունեցած է Կանոնագիր մը (Տպ.Սահակ-Մեսրոպ, Գահիրե, 16 էջ, 1933:

([II]. - [12]. թիւ 612)

87. Հայ Աւետարանական Ժողովական Եկեղեցոյ

Երկսեռ Երիտ. Քրիստ. Ընկերակցութիւն - Գահիրե ,1934

Երիտասարդաց Ընկերակցութիւնը հիմնուած է 1934-ին, նախաձեռնութեամբ անոր նախագահութիւնը ստանձնած Վեր. Հ.Յ.Համբարձումեանի:

Վարչութեան անդամակցած են Լեւոն Կիւզելիմեան, Արմէն Սարգիսեան եւ Մարտիկ Փիլիպպոսեան: (ԻԲ. էջ 44)

88. «Ս.Մեսրոպ» Հայ Կաթողիկէ Երիտ. Մասնաժողով (միութիւն) - Գահիրե , 1934

Երիտ. Միութիւնը հիմնուած է 1934-ին, Պօղոս Ծ.Վրդ. Շիրիկճեանի նախաձեռնութեամբ, իբրեւ մէկ ճիւղը Ս.Վինկէնտիոս Պաղայեցիի մեծ ընկերութեան:

Մասնաժողովին նպատակը եղած է «*օգնել կարօտին եւ ուսանողութեան*»:

Ընկերութիւնը նպաստ բաշխած է բազմանդամ ընտանիքներու եւ աշակերտներու ընդունելութիւնը յաջողոցուցած Միխիթարեան եւ Անարատ Յղութեան Քոյրերու վարժարաններուն մէջ:

Միութեան Տիկնանց Յանձնախումբը աջակցած է Երիտասարդացի կազմակերպած ձեռնարկներուն: (ԼԶ.1962, էջ 131 [24]. գ.հտր. էջ 361)

89. Միխիթարեան Նախկին Սաներու Միութիւն - Գահիրե , 1934 - 1937

Գահիրեի Միխիթարեան Վարժարանի Նախկին Սանուց Միութիւն -

Գահիրե , 1951-1964

Միխիթարեան Սաներու Միութիւնը հիմնուած է 1934-ին, նպատակ ունենալով «*ծաղկուն վիճակի հասցնել Գահիրեի մէջ 1934-1935 տարեշրջանին*

Հ.Վարդան Վրդ. Մելքիսեդեանի նախաձեռնությամբ հաստատուած Ս.Գրիգոր Լուսավորիչ Հայ Կաթողիկէ Մխիթարեան Միաբանութեան նորաբաց Վարժարանը»:

Սանուց Միութեան կեդրոնատեղին, սկզբնական շրջանին եղած է վարժարանին Տարպ-Էլ-Կէնէնա թաղաշրջանի վայրը:

Հիմնադիր-Տնօրէն Մելքիսեդեան վարդապետի մեկնումով՝ Միութիւնը լուծուած է Մայիս 1937-ին:

Միութիւնը վերակազմուած է 1951-ին, «**Գահիրէի Մխիթարեան Վարժարանի Նախկին Սանուց Միութիւն**» անունով եւ ունեցած 40 յօդուածներէ բաղկացած իր Կանոնագիրը 1952-ին, (Տպ.Սահակ-Մեսրոպ, Գահիրէ, 15 էջ): ([12]. թիւ 1274)

Վերակազմեալ Միութեան նպատակը եղած է «*Զարգացնել բարեկամական կապերը եւ գործակցական ոգին Մխիթարեան Վարժարանի նախկին սաներուն միջեւ եւ զօրավիզ ըլլալ վարժարանին՝ նիւթապէս եւ բարոյապէս*»:

Սանուց Միութեան վարչութեան անդամ եղած են Ժիրայր Ճիգմէճեան, Պօղոս Նազաշեան, Յակոբ Ոսկերիչեան եւ ուրիշներ:

Միութիւնը հետագային գործած է Հելիոպոլսոյ նորակառոյց վարժարանին մէջ մինչեւ անոր փակումը 1964-ին:

(ԼԶ.1959-60, էջ 29 - ԼԶ.1962, էջ 132 – [24]. գ.հտր. էջ 359-371)

90. Հայ Աւետարանական «Զանաւիրաց» Երիտասարդական Միութիւն -

Գահիրէ , 1935 , 1937

Զանաւիրաց Միութիւնը հիմնուած է 1935-ին, Հայ Բողոքական Երիտասարդներու նախաձեռնությամբ, և ունեցած՝ միամեայ կարճատեւ գործունէութիւն մը: 1937-ին, Միութիւնը վերակազմուած է Վերպ. Թէօտոր Եագուպ Տաղլեանի թելադրությամբ եւ ունեցած է ընկերային եւ մշակութային աշխոյժ գործունէութիւն: Միութեան նախաձեռնությամբ հիմնուած է 6 անդամներէ կազմուած «Զանաւիրաց Նուագախումբ»ը 1937-ին:

(ԼԶ.1962, էջ 32 – ԻԲ. էջ 42 – [24]. գ.հտր. էջ 386)

91. «Մտաւորական Սպասարկութեան Գրասենեակ» - Գահիրէ , 1935-1956

“Bureau De Services Intellectuels”

Գրասենեակը հիմնուած է 1935-ին, նախաձեռնությամբ վաստակաւոր պատմաբան Արշակ Ալայօյաճեանի, նպատակ ունենալով «*հայ արժէքներու գնահատումը եւ հայ մշակոյթին ծանօթացումը սփիւռքի հայութեան*»:

Սպասարկութեան կապի հասցէն եղած է թիւ 16, Էլ Մեհտի փողոց, Գահիրէ:
(Ժ.տետր ք. – [8]. էջ 250)

Գրասենեակը, իր գործունէութեան ծիրին մէջ *1.Պատրաստ եղած է հայթայթելու բոլոր նոր հրատարակուած գիրքեր. 2. Տրամադրուած է գոհացում տալ գրասէրներուն՝ եւ մասնաւոր նիւթով շահագրգռողներուն հայթայթել հին գիրքեր, ատաղձներ եւ ծանօթութիւններ*: (Ժ.տետր ք.)

Հոկտեմբեր 1941-էն սկսեալ, գրասենեակը իր տրամադրութեան տակ ունեցած է տպարան մը, «*զարկ տալու համար Հայ լեզուով հրատարակութիւններու, որոնք աւելի խնամքով եւ կանոնաւոր կերպով կրնան կատարուիլ*»: (Ժ.տետր դ.)

Հրատարակչական գործունէությամբ ծանօթ գրասենեակին կողմէ, անոր

հիմնադիր Ա.Ալպոյաճեանի խմբագրութեամբ լոյս տեսած են «Գրասէրի Առաջնորդ» պարբերականին Ա.էն Ե.թիւերը 1938-էն 1949 տարիներուն (Տպ.«Մեւան» տետր ա.և բ., Տպ.«Սահակ-Մեսրոպ» տետր գ., Տպ.«Նուպար» տետր դ.և ե.): «Գրասէրի Առաջնորդ»ը եղած է անվճար տրամադրելի հրատարակութիւն մը: ([12]. թիւ 824,874,933,970,1175)

Գրասենեակը հրատարակած է նաև՝ թիւ 1-էն 9 հատորներու շարք մը, որոնց կարգին՝ Արշակ Ալպոյաճեանի «Թորգոմ Պատրիարք Գուշակեան» (1940), «Պատմութիւն Հայ Գաղթականութեան» (ա.1941 և բ.1955), «Հայ Եկեղեցիին Սահմանադրութեան Հարցը»(1945) եւ Զաւէն Արքեպս.ի «Պատրիարքական Յուշերս»(1947) հատորները:

Գրասենեակին յիշեալ հրատարակչականը նիւթական աջակցութիւնը վայելած է գրասէր անհատներու: (Ժ.տետր գ.)

92. Հրագրան Գործակալութիւն - Գահիրէ , 1936

Գործակալութիւնը հիմնուած է 1936-ին, թիւ 152 , Էմատէտտին փողոց, Գահիրէի հասցէին, նպատակ ունենալով *«ղիւրութիւններ տալ հանրութեան իր ծրագրով նախատեսուած գործառնութիւններուն մէջ»:*

Մամուլով կատարած իր ծանուցումին մէջ, գրասենեակը յայտնած է, թէ կը զբաղի հետեւեալ գործառնութիւններով.

Ա. *Փոխատուութիւններու հայթայթում*, համաձայնութեամբ դրամատէրներու հետ, որոնք տրամադիր են իր միջոցաւ փոխատուութիւններ ընելու պէտք ունեցողներուն, որոնք անհրաժեշտ ապահովութիւնները կրնան կատարել:

Բ. *Հետապնդումներու կատարում*, ստանձնելով դատական գործերու հետապնդումը, ցոյց տալով անհրաժեշտ դիւրութիւններ, ապահովուած խորհրդապահութեամբ:

Գ. *Պաշտօնեաներու գործի հայթայթում*, առեւտրական եւ կրթական հաստատութեանց մէջ:

Դ. *Հրատարակութիւններու կատարում*, կարգ մը օգտակար մատեաններու եւ դասագրքերու, հեղինակներու հետ մասնաւոր բանակցութեամբ:

Ե. *Գիրքերու հայթայթում*, ամէն տեսակի հայերէն գիրքերու՝ հին եւ նոր, դիւրութիւններ տալով հին ու հազուագիւտ գիրքեր փնտռողներուն, տրամադրելով նաեւ լրագրական հաւաքածոներ: (Բ.1936, թիւ 1)

93. Հայ Եւ Եգիպտացոց Միութիւն - Գահիրէ , 1936

Բարեկամական կապեր հաստատելու միտումով նախաձեռնուած Միութիւնը հիմնուած է 1936-ին, կեդրոն ունենալով Գահիրէն եւ մասնաճիւղեր կազմելու տրամադրութիւն ցուցաբերելով Աղեքսանդրիոյ եւ այլ արուարձաններու մէջ:

Միութեան անդամակցութեան ընդունուած են Եգիպտոսի մէջ բնակող հայերը, առանց դաւանանքի եւ կուսակցութեան խտրութեան եւ նպատակը եղած է *«Հայերու եւ Եգիպտացիներու միջեւ զոյութիւն ունեցող յարաբերութիւնները պահել, ամրապնդել եւ զարգացնել»:*

Հիմնադիրները եղած են Փրոֆ.Տէլեմաք Բարթողեան, Մէթր Ահմէտ Էլ Սայէտ Ապու Էլ Մէուտ, Ապտէլ Սալամ Էֆ.Մուսթաֆա, Տոքթ.Կարալիս Սթէֆան, Լեւոն Հէքիմեան, Վարդ Թէմպէք, Ալպէռ Սարգիսեան, Վահրամ Թէմպէքիճեան,

Տոքթ. Պողոս Շամլեան, Յակոբ Յակոբեան, Գրիգոր Գալֆա Գալֆաեան, Յովհաննէս Տէր Մկրտիչեան, Տոքթ. Ամին Շարօպիմ, Ժօրժ Էֆ. Էլ Կամալ, Իզզէթ Էֆ. Թէվֆիք:
([XVI] - [12]. 743)

Վարչական ժողովի դիւանին անդամակցած են. Փրոֆ. Տէլեմաք Բարթողեան (ատենապետ), Մէթր Ահմէտ Էլ Սաիտ Ապու Էլ Մէուտ (փոխ-ատենապետ), Տոքթ. Կարպիս Սթեֆան (գանձապետ), Լեւոն Հէքիմեան (ատենադպիր), Ալպէր Սարգիսեան (փոխ-ատենադպիր), Յովհաննէս Տէր Մկրտիչեան, Յակոբ Յակոբեան, Տոքթ. Պողոս Շամլեան եւ Գրիգոր Գալֆա (խորհրդականներ): Գրասենեակ-կէդրոնին հասցէն եղած է Բարթողեան Շէնք (Շէմլայի կողքին) Ֆուատ Էլ Էվլէլ Փողոց (ներկայիս՝ 26 Յուլիս), Գահիրէ:

Միութիւնը ունեցած է իր Կանոնագիրը Հայերէն եւ Արաբերէն լեզուներով, قانون الجمعية المصرية الأرمنية (Տպ. Սահակ-Մեսրոպ, Գահիրէ, 28 Էջ, 1936), որուն բ.բաժնին մէջ (Էջ 5) յիշուած է «Միութեան կրնան անդամակցիլ ամէն չափահաս Հայ եւ Եգիպտացի»:
([XVI] - [12]. թիւ 743)

94. Հ.Յ.Դ. Եգիպտոսի Երիտասարդաց Միութիւն - Գահիրէ, 1939

Հ.Յ.Դաշնակցութեան Երիտասարդաց Միութիւն - Գահիրէ

«Յուսաբեր» Երիտասարդաց Միութիւն, 1970 -

Եգիպտոսի Հ.Յ.Դ. Երիտասարդաց Միութիւնը հիմնուած է 1939-ի աշնան, նախաձեռնութեամբ Հ.Յ.Դ. ղեկավար դէմքերէն Գաբրիէլ Լազեանի, նպատակ ունենալով «գաղութի երիտասարդական կեանքին տալ ազգային ուղղութիւն եւ հայրենասիրական շունչ»:

Անդրանիկ ժողովը գումարուած է Քանթարէթ Էլ Տէքքայի Հ.Յ.Դ. Ակումբին մէջ, մասնակցութեամբ 15էն 20 տարեկան հաւատաւոր երկսեռ երիտասարդներու, որոնց կարգին՝ Մերօ Եսայեան, Վարուժան Ազապլար, Սեդա Մխիթարեան, Վահիկ(Վահէ) եւ Լալիկ(Լեւոն) Տէր Մինասեան, Փայլակ Պալեան, Վահէ Աշուկեան, Բէզլար Նաւասարդեան, Վիգէն Օհանջանեան, Պերճ Սարլեան, Վազգէն Մալիասեան, Շաւարշ Մինասեան, Խաժակ Պալըզճեան, Կարպիս Մանուկեան եւ ուրիշներ:
(ԼԱ.- [12]. թիւ 1251,1305,1403)

Նորակազմ Երիտասարդացի անդամներուն առաջին հրատարակութիւնը եղած է 24 էջերէ կազմուած «Մայիս 28»ի նուիրուած պրակը Յունիս 1940-ին: Ապա, լոյս ընծայած են «Ծրագիր Հ.Յ.Դ. դասախօսութիւններու» գրքոյկները 1942-ին եւ 1949-ին, Գ.Լազեանի «Յեղափոխական Դէմքեր»ը 1945-ին, «Ազգային Երգեր»ը 1950-ին եւ Ն.Պէշիկթաշլեանի «Այց Մը Հ.Յ.Դ. Թանգարանին»ը 1955-ին:

([12]. թիւ 920, 954,1021,1184,1196,1379)

Միութեան Վարիչ Մարմնի անդամներուն հսկողութեամբ տեղի ունեցած են «Երիտասարդական»ի շաբաթական հաւաքոյթները, Միութեան Կանոնագրին հետեւողականութեամբ եւ դաստիարակչական անոր ծրագրին կիրարկումով:

Կազմակերպուած են դասախօսութիւններ, վիճաբանական երեկոյթներ, գրական դատավարութիւններու, հայ մամուլէ ընթերցումներու, դէպքերու եւ դէմքերու ծանօթացումի հերթական հաւաքներ:

Վարիչ Մարմինը 1964-ին հրատարակած է Երիտասարդաց Միութեան հիմնադրութեան 25-ամեակին նուիրուած «Յուսաբեր»ի բացառիկը: ([12]. թիւ 1555)

1951-ին կազմուած է Հ.Յ.Դ. Եգիպտոսի շրջանի Երիտասարդաց Կեդրոնական Վարչութիւնը իրեն ենթակայ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մասնաճիւղերով: Կեդր.Վարչութիւնը 1951-ին եւ 1953-ին հրապարակած է Հայ Երիտասարդութեան նուիրում «Յուսաբեր»ի երկու բացառիկներ: ([12]. թիւ 1251,1305)

Գահիրէի հաւաքոյթները տեղի ունեցած են պատանեկանի եւ երիտասարդականի «Հայդուկ», «Ֆետայի», «Ռոստոմ», «Սասուն», «Դրօ», նաեւ՝ օրիորդաց «Նայիրի», «Սօսէ», «Արաքս», «Ռուբինա» խումբերու մասնակցութեամբ:

Գահիրէի Երիտասարդացը Փետրուար 1956-ին հրատարակած է Երիտասարդութեան նուիրում «Յուսաբեր»ի բացառիկը, իսկ 1959-ին՝, Գ.Լազեանի «Հայուհին Եւ Հայ Յեղափոխութիւնը» գրքոյկը: ([12]. թիւ 1403,1468)

Միութեան «Պատանեկան» միաւորը 1954-ին հրատարակած է «Մշակ» պատանեկան ամսաթերթի Ա. եւ Բ. համարները: («Հունձք» 1954, պրկ.Ե.)

Հետագային, «Յուսաբեր» Տան երրորդ յարկի «Դալար Տանիք»ին կից հաստատուած է Երիտասարդացի ժողովասրահը իր 1700 հատորներու գրադարանով:

Արտագաղթի պատճառով նօսրացած է գաղութի երիտասարդ անդամներու թիւը եւ հետեւաբար ամփոփուած է միութենական երիտասարդական կառոյցներու գործունէութիւնը:

1970-ականներու սկիզբէն Հ.Յ.Դ. Երիտասարդականը իր գործունէութիւնը տարած է **«Յուսաբեր Երիտասարդաց Միութիւն»** անունով եւ գործած է Գահիրէի «Յուսաբեր»ի Տան իր կեդրոնին եւ Հելիոպոլսոյ «Յուսաբեր» Ակումբէն ներս իր հաւաքավայրին մէջ:

1972-ին կազմուած են երիտ-պատանեկան միաւորներու երկսեռ «Սարտարապատ» պարախումբը եւ մանկապատանեկան «Ծաղկաստան» երգչախումբը, որոնք հրապարակային տարեկան ելոյթներով խանդավառած են ներկայ հասարակութիւնը: Պարախումբն ու Երգչախումբը իրենց մասնակցութիւնը բերած են նաեւ գաղութահայ միջ-միութենական մշակութային ձեռնարկներուն:

Յ.Ե.Միութիւնը 1988-1889-ին, լոյս ընծայած է “Դէմքեր Եւ Ստածումներ”ու թիւ 1 եւ 2 պրակները, նաեւ՝ ամփոփ “Յեղափոխական Երգարան” մը 1990-ին: ([12]. թիւ 1734,1738,1750)

«Յուսաբեր» Երիտասարդաց Միութիւնը 1985-1986 հրատարակած է «Երիտասարդ Յուսաբեր» պարբերականը (16 թիւ), նաեւ «Սպիտակ» երկամսեան 1992/1993-ին (5 թիւ): ([14]. էջ 328, 336)

Ահարոնեան Ուսանողական Խումբ - Գահիրէ , 1953

Խումբը կազմուած է 1953-ին, Հ.Յ.Դ.Երիտ.Միութեան Եգիպտոսի Շրջանի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ, նպատակ ունենալով *«սերտացնել շփումը տարբեր վարժարաններ յաճախող ուսանողներու միջեւ»:*

Ուսանողականին կազմութեան առթիւ, յղուած հրաւերին ընդառաջ ընդհանուր ժողով գումարուած է եւ վաւերացուած՝ առաջադրուած Կանոնագիրը:

Առաջին հաւաքոյթը տեղի ունեցած է 24 Յունիս 1953-ին, բարձրագոյն վարժարաններէ շրջանաւարտներու եւ համալսարանական ուսանողներու մասնակցութեամբ: Այդ առթիւ, նշանակուած է առժամեայ դիւան մը եւ հետագայ գործունէութեան ծրագիրը մշակուած:

Կազմակերպուած են 8 դասախօսութիւններ մինչեւ 11 Օգոստոս 1953:

(Շրջաբերական, 11 Օգոստոս 1953)

95. «Լուսաւորչական Եղբայրութիւն» Շարժում - Գահիրէ , 1940

Հոգեմտաւոր զարգացումի նպատակով՝ Բիւզանդ Կեօզիւպէօյիքեանի նախաձեռնութեամբ կազմուած Շարժումը հիմնուած է 1940-ականներու սկիզբը:

Շարժումին գործունէութեան մաս կազմած են քրիստոնէական-դաստիարակչական բնոյթով լսարանային հաւաքոյթներ: ([8].էջ 214,215)

96. «Ազգային Դարմանատուն» Հայոց - Գահիրէ , 1941 -

«Արգարեան Ազգային Դարմանատուն» - Գահիրէ , 1957-1980

Ազգային Դարմանատան հաստատումին նախաձեռնողն ու հիմնադիրը եղած է Արժանապատիւ Տ.Պսակ Քհնյ.Խաչիկեան, անմիջական գործակցութեամբ Բժիշկ Լեւոն Եփրեմեանի եւ դեղաբանատէր Պր.Եղուարդ Այրասեանի:

Դարմանատունը հաստատուած է Պէյն Էլ Սուրէյնի թաղաշրջանին նախկին Ազգային Առաջնորդարանի շէնքին մէջ, թիւ 35, Պէյն Էլ Սուրէյն Փողոց, Գահիրէ:

Բացումը կատարուած է Դժ.19 Նոյեմբեր 1941-ին, առաջին առթիւ ընդունելով բժշկական խնամքի կարօտ երկու տասնեակ հայ հիւանդներ:

Ազգային Իշխանութիւնը նկատելով Դարմանատան գործունէութեան տարողութիւնը եւ գնահատելով անոր ազգօգուտ հանգամանքը, որոշած է 1945 Յունուար 1-էն սկսեալ անոր հովանաւորութիւնը ստանձնել եւ եօթը ազգայիններէ բաղկացած հոգաբարձութեան մը կազմելով՝ դարմանատան իբրեւ կեդրոն տրամադրած է հին Առաջնորդարանին մէջ գտնուող հինգ սենեակնոց յարկաբաժինը:

1947 Փետրուար 4-էն սկսեալ հաստատուած է նաեւ «Փոքրերու հիւանդութեանց» բաժինը հսկողութեամբ Բժշկուհի Տիկին Աստղիկ Մաճառեանի:

19 Ապրիլ 1950-ին, Գահիրէի Քաղաքական Ժողովը Դարմանատան Հոգաբարձութեան կողքին կազմած է Տիկնանց և Օրիորդաց Օժանդակ Յանձնախումբը:

Դարմանատան դեղերը ձրիաբար եւ զեղչեալ գիներով հայթայթած են Արտաշէս Մեսթեանի եւ Եղուարդ Այրասեանի «Աթապա» դեղաբանները:

Դարմանատան հիւանդներուն սիրայօժար քննութիւն կատարած են մասնագէտ բժիշկներ Լ.Եփրեմեան, Ա.Աբրահամեան, Պ.Փիլիպպոսեան, Շ.Ագիաչեան, Ն.Սանտալճեան, Գ.Տէր Գեորգեան, Եր.Խաթանասեան, Ե.Գըլըճեան, Շ.Սեյօնքեան, Զ.Խաչատուրեան եւ Վ.Աւագեան:

([2] – [12]. թիւ 1258)

Արգարեան Ազգային Դարմանատուն - Գահիրէ , 1957-1980

Հետագային հաստատուած Ազգային Դարմանատունը կառուցուած է Գահիրէի Ս.Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ շրջապատի Ազգային Առաջնորդարանին կից տարածքին վրայ, թիւ 179, Ռամսէս Պողոտայ, բարերարութեամբ՝ Ֆիլիփ եւ Արաքսի Արգարեան բարեպաշտ ամուլին:

Երկարկ դարմանատան նախագիծը պատրաստած է ճարտարապետ Հրազդան Պալեան:

Նորակառոյց եւ ժամանակակից սարքերով կահաւորուած դարմանատան բացումը կատարուած է Կիր. 7 Ապրիլ 1957-ին: ([1] - [12]. թիւ 1412)

Գահիրէի մէջ գործող տասնեակ մը մասնագէտ հայ բժիշկներու դարմանական անսակարկ խնամքին արժանացած են բազմահազար հայ եւ օտար հիւանդներ, հայ դեղաբանատէրերէ ստանալով նաեւ զեղչեալ գիներով դեղօրայք:

Գահիրեի հայ համայնքին նօսրացումին և տիրող պայմաններուն ընդառաջ՝ Դարմանատունը գործել է դադրած է 1970-ականներու վերջաւորութեան:

Հետագային, կառոյցին գետնայարկը տրամադրուած է Գահիրեի Բարեսի-րաց Միութեան վարչական գրասենեակի աշխատանքներուն, իսկ առաջին յարկին մէջ հաստատուած է Ազգային Առաջնորդարանի «Թորգումեան Մատենադարան»ը:

Վերջին երկամեակին, կառոյցին շինութիւնը բարձրացուած է յարկով մը, ուր հաստատուած են Ազգային Առաջնորդարանի կալուածոց եւ փաստաբաններու բաժնին գրասենեակները:

97. «Հայ Գիրքի Բարեկամներու Ընկերակցութիւն» - Գահիրե , 1941

Գիրքի Ընկերակցութիւնը հիմնուած է 1941-ին, նախաձեռնութեամբ Բենիամին Թաշեանի, Քերովբէ Կոստանդեանի, Արշամ Տատրեանի, Առաքել Պատրիկի եւ Սարգիս Սահակեանի: Աղեքսանդրիայէն, Ընկերակցութեան անդամ եղած է Մկրտիչ Անդրանիկ (Բեմպէճեան): ([8]. էջ 40)

Հիմնադիրներուն եւ համակիրներու մասնակցութեամբ կազմակերպուած են ժամանակակից հրատարակութիւններու շուրջ գրական ասուլիսներ:

Ընկերակցութիւնը հրատարակած է «Էջեր Հայ Գրականութենէն»-(ա.հատոր, 12 պրակ, 1942 / բ.հատոր, 1943), «Յովսէփ Շիշմանեան-Ծերենց»(1946) եւ Սարգիս Սահակեանի «Բարձրբերդ»ը(1946): ([12]. թիւ 951,974,1083,1086)

98. Հայ Մշակոյթի Բարեկամներու Մարմին (Հ.Մ.Բ.Մ.) - Գահիրե , 1941-1998

Հայ մշակոյթին ծառայելու կոչուած բարեկամներու Մարմինը հիմնուած է 3 Նոյեմբեր 1941-ին, եւ ունեցած է վաւերացուած եւ հրատարակուած իր Ծրագիր-Կանոնագիրը (Տպ.Նեղոս, Գահիրե, 12 էջ, 1941): ([12]. թիւ 938)

Հայ Մշակոյթի Բարեկամներու Մարմինն նպատակը եղած է «*Եզիպտոսի հիւրընկալ ժողովուրդին եւ երկրին օտար տարրերուն լաւագոյնս ճանցնել հայ ժողովուրդին մշակոյթը*»:

Մարմինն հիմնադիր եւ վարչական խորհուրդին մաս կազմած են Արամեան Յակոբ, Գարամանեան Զենոն, Խաթանասեան Տոքթ. Երուանդ, Կոկանեան Կայծ, Պատրիկ Առաքել, Սարուխան Ալեքսանտր եւ Տրենց-Մարգարեան Երուանդ:

(Ծրագիր-Կանոնագիր, Նոյ.1941)

1960-ի շրջանին, վարչութեան անդամակցած են Երուանդ Տրենց-Մարգարեան(նախագահ), Ալեքսանտր Սարուխան(փոխ նախագահ), Անդրանիկ Արթինեան(ատենադպիր), Կայծ Կոկանեան(գանձապահ), Արտաշէս Օրագեան եւ Վահրամ Բրուտեան(խորհրդականներ): (ԼԶ.1959-1960, էջ 28)

Իր Կանոնագրով, Մ.Բ.Մարմինը ծրագրած է «*ա) Միատեղել Հայ մշակոյթին եւ քաղաքակրթութեան մասին տարբեր լեզուներով հրատարակուած երկասիրութիւններ, վիճակագրութիւններ եւ յօդուածներ. բ) Յարաբերութեան մէջ մտնել երկրին մամուլին եւ մշակութային կազմակերպութիւններու հետ. գ) Լոյս ընծայել հայ ժողովուրդին գրականութեան, արուեստներուն եւ պատմութեան մասին զանազան լեզուներով հրատարակութիւններ. դ) Հայ ժողովուրդին մշակութային իրագործումները ճանչցնելու նպատակով՝ գեղարուեստական եւ գրական հաւաքոյթներ եւ ցուցահանդէսներ կազմակերպել*»:

Մշակոյթի Մարմինն նախաձեռնութեամբ կազմակերպուած են Հայ

Մշակույթի ծանօթացումին նուիրուած ցուցահանդէսներ: Հայ Արուեստին նուիրուած առաջին ցուցահանդէսը կայացած է 1943-ին, Եգիպտահայ Նկարիչներու գործերուն նուիրուած ցուցահանդէսներ 1945-ին եւ 1958-ին (31 արուեստագէտ, 159 նկար), Միջնադարեան Հայկական Ճարտարապետութեան ցուցահանդէսներ, առաջինը՝ 1951-ին Գահիրէ, Տիրան Գալպճեանի պատրաստած եկեղեցիներու մանրակերտ նմոյշներու, եւ երկրորդը՝ 1955-ին (Աղեքսանդրիա):

Կազմակերպուած են հայ երաժշտութեան նուիրուած նուագահանդէս եւ հայ գործիչներու ի պատիւ յոբելենական ոգեկոչումի հանդիսութիւններ:

Բարեկամներու Մարմինը լոյս ընծայած է հայ մշակույթին նուիրուած հրատարակութիւններ, «Հայաստան Դարերու Ընդմէջէն» պատկերազարդ, չորս լեզուներով անջատ ալպոմները (Տպ.Ռ.Մաթոսեան եւ Ընկ.,1944, Գահիրէ), «Միջնադարեան Հայ Ճարտարապետութիւն» գունաւոր եւ չորս լեզուներով հատորը (Տպ.Նոր Աստղ,1951, Գահիրէ), Հայ Ճարտարապետութեան գոհարին նուիրուած «Զուարթնոց» պատկերազարդ հատորը (Տպ.Յուսաբեր,1956,Գահիրէ) եւ կարեւորագոյնը՝ Օննիկ Աւետիսեանի «Հայ Նկարիչներ եւ Քանդակագործներ» ֆրանսերէն լեզուով գեղատիպ եւ գունաւոր 493 էջնոց ստուարածաւալ հատորը 1959-ին:

([12]. թիւ 998,1262,1410)

Գաղութահայ եւ տեղական ինքնամփոփ գործունէութեան պայմաններուն ընդառաջ՝ Մշակութային բազմաբնոյն այս միաւորը կազմալոյծ եղած է 1998-ին:

Հայ Մշակույթի Բարեկամներու Մարմնին նախկին անդամներուն եւ Գահիրէի Ամերիկեան Համալսարանի գործակցութեամբ, 2008-ին հրատարակուած է սրբանկարիչ Յովհաննէս Երուսաղէմացիին (18-րդ դար) նուիրուած անգլերէն լեզուով հատորը, հեղինակութեամբ Մակտի Կիրկիսի: Գեղատիպ եւ գունաւոր այս հրատարակութեան ներկայացումը կատարուած է Գահիրէի Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան կողմէ նոյն տարին:

99. Հայ Ազգային Հիմնադրամ (Հ.Ա.Հ.) - Գահիրէ, 1942 -

Ազգային Հիմնադրամը հիմնուած է 27 Մայիս 1942-ին, նպատակ ունենալով *«անձեռնմխելի դրամագլուխի մը եկամուտներու խոհական գործածութեան ճամբով, նոր սերունդը պատրաստել ազգային ծառայութեան»*:

Հ.Ա.Հ.-ի հիմնադրութեան գաղափարը յղացած է Էօժէն Բաբազեան 1939-ին:

Հիմնադիր Ժողովին ներկայ գտնուած են Վահան Թէքէեան, Էօժէն Բաբազեան, Լեւոն Կոկանեան, Մկրտիչ Մսերլեան, Պետրոս Տեփոյեան, Տիգրան Մերճանեան եւ Շաւարշ Սելյօնքեան:

Իբր հիմնադիր, պայմանագրութիւնը ստորագրած են նաեւ Միհրան Տամատեան, Տոքթ.Հայկ Վառվառեան, Աշոտ Գասապեան եւ Տիգրան Ալեքսանեան:

Հիմնադրամի Ա.Վարիչ մարմնին անդամակցած են Վահան Թէքէեան, Էօժէն Բաբազեան եւ Մերթ Շաւարշ Սելյօնքեան, իսկ յաջորդ հնգանդամ մարմնին՝ Լեւոն Կոկանեան, Տիգրան Մերճանեան, Տիգրան Ալեքսանեան, Պետրոս Տեփոյեան եւ Էօժէն Բաբազեան:

([28]. էջ 13,22,23,74)

Հայ Ազգային Հիմնադրամի Կանոնագիրը Ներքին Գործոց Նախարարութեան վաւերացումին արժանացած է 1947-ին, եւ բարեփոխուած իր 25 յօդուածներով՝ 1959-ին: Կանոնագիրը 54 յօդուածներով պատշաճեցումի ենթարկուած է 1964-ին եւ յաւելուալ յօդուածով՝ 1975-ին:

([28]. էջ 96,107,126)

Հ.Ա.Հիմնադրամը առաջին առթիւ հովանաւորութիւնը ստանձնած է «Արեւ» օրաթերթի հրատարակութեան եւ իր նախաձեռնութեամբ կառուցուած եւ հաստատուած է Հելիոպոլսոյ Կոկանեան Սրահը 1949-ին:

Հրատարակուած է *«Հայ Ազգային Հիմնադրամ, մտածումներ տնտեսական կառուցուածքի մը կարելիութիւններուն մասին գաղթաշխարհի հայապահպանման ի նպաստ»* խորագրով երկլեզու (Հայ. եւ Անգլ.), 39 էջոց անթուակիր պրակը: ([12]. թիւ 1885)

Աղեքսանդրիոյ մէջ, տեղւոյն «Տիգրան Երկաթ Հայ Մշակութային Միութիւն»ը, Հ.Ա.Հիմնադրամի աջակցութեամբ եւ օգտագործումովը ողբ. Տիգրան Ալեքսանեանի կտակին՝ 1950-ին փոխադրուած է Նէպի Տանիէլ փողոցի իր նստավայրը: ([22]. էջ 10 - ([36]. էջ 62-66)

1944-ին հաստատուած է Հ.Ա.Հիմնադրամի մատենաշար-հրատարակչականը, որուն նախաձեռնութեամբ լոյս տեսած են շուրջ 60 հատորներ: Իսկ, Կեդր. Վարիչ Մարմինը 1990-ին հրատարակած է Մ.Նաթանեանի “Արմենական Կուսակցութիւնը” գրքովը Տ.Գեորգեանի խմբագրութեամբ:

([12]. էջ 262 եւ 264, եւ թիւ 1751)

1944-1945 ուսումնական տարեշրջանէն սկսեալ, գործադրուած է Հիմնադրամին գլխաւոր նպատակներէն հանդիսացող *«կրթաթոշակներու յատկացումը, բարձրագոյն ուսումնառութեան կարելիութիւնը ընծայելու համար ապագային ազգային ծառայութեան կոչուելու տրամադրուած հայորդիներուն»:*

15 Նոյ. 1947-ին, Հ. Ա. Հիմնադրամի Վարիչ Մարմինը սկզբունքով որոշած է «Բաժնետիրական Ընկերութիւն» մը կազմել, որուն գաղափարը ծրագրով մը մարմնաւորուած է 26 Ապրիլ 1950-ին ստորագրուած վաւերաթուղթով: Որոշուած է նախաձեռնարկ ըլլալ «Եգիպտահայ Ազգային Տուն» անունով շէնքի մը կառուցումը իրականացնելու, «Արեւ» թերթի խմբագրութեան եւ տպարանին, «Հայ Ազգային Հիմնադրամ»ին եւ բնակութեան յատկացուելիք անոր մասնաբաժիններով, իսկ մնացեալը իբրեւ հաւաքավայր տրամադրելի դարձնելու համար գաղութին զանազան կազմակերպութիւններուն՝ իրենց հանդիսութիւններու եւ հաւաքոյթներու սրահներու բաժիններով: ([28]. էջ 642-648)

«Եգիպտահայ Ազգային Տուն» անունը հետագային յարմար դատուած է անուանել «Հայ Տուն», որուն համար գնուած է Տուպէ փողոցին թիւ 3 շէնքը՝ աւելի քան 800 քմ.էթր տարածութեամբ եւ 35.000 Եգ.Ոսկի արժէքով, կատարելով անոր նախնական վճարումը՝ 1 Յուլիս 1950 թուակիր մուրհակով (աթթ): ([28]. էջ 648)

Եօթյարկանի շէնքին յատակագիծը պատրաստած են ճարտարապետներ Հրազդան Պալեան եւ Մաքս Էտրէի: ([28]. էջ 676)

29 Դեկտ. 1955-ին բացումը կատարուած է Հայ Գեղարուեստասիրաց Միութեան նոր կեդրոնին, իր «Թէքէեան» եւ «Մերձանեան» սրահներով: ([28]. էջ 690)

1950-ականներու վերջաւորութեան, տեղական տնտեսական օրէնքներու փոփոխութիւնները եւ 1961-էն ծայր առած արտագաղթը «Հայտուն Բաժնետիրական Ընկերութիւն»ը դժուարութիւններու մատնած ըլլալով եւ երկրնտրանքի չգոյութեան ընդառաջ՝ պատասխանատու մարմինը պարտաւորուած է լուծարքի ենթարկել Ընկերութիւնը եւ վաճառել շէնքը: ([28]. էջ 698 , 703-707)

Հ. Ա. Հիմնադրամի հովանաւորութեամբ իրենց մշակութային եւ ընկերային բեղուն գործունէութիւնը ունեցած են Գահիրէի մէջ՝ Հայ Գեղարուեստասիրաց

Միութիւնը, Հելիոպոլսոյ մէջ՝ Հ.Ա.Հ. Կոկանեան Սրահը եւ Աղեքսանդրիոյ մէջ՝ «Տիգրան Երկաթ» Հայ Մշակութային Միութիւնը:

Ներկայիս եւ տիրող գաղութահայ պայմաններուն համակերպ ընթացքով, Հ.Ա.Հիմնադրամը շարունակած է իր առաքելութիւնը, կեդրոն ունենալով Գահիրէի Հելիոպոլսոյ «Կոկանեան» Սրահը եւ Աղեքսանդրիոյ մէջ «Տիգրան Երկաթ» Հայ Մշակութային Միութիւնը իրենց ընկերային միջավայրով եւ մշակութային գործունէութեամբ, որոնց զուգահեռ ան հովանաւորած է «Արեւ» թերթին հրատարակութիւնը:

«Կոկանեան» Սրահին շրջապատին մէջ, 2011-ին հաստատուած է «Արեւ» եռօրեային (ներկայիս՝ շաբաթաթերթ) խմբագրատունը իր յարակից բաժիններով:

100. «Վասպուրական» Միութիւն - Գահիրէ , 1943

Եգիպտոս հաստատուած Վասպուրականցիներու Գահիրէի հատուածին նախաձեռնութեամբ՝ 1940-ականներու սկեզբը Գահիրէի մէջ կազմուած է «Վասպուրական» հայրենակցական բնոյթի՝ Միութիւնը, որուն մշակութային ձեռնարկներու շարքը նպատակ ունեցած է *«հայրենական բարքերու եւ սովորութիւններու արծարծումով՝ աստանդական սերունդի մօտ վառ պահել “երկրի” եւ արմատներու աւանդութիւնները»*:

Նպատակադրուած հաւաքոյթներու շարքին, Կիր.8 Ապրիլ 1943-ին Գեղարուեստասիրացի սրահին մէջ կազմակերպուած է գեղարուեստական յայտագրով երեկոյթ մը, նախագահութեամբ վարչութեան ատենապետ Լեւոն Աճէմեանի: Ազգային եւ գաւառական երգերով հանդէս եկած է «Քնար» երգչախումբ-նուագախումբը, ղեկավարութեամբ Երուանդ Ալեքսանեանի (բնիկ վանեցի): Տեղի ունեցած է արտասանութիւն, խմբապար, կենդանի պատկեր եւ զաւեշտախառն ներկայացում: (Զ.1943, թիւ 7390)

101. «Ներսէս Շնորհալի» Եգիպտահայ Կաթողիկէ Երիտ. Միութիւն -

Գահիրէ , 1944

Կաթողիկէ Երիտ. Միութեան Գահիրէի հիմնադիր ժողովը 40 երիտասարդ-ներու մասնակցութեամբ՝ գումարուած է Մխիթարեան Վարժարանին մէջ 23 Յունուար 1944-ին, եւ հաստատած՝ 21 յօդուածներէ բաղկացած Կանոնագիր մը, նպատակ ունենալով *«Զարգացնել իր անդամներուն բարոյական ոգին, ստեղծել անոնց միջեւ բարեկամական սերտ կապեր»*: ([12]. թիւ 977)

Միութիւնը, երկար տարիներ ունեցած է ընկերային եւ ներհամայնքային բնոյթի գործունէութիւն մը, սակայն կազմալուծուած է կեդրոնին փլուցումին հետեւանքով: (ԼԶ.1962, էջ 133)

102. «Յուսաբեր» Մշակութային Ընկերակցութիւն - Գահիրէ , 1944 -

Մշակութային Ընկերակցութիւնը հիմնուած է 28 Յունիս 1944-ին, հիմնադիր 18 անդամներու կողմէ եւ վաւերացուած՝ Խառն Դատարանի նօտարական թիւ 1478 վաւերաթիւով 25 Մարտ 1945-ին:

Հիմնադիր անդամները եղած են Տոքթ.Համօ Օհանջանեան, Վահան Նաւասադեան, Գաբրիէլ Լազեան, Գուրգէն Մխիթարեան, Աւետիս Ն.Զաքրճեան, Տոքթ.Երուանդ Խաթանասեան, Մէթր Օնիկ Մաճառեան, Թորոս Խաչատուրեան, Զարեհ Սագայեան, Շէֆիք Տմլաքեան, Եղիա Քրէտեան, Մելքի Գըլըճեան, Գեորգ

Զօպանեան, Մկրտիչ Թերզեան, Սուրեն Կեօնճեան, Լեւոն Տէր Ասատուրեան եւ Գեորգ Զեքիճեան: ([XXX] - [12]. թիւ 1475)

Ընկերակցութեան, եգիպտական Ընկերային Գործոց նախարարութեան մօտ օրինական վաւերացումը ստացուած է 1 Յունիս 1948-ին: (Լ. 2 Յունիս 1948)

Ընկերակցութեան հիմնական նպատակը եղած է *«հայ լեզուն ու մշակոյթին ծառայել Եգիպտոսի մէջ, քաջալերելով հայ գրականութիւնը եւ արուեստը բոլոր միջոցներով, նպաստելով անոր զարգացման ու տարածումին, նաեւ տարածել եգիպտական եւ արաբական երկիրներու մշակոյթը դասախօսութիւններու կազմակերպութեամբ, յօդուածներու եւ երկասիրութիւններու հրատարակութեամբ»*:

Իր ծրագրին ընդառաջ՝ Ընկերակցութիւնը հովանաւորութիւնը ստանձնած է «Յուսաբեր» Օրաթերթի հրատարակութեան եւ անոր հրատարակչականի բաժնին: Հիմնուած է «Ուսանողական Ֆոնտ»ը, բարոյապէս եւ նիւթապէս օժանդակելու համար ուսումնաստենչ երիտասարդութեան մօտ հայերէն եւ արաբերէն լեզուներու իմացութեան զարգացումի քաջալերանքին:

Գործունէութեան իբրեւ հիմնական ձեռնարկ, Ընկերակցութիւնը Գահիրէի կեդրոնական Էգպէթիյէ թաղաշրջանին մէջ 1949-ին գնած է թիւ 56-58, Թերաա Պուլաքիա Փողոցին վրայի 1200 մ2 տարածութեամբ հողամասը, այնտեղ կառուցելու համար ությարկանի «Յուսաբերի Տուն»ը:

Յուսաբերի Տան հիմերուն հաստատումը սկսած է 10 Դեկտեմբեր 1949-ին, հիմնարկէքը կատարուած՝ 26 Մարտ 1950-ին, եւ փառաշուք հանդիսութեամբ բացումը կատարուած՝ 28 Մայիս 1952-ին:

Նորակերտ կառոյցին մէջ հաստատուած են «Յուսաբեր»ի խմբագրատունը, տպարանն ու գրապահոցը եւ «Յուսաբեր» Ակումբը իր «Նաւասարդ» Մրահով:

Հաստատուած են նաեւ Հ.Յ.Դ. Եգիպտոսի շրջանին մարմիններու գրասենեակները, «Փալանճեան» Մատենադարանը, «Յուսաբեր»ի ընդարձակ թատերասրահը, «Հայ Կ.Խաչ»ի եւ «Համագգային»ի վարչութեանց ժողովասենեակները, «Հ.Յ.Դ.Երիտասարդաց Միութեան» հաւաքատեղին եւ «Դալար Տանիք»ը: Շէնքին կողքի բաժինով մաս կազմած են չորս յարկերու բնակարանները եւ գետնայարկի խանութներ:

1956-ի Պետական Օրէնքին ընդառաջ՝ 9 Նոյեմբեր 1958-ի թիւ 230-ով վերավաւերացուած Ընկերակցութեան վարչութեան անդամ եղած են Աւետիս Ն.Զաքրճեան(նախագահ), Մէթր Օննիկ Մաճառեան(փոխ-նախագահ), Լեւոն Յովհաննէսեան (Ա.ատենադպիր), Կայծ Կոկանեան (Բ.ատենադպիր), Թորոս Խաչատուրեան(գանձապահ), Շէֆիք Տմլաքեան, Զարեհ Սագայեան, Լեւոն Գարագաշեան, Տոքթ.Երուանդ Խաթանասեան, Գաբրիէլ Լազեան, Մարտիրոս Մարաշեան, Տոքթ.Հայկազուն Շիրինեան, Պերճ Մարլեան, Քերիմ Տմլաքեան, Վաղարշակ Տէր Յուսիկեան, Արշակ Գարակեօզեան, Հայկ Աւագեան եւ Պաղտիկ Պաղտասարեան: ([XXX] - [12]. թիւ 1475)

Ընկերակցութիւնը 1959-ին, նախաձեռնած է Հելիոպոլսոյ հայաշատ արուարձանին մէջ ակումբի մը հիմնադրութեան, եւ թիւ 43, Պէյրութ Փողոցի վրայ գնած է 1882 մ2 տարածութեամբ պարտէզով շրջապատուած առանձնատունը:

Այստեղ գտնուող կառոյցին քանդումէն ետք, 1962-ին շինուած է արդիական

երկյարկանի ընկերային-մշակութային կեդրոնը, ճարտարապետ Դոկտ. Հայկազուն Շիրինեան նախագիծով:

Նորահաստատ ակումբը օժտուած է սինագաւիթով մը, անոր վերելի «Լեւոն եւ Սիրվարդ Գարագաշեան» հանդիսասարահով, իսկ գետնայարկին հաստատուած է «Արմենակ Մեօթէմէտեան» ժողովասրահը, կողքին ունենալով Հ.Մ.Ը.Մ. Արարատի մարզադաշտը:

1965-ին, Ընկերակցութեան վարչական անդամներ եղած են Աւետիս Ն.Չագրճեան(նախագահ), Մէթր Օննիկ Մաճառեան(փոխ-նախագահ), Լեւոն Յովհաննէսեան(Ա.ատենադպիր), Կայծ Կոկանեան(Բ.ատենադպիր) Լեւոն Գարագաշեան(զանձապահ), Թորոս Խաչատուրեան, Արշակ Գարակէօզեան, Զարեհ Սագայեան, Տոքթ.Հայկազուն Շիրինեան, Մարտիրոս Մարաշեան, Յովհաննէս Սիմոնեան, Շէֆիք Տմլաքեան, Քերիմ Տմլաքեան, Պերճ Մարլեան, Տիգրան Էվերէկլեան եւ Տիգրան Տատեան:

Մշակութայինի գործակցութեամբ «Յուսաբեր»ի հանդիսասարահին մէջ ելոյթներ ունեցած են Գահիրէի «Համազգային»ի թատերախումբը եւ երգչախումբը: Անոր հրաւերով Եգիպտոս հիւրընկալուած են Հայ եւ օտարազգի մտաւորականներ, մշակոյթի եւ հասարակական գործիչներ: Հանդէս եկած է նաեւ լիբանանահայ «Գասպար Իփէքեան» թատերախումբը:

«Յուսաբեր» Մշակութային Ընկերակցութեան հովանաւորութեամբ հրատարակուած են «Յուսաբեր» Մատենաշարին թիւով 100 հատորներու շարքը, որոնց կողքին՝ զանազան 6 հրատարակութիւններ: ([12]. էջ 262,266)

103. Հայ Ազգային Խորհուրդ - Գահիրէ , 1945

Գահիրէի Հայ Ազգային Խորհուրդի կազմութեան յայտարարութիւնը կատարուած է 11 Հոկտեմբեր 1945-ին:

Խորհուրդին նպատակը եղած է *«արժեցնել հայ ժողովուրդին կրած ահաւոր զոհողութիւնները, տեղի ունենալիք յետպատերազմեան Խաղաղութեան Ա. Մեծ Խորհրդաժողովին առջեւ»:*

Գահիրէի Հայ Ազգային Խորհուրդին ատենապետը եղած է Ալեքսանտր Սարուխան, իսկ ատենադպիրը Մարտիրոս Ս.Պալաեան:

Հիմնադրութեան տարին, Գահիրէի եւ Ադեքսանդրիոյ Ազգային Խորհուրդները կազմած են Եգիպտոսի Հայ Ազգային Խորհուրդը, որուն անունով Ս.Շահպազ եւ Ալ.Սարուխան «Հայկական Դատ»ի մասին ֆրանսերէն «Յուշագիր» մը ներկայացուցած են Փարիզի 29 Յուլիս 1946-ի Խաղաղութեան Խորհրդաժողովին:

(ԽԱ. պր. բ.1946 - [12]. թիւ 1090)

104. Եգիպտահայ Ներգաղթողներու Միութիւն - Գահիրէ , 1946

Ներգաղթողներու Միութիւնը հիմնուած է Դեկտեմբեր 1946-ին, նպատակ ունենալով *«օգնել ներգաղթին եւ պատրաստել մեր ներգաղթող հայրենակիցները»:*

Միութեան կեդրոնը եղած է Հայկական Ընթերցասրահը, պատասխանատուներ ունենալով՝ Գառնիկ Սվազլեան եւ Մարտիրոս Ս.Պալայեան:

(ԼԶ.1962, էջ 133)

Հայկական Ընթերցասրահի նախաձեռնութեամբ, Ներգաղթողներու Միութիւնը եկամտաբեր դաշտահանդէս մը կազմակերպած է Կիր. 10 Օգոստոս

1947-ին, Արարատ Մարզական Միութեան դաշտին վրայ, մասնակցութեամբ «Սպենդիարեան» Երգչախումբին, ղեկավարութեամբ Երուանդ Ալեքսանեանի:

Իր ժամանակին Միութիւնը ունեցած է աւելի քան 700 անդամներ:

Կողքին յառաջացած է Ներգաղթի Կեդրոնական Յանձնախումբը (Կոմիտէ) նախագահութեամբ եգիպտահայ թեմի Առաջնորդ Մամբրէ Արքեպս.Սիրունեանի: Յանձնախումբին գրասենեակները հաստատուած են Գալուստեան Ազգային Վարժարանի մանկապարտէզի բաժնին մէջ 11 Սեպտեմբեր 1947-էն: (Լ. Օգ.1947)

Կեդրոնական Յանձնախումբին Գահիրէի անդամները եղած են Ասատուր Պողիկեան, Լեւոն Տաճեան, Խաչիկ Յովհաննէսեան եւ Յակոբ Արամեան, իսկ Աղեքսանդրիայէն՝ Արթին Սբէնճեան, Արմենակ Յովակիմեան, Հրաչ Գալընեան եւ Մեթր Ստեփան Շահպագ: Գործած են հինգական Թաղային Յանձնախումբեր, Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ:

Կեդր. Յանձնախումբը հրապարակած է «Ներգաղթողին Գրքոյկը» 16 էջերով պրակը, իբրեւ ուղեցոյց ներգաղթողներուն: ([37]- [12].թիւ 1081)

«Եգիպտահայ Ներգաղթի Կեդրոնական Կոմիտէ»ի անունով հրատարակուած է 14 պատկերներով, 16 էջերէ բաղկացած եւ 100 Ե.Դ. արժէքով «Ծաղկեալ Ս.Հայաստան» ալպոմ-պրակը, հասոյթը յատկացուելու համար «կարիքաւոր ներգաղթողներու զգեստաւորման»:

([12]. թիւ 1878)

Հրատարակուած է «Տեղեկատու»ի թիւ 1 պրակը 1947-ին: ([14]. էջ 355)

Ներգաղթող կարաւաններու օժանդակելու աշխատանքի աւարտին, Միութիւնը կազմալուծուած է:

Յիշարժան է, թէ եգիպտոսէն հայրենադարձներու *առաջին* կարաւանը, 1680 անձ, «Բոպետա» նաւով հայրենիք մեկնած էր 4 Սեպտեմբեր 1947-ին, իսկ *երկրորդ* կարաւանը, 2018 անձ (առաւել՝ ճամբու 2 ծնունդ), նոյն նաւով Աղեքսանդրիայէն մեկնած էր 22 Օգոստոս 1948-ին: («Կեանք եւ Գիր», 1948, գ.հտր., ե.պրկ.)

105. «Յուսաբեր» Ակումբ - Գահիրէ , 1952-1995

«Յուսաբեր»ի Տան շինութեան աւարտին եւ 28 Մայիս 1952-ին անոր թատերասրահին բացումէն ետք, «Յուսաբեր» Ակումբը իր Քանթարէթ Էլ Տէքքա փողոցին վրայ գտնուող 1935-էն ի վեր գործած նախկին վայրէն փոխադրուած է «Յուսաբեր»ի նոր շէնքին մէջ:

Ակումբը իբրեւ ինքնուրոյն միաւոր, «Յուսաբեր Մշակութային Ընկերակցութեան» կողքին գործած է 1952-էն սկսեալ, իրեն յատուկ կանոնագրով:

Անոր գործունէութեան վայր հանդիսացած են «Յուսաբեր»ի Տան թատերասրահի կողքին գտնուող հաւաքատեղի բաժինը, 3-րդ յարկի «Նաւասարդ» Սրահը եւ անոնց վերեւ գտնուող «Դալար Տանիք»ը:

15 Յունիս 1952-ին գումարուած է ակումբին անդրանիկ ընդհանուր ժողովը, եւ նոր նստավայրի առաջին վարչութեան անդամ ընտրուած են Թորոս Խաչատուրեան (ա.ատենապետ), Կայծ Կոկանեան(բ.ատենապետ), Օննիկ Մարաշեան (ատենադպիր) Սարգիս Տատուր(գանձապահ), Փօլ Մուրատեան (հաշուապահ և արաբերէնի քարտուղար), Միհրան Զրաքեան, Միհրան Էթմէքճեան, Վրէժ Քեօհնէլեան, Հայկ Աւագեան եւ Երուանդ Թումայեանց (խորհրդականներ):

Յուսաբերի «Նաւասարդ» սրահին մէջ, 26 Դեկտեմբեր 1955-էն 6 Յունուար

1956, նախաձեռնությամբ Գաբրիել Լազեանի, կազմակերպուած է «Հայ Գիրքի Յուցահանդէս» մը, արժանանալով այցելու հասարակութեան գնահատանքին:

«Համազգային»ի թատերախումբն ու երգչախումբը իրենց պարբերական ձեռնարկները ունեցած են ակումբին կից «Յուսաբեր» թատերասրահին մէջ:

«Դալար Տանիք»ը տարիներով ժամադրաւայրը հանդիսացած է Գահիրէի հայութեան, հոն վայելելով ամառնային երեկոներուն կազմակերպուած գեղարուեստական, երաժշտական, թատերական, դասախօսական ձեռնարկները, ինչպէս նաեւ ոգեկոչումի հանդիսութիւններուն յաջորդող խրախճանքները:

1967-ի Վարչութեան անդամ եղած են Յաբէթ Զաթալեան(ատենապետ), Մուկուշ Պուտաբեան(փոխ-ատենապետ), Յովսէփ Սարաֆեան (ատենադպիր), Տրթ.Սուրէն Պայրամեան(գանձապահ), Նուպար Գանեան (գոյքապահ), Վահան Մէլէմէթեան, Յակոբ Գազանճեան, Յակոբ Ճիվանեան եւ Պետրոս Գրպաճեան (խորհրդականներ):

Գահիրէի կեդրոնական թաղաշրջաններու հայ բնակչութեան նուազումին եւ Հելիոպոլիս փոխադրուելուն իրողութեան ընդառաջ՝ Գահիրէի «Յուսաբեր» Ակումբին վարչութեան գործունէութիւնը դադրած է 1995-ին եւ մինչեւ 2008 «Յուսաբեր գոյգ ակումբներ» անունով գործակցած եւ ձեռնարկներ կազմակերպած՝ Հելիոպոլսոյ «Յուսաբեր» ակումբի վարչութեան հետ եւ կողքին:

106. Գալուստեան Ազգային Վարժարանի Ծնողք-Ուսուցիչ Խորհուրդ -

Գահիրէ, 1963-2012

Վարժարանին Ծնողք-Ուսուցիչ Խորհուրդը հիմնուած է 1963-ին, տնօրէնուհի Տիկին Իսկուհի Տատրեանի շրջանին, Եգիպտոսի Կրթական Նախարարութեան 1960-ի օրէնքներուն ընդառաջ:

Խորհուրդին կազմութեան նպատակը եղած է *«խնամքին առարկայ դարձնել վարժարանին աշակերտութիւնը, անոր կարիքները հոգալով, ուսուցիչներուն եւ հոգաբարձութեան գործակցութեամբ»:* ([6]. էջ 40)

Խորհուրդի կազմը բաղկացած է 14 հոգիներէ, վարժարանին տնօրէնին նախագահութեամբ: Խորհուրդին մէկ տարուան շրջանով անդամակցած են իւրաքանչիւր դասարանէ ուսուցիչ մը եւ ծնողք մը:

Խորհուրդը 1970-ին հրապարակած է «Հաղորդագրութիւն» մը, վարժարանին Պուլաքէն Հելիոպոլիս փոխադրութեան հարցին առնչութեամբ: Անոր Տեղեկատու Մարմինը 1975-էն 1979, լոյս ընծայած է «Գալուստ» տեղեկատուականի չորս թուրթերուն, իսկ 1977-ին՝ Յարաբերութեանց Յանձնախումբի «Տեղեկագրութիւն»ին չորս պրակներուն: ([12]. թիւ 1613,1668)

Գալուստեան եւ Նուպարեան Ազգային Վարժարաններուն Հելիոպոլսոյ մէջ «Գալուստեան-Նուպարեան» անունով 2012-ի միատեղումէն ետք, Խորհուրդը կը գործէ տեղւոյն կառոյցի վաւերացուած կանոնագրին պայմաններով:

ՀԵԼԻՈՊՈԼԻՍ

107. «Մասիս» Սրահ - Հելիոպոլիս , 1925 -1928

Մշակութային գործունեության ծրագրով և նպատակով առաջադրուած սրահը հիմնուած է 1925-ին, նախաձեռնող եւ հիմնադիր անդամները ունենալով Գրիգոր Փանոսեան, Լեւոն Կոկանեան, Խանճեան, Տիգրան Մերճանեան, Գեորգ Տէր Ստեփանեան, Օննիկ Սպանդեան, Օննիկ Մահտեսեան եւ Տոքթ.-Եղուարդ Ճիգմէճեան:

Սրահին եռամեայ գործունեության յայտագիրները կազմուած են լսարանային դասախօսական եւ երաժշտական երեկոյթներէ, նաեւ այժմեական հարցերու շուրջ քննական եւ վիճաբանական հաւաքոյթներէ:

Տոքթ.Եղուարդ Ճիգմէճեան «Մասիս» մշակութային սրահի վարչութեան ատենադպիրի եւ գանձապահի պաշտօնները վարած է մինչեւ 1928: ([8]. էջ 169)

108. «Հելիոպոլսոյ Եկեղեցասիրաց Միութիւն» - Հելիոպոլիս , 1930

Եկեղեցասիրաց Միութիւնը կազմուած է 1930-ին, նախաձեռնութեամբ ուսուցչապետ Բիւզանդ Կեօզիւպէօյիքեանի և գործակցութեամբ Յարութիւն Մարգարեանի:

Վարչութեան ատենադպիրը եղած է Տոքթ.Եղուարդ Ճիգմէճեան: ([8]. էջ 169)

109. Եգիպտահայատակ Հայոց Տոհմային Միութիւն - Հելիոպոլիս , 1934

Հայոց Տոհմային Միութիւնը հիմնուած է 15 Մարտ 1934-ին, նպատակ ունենալով *«օրինական բոլոր միջոցներով տէր կանգնիլ Ազգային իշխանութեանց եւ անոր ենթարկուած հաստատութեանց, նուիրուիլ միայն մեր եկեղեցիներու պայծառացման եւ մեր տոհմային կրթութեան եւ աւանդութեան պահպանման»:*

([12]. թիւ 676 - (8). էջ 247)

Միութեան նախաձեռնող մարմնին անդամ եղած են Յարութիւն Ամիրայեան, Յ.Գալփաքեան, Պ.Էթմէքեան, Կ.Թրեանց, Տոքթ.Ս.Ժամկոչեան, Մերթ Յ.Հաճէքեան, Յ.Մարտինեան, Արտաշէս Մէսթճեան, Հրանդ Նասիպեան, Ճանիկ Զազըր, Վ.Սանտալեան, Պ.Սելեան, Տոքթ.Խաչատուր Սողիկեան, Գարեգին Տիրկէրեան, Տոքթ.Նազարէթ Քէչէճեան և Լևոն Քիրազեան ([XXVIII] - [12]. թիւ 658)

Գ.Եկեղեաց (Գ.Տիրկէրեան) *գրի առած* է տպագիր պրակ մը «Ազգատետր» (խօսք Ա.) անունով, որուն մէջ քաղուածքներով անդրադառնալով է Միութեան հիմնական սկզբունքներուն *«Միում տալ արաբ եւ հայ ժողովուրդներուն յարաբերութեանց զարգացման եւ բարեկամական կապերուն»* եւ այլ ազգապահպանութեան ծրագիրներու:

([12]. թիւ 1873)

Միութիւնը ունեցած է կազմին ընդհանուր ժողովին կողմէ վաւերացուած Ծրագիր-Կանոնագիր մը (անթուակիր): Պրակով մը հրապարակուած է *«Նախաբան-Նախագիծ»* մը Հայերէն եւ Արաբերէն լեզուներով الاتحاد القومى للارمن المصريين (Տպ.Սահակ-Մեսրոպ, Գահիրէ, 16 էջ, 1934): ([12]. թիւ 658)

Տոհմային Միութեան վարչական կազմին ընդհանուր քարտուղարի պաշտօնը ստանձնած է Գարեգին Տիրկէրեան: ([XXVIII] - [12]. թիւ 658)

Միութիւնը, կարճատեւ ժամանակէ ետք, կազմալուծուած է:

(Լ.Զ.1960 էջ 33 - [XXVIII])

110. Հ.Ա.Հ. Կոկանեան Սրահ - Հելիոպոլիս , 1949

Հայ Ազգային Հիմնադրամի Վերին Մարմինը իր 27 Փետրուար 1946-ի նիստին որոշումով, ծրագրած է Հելիոպոլսոյ մէջ հաւաքավայրի մը կառուցումը իրականացնել եւ արձանագրած է Տէր եւ Տիկին Լեւոն Կոկանեաններու Ակումբի մը շինութեան համար կատարած նուիրատուութեան խոստումը:

Հելիոպոլսոյ Ընկերութեան սեփականութիւնը եղող եւ թիւ 10, Մընուֆ փողոցին վրայ Նուպարեան Վարժարանի հանդիպակաց 1400 քառ.մէթր տարածութեամբ հողը գնուած է 3500 Եգ.Ոսկիի (քռ.մէթրը 250 Եգ.Դիկ.էն): ([29]. էջ 39)

Սրահին կառուցման աշխատանքները սկսած են 1948-ի ամրան, ճարտարապետ Նուպար Գէորգեանի նախագիծով:

Նորակառոյց «Կոկանեան Սրահ»ի բացումը կատարուած է 10 Ապրիլ 1949-ին, ներկայութեամբ բարերարներ Տէր եւ Տիկին Լեւոն Կոկանեանի:

Սրահին 6 Մայիս 1949-ին գումարուած անդամական առաջին ընդհանուր ժողովը, վաւերացուցած է Հ.Ա.Հ.ի վարիչ մարմնին առաջադրած առաջին վարչութիւնը, յանձին՝ Փայլակ Շահրոզեանի, Մեթր Նուպար Պէրպէրեանի, Արամ Տէր Ստեփանեանի, Զարեհ Ոսկանեանի, Լեւոն Պետրոսեանի, Մեսրոպ Գոյումճեանի եւ Սարգիս Փափագեանի:

Առաջին առթիւ, մշակուած եւ վաւերացուած է 21 յօդուածներէ բաղկացած Կանոնագիրը, որուն կառավարական 37 յօդուածներով օրէնքներուն պատշաճեցումը կատարուած է հետագային:

Կոկանեան Սրահի կանոնագրին մէջ, նպատակ յօդուածով նշուած է *«համախմբել գաղութիս մտաւորական եւ գեղարուեստասէր անհատները եւ անոնց միջոցաւ համայնքին մէջ սատարել ընկերային, մշակութային եւ գեղարուեստական (մակարդակի) բարձրացման»:* ([29]. էջ 61,64,74,88)

Տարիներու ընթացքին կազմուած եւ գործած են Տիկնանց, Երիտասարդաց, Պատանեկան եւ յարակից այլ օժանդակ յանձնախումբեր:

Տեղւոյն Պատանեկան միաւորը 1954-ին լոյս ընծայած է «Լոյս» պատանեկան ամսաթերթին Ա.եւ Բ. համարները, իսկ «Ալիք» շաբթումը 1956-ին հրապարակած է պատանեկանի «Ալիք» պարբերագիրքը (մէկ թիւ): «Պարմանի Շաբթում»ը 1960-ին լոյս ընծայած է «Պարման» պատանեկան պարբերագիրքին (4 թիւ) եւ «Պատանի» պարբերականին 1980-ի միակ թիւը: Կազմուած է նաեւ «Պատանի Գիտակումբ»ը 30 երկսեռ անդամներով: ([14]. էջ 288,300 և 324 - «Հունձք» 1954,պրկ.Ե.և 1955,պրկ.Զ.)

Ակումբը 1959-ին հրապարակած է «Հայաստանի Պետական Երգի Եւ Պարի Անսամպլի Երգացանկը» մեքենագիր-խմորատիպ 15էջնոց պրակը: ([12].թիւ 1887)

Ակումբին աշխոյժ գործունէութեան մաս կազմած են գեղարուեստական (երաժշտական, թատերական, ասմունքի, վիճաբանական) երեկոներ, գրական ասուլիսներ, արուեստի ցուցահանդէսներ: Ելոյթներով հանդէս եկած են ակումբին անդամներէն կազմուած երգչախումբեր:

1970-ին, սրահին նոր սերունդի անդամներէն կազմուած է երիտպատանեկան «Զանգեզուր» երկսեռ պարախումբը, ղեկավարութեամբ հայրենի պարուսոյց Էլէոնորա Գրիգորովայի: Հետագայ տարիներուն, պարախումբին ելոյթներուն մաս կազմած են նաեւ Գահիրէի Հայ Գեղարուեստասիրաց եւ Աղեքսանդրիոյ Տիգրան Երկաթ Մշակութային քոյր միութիւններու երիտասարդաց

միաւորներու անդամները: «Զանգեզուր» պարախուսմբին 45-ամեակը հանդիսաւորուած է 2015-ին:

«Կոկանեան Սրահի Թատերախումբ»ը, Կարալիս Եազըճեանի ղեկավարութեամբ, 35-է աւելի ներկայացումներու բեմադրութեամբ՝ գործունէութիւն ունեցած եւ ելոյթներ ունեցած է 1957-էն սկսեալ:

Մշակութային ակումբին հանդիսասրահին կից հաստատուած է «Համբարձում Գարայեան» գրադարանը, որուն բացումը կատարուած է 1971-ին, իսկ «Ալեքսանտր Սարուխան» լսարանը հաստատուած է 1981-ին:

Վերջին տասնամեակին, ակումբէն ներս կատարուած են նորոգութեան եւ բարեգարդումի աշխատանքները, իսկ պարտէզին մէջ հաստատուած է «Մանուկներու Խաղավայր»ին մասնաբաժինը:

2011-ին, «Կոկանեան» Սրահին մէջ հաստատուած է «Արեւ» թերթին խմբագրութիւնը:

111. Հելիոպոլսոյ Զետեղման Գրասենեակ - Հելիոպոլիս , 1952-1959

Աշխատատեղիի որոնումի եւ կարգադրութեան գրասենեակը հաստատուած է 1952-ին, նախաձեռնութեամբ Տիկին Ս.Եագուպեանի եւ անմիջական գործակցութեամբ խումբ մը բարեսէր հայուհիներու:

Կազմակերպիչներուն նպատակը եղած է *«օգտակար հանդիսանալ եւ ձեռք կարկառել գործ, գործաւոր կամ պաշտօնէայ փնտռող այր թէ կին անձերու»:*

Գրասենեակին հաստատումին անհրաժեշտութիւնը զգացուած է 1952-ի Յունուար 26-ի Գահիրէի պատմական հրդեհէն յետոյ ստեղծուած գործազրկութեան եւ յարուցուած դժուարութիւններուն հայրենակիցներու դիմակալութեանը աջակցելու:

Գրասենեակը գործած է Ընկերային Գործոց Նախարարութեան օրէնքներուն համաձայն եւ վաւերացուած՝ կառավարութեան 1958-ի թիւ 575 արտօնագրով:

Եօթը տարիներու աւարտին ներկայացուած զեկոյցով, աշխատանքի զետեղումը կատարուած է նուազագոյնը 700 հոգիներու: (ԼԶ.1959-1960, էջ 178)

Զետեղման Գրասենեակը իր գործունէութիւնը դադրեցուցած է 1959-ին:

112. Հելիոպոլսոյ Միփթարեան Վարժարանի

Տիկնանց Խնամակալ Մարմին - Հելիոպոլիս , 1955-1964

Խնամակալ Տիկնանց Մարմինը հիմնուած է 3 Նոյեմբեր 1955-ին, ընդառաջելով վարժարանին տնօրէն Բարսէղ Վրդ. Ֆարիաթեանի կոչին:

Վաւերացուած է ծրագիր-կանոնագիրը, նպատակ ունենալով՝ *«նիւթական եւ բարոյական օժանդակութեամբ սատարել վարժարանին վերելքին, օգնել չգաւոր սաներուն եւ հասութեաբեր ձեռնարկներով պիտձէին բացը գոցել»:*

Խնամակալ Մարմինը կազմուած է նախապէս 1940-ի վերջերը գործած վարժարանին համակիր «Հոգատար Տիկնանց Օժանդակ Մարմին» անունով:

Հիմնադիր շրջանի խնամակալ մարմնին մաս կազմած են. Երիցուհի Հոփիսիմէ Ամրիկեան (ատենապետուհի), Տիկ.Էօժէնի Նազգաշեան (Փոխ ատենապետուհի), Տիկ.Արաքսի Ամպարեան (ատենադպրուհի), Տիկ.Վարսենիկ Մատդաշեան (գանձապետուհի), Տիկ.Արաքսի Խաչատուրեան(փոխ գանձապետուհի), Տիկնայք Սիրանոյշ Մանասարեան, Բօզ Վայնաչարեան,

Անահիտ Մաթոսեան, Ժորժէ Եաղսրզեան, Անժէլ Վոլգոյ, Անժէլ Ճիգմէճեան, Թագուհի Մանիքեան եւ Լիւսի Մեսրոպեան(խորհրդականներ):

Գործունէութեան մէջ ընդգրկուած եւ կազմակերպուած են թատերական ներկայացումներ, նուագահանդէսներ եւ խնամատարական հարցերու առնչուող լսարանային հաւաքոյթներ:

Տիկնանց Խնամակալ մարմինը եւ օժանդակ յանձնախումբը գործած են մինչեւ վարժարանին փակումը 1964-ին:

(ԼԶ.1959-60, էջ 28 - ԼԶ.1962, էջ 132 - [24]. գ.հտր. էջ 365)

113. «Յուսաբեր» Ակումբ - Հելիոպոլիս , 1960 -

«Յուսաբեր» Մշակութային Ընկերակցութեան վարչութիւնը 1959-ի վերջաւորութեան, գնած է Հելիոպոլիս թիւ 43, Պէյրութ Փողոցի (նախկին Մոհամէտ Ալի) 1882 մ2 տարածքով առանձնատունը եւ իբրեւ մշակութային կեդրոն, անոր բացումը կատարած է Կիրակի, 31 Յունուար 1960-ին:

Նորահաստատ ակումբը ունեցած է ինքնուրոյն իրավիճակ մը իրեն յատուկ հաստատուած եւ վաւերացուած կանոնագրով:

Ակումբին անդրանիկ ընդհանուր ժողովը գումարուած է Կիրակի, 13 Մարտ 1960-ին եւ առաջին վարչութեան անդամ ընտրուած են Լեւոն Գարագաշեան(Ա.ատենապետ), Լեւոն Յովհաննէսեան(Բ.ատենապետ), Պօղոս Յակոբեան(ատենադպիր), Մարգիս Տատուր(գանձապահ), Վրէժ Քեօհնէլեան(փոխ-գանձապահ), Մարտիրոս Մարաշեան, Զարեհ Սագայեան, Շէֆիք Տմլաքեան, Գարեգին Շամլեան, Գրիգոր Նիզիպլեան եւ Վարուժան Վ.Գազանճեան (խորհրդականներ):

Հողատարածքին առանձնատան վայրը, Ճարտարապետ Հայկագուն Շիրինեանի նախագիծով, 1962-ին կառուցուած է երկյարկանի մշակութային նոր կեդրոն մը, իր սինագաւիթով եւ «Լ.եւ Ս. Գարագաշեան» հանդիսասրահով: Կառոյցին 35 եւ 40-ամեակի ոգեկոչումները կատարուած են 1997-ին եւ 2002-ին խանդավառ հանդիսութիւններով, որոնց ընթացքին մեծարուած են վաստակաւոր երկարամեայ վարչականներ:

Ակումբէն ներս հաստատուած է «Հ.Մ.Ը.Մ. Արարատ»ի մարգարանը իր «Արմենակ Մեօթեմէտեան» հաւաքավայրով, կողքի պասքէթպոլի դաշտով և անոր կից մանուկներու խաղավայրի բաժինով:

Տասնամեակներու գործունէութեամբ, ակումբը ժամադրավայրը հանդիսացած է Հելիոպոլսաբնակ հայորդիներուն, որոնք շարունակած են քաջալեր հանդիսանալ անոր մշակութային եւ ազգային բնոյթի հանդիսութիւններուն ու յարակից՝ Հ.Մ.Ը.Մ. Արարատի մարզական ձեռնարկներուն:

Ակումբին վարչութեան կողքին գործած են երիտ-պատանեկան միաւորներու կազմերը իրենց դաստիարակչական եւ մշակութային ծրագիրներով:

Երիտասարդ սերունդի անդամներով 1972-ին կազմուած է Մշակութային Ընկերակցութեան հովանաւորութիւնը վայելող «Մարտարապատ» երկսեռ պարախումբը, ղեկավարութեամբ՝ արուեստագէտ պարուսոյց Շաքէ Յովակիմեանի:

Տեղւոյն ձեռնարկներուն ազգային հայրենասիրական երգերով մասնակցած է «Ծաղկաստան» մանկա-պատանեկան երկսեռ երգչախումբը, ղեկավարութեամբ՝ արուեստասէր նուիրեալներու եւ հայրենի խմբավարներու:

1998-ին, եւ յառաջիկայ տարիներուն, հերթական ամբողջական նորոգութեան եւ բարեգարդումի ենթարկուած է ակումբը եւ հանդիսասրահը օժտուած՝ օղի բարեխառնիչ սարքով:

Հայ Դատի Յանձնախումբ - Գահիրէ

1975-ին, Եղեռնի 60-ամեակին առիթով յառաջացած ազգային միասնակա-նութեան զարթոնքի շրջանին, հայ ժողովուրդի իրաւունքներու պահանջատիրա-կան ժամանակակից շարժումը խթան հանդիսացած է եգիպտահայ երիտասար-դական միաւորներու գործունէութեան աշխուժացումին:

«Յուսաբեր»ի Շրջանակին նախաձեռնութեամբ, Մշակութային Ընկերակցու-թեան հովանաւորութեամբ եւ Հելիոպոլսոյ «Յուսաբեր» Ակումբի վարչութեան գործակցութեամբ, կազմուած է «Հայ Դատ»ի տեղւոյն Յանձնախումբը, որուն նախաքայլերուն առանձքը դարձած է մշակութային ձեռնարկներու շարքով հայ մշակոյթը տեղացի եւ օտար հասարակութեան ծանօթացումը:

Հայ Մշակոյթի ծանօթացումին նուիրուած ծրագիրներով կազմակերպուած են ձեռարուեստի, ասեղնագործութեան, նկարչութեան, գորգարուեստի, ծաղկա-յարդարումի, հայկական խոհանոցի համադասներու պատրաստութեան յատուկ ցուցահանդէսներ, հրատարակուած են բազմալեզու պրակներ եւ ոգեկոչումներու առիթներով Գահիրէի Պետական Ձայնասփիւռի կայանէն կատարուած են տեղեկատուական հարցազրոյցներ:

Ակումբին Երիտասարդական Միութեան «Սարտարապատ» պարախումբը եւ պատանեկան միաւորին «Ծաղկաստան» երգչախումբը խանդավառ ելոյթներով իրենց ներդրումը ունեցած են Հ.Դ.ի Յանձնախումբին ներազգային եւ օտար հասարակութեան համար կատարած քարոզչական ծրագիրներուն:

Յանձնախումբին ներկայացուցչութիւնը իր մասնակցութիւնը բերած է հայրենիքի եւ սփիւռքի մէջ կազմակերպուած համահայկական խորհրդա-ժողովներուն եւ Հայ Դատի շրջանային հաւաքներուն:

Քարոզչական ծրագիրներու շարքին, հրատարակութիւնը կատարուած է ցեղասպանութեան առնչուող զանազան նիւթերով պրակներու եւ հատորներու, կապ մշակուած եւ գործակցութիւնը ապահովուած է եգիպտական զանգուածային լրատուական միջոցներու ծանօթ լրագրողներու եւ հաղորդավարներու հետ եւ նախաձեռնուած՝ վաւերագրական ժապաւեններու պատրաստութեան, անոնց ցուցադրութիւնը կազմակերպելով տեղական եւ միջազգային ֆիլմարուեստի փառատօներուն:

Մեծ Եղեռնի 100-ամեակի ոգիկոչումներու առիթով, իր կազմակերպած տեղական ձեռնարկներու կողքին, Հ.Դ.ի Յանձնախումբը իր մասնակցութիւնը բերած է գաղութահայ մակարդակի վրայ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանութեան եւ Գահիրէի Ազգային Իշխանութեան հովանաւորութեամբ կազմուած «Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Ոգեկոչումի Յանձնախումբ»ի աշխատանքներուն, իր կարգին արժանանալով նաեւ Հայաստանի Նախագահի «Գնահատագիր»ին:

114. Ս.Թերեզա Հայ Կաթողիկե «Ժողովրդապետական Սրահ» -

Հելիոպոլիս, 1965 -

Հայ Կաթողիկե կեդրոն-սրահը շինուած է 1965-ին ստացուած պետական հրամանագրով, թիւ 23, Ռաշիտ փողոց, Հելիոպոլիս հասցէին, տեղւոյն Ս.Թերեզա Յիսուս Մանկան Հայ Կաթողիկե եկեղեցիին կից հողատարածքին վրայ:

«Ժողովրդապետական Սրահ»ին հաստատումին եւ շինութեան նախաձեռնողը եղած է Աղեքսանդրիոյ Հայ Կաթողիկե Վիճակաւոր Արհիպատիւ Ռափայէլ Եպս.Պայեան, Իր կողքին ունենալով ժողովրդապետ Պօղոս Վրդ.Բապուճեանը եւ Յովհաննէս Վրդ.Գասպարեանը, որոնց կազմակերպած նուիրահաւաքի ջանքերով եւ Բապուճեան ընտանիքի ու համայնքի անդամներուն նիւթական օժանդակութեամբ իրականացած է ծրագրին ամբողջացումը:

Նորակառոյց երկյարկանի Ժողովրդապետական Սրահին նախագիծը պատրաստած է Ճարտարապետ Անթուան Պազէրկի:

Ժողովրդապետական հանդիսասրահին բացումը կատարուած է 1967-ին:

([24]. գ.հտր էջ 331 – [10]. էջ 14)

Առաջին վարչութեան մաս կազմած են Պետրոս Պետիկեան, Ժորժ Միքայէլեան, Գրիգոր Ճիլաճեան, Ժան Պուսպճեան, Էլի եւ Միշէլ Սայիտ, Ռաֆայէլ Աթալլա, Ժորժ Պարկուտ, Անթուան Սարուադ եւ Պետրոս Վրդ.Թարմունի:

Ակումբին ընդհանուր ժողովին եւ պետական վաւերացումին արժանացած կանոնագիրը ուղեցոյցը եղած է Գործադիր Վարչութեան, որուն աշխատանքին գործակցած են ընկերային, երիտասարդական, տիկնանց եւ մարզական յանձնախումբերը:

Յիշարժան է, թէ Ակումբին եւ Ս.Թերեզա եկեղեցիին յառաջամասի պարտէզին մէջ, 1985-ին բացումը կատարուած է Ս.Սահակ եւ Ս.Մեսրոպ Թարգմանչաց Յուշարձանին, գեղարուեստական յղացումով՝ Ճարտարապետ Հրազդան Պալեանի:

([10]. էջ 14)

1968-1998, «Ժողովրդապետական Սրահ»ին գործունէութեան տնօրինումը կատարած է Պետրոս Վրդ.Թարմունին, մինչեւ կաթողիկե Սինհոդոսին կողմէ Անոր Կաթողիկոս-Պատրիարք ընտրութիւնը Հոկտեմբեր 1999-ին:

Ներկայիս, Ս.Թերեզա եկեղեցին և Սրահը հովանաւորութիւնը կը վայելեն եգիպտահայ կաթողիկե համայնքի վիճակաւոր Գերապայծառ Գրիգոր-Օգոստինոս Գուսան Ս.Եպիսկոպոսին, իսկ սրահին ժողովրդապետն է Ժիրայր Քինյ. Անանեանը:

Ս.Թերեզա Սրահին գործունէութեան մաս կազմած են ընկերային եւ երիտասարդական դաստիարակչական հաւաքոյթներ, հայերէն լեզուի դասընթացքներ, մշակութային ձեռնարկներ եւ յարակից մարզական շարժումը:

Սրահին կողքին կը գտնուի մարզադաշտը, ուր իրենց փորձերն ու մրցումները կը կատարեն պասքէթպոլի, Ֆուպոլի, հէնտպոլի եւ փինկ-փոնկի խումբերը, կազմակերպելով եւ մասնակցելով հայկական ակումբներու տարեկան հերթական նաեւ օտար միջակումբային մրցաշարքերուն: Տեղւոյն մարզական խումբերէն անդամներ մաս կը կազմեն եգիպտահայ ներկայացուցչական խումբերուն, որոնք իրենց մասնակցութիւնը կը բերեն հայրենիքի մէջ 1999-էն սկսեալ կազմակերպուած Համահայկական խաղերուն:

«Ժողովրդապետական Սրահ»ին վարչութեան կողմէ, 1971-էն 1978 հրատարակուած է «Պարբերաբերթ Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի» պարբերաբերթը, Փետրուար 1973-էն սկսեալ՝ «Սրահի Կեանքը» ամսաբերթը, իսկ Պետրոս Եպս.Թարմունիի խմբագրութեամբ և Անդրանիկ Վրդ.Ադամեանի աշխատակցութեամբ 1991-ին լոյս տեսած են «Կապ» հայ կաթողիկէ պարբերաբերթին երեք լեզուներով (հայ.-ֆրանս.-արաբ.) հրատարակուած 10 համարները:

([10] - [14]. էջ 343,344)

Հայ Կաթողիկէ Ակումբին հովանաւոր հոգեւոր դասին եւ վարչութեան սերտ գործակցութեամբ կատարուող գործունէութեան կողքին, զօրակցութեամբը երեք եւ երիտասարդ սերունդի անդամներուն, կատարուած են սրահին եւ մարգադաշտին հերթական նորոգութեան աշխատանքները, որոնք վերջին երկամեակի շինարարութիւններով ամբողջացան՝ հանդիսասրահին վերեւ աւելցուած երկրորդ յարկով եւ վարչական յարակից սենեակներով:

Կ Ի Զ Է

115. «Յարատեւութիւն» Խնայողական Մնտուկ - Կիզէ - Գահիրէ , 1907, 1913

Խնայողական Մնտուկը հիմնուած է 1907-ին Կիզէ-Գահիրէի Մաթոսեան Անանուն Ընկերութեան պաշտօնեաներու միջեւ եւ նախաձեռնութեամբ:

Նպատակը եղած է *«միացնել անդամներուն կողմէ խնայուած եւ Մնտուկին վճարուած գումարները, օգտագործել զանոնք ի շահ իրենց եւ այս կերպով պատրաստել անոնց դրամական նեցուկ մը ապագային համար»:*

Շրջան մը կազմալոյծ վիճակի մէջ գտնուելէ ետք, վերահաստատուած է եւ Կանոնագիրը վաւերացուցած՝ 14 Սեպտեմբեր 1913-ին, Հայ Ազգային սրահին մէջ գումարուած Արտակարգ Ընդհանուր Ժողովին կողմէ:

Ընկերութեան կեդրոնատեղին հաստատուած է Կիզէ: ([XXIII] - [12].թիւ 160)

Խնայողականը հրատարակած է 1913-ին վաւերացուած եւ 29 յօդուածներէ բաղկացած «Հիմնական Կանոնագիր» մը (Տպ.Զարեհ Ն.Պերպերեան, Գահիրէ, 1914, 8 էջ):

([12]. թիւ 160)

116. Կիզէի Հայ Կրթասիրաց Միութիւն - Կիզէ , Գահիրէ , 1930-1961

Միութիւնը հիմնուած է 9 Օգոստոս 1930-ին, խումբ մը կրթասէր ազգայիններու նախաձեռնութեամբ, նպատակ ունենալով *«ա) Կրթել Կիզէաբնակ հայ մանկտին տոհմային լեզուով եւ ոգիով. բ) Կիզէի հայութեան մէջ վառ պահել ազգ. զգացումը. գ)Սատարել Կիզէի հայ երիտասարդութեան ինքնազարգացման եւ ազգ. դաստիարակութեան»:*

([V] - [12].թիւ 553)

Միութեան հիմնադիրները եղած են. Սամուէլ Կորկիսեան, Գրիգոր Զիզմէճեան, Կարապետ Հիւսիսեան, Պօղոս Գալըպճեան, Հրանդ Քէշիշեան, Լաւրէն Կերկերեան, Համազասպ Միրաքեան, Գարեգին Սակաւիկեան, Մկրտիչ Նալպանտեան, Յովհաննէս Տէր Մկրտիչեան, Պետրոս Հաճընլեան, Անդրէաս Մասուտեան եւ Ղեւոնդ Նալպանտեան:

Միութեան ընդհանուր ժողովը գումարուած եւ անդրանիկ վարչութիւնը կազմուած է Դժ. 14 Օգոստոս 1930-ին, յանձին՝ Պօղոս Գալըպճեանի, Սամուէլ

Կորկիսեանի, Գարեգին Ճիզմեճեանի, Կարապետ Հիւսիսեան, Լաւրէն Կերկերեանի, Գարեգին Սակաւիկեանի եւ Համազասպ Սիրաքեանի:

Մաթոսեան Տան պաշտօնէութիւնն ու գործաւորութիւնը կազմած են Միութեան շուրջ 120 անդամները: (24). գ.հտր., էջ 567)

Միութեան նախաձեռնութեամբ հիմնուած է «Հայկազեան Մանկապարտէզ»ը որուն բացումը կատարուած է 13 Սեպտեմբեր 1930-ին: Կազմուած է «Տիկնանց Յանձնախումբ» մը, սատարելու համար վարժարանին եւ Միութեան գործունէութեան ծրագիրներուն: Մանկապարտէզը ունեցած է շուրջ 35 աշակերտ:

Մանկապարտէզին մէջ կիրարկուած է Գալուստեան Ազգ. Մանկապարտէզի ծրագիրը: ([V] - [12].թիւ 553)

1946-ին, Կրթասիրաց Միութիւնը իր հիմնած վարժարանին մատակարարութիւնը յանձնած է Գահիրէի Ազգային Իշխանութեան իրաւասութեան:

([24]. գ.հտր., էջ 570)

Ազգային Վարչութեան Պատ. Քաղաքական Ժողովի 27 Հոկտեմբեր 1931-ի նիստին վաւերացուցած է Միութեան Ծրագիր-Կանոնագիրը (Տպ.Սահակ-Մեսրոպ, Գահիրէ, 78 յօդուած, 24 էջ, 1932), որ ներառած է նաեւ Կիզէի Վարժարանին Կանոնագրութիւնը: ([V]) - [12].թիւ 553)

15 Յունուար 1933-ին, հիմնադրուած է Միութեան «Մաթոսեան Սրահ»ը, իր ընթերցասրահով եւ գրադարանով, որոնց ղեկավարութիւնը ստանձնած են Յանձնախումբի անդամներ Լաւրէն Կերկերեան եւ Գարեգին Սակաւիկեան: Կազմուած է նաեւ Միութեան «Կրթասիրաց» նուագախումբը: ([24].գ.հտր., էջ 567)

Կիզէի Կրթասիրաց Միութիւնը կազմալուծուած է վարչութեան 15 Հոկտեմբեր 1961-ին գումարած նիստին որոշումով:

117. Հայ Համագործակցական Խնայողական «Մֆինքս» Միութիւն - Կիզէ, 1936

«Մֆինքս» Եգիպտահայ Խնայողական Միութիւն – Կիզէ , 1941

Խնայողական Միութիւնը հիմնուած է 25 Հոկտեմբեր 1936-ին, նպատակ ունենալով *«զարգացնել եւ զօրացնել խնայողութիւնը եւ տնտեսական կարողութիւնը իր անդամներուն մէջ»:*

Միութեան հիմնադիր անդամները եղած են Բարսեղ Դաւիթեան, Գեորգ Գեորգեան, Գրիգոր Ճիզմեճեան, Գրիգոր Ալթունեան, Եզնիկ Վեցիկեան, Իզնատիոս Իւվեզեան, Լաւրէն Կերկերեան, Լեւոն Բոլատեան, Կարապետ Սվազլեան, Յակոբ Գասապեան, Յակոբ Թորոսեան, Յովհաննէս Եաղճեան, Շահէն Հէլվաճեան, Պօղոս Բարմաքսըզեան, Սամուէլ Կորկիսեան, Ստեփան Մուրատեան եւ Նշան Թիֆէնէճեան:

Խնայողականի հասցէն եղած է թիւ 4, Ահմետ Քամել փողոց, Կիզէ:

Միութիւնը ունեցած է «Ծրագիր-Կանոնագիր Հայ Համագործակցական եւ Խնայողական “Մֆինքս” Միութեան, Եգիպտոս» անունով (Տպ.Նեղոս, Գահիրէ, 32 էջ, 1936), վաւերացուած՝ հիմնադիրներու ժողովին կողմէ 25 Հոկտեմբեր 1936-ին:

([VIIa] - [12].թիւ 742)

Երկրորդ Աշխարհամարտի սկզբնաւորութեան, թոյլ շրջան մը բոլորելէ ետք, Միութիւնը վերակազմակերպուած է 1941-ին, *«իր անդամները խնայողութեան վարժեցնելու»* նպատակը հաստատելով, ամսական բաժնեվճար 10 .դ. ընդունելով եւ առաւելագոյնը 20 բաժնեվճարի իրաւունքով: (Ժ.տետր դ., էջ 10,1943)

Թ Ա Ն Թ Ա

118. Թանթայի Ընթերցասիրական Ընկերություն - Թանթա , 1904

Ընթերցասիրական Ընկերությունը կազմուած է 1904-ին՝ 30 անդամներով:

Կատարուած կոչի մը ընդառաջ՝ հիմնուած է համեստ գրադարան մը, ուր միատեղուած հատորներէն եւ տեղական ու սփիւռքէն ստացուած պարբերականներէն օգտուողներէն գանձուած է ամսական բաժնեկէտար մը:

(ԺԶ1.1904, թիւ 5)

119. Թանթայի Հայկական Լսարան- Ընթերցատուն - Թանթա , 1914-1916

Հայկական Ընթերցատան բացումը կատարուած է 4 Ապրիլ 1914-ին:

Պատուոյ անդամ հռչակուած են ընթերցատան հիմնադրութեան նիւթական եւ բարոյական գոհողութիւններ կատարած տիարք Տիրան Փիլիպպոսեան, «Յուսաբեր»ի տնօրէն Արմենակ Մէօթէմէտեան եւ խմբագիր՝ Սուրէն Պարթեւեան:

Ընթերցատունը ճանչցուած է նաեւ «Թանթայի Լսարան-Ընթերցասրահ» անունով և երկամեակ մը ետք, կազմալուծուած է Սեպտեմբեր 1916-ին:

(Լ.1914, թիւ 222 - 1916, թիւ 74)

120. Թանթայի Հայ Կանանց Միություն - Թանթա , 1915-1918

Հայուհիներու բարեսիրաց այս միաւորը հիմնուած է Սեպտեմբեր 1915-ին, նպատակ ունենալով *«նպաստ հասցնել Փոր Սայիտ ժամանող Սուէտիոյ գաղթականներուն»*:

Հայ կանանց եռամեայ գործունէութիւնը ընդգրկած է գաղթակայանին մէջ գործող եգիպտահայ կամաւոր միաւորներուն առաքելութեան կարիքներու հոգածութեան օգտակար հանդիսանալ:

Վարչական անդամուհիներ եղած են Տիկնայք Այնաճեան, Աւագեան, Ակոբեան, Մէշէճեան, Միսիրարեան եւ Տէր Միքայէլեան:

(Լ.1915, թիւ 69)

121. Թանթայի Հայ Երիտասարդաց Միություն - Թանթա , 1917

Թանթայի երկսեռ երիտասարդաց միությունը հիմնուած է Մայիս 1917-ին:

Միաւորին ծրագրուած գործունէութեան նպատակը եղած է *«ստեղծել բոլոր Միջոցները, որ կը բարձրացնեն հայ երիտասարդին մտաւորական եւ ֆիզիքական կեանքն ու սատարել հայ տառապանքին»*:

(Լ.1917, թիւ 29)

122. Թանթայի Հայ Որբախնամ Ընկերություն - Թանթա , 1920

Թանթայի մէջ բնակութիւն հաստատած ընտանիքներու կանանց կողմէ կազմուած ընկերութիւնը գործած է նպատակ ունենալով *«կարելիութեան սահմանին մէջ նուիրահաւաք ձեռնարկներով օժանդակել գաղթական ընտանիքներու կարիքներուն»*:

(Զ.1921, թիւ 106/866)

Զ Ա Կ Ա Զ Ի Կ

123. Հ.Բ.Ը.Միութեան Մասնաճիւղ - Զակագիկ , 1907

Զակագիկի հայ գաղութին մէջ 1907-ին հիմնուած է Հ.Բ.Ը.Միութեան մասնաճիւղ մը 20 գործօն անդամներով: (ԺԶ. 1907, թիւ 348)

124. Շարքիյէի Հայուհեաց Կարմիր Խաչի Միութիւն - Զակագիկ , 1915

Զակագիկի հայուհիները իրենց յղուած կոչին ընդառաջ՝ տեղւոյն Ազգային Վարժարանի սրահին մէջ, Հինգշաբթի 15 Մայիս 1915-ին գումարուած ժողովին քննարկած են կազմակերպելի Միութեան մը «Ծրագիր-Կանոնագիր»ը, որուն նպատակ առաջադրուած է *«օգնել վիրաւոր հայ զինուորին եւ հայրենիքի թշուառներուն նիւթական ու կենցաղային կարիքներուն»:*

10 Յուլիս 1915-ին գումարուած երկրորդ ժողովը վաւերացուցած է «Ծրագիր-Կանոնագիր»ը եւ ընտրած՝ եօթը հոգիներէ կազմուած գործադիր վարչութիւն մը, որուն անդամակցած են Տիկնայք Մաննիկ Մ.Մեթեմէտեան(ատենապետ), Մարթա Յ.Քարբերդեան (ատենադպիր), Հայկանոյշ Յ.Սանտալեան (գանձապետ), Գոհարիկ Ունճեան , Զարուհի Ս.Տիրատուր, Մարի Գ.Ճիւլերճեան եւ Վիքթորիա Ա.Գասպարեան (անդամներ):

Միութեան գործադրելի ծրագիրներն ու գործունէութեան հսկողութիւնը որոշուած է յանձնել Գահիրէի Ազգային Առաջնորդարանին:

([24]. .գ.հտր էջ 157 - Լ. 1915, թիւ 49)

125. Հայ Երիտասարդաց Միութիւն - Զակագիկ , 1917-1931

Զակագիկի մէջ Երիտասարդաց Միութիւն մը կազմելու նախաձեռնական քայլերը առնուած են 5 Փետրուար 1917-ին որուն հիմնադիր ժողովը գումարուած է Ծրագիր-Կանոնագիրը վաւերացուած է 1 Մարտ 1917-ին տեղւոյն վարժարանին սրահին մէջ, նպատակ ունենալով *«Զակագիկի հայ համայնքին մէջ վառ պահել ազգային ոգին ու կեանքը, զարկ տալով ձեռնարկներու կազմակերպութեան եւ իրագործումովը՝ համայնքին յատուկ Լսարան Ընթերցասրահի մը կազմութեան»:*

Հիմնադրութեան նախաձեռնող անդամները եղած են Սահակ Դերձակեան, Սմբատ Թերզեան, Շահէն Կիրակոսեան, Կարապետ Ժամկոչեան, Գրիգոր Համբիկեան(Բօնշօն), Արմենակ Ս.Սանտալճեան եւ Յովհաննէս Ղազար Քարբերդեան (հովանաւոր եւ ատենապետ 1917-էն 1925):

Վարչութեան մայր-դիւանին պարբերաբար անդամ եղած են Յարութիւն Տէյիրմէնճեան, Յովհաննէս Սանտալեան, Յովհաննէս Քարբերդեան, Գրիգոր Համբիկեան, Թերզիպաշեան եւ Մ.Տէմիրճեան: ([24]. .գ.հտր. էջ 158-160)

Առաջադրուած ժողովրդային Լսարան-Ընթերցատան բացումը կատարուած է 1 Յուլիս 1917-ին, որուն գործունէութիւնը ղեկավարած են Ա.Սանտալեան, Գրիգոր Համբիկեան եւ Թերզիպաշեան:

Քառամեակի ընթացքին, լսարանը կազմակերպած է գեղարուեստական յայտագրերով ձեռնարկներ, դասախօսական, երաժշտական, երգարուեստի եւ թատերական երեկոներ: Տեղի ունեցած են ազգային տօնախմբութիւններ, որոնց ընթացքին խօսք առած են Գահիրէէն եւ Աղեքսանդրիայէն հրաւիրուած հասարակական գործիչներ եւ մամուլի խմբագիրներ:

Երիտասարդաց Միության վաերացուած Ծրագիր-Կանոնագիրը լոյս տեսած է Զ.Պերպերեան Տպարանէն, Գահիրէ, 1917-ին: ([12]. 1917, թիւ 234 – [XV])

1931-ին Միութիւնը միաձուլուած է Զակազիկի *«Կամսարական Տան Հայ Պաշտօնէից Միութիւն»*ին հետ: (Լ. 1917, թիւ 40,145)

126. Շարքիյէի Տիկնանց Միութիւն - Զակազիկ , 1917

Զակազիկի Տիկնանց Միութիւնը կազմուած է Մայիս 1917-ին, նախաձեռնութեամբ եւ ղեկավարութեամբ տեղւոյն Ազգային Վարժարանի վարիչ Տիկին Մելքոնեանի: (Լ. 1917, թիւ 26)

127. Հայ Ռամկավար Ակումբ - Զակազիկ , 1920

Ակումբը հիմնուած է 1 Մարտ 1920-ին, Զակազիկի «Ազգային Սրահ»ին մէջ կազմակերպուած հաւաքոյթի մը ընթացքին, ներկայութեամբ՝ հասարակական գործիչ Էօժէն Փափագեանի եւ հրապարակագիր Լեւոն Մկրտիչեանի:

Հայկական Հարցին, Ռամկավարութեան եւ Ընկերվարութեան մասին կատարուած խօսքերէն ետք, հանգանակութիւն մը նախաձեռնուած է ի նպաստ Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան պայքարին, որուն արձանագրած յաջողութեան ընդառաջ՝ ներկայ հասարակութեան առաջարկով եւ անդամագրութեամբ կազմուած է «Զակազիկի Հայ Ռամկավար Ակումբ»ը:

(Զ.17 Մարտ 1920, 1 Յուլիս 1928 - [24]. գ.հտր. էջ 160)

128. Կամսարական Տան Հայ Պաշտօնէից Միութիւն - Զակազիկ , 1929-1944

Զակազիկի Կամսարական Ծխախոտի հիմնարկին պաշտօնէութեան այս միութիւնը հիմնուած է Յունիս 1929-ին, նախաձեռնութեամբ Արմենակ Կամսարականի:

Միութիւնը եղած է համագործակցական կառոյց մը, որուն դրամագլուխը կազմուած է գործատան պաշտօնէութեան թոշակներէն գանձուած տոկոսներէն, նպատակ ունենալով *«օժանդակել՝ Օշական Ազգային Վարժարանի եւ Միութեան Սրահի ընթացիկ ծախսերուն»*:

Միութեան վարչութեան անդամակցած են Գասպար Իփէքեան(նախագահ եւ ատենապետ), Գրիգոր Ալթունեան, Յակոբ Գասապեան, Սահակ Դերձակեան եւ Յարութիւն Ամատունի:

1931-ին Միութեան հետ միաձուլուած է տեղւոյն *«Հայ Երիտասարդաց Միութիւն»*ը, նկատի ունենալով երկու միութիւններուն նպատակի նոյնութիւնը: (Զ. 18 Յունիս 1931)

Միութիւնը լուծուած է 6 Յունիս 1944-ին գումարուած ժողովին որոշումով եւ կատարուած յայտարարութեամբ: (Լ. 24 Ապրիլ 1945 - [24]. գ.հտր. էջ 160-161)

129. Եկեղեցասէր Տիկնանց Միութիւն - Զակազիկ , 1929 , 1931

Հայուհեաց Միութիւն Զակազիկի Հայոց - Զակազիկ , 1931

Տիկնանց Միութիւնը հիմնուած է 24 Յունիս 1929-ին, Զակազիկի Ս.Խաչ եկեղեցիին շինութեան աւարտին, պատուակալ ատենապետութեամբ՝ բարերար Արմենակ Կամսարականի եւ նախաձեռնութեամբ Տիկնայք Մաննիկ Մէթօքմէտեանի, Մաննիկ Դերձակեանի, Ռօզ Գալըպճեանի, Նուարդ Ա.Մէթօքմէտեանի, Աստղիկ Բաբլանեանի եւ Էօժէնի:

5 Փետրուար 1931ին գումարուած Ընդհ. Ժողովին որոշումով՝ Միութիւնը վերանուանուած է «Հայուհեաց Միութիւն Զակագիկի Հայոց» անունով:

Միութեան բարեփոխուած Ծրագիր-Կանոնագիրը վաւերացուած է 5 Մեպտ. 1931-ին գումարուած Ընդհանուր Ժողովէն, իր ապագայ գործունէութեան մէջ ներառնելով ազգային եւ մշակութային բազմաբնոյթ ծրագիրներ:

Նպատակ որդեգրուած է «1) Զակագիկի իզական սեռի գործօն աջակցութեամբ գաղութին մէջ վառ պահել ազգային ոգին, 2) հոգատար ըլլալ Ս.Խաչ եկեղեցւոյ պայծառութեանը եւ բարեգարդութեան, 3) աջակցիլ ազգային մշակոյթի եւ ազգապահպանման ամէն ձեռնարկի, 4) հայ կարօտ ընտանեաց օգնել Միութեան միջոցներուն թոյլատրած չափով, 5) հոգ տանիլ իզական սեռի մտաւոր եւ բարոյական մակարդակներու բարձրացման եւ 6) ջանալ հիմնել արհեստանոց մը միութեան եկամուտ ապահովելու համար»:

Միութիւնը անդամակցութիւնը ընդունած է տասնըհինգ տարեկանը լրացուցած ամէն հայուհիի եւ ղեկավարուած է ընդհանուր եւ գործադիր ժողովներով:

Վաւերացուած Կանոնագիրը բաղկացած է անդամակցութեան մասին 30 յօդուածներէ: ([24]. գ.հտր., էջ 161-162)

Փ Ո Ր Ս Ա Յ Ի Տ

130. «Ազգային Լսարան» Փոր Սայիտի Քէմփին - Փոր Սայիտ , 1915-1919

Հայ գաղթակայանին «Ազգային Լսարան»ը հիմնուած է Դեկտեմբեր 1915-ին:

Լսարանին հիմնադիր եւ վարչական անդամ եղած են Սուէտիոյ զարգացած նուիրեալ ղեկավար երիտասարդներէն Սովսէս Տէր Գալուստեան, Գեղարդ Շարոյեան եւ Սերոբ Շէրպէթեան: (Լ.1915, թիւ 103)

Շաբաթական հաւաքոյթներու ծրագրերուն հիմնական նպատակը եղած է «Բարձր պահել ազգային պատկանելիութեան ոգին, երկիր վերադառնալու աննահանջ տրամադրութեան պահուածքով»:

131. «Եփրատ» Վիճաբանական Ակումբ - Փոր Սայիտ , 1916-1919

Մշակութասէր խումբ մը երիտասարդներու նախաձեռնութեամբ կազմուած ակումբը, գաղթականներու կայանին մէջ հաստատուած է Յունուար 1916-ին:

Ակումբին նպատակը եղած է «երիտասարդութիւնը զարգացնել վիճաբանութեան միջոցով, զերծ՝ կուսակցական որեւէ հանգամանքէ, օժանդակելով տեղւոյն լսարան-ընթերցարանին»:

Յիշեալ սկզբունքներով որդեգրուած եւ վաւերացուած Ծրագիր-Կանոնագիրը, ուղեցոյց ընդունուած է «Եփրատ» ակումբին գործունէութեան:

(Լ.1916, թիւ 117)

132. «Հայկական Լեզէոն» - Փոր Սայիտ , 1916-1919

«Հայկական Լեզէոն»ի կազմութիւնը 1916-ին, նախաձեռնութիւնը եղած է Փոր Սայիտի Հայկական Քէմփի Սուէտիոյ հայրենաբաղձ տարագիր ռազմիկներուն:

Գաղթակայանին պատուիրակութիւնը կազմուած է Գաբրիէլ Գազանճեանէ, Մարտիրոս Պօյաճեանէ եւ Սերոբ Գապաղեանէ, որոնք Միջերկրականի «Ժիւրէ Կիւպէր» մարտանաւի ծովակալին ներկայանալով, ֆրանսական կառավարու-

թեան միջնորդութեան դիմած է կամաւոր արձանագրուելու և զէնք աղերսելու համար:

Սուէտիացիներու եւ Ֆրանսացիներու կապը հանդիսացած է ֆրանսահայ Ծովային սպայ Տիրան Թէքէեանը, որ կարելոր բաժին ունեցած է «Հայկական Լեգէոն»ի կազմութեան մէջ:

Ֆրանսական կառավարութեան պատրաստակամ համաձայնութիւնը ստանալէ ետք, «Հայկական Լեգէոն»ի կազմութեան առաջին զօրակոչը հնչած է 1916 Հոկտեմբերի վերջերը, որուն ընդառաջողները եղած են 600 ռազմիկներ:

1 Փետրուար 1917-ին, վրանաքաղաքին մատուոյն մէջ տեղի ունեցած է Հայկական Դրօշին օրհնութիւնը: (Գ. էջ 256)

«Հայկական Լեգէոն»ի կառոյցը վրանաքաղաքին մէջ լուծուած է 1919-ին:

Ա Ս Ի Ո Ւ Թ

133. Հայուհեաց Բարեսիրաց Միութիւն - Ասիութ , 1913

Հայ Կանանց Բարեսիրաց միութիւնը կազմուած է 1913-ին:

Միաւորին գործունէութիւնը նպատակադրած է « *կարելիութեան սահմաններու մէջ, օգնութեան հասնիլ հայրենի ռստաններու մէջ տառապող հարազատներուն*»:

Միութեան վարչական դիւանին անդամ եղած են Տիկնայք Նուրիցա Քէշիշեան (ատենապետ) եւ Գայեանէ Նուրեան (ատենադպիր): (Լ.1916, թիւ 142)

Նուիրահաւաք նախաձեռնութեամբ գումարներ փոխանցուած են պատկան յանձնախումբերու, առ ի նպատակի գործադրութեան:

134. Հայ Երիտասարդաց Միութիւն - Ասիութ , 1916

Երիտասարդաց Միութիւնը հիմնուած է Հոկտեմբեր 1916-ին, հայրենիքի կարօտով ապրող եւ Ասիութ հաստատուած հայորդիներու կողմէ:

Միութեան գլխաւոր նպատակներէն եղած է «*ջանալ ըստ կարիքի օգնել մեր տարաբախտ հայրենիքին անհուն կարիքներուն*»:

Ապրիլ 1917-ին, Միութեան անդամները եգիպտահայ մամուլին միջոցով նպաստ հասցուցած են հայ կամաւորներուն եւ Կովկասի փախստականներուն:

(Լ.1917, թիւ 6)



ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

1. Փրկատենչ Ընկերություն Հայոց - Աղեքսանդրիա , 1885 - 1887

«Փրկատենչ» Ընկերությունը հիմնուած է 1885-ի վերջերը, նպատակ ունենալով *«բարոյական եւ նիւթական բարեսիրական գործունէութիւն ծաւալել»*:

Ընկերությունը, 1887-ին «Արմենիա Ընկերություն» վերանուանուելով, դարձած է Գահիրէի «Հայ Յառաջդիմասէր Ընկերություն»ի Աղեքսանդրիոյ մասնաճիւղը: (ԼԶ.1959-1960, էջ 29)

2. « Արմենիա » Ընկերություն - Աղեքսանդրիա , 1887

Ընկերությունը հիմնուած է 1 Յունուար 1887-ին, նպատակ ունենալով *«դրամական ոյժ մը գոյացնելով, Հայաստանի մէջ գտնուող ազգայնոց բարոյական եւ նիւթական բարգաւաճման նպաստել»*:

Ան դարձած է Գահիրէի «Հայ Յառաջդիմասէր Ընկերություն»ի մասնաճիւղը եւ ունեցած՝ 24 յօդուածներէ բաղկացած «Կանոնագիր ԱՐՄԵՆԻԱ Ընկերություն» անունով իր ծրագրին ուղեցոյցը: (ԼԶ.1959-1960, էջ 29 – [12]. թիւ 1881)

3. Հայոց Բարեսիրական Ընկերություն - Աղեքսանդրիա , 1888

Ընկերությունը կ'ենթադրուի հիմնուած է 1888-ին, անոր մասին տեղեկութիւնը քաղուած ըլլալով «Նեղոս» Շաբաթաթերթէն (1889 թիւ 29), ուր կը յիշուի, թէ *«...հայոց Բարեսիրական Ընկերութիւնն այս շաբթու թատերական ներկայացում մը պիտի տայ...»*: (ԼԶ.1959-1960, էջ 30)

4. Հայ Կարօտելոց Նպաստամատոյց Ընկերություն - Աղեքսանդրիա , 1897-1899

1897-ին, գաղթականներու համար փոքր հիւանդանոց մը կարճ ժամանակով գոյութիւն ունեցած է Աղեքսանդրիոյ մէջ, շնորհիւ եւ ծախսերուն հոգածութեամբը Նուպար Փաշային: (ԻԳ.1924, պրկ է. էջ 102)

Նպաստամատոյց Ընկերութեան ծանուցումը կատարուած է Պոլսոյ «Փունջ» պարբերականին մէջ, օժանդակութեան կարօտ ազգայիներու օգտակար հանդիսանալու համար կազմակերպուած թատերական ձեռնարկի մը մասին: (ԼԶ.1962, էջ 133)

5. Աղքատախնամ Բարեգործական Ընկերություն

Աղեքսանդրիոյ Հայոց - Աղեքսանդրիա , 1899

Աղքատախնամ Ընկերություն Աղեքսանդրիոյ , 1930

Աղեքսանդրիոյ Բարեսիրաց Միութիւն , 1990 -

Բարեգործական Ընկերութեան մասին յիշուած է «Արշալոյս» (1900, թիւ 85 / 1902, թիւ 274) , «Ազատ Բեւ» (1903, թիւ 8) եւ «Թերթիկ» (1906, թիւ 27,28) լրագրերուն նշուած համարներուն մէջ: (ԼԶ.1959-1960, էջ 30)

Կը կարծուի, թէ Աղքատախնամ Ընկերությունը հիմնուած է 1899-ին, եւ գործած՝ անմնացորդ աշխատանքով օգտակար հանդիսանալու 90-ականներու եւ 20-րդ դարու առաջին երկու տասնամեակներուն հայրենահան եղած եւ Եգիպտոս ապաստան գտած հայու բեկորներուն:

Աղքատախնամի վարչական կանացի կազմերը, եգիպտահայ հոգեւոր

դասին, Աղեքսանդրիոյ Ազգային Առաջնորդարանի պատկան մարմիններուն հովանաւորութեամբ, միութենական կառոյցներու գործակցութեամբ, հայ բժիշկներու եւ բուժքոյրերու օժանդակութեամբ՝ խնամատարութիւն ցուցաբերած են Փոքր Սայիտի Մուսա Լեւոն Գաղթակայանի բոլոր միաւորներուն:

Կատարելի օգնութեան ծախսերը մատակարարելու համար կազմակերպուած են հասութեաբեր բարեգործական ձեռնարկներ եւ վիճակահանութեան տոմսերու վաճառման աճուրդ՝ Աղեքսանդրիոյ Ապու Տարտարի թաղին Առաջնորդարանի շրջափակին մէջ: (Զ.1921, թիւ 61)

1923 Սեպտեմբերին, մնայուն թէ բացառիկ նպաստընկալները հրաւիրուած են Առաջնորդարան ներկայանալ, իրենց ինքնութեան ստուգումը կատարելու համար: (Զ.1921, թիւ 61- 1923, թիւ 243)

Խնամատարական բարեսիրական Ընկերութիւնը վերակազմուած է 1930-ին, իբրեւ օժանդակ՝ տեղւոյն Ազգային Առաջնորդարանի Աղքատաց հոգաբարձութեան, «կարիքաւոր հայ ընտանիքներու օգտակար դառնալու» նպատակով:

1931-1932 տարեշրջանի վարչական կազմին անդամակցած են Տ.Մեսրոպ Քինյ.Քէօշկերեան (նախագահ-ատենապետ), Վ.Պալլարեան (ատենադպիր), Ա.Թովմասեան(գանձապետ) եւ Տոքթ.Ն.Նիզիպլեան(խորհրդական): Իսկ Տիկնանց օժանդակ Յանձնախումբին մաս կազմած են Տիկք. Ս.Աբգարեան, Ս.Գալըպճեան, Ա.Ենովքեան եւ Պ.Երկաթ: 1935-ի Տիկնանց վարչական կազմին ատենապետուիին եղած է Տիկ.Աննա Ենովքեան, ատենադպրուիին՝ Տիկ.Նուարդ Ե.Քըրք եւ գանձապահուիին՝ Տիկ.Զարուհի Ֆերմանեան:

1937-ին Աղքատախնամի Տիկնանց Միութեան պատուոյ նախագահ ընտրուած է Տիկ.Գ.Ա.Կամսարական Պէյ, կազմին գործակից ունենալով՝ Տիկք.Վ.Ա.Կամսարական, Հ.Մ.Խաչատուրեան եւ Օր.Թ.Գարամանեան:

(Զ.1932, թիւ 4239 – 1937, թիւ 5550)

Իր առաքելութեան ճամբով, Ընկերութիւնը բարոյանիթական կարելիութիւններու այլազան միջոցներով՝ շարունակած է իր նպաստը բերել ընտանիքներու կենցաղային պայմանները բարելաւելումի աշխատանքին:

Տասնամեակներու ընթացքին, կարիքաւոր բազմաթիւ անհատներ եւ ընտանիքներ արժանացած են ամսական կանոնաւոր նպաստի եւ դարմանական-դեղորայքի ծախսերու հոգածութեան, անվերապահ զօրակցութեամբը գաղութի բոլոր կազմակերպութիւններուն եւ բարեսէր ազգայիններուն:

Վերջին երկու տասնամեակներուն, Ընկերութիւնը վերանուանուած է «Աղեքսանդրիոյ Բարեսիրաց Միութիւն»:

6. Հայկական Մատենադարանի Ընկերութիւն - Աղեքսանդրիա , 1899 - 1908

(Ժողովրդական Գրադարան-Ընթերցարան Ընկերութիւն)

Ընթերցասիրութիւնը խրախուսելու կոչուած այս Ընկերութիւնը հիմնուած է բացման ձեռնարկը կատարուած է Սեպտեմբեր 1899-ին նպատակ ունենալով «*հասարակութեան մտաւոր, բարոյական եւ ընկերային զարգացումին նպաստել*»:

Հաստատուած է Մօնֆերաթօյի շէնքին առաջին յարկին մէջ (նախկին իտալական ակումբին տեղը):

Անոր գործադիր մարմնի դիւանին անդամ եղած են Յ.Ա.Գալֆայեան (ատենապետ) եւ Ա.Նազաշճեան (ատենադպիր):

Հետագային, ընկերությունը ճանչցուած է նաեւ «Ժողովրդական Գրադարան-Ընթերցարան Ընկերություն» անունով:

Իսկ 1 Ապրիլ 1900-ին կոչուած է «Աղեքսանդրիոյ Ժողովրդային Մատենադարան Լսարան» հաստատութիւն:

Մատենադարան Ընկերությունը կազմալուծուած է 1908-ին:

(Ը.1899, թիւ 20 – Ը.1900-01 թիւ 76,156 – [9]. էջ 195)

7. Արուեստասիրաց Ընկերություն - Աղեքսանդրիա , 1901

Մշակութասէր այս Ընկերությունը հիմնուած է 1901-ին, նպատակ ունենալով «Գեղարուեստի սէրն ու ճաշակը տարածել, ժողովուրդի բարքն ազնուացնել եւ մտաւորական ուժերը ձուլել եգիպտահայ գաղութին մէջ:

(ԽԲ.1901, թիւ 1 - ԼԶ.1959-1960, էջ 30)

8. «Տիգրան Երկաթ» Հայ Մշակութային Միություն - Աղեքսանդրիա , 1902 -

Միութեան հիմնադիրները եղած են Շաւարշ Հովհիւեան, Էօժէն Բաբազեան, Բարսէղ Օհանեան, Օննիկ Թաշճեան, Ատոմ Ասլանեան, Ալեքսան պէյ Ճէվահիրճեան: Առաջին առթիւ, 1 Մայիս 1902-ին, «Հայկական Ընթերցասրահ» անունով առժամեայ հաւաքատեղի մը հաստատուած է Ապու Տարտար փողոցին վրայի ազգապատկան թաղամասին մօտակայքը:

([22]. էջ 4)

Հետագային, հիմնադիրներուն միացած են համախոհ գործիչներ Միհրան Տամատեան, Լեւոն Մկրտիչեան, Միհրան Թոքաթլեան, Միհրան Թէլեան եւ Լեւոն Շիշմանեան, ու որոշուած է միութիւնը «Տիգրան Երկաթ» անուանել, յիշատակը յաւերժացնելու համար այդ գրական ծածկանունով ծանօթ վաղամեռ գրագետ Կարապետ Պիլէգիկճիի:

1910-ին կազմակերպությունը երիտասարդ անդամներու նախաձեռնութեամբ կոչուած է «Հայ Երիտասարդաց Միություն» նպատակ ունենալով «*գաղութին մէջ մտաւորական եւ բարոյական կապերը ամրապնդելով՝ միշտ մօտ պահելու համար մայր հայրենիքին*»:

Մարտիրոս Ոսկեանի նախաձեռնութեամբ, միութեան կողքին կազմուած են իգական սեռի «Գեղարուեստասէր Հայուհեաց Միություն»ը եւ երիտասարդաց «Ուսանողաց Միություն»ը, հաւաքատեղի ունենալով Ռ.Ա.Կ.ի Աղեքսանդրիոյ Ակումբը թիւ 16, Ապու Տարտար փողոց:

([22]. էջ 6 - Զ. դեկտ.1925)

1915-1916 թուականներուն եւ ժամանակի ընթացքին, ընկերությունը ճանչցուած է նաեւ «Տիգրան Երկաթ Միություն», «Տիգրան Երկաթ Ժողովրդային Միություն» եւ «Տիգրան Երկաթ Հայ Երիտասարդաց Միություն» անուններով, հաստատուելով յաջորդաբար Աղեքսանդրիոյ Նուպար Փաշա եւ Մահմուտ Փաշա Էլ-Ֆալաքի փողոցներու յարկաբաժիններուն մէջ:

Ուսանողաց Միութեան գործունէութիւնը դադրած է 1919-1922 տարիներուն, երկրին մէջ տիրող քաղաքական աննպաստ պայմաններուն պատճառով եւ վերակազմուած Լեւոն Աճէմեանի ջանքերով 1923-ին: Իրարայաջորդ վարչություններու օրերուն կազմուած են ֆութպոլի խումբը, հսկողութեամբ՝ մարզիչ Ստեփան Խանճեանի, նաեւ՝ պասքէթպոլի խումբը եւ երգչախումբ-նուագախումբը: Միութեան կարգ մը գրասէր անդամներուն նախաձեռնութեամբ և գործակցու-

թեամբ Գահիրեի Ուսանողականին՝ 1923-ին հրատարակուած է «Մասիս» գրական պարբերականը: ([14]. էջ 148 - [36]. էջ 36-41)

1945-ին, պետական օրէնքին համաձայն, կառոյցը ստացած է իր վերջնական «Տիգրան Երկաթ Հայ Մշակութային Միութիւն» անունը, միաձուլումովը իր կողքին գործող «Գեղարուեստասէր Հայուհեաց» եւ «Հայ Ուսանողաց» միութիւններուն:

Միութեան ծրագրին հիմնական նպատակը եղած է *«իր անդամները միշտ վառ պահել հայրենիքին հետ, փրկել սերունդները այլասերումի վտանքէն եւ հայ կրթարաններէ ընթացաւարտ կարիքաւոր պատանիներուն երկրորդական, բարձրագոյն ուսմանց նիւթական օժանդակութիւն մատուցանել»:* ([22]. էջ 8)

Տարիներու ընթացքին Միութեան յաջորդական վարչութիւնները փայփայած են ընդարձակ հաւաքավայրով օժտուելու կարելիութիւնը որ իրականացած է Տիգրան Ալեքսանեանի նախապէս կատարած մեծագումար նուիրատուութեան օգտագործումով եւ Հայ Ազգային Հիմնադրամի Կեդրոնական Վարչութեան որոշումով վարձուած թիւ 26, Նապի Տանիէլ փողոցի կալուածին ձեռքբերումը:

Կանաչապատ պարտէզով շրջապատուած եւ հանդիսասրահով օժտուած նոր կեդրոնին բացումը կատարուած է 17 Յունիս 1950-ին:

25 Հոկտեմբեր 1959-ին կատարուած է սեփական շէնքի կառուցման հիմնարկէքը Իպրահիմէյա թաղաշրջանի, թիւ 206, Էլ Հորրէյա պողոտային վրայ, եւ միայնակ նոր կեդրոնին բացումը կատարուած՝ 28 Օգոստոս 1966-ին: Իսկ անոր երկրորդ յարկի շինարարութիւնը ամբողջացած ու հանդիսասրահին բացումը կատարուած է 12 Յուլիս 1973-ին: ([22]. էջ 23)

Նոր շէնքին ճարտարապետը եղած է Սիրուն Չայիրճեան 1972-ին:([8].էջ 551)

«Տիգրան Երկաթ» Հայ Մշակութային Միութեան վարչութիւնը 1985-ի երկրորդ կիսուն նախաձեռնած է Կեդրոնին ամբողջական նորոգութեան, եւ 15 Փետր. 1986-ին վերաբացումը կատարած՝ անոր «Տիգրան Ալեքսանեան» սրահին և շէնքին մուտքի «Նազարէթ Զամպաքեան» նորահաստատ հաւաքավայրին:

Վարչական կազմին իրենց գործակցութիւնը բերած են երաժշտութեան, մատենադարանի, փինկփոնկի եւ յարակից ձեռնարկներու կարգադիր յանձնախումբերը: ([36]. էջ 60)

Միութեան բեղուն գործունէութեան մաս կազմած են թատերական ներկայացումներ, դասախօսական երեկոյթներ, երգահանդէս-նուագահանդէսներ, նկարչութեան եւ ձեռարուեստի ցուցահանդէսներ, պարբերական գործակցութեամբ Գահիրեի «Հ.Ա.Հ. Կոկանեան եւ «Հայ Գեղարուեստասիրաց» քոյր միութիւններուն:

Մշակութային Միութիւնը 1961-էն 1985 տարիներուն ունեցած է պարախումբ մը, որուն երկսեռ անդամները հետագային ներառնուած են Գահիրեի «Զանգեզուր» պարախումբի կազմին մէջ: ([22]. էջ 27)

Յիշարժան հանդիսութիւններով 1952-ին, 1977-ին եւ 2002-ին, ոգեկոչուած են Միութեան 50 , 75 եւ 100-ամեակները:

Հրատարակուած են Միութեան յոբելենական 50-ամեակի՝ *«Ոսկեմատեան յիշատակարան 1902-1952»* եւ *«Յուշամատեան Տիգրան Երկաթ Հայ Մշակութային Միութեան հիմնադրութեան 100-ամեակի յոբելեանին 1902-2002 Աղեքսանդրիա»* զոյգ հատորները: ([12]. թիւ 1283,1812)

Աղեքսանդրիահայ գաղութին թիւով նօսրացած պայմաններուն տակ, Միութիւնը ներկայիս կը գոյատեւէ ինքնամփոփ իր գործունէութեամբ:

9. Զեյթունի Բարեսիրաց Ընկերություն - Աղեքսանդրիա , 1903

Զեյթունի որբերուն խնամատար Ընկերությունը հիմնուած է 1 Մարտ 1903-ին, նպատակ ունենալով *«Զեյթունի որբ տղաքը դաստիարակել ու պատրաստել անոնց տնտեսական ապագան»*: (ԺԶ1.1903, թիւ 4)

Զեյթունի բարեսիրացը իր ընդհանուր ժողովը գումարած է Մայիս 1903-ին եւ գործադիր ժողովի անդամ ընտրած է Հ.Բարթողիմէոս Վրդ.Զեյթունցի(ատենապետ), Բարսեղ Օհանեան(ատենադպիր), Տ.Էնֆիէճեան((գանձապահ), Հ.Դանիէլ Վարդապետ Մ.Տամատեան, Օ.Թաշճեան եւ Շ.Հովիւեան(խորհրդականներ):

(ԺԶ1.1903, թիւ 5)

1904-ին, Ընկերութեան Տնօրէն ժողովին ատենապետը եղած է Տոքթ.Էնֆիէճեան իսկ ատենադպիրը՝ Սմբատ Բիրատ: (Ա.1904, թիւ 16 - Ը.1909, թիւ 56)

10. Գրասիրաց Ընկերություն - Աղեքսանդրիա , 1903-1905

Ընկերությունը հիմնադրուած է 1903-ի կէսերուն:

Անդամները 1 Ապրիլ 1904-էն հրատարակած են «Գրասէր» անունով գրական կիսամսեայ խմորատիպ հանդէսը (11 թիւ), իսկ 1905-ին հրապարակուած է «Գրասէր»ի խմորատիպ մէկ թիւը, նաեւ «Տասնօրեայ Գրական Հանդէս»ին տպագիր միակ թիւը 1905-ին :

«Գրասէր», լոյս տեսած է ընդամենը 13 թիւ, իսկ ընկերությունը կազմալուծուած՝ 1905-ին: (ԼԶ.1959-1960, էջ 31 - [14]. էջ 36)

11. Կարմիր Խաչի Տիկնանց Միություն - Աղեքսանդրիա , 1904 , 1915

Տիկնանց բարեսիրական Միությունը հիմնուած է 1904-ին:

Միութեան գործող մարմինը բաղկացած է 7 հիմնադիր անդամուհիներէ, ատենապետուհի ունենալով Տիկին Վ.Կարապետ Փաշաեան Խանը, հասարակութեան առջեւ Միութեան ներկայացուցչի հանգամանքով:

Կ.Խ.ի Տիկնանց Միութեան Կանոնագրով յիշուած նպատակը եղած է *« օգնել, առանց կուսակցութեան խտրութեան, հայ քաղաքական բանտարկեալներու, ինչպէս նաեւ յեղափոխական ասպարէզի մէջ վնասուած վիրաւորուած հայրենակիցներու »*: (ԺԶ1.1904, թիւ 2)

Խնամատարական Հայ Կանացի միաւորը գործած է նաեւ «Հ.Յ.Դ. Հայ Կարմիր Խաչի Տիկնանց Միություն» անունով, և 16 Դեկտեմբեր 1906-ին գումարուած Ընդհանուր ժողովին կողմէ ընտրուած վարչութեան դիւանին անդամակցած են Տիկ.Ս.Աղիկեան (ատենապետ), Օր.Տ.Արթինեան (ատենադպիր), Տիկ.Աշըգեան(գանձապահ), Տիկնք. Յ.Փիլաւեան, Ս.Օտապաշեան, Պ.Գալֆաեան եւ Պ.Քէնտիկեան(խորհրդականներ): (Ա.1906, թիւ 72)

Միութեան հասոյթի աղբիւրները եղած են հանգանակություն, պագար, վիճակահանություն, պարբերական նուէրներ, ընկերային երեկոյթ-հանդէսներ, հրատարակություններ, եւն.: Կազմակերպուած լսարանական հաւաքոյթներուն, հայրենասիրական երգերով հանդէս եկած է Միութեան օրիորդաց “Շաքէ” երգեցիկ խումբը: («Ազատ Խօսք», 1907, տետր 35)

Կարմիր Խաչի Միությունը ունեցած է իր ներքին Կանոնագիրը 1905-ին, եւ 1906-1907-ին հրատարակած իր գործունէութեան միամեայ տեղեկագրերը, ինչպէս

նաեւ իր նախաձեռնութեամբ 1907-ին լոյս տեսած է Բարսեղ Շահպազի «Այլասիրութիւն և Եսասիրութիւն» հատորը:

(ԺԶ1.1904, թիւ 2 - ԼԶ.1959-1960, էջ 31 – [12]. թիւ 49,80)

Աղեքսանդրիոյ Հայ Տիկնանց Կարմիր Խաչը վերակազմուած է 22 Օգոստոս 1915-ին, վարչական անդամ ունենալով Տիկնայք Գ.Կամսարական(ատենապետ), Հ.Սէֆերեան (ատենադպիր), Մ.Իփէկեան (գանձապահ), Զ.Արապեան (մթերապահ), Մաթոսեան, Մուրաֆեանց, Գալֆաեան, Մէրամէթեան, Յակոբեան եւ Անանեանց (խորհրդականներ):

Խաչուհիներուն նպատակը միշտ եղած է *«հոգալ Կովկասի կամաւորական խումբերու վիրաւորեալներուն պիտոյքն ու կարիքները»*:

Տիկնանց Կարմիր Խաչի այս միաւորին նախաձեռնութիւնը եղած է նաեւ Փոր Սայիտ ապաստանած Մուսա Լերան գաղթականներուն հասցնել զգեստեղէն, օճառ եւ զանազան անհրաժեշտ կարիքներ: (Լ.1915, թիւ 3 և 50 – [9]. էջ 173)

12. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն -

Աղեքսանդրիոյ Մասնաճիւղ , 1907 -

Գահիրէի մէջ, Հ.Բ.Ը.Միութեան 1906-ի հիմնադրութենէն ետք, 1907-ին հիմնուած Հ.Բ.Ը.Մ.ի Աղեքսանդրիոյ մասնաճիւղը հանդիսացած է համահայկական մակարդակով Միութեան Առաջին Մասնաճիւղը, որուն գործունէութիւնը սկսած է 75 անդամով: ([38]. էջ 24)

Աղեքսանդրիոյ մասնաճիւղին հիմնադիր անդամները եղած են Միքայէլ Պէյ Րէյիզեան(ատենապետ), Գառնիկ Զպուքճեան(ատենադպիր), Յովսէփ Փէմպէճեան (գանձապահ), Վահան Խորասանճեան, Յակոբ Պէյ Բարթող եւ Գեորգ Սարգիսեան (խորհրդականներ):

13. Հրատարակչական Ընկերութիւն Եգիպտոսի Հայոց - Աղեքսանդրիա , 1907-1908

Երուանդ Օտեան, իր նախաձեռնութեամբ «Հրատարակչական Ընկերութիւն»ը հիմնած է 1 Մայիս 1907-ին, հրատարակելու համար իր խմբագրութեամբ լոյս տեսնող «Արեւ» օրաթերթը:

Ընկերութիւնը կազմուած է հինգ տարուայ համար, գրասենեակին նստավայրը հաստատելով Աղեքսանդրիա եւ նպատակ ունենալով՝ *«գործել ազգովին, անկախ եւ զերծ կուսակցական որեւէ կապերէ»*:

Հրատարակչականին Կանոնագիրը հրատարակուած է Կ.Պոլսոյ «Առաւօտ» թերթին մէջ (1910 թիւ 147): Քսան յօդուածներով կանոնագրին երկրորդով՝ կը նպատակադրէ նաեւ *«հրատարակել հայերէն լեզուով ժողովրդական գիրքեր եւ գրքոյկներ»*: (ԼԶ.1962, էջ 133)

Ընկերութիւնը կազմալուծուած է 1908-ին:

([8]. էջ 189)

14. Հայ Կաթողիկէ Աղքատախնամ Ընկերութիւն - Աղեքսանդրիա , 1908

(Հայ Կաթողիկէ Բարեգործական Ընկերութիւն)

Կաթողիկէ Աղքատախնամ Ընկերութիւնը հիմնուած է 1908-ին, Գերպ. Գոյունեան Եպս.ի նախաձեռնութեամբ:

Վարչութեան ղիւանին մաս կազմած են Հապիպ Շամի(ատենապետ), Արթին Նահապետեան(փոխ-ատենապետ), Ազիզ Ճոհարճի(քարտուղար) եւ Յովսէփ Մամէլեան (գանձապահ):

Ընկերութեան ընդհանուր ժողովը վաերացուցած է 25 յօդուածներէ կազմուած կանոնագիր մը: (ԼԶ.1959-1960, էջ 32 - Ը.1908, թիւ 506)

15. Սահմանադիր Ռամկավար Կուսակցութեան Ակումբ - Աղեքսանդրիա , 1912

24 Փետրուար 1912-ին, վարչութիւնը սարքած է գրական, թատերական եւ գեղարուեստական յաջողութեամբ պսակուած «Ֆէսթիվալ» հանդէս մը, որուն ընթացքին ելոյթ ունեցած է Արմենակ Շահ-Մուրատեան: (ԻԵ. 1912, թիւ 3 , 6 և 7)

16. Հայուհեաց Ընկերութիւն - Աղեքսանդրիա , 1908 -1910

«Աղեքսանդրիոյ Հայուհիներու Ընկերակցութիւն» , 1913

Ընկերութիւնը կազմուած է 1908-ին, իբրեւ Աղեքսանդրիոյ մասնաճիւղը Կ.Պոլսոյ «Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւն»ի:

Վարչութեան անդամակցած են Տիկնայք Մ.Գալֆայեան Խան (ատենապետ), Բ.Սբէնչեան (ատենադպիր), Գ.Մերամէթճեան (գանձապահ), Ա.Կամսարական և Յ.Մութաֆեան (խորհրդականներ):

Երկամեայ գործունէութեան աւարտին կազմալուծուելէ ետք, Ընկերութիւնը վերակազմուած է 1913-ին «Աղեքսանդրիոյ Հայուհիներու Ընկերակցութիւն» անունով, Գահիրէի մէջ նոյն թուականին կազմուած Ընկերակցութեան օրինակով:

(ԼԶ.1959-1960, էջ 32 - Լ.1913, թիւ 63,83)

17. Հայ Երիտասարդաց Միութիւն - Աղեքսանդրիա , 1910 - 1914 , 1916 – 1918

Միութիւնը հիմնուած է 1910-ի վերջերը, հաւաքավայր ունենալով «Աղեքսանդրիահայ Ընթերցասրահ»ը:

1911-1912-ի վարչական կազմին անդամակցած են Յակոբ Փափագեան եւ Էօժէն Փափագեան: 1912-ի ամանորին, վարչութիւնը սարքած է գրական, թատերական եւ գեղարուեստական կատարեալ յաջողութեամբ պսակուած հանդէս մը: (ԻԵ.1912 թիւ 3)

Երիտասարդացը ունեցած է 50 հոգինոց երկսեռ երգչախումբ մը, որուն կողքին յառաջացած է անոր անդամներէն կազմուած թատերախումբ մը: Նաեւ հաստատուած է գրադարան մը 1200 հատորով: (ԼԶ.1962, էջ 133)

10 Մայիս 1912-ին, Աղեքսանդրիոյ Ալիամպրա թատրոնին մէջ Միութեան թատերախումբը ներկայացուցած է «Բարիզի Աղքատները», մասնակցութեամբ Տիկնայք Չ.Տամատեանի, Է.Շիշմանեանի, Զ.Փափագեանի եւ Օր.Հ.Գամշեանի, Տիարք Գ.Իփէկեանի, Լ.Շիշմանեանի, Լ.և Պ.Պերպէրեանի, Է.Փափագեանի, Կ.Մկրտիչեանի, Վ.Երամեանի, Լ.և Ա.Թօքաթլեանի: Ներկայացման հասոյթը յատկացուած է Ազգային Սրահի մը շինութեան ծրագրին: (ԻԵ. 1912, թիւ 16 և 18)

Երիտասարդացը կազմալուծուած է 1914-ին, սակայն հետագային, 1916-ի սկիզբը վերակազմուած է եւ Ընդհանուր Ժողովի մը գումարումով՝ վարչութեան անդամ ընտրուած են Վ.Աբրահամեան, Է.Փափագեան, Շ.Իմիրզեան, Յ.Իսթինճեան և Հրանտ Տիլէկեան:

Վարչութիւնը հաստատած է «Հայ Երիտասարդաց Միութեան Ուսանողաց Ֆոնտ»ը, տեղւոյն ֆրանսական Լիսէին մէջ պահելով երեք աշակերտներ, հոգալով անոնց վարժարանական բոլոր ծախսերը: (Ե. Հոկտ.1917)

Միութեան պատուոյ անդամ հռչակուած են Եգիպտահայոց Առաջնորդ Գերշ. Տ.Թորգոմ Եպս. Գուշակեանը, Յ.Մութաֆեանը և Տիգրան Կամսարականը,

որոնք բարոյական եւ նիւթական շօշափելի աջակցութիւն կատարած են միութեան:
Վերակազմուած Միութիւնը գործած է մինչեւ 1918-ի վերջերը:

Միութեան անդամները, 1916-ին հրատարակած են Միհրան Տամատեանի
թարգմանած Ռիվուար Անտրէի «Դոյզն Ձօնը» մէկ արարնոց թատերախաղը:

(Լ.1914, թիւ 182 - Լ.1918, թիւ 6 - [12]. թիւ 223)

Հոկտեմբեր 1917-ին, լոյս ընծայուած է «Արաքս» Գրական եւ Գեղարուես-
տական Հանդէսին միակ Ա. պրակը: (Ե. Հոկտ.1917)

18. Հայկական Համայնագիտարան Ընկերութիւն - Աղեքսանդրիա , 1913

Ընկերութիւնը հիմնուած է 1913-ին եւ նոյն տարին հրատարակած է 7 էջերէ
բաղկացած «Ծրագիր Հայկական Համայնագիտարան Ընկերութեան»ը, անորոշ
տպարանէ: ([12]. թիւ 140)

Համայնագիտարան Ընկերութիւնը *«հայութեան համար բացուած
ընդհանուր գործի ասպարէզ մը ըլլալով»* ունեցած է երկու գլխաւոր կեդրոններ,
առաջինը՝ Ամերիկայի Նիւ-Եորք քաղաքին մէջ, իսկ Արեւելքի կեդրոնը
Աղեքսանդրիոյ մէջ: Նպատակը եղած է *«սորվիլ, սորվեցնել, շահիլ, շահեցնել,
բարոքել ու զարգացնել ազգին տնտեսական վիճակը»*:

Ընկերութիւն-Միութիւնը ունեցած է ազգին ամէն դասակարգի մատչելի
հինգ մասնաճիւղեր: Անդամակցութեան մուտքի գումարը եղած է 20 դր2.ողջ, իսկ
ամսական տուրքը՝ 10 դր2.ողջ: Իր կարելոր կեդրոններուն մէջ հաստատած է
գիշերային վարժարան մը վերջին մէթոտով լեզու սորվեցնելու համար: ([IX].էջ 4,5)

Միութեան ծրագրին եւ գործունէութեան տեղեկանալու համար ամէն հայ
կրնար դիմել Միութեան Ընդհանուր Գործակատարին Պ.Արշակ Զօրպաճեանին,
Պուլվար Ռամլէ, թիւ 22, Աղեքսանդրիա: ([IX]. էջ 7)

19. Արուեստասէր Օրիորդաց Միութիւն - Աղեքսանդրիա , 1914

«Արհեստասիրաց Միութիւն Աղեքսանդրիոյ»

Օրիորդաց Միութիւնը հիմնուած է 1914-ին եւ հետագային ճանչուած իբրեւ
«Արհեստասիրաց Միութիւն Աղեքսանդրիոյ»:

Արուեստասէր կանացի այս միութեան հիմնադիրը եւ ատենապետուհին
եղած է ձեռագործի ուսուցչուհի Տիկին Աննա Ենովքեանը, որուն անխնջ
ջանքերուն շնորհիւ միութեան անդամուհիներու թիւը աւելնալով աշխոյժ և
արդիւնաւետ գործունէութիւն մը ունեցած է:

Տիկին Ենովքեանի անմիջական գործակիցները եղած են Օր. Արուսեակ
Մութաֆեան, Օլկա եւ Ակլայէ Մաթոսեան քոյրերը:

Միութիւնը օգտաշատ նախաձեռնութիւններով և յատուկ վիճակահանու-
թեան ձեռնարկով մը «նպաստած է Պօղոսեան Ազգային Վարժարանի կարօտ
աշակերտներու ճաշի ֆօնտին»:

(Լ.1916, թիւ 128,131)

20. Հայուհեաց Գրասէր Ու Գեղարուեստասէր Միութիւն -

Աղեքսանդրիա , 1915 - 1945

Միութիւնը հիմնուած է 1915-ին, մղիչ ոյժ ունենալով նահատակ
մտաւորական եւ բանաստեղծ Մարտիրոս Ոսկեանը: Հիմնադիրները եղած են
Տիկնայք՝ Զարուհի Արապեան, Զարուհի Տամատեան, Զարուհի Բաբազեան,
Կատարինէ Դամիկեան, Մարօ Բաբազեան, Վարսենիկ Վարդերեսեան և ուրիշներ:

Հայուհիներու Միութեան նպատակը եղած է «տարածել ընթերցանութեան սերը հայուհիներու մէջ եւ սատարել անոնց մտաւոր զարգացման ու յառաջդիմութեան գործին»:

Գրասէր-Գեղարուեստասէր Միութիւնը ունեցած է իր Ծրագիր-Կանոնագիրը (Տպ.Անորոշ, Աղեքսանդրիա, 4 էջ, 1923): ([12]. թիւ 326)

Միութիւնը, երկար տարիներ գործունէութիւն ունեցած է «Տիգրան Երկաթ» Մշակութային Միութենէն ներս, կազմակերպելով գեղարուեստական-գրական հաւաքոյթներ, թատերական ներկայացումներ եւ նուագահանդէսներ, անոնց հասոյթով սաներ պահելով եւ կարիքաւորներուն օժանդակելով: ([22]. էջ 11,12)

«Հայուհեաց»ի կազմակերպութեամբ , Աղեքսանդրիոյ «Հայ Ակումբ»ի սրահին մէջ (թիւ 3, Մահմուտ Փաշա Ֆալաքի փողոց) Շբ. 7 Հոկտեմբեր 1916-ին սարքուած է “Մեծ Նուագահանդէս” մը: (Զ.1916, թիւ 63/219)

«Հայուհեաց»ի գրական ձեռնարկը եղած է «Արաքս» անունով գեղարուեստական եւ տնտեսագիտական կիսամսեայ խմորատիպ հանդէսին հրատարակութիւնը, լոյս տեսած միայն մէկ թիւ, 25 Օգոստոս 1916-ին: «Արաքս»ի էջերով, խոստացուած է նախապատուութիւն տալ իգական սեռի գրողներուն եւ անոր զարգացման սատարող գրութիւններուն: (Զ. 11 Փետր.1978)

1945-ին, պետական օրէնքներու ընդառաջ, միութիւնը կը միաձուլուի «Տիգրան Երկաթ» եւ «Հայ Ուսանողական» միութիւններու կառոյցներուն հետ, «Տիգրան Երկաթ Հայ Մշակութային Միութիւն» անուան տակ:

21. Հայ Ուսանողական Միութիւն - Աղեքսանդրիա , 1915 , 1923

Ուսանողական Միութիւնը հիմնուած է 1915-ին, նախաձեռնութեամբ Մարտիրոս Ոսկեանի, գործակից ունենալով Լեւոն Հիւրմիւզ, Աղասի Իփէկեան, Վահրամ Յակոբեան, Հրանդ Մէքսէնեան, Յարութիւն Չերքէզեան և ուրիշներ:

Ուսանողականին վարչական դիւանի անդամ եղած են Աղասի Իփէքեան (ատենապետ), Հրանդ Մէքսէնեան(ատենադպիր), Հրանդ Աճէմեան (գանձապետ), Վահրամ Չպուրճեան եւ Յարութիւն Չերքէզեան(խորհրդականներ):

Միութիւնը վերակազմուած է 25 Մայիս 1923-ին, նախաձեռնութեամբ Լեւոն Աճէմեանի եւ Արտաշէս Տէր Գեորգեանի ջանքերուն շնորհիւ, կոչուելով «Հայ Ուսանողաց Միութիւն» (ԼԳ.1947, էջ 7,8 – [11]. էջ 233)

Վարչութիւնը ունեցած է օժանդակ «Գրական» Յանձնախումբ մը Երուանդ Շիշմանեանի ատենապետութեամբ, որուն կողքին գործած է Գրադարանի Յանձնախումբը Անդրանիկ Քոշարեանի ղեկավարութեամբ:

Ուսանողականին գեղարուեստական գործունէութիւնը ստանձնած է յատուկ Յանձնախումբ մը անդամակցութեամբ Երուանդ Շիշմանեանի, Երուանդ Նալճաճեանի, Հայկ Գուրնույեանի եւ Արթո Մուղալեանի: (ԻԲ. էջ 208)

Աղեքսանդրիոյ Հայ Ուսանողաց Միութիւնը 1923-1924-ին լոյս ընծայած է «Մասիս» գրական պարբերաթերթին: ([14]. էջ 148)

Հետագային եւ պետական նոր օրէնքներու ընդառաջ՝ «Ուսանողաց Միութիւն»ը ներառնուած է «Տիգրան Երկաթ Հայ Մշակութային Միութիւն»ի կառոյցին մէջ:

22. Աղեքսանդրիոյ Նորակազմ Հայ Երիտասարդաց Միութիւն –

Աղեքսանդրիա , 1916

Երիտասարդաց միութեան այս միաւորը կազմուած է Յունուար 1916-ին: Կիր.12 Մարտ 1916-ին գումարուած Ընդհանուր Ժողովը վաւերացուցած է գործունէութեան Կանոնագիրը եւ գործադիր մարմինը ընտրած:

Հետագային, Վարչութեան անդամ ընտրուած են ՊՊ. Գրիգոր Սարգիսեան, Կարապետ Աշրգեան, Լեւոն Ազնաւորեան, Մելքի Գըլճեան, Արամ Անլըեան, Մատթէոս Փափագեան եւ Հայկ Պերպերեան:

Աղեքսանդրիոյ Քաղաքական Ժողովը, նորակազմ Միութեան տրամադրած է «Ազգային շէնք»ի թիւ 14 յարկաբաժինը իբրեւ գրասենեակ եւ հաւաքավայր:

Միութեան անդամները ծրագրած են լոյս ընծայել «Նոր Դար» անունով թերթ մը:

(Լ.1916, թիւ 143)

23. Հայ Յառաջդիմասէր Երիտասարդներու Ընկերակցութիւն -

Աղեքսանդրիա , 1916

«Յառաջդիմասէր» Մշակութային Ընկերակցութիւն , Աղեքսանդրիա , 1942 -

«Հայ Յառաջդիմասէր Երիտասարդներու Ընկերակցութիւն» անունով միութիւնը կազմուած է 20 Յունուար 1916-ին, խումբ մը հայ երիտասարդներու նախաձեռնութեամբ:

Միութեան նպատակը եղած է *«Հայ երիտասարդներու մտաւորական եւ բարոյական զարգացմանը սատարել եւ վառ պահել անոնց ազգասիրական ոգին»:*

Հիմնադիր վարչութեան անդամակցած են Վ.Ազնաւորեան(ատենապետ), Օ.Եփրեմեան (փոխ-ատենապետ եւ գոյքապահ), Մ.Գըլըճեան (ատենադպիր), Յ.Տէր Յակոբեան (փոխ-ատենադպիր), Յ.Նաջարեան (գանձապահ-հաշուապահ), Յ.Նալբանդեան (գրապահ), Վ.Աղասէր եւ Լ.Ազնաւորեան (մատակարարներ), Կ.Աշրգեան, Գ.Քէնտիկեան եւ Ֆ.Խանջեան (կազմակերպիչներ): (ԻԸ. թիւ 1)

Ընկերակցութիւնը ունեցած է 46 յօդուածներէ բաղկացած Կազմական Կանոնագիր մը եւ զայն բարեփոխութեան ենթարկած՝ նոյն տարին գումարուած 25 Մարտի եւ 22 Ապրիլի Ընդհանուր Ժողովներուն կողմէ, որոնց դիւանին անդամ եղած են Ա.Շալճեան(ատենապետ) եւ Մ.Նորատունկեան(ատենադպիր):

Կեդրոնին հասցէն եղած է թիւ 4, Սալահէտտին փողոց , որուն բացումը կատարուած է 29 Ապրիլ 1916-ին:

(Լ.1916, թիւ 12)

Վաւերացուած է ներքին Կանոնագիր մը 3 Փետրուար 1918-ին գումարուած տարեկան ընդհանուր ժողովին կողմէ:

Նոյեմբեր 1917-էն սկսեալ հրատարակուած է «Յառաջդիմասէր» ամսական տեղեկաբերը, եօթը թիւ՝ մինչեւ Մայիս 1918: 1919-ին, լոյս տեսած է Երիտ. Ընկերակցութեան “Հաւաքածոյ Գրական Կտորներու” թիւ 1, գրքոյկը:

([14]. էջ 116 - [12]. թիւ 273)

Երկրորդ տարեշրջանի աւարտին ունեցած է 354 անդամ եւ Մարտ 1918-ին կազմած «Քնար» երգչախումբը եւ «Աղամեան» թատերախումբը:

Հաստատուած է «Յառաջդիմասէր»ի մատենադարանը շուրջ 700 հայերէն եւ օտար լեզուներու հատորներով որոնք հետզհետէ ճոխացած են ազգայիններու նուիրատուութիւններով: Սկզբնական շրջանի գրադարանապետի պաշտօնը ստանձնած են Յ.Նալպանտեան եւ Ֆ.Խանջեան:

1 Մարտին 30 Յունիս 1918, ակումբին ներս անդամներուն համար հաստատուած են «Յառաջդիմասէր»ի Գիշերային Վարժարանի ձրի դասընթացքները Հայերէն, Հայ Գրականութեան եւ Պատմութեան, Ֆրանսերէն, Անգլերէն եւ տոմարակալութեան նիւթերու: (ԼԶ.1959-1962, էջ 134 - ԻԸ. թիւ 1-7)

1918-ին վարչութիւնը հաստատած է «Յառաջդիմասէրի Ուսանողաց Ֆոնտ»ի ծրագիրը, բարերարներու օժանդակութեամբ քսանեակ մը սան-սանուհիներու ուսումնական ծախսերը հոգալու համար երկրորդական կրթարաններու մէջ:

(ԻԸ.1918, թիւ 7)

Ընկերակցութեան յիշեալ «Ուսանողաց Ֆոնտ»ը տարիներու ընթացքին, օժանդակած է բազմահարիւր ուսումնաստէնչ երիտասարդներու բարձրագոյն ուսումնառութեան, զուգահեռ՝ ընկերային դաստիարակչական հաւաքներ եւ տարեշրջաններու աւարտին ընդունելութիւն կազմակերպելով:

1942-ին, միութիւնը «Յառաջդիմասէր Մշակութային Ընկերակցութիւն» անունով հաստատուած է Աղեքսանդրիոյ Քան Տը Սէզար թաղաշրջանին Մինուսիս փողոցի նոր կեդրոնին մէջ: Այստեղ փոխադրուած է նաեւ «Կամք» Մարմնամարզական Ակումբը, կողքին ունենալով իր պասքէթպոլի խաղավայրը:

1980-ին, հիմնական բարեգարդումի եւ նորոգութեան ենթարկուած է ակումբին «Ս.Լէյլէկեան» հանդիսարանը իր յարակից անդաստակով, շրջապատի պարտէզով եւ նորահաստատ մանուկներու խաղավայրով:

Ընկերակցութեան իրարայաջորդ վարչութիւնները կազմակերպած են ազգային, կրօնական բնոյթի եւ յոբիլենական առիթներու ոգեկոչական հանդէսներ, ունեցած են մշակութային եւ ընկերային բեղուն գործունէութիւն, կազմակերպելով զբաղմունքներ, երաժշտական, պատմական եւ առողջապահական նիւթերով դասախօսութիւններ, գործակցութեամբ իրենց յարակից երիտասարդականի, պատանեկանի եւ կանանց յանձնախումբերուն:

24. Հայուհեաց Յառաջդիմասէր Ընկերակցութիւն - Աղեքսանդրիա , 1916

Հայուհեաց այս ընկերակցութիւնը հիմնուած է 1916-ի կէսերուն, եւ բացման պաշտօնական հանդիսութիւնը կատարուած է Կիր. 2 Դեկտեմբեր 1916-ին:

Նպատակը եղած է *«ուժ տալ Աղեքսանդրահայ իզական սեռի մտաւորական եւ բարոյական զարգացման»:*

Ընկերակցութիւնը նախապէս ճանչցուած է իբրեւ «Հայ Օրիորդաց Միութիւն» եւ անմիջական գործակցութիւն ունեցած «Հայ Յառաջդիմասէր Երիտասարդներու Ընկերակցութեան» հետ:

Հայուհեաց եւ Երիտասարդաց այս միաւորներուն միացումը վաւերացուած է 15 Յուլիս 1917-ին ստորագրուած պայմանագրութեամբ:

Հայ Յառաջդիմասէր Երիտասարդացի Վարչութեան կողմէ ստորագրած են Վ.Ազնաւորեան (ատենապետ) եւ Մ.Կ.Գըլըճեան (ատենադպիր), իսկ Հայուհեաց Յառաջդիմասէրի կողմէ՝ Տիկ. Հ.Կ.Սէֆերեան (ատենապետուհի) եւ Տիկ. Ն.Պ.Ճանիկեան (ատենադպրուհի): (Լ.1916, թիւ 105 - ԻԸ. թիւ 4)

25. «Հայ Ակումբ» - Աղեքսանդրիա , 1916

Հայ երիտասարդութիւնը համախմբելու կոչուած այս ակումբը քաղաքային ընկերութեան (Societe Civile) հանգամանքով հաստատուած է 26 Մարտ 1916-ին,

կեղրոնատեղի ունենալով թիւ 3, Մահմուտ Փաշա Ֆալաքի փողոց, Աղեքսանդրիա հասցեով ընդարձակ եւ բարեզարդուած սրահները:

Ակումբին կազմութեան նախաձեռնող անդամները եղած են. Աբրահամեան Վաղարշակ, Անտոնեան Սիմոն, Բաբազեան Էօժէն, Բաբազեան Ժիւլ, Գասպարեան Մելքոն, Գլըճեան Գառնիկ, Թէլեան Միհրան, Թէքէեան Վահան, Իմիրզեան Շաւարշ, Ճէվահիրճեան Ալեքսան, Նասիպեան Հրանդ, Ռետեան Աբգար, Սրէնճեան Յովսէփ, Փափազեան Յակոբ, Տամատեան Միհրան եւ Տիլէկեան Հրանդ:

1916-ի Ապրիլին գումարուած ակումբին բաժնետէրերու անդրանիկ ժողովը վաւերացնելով ներկայացուած նոր կանոնագիրը, ընտրած է Վարիշ Մարմինը, անոր նախագահ ընտրելով Ալեքսան Պէյ Ճէվահիրճեանը: (Զ. 27 Մարտ 1916)

Նպատակը եղած է *«Աղեքսանդրիոյ հայ գաղութի անդամներուն միջեւ ամրապնդել ընկերական այն կապերը որ զիրենք կը միացնեն իրարու եւ հայրենի երկրին»*: Ակումբը ձգտած է նպաստելու գաղութին մտաւորական զարգացման, ունենալով իր ընթերցասրահը եւ պարբերաբար կազմակերպելով գեղարուեստական հանդէսներ, բանախօսութիւններ եւ հանդէսներ:

Ունեցած է իր Հիմնագիր եւ Ներքին Կանոնագրութիւնը (Տպ.Արամ Ստեփանեան, Աղեքսանդրիա, 23 էջ, 1917), վաւերացուած՝ անդամներուն կողմէ 26 Մարտ 1916-ին գումարուած Ընդհանուր Ժողովէն: ([12]. թիւ 235)

Ըստ Ներքին Կանոնագրութեան, ունեցած է չորս կարգի անդամներ եւ անդամակիցներ: ([XXII])

Շուրջ ութամեայ ընկերային գործունէութիւն ունեցած ակումբը 1 Օգոստոս 1924-ին իր անդամներուն մեծամասնութեամբ գումարուած Ընդհ. Ժողովին որոշումով կը կազմալուծուի: (Զ.1924, թիւ 1670)

26. Հայ Որբախնամ Ընկերութիւն - Աղեքսանդրիա , 1916

Հայ Որբապաշտպան Մարմին - Աղեքսանդրիա

Որբախնամ Ընկերութիւնը հիմնուած է Ուրբաթ, 18 Օգոստոս 1916-ին, նախաձեռնութեամբ եւ վարչական ժողովին անդամակցութեամբ Կարապետ Անլըեանի (ատենապետ), Թովմաս Թօփուզեանի (փոխ-ատենապետ), Յովհաննէս (Օննիկ) Աքտարեանի (ատենադպիր), Պետրոս Մուղալեանի (գանձապահ) և Յովհաննէս Կուտսուզեանի (խորհրդական):

Նպատակ եղած է *«ջարդին ու սովին արհաւիրքներէն ճողոպրած որբերուն անմիջական նպաստ հասցնել, ըլլայ Հայաստանի, ըլլայ Կիլիկիոյ մէջ»*:

Ընկերութիւնը գործակից ունեցած է Տիկնանց Օժանդակ Յանձնախումբ մը: Ներքին գործոց նախարարութենէն արտօնութիւն ստացուած է նպատակին ծառայելու համար տարին մէկ անգամ վիճակահանութիւն ձեռնարկելու:

(Լ.1922 Յունուար)

Որբախնամը ունեցած է 15 յօդուածներով «Կանոնագիր Հայ Որբախնամ Ընկերութեան» պրակը (Տպ.Զ.-Պերպերեան, Գահիրէ, 8 էջ, 1916), վաւերացուած՝ Աղեքսանդրիոյ Պատ. Քաղաքական Ժողովին կողմէ 6 Սեպտեմբեր 1916-ի նիստին: (Լ.Զ.1959-1960, էջ 33 - Լ.1916, թիւ 61,71 - [XVIII])

27. Վասպուրականի Արծրունեաց Միութիւն - Աղեքսանդրիա , 1921

Վասպուրականցիներու «Արծրունեաց» անունով Միութիւնը Աղեքսանդրիոյ

մէջ կազմուած է 23 Մարտ 1921-ին, նպատակ ունենալով *«պայմաններուն ներած չափով օգնել այրեացաւէր Վասպուրականի վերաշինութեան գործին»*:

(Զ.1921, թիւ 15)

Հայրենակցական Միութիւնը գործած է կարճ ժամանակի մը համար եւ կարգ մը եկամտաբեր ձեռնարկներով օգնութեան ձեռք երկարած Եգիպտոս ապաստանած կարիքաւոր հայրենակիցներու: Միութիւնը պարբերական կարելի միջոցներով իր նպաստը բերած է հայրենական կառոյցներու շինարարական աշխատանքներուն:

28. Աղեքսանդրիոյ Շրջանաւարտուիներու Միութիւն - 1923

«Պօղոսեան Շրջանաւարտից Միութիւն»

«Պօղոսեան Ազգ. Երկսեռ Վարժարանաց

Շրջանաւարտից Միութիւն - Աղեքսանդրիա , 1930

Շրջանաւարտուիներու Միութիւնը կազմուած է 1 Մայիս 1923-ին, նախաձեռնութեամբ եւ ջանքերով Պօղոսեան Վարժարանի վաստակաւոր ուսուցիչ Սերովբէ Պետրոսեանի:

Միութեան նպատակը եղած է *«ա. Ծառայել եւ օգտակար ըլլալ Աղեքսանդրիոյ Պօղոսեան Վարժարանին ու իրենց նախնական դաստիարակութիւնը ստացած շրջան աւարտող սանուիներուն. եւ բ. Ունենալ լսարան մը եւ անկէ օգտուիլ բարոյապէս, ընկերութեան սէրն ու միութիւնը եւ հայրենասիրական ոգին պահպանելու համար»*:

Ծրագիր-կանոնագիրը վաւերացուած է Աղեքսանդրիոյ Ազգային Քաղաքական Ժողովի 10 Օգոստոս 1923-ի նիստին:

6 Օգոստոս 1930-ին, Շրջանաւարտից Միութիւնը վերակազմուած է **«Պօղոսեան Շրջանաւարտից Միութիւն»** անունով, իսկ 16 Նոյեմբեր 1930-ին Վարժարանին աւարտական դասարանի նախաձեռնութեամբ բացուը կատարուած է **«Պօղոսեան Ազգ. Երկսեռ Վարժարանաց Շրջանաւարտից Միութիւն»**ին:

Միութեան հիմնադիր-ատենապետը եղած է Բենիամին Մամուրեան:

Վերահաստատ Շրջանաւարտից Միութեան նպատակը եղած է *«օժանդակել վարժարանին ազգային նախակրթութեան, նախանձախնդիր ըլլալ Ազգային Մշակոյթին եւ արժէքներուն ու սատարել անոնց զարգացումին»*:

Մելգոնեան Մանկապարտեզի սրահին մէջ հաւաքուած Պօղոսեան վարժարանին սան-սանուիներու վերակազմուած միութեան նպատակը եղած է նաեւ *«ա. Մշտական շփման մէջ պահել վարժարանը եւ իր նախկին աշակերտները. եւ բ. Սատարել դպրոցի նիւթական եւ բարոյական բարձրացման»*:

Միութեան անդամները մասնակցած են բազմաթիւ ազգային հանդէսներու, նախաձեռնած՝ վիճաբանական հաւաքոյթներ եւ գրական դատեր: Անոնք որոշած եւ կազմակերպած են Պօղոս Պէյ Եռսուֆի անուանակոչութեան հանդիսութիւն, դասախօսական, գեղարուեստական յայտագրերով ձեռնարկներ, նկարչական եւ երաժշտական դասընթացքներ: (ԺԱ.1939)

Կազմուած են թատերական խումբ եւ երգչախումբ շրջանաւարտ անդամներուն մասնակցութեամբ: Միութեան նախագահը 1932-ին եղած է վարժարանին տնօրէն Կարապետ Պիոնեանը: ([24].գ.հտր.էջ 121,122 - ԺԱ. էջ 11,12)

29. Ակնայ եւ Շրջակայից Հայրենակցական Միութիւն - Աղեքսանդրիա , 1924

Ակնայ հայրենակցականը հիմնուած է 1 Յուլիս 1924-ին, նպատակ ունենալով *«նիւթապէս եւ բարոյապէս սատարել անխտիր բոլոր այն կարօտ հայրենակիցներուն, որոնք կը գտնուին Ակնայ եւ շրջակայ գիւղերուն մէջ»*:

Միութիւնը գործած է երկու տեսակ անդամներու կառոյցով, գործօն եւ օժանդակ կամ նուիրատու:

Ունեցած է Ծրագիր-Կանոնագիր մը (Տպ.Ա.Գասապեան, Աղեքսանդրիա, 8 էջ, 1925), Աղեքսանդրիոյ Պատուարժան Քաղաքական Ժողովի 15 Մայիս 1925-ի նիստի վաւերացումին արժանացած: ([I] – [12]. թիւ 376)

30. «Զարթօնք» Միութիւն - Աղեքսանդրիա , 1924

Միութիւնը հիմնուած է Մարտ 1924-ին, նպատակ ունենալով *«Գրական թէ գեղարուեստի զարգացման միում տալ, ամրապնդել հայ ժողովուրդին մէջ համերաշխութեան կապերը եւ հայ անհատին բարոյական ու մտաւորական զարգացման օժանդակել»*:

Մշակութասէր միութեան հիմնադիրները եղած են Գառնիկ Պահլաւ, Վահան Շահպազ, Տիգրան Սանդիկեան, Բաբկէն Թիրեաքեան, Յակոբ Միրզայեան եւ Վահրամ Սարգիսեան, նշանաբան ունենալով *«Զարթօնք, Զարթիր, Զարթեցուր»*:

1924-ին, Միութեան հրատարակած «Կայծ» խմորատիպ շաբաթաթերթին էջերով նշուած հետեւեալ երկու պարբերութիւնները, ներկայացուցած են Միութեան գործունէութեան ընթացքն ու ծրագիրները:

“ Զարթօնք Միութիւնը Աղեքսանդրիոյ հայ երիտասարդութեան եւ անոնց մէջ գտնուած ձիրքերը քաջալերելու նպատակաւ, որոշած է կազմակերպել շաբաթական հաւաքոյթներ որոնք առ այժմ տեղի պիտի ունենան “դպրոցին հօլ”ին մէջ : Հաւաքոյթներուն մէջ տեղի պիտի ունենան բանախօսութիւններ, արտասանութիւններ, երգ, նուագ, եւայլն..” (ԺԳ.1924, թիւ 1)

Հետագային, *“ Հ.Բ.Ը.Միութեան հետ ունեցած համաձայնութեան շնորհիւ, Բշ., Դշ., Ուրբ. եւ Կիրակի օրերը Միութեան օրերն են: Հետեւաբար, այդ օրերուն, Հ.Բ.Ը.Միութեան սենեակը երեկոյեան ժամը 7.30-էն յետոյ, պիտի տրամադրուի մեր անդամներուն :”* (ԺԳ.1924, թիւ 5)

«Զարթօնք» Միութիւնը Գառնիկ Պահլաւի խմբագրութեամբ՝ հրատարակած է «Կայծ» Շաբաթաթերթը 1924-ին (խմորատիպ, 5 թիւ), ապա ամսաթերթ (տպագիր, 4 թիւ): (ԼԶ.1959-1960, էջ 33 - ԺԳ.1924, թիւ 1,5)

«Զարթօնք» Ուսանողական Միութեան անունով, 22 Յունուար 1925-ին եգիպտական կառավարութենէն արտօնութիւն ստացուած է «Արաքս» անունով թերթի մը հրատարակութեան համար եւ երկու թիւ հրատարակելէ ետք զայն փոխանցած՝ տպարանատէր Արամ Ստեփանեանի արտօնատիրութեան:

(«Արաքս», 11 Դեկտ.1925)

31. Հայաստանի Օգնութեան Կոմիտէ - Աղեքսանդրիա , 1926 , 1934-1938

Եգիպտոսի Շրջանի Կեդրոնական վարչութեան կողքին, Հ.Օ.Կ.ի Աղեքսանդրիոյ մասնաճիւղը հիմնուած է 1926-ին, թիւ 26, Սալահէտտին փողոց հասցէին: Մասնաճիւղը ունեցած է աւելի քան 200 երկսեռ անդամներ, որոնք հիմնած են Աղեքսանդրիոյ «Մեւան» Ընթերցասրահը:

Ժամանակի ստեղծուած տեղական պայմանները դժուարութիւններ յարուցած են եւ լուծարքի ենթարկած՝ ակումբին գործունէութիւնը:

Միաւորը վերակազմուած է 1934-ին, եւ Երեւանի Գերագոյն Խորհուրդին լուծարումով՝ դադրած է նաեւ անոր գործունէութիւնը 1938-ին: (ԻԲ. էջ 206)

32. Հայ Գիւղատնտեսական Միութիւն - Աղեքսանդրիա - 1927

Միութիւնը հիմնուած է 1927-ին, հաւատալով, թէ *«ազգային տնտեսական քաղաքականութեան հիմնաքարն է երկրագործութիւնը»:*

Առաջին առթիւ հրապարակուած «Կոչ»ով, կազմութիւնը առաջադրուած է *«Հայ Գիւղատնտեսական Ուսանողներու Օգնութեան Յանձնախումբ»*ի մը, նպատակ ունենալով *«գիւղատնտեսութեան մասնագիտութեամբ ուսանողներու քաջակերութիւնը եւ յառաջդիմութեան սատարումը»:*

Նորակազմ Յանձնախումբին մաս կազմած են Մամբրէ Ծ.Վրդ. Սիրունեան (նախագահ), Տոքթ.Կ.Գապատայեան (ատենապետ), Ղազար Փափագեան (գանձապետ) եւ Սեպուհ Ստեփանեան (ընդհ. քարտուղար):

Հայ Ուսանողներու օգնութեան Յանձնախումբին Աղեքսանդրիոյ Կեդրոնը 28 Սեպտեմբեր 1928 թուակիր «Յայտարարութիւն»ով *«իր գործը ամուր հիմերու վրայ դնելու համար՝ Հոկտեմբերի առաջին կիսուն Աղեքսանդրիոյ մէջ, իսկ երկրորդ կիսուն՝ Գահիրէի եւ Զակազիկի մէջ դիմումներ պիտի կատարէ հայրենակիցներուն, 5-ական կամ 10-ական ոսկի տարեվճարով նուիրատութեանց արձանագրուիլ»*ու նախաձեռնութեան մասնակցելու համար: (Զ.1928, թիւ 2935)

Հետագային, Սեպուհ Ստեփանեանի ատենապետութեան շրջանին, Միութեան Ուսանողական Ֆոնտին միջոցով, գիւղատնտեսութիւն ուսանող սաներ պահուած են Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ:

Կազմուած է նաեւ, Գիւղատնտեսականի Կեդրոնական Վարչութիւն մը, որուն նախաձեռնութեամբ հիմնուած է *«Խրիմեան Գիւղատնտեսական Մատենաշար»*ը եւ Սեպուհ Ստեփանեանի հեղինակութեամբ Մայիս 1931-էն Սեպտեմբեր 1933 լոյս տեսած են 7 գրքոյկներ Տպ.Գասապեանէն:

(Զ. Փետր.1927 - [24]. ք.հտր. էջ 129,130 - [12]. թիւ 519,520,521)

33. Հայ Ժողովրդային Պլօք - Աղեքսանդրիա , 1928

Bloc National Armenien(Alexandrie)

Համախմբումը հիմնուած է 1 Փետրուար 1928-ին եւ Ծրագիր-Կանոնագիրը վաւերացուած՝ նոյն օրը գումարուած Ընդհանուր Ժողովին:

Պլօքին սկզբունքը եղած է *«ըլլալ ազգային, ժողովուրդին համար եւ ժողովուրդին հետ»*, նպատակ որդեգրելով *«մասնաւորապէս տեղւոյս (Աղեքսանդրիոյ) ազգային բարոյական թէ նիւթական ընդհանուր գործերուն բարւոք մատակարարութեան հսկել եւ օժանդակել»:*

Հրատարակուած է «Ծրագիր-Կանոնագիր Հայ Ժողովրդային Պլօք, Աղեքսանդրիա» գործունէութեան ուղեցոյցը, Տպ.Ա.Ստեփանեան,Աղեքս.,1928:

([VI] – [12]. թիւ 449)

34. Հայ Կարմիր Խաչ - Աղեքսանդրիա , 1931 , 1946 - 1985

Գահիրէի Հ.Կ.Խաչի ընկերուհիներու ջանքերով, 1931 Նոյեմբերին կազմուած է Աղեքսանդրիոյ Խաչուհիներու միաւորը իր 30 անդամներով, որոնց գործակից երկսեռ նուիրեալներու թիւը շուտով հասած է 80-ի: ([39]. էջ 190)

Կազմակերպուած են մշակութային եւ ընկերային բնոյթի ձեռնարկներ, բարեսիրական սկզբունքային նպատակի ծրագիրներու իրագործումին համար:

Յետագայ տարիներուն, Խաչուհիներու ուշադրութեան առարկայ դարձած է դէպի հայրենիք ներգաղթի տրամադրութիւն ցոյց տուող կարիքաւոր ազգայիններու օժանդակութիւն կատարելու կարելիութիւնները:

Մասնաճիւղը վերակազմուած է 25 Օգոստոս 1946-ին, գործակցութեամբ Հայ Կ.Խաչի Գահիրէի վարչութեան, շեշտուած նպատակ ունենալով՝ *«օգնել մանուկներու ֆիզիքական կարիքներու բաւարարութեան»* :

Հ.Կ.Խաչուհիներուն կոչը՝ *«օգնել մատաղ սերունդի կազդուրման եւ սատարել ստանձնուած պարտականութեան»*, արժանացած է Աղեքսանդրիաբնակ ժողովուրդի քաջալերական վերաբերմունքին: (Լ. Յուլիս 1947)

1946-ին, Գահիրէի Հ.Կ.Խ.ի վարչութեան ճիգերով եւ վերակազմուած միաւորի անդամներուն գործակցութեամբ, Սիտի Պիշրի ծովափին գնուած է 1940 բիգ հողատարածք մը փայտաշէն կառոյցով եւ հաստատուած՝ *«Հայ Կարմիր Խաչի Կայան»*ը:

Կահաւորումէ ետք՝ «Կայան»ին բացումը կատարուած է 1 Յուլիս 1946-ին:

Կայանին փայտաշէն տնակին տեղ, Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ Հայ Կ.Խաչի վարչութիւններու նախաձեռնութեամբ, գաղութահայ միահամուր աջակցութեամբ եւ ճարտ. Հայկազուն Շիրինեանի նախագիծով շինուած է 1958-ին բացումը կատարուած է «Հայ Կարմիր Խաչ»ի քարաշէն նոր կայանին, որուն հիմնարկէքի հանդիսութիւնը կատարուած է 8 Մայիս 1955-ին: ([39]. էջ 193)

Տասնեակ տարիներով , կայանը ամրան եղանակին, երեքական շաբաթներու տեւողութեամբ, կազդուրուելու համար ընդունած են Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ Ազգային Վարժարաններու 180-200 երկսեռ աշակերտներու խումբերը, նուիրեալ խաչուհիներու հսկողութեան եւ խնամքին տակ:

Ամառնային արձակուրդներու շրջանին, կայանը եղած է երիտասարդներու ընկերային հաւաքոյթներու, դաստիարակչական բնոյթի դասախօսական լսարաններու ժամադրավայր, ինչպէս նաեւ շաբաթավերջի եռօրեայ պարբերական բանակումներու կեդրոն:

1980-ականներուն ծայր առած գաղթի հոսանքին ընդառաջ, Աղեքսանդրիահայ գաղութին տարապայման նօսրացումին, շրջապատի կենցաղային եւ յատկապէս՝ Կայանի վայրին աննպաստ պայմաններուն փոփոխութեան պատճառով, Կայանը փակուած է 1985-ին, եւ կարճ ժամանակ ետք Հ.Կ.Խաչի մասնաճիւղը կազմալուծուած:

35. «Փարամագ» Հնչակեան Ուսանողական Միութիւն - Աղեքսանդրիա , 1931

Ուսանողական Միութիւնը հիմնուած է 1931-ին Աղեքսանդրիոյ մէջ, նախաձեռնութեամբ խումբ մը գաղափարակից Հնչակեան ուսանողներու:

([9]. էջ 297)

Միութեան պաշտօնական բացումը իր սեփական սրահին մէջ կատարուած է Կիր. 3 Ապրիլ 1932-ին, նախագահութեամբ Տոքթ.Խորէն Գալընեանի եւ ներկայութեամբ 150 հանդիսականներու: Այս առթիւ կարդացուած է Ազգային Իշխանութեան կողմէ վաւերացուած Միութեան Ծրագիր-Կանոնագիրը, որուն մէջ նպատակ արձանագրուած է *«Հայ եւ օտար լեզուներով դասախօսութիւններ*

կազմակերպել, ինչպես նաև 15-օրեայ բանախօսություններու շարք մը, գրական, գիտական եւ առողջապահական նիւթերու շուրջ»։ Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը եւ տեղի ունեցած վիճակահանութիւնը ի նպաստ միութեան կարիքներուն։

Նորահաստատ Ուսանողական Միութեան կեդրոնը օժտուած է նաև բոլորին մատչելի ընթերցասրահ-գրադարանով մը։ (Զ.1932, թիւ 4016)

36. «Հայր Ալիշան» Հայ Կաթողիկէ Երիտասարդաց Միութիւն - Աղեքսանդրիա ,1931

Կաթողիկէ երիտասարդաց Միութիւնը հիմնուած է 15 Յունուար 1931-ին, Յովսէփ Ծ.Վրդ. Քաջունիի եւ Պօղոս Վրդ.Շիրիկճեանի քաջալերութեամբ։

Հիմնադիրները եղած են Լեւոն Մաթոսեան, Գրիգոր Հայաթեան, Տոքթ.Երուանդ Խաչերեան, Լեւոն Պէզազեան, Ժան Տաքէսեան, Լուծվիկ Մարաշեան եւ Թովմաս Գոչիկեան։

Նորակազմ լսարան-գրադարանին բացումը կատարուած է 19 Ապրիլ 1931-ին, նախագահութեամբ Եպիսկ. Փոխ. Գերշ. Յովսէփ Ծ.Վ. Քաջունիի։

Միութեան Կեդրոնին հասցէն եղած է 15, Սաատ Զաղլուլ պողոտայ, իսկ գրադարանը կը գտնուէր թիւ 18, Անսիէն Պուրս փողոց Աղեքսանդրիա։

Միութեան ծրագիր-կանոնագիրով յիշուած անոր կազմութեան նպատակը եղած է *«Ազգային ոգին վառ պահել հայ կաթողիկէ համայնքին մէջ եւ հայկական միջավայր ստեղծել հայախօս հայ կաթողիկէ երիտասարդներու համար իբր սկումբ կամ հաւաքավայր»*, նաև յօդուածով մը նշուած՝ թէ *«16 տարին լրացուցած ամէն հայ կաթողիկէ անհատ, առանց սեռի խտրութեան կրնայ Միութեանս անդամակցիլ վարչութեան հաւանութեամբ»*։ (Զ. Ապրիլ 1931 - [24]. գ.հտր. էջ 329)

37. Եկեղեցասէր Հայ Տիկնանց Միութիւն- Աղեքսանդրիա , 1932 - 1936

Տիկնանց Միութիւնը հիմնուած է 1932-ին, որուն հիմնադիր անդամներ եղած են Արծ.Տ.Մեսրոպ Քհնյ. Քեօշկերեան, Երիցուհի Հայկանոյշ Քեօշկերեան, Տիկնայք Հայկանոյշ Առաքելեան, Պէհիյէ Նիզիպլեան եւ Համեստուհի Պասմաճեան։

Միութեան նպատակը եղած է *«հետեւիլ Հայաստանեայց եկեղեցւոյ կանոններուն, սիրել հայ եկեղեցին ու քրիստոնէական կրօնը»*։

15 Ապրիլ 1932-ին գումարուած առաջին անդամական ժողովը ընտրած է անդրանիկ վարչութիւնը յանձին՝ Երիցուհի Հ.Մ.Քեօշկերեանի (ատենապետուհի), Հ.Յ.Առաքելեանի, Պ.Ն.Նիզիպլեանի, Զ.Նշ.Նազարեթեանի, Ս.Ա.Սարգիսօֆի, Ս.Ս.Խաչատուրեանի, Հ.Խ.Քիրազեանի, Ս.Գ.Ճիհանեանի և Ե.Տէր Ստեփանեանի։

Միութեան հիմնադրութեան ձեռնարկը տեղի ունեցած է 16 Հոկտեմբեր 1932-ին։ 15 Նոյեմբեր 1933-ին, Տիկնանց Միութեան նախաձեռնութեամբ բացումը կատարուած է Պօղոսեան Ազգային Վարժարանի Կիրակնօրեայ դասընթացներուն։

Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը 1933-ին հրատարակած է «Արեւազալի Ժամերգութիւն»ի 15 էջերով Ա. պրակը։ ([12]. թիւ 582)

Միութեան գործունէութիւնը դադարած է 1936-ին։ ([26]. էջ 17,41)

38. «Ապրիլեան Մերունդ» Երկսեռ Միութիւն - Աղեքսանդրիա , 1932- 1939

Եգիպտոս եկած նախկին որբերու երկսեռ երիտասարդներու նախաձեռնութեամբ յառաջացած այս միութիւնը կազմուած է 1932-ին, հասցէ ունենալով՝ թիւ 5, Աշրաֆ փողոց, Աղեքսանդրիա։

Նորակազմ Միութեան բացումը կատարուած է Կիր. 21 Մայիս 1933-ին, «Հայր Ալիշան» սրահին մէջ, պատուոյ անդամներէ կազմուած մարմնի մը հովանաւորութեամբ: Խօսք առած են Հմ.Շէմս, Յ.Թընգրեան, բացատրելով Միութեան նպատակը, իսկ Անոր ծագումին մասին իր խօսքը կարդացած է Գահիրէի Մասնաճիւղին ներկայացուցիչ Ժիրայր Ճէպէլեան: (Զ. 1933, թիւ 6158)

Միութեան «Գրահաւաք յանձնախումբ»ին աշխատանքով հիմնադրուած է անոր գրադարանը, որուն վարիչը եղած է Գեղամ Ամսէեան: Իսկ արուեստասէր երիտասարդներ կազմած են «Ապրիլեան Սերունդ» թատերախումբը:

1935-ին հիմնուած է Միութեան «Ապրիլեան Սերունդ-Կամբ» նուագախումբը, ղեկավարութեամբ Յարութիւն Համբարձումեանի:

Կազմուած է նաեւ մարզական «Ապրիլեան Սերունդ» փինկ-փոնկի խումբը իր յատուկ Յանձնախումբով:

1939-ին, Միութիւնը միացած է «Վերածնունդ Միութիւն»ին, յառաջացնելով միացեալ «Շաւարշան Միութիւն»ը: (ԼԶ.1962, էջ 134 - ԻԲ.էջ 210 - ԺԴ.1939, թիւ 1)

39. «Վերածնունդ» Հայ Երիտասարդաց Միութիւն - Աղեքսանդրիա , 1934-1939

Նախկին որբերու սերունդին երիտասարդաց այս միաւորը հիմնուած է 1934-ին, երաժշտագէտ ղեկավար Նազարէթ Մեսրոպեանի (Գոնիացի) ջանքերով:

Ակումբը հաստատուած է թիւ 16, Ֆաքիի փողոցի շէնքին մէջ (Սալահ Էլ Տին, Աղեքսանդրիա):

Միութեան անդամներուն նախաձեռնութեամբ, ակումբին բարեգարդումի եւ ընդլայնումի աշխատանքը կատարուած է 1936-ին:

Երաժշտագէտ հիմնադիրին ջանքերով 1935-ին կազմուած է Միութեան երգչախումբը եւ 34 հոգինոց նուագախումբը, Յանձնախումբի անդամ ունենալով՝ Պօղոս Ներսէսեան, Զաւէն Մարտիրոսեան, Դաւիթ Սարգիսեան եւ Արշամ Գըլըճեան: (ԼԶ. Յունուար 1937)

Փետրուար 1937-ին գումարուած Ընդհ. Ժողովը ընտրած է նոր վարչութիւն մը, որուն անդամակցած են Կ.Թէնթիւնեան, Ս.Ներսէսեան, Պ.Ներսէսեան, Յ.Ստեփանեան, Հ.Սարգիսեան, Դ.Սարգիսեան եւ Յ.Ճիվանեան: (ԼԶ. Փետր.1937)

Նորընտիր վարչութեան կողմէ առաջին առթիւ 1937-ին հիմնուած է «Վերածնունդ» թատերախումբը, անդամակցութեամբ Պօղոս Ներսէսեանի, Դաւիթ Սարգիսեանի, Սարգիս Ներսէսեանի, Կարապետ Երլտրզեանի, Նազարէթ Մեսրոպեանի, Յովակիմ Պօյաճեանի, Տիկին Գայիանէ Յովհաննէսեանի եւ Օր.Ռօզէթ Գարունեանի: Նոյն շրջանին կազմուած Գրական Յանձնախումբը վարած են Դաւիթ Սարգիսեան, Յարութիւն Ստեփանեան եւ Սարգիս Մեսրոպեան, իսկ Պասքէթպօլի խումբը առաջնորդած են Դաւիթ Սարգիսեան, Մնացական Ստեփանեան, Յակոբ Ճիվանեան եւ Արշամ Գըլըճեան: (ԻԲ. էջ 213)

Գրական յանձնախումբին նախաձեռնութեամբ հաստատուած է «Հայ Երիտասարդաց Միութեան Մատենադարան»ը իր այլազան բնոյթի հատորներով եւ մամուլի տեղական ու արտասահմանեան հրատարակութիւններով:

Ցերեկները կեդրոնը տրամադրուած է իբրեւ կայք «Թարգմանչաց Վարժարան»ին: ([24].գ.հտր.էջ466)

Երիտասարդաց այս Միութիւնը «Ապրիլեան Սերունդ» Միութեան միանալով, յառաջացած է «Շաւարշան» Միութիւնը 1939-ին: (ԺԴ.1939, թիւ 1)

40. Հայկազեան Կրթարանի Կրթասիրաց Միութիւն - Աղեքսանդրիա , 1934 - 1952

Կրթասիրաց Միութիւնը հիմնուած է 1934-ին, որուն նախաձեռնութեամբ միութեան անդամներուն համար Ֆրանսերէնի եւ ձեռագիտութեան նիւթերու դասընթացքներ հաստատուած են: ([24]. գ.հտր. էջ 486)

Միութեան վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցած են գրական եւ դասախօսական երեկոներ, ազգային տօներու ոգեկոչումի ձեռնարկներ:

41. Մխիթարեան Վարժարանի Սանուց Միութիւն -

Աղեքսանդրիա , 1937 , 1954

Սանուց Միութիւնը հիմնուած է 1937-ին, վարժարանին տնօրէն Քերովբէ Վրդ.Չրաքեանի նախաձեռնութեամբ եւ շուրջ մէկուկէս տասնամեակ գործած՝ իր շրջանաւարտ անդամներուն բարոյական եւ նիւթական ներդրումով:

15 Նոյեմբեր 1954-ին, Միութիւնը վերակազմուած եւ աշխոյժ գործունէութեան ձեռնարկած է «*Մխիթարեան Ակումբ*» անուանուելով:

42. Հայ Աւետարանական Երիտասարդաց Միութիւն – Աղեքսանդրիա , 1937

Երիտասարդաց միաւորը հիմնուած է 27 Յունիս 1937-ին, վարչական կազմին անդամ ունենալով՝ Յակոբ Քիւչիւքեան (ատենապետ), Մելիգօֆ Մելգոնեան (ատենադպիր), Բժ.Աբրահամ Նիկողոսեան, Երուանդ Քիւչիւքեան եւ Արամ Խաչատուրեան (խորհրդական): ([24]. բ.հտր. էջ 151 - գ.հտր. էջ 391)

Կազմակերպուած են շաբաթական հոգեւոր և մշակութային հաւաքոյթներ:

43. «Երեւան» Ընթերցասրահ - Աղեքսանդրիա , 1937 - 1948

Աղեքսանդրիոյ Ընթերցասրահ ակումբը հիմնուած է 1937-ին եւ տասնամեակի մը տեւողութեամբ ընկերային, դաստիարակչական եւ մշակութային ձեռնարկներ կազմակերպած՝, ունենալով շուրջ 50 անդամներ:

Ընթերցարանը կազմուած է «Հայաստանի Օգնութեան Կոմիտէ»ի (Հ.Օ.Կ.) Աղեքսանդրիոյ «Մեւան» մասնաճիւղի անդամներէն:

Վարչութեան ատենապետը եղած է Երուանդ Պօղոսեան, ատենադպիրը՝ Հրաչ Գալընեան եւ գանձապահը՝ Յովսէփ Իսպիրեան:

Ակումբին 30 երկսեռ անդամներով կազմուած է երգչախումբ մը 1937-ին, դեկավարութեամբ Հրանդ Պօղոսեանի:

Նոյն տարին, կազմուած է նաեւ «Երեւան Թատերախումբ»ը եւ հանդէս եկած՝ պարբերական ներկայացումներով: (ԻԲ. էջ 210)

Հայրենադարձ կարաւաններով, վարչական եւ անդամ բազմաթիւ անդամներու մեկնումով՝ Ընթերցասրահը փակուած է 1948-ին:

44. Եկեղեցասիրաց Միութիւն Հայոց Աղեքսանդրիոյ - Աղեքսանդրիա , 1938

Եկեղեցասիրացը հիմնուած է 1938-ին, եւ վաւերացուած՝ Պատ.Քաղաքական Ժողովի նոյն տարուան 4 Նոյեմբերի նիստին: ([III] - [12]. թիւ 834)

Միութեան նպատակը եղած է «*(յօդ.2) գործակցիլ Ազգային Իշխանութեան, քրիստոնէական ուսուցումներ կազմակերպելով, (յօդ.3) օժանդակել եկեղեցւոյ նորոգութեան եւ Միութիւն մէջ կառուցուելիք մատրան եւ Ազգային Վարժարանի շինութեան գործին, (յօդ.4) քաջալերել քահանայական ասպարէզով ազգին եւ եկեղեցիին ծառայելու կոչումը երիտասարդ սերունդին մօտ*»: ([III] - [12]. թիւ 834)

Բացման ձեռնարկը տեղի ունեցած է Կիր. 25 Մարտ 1939-ին, Աղեքսանդրիոյ Մելգոնեան Մանկապարտեզի սրահին մէջ, նախագահութեամբ Առաջնորդական Փոխանորդ Մամբրէ Եպս. Սիրունեանի: Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը մասնակցութեամբ 40 հոգիւնոց երգչախումբին եւ լարային նուագախումբին, ղեկավարութեամբ դպրապետ Շաւարշ Փափագեանի: (Զ.1933, թիւ 6158)

Եկեղեցասիրացը ունեցած է 25 յօդուածներէ բաղկացած Ծրագիր-Կանոնագիր մը, պատրաստուած՝ Միութեան Կեդր. Մարմնի անդամներ Արժ.Ս.Մեսրոպ Քինյ.Քեօշկերեանէ, Տիարք Տիգրան Եաղուպեանէ եւ Գառնիկ Պահլաւէ կազմուած յանձնախումբին կողմէ (Տպ.Հ.Ս.Բիւրատ, Աղեքսանդրիա, 1938): ([12]. թիւ 834)

Հետագային, բարեփոխուած Ծրագիր-Կանոնագիր մը եւս վաւերացուած է Պատ. Քաղաքական Ժողովի 28 Նոյեմբեր 1941-ի նիստին:

Աղեքսանդրիոյ Եկեղեցասիրաց Միութիւնը ունեցած է իր երգչախումբը, ղեկավարութեամբ Շաւարշ Փափագեանի (ապա, Տ.Ղեւոնդ Քինյ.): ([8]. էջ 343)

Միութիւնը իր հիմնադրութեան 15-ամեակին առթիւ հրատարակած է Մեսրոպ Ա.Քինյ. Քեօշկերեանի յիշատակին նուիրուած «Ոսկեմատեան-Յիշատակարան»ը (Տպ.Ա.Ստեփանեան, 1947): ([12]. թիւ 1139)

45. «Շաւարշան» Միութիւն - Աղեքսանդրիա , 1939

Միութիւնը կազմուած է 1939-ին, «Ապրիլեան Սերունդ» եւ «Վերածնունդ» նախկին որբերու երիտասարդական միութիւններուն միացումով՝ ջանքերովը Համագասպ Տէմիրճեանի:

Նկատի ունենալով զոյգ միութիւններուն ծրագիր-կանոնագրի նմանութիւնը, ընդունուած է «Վերածնունդ» միութեան ծրագիր-կանոնագիրը եւ «Վերածնունդ»ի հասցէն որոշուած է պահել իբր նոր միութեան կեդրոն-ակումբ:

«Շաւարշան»ի վարչութեան անդամ ընտրուած են Կարապետ Թէնթիւնեան, Տրդատ Տրդատեան, Դաւիթ Սարգիսեան, Տիգրան Գեորգեան, Գրիգոր Պետրոսեան, Պետրոս Սարեան եւ Համագասպ Տէմիրճեան: (ԺԴ. 1939, թիւ 1)

46. «Մեւան» Մշակութային Միութիւն - Աղեքսանդրիա , 1943 – 1947

«Մեւան Ընթերցասրահ» - Աղեքսանդրիա

«Մեւան» Միութիւնը հիմնադրուած է 1943-ին, Գառնիկ Սվազլեանի նախաձեռնութեամբ եւ ջանքերով:

Միութեան կազմակերպումը կատարուած է ՀՕԿ-ի լուծարքէն ետք, անոր ընթերցասրահով օժտուած հաւաքավայրին եւ գրադարանին օգտագործումով:

Մշակութային միաւորը ճանչցուած է նաեւ «Մեւան Ընթերցասրահ» անունով, եւ հրատարակած՝ Ճ.Հիւլէթի թարգմանուած գրքոյկը 1946-ին: ([12]. թիւ 1069)

Միութեան նպատակը եղած է *«մշակութասէր շնորհալի երիտասարդներու ընդունակութիւնները զարգացնել, համայնքին ծանօթացնել հայրենիքի առաջընթացը եւ նիւթապէս ու բարոյապէս աջակցիլ հայրենադարձութեան»:*

Մշակութային գործունէութիւն ծաւալած է ներգաղթի օրերուն, համատեղ գործակցութեամբ իր կողքին կազմուած Տիկնանց Յանձնախումբին:

([8]. էջ 202 – [9]. էջ 297)

Միութիւնը փակուած է 1947-ին, անոր հիմնադիրին եւ գործակիցներուն հայրենադարձութեամբ:

47. Հայ Ազգային Խորհուրդ - Աղեքսանդրիա , 1945

Հայ Ազգային խորհուրդը հիմնուած է 12 Դեկտեմբեր 1945-ին:

Հիմնադիրները եղած են, Ստեփան Շահապազ(նախագահ), Հրաչ Գալընեան (քարտուղար), Տիգրան Սէֆերեան(գանձապահ), Համբար Դաւիթ, Տոքթ.Մարտիրոս Տէմիրճեան, Բարսեղ Օհանեան, Լեւոն Փափագեան, Գառնիկ Սվազլեան, Ն.Գալընեան եւ Օ.Պապիկեան(խորհրդական):

Խորհուրդին նպատակը հրապարակուած է 9 կէտերէ բաղկացած «Յայտարարութեամբ» մը, կարգախօս ունենալով *“Հայաստանը Հայոց, Հայր Հայաստանի մէջ”* բնաբանը:

Գործունէութեան սկիզբը, միաձուլումը յայտարարուած է Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ խորհուրդներուն *«որպէս անհրաժեշտութիւն եւ գործունէութեան միացում»*, իրենց ներկայացուցիչներէն կազմելով Կեդրոնական Կոմիտէ մը «Եգիպտահայ Ազգային Խորհուրդ» անունով:

Աղեքսանդրիոյ Ազգային Խորհուրդի անունով, դիւանի անդամ Ս.Շահապազ եւ Հ.Գալընեան, 10 Յունուար 1946 թուակիր «Հայկական Պահանջները Վաւերաթուղթերու Լոյսին Տակ» խորագիրով «Յուշագիր»ը յղած են Միացեալ Ազգերու Կազմակերպութեան եւ իր բոլոր անդամներուն:

Չորս լեզուներով , հայերէն, արաբերէն, անգլերէն եւ Ֆրանսերէն, պատրաստուած «Յուշագիր»ը յղուած է նաեւ ժամանակի մամուլին եւ լրատուամիջոցներուն: (ԽԱ. ա.և բ.պրակ,1946 – [9]. էջ 270)

Խորհուրդին յարած են հետեւեալ Կուսակցութիւնները եւ Միութիւնները .

Ռամկավար Ազատական Կուսակցութեան Աղեքսանդրիոյ մասնաճիւղ, Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան Աղեքսանդրիոյ մասնաճիւղ, «Մեւան» Ընթերցասրահ, «Տիգրան Երկաթ» Մշակութային Միութիւն, Ուսանողական Միութիւն, Գեղարուեստասիրաց Հայուհեաց Միութիւն, «Սասունցի Դաւիթ» եւ «Մեւան» Տիկնանց Միութիւն:

Խորհուրդին վարչութեան վերջնական կազմին անդամակցած են.

Մերթ Ստեփան Շահապազ (նախագահ), Տիարք Աշոտ Գասապեան (փոխ-նախագահ), Հրաչ Գալընեան(քարտուղար), Մկրտիչ Տէր Սարգիսեան(փոխ-ատենադպիր), Տիգրան Սէֆերեան(գանձապահ), Վ.Ճանիկեան (հաշուապահ), Ն.Զամպաքեան(խորհրդական): (ԽԱ. ա.պրակ 1946)

Աղեքսանդրիոյ Հայ Ազգային Խորհուրդը 1946-ին հրատարակած է «Տեղեկատուութիւն Հայ Ազգային Խորհուրդի» ա. եւ բ. պրակները (Տպ. Ա.Ստեփանեան, 1946, Աղեքսանդրիա, 11 եւ 23 էջ): ([14]. էջ 252)

48. «Զահ» Մտաւորական Շարժում - Աղեքսանդրիա , 1946 - 1948

Մտաւորական երիտասարդ ուժերէ կազմուած շարժումը հիմնուած է 1946-ին, նախաձեռնութեամբ Վահէ Պալատունիի, Հայկ Քիրազեանի, Մուրատ Քեօշկերեանի, Յակոբ Անսուրեանի եւ այլոց: ([8]. էջ 649)

Շարժումին երկամեայ գործունէութիւնը ընդգրկած է գրական ասուլիսներ, վիճաբանական հաւաքոյթներ եւ երաժշտական շարք մը ձեռնարկներ: Քաջալերուած է հայագիտական նիւթերու զարգացումը հայկական կրթական յարկերու մէջ, որուն արդիւնքով Պօղոսեան Ազգային Վարժարանի աշակերտները հրատարակած են «Զահ» խմորատիպ պարբերականը:

49. «Դանիել Վարուժան» Հայ Կաթողիկե

Երկսեռ Երիտասարդաց Միություն - Աղեքսանդրիա , 1949-1951 , 1955

Մխիթարեան Հայ Գեղարուեստական Սանուց Միություն Աղեքսանդրիոյ -
Մխիթարեան Ակումբ – Աղեքսանդրիա , 1955

Կաթողիկե երիտասարդաց միությունը հիմնուած է 1949-ին, նախաձեռնութեամբ Անթուան Տերտերեանի, Աւետիս Սալլաքեանի, Յովսէփ Զաքարեանի եւ Յակոբ Անսուրեանի:

Իրարայաջորդ վարչութիւններու նպատակը եղած է *«երիտասարդ տարրերու համախմբումը քաջալերելով, ամրապնդել ազգային պատկանելիութեան սկզբունքները»*:

Կազմակերպուած են մշակութային երեկոյթներ եւ դաստիարակչական հաւաքոյթներ:

1955-ին, «Կաթողիկե Երիտասարդաց Միութիւն»ը վերակազմուած եւ միացած է Աղեքսանդրիոյ «Հայ Գեղարուեստախումբ»ին, յառաջացնելով՝ «Մխիթարեան Հայ Գեղարուեստական Սանուց Միութիւն Աղեքսանդրիոյ» միաւորը, ճանցուած նաեւ «Մխիթարեան Ակումբ» անունով:

([8]. էջ 649 – [24]. գ.հտր. էջ 352)



ԵԳԻՊՏԱՀԱՅ
ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԵՐ
ԵՐԳՉԱԽՈՒՄԲԵՐ
էւ
ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԵՐ
Գ ա հ ի ռ է
Ա ղ է ք u ա ն դ ի ա
Ջ ա կ ա գ ի կ

ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԵՐ

ԳԱՀԻՐԷ - ԱՂԵՔՍԱՆՊԵՐԻԱ

1. Եգիպտահայ Նուագախումբ - *Աղեքսանդրիա* , 1899-1900
2. «Քնար» Երաժշտական Ընկերություն - *Աղեքսանդրիա* , 1900
3. Հայ Նուագածուաց Խումբ - *Աղեքսանդրիա* , 1901-1905 , 1916
4. «Արաքս» Նուագախումբ - Գահիրե , 1902
5. «Հայկական Ընթերցասրահ» Նուագախումբ - *Աղեքսանդրիա* , 1902
6. «Քնար Հայկական Նուագախումբ» - Գահիրե , 1903
7. «Արարատեան Ազգային Նուագախումբ Գահիրեի Հայոց» - Գահիրե , 1904
8. «Անի» Նուագախումբ - Գահիրե , 1917
9. «Քնար» Մանտոլինի Նուագախումբ - *Աղեքսանդրիա* , 1918
10. Ֆանֆառ «Գառնուկ» - Գահիրե , 1919
11. Գալուստեան Վարժարանի «Քնար» Նուագախումբ - Գահիրե , 1924
12. «Յառաջդիմասեր» Երիտ. Լարայի Նուագախումբ - *Աղեքսանդրիա* , 1926
13. «Նիլր Իսթ Ռելիֆ»ի Ֆանֆառի Խումբ - Գահիրե , 1927
14. «Հնչակ» Նուագախումբ - Գահիրե , 1931
15. Ս.Դ.Հ.Կ. Երիտ.Միության «Փարամազ» Նուագախումբ - *Աղեքսանդրիա* , 1932
16. «Քնար» Նուագախումբ - *Աղեքսանդրիա* , 1932
17. «Կրթասիրաց» Նուագախումբ - Կիզե , Գահիրե , 1933
18. «Ապրիլեան-Կամք» Նուագախումբ - *Աղեքսանդրիա* , 1935
19. «Վերածնունդ» Հայ Երիտասարդաց Նուագախումբ - *Աղեքսանդրիա* , 1935
20. «Թարգմանչաց» Նուագախումբ - Գահիրե , 1936
21. «Նուպար» Նուագախումբ - Գահիրե , 1936
22. Հայ Աւետարանական «Ջանասիրաց» Նուագախումբ - Գահիրե , 1937
23. Հայ Ուսանողական Միության Նուագախումբ - *Աղեքսանդրիա* , 1937
24. Մխիթարեան Նուագախումբ - *Աղեքսանդրիա* , 1938
25. «Սպենդիարեան» Լարային Քառեակ - Գահիրե , 1944
26. «Մխիթարեան Գեղարուեստախումբ» - *Աղեքսանդրիա* , 1958
27. «Հայասա» Երիտասարդական Նուագախումբ - Գահիրե , 2013

ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԵՐ

ԳԱՀԻՐԷ - ԱՂԵՔՍԱՆՂՐԻԱ

1. Եգիպտահայ Նուագախումբ - *Աղեքսանդրիա*, 1899-1900

Եգիպտահայ անդրանիկ այս նուագախումբը ենթադրուած է կազմուած ըլլալ 1899-ին, իր 20-25 նուագածուններով եւ ղեկավարութեամբ իտալացի խմբավար Պուչիավելլիի:

Հայկական եւ արեւմտեան երաժշտական կտորներու կատարումով, նուագախումբը արժանացած է օտար շրջանակներու գնահատանքին եւ քաջալերութեան : ([8]. էջ 281)

2. «Քնար» Երաժշտական Ընկերութիւն - *Աղեքսանդրիա*, 1900

Նուագախումբի ընկերութեան նախաձեռնող եւ հիմնադիրը եղած է երաժշտապետ Խաչիկ Սարգիսեան Սեպտեմբեր 1900-ին:

«Քնար» անուն այս երաժշտական ընկերութեան նպատակը եղած է «Գահիրէի մէջ երաժշտական երեկոյթներ սարքել, հայկական եւ եւրոպական եղանակներով» : (Ը.1900, թիւ 110)

3. Հայ Նուագածուաց Խումբ - *Աղեքսանդրիա*, 1901-1905, 1916

Նուագածուններու խումբը հիմնուած է Ապրիլ 1901-ին:

1902-ին, վերակազմուած է Բարսեղ Օհանեանի նախաձեռնութեամբ, ղեկավարութիւնը ստանձնելով մինչեւ խումբին կազմալուծումը 1905-ին: ([8]. էջ 247)

«Նուագածուաց»ը եղած է համազգեստով հանդէս եկած առաջին խումբը: (ԺՁ1. 1904, թիւ 1)

Նուագախումբին նպատակը եղած է «Հայկական եւ Եւրոպական կտորներ նուագել, եւրոպական նուագարաններով», իր ժամանակի Աղեքսանդրիոյ միջազգային նուագախումբերէն լաւագոյնը հանդիսանալով:

(ԽԲ.1901 թիւ 1, 1902 թիւ 42 - ԼՁ.1960, էջ 30 – [8]. էջ 247)

«Հայ Նուագածուաց Խումբ»ը վերակազմուած է «Կամք» Մարզական Ակումբի վարչութեան նախաձեռնութեամբ 1916-ին: (Լ.1916, թիւ 11)

4. «Արաքս» Նուագախումբ - Գահիրէ, 1902

Հիմնուած է 1 Յուլիս 1902-ին, «Հայ երիտասարդներէ բաղկացած նուագախումբ մը կազմելու» առաջադրանքով («Կանոնագիր Արաքս Նուագախումբի», Գահիրէ, Տպ.Ե.Թորոսեան, 1903, էջ 1):

Հիմնադիր ժողովին մաս կազմած են Գ.Պարոյր, Մ.Տինկոզեան եւ Յ.Յ.Մարգարեան: (Ը.1902, թիւ 318)

1903-ին խումբը պառակտուած է եւ երկուքի բաժնուած «Արաքս Նուագախումբ» եւ «Քնար Հայկական Նուագախումբ» անուններով:

5. «Հայկական Ընթերցասրահ»ի Նուագախումբ - *Աղեքսանդրիա*, 1902

Նորահաստատ ակումբին երաժշտաւէր հիմնադիրներուն հովանաւորութեամբ կազմուած նուագախումբին մասնակցութիւն բերած են Ժիւլ Բաբագ-

եան, Յակոբ Եռզկաթլեան, Ներսէս Ղազիկեան, Վրթանէս Երամեան, Հրանդ Իշլէմէճեան, Մարտիկ Գամչեան, Մանուկ Ս. Մանուկեան, Համբար Դաւիթ եւ Օննիկ Պօղոսեան: Նուագածունները իրենց տրամադրուած գործիքներով, ելոյթներ ունեցած են հայ թէ օտար յօրինողներու գործերը մեկնաբանելով, դեկլավարութեամբ իտալացի երաժշտագէտի: ([36]. էջ 14)

6. «Քնար Հայկական Նուագախումբ» - Գահիրէ , 1903

Նուագախումբը յառաջացած է «Արաքս» նուագախումբի երկուքի բաժանումով 1903-ին:

«Քնար Հայկական Նուագախումբ»ին վարիչ մարմնին մաս կազմած են Աւետիս Քինյ.Շաղոյեան (նախագահ), Եր.Քէրէստէճեան (ատենապետ), Յակոբ Մարգուանեան (ատենադպիր), Խաչիկ Պէրպէրեան (գանձապահ), Առաքել Փափագեան (հաշուակալ), Սիմոն Ջրովեան եւ Խաչիկ Թուլումպաճեան (խորհրդականներ): Նուագախումբին արձանագրած յառաջդիմութեան գրաւականը հանդիսացած է անոր վարչական կազմը: (ԺՁ1.1903, թիւ 12)

1904-ին բաժանուած երկու խումբերը վերամիացած են «Արարատեան Ազգային Նուագախումբ Գահիրէի Հայոց» անունով:

(ԼՁ.1959-60, էջ 19 - Ը.1904, թիւ 449)

7. «Արարատեան Ազգային Նուագախումբ Գահիրէի Հայոց» - Գահիրէ , 1904

Միացեալ «Արարատեան Ազգային Նուագախումբ»ը կազմուած է 1904-ին, «Արաքս» եւ «Քնար» նուագախումբերու միացումով, դեկլավարութեամբ ֆրանսացի խմբավարի մը:

([8]. էջ 281)

8. «Անի» Նուագախումբ - Գահիրէ , 1917

Կազմուած է 1917-ին, Գահիրէի Հայ Երիտասարդաց Միութեան ընթերցասրահին մէջ, շաբաթական (Բշ. եւ Եշ.) հաւաքոյթի օրերով:

(Լ.1917, թիւ 117)

9. «Քնար» Մանտոլինի Նուագախումբ - Աղէքսանդրիա , 1918

Կազմուած է 1918-ին, հովանաւորութեամբ եւ գործակցութիւնը վայելելով «Հայ Յառաջդիմասէր Երիտասարդաց Միութեան», վարիչ ունենալով Խաչիկ Սանտալճեանը:

Նուագախումբը, շաբթուան որոշ ժամերուն իր փորձերը կատարած է «Յառաջդիմասէր»ի սրահին մէջ:

(ԻԸ.1918, թիւ 6 - Լ.1918, թիւ 125)

10. Ֆանֆառ «Գառնուկ» - Գահիրէ - 1919

Ֆանֆառ «Գառնուկ»ը կազմուած է 1919-ին, Հայ Հետազօտիչներու Ընկերութեան նախաձեռնութեամբ, դեկլավարութեամբ Ստեփան Ամիրայեանի:

1924-ին, նուագախումբը անուանուած է Գալուստեան Վարժարանի «Քնար» Նուագախումբ:

([24].բ.հտր. էջ 564)

11. Գալուստեան Վարժարանի «Քնար» Նուագախումբ - Գահիրէ - 1924

Կազմուած է Դեկտեմբեր 1924-ին, նախկին Ֆանֆառ «Գառնուկ»ի անդամներէն, դեկլավարութեամբ Գրիգոր Գալֆայեանի:

([8].էջ 281)

Նուագախումբին յայտագրերուն մաս կազմած են հայկական եւ եւրոպական երաժշտական ստեղծագործութիւններ:

12. «Յառաջդիմասեր» Երիտասարդական Լարային Նուագախումբ -

Աղեքսանդրիա , 1926

Կազմում է 1926-ին, Երուանդ Ալեքսանեանի ղեկավարությամբ եւ խումբ մը գեղարուեստասեր երիտասարդներու մասնակցությամբ, փորձերու ժամադրավայր ունենալով «Յառաջդիմասերի» ակումբը:

13. «Նիլր Իսթ Ռըլիֆ»ի Ֆանֆառի Խումբ - Գահիրէ , 1927

Նուագախումբը կազմում է 1927-ին, հովանաւորութեամբ «Նիլր Իսթ Ռըլիֆ» ակումբի (N.E.R. Club) և անդամակցութեամբ անոր 30 սաներուն:

Իր ունեցած մեծ յաջողութիւններով, խումբը համակրանքը շահած եւ գնահատանքին արժանացած է հայ թէ օտար շրջանակներուն: (ԺԹ.1927, թիւ 9-10)

14. «Հնչակ» Նուագախումբ - Գահիրէ , 1931

Կազմում է 1931-ին, Փրոֆ.Վահան Բարսեղեանի նախաձեռնութեամբ:

Նուագախումբին անդամակցած են «Հայկական Ընթերցասրահ»ի երաժշտասէր 10 անդամներ: (ԻԲ. էջ 63 -[8].էջ 281)

15. Ս.Դ.Հնչակեան Երիտ. Միութեան «Փարամագ» Նուագախումբ -

Աղեքսանդրիա , 1932

Հիմնում է 1 Յունուար 1932-ին, նախաձեռնութեամբ Տ.Խ.Սանտալճեանի:

16. «Քնար» Նուագախումբ - Աղեքսանդրիա , 1932

Նուագախումբին հիմնադիրը եւ ղեկավարը եղած է երաժիշտ Երուանդ Ալեքսանեան 1932-ին:

Հայ արուեստին եւ երաժշտութեամբ խանդավառ հայ եւ օտար նուագածու երիտասարդներ մաս կազմած են նուագախումբին:

17. «Կրթասիրաց» Նուագախումբ - Կիզէ , Գահիրէ , 1933

Նուագախումբը կազմում է 1933-ին, Կիզէի Հայ Կրթասիրաց Միութեան նախաձեռնութեամբ եւ ջանքերով՝ անոր «Մաթոսեան» Սրահի երիտասարդացի անդամներուն: ([24]. գ.հտր. էջ 567)

18. «Ապրիլեան-Կամք» Նուագախումբ - Աղեքսանդրիա , 1935

Ապրիլեան Սերունդի երիտասարդներու նուագախումբը կազմում է 1935-ին, ղեկավարութեամբ Յարութիւն Համբարձումեանի: (ԻԲ.էջ 210)

19. «Վերածնունդ» Հայ Երիտասարդաց Նուագախումբ - Աղեքսանդրիա ,1935

Երիտասարդաց նուագախումբը կազմում է 1935-ին, որուն մաս կազմած են 34 երաժշտասէր նուագածու երիտասարդներ, տարբեր նուագարաններով:

Նուագախումբը ղեկավարած է Նազարէթ Մեսրոպեան, գործակցութեամբ Պօղոս Ներսէսեանի գլխաւորած քառանդամ Յանձնախումբի մը: (ԻԲ.էջ 213)

20. «Թարգմանչաց» Նուագախումբ - Գահիրէ , 1936

Վարժարանին նուագախումբը կազմում է 1936-ին, երաժշտասէր նուագածու աշակերտներէ, «Վերածնունդ» Միութեան երաժշտագէտ ղեկավար Նազարէթ Մեսրոպեանի (Գոնիացի) ջանքերով: ([24]. ք.հտր.էջ 466)

21. «Նուպար» Նուագախումբ - Գահիրե , 1936

«Նուպար» Մարզական Ակումբի նուագախումբը կազմուած է 26 Ապրիլ 1936-ին, ղեկավարութեամբ Սիմոն Սէտէֆճեանի և 28 երկսեռ արուեստասէր նուագածուններու: (ԻԲ. էջ 69)

22. Հայ Աւետարանական «Ջանասիրաց» Նուագախումբ - Գահիրե ,1937

Նուագախումբը կազմուած է 1937-ին, «Ջանասիրաց» Երիտասարդաց Միութեան 6 երաժշտասէր անդամներու նախաձեռնութեամբ եւ ղեկավարութեամբ Վերպ. Թէոտոր Եագուպ Տաղլեանի: (ԻԲ. էջ 42 – [24]. գ.հտր. էջ 386)

23. Հայ Ուսանողական Միութեան Նուագախումբ - Աղեքսանդրիա , 1937

Նուագախումբը կազմուած է Ուսանողականին երաժշտասէր երկսեռ անդամներով 1937-ին, կազմակերպութեամբ Անդրանիկ Քօշարեանի: (ԻԲ. էջ 208)

24. Մխիթարեան Նուագախումբ - Աղեքսանդրիա ,1938

Կազմուած է 1938-ին, ղեկավարութեամբ երաժշտական խմբավար Երուանդ Ալեքսանեանի: ([20]. գ.հտր. էջ 350)

25. «Սպենդիարեան» Լարային Քառեակ - Գահիրե , 1944

Կազմուած է 1944-ին, նախաձեռնութեամբ Գէորգ Եանպէկեանի:

26. «Մխիթարեան Գեղարուեստախումբ» - Աղեքսանդրիա , 1958

Երիտասարդ արուեստագէտներէ կազմուած խումբը հաստատուած է 1958-ին, խմբավարութեամբ Աւետիս Աշանեանի:

Խումբը նուագահանդէսներով ելոյթ ունեցած է, ներկայացնելով հայ եւ օտարազգի երաժիշտներու գործերը: (20). գ.հտր. էջ 351)

27. «Հայասա» Երիտասարդական Նուագախումբ - Գահիրե , 2013

Կազմուած է 2013 Յունուարին, խումբ մը երաժշտասէր երիտասարդներէ, իր անդրանիկ ելոյթը ունենալով՝ 6 Յունուար 2013-ի Հայ Գեղարուեստասիրաց Միութեան Երիտասարդաց Յանձնախումբի կազմակերպած տարեկան «Երիտասարդական Փառատօն»ին, Հելիոպոլսոյ Պըլքքտանեան հանդիսասրահին մէջ:



Ե Ր Գ Չ Ա Խ Ո Ւ Մ Բ Ե Ր

ԳԱՀԻՐԷ - ԱՂԵՔՍԱՆՆԴՐԻԱ - ԶԱԿԱԶԻԿ

1. Հայ Երիտասարդաց Միութեան «Քնար» Երգչախումբ -
Աղեքսանդրիա, 1910-1914, 1916-1918
 2. Տիգրան Երկաթի «Քնար» Երգչախումբ - *Աղեքսանդրիա*, 1910
 3. «Կոմիտաս» Երգչախումբ - Գահիրե, 1920-ականներ
կոչուած է նաեւ «Սրուանձտեանց» Երգչախումբ
 4. «Հայ Գեղարուեստասիրաց Միութեան» Երգչախումբ - Գահիրե, 1926
 5. «Արաբկիրի Հայրենակցական Միութեան» Երգչախումբ - Գահիրե, 1928
 6. Թաշճեան Վարժարանի Սանուց Միութեան Երգչախումբ - Գահիրե, 1928
 7. Զակագիկի Երիտասարդաց Միութեան Երգչախումբ - **Զակագիկ**, 1928
 8. «Արածանի» Մշակութային Միութեան Երգչախումբ - Գահիրե, 1929
 9. «Քնար» Երգչախումբ - *Աղեքսանդրիա*, 1930
 10. Գալուստեան Շրջանաւարտից Միութեան Երգչախումբ - Գահիրե, 1930
 11. «Կոմիտաս» Երգչախումբ - Գահիրե, 1930
 12. «Շնորհալի» Երգչախումբ - Գահիրե, 1930 -
 13. «Լուսաւորիչ» Երգչախումբ - *Աղեքսանդրիա*, 1930
 14. Պօղոսեան Վարժարանի Շրջանաւարտից Երգչախումբ - *Աղեքսանդրիա*, 1932
 15. «Գողթան» Երգչախումբ - Գահիրե, 1934
 16. «Վերածնունդ» Հայ Երիտասարդաց Երգչախումբ - *Աղեքսանդրիա*, 1934
 17. «Համազգային» Երգչախումբ - Գահիրե, 1934
 18. «Թարգմանչաց» Վարժարանի Երգչախումբ - Գահիրե, 1936
 19. «Երեւան» Ընթերցասրահի Երգչախումբ - *Աղեքսանդրիա*, 1937
 20. Աղեքսանդրիոյ Եկեղեցասիրաց Միութեան Երգչախումբ - *Աղեքսանդրիա*, 1938
 21. «Քնար» Երգչախումբ - Գահիրե, 1940
 22. «Կոմիտաս» Երգչախումբ - Գահիրե, 1940-ականներ
 23. «Ալագեազ» Երգչախումբ - Գահիրե, 1946
 24. «Սպենդիարեան» Երգչախումբ - Գահիրե, 1947
 25. Գալուստեան Ազգ. Վարժարանի Աշակերտական Երգչախումբ - Գահիրե, 1950
 26. «Եգիպտահայ» Երգչախումբ - 1954
Վերանուանուած՝ «Թաթուլ Ալթունեան» Երգչախումբ - Գահիրե, 1965
 27. Մխիթարեան Վարժարանի Երգչախումբ - Գահիրե, 1958
 28. «Ազատ Մանուկեան» Մանկապատանեկան Երգչախումբ - Գահիրե, 1960
 29. «Կռունկ» Երգչախումբ - Գահիրե, 1983-1992
 30. «Գուսան» Երգչախումբ - *Աղեքսանդրիա*, 1983-1992
 31. «Ծաղկաստան» Մանկապատանեկան Երգչախումբ, Հելիոպոլիս, Գահիրե, 1992-
 32. «Զուարթնոց» Երգչախումբ - Հելիոպոլիս, Գահիրե, 1995-2002
 33. «Արաքս» Երգչախումբ - Գահիրե, 2003 -
 34. «Ծիածան» Մանկական Երգչախումբ - Գահիրե, 2004 -
 35. «Ծիածան» Պատանեկան Երգչախումբ - Գահիրե, 2012 -
 36. «Արցախ» Աշակերտական Երգչախումբ - Գահիրե, 2013
- *** Ա.Պատմագրեանի «Երգչախումբ»եր - Գահիրե և Աղեքսանդրիա, 1936-1942

Ե Ր Գ Չ Ա Խ Ո Ւ Մ Բ Ե Ր

ԳԱՀԻՐԷ - ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ - ԶԱԿԱԶԻԿ

1. Հայ Երիտասարդաց Միության «Քնար» Երգչախումբ -

Աղեքսանդրիա , 1910-1914 , 1916-1918

Երիտասարդաց Միության 50 հոգինոց երգչախումբը կազմուած է գործած է 1910-1914, իսկ ապագային վերակազմուած է Մայիս 1916-ին:

(Լ.Զ.1962, էջ 133 - Լ.1914, թիւ 182-1916, թիւ 22 -1918, թիւ 6)

2. Տիգրան Երկաթի «Քնար» երգչախումբ - *Աղեքսանդրիա , 1910*

Միութիւնը իր հիմնադիրներէն Էօժէն Բաբազեանի ղեկավարութեամբ հիմնած է իր անդամ-անդամուհիներէն կազմուած երկսեռ երգչախումբ մը 1910-ին, որուն մասնակցութեամբ հանդիսադրուած են միութենական ձեռնարկները:

Հետագային, վերակազմուած երգեցիկ խումբերու ղեկավարութիւնը ստանձնած են Փրոֆ. Սամուէլ Խաչատուրեան, Տիկին Զապէլ Գըլըճեան եւ Օր.Մարի Երկաթ: 1950-ականներուն, Միութեան երգչախումբին խմբավարը եղած է Տիկին Էլզի Թիրապեան:

([36]. էջ 71)

3. «Կոմիտաս» Երգչախումբ - Գահիրէ , 1920-ականներ

Կոչուած է նաեւ «Սրուանձտեանց» Երգչախումբ

Երգչախումբին ղեկավարը եղած է Կոմիտասի սան Վաղարշակ Սրուանձտեանցը, որուն համերգին գնահատանքով անդրադարձած է արուեստի քննադատ Հանրի Պերկաս:

([8]. էջ 282)

4. «Հայ Գեղարուեստասիրաց Միութեան» Երգչախումբ - Գահիրէ , 1926

Կազմուած է 1926-ին, Տրդատ Հապէշեանի նախաձեռնութեամբ եւ անոր երկամեայ ղեկավարութեամբ, երգացանկին վրայ ունենալով առաւելաբար Կոմիտասեան երգերը:

([8]. էջ 290)

Հետագային, երգչախումբը ղեկավարած են Համբարձում Պերպէրեան(1937), Շահան Պերպէրեան եւ Եդուարդ Յակոբեան:

5. «Արաբկիրի Հայրենակցական Միութեան» Երգչախումբ - Գահիրէ , 1928

Երգչախումբը կազմած և ղեկավարած է Տրդատ Հապէշեան 1928-ին:

([8]. էջ 291)

6. Թաշճեան Վարժարանի Սանուց Միութեան Երգչախումբ - Գահիրէ ,1928

Երգչախումբը կազմած է ղեկավարութիւնը ստանձնած է Հրանդ Կարապետեան 1928-ին:

([24]. գ.հտր. էջ 447)

7. Զակազիկի Երիտասարդաց Միութեան Երգչախումբ - Զակազիկ , 1928

Երգչախումբը կազմուած է 1928-ին, միութեան երկսեռ անդամներով , որուն ղեկավարութիւնը ստանձնած են Տիկ.Շուշանիկ Թերզեան եւ երգչուհի Աստղիկ Բաբլանեան:

([24]. գ.հտր. էջ 160)

8. «Արածանի» Մշակութային Միության Երգչախումբ - Գահիրե , 1929
Կազմուած է 1929-ին, խմբավար Տրդատ Հապէշեանի նախաձեռնութեամբ:
([8]. էջ 291)

9. «Քնար» Երգչախումբ - Աղէքսանդրիա , 1930

Կազմուած է 1930-ին, «Յառաջդիմասէր» Մշակութային Ընկերակցութեան երկսեռ անդամներէն, նախաձեռնութեամբ երաժիշտ-խմբավար Երուանդ Ալեքսանեանի:
([8]. էջ 285)

10. Գալուստեան Շրջանաւարտից Միութեան Երգչախումբ - Գահիրե , 1930

Կազմուած է 5 Մայիս 1930-ին, ղեկավարութեամբ Տրդատ Հապէշեանի եւ Ղազարոս Ղազարոսեանի, մասնակցութեամբ՝ Միութեան երկսեռ անդամներուն:
([24]. ք.հտր. էջ 615)

11. «Կումիտաս» Երգչախումբ - Գահիրե , 1930

Կազմուած է 1930-ին, Շահան Պէրպէրեանի ղեկավարութեամբ, որուն մեկնումէն ետք, ղեկը ձեռք առած է Լուիվիլ Փիլիպպոսեան:

Երգչախումբը կազմուած է Հայ Գեղարուեստասիրաց Միութեան երկսեռ անդամներով:

Գլխաւոր երգչուհիներէն եղած է Գոհար Խաչատուրեան Գասպարեանը:

12. «Շնորհալի» Երգչախումբ - Գահիրե , 1930 -

Երգչախումբը կազմուած է 1930-ին, իբրեւ *Գահիրէի Ս.Աստուածածին եւ Ս.Գրիգոր Լուսաւորիչ* եկեղեցիներու երգչախումբ, ղեկավարութեամբ վաստակաւոր դպրապետ Ղազարոս Ղազարոսեանի մինչեւ 1961: Օգնական դպրապետը Ս.Աստուածածին եկեղեցիին համար եղած է Բիւրատ Վարժապետեան:

1961-ին, Գահիրէի Ազգային Իշխանութեան տնօրինումով, Սօ. Եղուարդ Յակոբեանին յանձնուած է Ս.Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի «Շնորհալի» Երգչախումբի խմբավարի պաշտօնը:

Երգչախումբը 1969-ին հրատարակած է Գրիգոր Նարեկացիի «Հաւուն Հաւուն» Տաղը, երաժշտական մշակումով՝ Եդ. Յակոբեանի:

Մինչեւ 1980-ականներու աւարտը, «Շնորհալի» Երգչախումբը Սօ.Ե. Յակոբեանի ղեկավարութեամբ՝ իր մասնակցութիւնը բերած է եգիպտահայ ազգային, միութենական եւ յորելենական հանդիսութիւններուն, ինչպէս նաեւ միջեկեղեցական Էքիւմէնիք արարողութիւններուն՝ հայ եւ օտար եկեղեցիներու կամարներուն տակ:

Հետագային, 1992-էն սկսեալ, Երգչախումբին ղեկավարութիւնը ստանձնած են հայրենի երաժիշտ խմբավարներ Սօ.Դաւիթ Զալեան(1992-1999), Սօ.Հրանդ Աղաճանեան(1999-2003) եւ Սօ.Միհրան Ղազէլեան (2003էն):

13. «Լուսաւորիչ» Երգչախումբ - Աղէքսանդրիա , 1930 -

Աղէքսանդրիոյ Ս.Պօղոս-Ս.Պետրոս եկեղեցիին «Լուսաւորիչ» երգչախումբը հիմնուած է 1930-ին:

1933-ին, երգչախումբը ղեկավարած է Վարդան Տիւկէրեան(ապա՝ Քինյ): Շրջան մը անոր ղեկավարը եղած է երաժշտագետ Աշոտ Պատմագրեան, ապա յաջորդը եղած է Ղեւոնդ Քինյ. Փափագեան, որուն Գանատա մեկնումէն ետք պաշտօնը սիրայօժար կատարած է Տիկին Վարդուհի Հաճէթեան: 1980-ականներու

սկիզբէն, երգչախումբին ղեկը վարած են Դանիէլ Ագնաուրեան, Հրանդ Աղաճանեան (2002-2003 երկամեայ շրջանին), եւ Կարի Պօհճալեան 2015-էն:

14. Պօղոսեան Վարժարանի Շրջանաւարտից Երգչախումբ - *Աղեքսանդրիա*, 1932

Երգչախումբը կազմուած է վերահաստատուած Միութեան երկսեռ անդամներուն նախաձեռնութեամբ 1932-ին:

15. «Գողթան» Երգչախումբ - Գահիրէ , 1934

Կազմուած է 1934-ին, Տրդատ Հապէշեանի նախաձեռնութեամբ, «Հայկական Ընթերցասրահ»ի անդամներուն մասնակցութեամբ: Վարչական գործակցութեամբ վաստակ ունեցած են Սարգիս Պալայեան եւ Յովսէփ Գոյումճեան: (ԻԲ. էջ 63)

16. «Վերածնունդ» Հայ Երիտասարդաց Երգչախումբ - *Աղեքսանդրիա*, 1934

Երգչախումբը հիմնուած է 1934-ին, երաժշտագէտ ղեկավար Նազարէթ Մեսրոպեանի (Գոնիացի) ջանքերով:

17. «Համազգային» Երգչախումբ - Գահիրէ , 1934

Գահիրէի «Համազգային» կրթական եւ հրատարակչական ընկերութեան հովանաւորութեամբ՝ երգչախումբը կազմուած է 1934-ին, Լիպարիտ Նազարեանցի եւ Սեպուհ Շալճեանի նախաձեռնութեամբ եւ ղեկավարութեամբ: ([8]. էջ 282)

Հետագային, երգչախումբին խմբավարութիւնը ստանձնած են Կարպիս Ափրիկեան եւ Երուանդ Ալեքսանեան:

18. «Թարգմանչաց» Վարժարանի Երգչախումբ - Գահիրէ , 1936

Վարժարանին երգչախումբը կազմուած է 1936-ին, ղեկավարութեամբ անոր հիմնադիրին դուստր Օր.Ալիս Վ.Արծրունիի: ([24]. էջ 466)

19. «Երեւան» Ընթերցասրահի Երգչախումբ - *Աղեքսանդրիա*, 1937

Ընթերցասրահ Աղեքսանդրիոյ ակումբը հիմնուած է 1937-ին և իր երգչախումբը կազմուած՝ նոյն տարին, ղեկավարութեամբ Հրանդ Պօղոսեանի: (ԻԲ. էջ 210)

20. Աղեքսանդրիոյ Եկեղեցասիրաց Միութեան Երգչախումբ -

***Աղեքսանդրիա*, 1938**

Աղեքսանդրիոյ Եկեղեցասիրաց Միութիւնը ունեցած է իր երկսեռ երգչախումբը 1938-ին, ղեկավարութեամբ Շաւարշ Փափագեանի (Տ.Ղեւոնդ Քինյ.): ([8]. էջ 343)

21. «Քնար» Երգչախումբ - Գահիրէ , 1940

Համազգայինի «Քնար» երգչախումբը կազմուած է 1940-ին, նախաձեռնութեամբ երաժիշտ-խմբավար Երուանդ Ալեքսանեանի: ([8]. էջ 286)

22. «Կոմիտաս» Երգչախումբ - Գահիրէ , 1940-ականներ

Երգչախումբին հիմնադիրներէն եղած է ժամանակի հանրաժանօթ արուեստագէտ-մեներգիչ Արման Օգոստինոսեանը:

Երգչախումբին ելոյթները ղեկավարած է խմբավար Լուսովիկ Փիլիպպոսեան (1944): ([8]. էջ 282, 353 – [20]. էջ 54)

23. «Ալագեազ» Երգչախումբ - Գահիրե , 1946

Կազմում է 1946-ին, նախաձեռնությամբ Գեորգ Եանպէկեանի, «Հայ Գեղարուեստասիրաց Միութեան» անդամներուն մասնակցությամբ: ([8]. էջ286)

24. «Սպենդիարեան» Երգչախումբ - Գահիրե , 1947

Կազմում է 1947-ին, նախաձեռնությամբ Գեորգ Եանպէկեանի, «Հայկական Ընթերցասրահ»ի անդամներուն մասնակցությամբ: ([8]. էջ 287)

25. Գալուստեան Ազգային Վարժարանի Աշակերտական Երգչախումբ -

Գահիրե , 1950

Կազմում է 1950-ին, նախաձեռնությամբ եւ ղեկավարությամբ՝ վարժարանին երգի ուսուցիչ Ղազարոս Ղազարոսեանի:

26. «Եգիպտահայ» Երգչախումբ - Գահիրե , 1954

Վերանուանում՝ «Թաթուլ Ալթունեան» Երգչախումբ - Գահիրե , 1965

Եգիպտահայ Երգչախումբին հիմնադիրը 1954-ին եղած է երաժիշտ-խմբավար Եղուարդ Յակոբեան:

1965-ին, երգչախումբը վերանուանում է «Թաթուլ Ալթունեան» Երգչախումբ եւ 1967-ին հրատարակած՝ Աւետիք Իսահակեանի «Քնարական Երգեր» դաշնամուրի նուագակցությամբ մեներգներու հատորը : ([12]. թիւ 1579)

1975-ին, նշում է երգչախումբին 20-ամեակը, հովանաւորությամբ Արամ Խաչատուրեանի, եւ այս առիթով երգչախումբը պարգեւատրուած է Սփիւռքի Մշակութային Կապի Կոմիտէին կողմէ: ([8]. էջ 296)

Երգչախումբին նախաձեռնությամբ հրատարակուած են խմբավար Եղ.Յակոբեանի պատրաստած՝ “Երեք Տաղ” (1969), “Միրոյ Երգեր” (1969) եւ Գ.Պէշկէթօթիւրեանի նուիրում (1979) գրքոյկները: ([12]. թիւ 1602 , 1608 , 1678)

27. Մխիթարեան Վարժարանի Երգչախումբ - Գահիրե , 1958

Վարժարանին աշակերտներէն բաղկացած երգչախումբը կազմում է 1958-ին, ղեկավարությամբ Նշան Վարդեանի: (Լ.Զ. ք.տարի, 1958)

28. «Ազատ Մանուկեան» Մանկապատանեկան Երգչախումբ - Գահիրե , 1960

Մանկապատանեկան երգչախումբին հիմնադիրը եղած է խմբավար Եղուարդ Յակոբեան 1960-ին:

29. «Կռունկ» Երգչախումբ - Գահիրե , 1983-1992

Կազմում է 1983-ին, հովանաւորությամբ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Գահիրէի Մասնաճիւղին:

Խմբավարը եղած է Հայկ Սարգիսեան, որուն Ֆրանսա մեկնումով՝ երգչախումբը կազմալուծուած է 1992-ին:

30. «Գուսան» Երգչախումբ - Աղէքսանդրիա , 1983 - 1992

Կազմում է 1983-ին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հովանաւորությամբ, Աղէքսանդրիոյ Հ.Բ.Ը.Մ.ի Մասնաճիւղին նախաձեռնությամբ եւ անդամներու մասնակցությամբ:

Ղեկավարութիւնը ստանձնած է խմբավար Հայկ Սարգիսեան մինչեւ Եգիպտոսէն իր մեկնումը 1992-ին:

31. «Ծաղկաստան» Մանկապատանեկան Երգչախումբ - Հեղինակուիս , 1992 - Կազմուած է 1992-ին, հովանաւորութեամբ Յուսաբեր Մշակութային Ընկերակցութեան, ղեկավարութեամբ՝ հայրենի խմբավար Սօ.Դաւիթ Զալեանի եւ Տիկնոջ՝ արուեստագիտուհի Իրինա Զալեանի, մասնակցութեամբ՝ «Յուսաբեր» Հեղինակուիս Ակումբի Պատանեկան միաւորի երկսեռ անդամներուն:

Հետագային, երգչախումբը ղեկավարած են խմբավարներ Հրանդ Աղաճանեան(2000-2003), Միհրան եւ Գոհար Ղազէլեաններ ամուլը(2005-էն):

32. «Զուարթնոց» Երգչախումբ - Հեղինակուիս , 1995-2002

Երգչախումբը կազմուած է 1995-ին, հովանաւորութեամբ Գահիրէի Ազգային Առաջնորդարանին, ղեկավարութեամբ հայրենի խմբավար Դաւիթ Զալեանի եւ գործակցութեամբ՝ արուեստագէտ-դաշնակահարուհի Իրինա Զալեանի:

1999-2002 տարիներուն, երգչախումբին ղեկավարութիւնը ստանձնած է խմբավար Հրանդ Աղաճանեան:

33. «Արաքս» Երգչախումբ - Գահիրէ , 2003 -

Գահիրէի Ազգային Առաջնորդարանի նախաձեռնութեամբ, «Արաքս» քառաձայն սիրողական երկսեռ երգչախումբը կազմուած է 21 Նոյեմբեր 2003-ին, գեղարուեստական ղեկավարութեամբ խմբավար Սօ. Միհրան Ղազէլեանի:

Երգչախումբին բոլոր համերգները հովանաւորութիւնը վայելած են եգիպտահայոց թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ.Աշոտ Եպս. Մնացականեանի:

Երգչախումբին նպատակ եղած է *«Կենդանի պահել հայ երգը հայրենիքէն հեռու ապրող հայ մարդու շուրթերուն վրայ, հայ մարդու լսողութեան մէջ եւ վերջապէս հայ մարդու սիրտին մէջ»:*

«Արաքս» երգչախումբը իր անդրանիկ համերգը ունեցած է 21 Դեկտեմբեր 2003-ին, Ս.Էջմիածնի հիմնադրութեան 1700-ամեակին առթիւ եւ աւելի քան երեսուն համերգներով հանդէս եկած՝ համայնքային եւ օտար բեմերու վրայ:

Կիրակի, 30 Մարտ 2014-ին, Գահիրէի Օփերային փոքր դահլիճին մէջ տեղի ունեցած է «Արաքս»ի հիմնադրութեան 10-ամեակի յոբելենական երգահանդէսը:

Երգչախումբը մասնակցած է հայրենիքի մէջ ՀՀ Սփիւռքի Նախարարութեան կազմակերպած «Իմ Հայաստան» համահայկական փառատօներուն, առաջին առթիւ 2012-ին եւ ապա 5-10 Օգոստոս 2016-ին՝ Հայաստանի Անկախութեան 25-ամեակին նուիրուած *Երգչախմբային Արուեստի Օրերուն*, Հայաստանի եւ Արցախի մէջ:

Գահիրէի Առաջնորդարանի «Արաքս» երգչախումբը Առաջին կարգի վկայագրին, մետալին եւ դրամական պարգեւովճարին արժանացած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան Երեւանի մէջ կազմակերպած 2015-ի «Լաւագոյն գեղարուեստական խումբ» անուանակարգով փառատօնին:

34. «Ծիածան» Մանկական Երգչախումբ - Գահիրէ , 2004 -

Երգչախումբը կազմուած է 15 Յունիս 2004-ին, հովանաւորութեամբ՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Գահիրէի մասնաճիւղին,

գեղարուեստական ղեկավար ունենալով Մօ. Միհրան Ղազելեանը իսկ խմբավար՝ Գոհար Ղազելեանը:

Երգչախումբը յատուկ յայտագրով տօնած է իր հիմնադրութեան 5-ամեակը 18 Հոկտեմբեր 2009-ին, 8-ամեակը՝ 14 Յունիս 2012-ին եւ 10-ամեակը՝ 30 Նոյեմբեր 2014-ին:

35. «Ծիածան» Պատանեկան Երգչախումբ - Գահիրէ , 2012 -

Պատանեկան այս երգչախումբը կազմուած է իբրեւ յաջորդ սերունդը 2004-ին հիմնուած «Ծիածան» Մանկական Երգչախումբին:

Խումբին ղեկավարն է խմբավար Միհրան Ղազելեան:

36. «Արցախ» Աշակերտական Երգչախումբ - Հելիոպոլիս , 2013 -

Երգչախումբը կազմաւորուած է Հոկտեմբեր 1913-ին, Գահիրէի Գալուստեան-Նուպարեան Վարժարանի երկրորդական կարգերու երկսեռ աշակերտներէն, առանձնանալով Վարժարանի ընդհանուր մեծ երգչախումբէն:

Երգչախումբին ղեկավարն է խմբավար Միհրան Ղազելեան:

Անուանակոչուած է «Արցախ» անունով Մարտ 2014-ին, երբ մասնակցելու պատրաստուած է Գահիրէի մէջ կազմակերպուած Cairo Uptown Stars Schools' Talent Show երկրորդ մրցոյթին: Երգչախումբը, իր յաջող ելոյթով արժանացած է միջվարժարանային ներկայացումներու այս մրցոյթի Առաջին Մրցանակին եւ դրամական պարգեւովճարին:

Երգչախումբը մասնակցած է Հ.Հ. Սփիւռքի նախարարութեան կազմակերպութեամբ Յուլիս 2014-ին կայացած «Իմ Հայաստան» համահայկական երկրորդ փառատօնի երգչախմբային օրերու ելոյթներուն Երեւանի եւ Գիւմրիի մէջ, նաեւ Յուլիս 30ին՝ Շուշիի մէջ:

«Արցախ» երգչախումբը արժանացած է ՀՀ Սփիւռքի Նախարարութեան Երեւանի մէջ 2015-ին կազմակերպած «Լաւագոյն գեղարուեստական խումբ» փառատօնին երրորդ կարգի վկայագրին եւ համապատասխան մետալին:

Աշակերտական երգչախումբը ելոյթներով հանդէս եկած է գաղութի մշակութային ձեռնարկներուն:

Եգիպտահայ երգչախումբերու շարքին, յիշարժան են երաժշտագէտ-ուսուցիչ **ԱՇՈՏ ՊԱՏՄԱԳՐԵԱՆԻ** 1936-էն 1942 տարիներուն Եգիպտոսի մէջ կեցութեան շրջանին՝ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ կազմած երկսեռ եւ բազմանդամ **ԵՐԳՉԱՆՈՒՄԲԵՐԸ**, որոնց հայրենական երգերու յայտագիրներով երգահանդէսները արժանացած են հայ եւ օտար հասարակութեան ինչպէս նաեւ երգարուեստի քննադատներու մամուլի էջերով կատարած ջերմ գնահատանքին:

Պատմագրեան, եղած է Աղեքսանդրիոյ Պօղոսեան Ազգային Վարժարանի երգի ուսուցիչը եւ շրջանի մը համար Ս.Պօղոս-Պետրոս եկեղեցւոյ «Լուսաւորիչ» երգչախումբին ղեկավարը: Ան, 1939-ին կազմած է **“Les petits chanteurs Armeniens d'Alexandrie” մանկական երգչախումբը**, որուն ելոյթները ձայնասփռուած են Աղեքսանդրիոյ Ռատիոկայանէն:

(Ա.Պատմագրեան, «Իմ Յուշերից» , Տպ.Տօնիկեան, Պէյրութ, 1978, էջ 203-248)

Թ Ա Տ Ե Ր Ա Խ Ո Ւ Մ Բ Ե Ր

ԳԱՀԻՐԷ - ԱՂԵՔՍԱՆՂՐԻԱ - ԶԱԿԱԶԻԿ

1. Հայ Թատերասիրաց Խումբ - Գահիրե , 1900
2. Թատերական «Հրաչեայ» Խումբ - Գահիրե , 1902
3. Հայ Դերասանական Խումբ - *Աղեքսանդրիա* , 1903
4. «Տիգրան Երկաթ Մշակ. Միութեան» Թատերախումբ - *Աղեքսանդրիա* , 1904
5. «Փայլակ» Թատերասիրաց Միութիւն - Գահիրե , 1906
6. Ազգային «Բաֆֆի» Թատերախումբ - Գահիրե , 1908
7. «Հայ Բեմ» Միբողներու Թատերախումբ - Գահիրե , 1912
8. «Զանք» Թատերախումբ - *Աղեքսանդրիա* , 1913
9. Ս.Դ.Հնչակեան «Արծիւ» Թատերախումբ - Գահիրե , 1913
10. Յառաջդիմասերի «Ադամեան» Թատերախումբ - *Աղեքսանդրիա* , 1918-1923
11. «Արտօսը-Ժպիտ» Թատերախումբ - Գահիրե , 1920ականներու սկիզբ
12. «Հայ Գեղարուեստասիրաց Միութեան» Թատերախումբ - Գահիրե , 1922
13. Եգիպտահայ Տրամաթիկ Ընկերութիւն - Գահիրե , 1923-1925
14. «Գողթան» Միացեալ Թատերախումբ - Գահիրե , 1927
15. Եգիպտահայ «Քօմէտի» Թատերախումբ - Գահիրե , 1928
16. Զակազիկի Հ. Յ. Դ. «Անդրանիկ» Թատերախումբ - **Զակազիկ** , 1929
17. «Գալուստեան Շրջանաւ.ց Միութեան» Թատերախումբ - Գահիրե , 1929-1950
18. «Պօղոսեան Վարժարանի Շրջանաւարտից» Թատեր. - *Աղեքսանդրիա* , 1932
19. Համազգայինի «Միրանոյշ» Թատերախումբ - Գահիրե , 1937
20. «Վերածնունդ» Թատերախումբ - *Աղեքսանդրիա* , 1937
21. «Երեւան» Թատերախումբ - *Աղեքսանդրիա* , 1939
22. «Նիլր Իսթ հայկական Ակումբ»ի Թատերախումբ - Գահիրե , 1940
23. «Կոկանեան Սրահի Թատերախումբ» - Հելիոպոլիս , Գահիրե , 1957



Թ Ա Տ Ե Ր Ա Խ ՈՒ Մ Բ Ե Ր

ԳԱՀԻՐԷ - ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ - ԶԱԿԱԶԻԿ

1. Հայ Թատերասիրաց Խումբ - Գահիրե , 1900

Խումբ մը երկսեռ թատերասերներու նախաձեռնութեամբ 1900-ին կազմուած խումբը հանդէս եկած է երկու ներկայացումներով: (Ը.1900, թիւ 137)

2. Թատերական «Հրաչեայ» Խումբ - Գահիրե , 1902

Հիմնուած է 1902-ի սկիզբը եւ առաջին ներկայացումով հանդէս եկած Յունիս 1902-ին: (ԼԶ.1959-60, էջ 19 - Ը.1902, թիւ 279)

3. Հայ Դերասանական Խումբ - Աղեքսանդրիա , 1903

Թատերասերներու խումբը կազմուած է 1903-ին, ղեկավարութեամբ Յ.Ղազիկեանի եւ իր անդրանիկ ներկայացումը “Միսք փողոցին ոճիրը” անունով տուած է Էզպէքիյէի թատրոնին մէջ 25 Դեկտեմբեր 1903-ին, մասնակցութեամբ Աղեքսանդրիոյ «Հայ Նուագածուաց Խումբ»ին: (ԺԶ1.1904, թիւ 1)

4. «Տիգրան Երկաթ Մշակութային Միութեան» Թատերախումբ -

Աղեքսանդրիա , 1904

Երկար տարիներ թատերախումբը վարած եւ անոր մղիչ ուժը եղած է Խաչիկ Սանտալճեան, օժանդակ եւ գործակից ունենալով միութենական բազմաթիւ նուիրեալ արուեստասէր անդամ-անդամուհիներ:

«Տիգրան Երկաթ»ի թատերախումբը իր մասնակցութիւնը բերած եւ գործակցած է Աղեքսանդրիոյ մէջ կազմակերպուած թատերական ձեռնարկներուն, ինչպէս նաեւ այցելու խումբերու ներկայացումներուն: Թատերախումբը, հրաւերին ընդառաջելով նաեւ Գահիրէի զանազան բարեսիրական միութիւններուն, իր ելոյթներով նպաստած է անոնց ծրագիրներուն յաջողութեան: [36]

5. «Փայլակ» Թատերասիրաց Միութիւն - Գահիրե , 1906

Հիմնուած է 1906-ին, նպատակ ունենալով՝ «ի նպաստ ազգային հանրօգուտ հաստատութիւններու հայ կեանքէ թատերախաղեր ներկայացնել»:

«Միութիւն» անունով թատերախաղը առաջին ձեռնարկը եղած է ի նպաստ Վասպուրականի սովեալներուն:

Թատերասիրաց Միութեան հիմնադրութեան մասին մամուլի էջերով ծանուցումը կատարած են Վ.Շապանեան(ատենապետ) եւ Զ.Տ.Սարգիսեան (ատենադպիր): (ԼԶ.1959-60 - Ա.1906, թիւ 75 - ԺԶ.1906, Օգ.16)

6. Ազգային «Բաֆֆի» Թատերախումբ - Գահիրե , 1908

Կազմուած է 1908-ին, խումբ մը երիտասարդներու կողմէ, ելոյթ ունենալով «Բաֆֆի» երիտասարդականի ընկերային հաւաքոյթներուն: (Ը.1908, թիւ 503)

7. «Հայ Բեմ» Միբողներու Թատերախումբ - Գահիրե , 1912

Կազմուած է 1912-ին, խումբ մը սիրող դերասաններէ:

Խումբը իր մասնակցութիւնը բերած է, ի նպաստ Գահիրէի Լսարան-Ընթերցատան Շք. 5 Հոկտեմբեր 1912-ին կազմակերպուած թատերական ներկայացումին:

Առաջին անգամ ըլլալով, Գահիրէի մէջ հայերէն լեզուով ներկայացուած է «Այտա» օփերան, ղերակատարութեամբ Գ.Թերզիպաշի, Տ. Նշանեանի, Հ.Աւագ-

եանի, Օ.Վոլթերի, Տիկ.Հ.Սարոյանի, Մ.Արմենի, Օր.Վ.Սարոյեանի, Կ.Սարաֆեանի
և Ս.Ծերենցի: (ԻԳ1.1912, թիւ 41)

Բեմադրուած է Վ.Հիւկոյի «Արքայն կը Զբօսնու»ն(1913) , «Վարդանանք»ը եւ
«Օթելլօ»ն, ի նպաստ հայ որբերուն: (ԺԷ.1913, թիւ 29 - Լ.1918, թիւ 143)

8. «Ջանք» Թատերախումբ - Աղեքսանդրիա , 1913

Կաթողիկէ Երիտասարդաց Միութեան 1913ին հիմնուած թատերասեր
անդամներու խումբը ելոյթ ունեցած է միութենական ձեռնարկներու առիթներով,
ներկայացնելով կատակերգակ կարգ մը թատերակներ: (Լ.1913, թիւ 52)

9. Ս.Դ. Հնչակեան «Արծիւ» Թատերախումբ - Գահիրէ , 1913

Հիմնադիրներէն եղած են Վահան Հապէշեան, Օննիկ Վոլթեր(Օննիկ
Գալֆայեան) եւ Գեորգ Թերզիպաշեան, անմիջական զօրավիգ ունենալով
վաղամեծ Կարապետ Սարաֆեանը:

1939-ին, թատերախումբին վարչութեան անդամ եղած են Վահան Հապէշ-
եան (ատենապետ), Գեորգ Կերիկեան (ատենադպիր), Կարապետ Կարապետեան
(բեմադրիչ), Արամ Կերիկեան եւ Ասատուր Օհանեան (խորհրդական):

Գործօն անդամներէն եղած են Վահէ Պոյաճեան, Արաքսի
Վարդեան(Օհանեան) եւ Վահան Գափագճեան(ցկեանս անդամ): ([8]. էջ 381)

«Արծիւ» թատերախումբը հրատարակած է « զաւեշտ մէկական արարնոց»
նկարազարդ 3 հատորներ 1918-19-20 տարիներուն: ([12]. թիւ 262,276,295)

10. Յառաջդիմասերի «Ադամեան» Թատերախումբ - Աղեքսանդրիա , 1918-1923

Կազմուած է Մարտ 1918-ին, նպատակ ունենալով «սատարել եգիպտահայ
բեմի զարգացման եւ օգնել հիւրեկ դերասանները ներկայացումներ
կազմակերպելու, մնալով չէզոք հողի վրայ»:

Թատերախումբը կազմուած է նախաձեռնութեամբ եւ նիւթական
գոհողութիւններովը Ղեւոնդ Փափագեանի, իր մէջ խմբելով տեղւոյն բոլոր կարող
թատերասեր ուժերը: (Ը.1923, Ժբ.պրակ)

Գաղափարական տարակարծութիւններու պատճառով, թատերախումբը
կազմալուծուած է 1923-ին: ([8]. էջ 362)

11. «Արտօսը-Ժպիտ» Թատերախումբ - Գահիրէ , 1920-ականներու սկիզբ

Թատերախումբը կազմուած է ժամանակի սիրող արուեստագէտներէ:
([8]. էջ 362)

12. «Հայ Գեղարուեստասիրաց Միութեան» Թատերախումբ - Գահիրէ , 1922

Հիմնուած է 1922-ին, ղեկավարութեամբ դերասան Բ.Արովեանի:

Խումբին առաջին ներկայացումը Հոկտեմբեր 1922-ին եղած է Գ.Երիցեանի
«Ուշ լինի,նուշ լինի» երաժշտախառն երեք արարով օբերէթը: (Լ.1922)

Միութեան հիմնադրութենէն ետք, անոր թատերական գործունէութեան
մղիչ ուժը եղած է Վահէ Պոյաճեան 1926-էն սկսեալ: ([8].էջ 395)

Թատերախումբին ղեկավար Վահէ Պոյաճեանի շունչին տակ, անոր գործօն
դերասաններէն եղած են Գեորգ Զարդարեան, Մանուկ Թաճեան, Անժէլ
Յակոբեան, Գրիգոր Փարթամեան եւ ուրիշներ :

1966-ին, նշուած է թատերախումբին հիմնադրութեան 40-ամեակը:

13. Եգիպտահայ Տրամաթիկ Ընկերություն - Գահիրե , 1923-1925

«Եգիպտահայ Տրամա-օփերթային Խումբ»

Ընկերությունը կազմուած է 1923-ին, անխոնջ ջանքերովը խմբավարերաժիշտ Գ.Արիստակեանի, գործակից ունենալով Վահան Հապէշեանը եւ Օննիկ Վոլթերը(Օննիկ Գալֆայեան):

Թատերասերներէ կազմուած միութեան նպատակը եղած է *«աժան ներկայացումներու շարքով մը վառ պահել գաղութին ազգային ոգին եւ բարձրացնել անոր գեղարուեստական ճաշակը»*:

Հետագային, թատերախումբը գլխաւորած է դերասան Պր.Ս.Սանամեան, կողքին ունենալով ծանօթ սիրող արուեստասէր Օ.Վօլթեր: (Լ.1922, թիւ 117)

Արիստակեանի անժամանակ մահով խումբը կազմալուծուած է:

Ներկայացուած է խումբին ա.տարեշրջանի (1922-1923) «Յայտագիր-Ծրագիր»ը, բեմական խաղացանկով եւ վարչական պատասխանատուներու անուններով:

Թատերախումբին առաջին ներկայացումը՝ Ա.Աբելեանի «Մարուող ճրագներ» անունով, կայացած է Գահիրէի Վերտի Թատրոնին մէջ, Կիր. 21 Յունուար 1923-ին, ղեկավարութեամբ Մ.Սանամեանի եւ մասնակցութեամբ Քնար Նուազախումբին:

Դերակատարներ եղած են Մ.Սանամեան, Օ.Վօլթեր, Կ.Կարապետեան, Վ.Գափաքճեան, Խ.Տէրտէրեան, Տիկ.Ս.Սանամեան եւ Օր.Յասմիկ:

(Ե2.1923, պրկ. գ. ք. Ժ)

14. «Գողթան» Միացեալ Թատերախումբ - Գահիրե , 1927

Հիմնուած է Սոկրատ Սարրաֆեանի նախաձեռնութեամբ Յուլիս 1927-ին հայ դերասաններու եւ թատերասերներու մասնակցութեամբ կայացած խորհրդակցական ժողովին, գործակցութեամբ դերասան Օննիկ Վոլթերի(Օննիկ Գալֆայեան): ([8]. էջ 400)

Կազմուած առաջին վարչութեան անդամակցած են Օննիկ Վոլթեր, Մանուկ Թաշճեան, Գրիգոր Բագրատունի եւ Լեւոն Շիշմանեան:

Ժամանակի պայմաններուն ընդառաջ, թատերախումբը կազմալուծուած է կարճատեւ գործունէութիւն մը ունենալէ ետք: ([8]. էջ 365)

15. Եգիպտահայ «Քօմէտի» Թատերախումբ - Գահիրե , 1928

Կազմուած է Ապրիլ 1928-ին, իր կազմին անդամակցութեամբ Օրք. Աստղիկ Եկէնեանի,Ռօզա Յովհաննէսեանի, Պրք. Ա.Վարդեանի, Գ.Բագրատունիի, Խ.Սանտալճեանի, Վ.Տաքէսեանի եւ Մ.Միքայէլեանի:

Թատերախումբը կազմալուծուած է 1930-ական կէտերուն:

16. Զակազիկի Հայ Յեղ. Դաշնակցութեան

«Անդրանիկ» Թատերախումբ - Զակազիկ , 1929

Թատերախումբը կազմուած է 1929-ին, ղեկավարութեամբ վաստակաւոր դերասան Սմբատ Թէրզեանի:

6 Ապրիլ 1929-ին բեմադրուած է Շիրվանգատէի «Պատուի համար» թատերգութիւնը: Երկամեակի ընթացքին դերուստյց ղեկավարը եղած է Տիկին Հռիփսիմէ Գ.Իփիքեանը:

(Լ.1929, թիւ 9 – [24]. գ.հտր. էջ 159-160)

17. «Գալուստեան Շրջանաւարտից Միութեան» Թատերախումբ -

Գահիրէ , 1929-1950

Միութիւնը թատերական իր ձեռնարկներով հանդէս եկած է Վարժարանին «Սեթեան Սրահ»ին մէջ, որուն վերաբացումը կատարուած է 23 Դեկտ. 1934-ին:

Թատերախումբը ներկայացուցած է աւելի քան 25 թատերախաղեր:

([20]. ք.հտր. էջ 627-631)

18. «Պօղոսեան Վարժարանի Շրջանաւարտից» Թատերախումբ -

Աղեքսանդրիա , 1932

Շրջանաւարտիցի անդամներէ կազմուած թատերախումբը հիմնուած է 1932-ին, քաջալերութեամբ վարժարանի տնօրէն Կարապետ Պիոնեանի:

19. Համազգայինի «Միրանոյշ» Թատերախումբ - Գահիրէ , 1937

Հիմնուած է 1937-ին, ղեկավարութեամբ Գասպար Իփեքեանի, Բիւզանդ Չեքիճեանի եւ Սեպուհ Շալճեանի:

Գործակից վարչականներ եղած են Ալիս Մխիթարեան, Գեղանոյշ Եսայեան, Արաքսի Օհանեան եւ Հայկազուն Գալուստեան:

Թատերախումբին փորձերը կատարուած են «Նաւասարդ Սրահ»ին մէջ:

20. «Վերածնունդ» Թատերախումբ - *Աղեքսանդրիա , 1937*

Նոր Սերունդի «Վերածնունդ» Միութեան թատերախումբը կազմուած է անոր երկսեռ անդամներուն մասնակցութեամբ 1937-ին: (ԻԲ. էջ 213)

Խումբին ղեկավարը եւ գործունէութեան մղիչ ուժերը դարձած են Պօղոս Ներսէսեան եւ Տիկին Գայիանէ Յովհաննէսեան:

21. «Երեւան» Թատերախումբ - *Աղեքսանդրիա , 1939*

Թատերախումբը կազմուած է 1939-ին, նախաձեռնութեամբ Աղեքսանդրիոյ «Երեւան Ընթերցասրահ»ի երկսեռ անդամներուն: (ԻԲ. էջ 210)

22. «Նիւր Իսթ Հայկական Ակումբ»ի Թատերախումբ - Գահիրէ , 1940

Թատերախումբին հիմնադիրը 1940-ին եղած է Ժիրայր Ճեպէլեան, անմիջական գործակցութեամբ դերասան Օննիկ Թամճեանի:

Խումբին անմիջական գործակցութիւն բերած են Անահիտ Քիւփէլեան, Օննիկ Կարապետեան, Արփիար Վարդեան, Յարութիւն Լեւոնեան, Ալիս Ճեպէլեան, Հայկազ Գալուստեան եւ ուրիշներ:

23. «Կոկանեան Սրահի Թատերախումբ» - Հելիոպոլիս , 1957

Թատերախումբին հիմնադիրը 1957-ին եղած է Կարպիս Եազըճեան, դառնալով անոր երկար տարիներու ղեկավարն ու աւելի քան 35 ներայացումներուն բեմադրիչը:

Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ, թատերախումբը հանդէս եկած է ներկայացումներու հարուստ ցանկով, որոնց յաջողագոյնը հանդիսացած է «Թօփազ»ի բեմադրութիւնը 1968-ին, Գահիրէի Օփերային մէջ:

1970-ական կէսերուն, թատերասէր Պօղոս Միմոնեանի նախաձեռնութեամբ եւ ղեկավարութեամբ կազմուած է ակումբին «Պատանեկան Թատերախումբ»ը:

ԵԳԻՊՏԱՀԱՅ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ

ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ ա հ ի ր է

Ա ղ է ք ա ն դ ի ա

Փ ո թ Մ ա յ ի տ

Զ ա կ ա գ ի կ

ՄԱՐԶԱԿԱՆ - ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԳԱՀԻՐԷ-ՀԵԼԻՈՊՈԼԻՍ-ՇՈՒՊՐԱ-ԿԻԶԷ

1. «Վաչէ» Մարմնամարզական Խումբ - Գահիրէ , 1908-1910
2. «Տորք Քլիպ» (Մարզական Ակումբ) - Գահիրէ , 1910-1914
3. Հայ Մարմնամարզական Ակումբ - Գահիրէ , 1912
4. Մարզասիրաց Ընկերություն - Գալստեան Մարզասիրաց Ընկերություն - Գահիրէ , 1912
5. «Սփինքս» Հայ Մարմնամարզական Ակումբ - Գահիրէ , 1914
6. «Արարատ» Հայ Մարմնամարզական Ակումբ - Գահիրէ , 1914-1961
«Հ.Մ.Ը.Մ. Արարատ եւ Հայ Արիներու Ընկերակցություն» , 1961
«Հ.Մ.Ը.Մ. Արարատ» Մարզական Ակումբ , Հելիոպոլիս , 1963-
7. Գահիրէի Հայ Հետազոտիչներու Ընկերակցություն - Գահիրէ , 1915
8. «Կայծակ» Հայ Մարմնամարզական Միություն - Գահիրէ , 1923
9. «Նիլր Իսթ» Հայկական Ակումբ - Շուպրա , 1925
10. Հայ Երիտասարդաց Քրիստոնէական Ընկերութեան (Հ.Ե.Ք.Ը.)
Մարմնակրթական Շարժում - Գահիրէ , 1925-1928 , 1934-1940
11. «Վահագն» Մարզական Միություն - Գահիրէ , 1925
12. «Զանք» Մարմնամարզական Միություն - Հելիոպոլիս , 1925
13. «Արածանի» Մարզական եւ Մշակութային Միություն - Գահիրէ , 1926-1935
14. Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միություն - Հելիոպոլիս , 1927-1948
«Հ.Մ.Ը.Մ. Նուպար» Մարզական Ակումբ - Հելիոպոլիս , 1948 , 1958
15. Հայ Կրթասիրաց Միութեան Մարզական Խումբեր - Կիզէ , Գահիրէ , 1933
16. «Նուպար» Մարզական Միություն - Շուպրա , 1933-1948
«Հ.Մ.Ը.Մ. Նուպար» Մարզական Ակումբ - Գահիրէ , 1948 - Հելիոպոլիս , 1958 -
17. «Հայ Արի»ներու Ընկերակցություն - Գահիրէ եւ Աղեքսանդրիա , 1934-1974
18. «Նաւասարդ» Մարզարան - Գահիրէ , 1943-1947
19. Եգիպտահայ Մարզական Ընկերակցություն - Գահիրէ , 1948-1949
20. Գալուստեան Ազգային Վարժարանի Հետազոտիչներ - Գահիրէ , 1957-1965
21. Ս.Թերեզա Հայ Կաթողիկէ Ակումբ - Հելիոպոլիս - 1965 -

ԱՂԵՔՍԱՆՂՐԻԱ

1. «Կամբ» Մարմնամարզական Միություն - Աղեքսանդրիա , 1912-1917
«Կամբ» Մարմնամարզական Ակումբ
եւ Հայ Հետազոտիչներու Ընկերակցություն , 1917
«Հ.Մ.Ը.Մ. Կամբ» Մարզական Ակումբ , Աղեքսանդրիա , 1974-
2. Հայ Հետազոտիչներու Ընկերակցություն - Աղեքսանդրիա , 1915-1917
3. Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միություն - Աղեքսանդրիա , 1923
«Հ.Մ.Ը.Մ. Նուպար» - Աղեքսանդրիա , 1959-
4. «Տորք» Մարմնամարզական Միություն - Աղեքսանդրիա , 1924-1925 , 1935
5. «Հ.Մ.Ը.Մ. Տորք» Մասնաճիւղ - Աղեքսանդրիա , 1943-1947

ՓՈՐ ՄԱՅԻՏ

1. «Թաթար-Ալանք» Ֆուրադոլի Խումբ - Փոր Մայիտ , 1916-1919
2. «Սիսուան» Դպրոցական Պոյ Սկաուտներու Ընկերակցութիւն -
Փոր Մայիտ , 1917-1919

ԶԱԿԱԶԻԿ

«Կամսարական» Ֆուրադոլի Խումբ - Զակազիկ , 1929-1944

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԱԽՈՅԵՆԱԿԱՆ ԱԹԼԷԹԻՔ ՄՐՑՈՒՄՆԵՐ ԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

Ա. Առաջին - 17 եւ 18 Յունիս 1939 ,	«Կամք» ,	Աղեքսանդրիա
Բ. Երկրորդ - 4 եւ 5 Սեպտեմբեր 1943 ,	«Կամք» ,	Աղեքսանդրիա
Գ. Երրորդ - 20 եւ 21 Մայիս 1944 ,	«Արարատ» ,	Գահիրէ
Դ. Չորրորդ - 18 եւ 19 Նոյեմբեր 1944 ,	«Նուպար» ,	Գահիրէ
Ե. 5-րդ - 7 եւ 8 Յունիս 1951 ,	«Կամք» ,	Աղեքսանդրիա
Զ. 6-րդ - 5 եւ 6 Յունիս 1952 ,	«Կամք» ,	Աղեքսանդրիա
Է. 7-րդ - 23 եւ 24 Մայիս 1953 ,	«Հ.Մ.Ը.Մ. Նուպար» ,	Գահիրէ
Ը. 8-րդ - 10 եւ 11 Ապրիլ 1954 ,	«Հ.Մ.Ը.Մ. Արարատ» ,	Գահիրէ
Թ. 9-րդ - 16 եւ 17 Ապրիլ 1955 ,	«Կամք» ,	Աղեքսանդրիա
Ժ. 10-րդ - 7 եւ 8 Յունիս 1956 ,	«Կամք» ,	Աղեքսանդրիա
ԺԱ. 11-րդ - 3 եւ 4 Օգոստոս 1957 ,	«Հ.Մ.Ը.Մ.» ,	Աղեքսանդրիա
ԺԲ. 12-րդ - 26 եւ 27 Ապրիլ 1958 ,	«Հ.Մ.Ը.Մ. Արարատ» ,	Գահիրէ
ԺԳ. 13-րդ - 7 եւ 8 Մայիս 1960 ,	«Կամք» ,	Աղեքսանդրիա
ԺԴ. 14-րդ - 13 եւ 14 Մայիս 1961 ,	«Հ.Մ.Ը.Մ. Արարատ» ,	Գահիրէ

ԳԱՀԻՐԷ-ՀԵԼԻՈՊՈԼԻՍ-ՇՈՒՊՐԱ-ԿԻԶԷ

1. «Վաչէ» Մարմնամարզական Խումբ - Գահիրէ , 1908 -1910

Մարմնամարզի այս խումբը ենթադրուած է գործած ըլլալ 1908-ին եւ յաջորդ երկամեակին, նկատի ունենալով որ յիշուած է 1910-ին, իր կազմալուծման ընթացքին:

Մարզական միաւորը գործած է վաւերացուած կանոնագիրով մը:

(ԼԶ.1959-60, էջ 25 - Ը.1910, թիւ 139)

2. Տորք Քլիւպ (մարզական Ակումբ) - Գահիրէ , 1910-1914

«Տորք Մարզական ակումբ»ը Գահիրէի մէջ հիմնուած է 1910-ին եւ ճանչցուած՝ «Հայկական Ֆութպոլի Տորք Քլիւպ» անունով:

Ժամանակի պատանի եւ երիտասարդ մարզասէր սերնդականներ, առաջնորդութեամբ կազմալոյծ եղած «Պատանեկան Միութիւն»ի անդամ Յակոբ Սէմէրճեանի, Աշոտ Յակոբեանի եւ Իզմիրէն եկած Ստեփան Ամիրայեանի՝ նախաձեռնած են Գահիրէի մէջ մարզական շարժումի ստեղծումին:

Կազմուած է վարիչ մարմին մը անդամակցութեամբ Պօղոս Մաճառեանի, Արման Օգոստինոսեանի, Անտոն Յովսէփեանի, Արտաշէս Բամպուքճեանի, Յարութիւն Նազարէթեանի, Յակոբ Սէմէրճեանի, Ստեփան Ամիրայեանի եւ հետագային՝ Բիզանդ Մինասեանի:

(ԻԶ.1952, թիւ 5, էջ 111)

Նորակազմ ակումբին հաւաքավայր եղած է Պէյն Էլ Սուրէյն թաղաշրջանի Խալիկ Էլ Մասրի փողոցին Առաջնորդարանի գետնայարկ ընթերցասրահը:

Պիւտճեկական կարելիութիւններով, վարչական մարմինը՝ *“քանի մը կտոր երկաթ գնելով, սրահին տախտակամածին վրայ սկսած են ծանրաբարձութեան փորձեր ընել”*, առաջնորդութեամբ՝ ծանրաբարձութեան մարզիկ Պօղոս Մաճառեանի:

(ԻԶ.1952, թիւ 5, էջ 112)

Ակումբը ունեցած է 45-50 անդամներ, որոնք մարզուած են ֆութպոլի եւ սփորի զանազան խաղերով: Անոնք իրենց շաբաթական Կիրակնօրեայ փորձերը կատարած են Ապպասիյէի աստղադիտարանի կից պարապ դաշտին վրայ:

«Հայ Ֆութպոլի Տորք Քլիւպ»ի խումբին մաս կազմած են Արտաշէս Բամպուքճեան(խմբապետ), Բիզանդ Մինասեան, Արտաշէս Յարութիւնեան, Արման Օգոստինոսեան, Գասպար, Անտոն Յովսէփեան, Յարութիւն Նազարէթեան, Ներսէս Գազանճեան, Սիմոն Յովհաննէսեան, Ստեփան Ամիրայեան եւ Յակոբ Սէմէրճեան:

Միութեան համար Կազմական Կանոնագրի մը կազմութիւնը յանձն առած են անոր գործունեայ անդամներէն Յակոբ Սէմէրճեան, Արթին Ամիրայեան եւ Արտաշէս Բամպուքճեան:

(ԻԶ.1952, թիւ 7-8, էջ 172 - ԻԷ.1912, թիւ 20)

Ակումբին մարզական գործունէութիւնը տեւած է քառամեայ շրջան մը մինչեւ 1914 եւ կազմալուծուած է իր անդամներուն ցրումով եւ մէկ մասին ալ նորակազմ «Արարատ» Մարզարանին անդամակցութեամբ:

3. Հայ Մարմնամարզական Ակումբ - Գահիրէ , 1912

“Սօստերս ակումբ մըն ալ կազմուեցաւ քանի մը մարմնամարզասէր երիտասարդներու նախաձեռնութեամբ՝ «Հայկական Մարմնամարզական Ակումբ»

անունով, որ ունի 15-20ի չափ անդամներ եւ յոյսով ենք որ ամենքն ալ մարզանքի սիրահար եւ եռանդուն երիտասարդներ ըլլալով ժրջանօրէն կ'աշխատին ճոխ եւ կանոնաւոր ակումբ մը հաստատելու։“ (ԻԷ.1912, թիւ 20, էջ 374)

Մարմնամարզական ակումբին հիմնադիր անդամներէն եղած են Պօղոս Մաճառեան, Արտաշէս Բամպուքճեան, Անտոն Յովսէփեան եւ ուրիշներ։

Ակումբին մարզիկ պատասխանատուներէն Արտաշէս Բամպուքճեան եղած է կարճ վազքերու ախոյեան, իսկ Անտոն Յովսէփեան առաջին հանդիսացած է Գահիրէի Մարաթոն վազքին, 11 քիլոմէթրը վազելով՝ 40 վայրկեանէն։

4. Մարզասիրաց Ընկերութիւն - Գալստեան Մարզասիրաց Ընկերութիւն -

Գահիրէ, 1912

Մարզասիրացը կազմուած է 1911-1912 տարեշրջանին, Գալուստեան Ազգային Վարժարանի տնօրէն Մինաս Ծալեանի օրով, վարժարանի մարզանքի ուսուցիչ Հայկ Նալճեանի թելադրութեամբ։

Նպատակը եղած է «Ազգային Վարժարանի շրջաքաղկին մէջ դաշտային եւ դպրոցական խաղեր կազմակերպել, եւ մրցումներ՝ աշակերտներու միջեւ»։

«Մարզասիրաց»ի կազմութեան տարիներուն, դպրոցական խաղերը կանոնաւոր կերպով տեղի ունեցած են Հինգշաբթի օրերը։ Ա.մրցումը կայացած է 11 Ապրիլ 1912-ին, Յուլիանոսի Պալատին շրջաքաղկին մէջ, Կէզիրէ։

Ընկերութիւնը կոչուած է նաեւ «Գալստեան Մարզասիրաց Ընկերութիւն»

(ԻԷ.1912, թիւ 20, էջ 374)

1920 եւ 1930-ական թուականներուն, Վարժարանին մարզանքի մասնագետ ուսուցիչ Արարատ Քրիսեան հաստատած է ըմբշական եւ պասքէթպոլի միջ-դասարանային մրցումներ, որոնց մետալներ տրամադրած են «Արածանի» մարմնամարզական եւ սկաուտական կազմակերպութիւնը, իսկ բաժակներ՝ Վարդան Գազանճեան, Պետրոս Կիրակոսեան, Հրանդ Նասիպեան եւ Յակոբ Յ.Չալլազեան։ ([24].բ.հտր, էջ 565 - ԼԶ.1959-60, էջ 25 - ԻԷ.1912, թիւ 14, էջ 277)

5. «Սփինքս» Հայ Մարմնամարզական Ակումբ - Գահիրէ, 1914

Մարզական Ակումբը հիմնուած է «Հայ Ազգային Սրահ»ին մէջ 8 Մարտ 1914-ին, 40 մարզասէր երիտասարդներու ներկայութեամբ։

Կազմուած է առժամեայ վարչութիւն մը ատենապետ Ա.Օգոստինոսեանի եւ ատենադպիր Գ.Սահակեանի ղիւանով։

Ունեցած է քառամսեայ գործունէութիւն մը ֆութպոլի խումբին կազմութեամբ, աթլէթիկ մարզաձեւերու կիրարկութեամբ եւ երկար վազքերու մրցումներու կազմակերպութեամբ, ղեկավար ունենալով Անտոն Յովսէփեանը։

1914 Յուլիսին գումարուած Ընդհանուր Ժողովի որոշումով, ակումբը վերանուանուած է «Արարատ Մարզական Ակումբ» անունով։ (Լ.1914, թիւ 210,244)

6. «Արարատ» Հայ Մարմնամարզական Ակումբ - Գահիրէ, 1914 -

«Հ.Մ.Ը.Մ. Արարատ եւ Հայ Արիւնքերու Ընկերակցութիւն», 1961 -

«Հ.Մ.Ը.Մ. Արարատ» Մարզական Ակումբ, Հելիոպոլիս, 1963 -

«Արարատ» Մարզական Ակումբը հիմնուած է Օգոստոս 1914-ին, նախաձեռնութեամբ Գալուստեան Ազգային Վարժարանի մարզիկներ Ստեփան Ամիրայեանի, Յակոբ Սէմերճեանի, Արամ Արամօֆի, Արտաշէս Բամպուքճեանի,

Գրիգոր Նիկողեանի, Անտոն Յովսեփեանի, Օննիկ Թիւլպէնտեանի եւ Ներսէս Գազանճեանի: (ԻԶ.1952, թիւ 7-8, էջ 172)

Նոյն տարուան, 1914-ի Մարտին կազմուած «Մփինքս» Հայ Մարմնամարզական Ընկերութեան Ընդհանուր Ժողովին մեծամասնութեան փափաքով եւ որոշումով՝ մարզարանին «Արարատ» հայկական վերանուանումը կատարուած է: (Լ.1914, թիւ 244)

Առաջին առթիւ, Գահիրէի Ազգային Իշխանութեան եւ դպրոցին Պատ. Հոգաբարձութեան տնօրինումով, Գալուստեան Վարժարանի բակը «Արարատ»ի մարզիկներուն գիշերային մարմնամարզական փորձերուն տրամադրուած է Երկուշաբթի, Չորեքշաբթի, Ուրբաթ եւ Կիրակի օրերը, երեկոյեան ժամը 8-էն 10: (Լ.1914, թիւ 244)

Ակումբին առաջին վարչութիւնը «Կոչ»ով մը հրաւիրած է երիտասարդութիւնը, մասնակցելու մարմնամարզական այս ձեռնարկին, դիտել տալով իր ծրագրին մէջ ներառնուած շուէտական մարզանքներու անհրաժեշտութիւնը: (Լ.1914, թիւ 293)

1915-ի վարչական ժողովը կազմած են Ստեփան Ամիրայեան (ատենապետ), Թումիկ Սէտէֆճեան(ատենադպիր), Հրանդ Եմէնիճեան(գանձապահ), Տիգրան Մերճանեան եւ Պօղոս Ներսէսեան(խորհրդական), որոնց յղած հրաւերին ընդառաջ՝ Փրոֆ.Ստեփան Խանճեան շաբաթը երկու օր Ադէքսանդրիայէն Գահիրէ գալով հետեւած է եւ խանդավառած՝ մարզիկներուն փորձերը: (ԺԲ.1916, էջ 176-179)

«Արարատ» Մարմնամարզական Ակումբի ամսական մրցումներու առաջինը տեղի ունեցած է 31 Յուլիս 1915-ին, Գալուստեան Վարժարանի պարտէզին մէջ, ղեկավարութեամբ մարզիչ Ստեփան Խանճեանի: (Լ.5 Օգ.1915)

1916-ին, Էմատ Էլտին փողոցի «Հայկական Սրահ»ին մէջ ընտրուած է նոր վարչութիւն մը անդամակցութեամբ Թումիկ եւ Սիմոն Սէտէֆճեան եղբայրներու, Հրանդ Եմէնիճեանի, Տիգրան Մերճանեանի, Յակոբ Սէմէրճեանի, Արման Օգոստինոսեանի եւ Ստեփան Ամիրայեանի: Այս վարչութեան կատարած ճիգերով, Ապտին թաղի Տաուաուին փողոց, թիւ 15 հասցեով ընդարձակ հող մը վարձուած է եւ 20 Մայիս 1917-էն սկսեալ «Արարատ» մարզարանին երկրորդ կեդրոնը դառնալով՝ մարզական շարժումը հոն փոխադրուած:

(ԻԶ.1952, թիւ 7-8, էջ 173)

«Արարատ» Մարմնամարզական Ակումբը հայ երիտասարդութեան մէջ տարածած է հեծելանիւի մարզաձելը եւ Եգիպտոսի մէջ անոր առաջին մրցումները կազմակերպողը, ղեկավար-մարզիչ ունենալով Սելիմ Իշխանեանը եւ Յակոբ Սէմէրճեանը: (ԻԶ.1952, թիւ 9, էջ 190 եւ 193 - Ի.1929, թիւ 1, էջ 8-9)

1919-ի դէպքերուն պատճառով, հայ մարզական կեանքը երկու տարի դադարած է մինչեւ 1921: Այս շրջանին, «Արարատ»ի գործունէութիւնը փոխադրուած է Հելիոպոլսոյ «Քէմբ»ը, ուրտեղ ղեկավարի պաշտօնը կատարած են Վարդան Գազանճեան եւ Բաբգէն Քէհիայեան: (ԻԶ.1952, թիւ 7-8, էջ 174 եւ թիւ 9, էջ 190)

Յիշեալ շրջանին, Առաջնորդ Թորգոմ Եպս.ի տնօրինումով եւ Ազգային Իշխանութեան հաւանութեամբ, բարերար Գրիգոր Եղեայեանի կտակով Մալիքա Նազլի պողոտային վրայ եկեղեցիի մը շինութեան համար գնուած հողատարածքը տրամադրուած է «Արարատ»ի վարչութեան մինչեւ աղօթատեղիին շինութեան որոշումը: Այստեղ, Ապպաս պողոտայի(յետոյ՝ Մալիքա Նազլի եւ ներկայիս

Ռամսես) հաւաքավայրին մարզական գործունէութիւնը սկիզբ առած է բացման հանդէսով մը Կիր. 16 Հոկտեմբեր 1921-ին, ղեկավարութեամբ վկայեալ մարզիչ Ս.Խանճեանի:

(Զ.1921, թիւ 68/979/)

Փետրուար 1922-ին կազմուած են Արարատի թէնիսի, ըմբշամարտի եւ կռիւամարտի խումբերը: 1922-1923 շրջանին, կազմակերպուած են կռիւամարտի մրցումները գործակցութեամբ՝ մարզիչ Նորայր Կելքէկեանի, իսկ ըմբշտամարտի յաջողութիւնները արձանագրուած են մարզիչ եւ ախոյեան Յակոբ Սէմերճեանի ղեկավարութեամբ: (ԻԶ.1952, թիւ 9 - ԼԱ1.1923, պր.20, էջ 312 – [41].ա.հտր. էջ 281)

Ս.Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիին շինութեան որոշումին ընդառաջ, «Արարատ»ի գործունէութիւնը դադրած է եւ միայն ֆութպոլի խումբը իր փորձերը կատարած է Երկաթուղիի Ընկերութեան եւ Շուպրայի Սփորթինկ տեղական սկումբին եւ անոր կից վարձուած դաշտերուն վրայ: (ԻԶ.1952, թիւ 9, էջ 193)

Այստեղ, Ստեփան Ամիրայեանի նախաձեռնութեամբ 1923-ին գումարուած մարզիկներու հաւաքին որոշումով կազմուած է սկաւտական խումբը, որուն 1930-ին միացած են Գալուստեան Վարժարանի սկաւտական միաւորը:

Մարզական աթլէթիք վարժանքներու վայր եղած է նաեւ Շուպրա Պէլէտի շրջանին Կարապետեանի դաշտը 1928-ին: ([32]. էջ 140)

1920-ականներուն կազմուած է «Հետագօտիչ-Արարատ» ֆութպոլի խումբը, որուն անդամները եղած են Երուանդ, Գարեգին եւ Գեորգ Շամլեան եղբայրները, Գուրգէն Եալընըզեան եւ Տիգրան Պահլաւ:

Նոյն շրջանին, մարաթոնի և երկար վազքերու մրցանիշակիր ախոյեանները եղած են Անտոն Յովսէփեան եւ Արսէն Շամլեան: (Լ.1922, թիւ 137-8)

Կազմուած են «Արշաւ» Ա.և Բ. տղոց և աղջիկներու պասքէթպոլի խումբերը: 1934-ի վարչականները եղած են Ստեփան Ամիրայեան, Գրիգոր Չազրճեան, Գարեգին Շամլեան, Թորոս Խաչատուրեան, Փայլակ Շահրոզեան, Բաբգէն Քէհեայեան, Սարգիս Միսայէլեան, Վարդան Գազանճեան եւ Ա.Պերպէրեան:

([41].ա.հտր. էջ 281)

1936-ին, «Արարատ» Ակումբը հաստատուած է Գահիրէի կեդրոնական թաղաշրջանի թիւ 77, Իպրահիմ փաշա փողոց հասցէին (նախկին Նուպար փաշա, ներկայիս՝ Էլ Կումհուրէյա) որուն բացումը տեղի ունեցած է 31 Մայիս 1936-ին:

Նոր վայրին մէջ, 1936 Նոյեմբերին ընտրուած վարչութեան անդամակցած են Ստեփան Ամիրայեան, Թորոս Խաչատուրեան, Վարդան Գազանճեան, Վահրամ Սիւտճեան, Պարոյր Մասիկեան, Նուպար Աբրահամեան եւ Զարեհ Մատղաշեան:

(Բ.ա.տարի, 1937, թիւ 17)

Ակումբին մարզական շարժումը ղեկավարած է Ստեփան Խանճեան, որուն նախաձեռնութեամբ կազմուած է պասքէթպոլի իգական անդրանիկ խումբը:

«Արարատ»ի մարզական գործունէութեան մաս կազմած են պասքէթպոլի, վոլիպոլի, փինկփոնկի եւ թէնիսի իգական եւ արական կրտսեր եւ երէց խումբեր:

Կիրարկուած են Աթլէթիզմի բոլոր մարզաձեւերը, համահայկական, տեղական եւ միջազգային մրցանիշերու ձեռքբերումներով, որոնք նուաճուած են մարզիչներ Գրիգոր Նիզիպլեանի եւ Կարօ Սումճեանի տքնաջան աշխատանքով:

Նոյն տարիներուն, յառաջացած է «Գրական-Գեղարուեստական» Յանձնախումբը, որուն կազմակերպութեամբ տեղի ունեցած են գեղարուեստական երեկոյթներ եւ թատերական ներկայացումներ:

(Բ.1937, թիւ 42)

Յիշարժան է, թե «Արարատ»ի վարչութեան կազմակերպութեամբ կայացած են եգիպտահայ Ախոյենական Աթլէթիք մրցումներու շարքին չորսը, 3-րդը՝ 1944-ին, 8-րդը՝ 1954-ին, 12-րդը՝ 1958-ին եւ 14-րդը՝ 1961-ին:

Այսպէս, 20 եւ 21 Մայիս 1944-ին, «Արարատ»ի վարչութիւնը կազմակերպած է եգիպտահայ Աթլէթիք 3-րդ խաղերը եւ Յոբելենական մարզահանդէտով Գահիրէի Նասիոնալի դաշտին վրայ տօնած՝ իր հիմնադրութեան 30-ամեակը, մասնակցութեամբ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մարզական ակումբներու 500 մարզիկներուն:

Գահիրէի մէջ, 18 եւ 19 Մայիս 1946-ին, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Եգիպտոսի Շրջանային Վարչութեան, տեղի ունեցած է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան տեղական Վարչութեան եւ Արարատ Մարզական Ակումբի միացման հանդիսաւոր տօնակատարութիւնը, մասնակցութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Եգիպտոսի Շրջանի, Գահիրէի «Արարատ», «Հելիոպոլիս» եւ «Աղեքսանդրիոյ» (Իպրահիմիէ), «Տորք» (Սիտի Պիշր) մասնաճիւղերուն եւ «Հ.Մ.Ը.Մ.ի Միսիթարեան Վարժարանի Սկաուտներուն: Կիրակի, 19 Մայիս 1946-ին, Նասիոնալի դաշտին վրայ տեղի ունեցած են Հ.Մ.Ը.Մ.ի միջմասնաճիւղային Աթլէթիք մրցումները, մասնակցութեամբ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ երկսեռ մարզիկներուն:

(«Յարգանքի Յիշատակարան» - Յայտագիր - Գահիրէ, 16 էջ, Տպ. Նուպար)

Հ.Մ.Ը.Մ.ի Եգիպտոսի Շրջանային վարչութեան անդամներ Հայկ Ճիգմէճեանի եւ Ասատուր Պօղիկեանի ջանքերով իրականացած յիշեալ պաշտօնական միացումէն կարճ ժամանակ ետք, տիրող անհանդուրժող տրամադրութիւններու պատճառով, երկբեղկում յառաջացած է եւ «Արարատ»ի վարիչները միացումի սկզբունքին ընդառաջ, մարզական միաւորը անուանած են «Հ.Մ.Ը.Մ. Արարատ Մարզական Ակումբ» անունով, վարչական ղեկավարութեամբ՝ Ստեփան Ամիրայեանի, Վարդան Գազանճեանի, Թորոս Խաչատուրեանի, Գարեգին Շամլեանի, Զարեհ Սագայեանի, Բիւզանդ Մինասեանի, Սարգիս Մեսրոպեանի եւ Յակոբ Պալըզճեանի:

«Հ.Մ.Ը.Մ. Արարատ» 1949-ին միացած է «Հ.Մ.Ը.Մ.»ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային վարչութեան: (Դ. գ. տարի, էջ 500)

Ապրիլ 1954-ին, Հ.Մ.Ը.Մ. Արարատ կազմակերպած է եգիպտահայ Աթլէթիք 8-րդ մրցումները, նուիրուած՝ իր հիմնադրութեան 40-ամեակին, իսկ Ապրիլ 1958-ին, Եգիպտահայ 12-րդը Աթլէթիկ խաղերը, նուիրուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 40-ամեակին, մասնակցութեամբ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ հայկական ակումբներուն:

9 Յունուար 1961-ին, «Հ.Մ.Ը.Մ. Արարատ»ի եւ «Հայ Արիներու Ընկերակցութեան» վարչական ներկայացուցիչներու որոշումով՝ զոյգ կառոյցներու միացումը յայտարարուած է կազմելով «Հ.Մ.Ը.Մ. Արարատ եւ Հայ Արիներու Ընկերակցութիւն»ը: Հ.Մ.Ը.Մ. Արարատի ներկայացուցիչները եղած են եղբ.ներ Կարպիս Ֆրունճեան, Վարուժան Գազանճեան, Երուանդ Թումայեանց եւ Գրիգոր Նիզիպլեան, իսկ Հայ Արիներու կողմէ՝ եղբ.ներ Անդրանիկ Արթինեան, Մարտիրոս Քէշիշեան եւ Սկրտիչ Թիթիւնճեան:

Հ.Մ.Ը.Մ. Արարատի Սկաուտական Խմբապետ-կազմի անդամներ եղած են Հայկ Պէլլերեան, Անդրանիկ Արթինեան, Մարտիրոս Քէշիշեան, Օննիկ Դաւիթեան, Յակոբ Սիմոնեան, Կարապետ Թումայեանց, Օննիկ Գույումճեան, Կարօ Նշանեան,

Վարուժան Սերոբեան, Կարպիս Գալեմճեան, Միհրան Քեսիկպաշեան, Ռուբեն Զաքարեան եւ ուրիշներ:

1963-ին, «Հ.Մ.Ը.Մ. Արարատ», իր քաղաքակեդրոն մարզադաշտէն փոխադրուած է Հելիոպոլիս, հաստատուելով թիւ 43, Պէյրութ Փողոց, «Յուսաբեր Մշակ. Ընկերակցութեան» մարզամշակութային համալիրին շրջապատի մէջ, ունենալով իր մարզադաշտը եւ «Ա.Մէօթէմէտեան» հաւաքավայր-ժողովասրահը:

Արտագաղթի եւ դեկավար տարրերու մեկնումով՝ սկաուտական շարժումը դադրել է ետք, վերակազմուած է 1984-ին, սկաուտ, գայիկ, արի-արենուշներու 80 հոգիոց կազմով, Սկաուտական Խորհուրդի անդամ ունենալով եղբ.ներ Կարապետ Թումայեանց, Ռոպեր Թապագեան, Յակոբ Ոսկերիչեան, Խէչօ Յակոբեան եւ Գուրգէն Բանեան, նաեւ քոյրեր Սօնիա Պայրամեան, Սօնիա Ոսկերիչեան, Սօնա Շիկեցեան-Սամիր եւ Սիլվա Գուրնույեան: Կազմակերպուած են բանակումներ, շրջապտոյտներ, դաստիարակչական սեմինարներ եւ միաւորէն անդամներ մասնակցած են Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպած սկաուտական բանակումներուն, Հայաստանի, Յունաստանի եւ Կիպրոսի մէջ:

1974 Դեկտեմբերին, «Հ.Մ.Ը.Մ. Արարատ» իր երկու պատգամաւոր ներկայացուցիչներով, յանձին՝ Թորոս Խաչատուրեանի եւ Տոքթ.Սուրէն Պայրամեանի, մասնակցած է Պէյրութի մէջ գումարուած «Հ.Մ.Ը.Մ.»ի համահայկական կառոյցի անդրանիկ հիմնադիր ժողովին:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան «Արժանեաց Շքանշան»ին արժանացած են «Արարատ»ի վաստակաւոր ատենապետներ Թորոս Խաչատուրեան(1977) եւ Վարուժան Վ.Գազանճեան(1993) , իսկ «Արտակարգ» եւ «Ծառայութեան» Շքանշանին արժանացած՝ ութ վարչական, սկաուտական կազմի եւ նուիրատու անդամներ:

«Հ.Մ.Ը.Մ. Արարատ»ի պասքէթպօլի տղոց խումբը իր մասնակցութիւնը բերած է եգիպտահայ միջակումբային տարեկան հերթական մրցաշարքերուն, պարբերական մասնակցութեամբ նաեւ պասքէթպօլի աղջիկներու խումբին, որոնք ապահոված են ախոյեանութեան բաժակներ:

Մարզական ակումբէն մարզիկներ անդամակցած են եգիպտահայ յաջորդական պատուիրակութիւններուն, մասնակցելով 1999-էն ի վեր հայրենիքի մէջ կազմակերպուող Համահայկական Խաղերուն:

«Ա.Մէօթէմէտեան» սրահը հիմնովին նորոգութեան ենթարկուած եւ վերաբացումը կատարուած է 18 Յունուար 1986-ին, իսկ 2013-2014 երկամեակին, կատարուած են բարեգարդումի աշխատանքները:

«Արարատ»ի վարչութիւնը իր յարկին տակ Հոկտ. 2003-ին ընդունած է Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան հերթական լիազումար նիստը:

Սկաուտական միաւորը, 2014-ին վերաշխուծացած է խմբապետ եղբ. Արա Քէօհնէլեանի եւ իր գործակից եղբայր-քոյրերու նախաձեռնութեամբ, եւ 60 հոգիոց կազմին երդման արարողութիւնը կատարուած է «Արարատ»ի հիմնադրութեան 100-ամեակի փառատօնին առիթով:

2014-ին, «Հ.Մ.Ը.Մ. Արարատ» մարզական փառատօնով եւ շքեղ պարահանդէսով ոգեկոչած է իր հիմնադրութեան 100-ամեակը, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Ներկայացուցչին՝ եւ մասնակցութեամբ՝ Լիբանանէն հրաւիրուած Հ.Մ.Ը.Մ. Պէյրութի մասնաճիւղին երկսեռ պասքէթպօլի խումբերուն:

7. Գահիրեի Հայ Հետազոտիչներու Ընկերակցութիւն - Գահիրէ , 1915

Գահիրեի մէջ, 1912-1913 թուականներուն, Յ.Զօպանեանի, Խ.Նաճառեանի, Թորոս Խաչատուրեանի և ուրիշներու առաջնորդութեամբ Պոյ-Սքաութներու քսան հոգիներէ բաղկացած պատանիներու կորիզը, «Պոյզ Պրիկէյթ» անուան տակ գործած է ***առանց կազմակերպութեան***, խորհրդատու ունենալով Լեւոն Քիրազեանը եւ հաւաքավայր ունենալով՝ Գալուստեան Վարժարանի բակը:

Շարժումին Վարիչ Մարմնին մաս կազմած են Ա.Օգոստինոսեան, Արթին Սիմոնեան, փաստաբան Զօհրապ, Տոքթ.Տէմիրճեան, Յարութիւն Ամիրայեան եւ ուրիշներ: Այս Մարմնին միացած է Հապիպ Գառնուկ, որ Հայ Հետազոտիչներու Միութեան նուիրած է ֆանֆառի 26 գործիքներ, եւ առ այդ՝ կազմուած է նուագախումբը «Ֆանֆառ Գառնուկ» անունով: (ԻԶ. 1952, թիւ. 6, էջ 128)

Կատարուած դիմումին ընդառաջ, Աղեքսանդրիոյ «Կամք»ի հետազոտիչներէն Լ.Քիրազեանի ամիսներու անդուլ ջանքերով՝ ***1915-ի վերջերուն Գահիրեի մէջ կազմուած է «Գահիրեի Հայ Հետազոտիչներու Ընկերակցութիւն»***ը, որուն վարչական ժողովը կազմած են Տոքթ.Սերովբեան(ատենապետ), Փրոֆ.Գայաեան եւ Մերթ Զօհրապ (փոխ ատենապետներ), Գ.Միհանօֆ(գանձապահ), Լ.Քիրազեան (ատենադպիր), Մ.Ղազարոսեան(Առաջնորդարանի ներկայացուցիչ) և խորհրդականներ Տոքթ.Շամլեան և Տէմիրճեան, Մ.Բրուտեան, Ե.Օգոստինոսեան և Յ.Սիմոնեան: (ԺԲ.1916, էջ 184)

Գահիրեի Հայ Հետազոտիչներու Ընկերակցութիւնը, մինչեւ 1930-ականներու կէսերը, գործած է «Արարատ»ի վարչութեան կողքին եւ անոր մարզավայրէն ներս, որմէ ետք սկստուտական շարժումը դարձած է նոյն կառոյցին՝ Հայ Արիներու միութեան միաւորը:

1939-ին, Գահիրեի Հայ Արիներու վարչութեան անդամ եղած են. Ստեփան Ամիրայեան(պատուակալ խմբապետ), Տոքթ.Մակարոս Գազանճեան(խմբապետ), Ներսէս Խանճեան (քարտուղար), Սմբատ Իպիշեան, Անդրանիկ Քմբմեան, Արա Պօնճուքեան եւ Մարտիրոս Քէշիշեան(փոխ խմբապետներ), Բէզլար Նաւասարդեան (գայլիկներու խմբապետ): (ԻԲ. էջ 65)

8. «Կայծակ» Հայ Մարմնամարզական Միութիւն - Գահիրէ , 1923

Մարմնամարզական Միութիւնը հիմնուած է 1923-ին: (Ի.1929, թիւ 1)

Միութիւնը ունեցած է Ֆուրպուլի «Կայծակ» Ա. և Բ. առաջատար խումբերը, որոնք յաջողութիւններ արձանագրած են ժամանակի հայ եւ օտարազգի խումբերու միջեւ կազմակերպուած մրցումներուն: (Ի.1930, թիւ 5, էջ 76)

Թաղէոս Գալֆայեան եղած է ակումբին պասքէթպուլի ա.խումբին վարիչը, խումբին անդամներ ունենալով՝ Եզնիկ Տէմիրճեան, Յակոբ Պօղուրեան, Ոսկան Կրտոտեան, Եղիա Նահապետեան, Եփրեմ Թուշեան եւ Լեւոն Մարոնեան:

(Ի.1929, թիւ 3, էջ 39)

Թիւ 37, Պէյն Էլ Սուրէյն փողոցի հասցեով «Կայծակ» Միութեան սրահին մէջ, անդամներու եւ համակիրներու մասնակցութեամբ կազմակերպուած են մշակութային բնոյթի հաւաքոյթներ:

1929 Հոկտեմբերէն 1930 Փետրուար, Միութիւնը հրատարակած է «Կայծակ» անունով մարմնակրթական իր ամսաթերթը, խմբագրութեամբ Թաղէոս Գալֆայեանի եւ Լեւոն Ազիսչերեանի: ([14]. էջ 180)

9. «Նիբր Իսթ» Հայկական Ակումբ - Շուպրա , 1925

Հայկական Ակումբը հիմնուած է 1925-ին, եւ հաստատուած՝ իր ժամանակի Գահիրէի հայահոծ Շուպրա թաղաշրջանին մէջ:

Ակումբին «Նիբր Իսթ» անուանումը կատարուած է ի յարգանս հայ բազմահազար որբերու խնամատարութիւնը ստանձնած ամերիկեան «Near East Relief» ընկերակցութեան, որուն ներկայացուցիչը եւ եգիպտահայ որբերու պատասխանատուն եղած է Տէյվիտսըն անունով հայասէր պաշտօնատարը:

Գահիրէի մէջ, Մըսթըր Տէյվիտսըն, հայ պատանիներու եւ երիտասարդներու մարզասէր հակումները քաջալերելու համար, Շուպրայի Էլ Աթթար փողոցին վրայ վարձած է իբրեւ հաւաքատեղի եւ մարզավարժանքի վայր գործածելի հողատարծք մը: Հետագային, նոյն անձին միջամտութեամբ, Աֆլաթոն անունով կալուածատէրէն ձեռք բերուած է թիւ 40 Շուպրա փողոց, Հարէթ Աֆլաթոն թիւ 3 հասցէին գտնուող ակումբին վերջնական կայքը:

Ակումբին մաս կազմած են պասքէթպոլի դաշտը, մարզիկներու հանդերձարանը, յարակից պարտէզը իր բեմահարթակով, հանդիսասրահը եւ հանդիպակաց շէնքին առաջին յարկին վրայ վարձուած վարչական սենեակները:

Հիմնադիրները եղած են Ամերիկեան «Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց» Ընկերակցութեան խնամատարութեան արժանացած Յունաստանէն Գահիրէ բերուած եւ Եգիպտոս հաստատուած Մեծ Եղեռնի Ապրիլեան նախճիրէն փրկուած ծնողազուրկ որբ-որբուհիներու երեց երկսեռ երիտասարդներ:

Մարզամշակութային այս Ակումբին գործունէութեան նշանաբանը եղած է *«Համերաշխութիւն, Համագործակցութիւն, Միասնականութիւն»*:

Մարզակումբին վաստակաւոր ատենապետները եղած են Արշակ Միթիլեան, Յովհաննէս Զաֆիրեան, Արշակ Տէրվիշեան, Բիւզանդ Կոճամանեան, Յովակիմ Սիրքէճեան, Գառնիկ Յակոբեան եւ Լեւոն Տէր Յակոբեան:

Երկար տարիներով վարչութեան դիւանին մաս կազմած են Վարդան Տաքէսեան, Հայկազ Կարազեան, Ժիրայր Ճէպէլեան (ատենադպիր) եւ Գէորգ Մանուկեան (գանձապահ-հաշուապահ), իսկ վարչական եւ գործակից յանձնախումբերու մաս կազմած են Թադէոս Բանիկեան, Պետրոս Վանլեան, Հրաչ եւ Արտաշ Զարիկեան, Յակոբ Պօյաճեան, Յակոբ Պօղոսեան, Ճանիկ Գումաշեան եւ ուրիշներ: Տիկնանց Յանձնախումբի նուիրեալներէն եղած են Նաթալի Սրապեան եւ Մարի Գասպարեան: Ձեռնարկներու կազմակերպութեան իրենց անմիջական ներդրումը ունեցած են Գասպար Կրտոտեան, Մկրտիչ Քիւփէլեան, Յովհաննէս Տօնիկեան, Հայրենիք Փիլիպպոսեան եւ Սահակ Նահապետեան:

Մարզական գետնի վրայ, ակումբը ունեցած է պասքէթպոլի եւ փինկփոնկի խումբեր, աթլէթիզմի բոլոր ճիւղերու առաջատար եւ ախոյեան երկսեռ մարզիկներ, որոնք յաջող արդիւնքներով իրենց մասնակցութիւնը բերած են եգիպտահայ բոլոր ողիմպիական խաղերուն: Ակումբին պատասխանատու ներկայացուցիչներ, պասքէթպոլի եւ աթլէթիզմի մարզերու մէջ՝ անդամակցած են եգիպտական պատկան կառոյցներու ղեկավար վարչական կազմերուն, հանդիսանալով եգիպտական պասքէթպոլի ֆետերասիօնին հիմնադիրներէն: Պասքէթպոլի մէջ փայլուն մարզիկներ եղած են Պատրիկ եւ Շաւարշ Պէնլեան եղբայրներ, Գալուստ Յովակիմեան, Սեպուհ Գրմաճեան եւ ուրիշներ:

Ակումբը կազմակերպած է եգիպտահայ միջակումբային պասքէթպոլի

մրցաշարքեր, նուիրում՝ իր հիմնադրութեան 40 և 50-ամեակներուն, 3-4 Յուլիս 1965-ին և 4-6 Յուլիս 1975-ին , նաեւ մասնակցած՝ եզիպտահայ ակումբներու մարզական եւ աթլէթիք մրցումներուն:

Մարզականին կողքին, ակումբը ունեցած է մշակութային գործունէութիւն դասախօսական եւ դաստիարակչական լսարանային հաւաքոյթներով եւ վիճաբանական երեկոյթներով: Ունեցած է համեստ գրադարան մը տեղական եւ սփիւռքէն ստացուած հրատարակութիւններու եւ պարբերականներու հաւաքածոյով: Ներկայացումներով հանդէս եկած է թատերասէրներու իր խումբը, գլխաւոր դերակատարութեամբ՝ Անահիտ Քիւփէլեանի, Կարպիս Նիկողոսեանի, Արթին Լեւոնեանի, Եզնիկ Տէմիրճեանի, Օննիկ Թամճեանի, Սարգիս Գոճապապեանի, Ռոստոմ Պաճաքեանի, դերուսոյց-բեմադրութեամբ Ժիրայր Ճէպէլեանի(Ժ.Լեւոնց):

«Նիւրր Իսթ Ռըլիֆ (N.E.R. Club) Ֆանֆառ» Նուագախումբը կազմուած է 1927-ին, անդամակցութեամբը անոր 30 սաներուն, եւ ունեցած մեծ յաջողութիւններով՝ գնահատանքին արժանացած է հայ թէ օտար շրջանակներուն: (ԺԹ.1927, թիւ 9-10)

Մշակութային ձեռնարկներու եւ ազգային տօնախմբութիւններու առիթներով՝ հանդէս եկած է նաեւ անդամներէն կազմուած երկսեռ երգչախումբը:

Վարչութիւնը, 1960-էն սկսեալ եւ յաջորդական տարիներուն, Հոկտեմբեր ամսուան ընթացքին կազմակերպած է տարեկան ուխտագնացութիւն մը Գիւտ Խաչի տօնին առթիւ, դէպի Զակազիկի Ս.Խաչ եկեղեցին, մասնակցութեամբ Գահիրէէն եւ Աղեքսանդրիայէն ուխտաւոր հաւատացեալ հասարակութեան: Այս առթիւ եւ յաւարտ Ս.Պատարագի տեղի ունեցած է Հոգեհանգստեան պաշտօն Նիւրր Իսթի հանգուցեալ հիմնադիրներուն եւ անդամ-անդամուհիներուն:

1970-ականներուն, վարչութեան ատենապետ Գառնիկ Յակոբեանի շրջանին, ակումբը վերին խնամատարութեան արժանացած է երեց սերունդի պատուական կարգ մը հայորդիներու, յանձին Նորայր Պէն Օհանեանի, Պետրոս Ոսկերիչեանի, Թադէոս Կիրակոսեանի եւ Յովակիմ Սիրքէճեանի, որոնց հովանաւորութեամբ նորոգութիւններու եւ բարեփոխումներու ենթարկուած է ակումբին մարզիկներու հանդերձարանը, մարզադաշտն ու հանդիսասրահը:

Սերնդափոխութեան եւ կեանքի պայմաններուն ընդառաջ, ինչպէս նաեւ արտագաղթի հոսքին պատճառով, տարիներու ընթացքին անշքացած է գաղութի տարեգրութեան մէջ իր կնիքը դրոշմած երբեմնի կենսութախ այս կազմակերպութիւնը եւ կազմալոյծ վիճակի ենթարկուած՝ 1990-ականներու վերջաւորութեան: Յիշարժան է, թէ «Նիւրր Իսթ»ի վարչական ներկայացուցիչը իր աջակցութիւնը բերած է հայրենիքի մէջ կայացած Համահայկական Ա. եւ Բ. Խաղերու եզիպտահայ պատուիրակութեան կազմակերպչական աշխատանքներուն (1999 , 2001) :

Վերջին հնգամեակին, նոր սերունդի հաւատաւոր եւ երախտագէտ անդամներու խումբ մը, Գահիրէի Ազգային Առաջնորդարանի աջակցութեամբ՝ պետական պատկան մարմիններու մօտ հետեւողական եւ մեծապէս գնահատելի աշխատանք տանելով, ակումբին օրինական սեփականութիւնը հաստատած են, տարածքը ապօրէն ոտնձգութիւններէ եւ կորուստի վտանքէն ազատելով:

10. Հայ Երիտասարդաց Քրիստոնէական Ընկերութեան (Հ.Ե.Ք.Ը.)

Մարմնակրթական Շարժում - Գահիրէ , 1925 - 1928 , 1934 – 1940

Քրիստոնէայ Ընկերութիւնը հիմնուած է 1912-ին, նախաձեռնութեամբ Պատ.

Հայկազուն Խանդամուրեանի:

Երիտասարդացի ընկերային գործունեություն տեսած է մինչև 1922 եւ երեք տարի կազմալոյծ մնալէ ետք, վերակազմուած է 1925-ին, Անգլիական Միսիօնարական Գօլէճին շէնքին մէջ, Սէյֆ-Էլ-Տին Մեհրանի Փողոց, Պուսթան Էլ Քաֆուրի – Ֆակկալայի հասցէին:

Քրիստոնէական Ընկերութեան մարմնակրթական շարժումը ծաւալած է 1925-էն սկսեալ, Ֆուրպուլի, պասքէթպուլի եւ ուրիշ խաղերու խումբերուն կազմութեամբ, շաբաթական փոքրերով եւ մրցումներով, անոնց կողքին ունենալով սկաուտական միաւորի խմբակը: (ԼԴ.1927, թիւ 1)

Ընկերությունը ունեցած է ընկերամշակութային եւ բարեսիրական գործունեություն եւ կազմալուծուած գործօն տարրերու պակասին պատճառով:

11. «Վահագն» Մարզական Միություն - Գահիրէ , 1925

Մարզական Միությունը կազմուած է 1925-ին, Պերպերեան Վարժարանէն ներս աթլէթիք խաղեր մշակելու ծրագրով:

Յիշարժան են 1931-ին վարժարանին դաշտին վրայ կազմակերպուած մարզական աթլէթիք խաղերու մրցումները, «Վահագն»ի եւ Հելիոպոլսոյ «Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկներուն մասնակցութեամբ:

Միութեան վարչութեան դիւանը կազմած են Գուրգէն Եալընըզեան (ատենապետ) եւ Լուրվիկ Թերզեան (ատենադպիր): ([24].գ.հտր. էջ 520,526)

12. «Զանք» Մարմնամարզական Միություն - Հելիոպոլիս , 1925

Եգիպտահայ մամուլին մէջ լոյս տեսած է «Կոչ Հայ Հասարակութեան» խորագրով հրաւեր-գրություն մը, կազմելու համար «Զանք» Մարմնամարզական Միությունը եւ նպատակ ունենալով՝ *«Հելիոպոլսոյ հայ երիտասարդութեան ֆիզիքական կազմը զօրացնել, բարոյական եւ մտաւոր նկարագիրը ազնուացնել ու բարձրացնել»:*

Սոյն կոչին «հիմնադիրներ» ստորագրած են Կոպէտ Արապեան, Զաւէն Արուշանեան, Ժիրայր Տէյիրմէնճեան, Վեհազուն Շաքարեան, Արամ Գալֆաեան, Լեւոն Ասատուրեան եւ Պարոյր Գուրեան: (Լ.1925, թիւ 1950)

Նախաձեռնութեան քայլերը զարգացած չըլլալով, կարճ ժամանակ ետք մարզական միաւորը կազմալուծուած է:

13. «Արածանի» Մարզական եւ Մշակութային Միություն - Գահիրէ , 1926-1935

Մարզա-մշակութային Միությունը հիմնուած է 1926-ին, որուն հիմնադիր անդամներէն եղած են Յակոբ Արամեան, Արշամ Տատրեան եւ Արտաշէս Գարտաշեան:

«Արածանի»ի հովանաւոր մարմնի անդամներ եղած են Տոքթ.Խաչիկ Պէյ Սողիկեան եւ Տոքթ.Ղազարոս Արթինեան, իսկ վաստակաւոր ատենապետը եղած է Յակոբ Արամեան:

Միութեան Գրադարանը կազմակերպած է Արտաշէս Գարտաշեան եւ անոր պատուակալ գրադարանապետությունը ստանձնած՝ 1934-1935 երկամեակին:

([24].բ.հտր. էջ 758)

Միությունը ունեցած է մարզական խումբեր, սկաուտական միաւոր եւ

մշակութային գործունեություն՝ անդամակցությամբ եւ մասնակցությամբ Գալուստեան Ազգային վարժարանի ուսանողութեան:

1929-ին «Արածանի»ի պասքէթպոլի խումբը եղած է իր ժամանակի եգիպտահայ “հօթաօդոյն” խումբը, որուն անդամներէն եղած են Արամ Արամեան, Վարդգէս Գարտաշեան, Սիմոն Գույումճեան, Հրանդ Տատրեան եւ Ներսէս Սվաճեան: (ԼԶ1.1956, թիւ 75-76, էջ 8 - Զ. 1931, Նոյ. 19)

«Արածանի» միութիւնը քաջալերած է Ազգային Վարժարանէ ներս մարզական միջ-դասարանային մրցումները եւ մետալներ տրամադրած յաղթական խումբերու անդամներուն: ([24].բ.հտր. էջ 566)

Կազմակերպուած է Միութեան երգչախումբը, ղեկավարութեամբ Տրդատ Հապէշեանի: ([8]. էջ 291)

«Արածանի» Մարզական Միութեան անդամական Ընդհ. Ժողովը, գումարուած՝ Հայ Գեղարուեստասիրաց Միութեան սրահին մէջ 27 Հոկտեմբեր 1935-ին, միաձայնութեամբ որոշած է լուծարել իր կառոյցը եւ միացած է Շուպրայի մէջ Հ.Բ.Ը.Միութեան հիմնադրած «Նուպար» մարզական ակումբին: (Զ.1935, Հոկտ.30)

14. Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն - Հելիոպոլիս , 1927-1948

Հ.Մ.Ը.Մ. Նուպար Մարզական Ակումբ - Հելիոպոլիս , 1948 ,1958-

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Հայկ Ճիգմէճեան 14 Ապրիլ 1927-ին, Գահիրէի Հելիոպոլիս արուարձանին մէջ հիմնած է Հելիոպոլսոյ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը, տեղւոյն Նուպարեան Ազգային Վարժարանի կից ընդարձակ հողամասին վրայ, հաւանութեամբ՝ Գահիրէի Ազգային Իշխանութեան եւ վարժարանի տնօրէնութեան:

Մարզական միաւորը հիմնուած է *«շրջանի հայ երիտասարդութեան զանազան մարզաձեւերու հետեւելու առիթ տալու»* նպատակով: ([19]. էջ 12)

Հելիոպոլսոյ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր Հայկ Ճիգմէճեանի գործակիցները եղած են Պարոյր Գուրեան , Վահէ Շահիրիման եւ Արշակ Արոյեան, որոնք Ֆրանսայի Կեդրոնական Վարչութեան վաւերացումը ունենալէ ետք, տեղական մամուլի միջոցով յայտարարած եւ իրենց նախաձեռնութեան զօրակցելու հրաւիրած են հայ երիտասարդութիւնը:

Նորակազմ մարզական միութեան առաջին վարչութիւնը ընտրուած է Մայիս 1927-ի աւարտին գումարուած անդրանիկ ընդհանուր ժողովին կողմէ:

1927 Մայիսին, Գահիրէի մէջ կայացած է եգիպտահայ մարզական Շրջանային առաջին ժողովը, մասնակցութեամբ Գահիրէի «Արարատ»ին, Հելիոպոլսոյ «Հ.Մ.Ը.Մ.»-ին եւ Աղեքսանդրիոյ «Կամք»ին: Ընտրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Եգիպտոսի անդրանիկ Շրջանային վարչութիւնը, մարզական եւ կազմակերպչական միացեալ աշխատանքը համադրելու եւ սփիւռքի զանազան շրջաններու կապը ամրապնդելու համար, որդեգրելով՝ Հ.Մ.Ը.Մ.ի Պոլսոյ կեդրոնի Ծրագիր-Կանոնագիրը:

Սոյն Շրջանային վարչութեան կազմակերպութեամբ, Սեպտեմբեր 1929-ին եւ 1930-ին Հելիոպոլսոյ Նուպարեան Ազգ.Վարժարանին մէջ կայացած են տարեկան բնոյթով երկու մարզահանդէսներ, նախագահութեամբ տնօրէն Գարեգին Տիրակերեանի: Երկրորդ միջոցառման դատական մարմնին անդամակցած են Տոքթ.Արոյեան, Հրաչեայ Գալֆայեան, Հայկ Ճիգմէճեան, Յարութիւն Մարգարեան, Տիգրան Մերճանեան, Արմենակ Շահինեան, Վահէ Շահիրի-

ման, Արարատ Քրիսեան և Սիմոն Մեմերճեան: ([42]. էջ 249-[41].ա.հար.էջ 275,283)

Հելիոպոլսոյ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները մասնակցած են Աղեքսանդրիոյ «Կամք»ին կազմակերպած եգիպտահայ Ախոյենական առաջին խաղերուն 17-18 Յունիս 1939-ին, Աղեքսանդրիա, ինչպէս նաեւ յառաջիկային կազմակերպուած գաղութահայ մարզական մրցումներուն: Այս շարքին, Նուպար Մարգարանը կազմակերպած է եգիպտահայ Ախոյենական Աթլէթիք 4-րդ (1944) մրցումները, իսկ Հ.Մ.Ը.Մ. Նուպար՝ 7-րդ (1953) մրցումները:

«Հելիոպոլսոյ Հ.Մ.Ը.Մ.» ակումբի եւ **Շուպրայի «Նուպար»** ակումբի պաքէթպոլի խումբերուն միացումը իրականացած է 1948-ին եւ ակումբը անուանուած է «Հ.Մ.Ը.Մ. Նուպար - Հելիոպոլիս» ակումբ:

Տարիներու ընթացքին, ակումբին մարզական շարժումին մաս կազմած են պասքէթպոլի, ֆութպոլի, թէնիսի, փինկփոնկի խումբերը, որոնց կողքին կիրարկուած են աթլէթիզմի զանազան մարզաձեւերը, եգիպտահայ մարզաշխարհին ախոյենական մրցանիշներ ապահովելով:

Հ.Մ.Ը.Մ. Նուպարի տղոց եւ աղջիկներու խումբերը մասնակցած են վերջին քառասնամեակին կայացած ամառնային եղանակի եգիպտահայ ակումբներու պասքէթպոլի մրցաշարքերուն, ախոյենութեան բաժակներ ապահովելով: Այս շարքին, ակումբին կազմակերպած հերթական ձեռնարկը նուիրուած է եգիպտական բանակի 6 Հոկտեմբեր 1973-ի յաղթանակի տարեդարձի ոգեկոչումին:

Հ.Մ.Ը.Մ. Նուպարի Հելիոպոլսոյ Ակումբէն մարզիկներ մաս կազմելով եգիպտահայ մարզական պատուիրակութեան, մասնակցած են 1999-էն ի վեր Հայաստանի մէջ կայացող Համահայկական Խաղերուն:

1950-ական թուականներուն, ակումբին վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցած են մարզական եղանակի բացման հանդիսութիւններ, թէնիսի, ֆութպոլի եւ պասքէթպոլի մրցումներով: Եգիպտահայ թէնիսի ախոյեան հանդիսացած է Սիմոն Արթինեան, որուն կողքին փայլուն մարզիկներ եղած են Տէրվիշեան, Կիւմիւշեան եւ Ճ.Իշխանեան: Ժամանակի ֆութպոլի խումբը եղած է Գահիրէի հայ ակումբներուն միակ ֆութպոլի խումբը, մարզիչ ունենալով՝ Յակոբ Կիւլպէնկեան, վարիչ՝ Վարդան Առաքելեան եւ խմբապետ՝ Պերճ Գոլոյեան: Փինկփոնկի մարզին մէջ, Եգիպտոսի լաւագոյն հնգեակին մէջ դասուած են Պերճ Զիլեան եւ Երուանդ Տէմիրճեան: (ԻԶ.1952, թիւ 2, էջ 32-33 – թիւ 4, էջ 80)

1956-ին, Հ. Բ. Ը. Միութիւնը Պօղոս Նուպար Փաշայի ժառանգորդներէն գնած է անոր ապարանքին կից գտնուող հողամասը (մօտ 6030 քառ.մեդր) եւ զայն յատկացուցած է «Հ.Մ.Ը.Մ. Նուպար» Հելիոպոլսոյ ակումբին:

«Հ.Մ.Ը.Մ. Նուպար» ակումբը իր նորահաստատ կեդրոնը Պարոն Ամբէն փողոց (Առաքել փաշայի ապարանքին կից) տեղափոխուելէ ետք, 18 Հոկտեմբերէն 2 Նոյեմբեր 1958 կազմակերպած է իր նոր կայքին բացման պաշտօնական հանդիսութիւնը եգիպտահայ ակումբներու պասքէթպոլի մրցաշարքով: ([19]. էջ 14)

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 50-ամեակի (1918-1968) յոբելենական ոգիկոչումը կատարուած է 12-էն 19 Ապրիլ 1968-ին Աղեքսանդրիոյ եւ Գահիրէի մէջ, տեղական Հ.Մ.Ը.Մ. Նուպար զոյգ ակումբներու կազմակերպութեամբ եւ մասնակցութեամբ Լիբանանէն հրաւիրուած Հ.Ե.Ը. Անդրանիկի երկսեռ պասքէթպոլի խումբերուն: Նոյն առթիւ, 27 եւ 28 Յուլիս 1968-ին, Աղեքսանդրիոյ

մէջ, Հ.Մ.Ը.Մ. Նուպար քոյր ակումբներու երկսեռ մարզիկներուն մասնակցութեամբ կազմակերպուած են 10 մարզախաղերու մրցանքները:

«Հելիոպոլսոյ Հ.Մ.Ը.Մ.»ի Սկաուտական Շարժումը կազմուած է 1946-ին: Գահիրէի «Հ.Մ.Ը.Մ.-Նուպար»ը 1954-ին ունեցած է Շուպրայի եւ Հելիոպոլսոյ երկու մասնաճիւղերը խմբապետ-սկաուտապետութեամբ Յովհաննէս Տրնկճեանի եւ Պետրոս Պալեանի: Շրջան մը, կազմուած է նաեւ Գուպպէի մասնաճիւղը, պետ ունենալով՝ Յարութիւն Սէրգէնեանը:

Հ.Մ.Ը.Մ. եւ Նուպար Ակումբներուն Սկաուտական Շարժումներուն Շուպրայի եւ Հելիոպոլսոյ մասնաճիւղերուն վերջնական միաձուլումը տեղի ունեցած է Սեպտեմբեր 1961-ին, որուն ղեկավարութեան կոչուած են Հայկ Թելլալեան, Մարիցա Գասպարեան եւ Նուպար Աբագեան, հետագային իրենց կողքին ունենալով Արամ Մովսէսեանը: Շարժումը դադրած է 1970-ական թուականներուն:

«Հ.Մ.Ը.Մ. Նուպար»ի սկաուտական շարժումը վերակազմակերպուած է 1984-ին եւ տեւած՝ մինչեւ 1992: ([19]. էջ 13-14)

Վերջին տասնամեակներուն, Մարգարանէն ներս հերթական կերպով կազմակերպուած են պիլիարտի, ճատրակի եւ փինկփոնկի մրցաշարքեր:

ԴՂ.1-էն ԲՂ. 6 Հոկտեմբեր 2008-ին, «Հ.Մ.Ը.Մ. Նուպար – Հելիոպոլիս» մեծ շուքով եւ յոբելենական տօնակատարութիւնով հանդիսադրած է մարգարանին Հելիոպոլսոյ Կեդրոն փոխադրութեան յիսնամեակը (1958-2008):

2005-ին եւ 2015-2016-ին, ակումբին վարչութեան նախաձեռնութեամբ, Հ.Բ.Ը.Մ.ի տեղական մասնաճիւղին բարոյանիթական գործակցութեամբ՝ նորոգութեան եւ բարեգարդումի ենթարկուած են մարգարանին ընտանեկան հաւաքավայրը, հանդերձարանն ու յարակից՝ պասքէթպոլի եւ ֆութպոլի դաշտերը: Հաստատուած է նաեւ մանուկներու կանաչապատ խաղավայրը:

15. Հայ Կրթասիրաց Միութեան Մարզական Խումբեր - Կիզէ , Գահիրէ , 1933

Կիզէի Հայ Կրթասիրաց Միութեան «Մաթոսեան» սրահին անդամներուն նախաձեռնութեամբ եւ մասնակցութեամբ, 1933-ին կազմուած են պասքէթպոլի «Մաթոսեան» եւ ֆութպոլի «Արծիւ» մարզական խումբերը: ([24].գ.հտր. էջ 567)

16. «Նուպար» Մարզական Միութիւն - Շուպրա , 1933 – 1948

Հ.Մ.Ը.Մ. Նուպար Մարզական Ակումբ - Գահիրէ , 1948

ապա Հելիոպոլիս 1958 -

Գահիրէի արուարձաններէն Շուպրայի մէջ, *հայ երիտասարդութեան ծառայելու* նպատակով, Հ.Բ.Ը.Միութիւնը 1933-ին հիմնած է «Նուպար» ակումբը:

Հիմնադիր վարչական անդամներ եղած են Ճանիկ Զազըր, Պետրոս Կիրակոսեան, Հրանդ Նասիպեան եւ Յարութիւն Ամիրայեան:

Մարզական եւ ընկերային ծրագիրներով հիմնուած ակումբին պաշտօնական եւ հանդիսաւոր բացումը տեղի ունեցած է 19 Յունուար 1936-ին, հովանաւորութեամբ Մամբրէ Արք.Միքունեանի եւ Գահիրէի կառավարիչ Մահմուտ Սըտքի Փաշայի: (Խ. 2008, թիւ 49 – [19]. էջ 13 - Զ.1936, Յունուար 20)

Հրատարակուած է «Կանոնագիր Նուպար Մարզական Միութեան» 16 էջերով կանոնագիրը (Տպ.Սահակ-Մեսրոպ, Գահիրէ, 1936) ([12]. թիւ 744)

26 Ապրիլ 1936-ին, «Նուպար» Մարմնակրթական Միութիւնը կազմած է նուագախումբ մը, ղեկավարութեամբ Սիմոն Սէտէֆճեանի: (ԻԲ. էջ 69)

Հետեւած է պասքէթպոլի, ֆութպոլի եւ թէնիսի խումբերուն կազմութիւնը վարիչ-ղեկավարութեամբ Սիմոն Գույումճեանի, Սարգիս Միսայէլեանի, Տիգրան Անդրանիկեանի, Արթո Գալփաքճեանի եւ ուրիշներու:

Աթլէթիզմի հետեւող մարզիկներու Յանձնախումբին պատասխանատուներէն եղած են Լուսէր Գիպուրեան, Արթո Պըլըքտանեան, Վաչէ Եկարեան, Հրայր Սարիկեան եւ Հրանդ Ատէրեան:

Ակումբին մէջ կազմուած է Սկաուտական խումբ մը Սարգիս Պիւլպիւլեանի գլխաւորութեամբ, գործակցութեամբ՝ Ժիրայր Պալապանեանի:

Հետագօտիչ-Սկաուտական Շարժումին ղեկավարներէն եղած են Թումիկ Սէտէֆճեան, Ժիրայր Միւճէսէմեան եւ Նուպար Տէր Միքայէլեան: (ԻԲ. էջ 68)

Նոյն մարզին մէջ վաստակաւորներ եղած են Լեւոն Գալըպճեան, Յովհաննէս Տընկճեան, Յովհաննէս Տէր Պետրոսեան, Արամ Մովսէսեան, Պետրոս Պալեան եւ Հայկ Թէլլալեան:

Շուպրայի «Նուպար» Ակումբը 1938-ին դիմում կատարած է գրանցուած է Գահիրէի Եգիպտական Սկաուտական Ազգային Կեդրոնին մօտ:

1940-ին, Նուպար Հայ Սկաուտները Նուպար Տէր Միքայէլեանի խմբագրութեամբ լոյս ընծայած են «Բարձրացիր-Բարձրացուր» պարբերականին երեք թիւերը: 1946-ին, հրատարակած են Թ.Սէտէֆճեանի «Գայլիկին Բարեկամը» գրքոյկը, իսկ հետագօտիչներու Ա.խումբը 1957-ին հրատարակած է «Սկաուտին Ձայնը» մեքենագիր-խմորատիպին հինգ համարները:

([12].թիւ 1088-[14].էջ 232, 295)

«Նուպար Մարզական Միութիւն»ը մասնակցած է Աղեքսանդրիոյ «Կամք» Մարզական Ակումբի կազմակերպած առաջին համագաղութային ողիմպիական խաղերուն 17-18 Յունիս 1939-ին, Աղեքսանդրիայ: Ան իր հերթին, 18-19 Հոկտեմբեր 1943-ին կազմակերպած է Եգիպտոսի հայկական ակումբներու համագաղութային մարզական երրորդ խաղերը:

«Նուպար» Մարզարանի ֆութպոլի խումբին անդամ եղած են Պերճ Գօլոյեան (բերդապահ), Եզնիկ Տէմիրճեան, Յովհաննէս Տօնիկեան, Վազգէն Եկարեան, Գէորգ Պալեան, Եղիա Նահապետեան, Վաչէ Եկարեան եւ Կարպիս Բակլայեան:

1947-ին, «Նուպար» Ակումբի հեծելանւորդ մարզիկներ Վարդան Մկրտիչեան եւ Ժորժ Յակոբեան մասնակցած են յաջող արդիւնքներով պարգեւատրուած են Եգիպտական Ֆէտէրասիոնի կազմակերպած ախոյենութեան մրցանքին:

Շուպրայի «Նուպար» եւ «Հ.Մ.Ը.Մ. Հելիոպոլիս» ակումբներու միացումը կատարուած է 1948-ին, «Հ.Մ.Ը.Մ. Նուպար - Հելիոպոլիս» անունով:

1958-ին, Միացեալ մարզարանը հաստատուած է Հ.Բ.Ը.Միութեան կողմէ 1956-ին գնուած եւ Հ.Մ.Ը.Մ.-Նուպար ակումբին յատկացուած հողատարածքին վրայ Պարոն Ամբէն փողոց, Հելիոպոլիս:

Իր նոր նստավայրին մէջ, 18 Հոկտեմբերէն 2 Նոյեմբեր 1958, Հ.Մ.Ը.Մ.-Նուպար - Հելիոպոլիս կազմակերպած է բացման հանդիսութիւնը: ([19]. էջ 14)

(«Հ.Մ.Ը.Մ. Նուպար – Հելիոպոլիս» Ակումբի յաջորդական աւելի քան յիսնամեայ տարիներու գործունէութեան յաւելեալ տուեալներուն տեղեկանալ՝ նախորդ էջերով տրուած «Հ.Մ.Ը.Մ. Հելիոպոլիս» Մարզական ակումբի բաժնին մէջ)

17. ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ (ՄԻՈՒԹԻՒՆ) ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ -

Գահիրեի եւ Աղեքսանդրիա, 1934-1974

«Հայ Արիներու Միութիւն» անունով Հայ Սկստուական Ընկերակցութիւնը հիմնուած է 1928-ին, Փարիզի մէջ:

1934-ին, Եգիպտահայ մամուլի էջերուն մէջ «Յայտարարութիւն» մը լուրը ծանուցած է Գահիրեի եւ Աղեքսանդրիոյ հայ սկստուական կազմակերպութիւններու միջեւ կայացած համաձայնութեան, ստեղծումը յայտնելով Եգիպտոսի Շրջանակին «ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ»ին, կեդրոն ունենալով՝ Փարիզը: Յայտարարութիւնը աւելցուցած է, թէ «ըստ միջազգային օրէնքի, ան իրաւասու մարմին ըլլալով՝ վաւերացուած ու լիազօրուած է Սկստուական Միջազգային Կոմիտէի Լոնտոնի Գրասենեակէն»: Սոյն «Յայտարարութիւն»ը ստորագրած են ի դիմաց Գահիրեի Հայ Արիներու Ընկերակցութեան Սկստուական Խորհուրդին՝ Ս.Գազանճեան(ատենապետ), Ա.Իպիշեան (գանձապետ) եւ Աղեքսանդրիոյ Հայ Հետազօտիչներու Ընկ. Խմբապետական Ժողովի՝ Ա.Թէլլալեան(ատենապետ) եւ Շ.Պ.Փափազեան(քարտուղար):

Հայ Արիներու նշանաբանը եղած է «ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏ», իր Պատուոյ երդումով խոստանալով՝ *“1. Հաւատարիմ ըլլալ Աստուծոյ, 2. Ծառայել Հայրենիքին, 3. Միշտ օգնել ուրիշին եւ հնազանդիլ սկստուական դաւանանքին”*:

Գահիրեի մէջ, Հայ Արիներու սկստուական շարժումը 1930-ականներու կէսէն իր Յանձնախումբով գործած է՝ «Արարատ» Մարգարանի վարչութեան կողքին, իբրեւ «Հայ Արի»ներու սկստուական միաւոր եւ գործունէութիւնը ծաւալած՝ անոր մարգարանէն ներս, փոստարկղ ունենալով՝ թիւ 211:

«Հայ Արի»ներու Գահիրեի կազմակերպութեան հիմնադիր պատասխանատուներէն եղած են Տոքթ. Մակարոս Գազանճեան, Ներսէս Խանճեան, Վահէ Տէօքմէճեան եւ Տրդատ Զօհրապեան:

1939-ին, Գահիրեի Հայ Արիներու վարչութեան անդամ եղած են. Ստեփան Ամիրայեան(պատուակալպետ), Տոքթ.Մակարոս Գազանճեան(խմբապետ), Ներսէս Խանճեան (քարտուղար), Մմբատ Իպիշեան, Անդրանիկ Քմբեան, Արա Պօնճուքեան եւ Մարտիրոս Քէշիշեան(փոխ խմբապետներ), Բեզլար Նաւասարդեան (գայլիկներու խմբապետ): (ԻԲ. էջ 65)

1936-ին եւ 1946-ին, Հայ Արիներու Միութեան Ընդհանուր Պետ Տոքթ.Գուրգէն Մեծատուրեան Եգիպտոս գալով, Գահիրեի եւ Աղեքսանդրիա այցելած է եւ արժանացած՝ Հայ Արիներու տեղական մասնաճիւղերու պատշաճ ընդունելութիւններուն: Ան, Գահիրեի Հայ Արիներու Ընկերակցութեան խմբապետ Հայկ Պէլլէրեանի եւ Եգիպտոսի Սկստուական Ազգային Ընկերակցութեան ղեկավարութեան հետ հանդիպում-խօսակցութիւններ ունեցած է, այցելելով նաեւ «Յուսաբեր»ի եւ «Արեւ»ի խմբագրատուները:

Հայ Արիներու սկստուական շարժումը ունեցած է իր մասնաճիւղերը Գահիրեի մարզական եւ կրթական կառոյցներէն ներս, իր երկսեռ երիտասարդութիւնով:

Մաթարիայի արուարձանին մէջ, Հայ Արիներու նորակազմ խումբին վարձուած դաշտին վրայ, թիւ 91, Սէլիմ Էլ Աուալ փողոց, երդման արարողութիւնը կատարուած է Կիր. 26 Մայիս 1946-ին, իսկ խումբին հերթական հաւաքները տեղի ունեցած են թիւ 3, Նասրայ փողոցի առանձնատան մէջ: Նոյն շրջանին,

Մխիթարեան Վարժարանի սաներուն նախաձեռնութեամբ, յառաջացած է Հայ Արիներու մասնաճիւղը:

Դեկտեմբեր 1946-ին, խմբապետուհի Անժել Բիրանեանի նախաձեռնութեամբ հիմը դրուած է Հայ Արիներու Միութեան Գահիրէի Արենուշներու Ա. խումբին, որուն երդման արարողութիւն-խարոյկահանդէսը տեղի ունեցած է Կիրակի, 7 Դեկտեմբեր 1947-ին Արարատ Մարգարանին մէջ: Արենուշներու խումբը լոյս ընծայած է թերթիկի մը միակ համարը 1948-ին: [14]. էջ 256)

Արենուշներու խումբը կազմած է նաեւ պասքէթպոլի իր խումբը եւ բարեկամական մրցումներ ունեցած՝ հայկական ակումբներու խումբերուն հետ: (“Նոր Արուեստ Մշակոյթ”, 1947, թիւ 1, էջ 11)

Կիր. 16 Նոյեմբեր 1952-ին, «Յուսաբեր»ի Տան հանդիսասարահին մէջ, հովանաւորութեամբ Վարչապետ Զօր. Մոհամէտ Նէկիպի՝ «Յուսաբեր» Մշակութային Ընկերակցութիւնը կազմակերպած է համերգ մը *ի նպաստ եգիպտական բանակի հաշմանդամներուն*, մասնակցութեամբ Համազգայինի Աղեքսանդրիոյ Երգչախումբին՝ որուն ընթացքին Հայ Արիներու ներկայացուցիչներ Հայկ Պէլլերեան եւ Տրդատ Զօհրապեան Վարչապետին յանձնած են ձեռնարկին եկամուտ գումարը:

Կազմուած է Հայ Արիներու Հելիոպոլսոյ խումբը, որուն բացման խարոյկահանդէսը տեղի ունեցած է Կիր. 29 Ապրիլ 1956-ին, Մխիթարեան Վարժարանին մէջ: Կազմուած է նաեւ, Կիզի Հայկազեան Կրթարանի Հայ Արիներու խումբը, մանկապարտէզի թիւ 4, Ահմէտ Քամէլ փողոցի հասցէի իր հաւաքատեղիով:

1961-ին, «Հ.Մ.Ը.Մ. Արարատ»ի եւ «Հայ Արիներու» Ընկերակցութեան վարչութիւններուն որոշումով՝ զոյգ կառոյցներու միացումը կատարուած է կազմելով «Հ.Մ.Ը.Մ. Արարատ եւ Հայ Արիներու Ընկերակցութիւն»ը:

Հ.Մ.Ը.Մ. Արարատի «Հայ Արի»ներու սկաուտական կազմին պատասխանատուներէն եղած են Հայկ Պէլլերեան, Անդրանիկ Արթինեան, Մարտիրոս Քէշիշեան, Յակոբ Սիմոնեան, Վարուժան Սերոբեանց, Օննիկ Դաւիթեան եւ ուրիշներ:

Աղեքսանդրիոյ մէջ 1936-ին, «Կամք»ի հետազօտիչ-սկաուտները «Հայ Արի» անունը կրելով՝ մարգարանը «Կամք» Մարզական Ակումբ եւ Հայ Արիներու Ընկերակցութիւն» կոչուած է: Նոյն տարին, «Կամք»ի Հայ Արիները մասնակցած են Վենետիկի մէջ կայացած սկաուտական Ճամբարին, առաջնորդութեամբ Գնդապետ Արմենակ Թելլալեանի:

Հայ Արիներու Ընկերակցութեան Աղեքսանդրիոյ Մասնաճիւղին Պատուակալ Նախագահը եղած է Յովսէփ Եուսուֆեան, որուն հովանաւորութեամբ եւ Մելքի Գըլըճեանի նախագահութեամբ՝ Կիր. 9 Օգոստոս 1939-ին «Կամք»ի Ապուտարտարի մարզադաշտին վրայ կազմակերպուած է Տարեկան Մարզահանդէսը, յայտագրին մաս ունենալով՝ նորընծայ Գայիկներու, Արիներու եւ Երէց Արիներու երդման արարողութիւնը: (հրաւիրատոմս)

Հետագային, մարգարանին կեդրոնին սկաուտներու բաժնին սրահը անոր նուիրատուին անունով կոչուած է «Արիներու Մելքի Գըլըճեան Սրահ», իսկ 1947-ին, բացումը կատարուած է տեղւոյն «Հայ Արիներու Գրադարան»ին:

Աղեքսանդրիոյ մէջ, կազմուած են Ռամէլի, Ապու Տարտարի եւ Շուլցի շրջաններու մասնաճիւղերը:

«Կամք»ի արենոյշներու միաւորը կազմուած է 1949-ին, առաջնորդութեամբ Արաքսի Լեւոնեանի, աջակիցներ ունենալով՝ Նինա Գըլըճեան, Անահիտ Տօլապճեան(Յոխիկեան) եւ Ժանէթ Փափազեան: ([32].էջ 156)

Հայ Արիներու Միութեան Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մասնաճիւղերը հանդէս եկած են հերթական խարոյկահանդէսներով, մշակութային, թատերական, երիտասարդական ձեռնարկներով, գեղարուեստական երեկոյթներով եւ հրատարակած՝ իրենց տարեկան պատի եւ գրպանի օրացոյցները:

Կրօնական-ազգային տօնական առիթներով՝ եկեղեցական արարողութիւններու եւ ոգեկոչումներու աւարտին, Գահիրէի «Արարատ»ի եւ Աղեքսանդրիոյ «Կամք»ի Հայ Արիները իրենց նուագախումբերուն առաջնորդութեամբ տողանցքներ կատարած են, խանդավառ եւ հպարտառիթ պահեր ընծայելով համայնքին հաւատացեալ զաւակներուն:

Արտագաղթի պատճառով, գաղութահայ կառոյցներու վարչական եւ գործիչ երիտասարդ տարրերու կազմութեան վիճակուած դժուարին պայմաններուն՝ անմասն չմնացին մարզական եւ սկաւտական եգիպտահայ միաւորները, իրենց անդամներուն եւ գործունէութեան նուագումով:

1980-ական թուականներու սկիզբէն վերակազմուած սկաւտական միաւորները Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մարզական ակումբներու մէջ պարբերական աշխուժացումով կը գործեն Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութեան Կանոնագրին տրամադրութիւններով:

18. «Նաւասարդ» Մարզարան - Գահիրէ , 1943-1947

Մարզարանը հաստատուած է 1943-ին, Հ.Յ.Դ. Երիտասարդաց Միութեան նախաձեռնութեամբ, նպատակ ունենալով *«հոգեմտաւոր առողջ դաստիարակութեամբ օժտել նոր սերունդի երիտասարդ եւ պատանի տարրերը մասնագէտ պատասխանատու ուժերու հսկողութեամբ»:* (Լ. 28 Հոկտ.1943)

Ակումբին բացման ձեռնարկը կատարուած է Կիրակի, 24 Հոկտեմբեր 1943-ին, հովանաւորութեամբ Առաջնորդ Մամբրէ Եպս. Սիրունեանի, ներկայութեամբ՝ հիմնադիր մարմնի անդամներուն, մարզասէր հասարակութեան եւ հարիւրեակ մը երկսեռ մարզիկներու: Վարչական պատասխանատու Գրիգոր Նիզիպլեանի ողջոյնի եւ բարի գալուստի խօսքին յաջորդած է մարզիկներու եւ արիւարենուշներու տողանցքը, նուագախումբի առաջնորդութեամբ եւ մարզադաշտի կայմին վրայ բարձրացած են որդեգրուած սպիտակ դրօշը Նաւասարդ վերտառութեամբ՝ իր կողքի եռագոյն դրօշով:

Յաջորդաբար կազմուած են պասքէթպոլի, փինկփոնկի եւ աթլէթիք խաղերու յանձնախումբերը վարչական անդամներու ղեկավարութեամբ: Յառաջացած է նաեւ ընկերային-գեղարուեստի ձեռնարկներու մարմինը:

Կարեւորութեամբ, ուշադրութեան արժանացած է աթլէթիզմի մարզը, որուն փորձերուն հսկած են Ժամանակի խիոյեան մրցանիշակիր մարզիկներ:

Մարզարանը իր մասնակցութիւնը բերած է «Կամք», «Արարատ» եւ «Նուպար» մարզարաններուն կազմակերպած Եգիպտահայ Ախոյենական Աթլէթիք 2-րդ (1943), 3-րդ (1944), եւ 4-րդ (1944) մրցումներուն:

Մարզարանին վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած են պասքէթպոլի եւ փինկփոնկի մրցաշարքեր եւ հերթական ընկերական հաւաքներ:

1947-ի երկրորդ կեսին սկսեալ, դէպի հայրենիք ներգաղթի պայմաններուն բերումով՝ նուազած են անդամական եւ մարզական շարքերու հետեւողական մասնակցութիւնը մարզարանին գործունէութեան եւ մնացեալները առաջնորդուած են գործող այլ ակումբներու անդամակցութեան:

19. Եգիպտահայ Մարզական Ընկերակցութիւն - Գահիրէ , 1948 - 1949

1948-ի կեսերուն, Գահիրէի մարզական ակումբներու միջեւ գործակցութիւնը իրականացած է Ընկերակցութեան մը կազմութեամբ, որուն անդամակցած են Հելիոպոլսոյ Հ.Մ.Ը.Մ., «Նուպար», «Արարատ» եւ Գալուստեան Շրջանաւարտից Միութիւնը:

Կազմուած է պասքէթպոլի տղոց Ա.դասակարգի խումբը իր մասնակցութիւնը բերելով եւ դիրքեր գրաւելով եգիպտական ակումբներու մրցաշարքին:

20. Գալուստեան Ազգային Վարժարանի Հետազօտիչներ - Գահիրէ , 1957-1965

1954-ին, Գահիրէի արուարձաններէն Մաթարիայի բնակիչներէն Յակոբ Յակոբեանի տան պարտեզին մէջ, Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. Նուպարի 3-րդ խումբին Գուպալէի մասնաճիւղին անդամներուն նախաձեռնութեամբ՝ գործած է հետազօտիչներու խումբ մը, Արամ Մովսէսեանի, Յովհաննէս Կուտսուզեանի, Պերճ Թերզեանի, Սիմոն Սիմոնեանի, Յակոբ Սիմոնեանի եւ Վարդան Մանիկեանի մասնակցութեամբ:

Քանի մը ամիս ետք, խումբը իր գործունէութիւնը շարունակած է Գահիրէի Տարպ-էլ-Պարապրա թաղին Ֆրանչիսքէներու Կեդրոնին հաւաքավայրին մէջ:

1957-ին, դիմում կատարուած է Գալուստեան Վարժարանի հոգաբարձութեան, վարժարանին բակին մէջ հետազօտչական շարժումը շարունակելու արտօնութիւն ստանալու համար:

Վարժարանին բակին տրամադրելիութեան համամտութիւնը ստացուած է, պայման ունենալով՝ «Գալուստեան Ազգային Վարժարանի Հետազօտիչներ» անունով գործունէութեան շարունակումը: Փափաքին ընդառաջումով, Վերին Մարմին մը կազմուած է, անդամակցութեամբ Արամ Մովսէսեանի (ընդհանուր խմբապետ-սկաուտապետ), Վարդան Մանիկեանի (փոխ-խմբապետ) եւ Յովհաննէս Կուտսուզեանի, որոնց առաջնորդութեամբ՝ կազմը գործած է 1957-էն 1965 տարիներուն:

Միաւորը կազմակերպած է բանակում մը Աղեքսանդրիոյ Հ.Բ.Ը.Միութեան «Հէքիմեան» մարզադաշտին մէջ 1959-ին:

Հետազօտիչներու մարզական յանձնախումբին նախաձեռնութեամբ վոլիպոլի եւ փինկփոնկի խումբեր կազմուած եւ մրցումներ կազմակերպուած են գնահատելի յաջողութիւններ արձանագրելով: ([24].բ.հտր. էջ 576-577)

Գալուստեանի Հետազօտիչներու միաւորը կազմալուծուած է 1965-ին:

21. Ս.Թերեզա Հայ Կաթողիկէ Ակումբ – Հելիոպոլիս , 1965 -

Հելիոպոլսոյ Հայ Կաթողիկէ Ս.Թերեզա եկեղեցիին շրջապատի ընկերային-մշակութային գործունէութեան կողքին կազմուած են եւ կը գործեն սրահին անդամներէն կազմուած մարզական խումբերը իրենց պասքէթպոլի, ֆութպոլի եւ փինկփոնկի միաւորներով: Վարչական նուիրեալ անդամներու քաջալերութեամբ կազմուած են մարզական խումբերը որոնք կը կազմակերպեն եւ կը մասնակցին եգիպտահայ եւ համահայկական մրցաշարքերուն:

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

1. «Կամք» Մարմնամարզական Միություն - Աղեքսանդրիա, 1912 -

«Կամք» Մարմնամարզական Ակումբ

և Հայ Հետազոտիչներու Ընկերակցություն, 1917

«Հ.Մ.Ը.Մ. Կամք» Մարզական Ակումբ, Աղեքսանդրիա, 1974 -

«Կամք Մարմնամարզական Ակումբ»ը հիմնուած է 1 Օգոստոս 1912-ին, Աղեքսանդրիոյ Պօղոսեան Ազգային վարժարանին մէջ, քսանի չափ մարզասէր երիտասարդներու ներկայութեամբ գումարուած ժողովի ընթացքին:

Մարզական ակումբին կազմութիւնը իրականացած է առաջարկով եւ բարոյանիւթական նեցուկով գործարար Բարսէղ Օհանեանի, նախաձեռնող աջակցութեամբ՝ մարմնամարզի վկայեալ ուսուցիչ Ստեփան Խանճեանի, զօրակցութեամբ՝ մարմնակրթանքի համակիրներ Տոքթ. Ժամկոչեանի եւ Կարօ Աշըքեանի եւ հայ մարմնակրթութեան ռաւիլիրայ առաջնորդ Շաւարշ Քրիսեանի անվերապահ քաջալերանքով, օրհնութեամբն ու «ԿԱՄԲ» անուանումին առաջադրութեամբ, *«իբրեւ ներշնչումի աղբիւր եւ խորհրդանիշ գործող եւ գալիք սերունդներուն»:* (ԺԲ.1916, էջ 176 – ԻԶ.1952, թիւ 5 – [41].ա.հտր. էջ 28)

Մարզական Միութեան նպատակը եղած է *«Ա. սատարել նորահաս սերունդի բարոյական եւ իմացական զարգացման, Բ. իր անդամներուն տալ ֆիզիքական առողջ դաստիարակութիւն, Գ. անոնց սորվեցնել չարքաշ եւ ժուժկալ ըլլալ, կարգապահ եւ օրինապահ, արթուն, արագ եւ ճշտադատ, ձեռներէջ, կորովի եւ հայրենասէր. Դ. ցեղին մէջ զարգացնել պարտականութեան, պատասխանատուութեան եւ պատուի զգացումներ, համերաշխութեան եւ իրերօգնութեան ոգի»:*

([XIV] – [12]. թիւ 349)

Ակումբին կազմութեան վարչական մարմնին անդամակցած են Պերճ Օհանեան(ատենապետ), Վահագն Ազնաւուրեան (ատենադպիր), Միհրան Թելեան (գանձապետ) և Բարսէղ Օհանեան(ընդհանուր տնօրէն): (ԺԲ.1916, էջ 176)

«Կամք»ի ֆութպոլի առաջին խումբը կազմուած է 1912-ին:(Ի.1929, թիւ 4, էջ 47)

Մարզական ակումբին առաջին աթլէթիք մրցումները կազմակերպուած են 7 Սեպտեմբեր 1913-ին, դէկավարութեամբ վարչական քննիչ յանձնախումբի մը, անդամակցութեամբ՝ Հրանդ Նասիպեանի, Մ.Թելեանի եւ Մ.Ժամկոչեանի:

Մասնակից մարզիկները եղած են Լեւոն Աշըգեան, Սենեքերիմ Թերլէքճեան, Ս.Զիլինկիրեան, Հ.Մարալեան, Ա.Սաֆրաստեան, Ա.Թադէոսեան, Օ.Սապոնճեան, Յ.Նաճառեան, Կ.Մարտիրոսեան, Է.Գեորգեան եւ ուրիշներ:([32].էջ 152)

Ակումբին հաւաքավայրին բացումը կատարուած է Կիր. 17 Մայիս 1916-ին:

Ինքնահաստատումի այս շրջանի իրագործումներուն բարոյական եւ նիւթական օժանդակութիւն բերած է պատուակալ ատենապետ Մանուկ Մանուկեան:

1920-ականներու երկրորդ կիսուն, ֆութպոլի, պասքէթպոլի խումբերը եւ աթլէթ-մարզիկները մեծ յաջողութիւններով ախոյեանութիւններ նուաճած են, իսկ Գեորգ Տէր Սիմոնեան գունտ նետելու Եգիպտոսի ախոյեան հանդիսացած:

([41].ա.հտր.էջ 276)

Կայացած բանակցութիւններու արարտին, 30 Մարտ 1917-ին միացումը կատարուած է 1915-ին հիմնուած տեղւոյն «Հայ Հետազոտիչներու Ընկերակ-

ցութեան» հետ, եւ ամբողջութիւն կազմուած՝ «Կամք Մարմնամարզական Ակումբ եւ Հայ Հետազօտիչներու Ընկերակցութիւն» (Կ.Մ.Ա.Հ.Հ.Ը.) անունով: ([XIV])

«Կամք»ի հետազօտիչներուն մղիչ ուժը հանդիսացած է Մելքի Գըլըճեան, գործակից ունենալով Բարսեղ Օհանեանը եւ Կարօ Աշրգեանը:

Միութիւնը ունեցած է «Կանոնագիր Կամք Մարմնամարզ. Ակումբի եւ Հայ Հետազօտիչներու Ընկերակցութեան “Կ.Մ.Ա.Հ.Հ.Ը.”» (Տպ.Արամ Գասապեան, 1924, Աղեքսանդրիա), որուն պատրաստութեան Յանձնախումբի անդամներ եղած են Կարապետ Յակոբեան, Հրաչեայ Փէրիզեան եւ Յակոբ Տէր Յակոբեան:

Կանոնագիրը վաւերացուած է 15 Նոյեմբեր 1923-ի Ընդհ.Ժողովին եւ ապա Ազգ. Վարչութեան Քաղաք. Ժողովին կողմէ 11 Դեկտեմբեր 1923-ի նիստին: ([XIV])

1936-ին, «Կամք»ի հետազօտիչները անուանուած են «Հայ Արի» անունով եւ 1945-ին «Կամք»ին միացած, իսկ 1955-ին արձանագրուած՝ եգիպտական սկաուտական կեդրոնին մօտ:

«Կամք»ի Պատուոյ Նախագահը եղած է Յովսէփ Եուսուֆեան, Պատուոյ Անդամներ ունենալով Բարսեղ Օհանեանը, Տոքթ.Գարեգին Մեծատուրեանը եւ Պօղոսիկ Ճանիկեանը: (ԻԲ. էջ 215)

1945-ին կառուցուած է ակումբին նոր հաւաքավայրը, որուն «Ընդունելութեան Սրահ»ին նուիրատուն եղած է Զարեհ Սագայեան, իսկ «Հայ Արիներու Սրահ»ին նուիրատուն՝ Մելքի Գըլըճեան:

16 Փետրուար 1947-ին, բացումը կատարուած է «Հայ Արիներու Գրադարան»ին, Արիներու Մելքի Գըլըճեան Սրահին մէջ, որուն հատորներու հաւաքածոն նուէր ստացուած է Տիկին Վարդանոյշ Կամսարականի կողմէ:

«Կամք» Մարզական ակումբը ունեցած է պասքէթպոլի, Ֆութպոլի, թենիսի եւ փինկփոնկի խումբեր, որոնց անդամներէն մաս կազմած են Աղեքսանդրիոյ եւ Եգիպտոսի հաւաքականներուն:

Մարզարանին ֆութպոլի խումբին մարզիչը եղած է Նշան Գրիգորեան, իսկ աթլէթիզմի բաժնի վարիչը եղած է Կարպիս Քիւփէլեան:

Ակումբէն ներս կիրարկուած են ըմբշամարտի, կոփամարտի եւ աթլէթիզմի այլազան մարզաձեւեր, ախոյեան մարզիկներ տրամադրելով հայ մարզաշխարհին: (ԻԶ.1952, թիւ 6, էջ 121)

Կ.Մ.Ա.Հ.Հ.Ը. ներկայացուցիչ-ատենապետ խմբապետ Վահան Գալուքճեան մասնակցած է Դեկտեմբեր 1974-ին Պէյրութի մէջ գումարուած Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.) պատգամաւորական անդրանիկ Ընդհանուր Ժողովին եւ որուն առիթով «Կամք» անոր կառոյցին միանալով կոչուած է «Հ.Մ.Ը.Մ. Կամք» մարզական ակումբ Աղեքսանդրիոյ:

Յաջորդական վարչութիւններ կազմակերպած եւ ներկայացուցչական մարզիկներով մասնակցած են եգիպտահայ ողիմպիական խաղերուն, պասքէթպոլի խումբերով մասնակցած՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մրցաշարքերուն:

([41].ա.հտր.էջ 276-277)

«Կամք»ի նախաձեռնութեամբ 1939-ին կազմակերպուած են եգիպտահայ Ախոյեանական Աթլէթիք առաջին մրցումները: Հետագային, սոյն 15 մրցումներէն ութը կազմակերպած է «Կամք»ի վարչութիւնը, Առաջինը՝ 1939, 2-րդը՝ 1943, 5-րդը՝ 1951, 6-րդը՝ 1952, 9-րդը՝ 1955, 10-րդը՝ 1956, 13-րդը՝ 1960 և 15-րդը՝ 1962-ին:

«Հ.Մ.Ը.Մ. Կամք»ի սկաուտները տարիներու ընթացքին ունեցած են բեղուն գործունեություն, բանակումներ եւ կազմակերպելով եւ մասնակցություն բերելով միջազգային Սկաուտական ձեռնարկներու:

«Հայ Արի»ներու Սկաուտական շարժումին ղեկավարներ եղած են Արամայիս Յոխիկեան, Վահան Գալուքճեան, Գրիգոր Մալեգեան, Յարութիւն Մաթեոսեան, Կարօ Թօսունեան, Գառնիկ Համբարձումեան, եւ Գրիգոր Նալպանտեան:

«Կամք»ի արենայներու շարժումը կազմուած է 1949-ի վերջաւորութեան, առաջնորդութեամբ Արաքսի Լեւոնեանի, որուն յաջորդած են Նինա Գըլըճեան, Անահիտ Տօլապճեան(Յոխիկեան) եւ Ժանէթ Փափագեան: ([32].էջ 156)

Ակումբը կազմակերպած եւ պասքէթպոլի արական իր խումբով մասնակցած է վերջին քառասնամեակին կազմակերպուած եգիպտահայ տարեկան հերթական մրցաշարքերուն, առաջնութեան բաժակներու արժանանալով:

«Հ.Մ.Ը.Մ. Կամք»ի մարզիկներ իրենց մասնակցությունը բերած են 1999-էն ի վեր Հայաստանի մէջ յաջորդաբար կազմակերպուած Համահայկական Խաղերու եգիպտահայ պատուիրակութեան խումբերուն:

2012-ին, «Հ.Մ.Ը.Մ. Կամք» արժանաւայել շուքով ոգեկոչած է իր հիմնադրութեան 100-ամեակը (1912-2012), մասնակցութեամբ՝ եգիպտահայ եւ հեռակայ գաղութներ հաստատուած իր նախկին անդամներուն եւ մարզիկներուն:

2. Հայ Հետազօտիչներու Ընկերակցություն - Աղեքսանդրիա , 1915 - 1917

Աղեքսանդրիոյ մէջ, «Հայ Հետազօտիչներու Ընկերակցություն»ը հիմնուած է 13 Յունիս 1915-ին, առաջարկութեամբ Բարսէղ Օհանեանի:

Քաղաքական Ժողովի նախաձեռնութեամբ եւ վաւերացումով կազմուած վարչութեան անդամակցած են Միհրան Թելեան(ատենապետ), Բարսէղ Օհանեան (փոխ-ատենապետ), Մելքի Գըլըճեան(ատենադպիր), Վահրամ Աբրահամեան (գանձապահ), Կարապետ Աշըգեան, Լեւոն Ազնաւորեան(խորհրդական) եւ Ստեփան Խանճեան(մարզիչ-գնդապետ): (ԺԲ.1916, էջ 185)

Յաջորդիւ վարչական եղած են նաեւ Ղազար Մուրաֆեան(ատենապետ) եւ Արամ Անլեան(խորհրդական):

Հետազօտիչներու կազմին երդման արարողություն կատարուած է Կիր. 25 Յունիս 1916-ին: (Լ.1915, թիւ 80 , Լ.1916, թիւ 36,38)

Ս.Խանճեանի խմբապետութեան յաջորդած է Գ. Զօպանեան, որուն նախաձեռնութեամբ յառաջացած է աստիճանաւորներու կազմը, մասնակցութեամբ Գ.Զօպանեանի(ընդհ.խմբապետ), Մ.Թապաքեանի(փոխխմբապետ), Յ.Ամատունի (Կարմիր Խաչի խմբապետ) եւ բաժիններու խմբապետներ Ս.Սիրաքեանի, Լ.Արփիարեանի, Տ.Սէֆերեանի եւ Ս.Շալճեանի: ([41].ա.հտր. էջ 277)

Երկամեայ գործունեութենէ ետք եւ «Կամք»ի վարչութեան հետ համագործակցելու տրամադրութեամբ միացում յառաջանալով՝ 30 Մարտ 1917-ին կազմուած է ամբողջություն մը՝ «Կամք Մարմնամարզական Ակումբ եւ Հայ Հետազօտիչներու Ընկերակցություն (Կ.Մ.Ա.Հ.Հ.Ը.) անունով: ([XIV]. էջ 3)

3. Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միություն - Աղեքսանդրիա , 1923

Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐ – ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ , 1959-

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Հայկ Ճիզմէճեան 1923-ին Աղեքսանդրիոյ մէջ հիմը դրած է Եգիպտոսի առաջին Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին: ([15]. էջ 12)

Սեփական ակումբ ունենալու դժուարին պայմաններով, հայ մարզասեր երիտասարդությունը մարզուած է վարձուած այլ մարզական ակումբներէ ներս:

Կազմուած են պասքէթպոլի, թենիսի եւ փինկփոնկի խումբեր, որոնք յառաջացած են յաջորդական վարչություններու նախաձեռնութեամբ եւ պատուաբեր արդիւնքներ ձեռքբերած: 1930-ականներու պասքէթպոլի ա.խումբին անդամ եղած են Ն.Եղուշեան, Լ.Եղուշեան, Ա.Մանուկեան, Ճ.Չորլեան եւ Զ.Դերձակեան: (Զ.1931, Դեկտ.13)

Հիմնադրութենէն մինչեւ իր նոր կայքին մէջ հաստատուիլը՝ մարզական միաւորը փոխած է եօթ մարզավայր: (Խ.1958, թիւ 5-6)

1934 Հոկտեմբեր 14-ին, բացման հանդիսութիւնը կատարուած է Շաթալիի նոր մարզավայրին, նախագահութեամբ Բ.Պալըզճեանի եւ մարզական խաղերու ղեկավարութեամբ՝ Ստեփան Խանճեանի: (Զ.1934, Հոկտ.19)

1952-ին կազմուած է ակումբին պասքէթպոլի իգական խումբը:

(ԻԶ.1952, թիւ 9, էջ 184)

Հ.Բ.Ը.Միութիւնը գնահատելով մարզական միութեան ազգօգուտ գործունէութիւնը, 1959-ին անոր տրամադրած է ներկայի իր կեդրոնը, թիւ 19, Բրէնս Իպրահիմ պողոտայ, Քան տը Սէզար հասցէին:

Մարզարանը բաղկացած է երկյարկանի առանձնատունէ մը իր շրջապատի պարտէզով, որուն ընդհանուր տարածքը գրաւած է 1602 քռ.մէթր (շէնքը՝ 250 քռ.մ. իսկ մնացեալը՝ պասքէթպոլի եւ խաղերու մարզավայր): (Խ.1958, թիւ 2)

Այս առթիւ մարզական ակումբը վերանուանուած է «Հ.Մ.Ը.Մ. Նուպար-Աղեքսանդրիա» անունով, իբրեւ մարզական միաւորը Հ.Բ.Ը.Միութեան Աղեքսանդրիոյ մասնաճիւղին:

Նոր մարզադաշտին բացման հանդիսութիւնը տեղի ունեցած է 23 եւ 24 Յուլիս 1960-ին պասքէթպոլի մրցաշարքով մը, մասնակցութեամբ՝ Պէրթութէն եւ Հալէպէն հրաւիրուած Հ.Ե.Ը.ի , Գահիրէէն՝ Հ.Մ.Ը.Մ. Նուպարի եւ կազմակերպիչ ակումբի խումբերուն:

Հ.Մ.Ը.Մ. Աղեքսանդրիա կազմակերպած է եգիպտահայ Ախոյենական Աթլէթիք 11-րդ խաղերը 3-4 Օգոստոս 1957-ին, ինչպէս նաև՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 40-ամեակին (1918-1958) նուիրուած եգիպտահայ Աթլէթիք մրցումները 30 եւ 31 Օգոստոս 1958-ին:

Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.ը եւ հետագային՝ Հ.Մ.Ը.Մ. Նուպարի խումբերը մասնակցած են եգիպտահայ մարզական ակումբներու պասքէթպոլի մրցաշարքերուն եւ ակումբին կազմակերպած հերթական ամառնային մրցումներուն նուիրուած՝ եգիպտական 1952-ի յեղափոխութեան տարեդարձի ոգեկոչումին: 1984-ի մրցաշարքը նուիրուած է նաեւ տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 60-ամեակին (1924-1984):

«Հ.Մ.Ը.Մ. Նուպար , Աղեքսանդրիա» Ակումբէն մարզիկներ, եգիպտահայ պատուիրակութեան մաս կազմելով, մասնակցած են 1999-էն ի վեր Հայաստանի մէջ կազմակերպուող Համահայկական Խաղերուն:

Յունիս 1933-ին, Միութեան Շաթալիի դաշտին մէջ, ատենապետ Դանիէլ Ղազարեանի նախաձեռնութեամբ կազմակերպուած է **Սկաուտական Շարժումը** իր Գայիկներու բաժինով, պետեր ունենալով Աքելա Յովհաննէս Չորլեանը եւ Պաղիրա Ժիրայր Ղազարեանը:

Միութիւնը 1935-ի ընթացքին փոխադրուած է «Ամպրուազ Բալլի»ի մարզավայրը, շարունակելով իր գայիկներուն Շարժումը: ([15]. էջ 4-5)

1936 Յունիս 25-ին կազմուած է նաեւ Սկաուտական խումբը, որուն անդամակցութիւնը Եգիպտական Ազգային Սկաուտական Գահիրէի Կեդրոնին կատարուած է 14 Հոկտեմբեր 1937-ին:

1937-ին, ակումբին նախագահը եղած է Դանիէլ Ղազարեան:

1940-ականներու պատերազմի շրջանին, Հ.Մ.Ը.Մ. իր հաւաքոյթները շարունակած է «Բպրահիմէյա Սփորթս Քլապ»ի մէջ:

Գ.Էսմէրեանի կողմէ Ռամլէի շրջանին մէջ Հ.Մ.Ը.Մ. Աղեքսանդրիոյ մասնաճիւղին տրամադրուած եւ Քիւչիւքեան ընտանիքին կողմէ մարզադաշտին կարգաւորումը կատարուած նոր կայքին բացումը կատարուած է 2 Յուլիս 1944-ին, ակումբին վարչութեան ատենապետ Պերճ Պապիկեանի կազմակերպութեամբ:

([15]. էջ 7/8 - Զ.1944, Յուլիս 8)

1 Մայիս 1949-ին, կազմուած է Կայտերու բաժինը, առաջնորդութեամբ Զապէլ Պասմաճեանի եւ Լիւսի Էսէրեանի:

Ակումբին Սկաուտական Շարժումը 1938-էն 2002 կազմակերպած է արտասահմանեան 13 բանակումներ:

Հ.Մ.Ը.Մ.ի ատենապետ եւ սկաուտ երեց խմբապետ եղած է Սիրուն Զայիրճեան: (ԻԶ.1952, թիւ 4, էջ 88)

«Հ.Մ.Ը.Մ. Նուպար-Աղեքսանդրիա» ակումբի սկաուտական շարժումին հիմնադրութեան 25-ամեակը հանդիսադրուած է 1959-ին, 35-ամեակը՝ 1968-ին, 70-ամեակը՝ 2003-ին եւ 75-ամեակը՝ 2008-ին: Հանդիսութիւններ կազմակերպուած են նաեւ Շարժումին Կայտական բաժնի հիմնադրութեան 20 եւ 30-ամեակներուն:

(Խ.2003, թիւ 29 - 2008, թիւ 48)

4. «Տորք» Մարմնամարզական Միութիւն - Աղեքսանդրիա , 1924-1925 , 1935-

Մարմնամարզական Միութիւնը կազմուած է 1924-ին, Կ.Պոլսէն Աղեքսանդրիա ժամանած մարզասէր երկսեռ երիտասարդներու նախաձեռնութեամբ:

Մարզական «Տորք» միութիւնը հանդիսացած է Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդ ակումբը Աղեքսանդրիոյ մէջ, իր կեդրոնը հաստատելով Միտի Պիշրի մէջ: ([19]. էջ 12)

«Տորք»ի մարզիկները 1925-ին, միամեայ իրենց գործունէութեան աւարտին եւ ընդհանուր ժողովի որոշումով, միացած են Աղեքսանդրիոյ մէջ Հայկ Ճիզմէճեանի 1923-ին հիմնած Հ.Մ.Ը.Մ.իութեան կազմին: (Խ.1958, թիւ 5-6, էջ 17)

Կազմակերպչական տարակարծութեան հետեւանքով, «Տորք»ի անդամներ հեռացած ըլլալով անոր գործունէութենէն, մարզական կառոյցը կազմալոյծ եղած է:

Հետագային, գաղութահայ գիտակից տարրերու նախաձեռնութեամբ՝ եւ մարզասէր հայորդիի մը տրամադրած նիւթական օժանդակութեամբ, միութիւնը վերակազմուած է 1935-ին, պատուոյ նախագահ ունենալով Գրիգոր Սէրթեանը:

Նորկազմ վարչութեան անդամակցած են Եփրեմ Խունկանեան (ատենապետ), Եղուարդ Եարըմեան(ատենադպիր), Յարութիւն Շիրինեան(գանձապահ) եւ Սարգիս Նալջաճեան(խորհրդական):

«Տորք»ի ֆուրբոլի խումբը կազմուած է Զարեհ Սերոբեանի խմբապետութեամբ: Կազմուած են նաեւ պասքէթպոլի, փինկփոնկի եւ արթլէթիքմի Յանձնախումբերը: (ԻԲ. էջ 217)

5. Հ.Մ.Ը.Մ. Տոբ Մասնաճիւղ - Աղեքսանդրիա , 1943-1947

Ժամանակի ռազմական պայմաններուն պատճառով, եռամեայ կազմալոյծ վիճակէ մը ետք եւ նոր վարչական կազմով, Աղեքսանդրիոյ Սիտի-Պիշր արուարձանին մէջ «Տոբ» մասնաճիւղին վերաբացումը կատարուած է 11 Յուլիս 1943-ին:

Առաջին առթիւ, նախաձեռնուած է զանազան աթլէթիք մարզաձեւերու կիրարկումին եւ խումբերու կազմութեան, ձեռնհաս մարզիչներու հսկողութեամբ:

Տեղւոյն սկաուտական շարժումը հիմնուած է 30 Սեպտեմբեր 1945-ին, սկսելով Գայլիկներու բաժինով, գործակից-ղեկավարութեամբ Վահէ Քիթապճեանի եւ Յովհաննէս Զորլեանի:

Հակառակ հիմնադրութեան շրջանին ունեցած լայն ընդունելութեան, ներգաղթի պատճառով շրջանի հայութեան մեծամասնութիւնը հայրենիք գաղթած ըլլալով՝ Հ.Մ.Ը.Մ.ի Տոբ մասնաճիւղը փակուած է 23 Փետրուար 1947-ին: ([15]. էջ 8)

ՓՈՐ ՍԱՅԻՏ

1. «Թաթար-Ալանք» Ֆութպոլի Խումբ - Փոր Սայիտ , 1916-1919

Մարզական ֆութպոլի խումբը կազմուած է Յունուար 1916-ին, Փոր Սայիտի գաղթակայանի երիտասարդներուն կողմէ, Մուսա Լերան այն կէտին անունով՝ ուր տեղի ունեցած է Սուէտիոյ ինքնապաշտպանութեան կռիւը: (Լ.1916, թիւ 126)

Երիտասարդական ֆութպոլի խումբը կազմալուծուած է Փոր Սայիտի գաղթակայանին փակումով 1919-ին:

2. «Միսուան» Դպրոցական Պոյ Սկաուտներու Ընկերակցութիւն -

Փոր Սայիտ , 1917-1919

Սկաուտական Ընկերակցութիւնը կազմուած է հայ գաղթականներու կայանին մէջ, որուն պաշտօնական բացումը կատարուած է 8 Յունիս 1917-ին:

Նպատակը եղած է *«պատանեկութեան մտքին մէջ ներարկել քաջութեան եւ կարգապահութեան ասպետական գաղափարները»*: ([24]. գ.հտր. էջ 282-290)

Շարժումի Կազմակերպիչ յանձնախումբին անդամ եղած են Ք.Լ.Բէյնոլտս (նախագահ), Տոբ.Ե.Արշարունի (պատուիրակ Հ.Կ.Խաչի), Տոբ.Յ.Տէօվլէթեան (գաղթակայանի բժշկապետ), Մեսրոպ Ժամկոչեան («Միսուան» վարժարանի տնօրէն), Հմայեակ Գրանեան (փոխ-տնօրէն) եւ Մ.Այվատեան (վարժարանի մարմնամարզի ուսուցիչ): (Լ.1917, թիւ 39)

Միաւորին անդամակցած են 210 Պոյ Սկաուտներ, որոնց 90-ը Գաղթակայանի Որբանոցէն, իրենց մարզիչ ունենալով Հմայեակ Փանոսեանը: ([17]. էջ 53)

ԶԱԿԱԶԻԿ

«Կամսարական» Ֆութպոլի Խումբ - Զակազիկ , 1929-1944

Խումբը հիմնուած է Կամսարական Տան պաշտօնէութեան կողմէ 5 Հոկտեմբեր 1929-ին, անոր մարզասէր անդամներուն նախաձեռնութեամբ:

([24].գ.հտր. էջ 161)

Ֆութպոլի խումբը յաջող մրցակցութիւն ունեցած է շրջանի ակումբներուն հետ: Խումբը կազմալուծուած է 1944-ին, «Կամսարական» Գործատան վաճառումով եւ պաշտօնէութեան Գահիրէ եւ Աղեքսանդրիա հաստատումով:

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԱԽՈՅԵՆԱԿԱՆ ԱԹԼԷԹԻՔ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Եգիպտահայ մարզական ախոյենական աթլետիք մրցումները առաջին անգամ նախաձեռնուած են Աղեքսանդրիոյ «Կամք» մարզական ակումբին կողմէ 1939-ին:

Յաջորդաբար կազմակերպուած են հետեւեալ 15 Ախոյենական Աթլետիք մրցումները, մասնակցութեամբ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մարզական ակումբներուն եւ միութենական մարզիկներուն:

Ա. Առաջին Եգիպտահայ Ախոյենական Աթլետիք Մրցումներ - Աղեքսանդրիա

Կազմակերպուած են «Կամք» Մարզական Ակումբին նախաձեռնութեամբ, Աղեքսանդրիա, 17 եւ 18 Յունիս 1939-ին, տեղւոյն Յունական վարժարաններու դաշտին վրայ (Սոթեր):

Մասնակցած են Գահիրէէն՝ «Արարատ» , «Հ.Մ.Ը.Մ.» , «Նուպար» եւ Աղեքսանդրիայէն՝ «Հ.Մ.Ը.Մ.» , «Տորք» եւ «Կամք» մարզական ակումբները:

Բ. Երկրորդ Եգիպտահայ Ախոյենական Աթլետիք Մրցումներ - Աղեքսանդրիա

Կազմակերպուած են «Կամք» Մարզական Ակումբին նախաձեռնութեամբ, Աղեքսանդրիա, 4 եւ 5 Սեպտեմբեր 1943-ին, տեղւոյն թաղապետական Ֆուստ Ա. մարզադաշտին վրայ:

Մասնակցած են Գահիրէէն՝ «Արարատ» , «Նուպար» , «Նաւասարդ» , «Գալուստեան Շրջ. Միութիւն», «Միխրարեան Վարժարան» , «Հ.Յ.Դ.Երիտասարդաց Միութիւն» եւ Աղեքսանդրիայէն՝ «Կամք» , «Հայկազեան Վարժարան» մարզական ակումբներու եւ միութենական մարզիկները:

Գ. Երրորդ Եգիպտահայ Ախոյենական Աթլետիք Մրցումներ - Գահիրէ

Կազմակերպուած են «Արարատ» Մարզական Ակումբին նախաձեռնութեամբ, Գահիրէ, իր հիմնադրութեան 30-ամեակին(1914-1944) առթիւ, 20 եւ 21 Մայիս 1944-ին:

Մասնակցած են Գահիրէէն՝ «Նաւասարդ» , «Նուպար» , «Հ.Մ.Ը.Մ.» , «Գալուստեան Շրջ. Միութիւն» , «Արարատ» եւ Աղեքսանդրիայէն՝ «Հ.Մ.Ը.Մ.» , «Տորք» եւ «Կամք» մարզական ակումբներու եւ միութենական մարզիկները:

Դ. Չորրորդ Եգիպտահայ Ախոյենական Աթլետիք Մրցումներ – Գահիրէ

Կազմակերպուած են «Նուպար» Մարզական Ակումբին նախաձեռնութեամբ, անոր Շուպրայի մարզադաշտին վրայ, Գահիրէ, 18 եւ 19 Նոյեմբեր 1944-ին:

Մասնակցած են Գահիրէէն՝ «Նուպար» , «Արարատ» , «Նաւասարդ» , «Երեւան» , «Գալուստեան Շրջ. Միութիւն» եւ Աղեքսանդրիայէն՝ «Կամք» , «Հ.Մ.Ը.Մ.» եւ «Տորք» մարզական ակումբներու եւ միութենական մարզիկները:

Ե. 5-րդ Եգիպտահայ Ախոյենական Աթլետիք Մրցումներ - Աղեքսանդրիա

Կազմակերպուած են «Կամք» Մարզական Ակումբի նախաձեռնութեամբ, Աղեքսանդրիա, 7 եւ 8 Յուլիս 1951-ին:

Մասնակցած են Գահիրէէն՝ «Հ.Մ.Ը.Մ. Արարատ» , «Հ.Մ.Ը.Մ. Նուպար» եւ Աղեքսանդրիայէն՝ «Կամք» մարզական ակումբներու մարզիկները:

Զ. 6-րդ Եզիպտահայ Ախոյենական Աթլէթիք Մրցումներ - Աղեքսանդրիա

Կազմակերպուած են «Կամք» Մարզական Ակումբի նախաձեռնութեամբ, անոր հիմնադրութեան 40-ամեակին (1912-1952) առթիւ, Աղեքսանդրիա, 5 եւ 6 Յուլիս 1952-ին, տեղւոյն թաղապետական Ֆուստ Ա. մարզաւանին մէջ:

Մասնակցած են Գահիրէէն՝ «Հ.Մ.Ը.Մ. Նուպար» , Հ.Մ.Ը.Մ. Արարատ» , «Գալուստեան Շրջ. Միութիւն» , Նիքր Իսթ» եւ Աղեքսանդրիայէն՝ «Հ.Մ.Ը.Մ.» եւ «Կամք» մարզական ակումբներուն եւ միութենական մարզիկները:

Է. 7-րդ Եզիպտահայ Ախոյենական Աթլէթիք Մրցումներ - Գահիրէ

Կազմակերպուած են «Հ.Մ.Ը.Մ. Նուպար» Մարզական Ակումբի նախաձեռնութեամբ, անոր Շուպրայի մարզադաշտին վրայ, Գահիրէ, 23 եւ 24 Մայիս 1953-ին:

Այս մրցումներուն աթլէթիք բաժնին յաւելում կատարուած է պասքէթպոլի , թենիսի եւ փինկփոնկի մարզախաղերը:

Մասնակցած են Գահիրէէն՝ «Հ.Մ.Ը.Մ. Արարատ» , «Հ.Մ.Ը.Մ. Նուպար», «Նիքր Իսթ» եւ Աղեքսանդրիայէն՝ «Հ.Մ.Ը.Մ.» եւ «Կամք» մարզական ակումբներու մարզիկները:

Փինկփոնկի խումբերով մասնակցած են Գահիրէէն՝ «Կոկանեան Սրահ», «Հ.Յ.Դ. Երիտ.Միութիւն» , «Հ.Մ.Միութիւն» , «Հայ Ուսանողական Միութիւն» , «Հայ Գեղարուեստասիրաց Միութիւն» եւ Աղեքսանդրիայէն՝ «Տիգրան Երկաթ» եւ «Յառաջդիմասէր» : (ԻԶ. 1954, թ.11-12)

Ը. 8-րդ Եզիպտահայ Ախոյենական Աթլէթիք Մրցումներ - Գահիրէ

Կազմակերպուած են «Հ.Մ.Ը.Մ. Արարատ» Մարզական Ակումբի նախաձեռնութեամբ, անոր հիմնադրութեան 40-ամեակին (1914-1954) առթիւ, 10 եւ 11 Ապրիլ 1954-ին, Գահիրէի Նասիոնալ Մարզադաշտին վրայ:

Մասնակցած են Գահիրէէն՝ «Հ.Մ.Ը.Մ. Արարատ» , Հ.Մ.Ը.Մ. Նուպար» , Նիքր Իսթ եւ Աղեքսանդրիայէն՝ «Կամք» մարզական ակումբներու մարզիկները:

Թ. 9-րդ Եզիպտահայ Ախոյենական Աթլէթիք Մրցումներ – Աղեքսանդրիա

Կազմակերպուած են «Կամք» Մարզական Ակումբի նախաձեռնութեամբ, Աղեքսանդրիա, 16 եւ 17 Ապրիլ 1955-ին:

Մասնակցած են Գահիրէէն՝ «Հ.Մ.Ը.Մ. Արարատ» , «Նիքր Իսթ» եւ Աղեքսանդրիայէն՝ «Կամք» մարզական ակումբներու մարզիկները:

Ժ. 10-րդ Եզիպտահայ Ախոյենական Աթլէթիք Մրցումներ - Աղեքսանդրիա

Կազմակերպուած են «Կամք» Մարզական Ակումբի նախաձեռնութեամբ, Աղեքսանդրիա, 7 եւ 8 Յուլիս 1956-ին, տեղւոյն Թաղապետական Մարզաւանին մէջ:

Մասնակցած են Գահիրէէն՝ «Հ.Մ.Ը.Մ. Նուպար» , «Հ.Մ.Ը.Մ. Արարատ» եւ Աղեքսանդրիայէն՝ «Կամք» մարզական ակումբներու մարզիկները:

ԺԱ. 11-րդ Եզիպտահայ Ախոյենական Աթլէթիք Մրցումներ – Աղեքսանդրիա

Կազմակերպուած են «Հ.Մ.Ը.Մ.» մարզական ակումբին նախաձեռնութեամբ,

Աղեքսանդրիա, 3 և 4 Օգոս. 1957-ին, տեղւոյն Թաղապետական մարզաւանին մէջ:

Մասնակցած են Գահիրէէն՝ «Հ.Մ.Ը.Մ. Արարատ» , «Նիւրր Իսթ» , Աղեքսանդրիայէն՝ «Հ.Մ.Ը.Մ.» եւ «Կամք» մարզական ակումբներու մարզիկները:

ԺԲ. 12-րդ Եգիպտահայ Ախոյենական Աթլէթիք Մրցումներ – Գահիրէ

Կազմակերպուած են «Հ.Մ.Ը.Մ. Արարատ» մարզական ակումբին նախաձեռնութեամբ, Գահիրէ, նուիրուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 40-ամեակին, 26 եւ 27 Ապրիլ 1958-ին:

ԺԳ. 13-րդ Եգիպտահայ Ախոյենական Աթլէթիք Մրցումներ – Աղեքսանդրիա

Կազմակերպուած են «Կամք» Մարզական Ակումբի նախաձեռնութեամբ, Աղեքսանդրիա, 7 և 8 Մայիս 1960-ին, տեղւոյն Թաղապետական Մարզաւանին մէջ:

Մասնակցած են կազմակերպիչ ակումբին եւ Գահիրէի «Հ.Մ.Ը.Մ. Արարատ»ի մարզիկները:

ԺԴ. 14-րդ Եգիպտահայ Ախոյենական Աթլէթիք Մրցումներ – Գահիրէ

Կազմակերպուած են «Հ.Մ.Ը.Մ. Արարատ»ի եւ Հայ Արիներու Ընկերակցութեան նախաձեռնութեամբ, Գահիրէ, 6 եւ 7 Մայիս 1961-ին, Նասիօնալ Մարզական Ակումբի դաշտին վրայ:

Մասնակցած են Գահիրէէն՝ «Հ.Մ.Ը.Մ. Նուպար» , «Հ.Մ.Ը.Մ. Արարատ» , «Նիւրր Իսթ» , Աղեքսանդրիայէն՝ «Կամք» մարզական ակումբներու, ինչպէս նաեւ հրաւիրեալ «Հ.Մ.Ը.Մ. Սուրիա» եւ «Հ.Մ.Ը.Մ. Լիբանանի» ներկայացուցչական մարզիկները:

ԺԵ. 15-րդ Եգիպտահայ Ախոյենական Աթլէթիք Մրցումներ – Աղեքսանդրիա

Կազմակերպուած են «Կամք» Մարզական Ակումբին նախաձեռնութեամբ, Աղեքսանդրիա, 7 եւ 8 Յուլիս 1962-ին, տեղւոյն Քաղաքապետարանի մարզաւանին մէջ, նուիրուած՝ «Կամք»ի հիմնադրութեան 50-ամեակին(1912-1962) եւ Եգիպտոսի 23 Յուլիսի Յեղափոխութեան 10-ամեակին(1952-1962):

Յիշարժան է, թէ 30 եւ 31 Օգոստոս 1958-ին, Աղեքսանդրիոյ «Հ.Մ.Ը.Մ.» մարզական ակումբին նախաձեռնութեամբ կազմակերպուած են բացառիկ Աթլէթիք մրցումներ, նուիրուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 40-ամեակին (1918-1958) : Սոյն մրցումներուն Գահիրէէն մասնակցած են «Հ.Մ.Ը.Մ. Նուպար», «Հ.Մ.Ը.Մ. Արարատ», «Նիւրր Իսթ» և Աղեքսանդրիայէն՝ «Հ.Մ.Ը.Մ.» և «Կամք» ակումբներուն մարզիկները:

ԵԳԻՊՏԱՀԱՅ
ՏՊԱՐԱՆՆԵՐ

Գ ա հ ի ռ է

Ա ղ է ք ա ն դ ի ա

ԳԱՀԻՐԷԻ ՏՊԱՐԱՆՆԵՐ

1. Վիմագրական Մամուլ - Գահիրե, 1832
2. «ԱՐՄԱԻԵՆԻ» Տպարան - Գահիրե, 1865
3. «ԱՐԱՐԱՏ» Տպարան (Ս.ԴԱՐԲԻՆԵԱՆ) - Գահիրե, 1895-1910
4. «ՓԱՐՈՍ» Տպարան - Գահիրե, 1897-1898, 1901-1902, 1918-1927, «مطبعة المنار», 1910
5. «ՄՆՏԻԿԵԱՆ» Տպարան (վիմատպարան) - Գահիրե, 1898-1899
6. «ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ» Տպարան - «ԱՐՇԱԼՈՅՍ» Տպարան - Գահիրե, 1900-1914
7. «ՄԻՈՒԹԻԻՆ» կամ «ԹՈՐԳՈՍ ՓԱՓԱԶԵԱՆ» Տպարան - Գահիրե, 1900-1901
8. «ԱՐՏԷՄԻՍ» Տպարան - Գահիրե, 1902-1903
9. «ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ» Տպարան - Գահիրե, 1904
10. «ԼՈՒՍԱԲԵՐ» Տպարան - Ադեքսանդրիա, Գահիրե, 1904-1909
«ԼՈՒՍԱԲԵՐ-ԱՐԵԻ» Տպ. - Գահիրե, 1909-1913
11. «ՍՖԻՆՔՍ» Վիմագրատուն - Գահիրե, 1905-1911
12. «ՓԱՓԱԶԵԱՆ ԷՆ ՏԻՐԼԻԿ» Տպարան - Գահիրե, 1906
13. «ԹՈՓԱԼԵԱՆ» Տպարան - Գահիրե, 1908
14. «ԶԱՐԵՆՆ ԵՂԵՐՊԵՐԵԱՆ» Տպարան - Գահիրե, 1909 - 1926
15. «ՄԻՈՒԹԻԻՆ» Տպարան - «Հ.Բ.Ը.Մ.Ի ՍԵՓԱԿԱՆ» Տպ. - Գահիրե, 1912-1933
16. «ՅՈՒՍԱԲԵՐ» Տպարան - Գահիրե, 1913-2008
17. «Մ.ՇԻՐԻՆԵԱՆ» Տպարան - Գահիրե, 1915-1923
18. «ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ» Տպարան - Գահիրե, 1916-1962
19. «ՅՈՅՍ» Տպարան - Գահիրե, 1916
20. «ՈՍՏԱՆ» Տպարան - Գահիրե, 1917-1920 - ՍՈԿՐԱՏ ՍԱՐԴԱՖԵԱՆ և ԸՆԿ. Տպ.
21. «ՈՍԿԵՏԱՌ» Տպարան - Գահիրե, 1918-1966, 1966 -
22. «Գ.ՃԻՀԱՆԵԱՆ» Տպարան - Գահիրե, 1919-1921
23. «ԵՓՐԱՏ» Տպարան - Գահիրե, 1920
24. «ՎԱՐԴԱՆ ՉԱԳԱՐԵԱՆ» Տպարան - Գահիրե, 1921
25. «ԹՈՒՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ և ԸՆԿ.» Տպարան-Կազմատուն - Գահիրե, 1922-1960ներ
26. «ԱՐԳՈՍ» Տպարան - Գահիրե, 1924-1977
27. «Յ.ԱԶԱՊԼԱՐ» - «ՄԱՍԻՍ» Տպարան - Գահիրե, 1926-1932
28. «ԱՄԻՐԱՅԵԱՆ և ԸՆԿ.» Տպարան - Գահիրե, 1926-1940
29. «ԼՈՒՍԱՐԶԱԿ» Տպարան - Գահիրե, 1926-1928
30. «ՅԱԲԷԹ-ՊԱՂՏԱՍԱՐ» Տպարան - Գահիրե, 1927-1937, «ՅԱԲԷԹ» Տպ., 1946-1957
31. «ԳԱԼՖԱ» Տպարան - Գահիրե, 1932-1939
32. «ՅԱԿՈԲ ՓԱՓԱԶԵԱՆ» Տպարան - Գահիրե, 1932-1946
33. «ՆԵՂՈՍ» Տպարան - Գահիրե, 1935-1952
34. «ՄԻՆԷՎԷՊ» Տպարան - Գահիրե, 1938
35. «ՍԵԻԱՆ» Տպարան - Գահիրե, 1938-1940
36. «ՆՈՒՊԱՐ» Տպարան - NUBAR PRINTING HOUSE - Գահիրե, 1939 -
«ՆՈՒՊԱՐ ՏԻՃԻԹԸԼ» Տպարան - NUBAR DIGITAL, 2003 -
37. «ՌՈԶ ՄԱԹՈՍԵԱՆ ԷՆ ԸՆԿ.» Վիմատպարան - Գահիրե, 1940-1944
Նախկին «ԱՄԻՐԱՅԵԱՆ ԷՆ ԸՆԿ.» Տպարան (1926)
38. «ՆՈՐ ԱՍՏՂ» Տպարան THE NEW STAR PRESS - Գահիրե, 1941-1962
39. «ՆԱՍԻՊԵԱՆ» Տպարան - Գահիրե, 1943

40. «ԹՈՐՈՍ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ» Տպարան և Զինկոկրաֆ - Գահիրե, 1943-1970
41. «ԱՐԱՄ – ՊԷՐ» Տպարան - Գահիրե, 1948
42. «ՎԻԹՈՐԻԱ» Տպարան - VICTORIA PRESS - Գահիրե
43. «ԱՖՐԻԲԸՆ ՓՐԷՍ» Տպարան - AFRICAN PRESS - «المطبعة الأفريقية» Գահիրե , 1969 -

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՏՊԱՐԱՆՆԵՐ

1. «ՂԵԻՈՆԴ ՔՇՆՅ. ՓԱՓԱԶԵԱՆ» Տպարան - Աղեքսանդրիա, 1889
2. «Գ.ՆԱԶԱՐԷԹԵԱՆ» Տպարան-Փորագրատուն - Աղեքսանդրիա, 1900-1909
3. «ԱՐԱՄ ՍՏԵՓԱՆԵԱՆ» Տպարան - Գահիրե, 1900 -1901
*** «ԱՐԱՔՍ» Տպարան - Աղեքսանդրիա, 1917, 1925-1965, 1970-
4. «ՓԻԻՆԻԿ» Տպարան - Աղեքսանդրիա, 1901-1903
5. «ԿԱՄՊԷԹԱ» Տպարան -Աղեքսանդրիա, 1902-«ԲԱՖՖԻ» Տպ.Աղեքսանդրիա, 1907
6. «ՍԻՍՈՒԱՆ» Տպարան - Աղեքսանդրիա, 1903-1905
7. «ՓԵԹԱԿ» Տպարան - Աղեքսանդրիա, 1903
8. «ԱՍՔԱՆԱԶԵԱՆ» Տպարան - Աղեքսանդրիա, 1903-1904
9. «ՀԱՅԵԼԻ» Տպարան - Գրատուն - Աղեքսանդրիա, 1903-1904
10. «ԹԷՔԷԵԱՆ ԵՒ ԸՆԿ.» Տպարան - Աղեքսանդրիա, 1905
11. «ԽՆԱՅՈՂԱԿԱՆ»(Imp.Economique)-«ՏԱՄԱՏԵԱՆ»Տպ.Աղեքսանդրիա,1910-1919
12. «Ա.ԳԱՍԱՊԵԱՆ» Տպարան - Աղեքսանդրիա, 1913-1939
13. «ՏԸ ԼԻԻՔՍ» Տպարան - Impr.DE LUXE - Աղեքսանդրիա, 1918
«Խ.Վ.ԹԷԼԼԱԼԵԱՆ» Տպ. , Աղեքսանդրիա
14. «ՀԱՅԿ Ս.ԲԻԻՐԱՏ» Տպարան - Աղեքսանդրիա, 1935-1940
15. «ՄՈՀԱՐՐԱՄ ՓՐԷՍ» Տպարան - Աղեքսանդրիա, 1935

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ - ԳԱՀԻՐԷ

1. «ԱՐԱՔՍ» Տպարան - Աղեքսանդրիա, 1902-1905 - Գահիրե, «ԿԻԼԻԿԻԱ» Տպ., 1906
2. «ՀԱՅԿԱԿԱՆ» Տպ. (Օ.Հալեպլեան)-«ԱՐԱՔՍ» Տպ.,Աղեքսանդրիա,1899-1906
«ԿԻԼԻԿԻԱ» Տպ., «ՀԱՅԿԱԿԱՆ» Տպարան-Կազմատուն , Գահիրե , 1906-1919
3. «ԱՐԵԻ» Տպարան -Աղեքսանդրիա, 1918-1924 - Գահիրե, 1924-1993

ՀԱՅԱՏԱՌ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԱԾ

ՕՏԱՐ ՏՊԱՐԱՆՆԵՐ

1. «ՆԻՔ ՔԱՐԹԵՐ» Տպարան - Գահիրե , 1915
2. «ՄԱՆԻԿԻԴԻՍ» Տպարան - MANIKIDIS PRESS - Գահիրե
3. «ԷԼ ՆԻԼ ԿՐՕՆԱԿԱՆ» Տպարան - THE NILE MISSION PRESS - Գահիրե
4. «ՖՕՍ» Տպարան - PHOS PRESS - Գահիրե
5. «ՊԱՐՏԱՃ» Տպարան - IMPREMERIE BARDAGE - Գահիրե
6. «ՇՈՒՇԱ» Տպարան - « دارشوشه للطباعة » - Գահիրե
7. «ՓՕԼ ՊԱՐՊԷՅ» Տպարան - IMPREMERIE PAUL BARBEY - Գահիրե
8. «ՀԱՊԻՊ-ՄԱՆՍՈՒՐ» Տպարան - HABIB-MANSOUR Press - Գահիրե
9. «ՈՒԱՀՊԱ» Տպարան - IMPRIMERIE WAHBA - Գահիրե
10. «ՓՐՕՔԱՅԻԱ» Տպարան - IMPRIMERIE PROCACCIA - Գահիրե
11. «ՏՐԻՄ ՓՐԷՍ» Տպարան - DREAM PRESS - Գահիրե
12. «ԱՐԹ ՖԷՇՆ» Տպարան - مطبعة ارت فيشن - Գահիրե

ԳԱՀԻՐԷԻ ՏՊԱՐԱՆՆԵՐ

1. Վիմագրական Մամուլ - Գահիրե , 1832

Զաքարիա Տեր Պետրոսեան, հայրենի Տարօն գաւառի Կոփ աւանէն, հոգեւոր ուսումնառութենէ եւ Երուսաղէմի միաբանութեան իբրեւ անդամ Ս.Էջմիածնի մէջ 1831-ին Եպիսկոպոս օծուելէ ետք, դէպի Ս.Քաղաք իր վերադարձի ճամբուն վրայ 1832-ին եկած է Եգիպտոս, տեղւոյն վանքապատկան կալուածներու հարցով:

Գահիրէի մէջ, Զաքարիա Եպիսկոպոս իր բարեկամ Ակնցի մահտեսի Ալեքսան Եղիազարեանի նիւթական օժանդակութեամբ «վիմագրական մամուլ» մը գնած է 1832-ին, եւ առաջին առթիւ տպագրած ու հրապարակ՝ «Յայտարարութիւն» մը, պանծացնելու համար Ալեքսան և Յակոբ Եղիազարեան եղբայրներու վաստակը Եգիպտոսի մէջ:

(«Միոն» Ամսգ. 1933, թիւ 11)

Սոյն «Յայտարարութիւն»ը միակ հրատարակութիւնն է լոյս տեսած Զաքարիա Եպիսկոպոսի «Վիմագրական Մամուլ»ով Գահիրէի մէջ: Այնուհետեւ, այս մամուլը ուղարկուած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց հայոց վանքը:

Յիշարժան է, թէ Զաքարիա Եպիսկոպոս եղած է Երուսաղէմի հայոց տպագրութեան հիմնադիրը եւ Զաքարիա Կոփեցի Պատրիարք անունով արժանաւոր հովուապետը եղած է Ս.Աթոռին (1840-1846):

(«Էջմիածին» Ամսգ. ԿԳ. 63-րդ տարի(Ա), էջ 84-87 - ([24]. բ.հտր. էջ 49)

2.«ԱՐՄԱԻՆԻ» Տպարան - Գահիրե, 1865

Տպարանը հիմնադրուած է 1865-ին Աբրահամ Մուրատեանի նախաձեռնութեամբ, իր հետ Ֆրանսայէն բերած գիրքերու կազմածով, տպագրելու համար իր խմբագրած առաջին եգիպտահայ կիսամսեայ լրագիրը «Արմաւենի»ն , լոյս տեսած՝ միայն 4 համար, 16 Մարտէն 1 Մայիս 1865:



Մուրատեանի Եգիպտոսէն մեկնումով եւ լրագրին հրատարակութիւնը դադրելէն ետք տպարանը եւս փակուած է:

([9]. էջ 96)

3.«ԱՐԱՐԱՏ» Տպարան (Ս.ԴԱՐԲԻՆԵԱՆ) - Գահիրե , 1895-1910

Սարգիս Դարբինեան տպարանը հիմնած է 1895-ին, Գահիրէի Պէյն-էլ-Մուրէն թաղաշրջանին մէջ, ուր տպագրուած են զանազան լեզուներով գիրքեր, տեղեկագիրներ, տոմսեր և լրագիրներ:

Տպարանը 1899-ին եղած է կազմատուն եւ թղթավաճառատուն Հապպանէյա թաղին Սոհամէտ Ալի փողոցին վրայ:

(Ը.1899, թիւ 3)

Հետագային տպարանը կոչուած է նաև «ԱՐԱՐԱՏ-Ս.ԴԱՐԲԻՆԵԱՆ տպարան» (1903,1907-09):

Տպարանը եղած է եգիպտահայ երրորդ տպարանը եւ երեք գրքոյկ տպագրած է, յաջորդաբար՝ «Կանոնագիր Խորենեան Երկսեռ Վարժարանի» 1895-ին, Սարգիս Դարբինեանի «Հայերէն-Արաբերէն Գրպանի Բառարան»ը 1896-ին և Աւետիս Պալեանի «Մաթիլտ»ը 1897-ին: ([14]. թիւ 2,3 եւ 4)

Այնտեղ տպագրուած են «Մաժակ» (1898), «Փիւնիկ» (թիւ 1 և 2, 1899), «Արշալոյս» (1899), «Նոր Օր» (1900), «Ժողովուրդ» (1903-1904 կարգ մը թիւերը), «Աւել» (1909-1910) պարբերականները: Նաեւ, Հայկունի Մ.ի «Անեքդոտներ և ժողովրդային վէպիկներ»ը (1899), Կանոնագրեր եւ Տարեկան Տեղեկագիրներ:



Ս.Դարբինեան Տպարանին մէջ տպուած են հարսանեկան հրաւերագիրներ, տեղեկագիրներ, նամակագլուխ, տոմսեր, հաշուեցոյցներ, մահազոյներ, յայտարարութիւններ աժան գիներով: Յանձնարարութիւնները փութով կատարուած են 50% կանխիկ վճարելով:

(ԺՁ1. 1904, թիւ 15/16)

Տպարանը փակուած է 1910-ին:

([31]. էջ 188)

Սարգիս Դարբինեան սրբագրիչ եւ տպագրիչ եղած է Գահիրէի պետական տպարանին մէջ (Էլ-Մաթպաա Էլ-Էիլէյա- Պուլաթ), նաեւ աշխատած է Գահիրէի ջուրի ընկերութեան մէջ:

([24]. ք.հտք. էջ 304)

4. «ՓԱՐՈՍ» Տպարան - Գահիրէ , 1897-1898 , 1901-1902 ,

1918-1927 - «مطبعة المنار» - 1910 - Գահիրէ

Տպարանը հաստատուած է 1897-ին, Յարութիւն Ալփիարի նախաձեռնութեամբ, տպագրելու համար իր խմբագրած «Փարոս» (1897-1898/1901-02) լրագիրը:

Տպարան-խմբագրատան հասցեն 1897-ին եղած է Պազար Մուրուր, Գահիրէ:

Տպարանը վաճառուած է 1898-ի կէսերուն:

([9]. էջ 199)

Հետագային, սեփականատէրը եղած է Վաղինակ Ռափայէլեան, տպարանը հաստատելով Գահիրէի Մատապէկ փողոցը:

(ԻԲ. էջ.167)



1910-ին, «Էլ Մանար» (ՓԱՐՈՍ) Տպարան անունով հրատարակուած է հայատառ (5 էջ) եւ արաբերէն լեզուի բաժինով (10 էջ) «Գահիրէի Օսմանեան Ակումբի Կանոնագիրը - հիմնական պայմաններ»-ու պրակը: ([12]. թիւ 106)

1918-էն սկսեալ, տպարանը կազմակերպուած հաստատութիւն մը եղած է Գահիրէի Քասր Էլ Նիլ փողոցին վրայ, թիւ 50, Բէյ Օֆիսի դիմաց: Հետագային փոխադրուած է թիւ 35, Սուլիման փաշա փողոց հասցէին:

Տպագրուած են «Մարտիկ Աղա» (26-42 համարները, 1921), «Հայկական Սինեմա» (1-39 թիւերը, 1925) եւ «ՀՕԿ» (3 համար, 1926) պարբերականները: Նաեւ տասնեակ մը Կանոնագիրներ եւ Տարեկան տեղեկագիրներ:([14].էջ136,154,164-[12])

5. «ՄՆՏԻԿԵԱՆ» Տպարան (վիմատպարան) -

Գահիրէ ,1898-1899

Տպարանը հաստատուած է Մնտիկեան Եղբայրներու կողմէ 1898-ին:

Հիմնարկը Գահիրէի խոշորագոյն տպարաններէն հանդիսացած է, օժտուած ըլլալով իր ժամանակի կատարելագործուած մեքենաներով եւ գունաւոր վիմատպագրութեան կարելիութիւններով: ([9]. էջ 199)

Տպարանը գործած է զանազան լեզուներու տպագրութիւններով եւ խաւաքարտէ գունաւոր տուփերու պատրաստութեամբ:

Այստեղ տպագրուած են «Փիւնիկ» կիսամսեայ հանդէսի թիւ 3-էն 14 համարները 1899-ին, նաեւ Միհրան Տամատեանի «Ներշնչումներ Ազգային եւ Յեղափոխական Արդի Կեանքէ» (1898), «Հայն ու թուրքը եւ արեւելեան խնդիրը» (1899) հատորները:

Տպարանը յանկարծ փակուած է Նոյեմբեր 1899-ին: (Ը.1899, թիւ 44)

6. «ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ» Տպարան -

նաեւ «ԱՐՇԱԼՈՅՍ» Տպարան - Գահիրէ , 1900 -1914

Տպարանը հիմնուած է 1 Մայիս 1900-ին Եղիշէ Թորոսեանի կողմէ եւ անուանուած իր վաղամեռ դստեր Արշալոյսի անունով:

Հաստատուած է Շարա Ապտիւլ Ազիզի սկիզբը, Օսմանիյէ դեղատան դիմացի փողոցին Շերիֆ Փաշային պարտեզին մօտ: (Ը.1900, թիւ 76)

Հետագային, տպարանին հասցէն եղած է Մոհամետ Ալի փողոց, Սիթատէլ երկարող թրամվէյի գծին վրայ, Հարթ-Էլ-մատապէկ Էլ Գատիմա թիւ 40 (տիար Մինաս Շիրինեանի յարկաբաժնին մէջ): (Ը.1914, թիւ 25)



Տպարանը ճանչցուած է նաեւ «Արշալոյս Լրագրի Տպարան», «Ազգային Տպարան (Արշալոյսի)», «Ժողովրդական Տպարան» եւ «Տպարան-Թղթավաճառատուն Արշալոյս» (1 Սեպտեմբեր 1900) անուններով:

Եղիշէ Թորոսեանի խմբագրած «Արշալոյս» թերթին գրաշարը եղած է անոր

կինը Մաքրուհի Քիչիքեան, ճանչցուած՝ իբրեւ երրորդ հայ գրաշարուհին հայկական տպարանական ասպարեզին մէջ: ([31]. էջ 188)

Դժուար նախաքայլերէ ետք, տպարանը յառաջընթաց ունեցած եւ տպագրած է տարբեր լեզուներով գիրքեր, թերթեր եւ կատարած առեւտրական հրատարակութիւններ: ([9]. էջ 199)

Եղիշէ Թորոսեան 1897-1899 եղած է Գահիրէի Խորէնեան Վարժարանի երաժշտութեան ուսուցիչը: Ան, հրատարակած է «Յիշատակարան» մը, նուիրուած՝ Աղեքսանդրիոյ մէջ Նուպար Փաշայի արձանին բացման հանդիսութեան առթիւ 1904-ին: ([24]. բ.հտր. էջ 457)

Տպարանին վարիչ-մատակարարը եղած է Գէորգ Փափագեան, իսկ գրաշարը՝ Պ.Յովսէփ (1901):

Տպարանէն լոյս տեսած են «Արշալոյս» (1900-1905/1908-1914) լրագիրը, «Ժողովուրդ» (1904) եւ «Հորիզոն» (1906) պարբերականները: ([14]. էջ 16,24,40)

7. «ՄԻՈՒԹԻՒՆ» կամ «ԹՈՐԳՈՍ ՓԱՓԱԶԵԱՆ» Տպարան - Գահիրէ, 1900 - 1901

Տպարանը հաստատուած է 1900-ին, սեփականատէր եւ տնօրէն Թորգոմ Փափագեանի նախաձեռնութեամբ, հասցէ ունենալով Ապտին փողոց, Մուգաթթամ լրագրի դիմաց, Գահիրէ:

Տպարանը գործած է նաեւ «Նոր Օր» տպարան անունով:



Տպագրութիւնը կատարուած է հայերէն եւ եւրոպական լեզուներով ամէն տեսակ հրատարակութիւններու, պարբերաթերթերու, յայտարարութիւններու, հաշուեցուցակներու, եւ այլն: Յանձնարարութիւնները կատարուած են փութով եւ ճաշակաւոր տպագրութեամբ, չափաւոր գիներով:

Տպարանը գոյատեւած է դժուարին նիւթական պայմաններու տակ, տառապելով գրաշարներու պակասէն: ([9]. էջ 200)

Տպագրուած են «Նոր Օր» լրագրին Ա.տարեշրջանի կարգ մը համարները:

8. «ԱՐՏԷՄԻՍ» Տպարան - Գահիրէ, 1902 - 1903

Տպարանին սեփականատէրը 1902-ին եղած է մտաւորական ուսուցչուհի Մառի Պէլլերեան (Տիկին Աւօ Նազըշճեան), Հայերէն լեզուի ուսուցչուհիներէն՝ Գահիրէի Խորէնեան եւ Գալուստեան Ազգային Վարժարանի:

«Արտէմիս» լրագրի հրատարակութեան առթիւ, տպարանը հաստատուած է Քանթարա-Կէտիտ, Գահիրէ հասցէին, արտօնատիրութեամբ՝ Շ.Շիշմանեանի:


Լրագիրը առաջին տարին ունեցած է 700 բաժանորդ:



Տպարանն լոյս տեսած են հայերէն ամէն տեսակ աշխատութիւններ, հանդէսներ, գիրքեր, շրջաբերականներ, նամակագրութիւններ, հրաւերագիրներ եւ այցեքարտեր: Կատարուած են նաեւ առեւտրական գործառնութիւններ, գիրքերու եւ զանազան լեզուներով տպագրութիւն: ([9]. էջ 200)

9.«ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ» Տպարան - Գահիրէ , 1904

Տպարանը հիմնուած է 1904-ին, նախաձեռնութեամբ Աւետիս Պալեանի, լոյս ընծայելու համար իր խմբագրած «**Ժողովուրդ**» քննասիրական երկշաբաթաթերթը: Առաջին առթիւ տպագրուած են «Ժողովուրդ»ի թիւ 10 եւ 11 համարները (30 Մայիս – 15 Յունիս 1904): ([14]. էջ 24 – ԺՁ1. 1904, թիւ 11)



«Ժողովրդական» տպարանի անդրանիկ հրատարակութիւնը եղած է 21 էջնոց «Յայտագիր-Կանոնագիր Համազգային նախնական եւ երկրորդական երկսեռ վարժարանի 1904-1905 դպրոցական տարի» պրակը:

([24]. գ.հտր., էջ 409 - ԺՁ1. 1904, թիւ 15/16)

Գրաշարական եւ նիւթական դժուարութիւններու պատճառով լրագիրն ու տպարանը փակուած են Դեկտեմբեր 1904-ին: «Ժողովուրդ»ի վերջին թիւ 22-ը լոյս տեսած է 30 Նոյեմբեր 1904-ին:

10.«ԼՈՒՍԱՔԵՐ» Տպարան - Ադեքսանդրիա , Գահիրէ , 1904 -1909

«ԼՈՒՍԱՔԵՐ-ԱՐԵՒ» Տպարան - Գահիրէ , 1909 -1913

Տպարանը հիմնուած է Տոքթ.Կարապետ Փաշայեան Խանի նախաձեռնութեամբ Կիպրոսի Որբանոցէն Ադեքսանդրիա բերուած տառերով եւ Գահիրէ փոխադրուելով՝ 1904-ին հաստատուած է «**Լուսաքեր**» թերթի հրատարակութեան համար:

Գահիրէի մէջ, տպարանին հիմնադիրները եղած են Տոքթ.Նազարէթ Քէչէճեան, Վահան Քիրքճեան եւ Յարութիւն Ճէպէճեան: ([31]. էջ 189)

Տպարանը վերանուանուած է «**Լուսաքեր-Արեւ տպարան**», ուր տպագրուած է «**Լուսաքեր-Արեւ**» թերթը 1909-ին:

«Լուսաբեր-Արեւ» տպարանին մէջ տպուած է Ագնես Մ.ի «Երկրաշինութեան Պետքը» 36-էջնոց գրքոյկը 1910-ին: ([12]. թիւ 101)




Տպարանը 1 Յունուար 1913-էն հաստատուած է թիւ 17, Մատապէկ փողոց հասցէին, Պանք Նասիոնալին դիմաց (Ժուրնալ Տիւ Գեո-ի ներքեւ): Իսկ, «Լուսաբեր-Արեւ» թերթին խմբագրատան հասցէն եղած է թիւ 19, Էլ Մանախ փողոց, Ա.յարկ («Զօլա» լուսանկարչատան վերեւ): (ԺԷ, 1912, թիւ 24)

11.«ՍՖԻՆՔՍ» Վիմագրատուն - Գահիրէ, 1905-1911

Տպարանին հիմնադիրը եղած է Արմենակ Մանուկեան 1905-ին, գործակից վարիչ ունենալով Ռեթէոս Մուրատեանը:

Հաստատութեան հասցէն եղած է Խալիկ Փողոց, Գահիրէ: ([31]. էջ 189)

Տպարանին գրաշարներէն եղած է Նուպար Սափրիչեան, իսկ տպագրիչը՝ Արմենակ Մանուկեան:



«Սֆինքս» տպարանէն լոյս տեսած են Մալխասի «Էսքիճի Կարօ» (1905) , Աղասիի «Զէյթունի Հերոսները» (1906) և «Կանոնագիր Արաբկիրի Կրթասիրաց Միութեան» (1911) հրատարակութիւնները: ([12]. թիւ 48,56,117)

12.«ՓԱՓԱԶԵԱՆ ԵՒ ՏԻՐԼԻԿ» Տպարան - Գահիրէ, 1906

Տպարանէն 1906-ին լոյս տեսած է Ռ.Ալիքեան(Ռ.Որբերեան)ի «Ծփանքներ» հատորը: ([31]. էջ 189 – [12]. թիւ 55)

13.«ԹՈՓԱԼԵԱՆ» Տպարան - Գահիրէ, 1908

Տպարանին հիմնադիր-սեփականատէրը 1908-ին եղած է Գ. Թոփալեան:

Այստեղ լոյս տեսած են զանազան լեզուներով հրատարակութիւններ:



Հրատարակուած է Հրանդ Ալատիւնի խմբագրած «Նշտրակ» քննասիրական պարբերականը (3 թիւ, 1908): ([9]. էջ 200 – [14]. էջ 58)

14. «ԶԱՐԵՀ Ն.ՊԵՐՊԵՐԵԱՆ» Տպարան - Գահիրե, 1909-1926

Տպարանին հիմնադիրը եղած է Զարեհ Ն.Պերպերեան 1909-ին, սկիզբը գործակից ունենալով Աստիկ Զատեանը 1911-1912-ին (հետագային բաժնույժ)։

Տպարանը հաստատուած է Գահիրեի Ապտին թաղաշրջանի Էլ-Թուպկի Փողոց թիւ 12, հասցէին (Մինեմա «Իտէալ»ի կից, Ոստիկանատան դիմաց) եւ հետագային փոխադրուած՝ Իպրահիմ Փաշա Փողոց։

Պերպերեան մայր տպարանը հաստատուած է Պոլսոյ մէջ 1882-ին։

Տպարանին գիրքերու հաւաքածոյին մաս կազմած են այլազան հայերէն, արաբերէն եւ ֆրանսերէն տառեր եւ տպագրական զարդեր։ (ԻԳ1.1912, թիւ 32)




Այստեղ տպագրուած են Սուրեն Պարթեւեանի «Եգիպտահայ Տարեցոյցը» Ա.(1914) , Բ.(1915) և Գ.(1916) եւ «Անապատին Յուշարձանը»(1916), ինչպէս նաեւ «Մալէշ»(1911), «Անցած Դարձածներ»(1911-1912), «Հոսանք»(1912) պարբերականները եւ «Գալուստեան Միութիւն» կիսամեան (1913)։ ([14])

Տպագրուած են աւելի քան 60 կանոնագիրներ, տեղեկագիրներ, օրացոյցներ եւ վիպային հատորներ։

15. «ՄԻՈՒԹԻՒՆ» Տպարան - «Հ.Բ.Ը.Մ.ի ՍԵՓԱԿԱՆ» Տպարան Գահիրե , 1912-1933

Տպարանը հաստատուած է Գահիրեի մէջ 1912-ին, նախաձեռնութեամբ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, լոյս ընծայելու համար «Միութիւն» պարբերականը (1912-1928 Գահիրե) ։



Տպարանը հիմնուած է Վահան Մալեգեանի ջանքերով եւ գործած՝ անոր անմիջական հսկողութեանը տակ, Արտաշէս Ազապլարի գրաշարապետութեամբ։

Հիմնարկը հաստատուած է Տիգրան Փաշայի պարտեզին կից մասնաւոր շէնքի մը մէջ։ ([31]. էջ 189)

Այստեղ տպագրուած են Հ.Բ.Ը.Մ.ի «Տարեկան Տեղեկագիր»ները (1912-էն սկսեալ), «Հ.Բ.Ը.Մ.ի Գործապատումը» (1919), «Հ.Բ.Ը.Մ.ի Ոսկեմատեան»ները (1914 և 1933), ինչպէս նաեւ Հ.Բ.Ը.Մ.ի կանոնագիրներ, հաշուեկշիռներ եւ հրատարակած հատորները։ ([12] – [14])

16. « Յ Ո Ւ Ս Ա Բ Ե Ր » Տպարան - Գահիրե , 1913-2008

Տպարանը հաստատուած է 1913-ին, նախաձեռնութեամբ «Յուսաբեր»ի հիմնադիր Արմենակ Մեօթեմէտեանի, թերթին հրատարակութեան նպատակով:

Հասցէն եղած է Մատապէկ փողոց, Գահիրե, «Ժուրնալ տիւ Գեր»ի խմբագրատան ներքեւ: (Լ.1913, թիւ 89)



«Յուսաբեր»ի խմբագրութիւնը, վարչութիւնը և տպարանը հետագային հաստատուած են հետեւեալ հասցէներուն .

*Պոքսա Էլ Կէտիտա Պոդոտայ (Պոքսա Խըտիվեալի շէնքին ետեւ), ** թիւ 27, Մադրապի փողոց, Գահիրե, B.P.868 (1929) , *** թիւ 4, Քամէլ փողոց, Գահիրե (1932) , **** թիւ 4, Իպրահիմ Փաշա փողոց, Գահիրե (1935), և ***** թիւ 56, Թէրաս Էլ Պուլաքէյա փողոց, Քուլալի, Գահիրե (1952):

«Յուսաբեր»ի տպարանը 1952-ին հաստատուած է նորակառոյց «Յուսաբեր»ի Տան մէջ, օրաթերթին խմբագրատան, տնօրէնութեան, վարչական գրասենեակներուն եւ գրատան բաժիններուն կողքին, օժտուելով ժամանակի տողաշարական արդի կազմաձևերով ու տպագրական մեքենայով:

Նոր տողաշար կազմաձևերով եւ Արտաշէս Ագապլարի գրաշարապետութեամբ լոյս տեսած է «Յուսաբեր»ի 27 Յունիս 1953-ի համարը եւ Մովսէս Խորենացիի «Հայոց Պատմութիւն» 600 էջոց հատորը:



Վարչական պատասխանատու եղած է Գէորգ Զեքիճեան (1927-1948)

Գրաշարներէն եղած են

Արտաշէս Ագապլար (գրաշարապետ), Գասպար Աժտէրիսանեան, Ազատ Խաչատուրեան, Դաւիթ Շահլամեան (1929-1932), Արմենակ Խաչատուրեան (մինչեւ Յունիս 1947), Հայկ Հաճի Պօղոսեան, Վարդգէս Տէօվլէթեան (մինչեւ 1948), Յարութիւն Գարաճեան, Պետրոս Միտիկեան, Միրիճան Մանավեան, Սարգիս Զերտէլեան, Մկրտիչ Սէփէթեան, Արմենակ Մանուկեան, Սարգիս Խըրիսչեան, Հայկազ Առաքէլեան, Ստեփան Գոյումճեան, Յովհաննէս Մասմանեան եւ Սարգիս Մասմանեան:

Տպարանը 1945-էն հովանաւորութիւնը վայելած է «Յուսաբեր» Մշակութային Ընկերակցութեան:

«Յուսաբեր»ի տպարանն լոյս տեսած են «Յուսաբեր» երկօրեայի եւ օրաթերթի համարները եւ «Յուսաբեր» ամսագիրը (1944-1948): Հրատարակուած են «Յուսաբեր» Մատենաշարի 1923-էն սկսեալ հարիւր հատորները: Տպագրուած են «Յուսաբեր»ի տարեկան օրացոյցները, բազմաթիւ գիրքեր, կանոնագիրներ, տեղեկագիրներ եւ ձեռնարկ-հանդիսութիւններու յայտագիր-պրակներ: ([12]-[14])

Տպարանին մէջ տպագրական աշխատանքը դադրած է 2008-ին:

17.«Մ.ՇԻՐԻՆԵԱՆ» Տպարան – Գահիրէ , 1915-1923

Տպարանը հիմնած եւ սեփականատէրը եղած է Մ.Շիրինեան 1915-ին:

Տպարանին մէջ հրատարակուած են Վարդան Չագարեանի եւ Սուրէն Պարթեւեանի գիրքերը (1915) եւ «14 Գաղթականներու Կադանդէքը» պրակը (1915):

Այստեղ լոյս տեսած են շարք մը օտար լեզուներով հրատարակութիւններ:

1923-ին կատարուած է «Արշին Մալ Ալան»ի Բ.տպագրութիւնը:([12].թիւ 321)

18.«ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ» Տպարան - Գահիրէ , 1916 -1962

Տպարան-Կազմատուն եւ Գրատան հիմնադիր-սեփականատէրը եղած են Յակոբ եւ Վահրամ Գալէմքեարեան եղբայրները 1916-ին:

Տպարանը յաջորդաբար հաստատուած է * Պէրքէթ-Էլ-Պաքարա Փողոց, թիւ 11, Ֆակկալա (1930) - ** Թէվֆիք Փողոց, թիւ 25 (1931), ***Սուլթան Հիւսէյն Փողոց, թիւ 3, Հէլիոպոլիս (1933), **** Իսմայիլ Փողոց, թիւ 22 , Հէլիոպոլիս (1940)



Վահրամ Գալէմքեարեան 1962-ին Գանատա գաղթելով, տպարանատիրութիւնը ստանձնած է եղբայրը՝ Յակոբ Գալէմքեարեան եւ կարճ ժամանակ ետք, տպարանը փակուած է:

Տպարանէն լոյս տեսած են «Փունջ» Մանկապատանեկան (1928), «Աշխատանքի Կոչ» (1932) , «Լոյս» (1936) , «Ազատ Միտք» (1936-1937 , Արշամ Տատրեանի «Բանաստեղծին Ձայնը» (1938), Հ.Բ.Ը.Մ.ի «Ամսօրեայ Տեղեկագիր»ները (1938-1942), «Հրեղէն Միւն»(1940), «Բարի Լուր»(1948-1954) պարբերականները, նաեւ «Համագգային» (1936) եւ «Մեծ Մասիս» (1939) տարեգիրքերը: ([14])

Յիշարժան է «Սահակ-Մեսրոպ» տպարանին «Պատանիին Գրադարանը» անունով շաբաթական հրատարակութիւններու Ա.Բ.Գ.Դ. շարքը, իւրաքանչիւրը 12 թիւով (1931-էն 1933), նաեւ լոյս տեսած են այլ բազմաթիւ եւ անթուակիր 13 հրատարակութիւններ:


19. «ՅՈՅՍ» Տպարան - Գահիրէ ,1916

Տպարանին հրատարակութեամբ լոյս տեսած են «Գրիգոր Համբիկեան»ի 32 էջնոց գրքոյկը(1916) եւ «Եգիպտահայ Օրացոյց 1917»-ը: ([12]. թիւ 201,203)

20. «ՈՍՏԱՆ» Տպարան - Գահիրե , 1917-1920

ՍՈԿՐԱՏ ՍԱՐԴԱՖԵԱՆ և ԸՆԿ. Տպարան - Գահիրե

Տպարանին հիմնադիրը եւ սեփականատերը 1917-ին եղած է Սոկրատ Սարգսյան, հաստատուելով թիւ 22, Մանախ փողոց, Գահիրե հասցէին:



Այստեղ լոյս տեսած են «Անապատին Յուշարձանը» (1907, Բ.հտր.), «Նշոյլներ» (1916) եւ «Մժղուկ» (1917) պարբերականները, ինչպէս նաեւ զանազան առիթներու պրակներ եւ օտարալեզու գրքոյկներ: ([14]. էջ 108,110,118)

21.«ՈՍԿԵՏԱՌ» Տպարան - Գահիրե , 1918-1966, 1966 -

Տպարանին հիմնադիրը եղած է Երուանդ Մարլեան 1918-ին, Գահիրեի Ֆակ-կալա թաղաշրջանին մէջ, ընկեր ունենալով Արմենակ Մանուկեանը մինչեւ 1933:

Նախապէս, Երուանդ Մարլեան 1914-ին Գահիրեի Մոհամետ Ալի թաղին մէջ հիմնած է փոքր գրաշարատուն մը, ընկերակցութեամբ Գրիգոր Համբիկեանի եւ Ե.Քերէսթէճեանի: Այստեղ, 1915-ին հրատարակուած է «Խարաշօ» շաբաթական երգիծաթերթը քանի մը թիւով: Համեստ այս տպարանը փակուած է 1916-ին:

([8]. էջ 185)



«Ոսկետառ» տպարանը յաջորդաբար տեղափոխուած է *1923-ին Էմատ Էլ Տին փողոց , ** 1930-ին՝ թիւ 4, Կալալ Փողոց (Մելքոնեան Գործատան կարգին, Քօզմօկրաֆի ետեւի փողոցը) , *** 1931-ին՝ Սոլիման Փաշա փողոց եւ **** 1933-ին իր վերջնական կայքը՝ Զաքարէյա Ահմետ փողոցի (Ատէսի շէնք) ներկայի հասցէին:

([23]. էջ 11)

Տպարանին վարիչ-տնօրէնուհին եղած է Ատրինէ Մարլեան մինչեւ 1966: Ժամանակի մը համար հսկիչ եղած է Յաբէթ Հայրապետեան, իսկ գրաշարապետ-խմբագիրը՝ Ստեփան Համամճեան:

Գրաշարներէն եղած է Գառնիկ Ստեփանեան (1925-1930):

«Ոսկետառ» տպարանին մէջ, Երուանդ Մարլեան 1919-էն 1971 հրատարակած է «Մաւառնակ» երգիծաթերթը, նաեւ անոր «Զերլին» շաբաթական յաւելումը՝ 1931-էն 1937, արտօնատիրութեամբ իր Տիկնոջ՝ Ատրինէի:

Այս շրջանին, տպարանը յիշուած է նաեւ իբրեւ «Տպարան-վիմագրատուն Ոսկետառ» անունով:

1965-ին, տպարանին տիրութեան ձեռնփոխութիւնը կատարուած է և 1 Մայիս 1966-էն տէրերը եղած են Նորայր Տեօվլէթեան եւ Պերճ Թերզեան: (ԼԸ.1966, թիւ 15)
1969-էն տպարանին սեփականատէրը եղած է Նորայր Տեօվլէթեան:



«Ոսկետառ» տպարանէն լոյս տեսած են բազմաթիւ պարբերականներ եւ Սոկրատ Սարրաֆեանի թարգմանած վէպերուն հատորները, «Ջահակիր» գրական հաւաքածոյին Ա. գիրքը (1919), «Ջահակիր» տարեգիրքը (1948), «Ոսկետառ» Մատենաշար»-էն՝ Աշոտ Պատմագրեանի հեղինակած «Գանձարան Հայ Երգերու» 6 հատորները (1940), Գրիգոր Մամուր Ֆաթիմիի Երազահան, Կախարդագիրք, Բախտագուշակ եւ այլ «Համայնագիտարան»ները (1935-1937), եւ բազմաթիւ հայերէն նաեւ օտարալեզուով գիրքեր, կանոնագիրներ, տեղեկագիրներ, ձեռնարկներու պրակներ:

([12] – [14])

22.«Գ.ՃԻՀԱՆԵԱՆ» Տպարան - Գահիրէ , 1919 -1921

Տպարանին հիմնադիրը եղած է Գրիգոր Ճիհանեան 1919-ին, հաստատուելով Քասր Էլ Նիլ Փողոց, Գահիրէ (Օռոգտի-պաքի կից) հասցէին:

([14]. թիւ 136 – ԻԴ1.1921)



1919-ին, «Գ.Ճիհանեան» տպարանին մէջ տպագրուած են Թովմաս Մկրտիչեանի «Տիգրանակերտի Ջարդերը եւ Քիւրտերու Գազանութիւնները» հատորը, «Ջարթօնք» կիսամսեային քանի մը համարները (1919), Վարդան Գեորգեանի «Ջահակիր» կիսամսեային Բ.գիրքը (1919, նաեւ Վարդան Չազարեանի «Մարտիկ Աղա» երգիծաթերթի 4-էն 25 համարները (1921):

([12] – [14])

23.«ԵՓՐԱՏ» Տպարան - Գահիրէ, 1920

Տպարանէն լոյս տեսած է «Մակացոյց Ս.Աստուածածին Եկեղեցւոյ Առաջնորդարանի, Ս.Մինաս մատրան և Ազգ.Գերեզմանատան» 12 էջնոց պրակը 1920-ին:

([12]. թիւ 300)

24.«ՎԱՐԴԱՆ ՉԱԳԱՐԵԱՆ» Տպարան – Գահիրէ ,1921

Տպարանը հիմնուած է 1921 Յունուարին, զաւեշտագիր Վարդան Չազարեանի կողմէ, տպագրելու համար իր խմբագրած «Մարտիկ Աղա» պարբերաթերթը:

Պայմաններու բերումով, տպուած են զաւեշտաթերթին միայն առաջին 2 թիւերը:



Չագարեանի տպարանը փակուած է շատ շուտով, եւ իր զաւեշտաթերթը շարունակուած է լոյս տեսնել «Ճիհանեան» եւ «Փարոս» տպարաններէն, մինչեւ Դեկտեմբեր 1921 (42 թիւ): ([14]. էջ 136)

25.«ԹՈՒՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ և ԸՆԿ.» Տպարան - Կազմատուն - Գահիրէ , 1922 - 1960ականներ

Տպարանը հիմնուած է Արշակ և Արմենակ Թուրեան եղբայրներու կողմէ 1922-ին, հաստատուելով թիւ 7, Մատապեղ փողոց (Մազլում Փաշայի շէնքին մէջ):

Տպարանէն լոյս տեսած է Փրոֆ.Բ.Ս.Մէլիքեանի հայաստան «Ուղերձ»ը 1922-ին: ([12]. թիւ 314)

Հաստատութիւնը ճանչցուած է իբրեւ նրբաճաշակ կազմատուն, տպագրելով նաեւ զանազան լեզուներով հատորներ:

26.«ԱՐԳՈՍ» Տպարան - Գահիրէ , 1924 - 1977

Տպարանին հիմնադիրը, Տէր եւ Տնօրէնը, հրատարակիչը եւ գործող տպագրիչը եղած է Սուրատ Սարրաֆեան 1924-ին, իր եղբոր Սարգիսի հետ:

Տպարանը հաստատուած է *թիւ 16, Թէվֆիք փողոց, **թիւ 8, Էլֆի Պէյ փողոց ***թիւ 10, Չաքարիա Ահմէտ փողոց, Գահիրէ, - Փոստարկի թիւ 1749: (ԺԸ. էջ 168)



Սուրատ Սարրաֆեան նախաձեռնած է թարգմանչական աշխատանքի եւ 1934-ին հիմնած «Արգոս» հրատարակչական ընկերութիւնը: Ան, «Տարգոս» գրչանունով եւ իր թարգմանութեամբ հրատարակած է շաբաթական պրակներով 43 հատորներ, որոնցմէ 27-ը անթուակիր են: ([12]. էջ 186-189)



Հետագային, տպարանին տէրը եւ տնօրէնը եղած է Գառնիկ Յակոբեանը, որուն արտօնատիրութեամբ լոյս տեսած եւ տպագրուած է «Հոկտեմբեր» ամսագիրը (Նոյ.1974 - Հոկտ.1977): ([14]. էջ 310)

Տպագրուած են Հ.Բ.Ը.Մ.ի «Տեղեկատու» պարբերականին 1968-էն 1975-ի համարները: Իսկ «Փափագեան» տպարանին գործակցութեամբ լոյս ընծայուած է Արմենակ Պետեւեանի պատկառելի «Պատկերագրող Բազմալեզու Բուսաբանական Բառարան»ին (1936): ([14]. էջ 290 – [12]. թիւ 762)

27.«ՅԱԶԱՊԼԱՐ» - «ՄԱՍԻՍ» Տպարան - Գահիրէ , 1926 -1932

Տպարանը հիմնադիրը եղած է գրաշարապետ Յ.Ազապլար 1926-ին:



Կոչուած է նաեւ Տպարան «ՄԱՍԻՍ» եւ հաստատուած՝ Գահիրէի Ֆակկալա թաղաշրջանին թիւ 8, Քար-էլ-լուլուա փողոցի հասցէին :

«Յ.Ազապլար» տպարանէն լոյս տեսած են Գրիգոր Նարեկացիի «Նարեկ»ը (1926), Արմէն Շիտանեանի «Թամարա» վէպը (1930), նաեւ «Փունջ» պարբերականի 1930-ի համարներ, իսկ «Մասիս» տպարանէն՝ երեք հատորներ: ([12]. թիւ 413,491)


28.«ԱՄԻՐԱՅԵԱՆ և ԸՆԿ.» Տպարան - Գահիրէ , 1926 -1940

Տպարանին հիմնադիրը եղած է Արամ Ամիրայեան 1926-ին: Հետագային, սեփականատիրութիւնը ստանձնած է «Ռօզ Մաթոսեան և Ընկ.»ը, 1940-ին:

Տպագրուած է Արշակ Սեղոսեանի «Առեւտուր եւ Հաշիւ» Ա.հատորը, 1936-ին: Ընդհանրապէս եղած է առեւտրական գործառնութիւններու հաստատութիւն:

29.«ԼՈՒՍԱՐԶԱԿ» Տպարան - Գահիրէ , 1926-1928

Տպարանը հաստատուած է Ս.Դ.Հ.Կ.ի Գահիրէի Մասնաճիւղին նախաձեռնութեամբ, հրատարակելու համար «Լուսարձակ» շաբաթաթերթը (1926-1928, 1-94 համար), արտօնատէր ունենալով Սարգիս Մուսայէլեանը: (ԺԹ.1927)



Տպարանին հասցէն եղած է թիւ 48, Ֆակկալա Փողոց - Գահիրէ:

Այստեղ տպագրուած են «Մֆինքս» շաբաթաթերթին Գահիրէի 1928-ի քանի մը թիւերը: Նաեւ «Համեմատական Դրութիւն» պրակը և Սուֆեան Յ.ի «Եգիպտոսի Հայ Մամուլութեան ու Իշխանները Ֆաթիմեան Շրջանին» գրքոյկը 1928-ին:

([14]. էջ 158 – [12]. թիւ 458)

30. «ՅԱԲԷԹ-ՊԱՂՏԱՍԱՐ» Տպարան - Գահիրէ, 1927-1937

«ՅԱԲԷԹ» Տպարան - Գահիրէ , 1946-1957

Տպարանին հիմնադիրը եւ սեփականատերը եղած է Յաբէթ Պ. Խարախան-եան 1927-ին, տպարանը հաստատուելով թիւ 11, Քանթարա ել Կետիտա Փողոց , Տարպ ել Կենէնա - Գահիրէ:

Հետագային, տպարանին արտօնատերը եղած է Թադէոս Գալֆայեան:



Տպարանը Գահիրէի մէջ, յաջորդաբար հաստատուած է * թիւ 27, Մադրապի Փողոց , ** թիւ 133(12B), Տուպրէ փողոց , Թէվֆիքէյա , *** թիւ 1, Քասր ել Լու-լուա Փողոց Ֆակկալա, **** թիւ 107, Ռէն Նազլի Պողոտայ , ***** թիւ 2, Կալալ Փաշա փողոց, թատրոն Մաժէսթիքի դիմաց:

Տպագրուած են «Հրեղէն Սիւն» հոգեւոր՝ (1927-1933), «Կայծակ» մարմնակերպական՝ (1929-1930), «Համասպրամ» ընկերային՝ (1930 թիւ 1), «Զարթօնք» գրական (1939) պարբերականները, Յարութիւն Մանավեանի 1947,1948,1949,1951 եւ 1953ի «Սարկաւազին Տարեցոյց»ները: ([14]). էջ 172,180,182,230,174)

Լոյս տեսած են նաև 1928-էն 1937 թուականներուն՝ «Յաբէթ-Պաղտասար Տպարան»ի՝ թիւով 14 հրատարակութիւնները եւ «Յաբէթ տպարան»ի՝ թիւով 7 զանազան բնոյթի հատորները 1946-էն 1957 թուականներուն: ([12]. էջ 268)

31.«ԳԱԼՖԱ» Տպարան - Գահիրէ, 1932-1939

Տպարանին հիմնադիրը, Տէր եւ Տնօրէնը եղած է Գրիգոր Գալֆայեան 1932-ին, հաստատուելով թիւ 7, Քէնիսա ել Կետիտա Փողոց հասցէին:



Տպարանէն լոյս տեսած են «Ալպոմ» պատկերազարդ տարեգիրքը 1932-ին եւ «Գիր Եւ Արուեստ» եգիպտահայ պատկերազարդ եռամսեային միակ թիւը 1938-ին: Նաեւ՝ Փրոֆ.Յ.Թ.Գալպեանի «Բառարան Գանձարան Հայերէն Լեզուի»ն (1938) եւ կարգ մը հատորներ: ([12]. թիւ 529, 822,823,839,882)

Տպագրուած են զանազան առիթներու բացիկներ, արաբերէն եւ այլ լեզուներով արուեստի գործերու հրատարակութիւններ:

32.«ՅԱԿՈՒ ՓԱՓԱԶԵԱՆ» Տպարան - Գահիրէ , 1932-1946

Տպարանին հիմնադիր, Տէր եւ Տնօրէնը եղած է Յակոբ Փափազեան 1932-ին: Տպարանին հասցէն եղած է * Իպրահիմ Փաշա Փողոց (թիւ 6 , Հարէթ Ֆաիտ), իսկ հետագային՝ ** թիւ 3, Միտան Սուարէս, Գահիրէ:



Տպագրուած են «Հայ Դպրոց»ի 1938-ի պրակը , «Փունջ» Մանկապատանեկանի 1946-ի համարները, «Արմաւենի» Տարեգիրքը (1937-1938) եւ Յարութիւն Մանավեանի 1935-ի «Սարկաւագին Տարեցոյցը» : Նաեւ, Վահան Զարդարեանի «Յիշատակարան Մատենաշար»ի պրակները (1932-1939) , Արշակ Ալպոյաճեանի «Պատմութիւն Հայ Կեսարիոյ» Ա. և Բ. հատորները (1937) , Հայր Ռ.Քօսեանի «Թուաբանութիւն» դասագրքերու Ա.էն Զ. շարքը (1937-1939) եւ զանազան վիպային հատորներ: ([12]. թիւ 774,775 - էջ 230, 246 – [14]. էջ 196,156,208,174)

Տպարանը մասնագիտացած է առաւելապէս առեւտրական տպագրական աշխատանքներու:

33.«ՆԵՂՈՍ» Տպարան - Գահիրէ, 1935-1952

Տպարանը հաստատուած է 1932-ին, Տէր եւ Տնօրէն ունենալով Արմենակ Զիլինկիրեանը («Արեւ»ի նախկին գրաշարապետը):



Հաստատութեան հասցէն եղած է թիւ 1, Կալալ փաշա փողոց (Մաժէսթիք թատրոնին ճիշդ դիմացը), ապա, թիւ 12 և հուսկ 25, Նեկիպ Էլ Բիհանի փողոց (Քանթարէթ Էլ-Տէքքա), Գահիրէ: (ԻԲ. էջ 163)

Տպարանէն լոյս տեսած են «Հայ Դպրոց» (Բ.հտր., 1935) եւ «Հազարումէկ Գիտելիքներ» (1938) պարբերականները, նաեւ «Էջեր Հայ Գրականութենէն» (Ա.հտր. 1942) եւ «Նեղոս» մատենաշարի հատորներուն շարքը:

([14]. թիւ 196,212,238 – [12]. էջ 262)

Հետագային, տպարանը փոխանցուած է Պերճ Թուղլաճեանին:

Տպարանին գրաշարներէն եղած է Արմենակ Արսլանեան: (ԻԲ. էջ 94)

34.«ՄԻՆԷՎԷՊ» Տպարան - Գահիրէ , 1938

Տպարանին հասցէն եղած է թիւ 3, Տուպրէ փողոց , Գահիրէ: (ԻԲ. էջ 61)



Տպում էն, «Սինվէյ» մատենաշարի կողմէ թարգմանուած եւ հրատարակուած վիպային 8 հատորները 1938-ին, գրաշարութեամբ Միսակ Թօփալեանի:
([12]. էջ 262 – ԻԲ. էջ 123)

35.«ՍԵԻԱՆ» Տպարան - Գահիրէ , 1938-1940

Տպարանը հաստատուած է 1938-ին, Իպրահիմ Փաշա փողոց – թիւ 3, Հարէթ Ֆայէտ, Գահիրէ:



Տպարանէն լոյս տեսած են Գահիրէի Մտաւորական Սպասարկութեանց Գրասենեակի «Գրասէրի Առաջնորդ»ի Ա. և Բ. տետրերը(1938-1939), Ս.Ֆ.Գոնսիլեանի «Հազարամէկ Գիտելիքներ»ուն Բ.հատորը (թիւ11-20/1939) եւ Դաւիթ Շահլամեանի «Զարթօնք»ին Բ.հատորը (թիւ 6-10 / 1940), նաեւ Բ.Թաշեանի «Հայկարան» դասագիրքերէն (1940) եւ զանազան հատորներ:

([14]. 220,212,230 - [12]. էջ 238-239)

36. «ՆՈՒՊԱՐ» Տպարան - NUBAR PRINTING HOUSE -

Գահիրէ , 1939 -

«ՆՈՒՊԱՐ ՏԻՃԻԹԸԼ» Տպարան - NUBAR DIGITAL , 2003 -

Տպարանին հիմնադիր-սեփականատէրը եղած է Պօղոս Սիմոնեան 13 Նոյեմբեր 1939-ին, թիւ 14, Ղէյթ Էլ նուպի փողոց (Սէտնաուի վաճառատան ետեւը) հասցէին:

Տպարանը հետագային յաջորդաբար հաստատուած է *թիւ 56, Խալլաթ Փողոց,Շուպրա, **Ապտ Էլ Ազիզ փողոց (Սինեմա Քարնաքի կից), ***Թէրաա Էլ Պուլաքէյա,Շուպրա (Մարտ 1959) եւ ****թիւ 6ա, Մատրասէթ Էլ Մուալլիմին փողոց, Ռօտ Էլ Ֆարակ, Գահիրէ:



«Նուպար» Տպարանը սկզբնական շրջաններուն գործած է իր ժամանակի կապառէ տառերու գործածութեան դրութեամբ , որուն հետեւած է վիմատպագրութեան կիրարկումը Խալլաթ եւ Ապտ Էլ Ազիզ փողոցներու իր վայրերուն մէջ:

1959-էն սկսեալ, Նուպար եւ Հրաչ Սիմոնեան եղբայրները իրենց հօրենական տպարանը օժտած են արդիական Ֆօթօ-Լիթօ-Օֆսէթ կազմածներով եւ նորագոյն տպագրական դրութեամբ:



Այստեղ տպագրուած են «Հայաստան Դարերու Ընդմէջէն» եւ Առաքել Պատրիկի «Նկարաշարք Հայ Կեանքէն»ը 1944-ին: ([12]. թիւ 998,1002)

Տպարանը մասնագիտացած է նաեւ խաւաքարտէ տուփերու շինութեան արուեստով, ինչպէս նաեւ խաղաքարտերու «Ամիր» մականիշի պատրաստութեամբ:

38. «ՆՈՐ ԱՍՏՂ» Տպարան - The New Star Press -

Գահիրէ , 1941-1962

Տպարանը հիմնուած է 1941-ին, Արշակ Ալպոյաճեանի եւ Սեպուհ Շալճեանի նախաձեռնութեամբ:

Արշակ Ալպոյաճեան տպարանին տնօրէնութիւնը ստանձնած է 1945-1949:



Տպարանը հաստատուած է *թիւ 7, Տարամալլի Փողոց ,Պապ Էլ Լուր ,Գահիրէ- Հեռ.52130 (1948) , իսկ 1957-ին՝ **թիւ 89, Յուլիս 26 Փողոց (Հարէթ Էլ-Լոքանտա), Պուլաք , Գահիրէ – Հեռ.58592:

Տպարանին մէջ գրաշարութիւն կատարած են Ազատ Խաչատուրեան եւ Յարութիւն Մոռալեան:

«Նոր Աստղ» տպարանէն լոյս տեսած են Գալուստեան Ազգային Վարժարանի «Տեղեկատու Պրակ»ին Բ. և Գ. թիւերը (1945-1946), «Կեանք եւ Գիր» գիրք-յիշատակարանի (Բ.տարի 1947ի) համարները, Հայկ Ժամկոչեանի կազմած «Կեանք եւ Գիր» տարեգիրքը (1948), Հ.Բ.Ը.Մ.ի «Տեղեկատու»ին Ա. և Բ. տարիները (1956-1957) եւ անոր յաւելուած՝ «Մանկական Տեղեկատու»ի միակ պրակը (1957): ([14]. էջ 248,246,270,290,292)

Տպագրուած են Արշակ Ալպոյաճեանի (1945-էն-1961), Գաբրիէլ Լազեանի (1946) եւ Վահան Թէքէեանի (1950) հատորները , Բենիամին Թաշեանի (1950-էն 1960) «Հայկարան»ներէն գիրքեր, «Մտաւորական Սպասարկութեան Գրասենեակ»ի և այլ հրատարակութիւններ: ([12]. էջ 193,199,200,201 և 265)

39. «ՆԱՍԻԲԻՊԵԱՆ» Տպարան - Գահիրէ , 1943



Տպարանին լոյս տեսած են Վահան Թեքեանի «Տաղարան» քերթումներու հատորը (1944), Մօ. Ե.Յակոբեանի պատրաստած «Հայկական Պատարագի Տաղեր եւ Մեղեդիներ» ձայնագրութեամբ հատորը (1963) եւ «Մահերգ Նահատակաց» պրակը (1965): ([12]. թիւ 994,1544,1560)

40. «ԹՈՐՈՍ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ» Տպարան եւ Զինկոկրաֆ - Գահիրէ, 1943-1970

Տպարանը հաստատուած է 1943-ին, Թորոս Խաչատուրեանի կողմէ, թիւ 2,- Ամիր Քաղատար փողոցի հասցեով (Քասր Էլ Նիլ կամուրջին մօտ: (ԻԲ. էջ 127)

Այստեղ լոյս տեսած է «Շարականք Ծաղկազարդի, Աւագ Շաբթու եւ Ս.Զատիկ» ձայնագրեալ գիրքը 1952-ին: ([12]. թիւ 1282)

Զանազան լեզուներով կատարուած տպագրական գործառնութեան կողքին՝ հաստատութիւնը ճանչցուած է իբրեւ Զինկոկրաֆ արուեստի մասնագիտացած հաստատութիւն:


41. «ԱՐԱՄ - ՊԷՐ» Տպարան - Գահիրէ, 1948

Տպարանը հիմնուած է Տիգրան Պերպերեանի կողմէ 1948-ին, ըլլալով՝ Զինկոկրաֆ արուեստի մասնագիտութեամբ գործող հաստատութեան մէկ ճիւղը:



Տպարանին լոյս տեսած են Դաւիթ Շահլամեանի «Կեանք եւ Գիր» Հայ երիտասարդութեան Գիրք-Յիշատակարանի Գ.հատորին համարները: ([12]. թիւ 246)

42. «ՎԻԹՈՐԻԱ» Տպարան - VICTORIA PRESS - Գահիրէ, 1963



Տպարանին սեփականատերը եղած է Պերճ Թուղլաճեան, տպարանը հաստատելով թիւ 25, Նէկիպ Էլ Ռիհանի փողոց, Գահիրէ հասցէին:

Այստեղ տպագրուած է Արմէն Տատուրի «Անապատի Խորերէն» հատորը (1963) եւ Հ.Բ.Ը.Միութեան «Տեղեկատու» պարբերականին 1963-ի 2,3 և 4 համարները: ([12]. թիւ 1549 – [14]. էջ 290)

43. «ԱՖՐԻՔԸՆ ՓՐԷՍ» Տպարան - AFRICAN PRESS -

«المطبعة الأفريقية» - Գահիրե, 1969 -

Տպարանին հիմնադիրը, Տերը և Տնօրենը եղած է Պերճ Թերզեան 1969-ին, հաստատուելով թիւ 15, Պուսթան Էլ Տէքքա փողոց, Էմատ Էլ Տին, Գահիրե հասցէին:



Հետագային, տպարանը արդիական սարքաւորումներով՝ հաստատուած է թիւ 2, Թերաա Էլ Իսմաիլէյա փողոցի հասցէին (Էլ Նէսիկ գործատան անկիւնը):

Տպարանէն լոյս տեսած են Հ.Բ.Ը.Մ.ի «Տեղեկատու» պարբերաթերթին 1976-էն 1981-ի համարները: Տպուած են նաեւ «Տեղեկատու»ի թիւերէն յօդուածներու «Յաւելուած» պրակները ([14]. էջ 290 – [12]. էջ 267)

Այստեղ տպուած են՝ Պերճ Թերզեանի հեղինակած, համադրած եւ մեկենասութիւնը ստանձնած հրատարակութիւններ: ([12]. էջ 267)

Տպարանը մասնագիտացած է խաւաքարտէ տուիւքրու եւ զանազան տեսակի քարտերու նորագոյն չափանիշերով գունաւոր տպագրութեան:

ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

ՀԱՅԱՏԱՌ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԱԾ ՕՏԱՐ ՏՊԱՐԱՆՆԵՐ

1.«ՆԻՔ ՔԱՐԹԵՐ» Տպարան - Գահիրե , 1915

Տպարանէն լոյս տեսած են Ալեքսանտր Տիւմայի «Ժօզէֆ Պալսամօ» վէպին երկրորդ, երրորդ եւ հինգերորդ հատորները (1915,1916): ([12]. թիւ 178,179,202)

2. «ՄԱՆԻՔԻՏԻՍ» Տպարան - MANIKIDIS PRESS - Գահիրե

Տպարանէն լոյս տեսած է Թովալեան մրցանակին արժանացած Հմայեակ Ս.Ազատեանի «Բաբելոնը» անունով կատակերգական երգախառն գրքոյկը (1918): ([12]. թիւ 252)

3. «ԷԼ ՆԻԼ ԿՐՕՆԱԿԱՆ» Տպարան -

THE NILE MISSION PRESS - Գահիրե

Էլ Մանախ փողոց թիւ 37, հասցեով այս տպարանէն լոյս տեսած են «Եկեղեցական Միութեան Համաժողով»ի երկու գրքոյկները 1921-ին: ([12].թիւ 303-4)

4. «ՖՕՍ» Տպարան - PHOS PRESS - Գահիրե




«Ֆոս» Յունարեն օրաթերթի թիւ 13, Կալալ փողոցի տպարանին մէջ տպուած են «Արեւ» օրաթերթի 27 Մարտ 1931-էն մինչեւ 1942-ի Մայիսի քանի մը համարները, ինչպէս նաեւ՝ «Կեանք Եւ Գիր» գիրք-յիշատակարան ամսագրին նոր շրջանի 1948-էն 1950-ի եռամեայ պրակները: ([14]. էջ 106,246)

5. «ՊԱՐՏԱՃ» Տպարան - IMPREMERIE BARDAGE - Գահիրե

Տպարանին մէջ տպուած են «Արեւ» օրաթերթի 22 Մայիս-28 Յունիս 1942-ի համարները: ([14]. էջ 106 – [5]. էջ 91)

6. «ՇՈՒՇԱ» Տպարան - «دار شوشه للطباعة» - Գահիրե



Թիւ 3, Էլ Սայետ Էլ Պէպլաուի փողոց, Ապտին թաղի հասցեով այս տպարանին մէջ, 1963-էն ի վեր տպագրուած է «ԶԱՀԱԿԻՐ» շաբաթաթերթը: ([14]. 262-264)

7. «ՓՕԼ ՊԱՐՊԷՅ» Տպարան -

Impremerie PAUL BARBEY - Գահիրե

Տպարանին հասցէն եղած է թիւ 8, Իպրահիմ Փաշա փողոց, Հարէթ Ֆայէդ, Գահիրե:



Հաստատութեան տպագրական գործերու հսկիչ եւ մեքենագործ եղած է Արշաւիր Մանավեան: (ԼԷ.1939,1949)

Տպարանէն լոյս տեսած են Յարութիւն Մանավեանի(Մարկաւազ) 1945-ի եւ 1946-ի «Եգիպտահայ Տարեցոյց»ները, Յակոբ Նալպանտեանի «Մեր Լեզուն» դասագիրքերու շարքը եւ Ալեքսանտր Սարուխանի ֆրանսատառ “LA CARAVANE” (Կարաւան) եռօրեայ երգիծաթերթին 1939-ի վերջին 15 համարները:

(ԼԷ.1945 և 1946 – [14]. էջ 350 – [12]. էջ 244)

8. «ՀԱՊԻՊ-ՄԱՆՍՈՒՐ» Տպարան -

HABIB-MANSOUR Press - Գահիրե

Տպարանին հասցէն եղած է թիւ 3, Հարէթ Էլ Զահար (Շէթըրծ Պանդոկին դիմաց) Գահիրե:



Այս տպարանն լոյս տեսած են «Աւետարանի Ձայն» Հայ Աւետարանչական Ընկերակցութեան կրօնաբարոյական ամսաթերթը (1939-1940) եւ Վահան Զարդարեանի «Յիշատակարան»-ին 1941-ի եւ 1942-ի տարեգիրքերը:
([14]. թիւ 222, 234)

9. «ՈՒԱՀՊԱ» Տպարան - IMPRIMERIE WAHBA - Գահիրէ



Ուահպա տպարանին հասցէն եղած է քաղաքակեդրոն Էլուի փողոց, Գահիրէ (Մարքօնի հաստատութեան դիմաց):

Յովհաննէս (Ժազ) Գալուքեան «Ուահպա» տպարանին մէջ տպած է Յովհաննէս Եաղճեանի «Երկու Սրտեր» անթուակիր վէպը: ([14]. թիւ 1870)

10. «ՓՐՕՔԱՅԻԱ» Տպարան - IMPRIMERIE PROCACCIA - Գահիրէ



Եգիպտահայ Ներգաղթի Կեդրոնական Կոմիտէին կողմէ հրատարակուած “Ծաղկեալ Ս.Հայաստան” պատկերներու *անթուակիր* ալպոմը լոյս տեսած է «Փրօքացիա» տպարանէն (1948?):
([12]. թիւ 1878)

11. «ՏՐԻՍ ՓՐԷՍ» Տպարան - DREAM PRESS - Գահիրէ

Տպարանն լոյս տեսած է Հայկ Աւագեանի խմբագրութեամբ եւ աշխատասիրութեամբ՝ Գահիրէի Հ.Բ.Ը.Մ.ի Ս.Ճ.Զաքրը Հիմնադրամի հրատարակութիւններու շարքին՝ Ալ.Սպենդիարեանի «Գուշակուհին» ձայնագրեալ պրակը, 2000-ին:
([12]. թիւ 1794)

12. «ԱՐԹ ՖԷՇՆ» Տպարան - مطبعة ارت فيشن - Գահիրէ



Տպարանին մէջ տպուած է Յովհաննէս Տէր Պետրոսեանի «Հայ Ժողովուրդին Գոյամարտը» աշխատասիրութեան Գ. հատորը, 2009-ին:
([12]. թիւ 1853)

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՏՊԱՐԱՆՆԵՐ

1.«ՂԵԻՈՆԴ ՔՀՆՅ. ՓԱՓԱԶԵԱՆ» Տպարան -

Աղեքսանդրիա, 1888-1889

Տ.Ղեւոնդ Քինյ. Փափազեան գրաշարութեան արուեստի մէջ ունեցած սիրողական հակումով, ձեռք բերած է տպագրական գիրերու հաւաքածոյ մը եւ զայն Եգիպտոս բերելով, տողաշարութիւն կատարած եւ Անտոն Ռշտունիի խմբագրութեամբ ու Վահան Մամասեանի վարչական գործակցութեամբ՝ Աղեքսանդրիոյ մէջ հրատարակած է տեղւոյն առաջին հայատառ «Նեղոս» լրագիրը: ([9]. էջ 196)



«Նեղոս» Շաբաթաթերթը տպագրուած է Ֆ.Միգրահիի «Ինիվերսալ» տպարանին մէջ եւ տեւած է 4 ամիս (18 թիւ), 2 Յունուարէն Ապրիլ 1889:

Թերթին հասցէն եղած է , Եգիպտական Փոստարկի թիւ 275, Աղեքսանդրիա, Եգիպտոս - Boite No.275, (Poste Egyptienne) Alexandrie - Egypte.

Ղեւոնդ Քինյ. Փափազեանի տպարանէն լոյս տեսած է 60 էջոց եգիպտահայ առաջին գրքոյկ՝ «Դատապարտեալն Շուշան» անունով վիպակը 1888-ին, Մկրտիչ Թիւրինճեանի հեղինակութեամբ:

Փափազեան Քահանային Եգիպտոսէն մեկնումով եւ գրաշարի չգոյութեան պատճառով, դադրած է նաեւ «Նեղոս»ի հրատարակութիւնը:

2. «Գ.ՆԱԶԱՐԷԹԵԱՆ» Տպարան-Փորագրատուն -

Աղեքսանդրիա , 1900 -1909

Տպարանը հիմնուած է 1900-ին, նախաձեռնութեամբ Գրիգոր Նազարէթեանի, հաստատուելով թիւ 16, Սթամպուլ փողոց, Աղեքսանդրիա հասցէին:




Տպարանը միաձուլուած է Սմբատ Բիրատի «Փիւնիկ» տպարանին հետ 1903-ին, անուանուելով «Սիսուան» Տպարան, որ չէ յարատեւած՝ Սմբատ Բիրատի բաժանումով: ([9]. էջ 201)

Այստեղ տպագրուած են «Ազատ Խօսք» (1906), «Մտրակ» (1908) պարբերականները, 1908-ի «Արեւ» լրագիրը եւ Երուանդ Օտեանի «Ոմանց Տարեցոյց»ը (1909): Նաեւ՝ հայերէն եւ օտար լեզուներով գիրքեր, թերթեր եւ առեւտրական թուղթեր:

3. «ԱՐԱՄ ՍՏԵՓԱՆԵԱՆ» Տպարան - Գահիրե , 1900 -1901

«ԱՐԱՔՍ» Տպարան-Աղեքսանդրիա, 1917, 1925-1965, 1970-

«Արամ Ստեփանեան» տպարանը հիմնուած է Գահիրեի մէջ 1900-ին, հիմնադիր-սեփականատէր-տնօրէն ունենալով Արամ Ստեփանեան անունով գրասէր երիտասարդը: Կարճատեւ շրջանէ մը ետք, տպարանը փակուած է եւ Աղեքսանդրիա փոխադրուած՝ անոր տիրոջ գրաշարութեան արուեստի հանդէպ ունեցած հետաքրքրուածութեան պատճառով:



Աղեքսանդրիոյ մէջ, Ստեփանեան ունեցած է համեստ նախնական տպարան մը, եւ 1916-1917-ին՝ տեղոյն գրասէր-ուսանողաց միութիւններուն հետ լոյս ընծայած է «Արաքս» անունով լրագրին երեք համարները:

Ստեփանեան, գրաշարապետութիւնը կատարած է 1915-ին հիմնուած «Արեւ» լրագրին, եւ տասնամեակ մը ետք, նախաձեռնած՝ «Արաքս» անկախ շաբաթաթերթին հրատարակութեան 1925-ին:

Այստեղ, տպարանը վերանուանուած եւ սկսած է գործել «ԱՐԱՔՍ Տպարան» եւ «Հայկական Տպարան Արաքս» անուններով, հաստատուելով Պոլսկար Ռամիէ թիւ 13 հասցէին: Այստեղէն, տպարանը փոխադրուած է թիւ 5, Մահմուտ Փաշա Ֆալաքի փողոց, իսկ 1928-ին՝ թիւ 7, Քլեովաթրա փողոց, Աղեքսանդրիա:

Տպարանը ստանձնած է ամէն լեզուներով տպագրական գործեր, ամենայն ճշտապահութեամբ եւ չափաւոր գիներով: (Ա.1904, թիւ 37)

Արամ Ստեփանեան յանկարծամահ եղած է Երուսաղէմ իր ուխտագնացութեան ընթացքին՝ 1947-ին: Շուարշ Ստեփանեան իր հօր մահէն ետք, տպարանին մէջ եւ մինչեւ իր հայրենադարձութիւնը՝ շարունակած է «Արաքս» Շաբաթաթերթի խմբագրութիւնը եւ գործակիցներու հետ ապահոված՝ թերթին մինչեւ 1965 եւ «Գրպանի Տարեցոյց»ներու (1941-1956) հրատարակութիւնը:



1970-ին, տպարանին տէրը դարձած է ժամանակի ծանօթ «Զինկոկրաֆ Ժիրայր» հաստատութեան տէր՝ Ժիրայր Ասորեանը: Տպարանին հասցէն եղած է եւ ցարդ կը գոյատեւէ՝ թիւ 17, Սիտի Մէթուալլի փողոց, Աթթարին թաղ, Աղեքսանդրիա:

Ներկայիս, տպարանը կը գործէ հայր եւ որդի Ժիրայր եւ Լեւոն Ասորեաններու սեփականատիրութեամբ եւ ղեկավարութեամբ:

Տպարանին լոյս տեսած են «Փիւնիկ»ի թիւերը (1901-1903), «Ազատ Խօսք»ի տետրերը (1902-1903), «Ժողովուրդ» (1-4 թիւ, 1903), «Թերթիկ» (1906), «Կրակ» (1906), «Սֆինքս» (1925-1927), «Արարա» (1926-1930), «Ամէնուն Գիրքը» (1937), «Տեղեկատուութիւն» (2 թիւ 1946), «Արաքս» (1925-1965) եւ այլ պարբերականներ ու լրագիրներ, նաեւ Մարտիրոս Ոսկեանի «Եգիպտահայ Տարեցոյցը» (1919), «Արաքս Մատենաշար»ի 22 վիպային հատորները, թարգմանութեամբ՝ Շաւարշ Ստեփանեանի (1927-1940) եւ «Գրականի Տարեցոյց»ները (1941-1956): ([14]

4.«ՓԻՒՆԻԿ» Տպարան - Աղեքսանդրիա, 1901-1903

Տպարանը հաստատուած է 1901-ին, Սմբատ Բիւրատի (Տէր Ղազարենց) նախաձեռնութեամբ, տպագրելու համար իր խմբագրած «Փիւնիկ» լրագրին շաբաթական համարները Աղեքսանդրիոյ մէջ (1901-1903):



Տպարանը միաձուլուած է «Նազարէթեան» Տպարանին հետ 1903-ին եւ կոչուած՝ «Սիսուան» Տպարան, սակայն միութիւնը չէ յարատեւած: ([9]. էջ 201)

5.«ԿԱՄՊԷԹԱ» Տպարան - Աղեքսանդրիա, 1902

«ԲԱՖՖԻ» Տպարան - Աղեքսանդրիա, 1907

Տպարանը հաստատուած և սեփականատէրը եղած է Տոքթ.Կարապետ Յ. Փաշայեան Խան 1902-ին :

«Կամպէթա» տպարանին լոյս տեսած են «Ազատ Խօսք»ի տետրերը (1902), «Հորիզոն» պարբերականը (1904), Հ.Բ.Ը.Մ.ի «Կանոնագիր»ը (1906) եւ «Տարեկան Տեղեկագիր»ը (Բ.տարի, 1908):


Հրատարակուած են նաեւ, Տոքթ.Կարապետ Փաշայեան Խանի «Դպրոցական Առողջապահութիւն»(1905), «Վիպական Հաւաքածոյ»ներուն 5 հատորները (1906) եւ Ղեւոնդ Եպս. Շիշմանեանի «Իմ Աքսորի Կեանքը» (1906):



«Կամպէթա» տպարանը շրջան մը 1907-ին գործած է խումբ մը երիտասարդներու ղեկավարութեամբ «ԲԱՖՖԻ» տպարան անունով եւ տպագրած՝ Հ.Բ.Ը.Մ.ի «Կանոնագիր»ը , «Տարեկան Տեղեկագիր»ը (1907) եւ Առանձարի «Փրկիչներ» թատերախաղը (1907): ([14]. թիւ 77 - [31]. էջ 190)

6. «ՄԻՍՈՒԱՆ» Տպարան - Աղեքսանդրիա, 1903 -1905

Տպարանը հաստատուած է 1903ին, «Նազարէթեան» և «Փինիկ» տպարաններուն միաձուլումով, սեփականատիրութեամբ Սմբատ Բիւրատի և Գրիգոր Նազարէթեանի:



Կարճ ժամանակ ետք, Սմբատ Բիւրատ քաշուած ըլլալով, տպարանը յարատեւած է «Գ.Նազարէթեան» Տպարան անունով: ([9]. էջ 201)

Այստեղ տպագրուած են «Փինիկ» եռօրեայէն համարներ 1903-ին և «Միսուն» պարբերականին երկու համարները, 1905-ին: ([14]. էջ 14,44)

7.«ՓԵԹԱԿ» Տպարան - Աղեքսանդրիա, 1903



Տպարանին հիմնադիր-սեփականատէրը եղած է Սեփոն Թիւֆէնկճեան 1903-ին, տպագրելու համար համանուն «Փեթակ» շաբաթաթերթը: ([14]. էջ 26)

8.«ԱՍՔԱՆԱԶԵԱՆ» Տպարան - Աղեքսանդրիա, 1903 -1904

Միհրան Ասքանազեան (նախորդ տնօրէնը Աղեքսանդրիոյ Ազգ.Վարժարանին) իր քեռայրին Լեւոն Մկրտիչեանի օժանդակութեամբ՝ Աղեքսանդրիոյ Պաքոսի շրջանին մէջ 1903-ին հիմնած է «Ասքանազեան» տպարանը, հրատարակելու համար «Պարտէզ» շաբաթաթերթը (1903-1904, 50 թիւ), և անոր յաւելուած՝ «Սուրհանդակ Պարտէզի» 10 թիւերը, 1904-ին: ([14]. էջ 32,34)



Ասքանազեանի անժամանակ մահով (Դեկտեմբեր 1904), Բարսեղ Օհանեան տպարանը գնած է 1904-ին և շարունակած՝ Երունդ Օտեանի «Ազատ Բեմ»ի հրատարակութիւնը: ([8]. էջ 189,247)

Տպարանին մէջ լոյս տեսած են նաեւ տարբեր լեզուներով թերթեր, գիրքեր և զանազան հրատարակութիւններ:

9. «ՀԱՅԵԼԻ» Տպարան-Գրատուն - Ադեքսանդրիա , 1903-1904

Տպարանին հիմնադիրը եղած է Տիրան Փափագեան 1903-ին, եւ մինչեւ իր մահը՝ Հոկտեմբեր 1904, տպագրած է «Հայելի» զանեշտաթերթը (թիւ 261-էն 304):

(Ա.1904 , թիւ 25)



«Տպարան-գրատուն Հայելի»-ն նաեւ լոյս տեսած է Մարք Դուէյնի «Մէկ Միլիոն Սղերլիննոց Պանքտոմար» հատորը 1904-ին:

([12]. թիւ 42)

10.«ԹԷՔԷԵԱՆ ԵՒ ԸՆԿ.» Տպարան – Ադեքսանդրիա , 1905

Տպարանը հաստատած է Վահան Թէքէեան եւ Ընկ.ը 1905-ին: Ընկերութեան հիմնադիրները եղած են Վահան Թէքէեան եւ Միքայէլ Կիրճեան, հրատարակելով համար «Շիրակ» պարբերականը (Ա.տարի,11 թիւ,Ադեքսանդրիա):

([31]. էջ189)



Տպարանէն լոյս տեսած է նաեւ «Օրէնք» օրէնսգիտական շաբաթական պարբերականը 1905-ին:

([14]. էջ 46)

11. «ԽՆԱՅՈՂԱԿԱՆ» (Imp. Economique) «ՏԱՄԱՏԵԱՆ»

Տպարան - Ադեքսանդրիա, 1910-1919

Տպարանը հաստատուած է Միհրան Տամատեանի կողմէ 1910-ին, թիւ 16, Ապու Տարտար փողոց, Ադեքսանդրիա, հասցէին:



Տպարանական գործերու պատրաստութիւնը կատարուած է խնամքով եւ չափաւոր գիներով:

(Զ. Յունիս 1915)

«Խնայողական» տպարանէն 1910-էն 1912, լոյս տեսած են 10 հատորներ, իսկ 11 Մայիս 1915-էն մինչեւ 27 Մարտ 1918 (թիւ 138) տպագրուած է «Արեւ» երկօրեան:

«Տամատեան» տպարանին մէջ տպուած են Կոմիտաս Վարդապետի «Սրբազան եւ Գեղջուկ Համերգ»ի Ձեռագ Տետրակը (1911), Ռիվուար Անտրէի «Դիւզն Զօնը» (1916) հատորը եւ Հ.Բ.Ը.Մ.ի «Տարեկան Տեղեկագիր»ը (1919):

([12]. թիւ 119,223,285)

Տպագրուած են Բաֆֆիի «Կայծեր»ը Ա. և Բ. , «Զալալեղդին» եւ «Ոսկի Աքաղաղը» հատորները (1937), Գրիգոր Զօհրապի «Խղճմտանքի Չայներ»ը (1938), շարք մը կանոնագրեր եւ Սմբատ Բիրատի բազմաթիւ վիպային ու անթուակիր հատորները: ([12]. թիւ 808-810,862,811,828)

15. «ՄՈՀԱՐԱՄ ՓՐԷՍ» Տպարան - Աղեքսանդրիա , 1935

Տպարանին հիմնադիրը եղած է Յակոբ Թոփալեան 1935-ին:

Տպարանը, հայատառ եւ օտար լեզուներով տպագրական գործարքի կողքին, մասնագիտացած է թղթածրարի, խաւաքարտէ տուփերու պատրաստութեամբ եւ թղթախաղի թուղթի տպագրութեամբ: ([24]. ք.հտր. էջ 133)

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ , ապա ԳԱՀԻՐԷ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ՏՊԱՐԱՆՆԵՐ

1.«ԱՐԱՔՍ» Տպարան -Աղեքսանդրիա , 1902 - 1905

ապա Գահիրէ «ԿԻԼԻԿԻԱ» Տպարան , 1906

«Արաքս» տպարանը հաստատուած է 1902-ին Աղեքսանդրիոյ մէջ, Տոքթ.Ա.Ա. Յակոբեանի սեփականատիրութեամբ, տեղւոյն Տիգրան Երկաթ Միութեան ժողովատեղիին կողքի կալուածի հասցէին: (Ա.1906, թիւ 41)

1904-ին, Բարսեղ Օհանեան փոխանորդաբար ստանձնած է տպարանին տնօրէնութիւնը, անոր պաշտօնաթուղթերը ստորագրելու իրաւասութեամբ, եւ հետագային տպարանը գնած եւ անոր տէրը դարձած է, թիւ 18, Նուպար Փաշա փողոց հասցէին: Տպարանին մէջ կատարուած է Հայերէն, Անգլերէն և Ֆրանսերէն լեզուներով մաքուր եւ վայելչագեղ տպագրութիւն, չափաւոր գիներով եւ ճշտապահութեամբ: ([8]. էջ 247 - Ա.1906 թիւ 41 եւ 50)



1906-ին, տպարանը փոխադրուած է Գահիրէ, Խալիկ-էլ-Մասրի փողոցին նամակատան դիմաց, անուանուելով՝ «Կիլիկիա» Տպարան: ([31]. էջ 189)

Տպարանէն լոյս տեսած է “Կանոնագիր Եգիպտոսի հայ Բողոքական Հասարակութեան” եգիպտական կառավարութենէն վաւերացուած եւ խտիվական հրամանագրով հաստատուած՝ հայատառ թրքերէնով գրքոյկը, գինը, 5 դր2.ողջ: (Ա.1906, թիւ 60)

2. «ՀԱՅԿԱԿԱՆ» Տպարան (Օննիկ Հալեպլեան)

«ԱՐԱՔՍ» Տպարան - Ադեքսանդրիա , 1899 -1906 ,

«ԿԻԼԻԿԻԱ» Տպարան , ապա

«ՀԱՅԿԱԿԱՆ» Տպարան եւ Կազմատուն -

Գահիրե , 1906 -1919

Օննիկ Հալեպլեան (Պոլսահայ կաթողիկէ) 1899-ին Ադեքսանդրիոյ մէջ հիմնած է «Տպարանական Ընկերութիւն» մը «Արաքս Տպարան» անունով, գործընկերներ ունենալով Յ. Շնորհքեան, Մուրաֆօֆ, Միհրան Տամատեան, Էօժէն Բաբազեան եւ ուրիշներ:

([31]. էջ 188)



Հալեպլեան, 1906-ին Գահիրե հաստատուած է և տպարանին «Արաքս» անունը փոխած՝ «Կիլիկիա»ի եւ ապա «Հայկական Տպարան»ի, հասցէ ունենալով յաջորդաբար * թիւ 4, Մոհամէտ Ալի փողոց- ** թիւ 14, Տարպ Էլ-Անապէ - *** թիւ 8, Հարթ-Էլ-Թուպկի փողոց, Ապտ Էլ Ազիզ (Ապտինի Ոստիկանատան մօտ, 1906):

«Հայկական» տպարան-կազմատունը հաստատուած է Խալիկ-Էլ-Մասրի փողոցի նամակատան դիմաց (1907):

«Հայկական» տպարանէն լոյս տեսած են «Շիրակ» (1906-1907), «Նոր Ժամանակներ» (3 թիւ, 1906), «Աւել» (1908), «Յայտագիր» (5 թիւ, 1912) եւ «Զարթօնք» (5 թիւ, 1919) լրագիրները, ինչպէս նաեւ բազմաթիւ հատորներ եւ կանոնագիրներ:

([14]. էջ 42, 54, 64, 82, 124)

«Կիլիկիա» տպարանէն Գահիրե, լոյս տեսած է Ավօ-ի «Դարբինին Երգը» (1906) և տպագրուած է «Ազատ Բեմ»ը 1906-էն 1907:

([12]. թիւ 58 – [14]. էջ 28)



«ՀԱՅԿԱԿԱՆ ՔԷՄԲ» Տպարան եւ Կազմատուն - Հելիոպոլիս, Գահիրե, 1919

Օննիկ Հալէպլեանի տպարանին այս մասնաճիւղը հաստատուած է Հելիոպոլսոյ «Քէմբ»ին մեծ մուտքին ճիշդ դիմացը, «վրան A թիւ 20»ի անկիւնը, Փոստարկը 47, Գահիրե: (ԺԳ1,1919,պրակ 3-4)

«Հայ.Արաքս» տպարանէն լոյս տեսած է Եղիազար Մուրատեանի «Քննական Պատմութիւն Արշակ Երկրորդի եւ Անոր Պապ Որդւոյն» (1900) եւ Թ.Ֆասուլեաճեանի «Տայը Միրիկ Անդէնը»(1901) հատորները: ([12]. թիւ 18,29)

3.«ԱՐԵԼ» Տպարան - Աղեքսանդրիա , 1918-1924

Գահիրե , 1924-1993

Աղեքսանդրիոյ մէջ «Արել» տպարանը հաստատուած է 1918-ին, թիւ 16, Ապու Տարտար փողոց, Աղեքսանդրիա հասցէին, հեռ.5207, Փոստարկը թիւ 600:

Տպարանը, Աղեքսանդրիոյ մէջ, «Արել» երկօրեան տպագրած է 1 Ապրիլ 1918-էն մինչեւ 29 Յուլիս 1924, եւ ապա Գահիրե փոխադրուած՝ Գահիրեի Կեդրոնական Նամակատան փոստարկիդ 1060 նոր թիւը ստանալով:



Գահիրեի մէջ, 1924-էն սկսեալ տպարանին հասցէն յաջորդաբար եղած է, * թիւ 1, Տուպրե փողոց (1924), ** «Ժողովրդային Սրահ» թիւ 32, Քանթարէթ Էլ Տէքքա փողոց (Յուլիս 1926), *** թիւ 9, Զաքի փողոց, Թելֆիքէյա (Մայիս 1928), **** թիւ 2, Տուպրե փողոց, եւ հետագային՝ Սոլիման Էլ Հալապի փողոց, «Հայտուն»ի շէնքին մէջ Յուլիս 1952-ին: ([5]. էջ 85-93)

1959-ին, տպարանը օժտուած է երկու նոր տողաշարներով: ([5].էջ 94)

Տպարանին գրաշարներէն եղած են Արմենակ Ասլանեան, Աւետիս Գնաճեան, Կարպիս Թաթարեան, Յովհաննէս եւ Տիգրան Թերզեան, Անդրանիկ Թովմասեան, Աւետիս Ծառուկեան, Ճօզէֆ Հաճէթեան, Արմենակ Մանուկեան, Յովհաննէս Մասմանեան, Աւետիս Մովսէսեան, Պօղոս Պաճագեան, Մկրտիչ Պասմաճեան, Օննիկ Պետեան, Բարունակ Պերպերեան, Գառնիկ եւ Արամ Ստեփանեան, Մանուկ Ասատուրեան, Պօղոս Թաւրայեան, Զարեհ Գըլըճեան, Դաւիթ Շահլամեան եւ հայերէն գրաշարութիւն կատարող եգիպտացի աշխատատուներ: (ԻԲ – [5]. էջ 116)

Տպարանի վարչական պաշտօնեաներ եղած են Վարդավառ Զէյթունցեան(1926-էն), Միքայէլ Թորիկեան, Մարօ Սագայեան եւ Օլկա Գաբրիէլեան:

«Արել» լրագրին եւ «Հայ Ազգային Հիմնադրամ»ի հրատարակութիւններուն կողքին, տպարանէն լոյս տեսած են աւելի քան 150 հայերէն հատորներ, տպուած են՝ ձեռնարկներու յայտագիրներ, ծանուցումներ եւ զանազան բնոյթի առեստրական գործառնութիւններ: ([12]. էջ 267)

Գրաշարական եւ տպագրական նորարարութիւններու ծախսալի պահանջքին, մարդուծի եւ նիւթական դժուարութիւններու ընդառաջ՝, տպագրական աշխատանքը դադրած է «Արել» տպարանին մէջ, 1993-ին:

ԵԳԻՊՏԱՀԱՅ

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Գ ա հ ի ռ է

Ա ղ է ք ա ն դ ի ա

Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն Ն Ե Ր

ԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

- 1). Ընթերցասիրաց Ընկերության Գրադարան - Գահիրե , 1891-1899
- 2). Լսարան - Ընթերցատուն Ընկերության Գրադարան - Գահիրե , 1899-1912
- 3). Հայկական Մատենադարանի Ընկերություն - Աղեքսանդրիա , 1899-1908
(Ժողովրդական Գրադարան-Ընթերցարան Ընկերություն)
- 4). Հայ Պատանեաց Մեսրոպեան Ուսումնասիրաց Ընկերության Գրադարան -
Գահիրե , 1905-1907
- 5). Արաբկիրի Հայոց Կրթասիրաց Ընկերություն - Գրադարան-Ընթերցարան -
Գահիրե , 1908
- 6). Հ.Բ.Ը.Միության Գրադարան - Գահիրե , 1910
«ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ» Գրադարան - Գահիրե - 1958 , 2003
- 7). «ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ» Գրադարան
Հայ Երիտասարդաց Միության - Աղեքսանդրիա , 1910
- 8). Հայ Երիտ. Միության Գրադարան – Աղեքսանդրիա , 1910-1914 , 1917
- 9). Ազգային Սրահի Գրադարան - Գահիրե , 1913
- 10). Մանիսալեան Վարժարանի Գրադարան - Գահիրե , 1913 - 1947
- 11). Յառաջդիմասէր Մշակ.Միության Գրադարան - Աղեքսանդրիա, 1917
- 12). Պողոսեան Ազգային Վարժարանի Գրադարան - Աղեքսանդրիա , 1919
- 13). Ս.Դ.Հ.Կ. Հայկ. Ընթերցասրահի «ԱՐԱՐԱՏ» գրադարան -Գահիրե , 1919
- 14). «Արածանի» Մարզամշակութային Միության Գրադարան - Գահիրե , 1926)
- 15). Գալուստեան Ազգ. Վարժարանի «ԱՂՄԱՄԵԱՆ» գրադարան - Գահիրե , 1929
- 16). Նուպարեան Ազգային Վարժարանի Գրադարան - Հելիոպոլիս , 1930)
- 17). «Հայր Ալիշան» Հայ Կաթողիկե Երիտասարդաց Միության Գրադարան -
Աղեքսանդրիա , 1931
- 18). «Ապրիլեան Սերունդ» Միության Գրադարան -Աղեքսանդրիա , 1932-1939
- 19). «Վերածնունդ» Հայ Երիտ. Միության Գրադարան - Աղեքսանդրիա , 1937
- 20). «Շաւարշան» Միության Գրադարան - Աղեքսանդրիա , 1939
- 21). Ազգային Առաջնորդարանի «ԹՈՐԳՈՄԵԱՆ» մատենադարան, Գահիրե, 1939
- 22). «ՏԱՄԱՏԵԱՆ» Մատենադարան - 1942
Ռ.Ա.Կ.ի «Հայ Գեղարուեստասիրաց Միություն» ակումբ - Գահիրե , 1956
- 23). «Սեւան» Մշակութային Միության Գրադարան - Աղեքսանդրիա , 1943-1947
- 24). Հայ Կաթողիկե Պատրիարքարանի Գրադարան - Գահիրե , 1944
- 25). «ՓԱԼԱՆՃԵԱՆ» Մատենադարան - Գահիրե , 1952
- 26). «Հ.Յ.Դ. Երիտ. Միության» Գրադարան - Գահիրե 1955, Հելիոպոլիս 1965
- 27). «ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳԱՐԱՅԵԱՆ» Գրադարան - Հելիոպոլիս , 1965 , 1971
- 28). Հայաստանի Հանրապետության Դեսպանության Գրադարան - Գահիրե , 1993
- 29). «ՄԱՐԿԴԻԹ-ՊԱՅԾԱՌ ՅԱԿՈԲԵԱՆ» Մատենադարան - Գահիրե , 1993

ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ՔԱԶԱԼԵՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Գալուստեան Սանուց Ընթերցասիրաց Միություն - Գահիրե , 1909-1911
Հայկական Մամուլ Ընկերություն - Գահիրե , 1911-1912

Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն Ն Ե Ր

ԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

1). Ընթերցասիրաց Ընկերության Գրադարան - Գահիրե , 1891-1899

Հիմնուած է 1891-ին, խումբ մը ընթերցասէր եւ մշակութասէր երիտասարդներու նախաձեռնութեամբ:

Ընկերութեան բուն նպատակը եղած է «Գահիրէի հայութեան շրջանում սէր ու հետաքրքրութիւն արծարծել ղէպի հայոց մշակոյթը»:

1895-ին, ընկերութիւնը հաստատած է «Հայ ակումբ» անունով իր ընթերցասրահը, որուն բացումը կատարուած է 19 Յունուար 1896-ին:

Կարճ ժամանակի ընթացքին, Ընկերութեան գրադարանը ճոխացած է հայերէն եւ օտարալեզու գրականութեան հատորներով եւ ստացուած պարբերականներու հաւաքածոյով:

29 Յունիս 1899-ին գումարուած Ընկերութեան Ընդհանուր Ժողովը ատենապետութեամբ՝ Յովհաննէս Եազըճեանի, ընտրած է վարչութիւն մը, որուն անդամ ընտրուած են Յովհաննէս Տէրվիշեան, Երուանդ Աղամեան, Գ.Է.Սէլվաճեան, Գ.Շանթունի եւ Երուանդ Աւագեան:

Բազմաձախս պայմաններու հարկադրանքին տակ, Ընկերութիւնը փակուած է 1899-ին, միանալով՝ նոյն տարին հիմնուած «Լսարան-Ընթերցատուն Ընկերութեան»:

(ԼԶ.1959-60, էջ18 - Ը.1899, թիւ 23 - ԽԲ.1899, թիւ 9)

2). Լսարան - Ընթերցատուն Ընկերութեան Գրադարան - Գահիրե , 1899-1912

Ընկերութիւնը հիմնուած է Յուլիս 1899-ին, իր մէջ լուծարելով «Ընթերցասիրաց Ընկերութիւն»ը եւ ընդունելով անոր գրադարանի 2000 ոսկի արժող հայերէն եւ այլ լեզուներով գիրքերու հաւաքածոն:

Հիմնադիրներէն եղած է Գէորգ Ակոբովիչը: (ԺԳ. ք.հտր. էջ 309)

Հիմնական եւ ներքին կանոնագիրին կազմութիւնը կատարած են Հ.Ս.Ազատեան, Ե.Գարագաշ, Ռ.Նազար, Կ.Երզնկացեան եւ Ս.Չոլաքեան:

Ընկերութեան բացումը կատարուած է Կիր. 21 Յունուար 1900-ին, Պազար Սուրուրի մէջ:

Պէյն Էլ Սուրէյնի ֆրէրներու վարժարանին կից շէնքին մէջ փոխադրուելով՝ վերաբացուած է Կիր. 9 Յունիս 1901-ին: (Ը.1901, թիւ 184)

1903-ի Վարչութեան անդամ եղած են Ա.Հանըմեան (ատենապետ), Տ.Հաճընեան(Փոխ-ատենապետ), Ե.Տէմիրճեան(քարտուղար), Տ.Պէլլերեան (փոխ-քարտուղար), Ս.Օտապաշեան(գանձապետ), Վ.Ճիզմէճեան(հաշուապահ) եւ Գ.Պահլաւ(խորհրդական):

«Գրական Մասնախումբ»ի կազմակերպութեամբ, տեղի ունեցած են լսարանային հաւաքոյթներ եւ նախաձեռնուած է «Նոր Օր» լրագրի հրատարակութիւնը, 1900-1901, անոր 1-էն 95 թիւերուն:

Ընթերցասրահը 1906-ին փոխադրուած է Գահիրէի Թէվֆիքիյէ թաղին սեփական ակումբը, եւ հասարակութեանը ծառայած մինչեւ 1912:

(ԼԶ.1960, էջ19 - Ը.1900, թիւ 49 - 1909, թիւ 56 - ԽԲ.1901, էջ 290 - Ա.1905, թիւ 40)

3). Հայկական Մատենադարանի Ընկերություն - Աղեքսանդրիա , 1899-1908

Ժողովրդական Գրադարան-Ընթերցարան Ընկերություն

Հիմնուած է Սեպտեմբեր 1899-ին, հաստատուելով՝ Մոնֆերաթոյի շէնքին առաջին յարկին մէջ (նախկին իտալական քլիւպին տեղը):

Վարչական պատասխանատուները եղած են Յ.Ա.Գալֆայեան (ատենապետ) եւ Ա.Նազճեան (ատենադպիր):

Հետագային անուանուած է «Ժողովրդական Գրադարան-Ընթերցարան», իսկ 1 Ապրիլ 1900-ին կոչուած է «Աղեքսանդրիոյ Ժողովրդային Մատենադարան Հասարակական» հաստատութիւն:

Կազմալուծուած է 1908-ին: (Ը.1899, թիւ 20 - 1900-01, թիւ 76,156 -[9]. էջ 195)

4). Հայ Պատանեաց Մեսրոպեան Ուսումնասիրաց

Ընկերութեան Գրադարան - Գահիրէ , 1905-1907

Գրադարանը հաստատուած է Ապրիլ 1905-ին, Ուսումնասիրաց Ընկերութեան կեդրոնին մէջ, ունենալով ընթերցասէր հասարակութեան տրամադրելի հայերէն գիրքերու, տեղական եւ արտասահմանեան թերթ-հանդէսներու ճոխ հաւաքածոյ մը:

Միութեան վարչութեան մաս կազմած են Կ.Փափագեան, Մ.Սեթիկեան, Ն.Կարապետեան, Ա.Եագուպեան, Տ.Թովալեան եւ Թ.Պասմաճեան:

Ունեցած է վաւերացուած Կանոնագիր մը 1906-ին, Տպ.Լուսաբեր:

1907-էն գրադարանը մաս կազմած է նորակազմ «Վասպուրական Ընթերցասիրաց Ընկերութեան»:

(Ա.1906, թիւ 46 -1907, թիւ 28 – [31]. էջ 189 – [9]. էջ 193)

5). Արաբկիրի Հայոց Կրթասիրաց Ընկերութեան

Գրադարան-Ընթերցարան - Գահիրէ , 1908

Կրթասիրաց Ընկերութեան «Գրադարան-Ընթերցարան»ը կազմակերպուած է 1908-ին, ունենալով շուրջ 200 անուն հայերէն գիրքեր եւ կը ստանար ամէկի քան 10 հայերէն պարբերականներ:

([9]. էջ 192)

6). Հ.Բ.Ը.Միութեան Գրադարան – Գահիրէ , 1910

«ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ» Գրադարան - Գահիրէ - 1958 , 2003-

Հ.Բ.Ը.Միութեան գրադարանը կազմակերպած եւ գրադարանապետութիւնը ստանձնած է Կարապետ Պէյ Շիրիտճեան 1910-1912:

1927-ին, գրադարանը հարստացած է Եագուպ Արթին Փաշայի անձնական գրադարանի հաւաքածոյով:

Գրադարանը 1956-ին դասաւորած է ծանօթ գրադարանավար բանասէր Արտաշէս Գարտաշեանը:

([24]. բ.հոր. էջ 249,289)

Հետագային, գրադարանը հաստատուած է Հ.Բ.Ը.Միութեան Գահիրէի գրասենեակին մէջ 1958-ին, անուանուելով «Եագուպ Արթին» գրադարան, ի յիշատակ Միութեան հիմնադիրներէն, անոր փոխ-նախագահ եւ Եգիպտոսի նախկին կրթական նախարար Եագուպ Արթին Փաշայի:

Գրադարանը ունի գրական, պատմական, գեղարուեստական, կրօնական եւ բանասիրական, նաեւ հայաստանեան հրատարակութիւններու հարուստ

հաւաքածոյ մը, տարիներու ընթացքին ազգայիններու, հիմնարկներու եւ արտագաղթող ընտանիքներու կողմէ տրամադրուած :

2003-ին, գրադարանը փոխադրուած է Հ.Բ.Ը.Միութեան Հելիոպոլսոյ «Սաթենիկ Ճ.Չագըր» կեդրոն: 2010-ի սկիզբը, եգիպտահայ բանասէր Տիգրան Գէորգեան իր անձնական գրադարանը նուիրած է Հելիոպոլսոյ Հ.Բ.Ը.Միութեան:

2015-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Հելիոպոլսոյ Գրադարանը ստացած է նաեւ ողբ. բանասէր Յովհաննէս Տէր Պետրոսեանի գրադարանին հատորները:

7). «Տիգրան Երկաթ» Հայ Երիտասարդաց Միութեան Գրադարան -

Աղեքսանդրիա , 1910

Գրադարանը իր երեք հարիւր հատորներով հաստատուած է 1910-ին, եւ հետագային վերակազմուած՝ Հայ Երիտասարդաց Միութեան Նուպար Փաշա փողոցի յարկաբաժնին մէջ:

1924-ին, գրադարանին գիրքերուն թիւը հասած է 1500-ի, որոնց կողքին դասաւորուած են 300 օտարալեզու հատորներ, հայ եւ օտար 25 թերթերու հաւաքածոներու շարքով: (ԺԳ. 24 Հոկտ.1924)

8). Հայ Երիտասարդաց Միութեան Գրադարան - Աղեքսանդրիա ,1910-1914 , 1917

Գրադարանը հիմնուած է 1910-ի վերջերը, հաստատուելով «Աղեքսանդրիահայ Ընթերցասրահ»ին մէջ, իր այլազան նիւթերու հարուստ հաւաքածոյով:

Կազմալոյծ եղած է 1914-ին, սակայն հետագային վերակազմուած եւ գործած է 1917 թուականին:

Գրադարանին մաս կազմած են գրական, գիտական, բանասիրական, պատմական ու վիպական 1200 հատորներ, եգիպտահայ եւ սփիւռքահայ թերթերու հաւաքածոներ, օտարալեզու պարբերականներ:

Գրադարանէն կրնան ձրի օգտուիլ Միութեան անդամները, իսկ ոչ-անդամները՝ 2 դրշ. ամսավճարով:

(Լ.Զ. 1962, էջ 133 - Լ. 1914, թիւ 182, 1918 թիւ 6 - «Արաքս» Հոկտ.1917)

9). Ազգային Սրահի Գրադարան - Գահիրէ , 1913 , 1918

«Ազգային Սրահ»ի նախաձեռնող հիմնադիրը եղած է Պետրոս Յովսէփեան:

Սրահը ունեցած է «Կանոնագիր Հայ Ազգային Սրահ Հաստատութեան ի Գահիրէ - Ներքին Կանոնագրութիւն Հայ Ազգային Սրահի», (Տպ.Զ.Ն.Պերպլերեան, Գահիրէ, 22 էջ, 1913): ([12]. թիւ 141)

Հիմնադիր վարչութիւնը հաստատուած է սրահին գրադարանը 1914-ին:

Կիր. 2 Մարտ 1918-ին, վերանուանուած «**Հայկական Սրահ**»ի ընդհանուր ժողովը ընտրած է նոր վարչութիւն մը, որուն ղիւանին անդամակցած են Միհրան Ղազարոսեան (ատենապետ), Արշակ Ֆերմանեան (փոխ-ատենապետ), Երուանդ Օգոստինոսեան (ատենադպիր) եւ Պետրոս Մէլեան (գանձապահ):

Գրադարանը վերակազմակերպած եւ գրադարանավարութիւնը ստանձնած է Գէորգ Նահապետեան: (Լ.1913, թիւ 66-70,75 - 1914, թիւ 218 - 1918, թիւ 149)

10). Մանիսալեան Վարժարանի Մատենադարան - Գահիրէ , 1913-1947

Վարժարանին աշակերտութեան մշակութային գործունէութեան մաս կազմած է գրադարանի մը կազմութիւնը, որ իրականացած է 1913-ին «Նախկին

Սանուց Յառաջդիմասեր Միութեան» նախաձեռնութեամբ, եւ ընդլայնած՝ շնորհիւ ընթերցասեր սաներուն եւ դաստիարակներու ճիգերուն: ([XXVI])

Վարժարանին փակումէն ետք 1947-ին, գրադարանին հատորները յանձնուած են Գահիրէի Ազգային Առաջնորդարանին:

11). «Յառաջդիմասեր» Մշակ. Միութեան Գրադարան - Աղեքսանդրիա , 1917

Միութեան գրադարանը հաստատուած է 1917-ին:

Մշակութայինի վարչութեան նախաձեռնութեամբ կատարուած գրահաւաքի արշաւին ընդառաջ՝ գրադարանին հաւաքածոյին համար առաջին առթիւ ստացուած եւ մաս կազմած են 500-է աւելի հայերէն եւ 200 օտար լեզուներով հատորներ:

Ակումբին մէջ հաստատուած գրադարանէն օգտուելու պայմաններ նկատի առնուած են հետեւեալ սկզբունքները.

Ա. Գիրք առնելու համար , ամէն օր ժամը 7-8 (կէսօրէն ետք), իսկ Կիրակի օրերը ժամը 11-12 (կէսօրէն առաջ):

Բ.Ընկերակցութեան անդամները իրաւունք ունին օգտուելու մատենադարանէն, եւ մէկ հատորէ աւելի կարելի չէ միաժամանակ առնել, նաեւ՝ ընթերցողները առ առաւելն երկու շաբաթ կրնան հատոր մը իրենց քով պահել:

(ԼԲ. 1917-1918, թիւ 1-7)

12). Պօղոսեան Ազգային Վարժարանի Գրադարան - Աղեքսանդրիա , 1919

Տիգրան Կամսարականի քաջալերութեամբ եւ իր կողմէ նուիրուած 32 հատորները դասաւորելու համար, վարժարանին գրադարանը կազմակերպելու աշխատանքը ընթացքի մէջ մտած է 1919-ին:

Գեորգ Իփէքեան 1924-ին 35 Եգ.Ոսկի նուիրած է գրադարանը վարժարանի աշակերտութեան հայագիտական նիւթերու գիրքերով օժտելու համար: Նոյն նպատակին, 1925-ին Գրիգոր Սարգիսեան նուիրած է 20 Եգ.Ոսկի, իսկ զանազան գրասէր ազգայիններ մեծ թիւով հատորներով օժտած են գրադարանը:

1924-1925 տարիներուն գիրքեր նուիրած են Թորգոմ Արք.Գուշակեան, Ա. եւ Գ.Իփէքեան, Տ. Թիւթիւնճեան, Ֆ.Խանճեան, Լ.Ղարիպեան եւ ուրիշներ:

Տիկին Զարուհի Ճերմակեան վարժարանին նուիրած է նախկին տնօրէն Յակոբ Աղասերի եւ Հրաչեայ Փէհրիզեանի գիրքերը, իսկ 1939-ին, Հերմինէ Մարգարեան նուիրած է 350 հատոր գիրք:

Վարժարանին գրադարանը վերակազմակերպուած է 1949-1950 շրջանին:

Օր.Սրբուհի Սարգիսեան գրադարանավարութիւնը կատարած է 1950-ական տարիներուն , իսկ Օր.Ա.Մանճըլըզեան 1963-1964 տարեշրջանէն սկսեալ:

([24]. գ.հտր. էջ 120,121)

13). Ս.Դ.Հ.Կ. Հայկական Ընթերցասրահի «ԱՐԱՐԱՏ» Գրադարան -

Գահիրէ , 1919

Գրադարանը հաստատուած է 1919-ին Հայկական Ընթերցասրահէն ներս, աւելի քան 1000 հատորներու հաւաքածոյով, որուն ընթերցասէրներ ընդունելու օրերը եղած են ամէն Չորեքշաբթի եւ Շաբաթ օրերը, երեկոյեան ժամը 7-էն 8:

(ԺԳ1. 1919, թիւ 5)

1939-ին, գրադարանավարը եղած է Նուպար Պալանեան:

(ԻԲ. էջ 62)

14). «Արածանի» Մարգամշակութային Միութեան Գրադարան - Գահիրե , 1926

Գրադարանը հաստատուած է Միութեան կեդրոնատեղիին մէջ 1926-ին, որուն հիմնադիրներէն եղած եւ կազմակերպումը ստանձնած է բանասէր-գրադարանավար Արտաշէս Գարտաշեան: ([8]. էջ 157 - [24]. բ.հտր. էջ 758)

15). Գալուստեան Ազգ. Վարժարանի «ԱՂՄԱՄԵԱՆ» Գրադարան -Գահիրե , 1929

Գալուստեան Ազգային Վարժարանի գրադարանը հաստատուած եւ ճոխացած է զանազան ազգայիններու կողմէ նուիրուած հատորներով:

Մայիս 1929-ին, Յովհաննէս Աղմամեան(վանեցի) 700 հատոր գիրքեր նուիրած է վարժարանին:

Նոյն տարւոյն Դեկտեմբերին, վարժարանին տնօրէն Լեւոն Թաշճեան բացումը կատարած է գրադարանին որ անուանուած է «Աղմամեան Գրադարան»:

Այս առթիւ, Տիկ.Նուարդ Շաղոյեան-Ճիվելիքեան (ղուստրը վանեցի Աւետիս Քինյ.Շաղոյեանի - 1855-1919) իր հօր 180 գիրքերը նուիրած է գրադարանին, իսկ Պալըզճեան եղբայրները իրենց ծնողաց յիշատակին՝ ընտանեկան գրադարանը նուիրած են վարժարանին:

1937-ին ընտրուած վարչութիւնը նախաձեռնած է վարժարանին գրադարանին վերակազմութեան մամուլի էջերով գրահաւաքի կոչով, պատասխանատուութեամբ՝ Օննիկ Ալեքսանեանի:

1959-ին, Վարժարանին կահոյքը եւ գրադարանը նորոգուած են Ֆէնէտի Ռուբինեան եւ Էվլերէկի Մեսրոպեան Կրթասիրաց Միութիւններու եւ Տիար Թորոս Խաչատուրեանի նուիրատուութիւններով: ([24]. բ.հտր. էջ 564)

16). Նուպարեան Ազգային Վարժարանի Գրադարան - Հելիոպոլիս , 1930

Վարժարանին գրադարանը հաստատուած է 1930-ին եւ ճոխացած՝ Տիկին Է.Փափագեանի նուիրած Մէթր Սմբատ Փափագեանի գրադարանի հատորներով նաեւ Ա.և Մ.Նետուրեաններու եւ ուրիշներու տրամադրած գիրքերով:

Գրադարանը կազմակերպուած եւ դասաւորուած է 1950-1954-ին, հոգածութեամբ ուսուցչուհի Արմինէ Սբէնճեանի: ([24]. գ.հտր. էջ 248)

17). «Հայր Ալիշան» Հայ Կաթողիկէ Երիտասարդաց

Միութեան Գրադարան - Աղեքսանդրիա , 1931

Կաթողիկէ Երիտասարդաց Միութեան գրադարանին բացումը կատարուած է 19 Ապրիլ 1931-ին, նախագահութեամբ Եպիսկոպոս Փոխանորդ Գերշ. Յովսէփ Ծ.Վ. Քաջունիի:

Գրադարանին հասցէն եղած է թիւ 18, Անսիէն Պուրս փողոց, Աղեքսանդրիա: (Զ. Ապրիլ 1931 - [24]. գ.հտր էջ 329)

18). «Ապրիլեան Սերունդ» Միութեան Գրադարան - Աղեքսանդրիա , 1932-1939

Գրադարանը հաստատուած է 1932-ին կազմուած «Ապրիլեան Սերունդ» Միութեան վարչութեան նախաձեռնութեամբ:

Երիտասարդներէ կազմուած յանձնախումբի մը գրահաւաքի ճիգերով եւ ազգայիններէ տրամադրուած բազմահարիւր հատորներով օժտած է գրադարանը:

Գրադարանին գիրքերու հաւաքածոն հետագային փոխանցուած է «Շաւարշան» Միութեան 1939-ին:

19). «Վերածնունդ» Հայ Երիտասարդաց Միության Մատենադարան -

Աղեքսանդրիա , 1937

Միության նորակազմ «Գրական յանձնախումբ»ին նախաձեռնությամբ «Հայ Երիտասարդաց Միության Մատենադարան»ը հաստատուած է 1937-ին, իր այլազան բնոյթի հատորներով եւ մամուլի տեղական ու արտասահմանեան հրատարակութիւններով:

20). «Շաւարշան» Միության Գրադարան – Աղեքսանդրիա , 1939

Գրադարանը կազմուած է 1939ին, Աղեքսանդրիոյ «Ապրիլեան Սերունդ» եւ «Վերածնունդ» միութիւններուն միաձուլումով, եւ հաստատուած «Վերածնունդ»ի կեդրոնին ժողովասրահի կողքին: («Զարթօնք» 1939 , պրակ Ա. թիւ 1)

21). Գահիրէի Ազգային Առաջնորդարանի «ԹՈՂԳՈՄԵԱՆ» Մատենադարան -

Գահիրէ , 1939

Գահիրէի Ազգային Առաջնորդարանի գրադարանին մաս կազմող հիմնական 150 գիրքերը, 1864-ին Ս.Աստուածածին եկեղեցիին եւ անոր կից Խորէնեան Վարժարանին նուիրուած հատորներն են, այդ օրերու եգիպտահայոց Առաջնորդ Գաբրիէլ Եպս. Մարաշցիի կողմէ:

Գիրքերու սոյն հաւաքածոն, ժամանակի ընթացքին ունեցած յաւելումներով 1929-ին փոխադրուած է Ս.Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շրջափակին մէջ կառուցուած Ազգային Առաջնորդարան:

Մատենադարանը կազմակերպուած է 1930-ական թուականներուն՝ Առաջնորդ Թորգոմ Արք. Գուշակեանի նախաձեռնությամբ, որուն վախճանումէն ետք եւ յիշատակին՝ Գահիրէի Թեմական Ժողովի որոշումով 1939-ին կոչուած է «Թորգոմեան Ազգային Մատենադարան»:

Տասնամեայ տեւողութեամբ, գրապահոցը կառավարուած է յանձնախումբերու կողմէ եւ 1947-էն 1953 մնացած՝ անուշադիր պայմաններու մէջ:

1954-ին, Պատուարժան Քաղաքական Ժողովը ընդառաջած է բանասէր Արտաշէս Գարտաշեանի առաջարկին, անոր վստահելով գրադարանին վերակազմակերպումը Առաջնորդարանի գետնայարկի սենեակին մէջ:

Ա.Գարտաշեան, գրադարանավարութիւնը կատարած է մինչեւ Եգիպտոսէն իր մեկնումը 1965-ին: ([8]. էջ 157 – Դ. գ.տարի, էջ 367)

Գրադարանին աւելի քան տասը հազար հայատառ, օտարալեզու, նաեւ հնատիպ հատորներուն կողքին՝ դասաւորուած են եգիպտահայ եւ սփիւռքահայ մամուլէն օրաթերթերու եւ պարբերականներու կազմուած հաւաքածոներ:

2006-ին, Գահիրէի Պատ. Քաղաքական Ժողովի որոշումով գրադարանը փոխադրուած եւ հաստատուած է Գահիրէի Առաջնորդարանին կից գտնուող նախկին «Աբգարեան» դարմանատան շէնքին մէջ, եւ հատորներու վերադասաւորումը կատարուած է Ժողովին հրաւերով՝ Հայաստանի Ազգային Գրադարանի տնօրէնութեան գործուղղած երկու մասնագէտ աշխատակցուհիներու կողմէ:

22). Ռ.Ա.Կ.ի «Հայ Գեղարուեստասիրաց Միութիւն» ակումբի

«ՏԱՄԱՏԵԱՆ» Մատենադարան - 1942 , 1956

«Տամատեան» Մատենադարանը հաստատուած է 1942-ին, Ռամկավար Ակումբին 250 հատորներով, որոնք հետագային հասած են 2500-ի՝ նուէր

ստացուած գիրքերով:

Մատենադարանին բացումը կատարուած է «Հայ Գեղարուեստասիրաց Միութեան» սրահին մէջ, Կիր. 20 Դեկտեմբեր 1942-ին, նախագահութեամբ Վահան Թէքէեանի: (Ժ. տետր Դ.)

Հարուստ բովանդակութեամբ գրապահոցը «Հայտուն» փոխադրուելէ ետք, վերաբացուած է 22 Դեկտեմբեր 1956-ին: Կահաւորման ծախսը հոգացած է Տիկ.Բ.Մարգարեան, իր վաղամեռ որդւոյն Նուպար Մարգարեանի յիշատակին, իսկ վերադասաւորումը կատարուած է Արտաշէս Գարտաշեանի հսկողութեամբ:

Գրադարանավարներ եղած են Արամ Ալեանաքեան, Կարպիս Գմգմեան, Սահակ Թիրապեան, Վահան Խէրպէկեան, Առաքել Պատրիկ, Հերմինէ Սիմոնօֆ եւ Ալիս Տեփոյեան: ([11]. էջ 47,276)

23). «Մեւան» Մշակութային Միութեան Գրադարան - Աղեքսանդրիա , 1943-1947

«Մեւան» Միութիւնը հիմնադրուած է 1943-ին, Գառնիկ Սվազլեանի ջանքերով եւ հաստատուած՝ լուծարուած Հ.Օ.Կ.ի հաւաքավայրին մէջ:

Հ.Օ.Կ.ի գրադարանը եւս փոխանցուած է նորակազմ մշակութային միութեան, որուն վարչութեան ջանքերով ձոխացած է անոր հայերէն եւ օտար լեզուներով հատորներու հաւաքածոն:

Միութեան հաստատած գրադարանին նպատակը եղած է *«մշակութասէր երիտասարդներու ընթերցասիրութեան քաջալերութիւնը եւ հայրենիքի առաջընթացին ծանօթացումը»*:

Գրադարանը լուծուած է 1947-ին, անոր հիմնադիրին եւ վարչական կազմին հայրենադարձութեամբ:

24). Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Գրադարան - Գահիրէ , 1944 , 2001

Գրադարանը հաստատուած է Գահիրէի կեդրոնական թաղաշրջանին մէջ Կարապետ պէյ Մաթոսեանի բարերարութեամբ եւ Կարօ Պալեանի ճարտարապետութեամբ 1926-ին կառուցուած Աւետումն Սուրբ Կոյս Մարիամի հայ կաթողիկէ տաճարին կողքի Պատրիարքարանին երրորդ յարկին վրայ:

Գրադարանը 2001-ին վերակազմուած է արեւելագէտ-հայագէտ Հայր Վենսան Մուսթարիի Ֆրանչիսկեան Վարդապետի հոգածութեամբ: ([10]. էջ 28)

25). «ՓԱԼԱՆՃԵԱՆ» Մատենադարան - Գահիրէ , 1952

Մատենադարանը հաստատուած է «Յուսաբեր»ի Տան մէջ 1952-ին, յիշատակին նուիրուած՝ «Համազգային Հայ Կրթական եւ Հրատարակչական Ընկերութիւն»ի նուիրատու բարերար Նշան Փալանճեանի:

Մատենադարանին երկյարկանի ապակեպատ ցուցաբեկերուն մէջ դասաւորուած են երկու տասնեակ հազար հաշուող բազմաբնոյթ բովանդակութեամբ հատորներ, նուէր ստացուած՝ Հ.Յ.Դ. աշխարհասփիւռ կառոյցներէ, հրատարակչատուներէ, գրասէր բարեկամներէ եւ անհատներէ:

1950-ականներու աւարտին, մատենադարանը հարստացած է Վահան Նաւասարդեանի եւ Գաբրիէլ Լազեանի գրադարաններուն հատորներով:

Գոյութիւն ունին «Յուսաբեր» օրաթերթի ամբողջական հաւաքածոն ինչպէս նաեւ եգիպտահայ ու սփիւռքի հայկական մամուլէն զանազան տարիներու հաւաքածոներ:

Երկար տարիներ, մատենադարանին վարիչը եղած է Բաբկէն Թիրեաքեան, որդին՝ գաղափարական մեծանուն գործիչ Հրաչ Թիրեաքեանի:

Մատենադարանը, 1980-ական թուականներուն վերադասաւորուած եւ ուշադրութեան առարկան դարձած է տեղական Հ.Յ.Դ. Երիտասարդաց Միաւորին, եւ շրջանի մը տեւողութեան ունեցած ընթերցասէր նոր սերնդականներ :

26). «Հ.Յ.Դ. Երիտասարդաց Միութեան» Գրադարան -

Գահիրէ 1955 , Հելիոպոլիս 1960

Գրադարանը հաստատուած է 1955-ին, «Յուսաբեր» Տան «Դալար Տանիք»ին կից Երիտասարդացի ժողովասրահին մէջ, 1700 հատորներու հաւաքածոյով:

Հետագային, 1960-ականներու առաջին կիսուն, «Երիտասարդաց Գրադարան» մը եւ հաստատուած է Հելիոպոլսոյ Յուսաբեր Ակումբին Հ.Մ.Ը.Մ.Արարատի Ա.Մէօթէմէտեան հաւաքավայրէն ներս:

27). «ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳԱՐԱՅԵԱՆ» Գրադարան - Հելիոպոլիս , 1971

Գրադարանը հաստատուած է Հելիոպոլսոյ Հ.Ա.Հ. Կոկանեան Սրահին մէջ, յիշատակին նուիրուած՝ հասարակական գործիչ Համբարձում Գարայեանի:

Գրադարանին բացումը կատարուած է 1971-ին: ([29])

28). Հայաստանի Հանրապետութեան Դեսպանութեան Գրադարան -

Գահիրէ , 1993

Գահիրէի մէջ, Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատան 4 Յունուար 1993-ին բացումէն ետք, եւ Եգիպտոսի մօտ հաւատարմատար Դոկտ.Էդուարդ Նալպանտեանի նախաձեռնած աշխոյժ դիւանագիտական աշխատանքներուն կողքին՝ դեսպանատան մէջ հաստատուած է տեղւոյն գրադարանը մօտ 1000 անգլերէն, արաբերէն, հայերէն եւ այլ լեզուներու հատորներով, նաեւ Հայկական Հարցին, Հայաստանի մշակութային, տնտեսական եւ քաղաքական հարցերու շուրջ նիւթերու հարատարակութիւններով:

Յաջորդական տարիներուն, գրադարանի հաւաքածոն հարստացած եւ կրկնապատկուած է բազմաբնոյթ հրատարակութիւններու հատորներով, որոնք կազմակերպուած ու դասաւորուած են դեսպանատան մէջ պաշտօնավարած դիւանագիտական կազմի կանանց, Եգիպտոս պարբերաբար եկած հայրենի ուսանողներու եւ եգիպտաբնակ ազգայիններու սիրայօժար գործակցութեամբ:

29). «ՄԱՐԿՐԻԹ-ՊԱՅԾԱՌ ՅԱԿՈԲԵԱՆ» Մատենադարան - Գահիրէ , 1993

Մատենադարանը հաստատուած է Ս.Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի շրջաֆակին մէջ շինուած յատուկ կառոյցին մէջ, նախաձեռնութեամբ Ս.Եկեղեցւոյ «Շնորհալի» երգչախումբին խմբավար Եդ. Յակոբեանի, իր հանգուցեալ կողակցին մեներգչուհի Մարկրիթ-Պայծառ Յակոբեանի յիշատակին:

Մօ.Էդուարդ Յակոբեան, գրադարանին նուիրած է երեք հազարէ աւելի հատորներ, մամուլի եւ տարեցոյցներու հաւաքածոներ:

Տեղւոյն բացումը կատարուած է 21 Նոյեմբեր 1993-ին, հովանաւորութեամբ Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ.Զաւէն Ս. Արք. Չինչինեանի, ներկայութեամբ Եգիպտոսի մօտ Հ.Հ. Հաւատարմատար Դոկտ. Էտուարտ Նալպանտեանի, Ազգային Իշխանութեան անդամներու եւ հաւատացեալ հասարակութեան:

ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ՔԱՋԱԼԵՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գալուստեան Սանուց Ընթերցասիրաց Միութիւն - Գահիրէ , 1909-1911

Ընթերցասիրացը կազմուած է 1909-ին, նախաձեռնութեամբ վարժարանի տնօրէն Անդրանիկ Կարապետեանի, նպատակ ունենալով *«օգտակար գիրքեր տրամադրելով, ընթերցասիրութիւնը տարածել աշակերտութեան մօտ»*:

Միութիւնը գործած է 18 ամիս եւ լուծուած 1911-ին: ([24]. ք.հտր. էջ 564)


Հայկական Մամլոյ Ընկերութիւն - Գահիրէ , 1911-1912

Մամլոյ Ընկերութիւնը հիմնուած է 1 Օգոստոս 1911-ին, նպատակ ունենալով *«Մամուլի եւ հրատարակութեանց միջոցաւ հայութեան եռանդը վառ պահել դէպի ընթերցասիրութիւնը»*:

1911 Հոկտեմբեր 14-էն, Ընկերութիւնը իբրեւ հրատարակիչը ներկայացած է «Արշալոյս» եռօրեայ լրագրին:

Անորոշ տպարանէ եւ թուականին՝, հրատարակուած է, վաւերացուած 42 յօդուածներով 12-էջնոց սկզբունքային ուղեցոյց մը «Կանոնագիր Հայկական Մամլոյ Ընկերութեան (1911)» անունով:

Ընկերութիւնը, ստեղծուած դժուարութիւններու ընդառաջ կազմալուծուած է 1912-ին: (ԼԶ.1959-60, էջ 25 - Ը.1911, թիւ 181,186 - [9]. 192-6 - [12]. թիւ 118)



ՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

ըստ հրատարակության վայրի եւ ժամանակագրության

Գ Ա Հ Ի Ր Է

Արմաւենի	1865	Հայկական Սինեմա	1925
Փարոս	1897	Հ Օ Կ	1926
Մաժակ	1898	Լուսարձակ	1926
Արշալոյս	1899	Ովասիս	1927
Նոր-Օր	1900	Հրեղէն Սիւն	1927
Արտէմիս	1902	Վահագն	1928
Ժողովուրդ	1903	Միտք ու Մկան	1928
Լուսաբեր	1904	Կայծակ	1929
Պիծակ	1906	Վերածնունդ	1930
Նոր ժամանակներ	1906	Լպուտ	1930
Նշտրակ	1908	Համասպրամ	1930
Աւել	1908	Զերլին	1931
Լուսին	1908	Նոր Մերունդ	1932
Լուսաբեր-Արեւ	1909	Խարոյկ	1932
Անցած Դարձածներ	1911	Ալպոմ	1932
Մալէշ	1911	Աշխատանքի Կոչ	1932
Հոսանք	1912	Զարթօնք	1935
Միութիւն	1912	Լոյս	1936
Յայտագիր	1912	Ազատ Միտք	1936
Յուսաբեր	1913	Համազգային Տարեգիրք	1936
Գալուստեան Միութիւն	1913	Արմաւենի Տարեգիրք	1937
Հ.Բ.Ը.Մ.-ի Ոսկեմատեանը	1914	Ամսօրեայ Տեղեկագիր	1938
Յուսաբեր (նոր շրջան)	1915-	Հազարումէկ Գիտելիքներ	1938
Խառաշօ	1915	Բանաստեղծին Չայնը	1938
Հայելի	1915	Գիր եւ Արուեստ	1938
Անապատին Յուշարձանը	1916	Շողակաթ	1938
Նշոյլներ	1916	Գրասէրի Առաջնորդ	1938
Արարատի Մատենադարանը	1916	Հայահամար Եգ.ի և Սուտանի	1939
Մժղուկ	1917	Մեծ Մասիս	1939
Զարթօնք	1919	Զարթօնք	1939
Զահակիր	1919	Բարձրացիր-Բարձրացուր	1940
Սաւառնակ	1919	Յիշատակարան	1940
Մարտիկ Աղա	1921	Էջեր Հայ Գրականութենէն	1942
Նոր Շարժում	1923	Զարթօնք (ԺՀ)	1942
Երեխայ	1923	Շարժում	1943
Արարատ	1923	Աշխատանք	1944

Յուսաբեր Ամսագիր	1944	Ջահակիր (մարզ./երիտ)	1966
Կեանք եւ Գիր	1944	Պարբեր. Հայ Կթղ.Պտրք.	1970
Տեղեկատու Պրակ	1945	Ուղի	1971
Անդաստան Հայ Մտքի	1945	Եհովա	1974
Նոր Արուեստ Մշակոյթ	1947	Հոկտեմբեր	1974
Շողակաթ (Հայ Ուսանողին Գիրքը)	1948	Իմացարան	1975
Ջահակիր	1948-	Գալուստ	1975
Կեանք եւ Գիր Տարեգիրք	1948	Համայնքային Կեանք	1976
Հայ Արիւնքու Միութիւն	1948	Իմացարան (յաւելուած)	1976
Նոր Խիկար	1949	Տեղեկագրութիւն	1977
Ուսանող	1949	Գրոհ	1978
Նոյեան Աղանի	1950	Արեգ	1978
Մարզիկ	1951	Պատանի	1980
Հունձք	1954	Մամուր	1980
Բան Աստուծոյ	1954	Երիտասարդ Յուսաբեր	1985
Տեղեկատու	1956	Մաշտոց	1985
Ալիք	1956	Արեւ Պատանեկան Էջ	1987
Մանկական Տեղեկատու	1957	Կապ	1991
Ուսումնարան	1957	Սպիտակ	1992
Սկաուտին Ձայնը	1957	Մենք եւ Մեր	1999
Շարժում	1960	Ծիծեռնակ	2001
Պարման	1960	Շողակաթ	2002
Օշական	1961	Վերելք	2013

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

Նեղոս	1889	Արեւ	1908
Նոր Կեանք	1896	Ոմանց Տարեցոյցը	1909
Լրաբեր	1897	Կալոթ Եգիպտոս	1914
Ազատ Խօսք	1902	Անիւ	1915
Փեթակ	1903	Արաքս	1917
Հայելի	1903	Յառաջդիմասէր	1917
Պարտէզ	1903	Պրիսմակ	1917
Սուրհանդակ Պարտէզի	1904	Որբունի	1919
Գրասէր	1904	Եգիպտահայ Տարեց. (ՈՄ)	1919
Սիսուան	1905	Ալեակներ եւ Խլեակներ	1919
Օրէնք	1905	Ասեղ	1922
Թերթիկ	1906	Զեկուցում	1923
Կրակ	1906	Հայ Բուժակ	1923
Մտրակ	1908	Կայծ	1924

Եգիպտահայ Տարեցոյցը (ԱԼ)	1925	Գրպանի Տարեցոյց	1941
Հայ Վարժարան	1926	Տեղեկատուութիւն	1946
Արարա	1926	Զուարթնոց	1953
Ամենուն Գիրքը	1937	Զարթօնք	1953
Դալարիք	1939		

Գ Ա Հ Ի Ր Է - Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ի Ա

Փիւնիկ	1899-1901	Աւետարանի Զայն	1939-1945
Եգիպտահայ Տարեցոյց (ՊՍ)	1914-1917	Բարի Լուր	1948

Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ի Ա - Գ Ա Հ Ի Ր Է

Ազատ Բեմ	1903-1906	Մասիս	1923-1925
Հորիզոն	1904	Փունջ	1925-1940
Շիրակ	1905-1907	Սֆինքս	1925-1928
Տարեկան Տեղեկագիր	1907-1912	Սարկաւագին Տրեց.	1928-1933
Արեւ	1915-1922-	Հայ Դպրոց	1933-1935

ԵԳԻՊՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ՆԵՐԿԱՅԻՍ

« ՅՈՒՍԱԲԵՐ », Գահիրէ , 1913

1913-1915 , Երկօրեայ , Հիմնադիր-Տնօրէն՝ Արմենակ Մեօթմէտեան
 1915-1922 (նոր շրջան) , Երկօրեայ , Տէր եւ Տնօրէն՝ Աւետիք Լալայեանց
 1922-1945 , Երկօրեայ (1922-1926), Օրաթերթ (1926-էն)
 Հրատ.՝ Հ.Յ.Դ. Եգիպտոսի Կազմակերպութիւն
 1945-էն, Օրաթերթ, Հրատ.՝ «Յուսաբեր» Մշակութային Ընկերակցութիւն

« ԱՐԵԻ », Աղեքսանդրիա (1915-1924) - Գահիրէ (1924)

1915-1921 , Երկօրեայ , Հրատ.՝ Սահմանադիր Ռամկ.Կուսակցութիւն
 1922-էն , Օրաթերթ , Հրատ.՝ Ռ.Ա.Կ. Եգիպտոսի Կազմակերպութիւն
 1970-էն , Օրաթերթ , 2016-էն Շբ.աթերթ , Հրատ.՝ Հայ Ազգային Հիմնադրամ

« ԶԱՀԱԿԻՐ », Գահիրէ , 1948

1948-1963 , Երկշբ., Շբ.աթերթ, Ամս.(1954-էն) , Հրատ.՝ Հայկ Ժամկոչեան
 1963-1989 , Շաբաթերթ , Հրատ.՝ Սարգիս Մ.Պալայեան
 1969-էն , Երկշաբաթաթերթ , Հրատ.՝ Հայկական Ընթերցասրահ

« ՏԵՂԵԿԱՏՈՒ », Գահիրէ , 1956

1956-1981, Երկամսեայ եւ Պարբերական , Հրատ.՝ Հ.Բ.Ը.Միութիւն (Գահիրէ)
 1996-էն , Նոր Շրջան , Եռամսեայ , Հրատ.՝ Հ.Բ.Ը.Մ. Գահիրէի Մասնաճիւղ

« ԱՐԵԳ », Գահիրէ , 2010

2010-էն , Արաբերէն ամսօրեայ հանդէս , 2017-էն՝ Եռամսեայ
 Հրատ.՝ Հ.Բ.Ը.Միութիւն Գահիրէի Մասնաճիւղ

ՆՄՈՅՇՆԵՐ
ԵԳԻՊՏԱՀԱՅ
ԿԱՆՈՆԱԳԻՐՆԵՐՈՒ
ԵՒ
ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐՈՒ

ԿԱՆՈՆԱԳԻՐ - ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ



**ԽՈՐԷՆԵԱՆ
ԵՐԿՍԵՆ ՎԱՐԺԱՐԱՆ - 1895
ԳԱՀԻՐԷ**




**ՊՕՂՈՍԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՆ ՎԱՐԺԱՐԱՆ - 1898
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ**



**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
Նախնական և Երկրորդական
ԵՐԿՍԵՆ ՎԱՐԺԱՐԱՆ - 1905
ԳԱՀԻՐԷ**



**ԳԱԼՈՒՍԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՆ ՎԱՐԺԱՐԱՆ - 1907
ԳԱՀԻՐԷ**



ԳԱԼՈՒՍԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՐ ՎԱՐԺԱՐԱՆ
ԳԱՀԻՐԷ - 1911-1912



ՊԵՐՊԵՐԵԱՆ
ԳԻՇԵՐՈԹԻԿ և ՑԵՐԵԿԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ
ԳԱՀԻՐԷ - 1924

ԿԱՆՈՆԱԳԻՐՆԵՐ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ – ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ



ՈՐԲԱՍԻՐԱՅ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
ԳԱՀԻՐԷ - 1901



ՀԱՅԿ. ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ
ԳԱՀԻՐԷ - 1906



ՄԻԱՅԵԱԼ ՈՐԲԱԽԱՍ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ
ԳԱՀԻՐԷ - 1906



ՈՒՍՈՒՄՆ . ՀԱՅՈՒՀԵԱՅ
«ՄԱՆԴՈՒԽՏ» ԸՆԿ .
ԳԱՀԻՐԷ - 1906



ՕՍՄԱՆԵԱՆ ԱԿՈՒՄԲԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
ԳԱՀԻՐԷ - 1910



ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆԱԳԻՏԱՐԱՆ
ԳԱՀԻՐԷ -1913



ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ
«ՅԱՐԱՏԵԻՈՒԹԻՒՆ»
ԳԱՀԻՐԷ - 1914



ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅ
ԵՐԻՏԱՍՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ
ԳԱՀԻՐԷ - 1916



ՀԱՅ ԵՐԻՏ . ՄԻՈՒԹԻՒՆ
ԶԱԿԱԶԻԿ - 1917



ԱԿԼԱՅ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ
ՀԱՅՐԵՆԱԿՑ. ՄԻՈՒԹԻՒՆ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ - 1925



«Հ Օ Կ» Ի ԵԳԻՊՏՈՍԻ
ՇՐՋԱՆԻՆ
ԳԱՀԻՐԷ -1926



ԿԵՍԱՐԻՈՅ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ
ՀԱՅՐԵՆԱԿՑ . ՄԻՈՒԹԻՒՆ
ԳԱՀԻՐԷ - 1926



ՀԱՅ ԼԵԳԵՆԱԿԱՆ
ՄԻՈՒԹԻՒՆ
ԳԱՀԻՐԷ -1926



ՀԱՅ ԿՐԹԱԿ. ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿ.
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԳԱՀԻՐԷ -1928



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ
ՊԼՕՔ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ -1928



ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶ
ԳԱՀԻՐԷ -1930



ԿԻՋԷԻ ՀԱՅ ԿՐԹԱՄԻՐԱՑ
ՄԻՈՒԹԻՒՆ
ԳԱՀԻՐԷ -1932



ԱՂՔԱՏԱԽԱՍ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
ԳԱՀԻՐԷ - 1933



ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ
ՄԻՈՒԹԻՒՆ
ԳԱՀԻՐԷ -1933



ԵԳԻՊՏԱՀՊԱՏԱԿ ՀԱՅՈՑ
ՏՈՀՄԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ԳԱՀԻՐԷ -1934



ՀԱՅ ԵՒ ԵԳԻՊՏԱՅԻՈՑ
ՄԻՈՒԹԻՒՆ
ԳԱՀԻՐԷ - 1936



ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐՈՒ ՆՄՈՅՇՆԵՐ
ԵԳԻՊՏԱՀԱՅ ԿԱՌՈՅՑ - ՄԻՈՒԹԻԻՆՆԵՐՈՒ





**ՀԱՇՈՒԹՔՆՈՒԹԻՒՆ
ԱՂԵՔՍ. Հ.Ե.ՄԻՈՒԹԵԱՆ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ - 1914**



**ԵԳԻՊՏԱԶԱՅ
ՆՊԱՍՏ. ՄԱՐՄՆՈՅ
ԳԱՀԻՐԷ - 1917**



**ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՒՀԵԱՅ
ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԳԱՀԻՐԷ - 1920**



**ՀԱՅ ՈՐԲԱՄԱՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳԱՀԻՐԷԻ ՀԱՏՈՒԱԾԻՆ
ՆՈՅ.1918 - ՅՈՒԼԻՍ 1919 ԳԱՀԻՐԷ -1922 ՕԳ.1919 - ԴԵԿՏ.1921 ԳԱՀԻՐԷ -1922**



**ՀԱՅ. ԱՂՔԱՍԱՄԱՄ ԸՆԿ.
ՅՈՒՆՎ.1930 – ԴԵԿՏ.1932
ԳԱՀԻՐԷ -1933**



**ԱՂՔԱՍԱՅ
ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹԻՒՆ
ԳԱՀԻՐԷ -1940**



**ՏԻԿՆԱՆՑ ԽՆԱՄԱԿԱԼ.
Գ.Ա.Վ. ՊՈՒԼԱՔ-ՇՈՒՊՐԱ
ԳԱՀԻՐԷ - 1944**

ԵԳԻՊՏԱՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՌՈՅՑՆԵՐ



Յուսաբեր Մշակութային Ընկերակցության
«ՅՈՒՍԱՐԵՐ»Ի ՏՈՒՆ - ԳԱՀԻՐԷ - 1952 -



Հայ Ազգային Հիմնադրամի
«ՀԱՅՏՈՒՆ» - ԳԱՀԻՐԷ - 1955 - 1965



Հ.Ա.Հ. ԿՈԿԱՆԵԱՆ
ՍՐԱՀ – ՀԵԼԻՈՊՈԼԻՍ
1949 -

«ՅՈՒՍԱՐԵՐ»
ԱԿՈՒՍԲ -
ՀԵԼԻՈՊՈԼԻՍ
1962 -





« ՅԱՌԱՋԴԻՄԱՍԷՐ » Մշակութային Ակումբ - Աղեքսանդրիա - հիմն.1916 -



Ս.ԹԵՐԵԶԱ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՍՐԱՀ
ՀԵԼԻՈՊՈԼԻՍ - 1965 -



Հ.Բ.Ը.Ս. Ս.ՃԱԳԸՐ ՄՇԱԿ. ԿԵՂՈՆ
ՀԵԼԻՈՊՈԼԻՍ - 2010 -

ԽՆԱՄԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐ



ԱԲԳԱՐԵԱՆ ԱԶԳ. ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ
ԳԱՀԻՐԷ - 1957 - 1980



«ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱ ԱԲԻԿԵԱՆ»
ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏՈՒՆ - Հելիոպոլիս-1956-




ՀԱՅ Կ.ԽԱԶԻ ԿԱԶՂՈՒՐՄԱՆ
ՓԱՅՏԱՇԷՆ ԿԱՅԱՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ - ՄԻՏԻ ՊԻՇՐ
1948 - 1958

ՀԱՅ Կ.ԽԱԶԻ ԿԱԶՂՈՒՐՄԱՆ
ՔԱՐԱՇԷՆ ԿԱՅԱՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ - ՄԻՏԻ ՊԻՇՐ
1958 - 1985



ՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐ



«ԿԱՄՔ» Մարմնամարզական
Ակումբ Աղեքսանդրիա - 1945

«Հ.Մ.Ը.Մ. ԿԱՄՔ»
Աղեքսանդրիա - 1974-



Հ.Մ.Ը.Մ. ԱՐԱՐԱՏ
Մարզական Ակումբ
Գափրե- 1946 - 1962


Հ.Մ.Ը.Մ. ԱՐԱՐԱՏ
Մարզական Ակումբ
Հելիոպոլիս - 1962 -





« ՆՈՒՊԱՐ »
ՄԱՐԶԱԿԱՆ
ՄԻՈՒԹԻՒՆ
Շուալրա – 1946 – 1958

Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐ
ՄԱՐԶԱԿԱՆ
ԱԿՈՒՄԲ
ՀԵԼԻՈՊՈԼԻՍ
1958 –



Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐ
ՄԱՐԶԱԿԱՆ
ԱԿՈՒՄԲ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ –
1959 –



Ս.ԹԵՐԵԶԱ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ակումբ - Հելիոպոլիս - 1962 -



« ՆԻԸՐ ԻՍԹ » ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ Գառիբեկ - 1925 - 2010 -

ԵԳԻՊՏԱՀԱՅ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԵՐ



ՓՈՐ ՍԱՅԻՏԻ
ՎՐԱՆԱՔԱՂԱՔԻ
ՄԿԱՌԻՏԵՐՈՒ
ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ
1916



ՀԱՅ ՀԵՏԱԶՕՏԻՉՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ
ՖԱՆՖԱՌ «ԳԱՌՆՈՒԿ»

Գափիթե - 1919



ՖԱՆՖԱՌ
«ՆԻԸՐ ԻՍԹ»
ԳԱՀԻՐԷ - 1927



«ՔՆԱՐ»
ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ - 1932



«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ»
ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ - 1935

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԵՐ



Խմբավար ԱՇՈՏ ՊԱՏՄԱԳՐԵԱՆԻ ԳԱՀԻՐԷԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԵՐ - 1936



« ՀԱՄԱԶԳԱՅԻՆ » ԵՐԳՉԱԽՈՒՄԲԵՐ - ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ - 1952
Խմբավար՝ ԿԱՐՊԻՍ ԱՓՐԻԿԵԱՆ



« ՔՆԱՐ »
ԵՐԳՉԱԽՈՒՄԲ -
ԳԱՀԻՐԷ - 1955

Խմբավար՝
ԵՐՈՒԱՆԴ
ԱԼԵՔՍԱՆԵԱՆ

Ս.ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱԽՈՐԻՉ
ԵԿԵՂԵՑԻՈՅ
«ՇՆՈՐՀԱԼԻ»
ԵՐԳՉԱԽՈՒՄԲ
ԳԱՀԻՐԷ - 1958

Խմբավար՝
ՂԱԶԱՐՈՍ
ՂԱԶԱՐՈՍԵԱՆ



« ԵԳԻՊՏԱՀԱՅ »
ԵՐԳՉԱԽՈՒՄԲ
ԳԱՀԻՐԷ - 1962

Խմբավար՝
ԵՂՈՒԱՐԴ
ՅԱԿՈԲԵԱՆ





Հ.Բ.Ը.Մ.Ի « ԿՈՌԻՆԿ » ԵՐԳՉԱԽՈՒՄԻ - ԳԱՀԻՐԷ - 1983
Խմբավար՝ ՀԱՅԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ « ԱՐԱՔՍ » ԵՐԳՉԱԽՈՒՄԻ - ԳԱՀԻՐԷ - 2005
Խմբավար՝ ՄԻՀՐԱՆ ՂԱԶԷԼԵԱՆ

ԵԳԻՊՏԱՀԱՅ

ՄԱՐԶԱԿԱՆ ԷԼ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ

ՆՇԱՆԱԿՆԵՐ

ՄԱՐԶԱԿԱՆ - ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՆԵՐՈՒ ՆՄՈՅՇՆԵՐ



Հ.Մ.Ը.Մ. ԱՐԱՐԱՏ
ԳԱՀԻՐԷ



Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐ
ԳԱՀԻՐԷ



Հ.Մ.Ը.Մ. ԿԱՍՔ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ



ՆՈՒՊԱՐ ՀԱՅԿ. ԱԿՈՒՄԲ
ԳԱՀԻՐԷ



Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ



Ս.ԹԵՐԵԶԱ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ
ԳԱՀԻՐԷ



Հ.Մ.Ը.Մ. ՄԿԱՌԻՏՆԵՐ
Բարձրացիր-Բարձրացուր



ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ ՀԵՏԱԶՕՏԻՉՆԵՐ
Գաղիոն եւ Աղեքսանդրիա



ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՅՈՒՇԱԿՈԹՈՂՆԵՐ



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԱԽԱՆԱԴԱՏՈՒՆ - ԳԱՀԻՐԷ - 1965

1915 – 1965

1 ½ ՄԻԼԻՈՆԷ ԱԻԵԼԻ ՀԱՅԵՐՈՒ
ՅԻՇԱՏԱԿԻՆ
ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ 24 ԱՊՐԻԼ 1915-Ի
ԵՂԵՌՆԻՆ
«Ի ՄԱՀ ՀԱՄԱՐԵԱԼ ԷԻՆ ԵՒ ՄԱՀՔ
ԻԻՐԵԱՆՑ ԱՆՇՈՒՇՏ ԿԵԱՆՔ» ԵՂԻՇԷ



Ս. ՊՕՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇՐՋԱԲԱԿ - ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ - 1965

ԿԱՆՔ ԿԸ ՄԱՆՔ 24 ԱՊՐԻԼ 1915

ذكري شهداء الأرمن

1915 - 1965 ՅԻՄՆԱՄԵԱԿԻ ՅՈՒՇԱՐՁԱՆ

Հարս. ՏԻՐԱՆ ՊԱՄՄԱՃԵԱՆ



**Ս.ԹԵՐԵԶԱ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ
ԵԿԵՂԵՑԻ - ՀԵԼԻՈՊՈԼԻՍ - 1975**

Ի ՅԱՐԳԱՆՍ

**1915-Ի ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ
ԲԻՒՐԱԽՈՐ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ**

ՁՕՆ

**ՓԱՌՔԵՐ ՈՒ ՊԱՐԾԱՆՔՆԵՐ ԿԱՆ ,
ՈՐՈՆՑ ՀԱՍՑՆՈՂ ՄԻԱԿ ԿԱՍՈՒՐՋՆ Է
ՄԱՀԸ ,**

**ՄԱՀԵՐ ԿԱՆ ՈՐՈՆՔ ՉԵՆ ԻԶԵՑՆԵՐ
ԴԱԳԱՂ ԿԱՍ ԳԵՐԵԶՄԱՆ , ԱՅԼ ԿԸ ՏԱՆԻՆ
ԱՍՏՂԵՐՈՒՆ ԵՒ ԿԱՊՈՅՏԻՆ :**

ՀԱՅՐ ՄԱՀԱԿ ԵՊՍ. ԿՈԳԵԱՆ

Ճարտ. Հրազդան Պալեան



Ս.ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇՐՋԱԲԱԿ - ԳԱՀԻՐԷ - 1998

**Կառուցաւ խաչքար յուշարձանս ի յիշատակ
ՆԱՀԱՏԱԿԱՑ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ Ի ՄԵԾ ԵՂԵՌՆԻ**

**Ի Հայրապետութիւն և Ձեռամբ Տ.Տ.ԳԱՐԵԳԻՆ Ա.Ամենայն Հայոց Կաթողիկոսի
եւ ի յառաջնորդութիւն Թեմի՝ Տ.Զաւէն Արքեպս.Չինչիւնեանի**

16 Յունուար 1998

Խաչքար՝ ԳՐԻԳՈՐ ԲԱՂՈՒՄԵԱՆԻ



ԴԱՄԲԱՐԱՆ - ՅՈՒՇԱԿՈԹՈՂ - ՓՈՐ ՍԱՅԻՏ - 2015

Բարձրացուած՝ մինչեւ 1919 ինն ապրաձ եւ տեղւոյն Սուէտահայերու
ԳԱՂԹԱԿԱՅԱՆԻ ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒ ԱՃԻԻՆՆԵՐՈՒՆ համար ՈՒՂՂԱՓԱՌ
ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ գերեզմանատան մէջ տրամադրուած վայրին վրայ
Ճարտ. ՆԱՅԻՐԻ ՀԱՄԲԻԿԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՅՈՒՇԱՐՁԱՆ




ՅՈՒՇԱՐՁԱՆ ՅԱՆՈՒՆ Ս.ՍԱՀԱԿԻ ԵՒ Ս.ՄԵՍՐՈՊԻ

«ՃԱՆԱԶԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԻՐԱՏ, ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆՍ ՀԱՆՃԱՐՈՅ»
Ս.ԹԵՐԵԶ Ա ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇՐՋԱԲԱԿ-ՀԵԼԻՈՊՈԼԻՍ-1985

Յղացում՝ Ճարտ. ՀՐԱԶԴԱՆ ՊԱԼԵԱՆԻ

ԵԳԻՊՏԱՅԻ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱԿՈԹՈՂ

ԳԱՀԻՐԷ - 2007



տեղադրուած՝

Գահիրէի Օփերային հանդիպակաց
«Ազատութեան եւ Բարեկամութեան»
գրասայգիին մէջ

Գործ՝ ՍԱՐԳԻՍ ԹՕՍՈՒՆԵԱՆԻ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻԻՐՆԵՐ

Մ ա մ ն լ լ

Ծրագիր - Կանոնագիրներ
Զանազան Հրատարակություններ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Մ Ա Մ Ո Ւ Լ

- Ա. «Ազատ Բեմ» Լրագիր, Աղեքսանդրիա , 1904-1907 , Գահիրե
- Բ. «Ազատ Միտք» Շաբաթաթերթ, 1936-1937 , Գահիրե
- Գ. «Ալեականեր եւ Խլեականեր» , Տոքթ.մ.Սալբի , 1920 , Աղեքսանդրիա
- Դ. «Ամէնուն Տարեգիրքը» , Կարօ Գէորգեան , Գ.տարի , 1956 , Պէյրութ
- Ե. «Արաքս» , Հոկտ.1917 , Աղեքսանդրիա
- Ե2. «Ասեղ» Երգիծաթերթ , 1922 , 1923 , Աղեքսանդրիա
- Զ. «Արեւ» օրաթերթ , 1908 , 1915- , Աղեքսանդրիա-Գահիրե
- Է. «Արմաւենի» Տարեգիրք , 1937-1938 , Ա.տարի , Գահիրե
- Ը. «Արշալոյս» Լրագիր , 1899 , Գահիրե
- Թ. «Գալուստեան Միութիւն» կիսամեայ հրատ. , 1913 , Գահիրե
- Ժ. «Գրասէրի Առաջնորդ» տետր Դ. , 1943, Գահիրե
- ԺԱ. «Դալարիք» պրակ Ա. , 1939 , Աղեքսանդրիա
- ԺԲ. «Եգիպտահայ Տարեցոյցը» - Ս.Պարթեւեան , 1914-1918 , Գահիրե
- ԺԳ. «Զարթօնք» Շաբաթաթերթ , 1924 , Գահիրե
- ԺԳ1. «Զարթօնք» , 1919 , Գահիրե
- ԺԴ. «Զարթօնք» Յիշատակարան նախկին որբերու , 1939 , Գահիրե
- ԺԵ. «Զարթօնք» , 1936 , Գահիրե
- ԺԶ. «Թերթիկ» պարբերական , 1906 , Աղեքսանդրիա
- ԺԶ1. «Ժողովուրդ» , 1903 , 1904 , Գահիրե
- ԺԷ. «Լուսաբեր-Արեւ» երկօրեայ , 1912 , 1913 , Գահիրե
- ԺԸ. «Լուսաբեր» երկօրեայ , 1904 , Գահիրե
- ԺԹ. «Լուսարձակ» Շաբաթաթերթ , 1927 , Գահիրե
- Ի. «Կայծակ» Մարմն. Ամսաթերթ , 1929-1930 , Գահիրե
- ԻԱ. «Համասպրամ» Եգիպտահայ Ամսագիր , 1930, Գահիրե
- ԻԲ. «Հայահամար Եգիպտոսի եւ Սուտանի - 1939» , Գահիրե
- ԻԳ. «Հայ Բուժակ» ամսաթերթ , 1923 , Աղեքսանդրիա
- ԻԳ1. «Մալէշ» , Զաւեշտական Եօթնօրեայ , 1911-1912 , Գահիրե
- ԻԴ. «Մասիս» Գրական Շաբաթաթերթ , 1923 , 1924 , Աղեքսանդրիա-Գահիրե
- ԻԴ1. «Մարտիկ Աղա» , Երգիծական Շաբաթաթերթ , 1921 , Գահիրե
- ԻԵ. «Հոսանք» Շաբաթաթերթ , Ա.տարի , 1912 , Գահիրե
- ԻԵ1. «Հ Օ Կ» պարբերական պրակ , 1926 , Գահիրե
- ԻԶ. «Մարզիկ» Մարզական ամսաթերթ , 1951-1954 , Գահիրե
- ԻԷ. «Մարմնամարզ» ամսագիր , 1911 , 1912 , Կ.Պոլիս
- ԻԸ. «Յառաջդիմասէր» ամսական տեղեկաբեր , 1917 , Աղեքսանդրիա
- ԻԹ. «Միութիւն» պարբերաթերթ , 1912-1928 , Գահիրե
- Լ. «Յուսաբեր» Երկօրեայ , 1913 , 1914 , 1915 , 1916- , Գահիրե
- ԼԱ. «Յուսաբեր» բացառիկներ , նուիրում՝ Հայ Երիտասարդութեան , Գահիրե
- ԼԱ1. «Նոր Շարժում» , 1923 , Գահիրե
- ԼԳ. «Շարժում» հայ երիտասարդին գիրքը (բացառիկ) 1947 , Գահիրե

ԼԴ. «Ովասիս» Ամսաթերթ , 1927 , Գահիրե
 ԼԵ. «Որբունի» ամսական տեղեկատու , 1919-1922 , Ադեքսանդրիա
 ԼԶ. «Ուսումնարան տարեգիրք» , 1959-1960 , 1962 , Գահիրե
 ԼԶԼ. «Զահակիր» Շաբաթաթերթ , 1948- , Գահիրե
 ԼԷ. «Սարկալազին Տարեցոյցը» , Յ. Մանավեան , 1928-1953 , Ադեքս.-Գահիրե
 ԼԸ. «Սաւառնակ» Շաբաթաթերթ , 1918 , Գահիրե
 ԼԹ. «Սաւառնակ-Զէրլին» Շաբաթաթերթ , 1936 , 1937 , Գահիրե
 Խ. «Տեղեկատու» Պարբերաթերթ , Հ.Բ.Ը.Միութիւն , 1956- , Գահիրե
 ԽԱ. «Տեղեկատուութիւն» - Հայ Ազգային Խորհուրդ , 1946 , Ադեքսանդրիա
 ԽԲ. «Փիւնիկ» Լրագիր , 1899 , Գահիրե

ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐՆԵՐ

- I. Ծրագիր-Կանոնագիր Ակնայ եւ Շրջակայից Հայրենակցական Միութեան
Տպ.Ա.Գասապեան, 1925, Ադեքսանդրիա
- II. Ծրագիր-Կանոնագիր Գահիրեի Հայ Ուսուցչական Միութեան
Տպ.Սահակ-Մեսրոպ, 1933, Գահիրե
- III. Ծրագիր-Կանոնագիր Եկեղեցասիրաց Միութեան Հայոց Ադեքսանդրիոյ
Տպ.Հ.Ս.Բիրատ, 1938, Ադեքսանդրիա
- IV. Ծրագիր-Կանոնագիր Կեսարիոյ եւ Շրջակայից Հայրենակցական Միութեան
Տպ.Ոսկետառ, 1926, Գահիրե
- V. Ծրագիր Կանոնագիր Կիզէի Հայ Կրթասիրաց Միութեան (հիմնեալ 1930 ին)
Տպ.Սահակ-Մեսրոպ, 1932, Գահիրե
- VI. Ծրագիր-Կանոնագիր Հայ Ժողովրդային Պլօք, Ադեքսանդրիա
Տպ.Ա.Ստեփանեան, 1928, Ադեքսանդրիա
- VII. Ծրագիր-Կանոնագիր Հայ Կարմիր Խաչի,
հիմնուած 1930 Մարտ 1ին, 1930, Գահիրե
- VIII. Ծրագիր-Կանոնագիր “ՀՕԿ”ի Եգիպտոսի Շրջանին, Գահիրե
Տպ.Փարոս, 1926, Գահիրե
- IX. Ծրագիր Հայկ. Համայնագիտարան Ընկերութեան, 1913, Ադեքսանդրիա
- X. Կազմական Կանոնագիր Աղքատախնամ Ընկերութեան Հայոց Գահիրեի
Տպ.Սահակ-Մեսրոպ, 1933, Գահիրե
- XI. Կանոնագիր Գահիրեի Հայ Երիտասարդաց Միութեան
Տպ.Սոկրատ Սարրաֆեան եւ Ընկ., 1916, Գահիրե
- XII. Կանոնագիր եւ Ուսմանց Յայտագիր Գալուստեան Ազգ. Երկր.
Վարժարանին ի Գահիրե, Տպ.Հայկական, 1907, Գահիրե
- XIII. Կանոնագիր Խորէնեան Երկսեռ Վարժարանի Հայոց ի Գահիրե
Տպ.Ս.Դարբինեան, 1895, Գահիրե
- XIV. Կանոնագիր «Կամք» Մարմնամարզ. Ակումբի եւ
Հայ Հետազօտիչներու Ընկերակցութեան (Կ.Մ.Ա.Հ.Հ.Ը.)
Տպ.Արամ Գասապեան, 1924, Ադեքսանդրիա
- XV. Կանոնագիր Հայ Երիտ. Միութեան Զակագիկի ,
Տպ.Զ.Պերպերեան , 1917, Գահիրե

- XVI. Կանոնագիր Հայ և Եգիպտացւոց Միութիւն ,
Տպ.Սահակ-Մեսրոպ, 1936, Գահիրէ
- XVII. Կանոնագիր Հայկական Բարեգործական Ընդհ. Միութեան,
Տպ.Կամպէրա, 1906, Աղեքսանդրիա - Տպ.Բաֆֆի, 1907, Աղեքսանդրիա
- XVIII. Կանոնագիր Հայ Որբախնամ Ընկերութեան, Աղեքսանդրիա
Տպ.Զ.Պէրպլերեան, Գահիրէ
- XIX. Կանոնագիր Միացեալ Որբախնամ Ընկերութեանց Հայոց ի Գահիրէ
Տպ.Հայկական, 1906, Գահիրէ
- XX. Կանոնագիր Որբասիրաց Ընկերութեան Հայոց ի Գահիրէ,
Տպ.Արշալոյս, 1901, Գահիրէ
- XXI. Կանոնագիր Ուսումնասէր Արմենուհեաց «Սանդուխտ» Ընկերութեան
Տպ.Ս.Դարբինեան, 1906, Գահիրէ
- XXII. Հայ Ակումբ Աղեքսանդրիա, Հիմնագիր եւ Ներքին Կանոնագրութիւն
Տպ.Արամ Ստեփանեան, 1917, Աղեքսանդրիա
- XXIIa. Հայ Համագործակցական Խնայողական «Մֆինքս» Միութիւն ,
Տպ.Նեղոս, 1936, Գահիրէ
- XXIII. Հիմնական Կանոնագիր , «Յարատելութիւն» Խնայողական Սնտուկ
Տպ.Զարեհ Ն.Պէրպլերեան, 1914, Գահիրէ
- XXIV. Յայտագիր Գալուստեան Ազգ. Երկս. Վարժարանի, Գահիրէ,
Տարեշրջան 1911-1912, Տպ.Զարեհ Ն.Պէրպլերեան, 1911, Գահիրէ
- XXV. Յայտագիր-Կանոնագիր Համագգային Նախնական եւ
Երկրորդական Երկսեռ Վարժարանի, Տպ.Ժողովրդական, 1905, Գահիրէ
- XXVI. Յայտագիր-Ծրագիր, Մանիսալեան Երկրորդական Վարժարան
Տպ.Միխայիլեան , 1928 , Ս.Ղազար , Վենետիկ
- XXVII. Յայտագիր-Ծրագիր Պէրպլերեան Վարժարան ,
Տպ.Զ.Պէրպլերեան, 1924, Գահիրէ
- XXVIII. Նախաբան եւ Նախագիծ Եգիպտահպատակ Հայոց Տոհմային Միութեան
Տպ.Սահակ-Մեսրոպ, (հայ. եւ արաբ.), 1934, Գահիրէ
- XXIX. Ներքին Կանոնագիր Պօղոսեան Ազգային Երկսեռ
Վարժարանաց Աղեքսանդրիոյ, Տպ.Ս.Դարբինեան, 1898, Գահիրէ
- XXX. Վերամշակուած Կանոնագիր «Յուսաբեր» Մշակութային
Ընկերակցութեան , Գահիրէ , Տպ.Յուսաբեր , 1959 , Գահիրէ
- XXXI. Հայ Համագործակցական Խնայողական «Մֆինքս» Միութիւն , Կիզէ , 1936

ԶԱՆԱԶԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

- [1]. Աբգարեան Ազգային Դարմանատուն, 1957 , Գահիրէ
- [2]. Ազգային Դարմանատուն Հայոց-Գահիրէ (1941-1952),
Եւ Տասնամեակ Հայկական Դարմանատան (1941-1951), 1953, Գահիրէ
- [3]. Այծեմնիկ Տիկնանց Միութիւն (1925-2003), 2003, Գահիրէ
- [4]. «Արարա» (Հայկական Լեզեռնը), Սուրէն Պարթեւեան , 1919 , Աղեքսանդրիա
- [5]. «Արեւ» Օրաթերթի Մատենագիտութիւն, Յ.Տէր Պետրոսեան, 1990, Գահիրէ

- [6]. Գալուստեան Ազգ. Վարժարանի Յուշամատենան (1854-2004), 2004, Գահիրե
- [7]. Գահիրեի Հայ Լեզնական Միութեան Ժողովներու
Արձանագրութիւններ (ձեռագիր-բնագիր) 1925-1933
- [8]. Եգիպտահայ Մշակոյթի Պատմութիւն , Աւետիս Եափուճեան , 1981, Գահիրե
- [9]. Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1952) ,
Յ.Խ.Թովմուզեան, 1978, Երեւան
- [10]. Եգիպտոսի Հայ Կաթողիկէ Համայնքը, Տ.Գեորգեան , 2001, Գահիրե
- [11]. Հայ Գեղարուեստասիրաց Միութեան Պատմութիւն (1920-2000) ,
Աւետիս Եափուճեան , 2004 , Գահիրե
- [12]. Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2012, Գահիրե
- [13]. Հայկական Ծխախոտ , Խաչատուր Դադեան , 2014 , Երեւան
- [14]. Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ(1865-12011)Տոքթ.Ս.Ն.Պայրամեան,2005,Գահիրե
- [15]. Հայ Մարմն. Ընդհ. Միութիւն - Եգիպտոսի Շրջան,
Աղեքս. Մասնաճիւղ, Արծաթեայ Յորելեան(1933-1958), 1958, Աղեքսանդրիա
- [16]. Հայ Սփիւռք Հանրագիտարան, 2003 , Երեւան
- [17]. Հ.Բ.Ը.Միութեան Գործապատումը , 1919 , Գահիրե
- [18]. Հ.Կ.Խաչի Վեցամսեայ Տեղեկագիր (1915-1916) , 1916 , Գահիրե
- [19]. Հ.Ս.Ը.Մ. Նուպար Հելիոպոլիս, Յորելեանական Տօնակատարութիւն
Մարգարանին Հելիոպոլսոյ Կեդրոն Փոխադրութեան Յիսնամեակին
(1958-2008) , 2008 , Գահիրե
- [20]. Յիշատակարան Ալպոմ - Հայ Գեղարուեստասիրաց Միութիւն ,
35-ամեակ (1920-1955) , 1956, Գահիրե
- [21]. Յորելեանական Յուշարձան Մանիսալեան Վարժարանի Գահիրե,
1931, Վենետիկ
- [22]. Յուշամատենան Տիգրան Երկաթ Հայ Մշակութային Միութեան
հիմնադրութեան 100-ամեակի, Աղեքսանդրիա (1902-2002),
Յովհաննէս Տէր Պետրոսեան, 2003, Գահիրե
- [23]. Յուշարան (Եր.Մարկեանի յիշատակին), Գրիգոր Պասմաճեան, 1971, Գահիրե
- [24]. Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար ,
Արտ.Գարտաշեան , Ա.հտր.1942 , Գահիրե - Բ.և Գ. հտր.1982 , Վենետիկ
- [25]. Ոսկեմատենան Հ. Բ. Ընդհ. Միութեան (1906-1913) , 1914, Գահիրե
- [26]. Ոսկեմատենան-Յիշատակարան 15-ամեակի՝ Եկեղեցասիրաց
Միութեան Հայոց Աղեքսանդրիոյ (1932-1947) , Մ. Ա.Քինյ. Քեօշքերեան,
1947, Աղեքսանդրիա
- [27]. Պատմական Տեսութիւն Եգիպտոսի Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ,
Գեր.Սերովբէ Եպս. Դաւթեան, 1914, Գահիրե
- [28]. Պատմութիւն Հայ Ազգային Հիմնադրամի (1942-1982) ,
Աւետիս Եափուճեան, 1984 , Գահիրե
- [29]. Պատմութիւն Հ.Ա.Հ. Կոկանեան Սրահի, Հելիոպոլիս (1949-1989) ,
Աւետիս Եափուճեան , 1989 , Գահիրե
- [30]. Տեղեկագիր Հայ Կրթ. և Հրատարակչական «Համագգային» ընկ.
Եռամեայ գործունէութեան (1928-1931), 1932 , Պէյրութ
- [31]. Տիպ ու Տառ , Թէոդիկ , 1912 , Կ.Պոլիս
- [32]. Յուշամատենան Հ.Ս.Ը.Մ.ի(1918-1958),Ներսէս Արղ.Բախտիկեան,1958,Պէյրութ

- [33]. Գահիրեի Հ.Բ.Ը.Մ. Սաթենիկ Չագըր Հիմնադրամի
Հրատարակչական Գործունեությունը , Պերճ Թերզեան , 2012, Գահիրե
- [34]. Յուշամատեան Պօղոսեան Ազգային Վարժարանի, Աղեքսանդրիա,
Տոքթ.Արմէն Գավուքճեան , 2004 , Գահիրե
- [35]. Պատմություն Հայ Մշակութային Ընկերություններու , Հ.Եփրեմ Վ.Պօղոսեան,
հտր.Ա.(1953), հտր.Բ.(1957), հտր.Գ.(1969), Վիեննա
- [36]. Ոսկեմատեան-Յիշատակարան «Տիգրան Երկաթ» Հայ Մշակութային
Միության, Աղեքսանդրիա (1902-1952), 1952, Աղեքսանդրիա
- [37]. Ներգաղթողին Գրքոյկը , Տպ.Ոսկետառ , 1946, Գահիրե
- [38]. Հ.Բ.Ը.Մ. Պատմական Ակնարկ Իր Ադամանդեայ Յոբելեանին Առիթով,
Տիգրան Գեորգեան , 1981, Գահիրե
- [39]. Յուշամատեան Հայ Օգնության Միության (1910-1970),1970, Տպ.Հայրենիք
- [40]. Եգիպտոսի Պատմությունը Սկիզբէն Մինչեւ Մեր Օրերը,
Գարեգին Յովհաննէսեան, Տպ.Յակոբ Փափագեան, 1937, Գահիրե
- [41]. Պատմություն Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միության,
Բիւզանդ Թորիկեան, Ա.,Բ.,Գ. եւ Դ. հատոր, Տպ.Համազգային,
1995 , 1999 , 2003 , 2007 , Պէյրութ
- [42]. Հ.Մ.Ը.Մ.ի Քսանամեայ Յուշարձան (1918-1938),
Տպ.Ա.Տէր Յակոբեան, 1939, Փարիզ



ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ ԲԱԺԻՆՆԵՐ

	Էջ
Վարժարաններ	1-53
Մշակութային եւ Զանազան Միավորներ	55-165
Նուագախումբեր	169-173
Երգչախումբեր	174-180
Թատերախումբեր	181-185
Մարզական Ակումբներ	187-217
Տպարաններ	219-253
Գրադարաններ	255-266
Մամուլ	267-269
Նմոյշներ Կանոնագիրներու	273-278
Նկարներ Կառոյցներու	279-284
Նկարներ Նուագախումբերու	285-286
Նկարներ Երգչախումբերու	287-289
Նշանակներ Մարզական Միավորներու	291-293
Յուշակոթողներ	295-298

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
Ձօն	III
Երախտագիտական Խօսք	V
Յառաջաբան	VII
Աշխատանքի Ծանոթացում	IX
Համառոտագրություններ	XI
Ազգային եւ Անհատական Վարժարաններ	1
Գահիրե, Հելիոպոլիս - ցանկ	3
տուեալներ	5-38
Աղեքսանդրիա, Փոր Սայիտ, Զակազիկ, Ասիուք - ցանկ	4
տուեալներ	39-43
Կաթողիկէ Վարժարաններ ցանկ	45
Գահիրե, Աղեքսանդրիա տուեալներ	47
Աւետարանական Վարժարաններ ցանկ	45
Գահիրե - Աղեքսանդրիա տուեալներ	53
Միութիւններ եւ Միութիւններ	55
Ցանկեր	
Գահիրե, Հելիոպոլիս, Կիզէ,Թանթա,Զակազիկ,Փոր Սայիտ,Ասիուք	57-60
Աղեքսանդրիա	61-62
Մշակութային Ընկերութիւններ	63
Բարեսիրական - Խնամատարական Միութիւններ	65
Հայրենակցական Միութիւններ	67
Սանուց - Շրջանաւարտից Միութիւններ	67
Կանացի Միութիւններ	67
Պատանեկան – Երիտասարդական Միութիւններ	69
Մամուլի եւ Հրատարակչական Ընկերութիւններ	70
Խնայողական Ընկերութիւններ	70
Բժշկական Միութիւններ	70
Երաժշտական Հաստատութիւն	70
Կաթողիկէ (Գահիրե - Հելիոպոլիս - Աղեքսանդրիա)	71
Աւետարանական (Գահիրե - Աղեքսանդրիա)	71
Տուեալներ Միութիւն - Ընկերութիւններու	
Գահիրե, Հելիոպոլիս, Կիզէ,Թանթա,Զակազիկ,Փոր Սայիտ,Ասիուք	73-143
Աղեքսանդրիա	144-165
Նուագախումբեր - Երգչախումբեր - Թատերախումբեր	167
Նուագախումբեր ցանկ	169
Գահիրե, Աղեքսանդրիա տուեալներ	170-173
Երգչախումբեր ցանկ	174
Գահիրե, Աղեքսանդրիա, Զակազիկ տուեալներ	175-180
Թատերախումբեր ցանկ	181
Գահիրե, Աղեքսանդրիա, Զակազիկ տուեալներ	182-185

Մարզական-Սկաուտական Միություններ	187
Ցանկեր	
Գահիրե, Հելիոպոլիս, Շուպրա, Կիզե,	189-190
Ադեքսանդրիա, Փոր Սայիտ, Զակազիկ	
Ախոյենական Աթլետիք Մրցումներ (Գահիրե և Ադեքսանդրիա)	188
Տուեալներ Մարզական – Սկաուտական Միություններու	
Գահիրե, Հելիոպոլիս, Շուպրա, Կիզե,	191-208
Ադեքսանդրիա, Փոր Սայիտ, Զակազիկ	209-214
Ախոյենական Աթլետիք Մրցումներ (Գահիրե և Ադեքսանդրիա)	215-217
Տպարաններ	219
Ցանկեր	
Գահիրե, Ադեքսանդրիա, Ադեքսանդրիա-Գահիրե, Օտար Տպ.ներ	221-222
Տուեալներ Տպարաններու	
Գահիրե և Հայատառ Տպագրութիւն Կատարած Օտար Տպարաններ	223-244
Ադեքսանդրիա , Ադեքսանդրիա-Գահիրե	245-253
Գրադարաններ	255
Գահիրե, Ադեքսանդրիա - ցանկ	257
Գահիրե, Ադեքսանդրիա - տուեալներ	258-266
Եգիպտահայ Մամուլը (ցանկ , 1865 - 2017)	
Գահիրե	267
Ադեքսանդրիա	268
Ժամանակակից Մամուլը	269
Ն կ ա ր ա շ ա ր ք	271
Նմոյշներ Հրատարակութիւններու Տիտղոսաթերթերուն	273-278
Վարժարաններու Կանոնագիր-Ցայտագիրներ	273-274
Միութիւն-Ընկերութիւններու Կանոնագիրներ	274-277
Միութիւններու Տեղեկագիրներ	277-278
Նկարներ Կառոյցներու եւ Խումբերու	279-289
Մշակութային , Խնամատարական , Մարզական Միաւորներ	279-284
Նուագախումբեր եւ Երգչախումբեր	285-289
Նմոյշներ Մարզական-Սկաուտական Նշանակներու	291-293
Յուշակոթող - Յուշարձան	
Մեծ Եղեռնի Եգիպտահայ Յուշակոթողներ	295-296
Դամբարան-Յուշակոթող , Փոր Սայիտ , 2015	297
Թարգմանչաց Յուշարձան (Ս.Սահակ եւ Ս. Մեսրոպ)	297
Եգիպտացի եւ Հայ Ժողովուրդներու Բարեկամութեան Յուշարձան	298
Օգտագործուած Աղբիւրներ	301
Մամուլ	303
Ծրագիր – Կանոնագիրներ	304
Զանազան Հրատարակութիւններ	305
Ներկայացուած Բաժիններ	309
Բովանդակութիւն	310
Հեղինակ	

Հեղինակը՝ սեղմ տողերու մէջ
ՏՈՔԹ. ՍՈՒՐԵՆ ՆԱՐՊԷՅ ՊԱՅՐԱՄԵԱՆ



Ծնած է Գահիրէ 1943-ին
Գալուստեան Ազգ.Վարժարան (1948-1955)
Մարոնիթ Երկր.Վարժարան (1955-1960)
Ատամնաբոյժ-Վիրաբոյժ
Գահիրէի Համալսարան (1965)
Ազգային-Հասարակական Գործունէութիւն
(1965-էն առ այսօր)
Գահիրէի Պատկառելի Թեմական
Ժողովի անդամ (1975-էն)
«Յուսաբեր»-ի Խմբագիր (1982-1987)
Ս.Էջմիածնայ Կաթողիկոսութեան
«Սահակ-Մեսրոպ» Շքանշան (1999)
Հ.Մ.Ը.Մ.ի Արտակարգ Շքանշան (1999)
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան
«Մեսրոպ Մաշտոց» Շքանշան (2012)

Հեղինակ՝

«Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ»
Գահիրէ - 2005
«Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ , 1888-2011»
Գահիրէ - 2012
«Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ»
Անգլերէն եւ Արաբերէն - Գահիրէ - 2013
«Յուսաբեր» Օրաթերթի 100-ամեակ
Գահիրէ - 2013
«Հայ Գրատպութեան 500-ամեակի
1512-2012 , Ոգեկոչումը Գահիրէի մէջ»
Գահիրէ - 2013

مؤسسات الطوائف الأرمنية فى مصر

تأليف

دكتور سورين ناربيى بايراميان

الناشر: بطريكية الأرمن الأورثوذكس بالقاهرة

القاهرة - ٢٠١٧

رقم الإيداع :

المطبعة :